ԲԱԿՈՒՐ

ԳՅՈՒԼԻՍՏԱՆ ՆԱՄԵ

ՄԵԾ ԿՈՒԱՆՔ

ԳԻՐՔ ԱՌԱՋԻՆ

21.09.10
9(47-925)
Բ-22
4309

ԲԱԿՈՒՐ

ԳՅՈՒԼԻՍՏԱՆ ՆԱՄԵ

Երկու հատորով

ԳԻՐՔ ԱՌԱՋԻՆ

ՄԵԾ ԿՈՒԱՆՔ

(մ.թ.ա. 750 թ.- մ.թ. 1828 թթ.)

ՏԻԳՐԱՆ ՄԵԾ
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ - 2005

ՀՏԴ 941(479.25)
ԳՄԴ 63.3(2Հ)
Բ 229

Նվիրվում է Շահումյանի շրջանի ազատագրման նվիրյալ. արցախյան պատերազմի հերոս ***Շահեն Մեղրյանի*** *հիշատակին*

Տպագրվում է Շահեն Հովասափյանի հովանավորությամբ

Բակուր
Բ 229 Գյուլիստան - նամե, գիրք առաջին, Մեծ Կուանք (մ.թ.ա. 750 թ.- մ.թ. 1828 թթ.).– Եր.: Տիգրան Մեծ, 2005.– 272 էջ:

Գիրքն ընդգրկում է պատմական Արցախի մի հատվածի՝ Մեծ Կուանքի (Գյուլիստան և Զրաբերդ) պատմությունը մ.թ.ա. VIII դ. կեսերից մինչև XIX դ. առաջին քառորդը՝ Ռուս-պարսկական հաշտությունը: Գավառի պատմությանը զուգահեռ, ըստ պատմական ժամանակահատվածների, գրքում ներկայացվում է նաև ողջ տարածաշրջանի ու երկրի իրավիճակի վերլուծությունները:

Հեղինակը շեղվելով պատմագիտության մեջ տարածում գտած տեսակետներից, հենվելով ստույգ աղբյուրների վրա, ընթերցողներին է առաջարկում մեր պատմության մութ ու թերի ուսումնասիրված մի շարք հատվածների ու ժամանակաշրջանների միանգամայն նոր ու տրամաբանական մեկնաբանություններ: Դրանց թվում են կիմմերական շրջանը (մ.թ.ա.), IV-VI դդ. ընդգրկող Վաչական հարստության տիրապետությունը աղվանքում, Բագրատունյաց՝ Ողջ Հայքում ու Հարավային Կովկասում ընդհանուր պետության ստեղծման ծրագրի իրականացման համար պայքարը, XIX դ. առաջին քառորդին Հայոց Սղնախներ պետական կազմավորման փայլատակումը Արցախում:

Գիրքը նախատեսված է ինչպես պատմության ուսումնասիրողների, հետաքրքրասերների, այնպես էլ ընթերցող լայն շրջանների համար:

Երկրորդ գիրքը կընդգրկի պատմության շարունակությունը մինչև 2004 թվականը:

Բ $\frac{0503020913}{774(01)2005}$ 2005 թ. ԳՄԴ 63.3(2Հ)

ISBN 99941-0-119-6

© Բակուր, 2005 թ.

ՆԱԽԱԲԱՆ

Գյուլիստանի գավառը կազմել է Շիրակացու VII դարի Աշխարհացույցում նշված Արցախի IV գավառի՝ Մեծ Կուանքի (հետագայում՝ Մեծ Կողմանք) հյուսիսային մասը՝ Ինջա գետակից մինչև Կուրակ, իսկ մյուս մասն ընդգրկել է Զրաբերդը, որի հյուսիսային սահմանը Ինջան է, արևելյանը՝ Տրտուականի (Թարթառ) աջ կողմի հարթավայրում մարող Մռավի բարձունքները, արևմտյան կողմում՝ Թրղուտ վտակը՝ ընդհանուրն ըստ Ս.Երեմյանի զբաղեցնելով 975 կմ քառ. տարածք[1]: Արաբական աղբյուրներում այս գավառը հիշվում է Մեսկվան անունով, իսկ վրացական աղբյուրներում՝ Մեսկեվելի: Մինչև այժմ Թալիշ գյուղի (ԼԴՀ, Մարտակերտի շրջան) մոտ որպես սրբատեղի պահպանվել են Կյավանք-Կյուանք վանքի ու այն շրջապատող բերդապարսպի փլատակները: Այս գավառի մասին առաջին տեղեկությունը հայտնում է Սարդուրե Բ (764 – 735 մ.թ.ա.) ուրարտական թագավորը, որը Գանձադռան տարեգրության մեջ մ.թ.ա. 741 թ. դեպի Հայաստանի հյուսիսային շրջաններ կատարած իր արշավանքի կապակցությամբ հիշատակում է Կույալբա երկրի անունը (Կու-յա-ալ-բա-նե ձևով, «երկիր» բացահայտիչով)[2]: Կուանք տեղանվան մասին հետաքրքիր տեղեկություն է հաղորդում վիպասան Ռաֆֆին, «Մելիք Եսային տիրում է Կյուանք կոչված ձորին և սկսյալ Ռմբոստյան լեռներից մինչև Դյութական գյուղը, որ այժմ կոչվում է Կաթողկասար»[3]: Կուենք կամ Կյուանք տեղանվան մեջ «ենք» կամ «անք» վերջածանցները, ըստ ավանդության, ցեղի կամ տոհմի նշանն են, իսկ Կյու-ն արդեն երկրամասի անունն է: «Կյու»-ի բացատրության համար հետաքրքիր վարկած է ներկայացնում «Կյումեր» տեղանունը: Տրտուականի հովտում հնուց պահպանված Կյետին կյումեր, Սողոմոնա կյումեր, Պողոսա կյումեր, Ըրթունա կյումեր, Կյումերաշեն ու Կյումերամեջի վանք տեղանունները խորհելու տեղիք են տալիս: Կյումեր անունով գյուղ է եղել Ինջա գետի հովտում: Արցախից Աղստևի հովիտ (Իջևանի շրջան) տե-

[1] Ս.Երեմյան, Հայաստանն ըստ «Աշխարհացույցի», Եր., 1963, էջ 117 (այսուհետ՝ Երեմյան):
[2] Ց.Կարագոզեան, Սեպագիր տեղանուններ, Եր., 1998, էջ 200:
[3] Ռաֆֆի, Երկերի ժողովածու, հ. X, Եր., 1964, էջ 170:

ղափոխված բնակչությունն իր հետ տեղափոխել ու պահպանել է իր բնակավայրի «Կյումեր» անունը: Կասկած չկա, որ այն աղերս ունի կիմերների ցեղանվան հետ, ու միանգամայն ընդունելի կարող է համարվել հազարամյակների ընթացքում կիմեր>կյումեր ինչպես և կյիմանք>կյումանք>կյուանք>կուանք ձևափոխությունները: Այս տեսանկյունից թյուրիմացություն է «կյումերը» որպես «գոմեր» ներկայացնելը, քանի որ գոմը կենդանիներ պահելու տեղ է ու երբեք չի կարող մարդկանց բնակավայրի կամ, առավել ևս, որպես երկրամասի անվանում ծառայել: Սակայն «Գոմեր» անվանումը, ինչպես կտեսնենք, պատմական լուրջ նյութ է պարունակում իր մեջ: Հայտնի է, որ կիմմերները, որոնք ազգակից են իրանա-սկյութական ցեղերին ու ծագումով արիացիներ են, մ.թ.ա. VIII դարում Ազովի կողմերից Սևտիս-Կողքիսյան ճանապարհով, որն անցնում է Սև ծովի ափերով, թափանցել են Հայկական լեռնաշխարհ, տակնուվրա արել Ուրարտուն, Ասորեստանը, Միջագետքն ու Փոքր Ասիան: Ասորեստանյան բևեռագիր արձանագրություններում հիշատակված է Ուրարտուի թագավոր Ռուսա Ա-ի (730-714 թթ. մ.թ.ա.) անհաջող պատերազմը Gimirrai-ների դեմ, որի մասին Ասորեստանի թագավոր Սարգոն II-ին (722-705 մ.թ.ա.) տեղեկություններ էին հաղորդել նրա գործակալներն ու լրտեսները[4]: Ասորական զորքերը կիմմերների հետ պատերազմում «Վերին և Ներքին գետերի մարզում գրավում են մի քանի բերդեր: Հատկապես ամրացված էր Խարխար (Կարկար) բերդը: Չմոռանանք հիշատակել նաև Արցախի Կարկառ բերդը, որը ուշ միջնադարում Շուշի վերանվանվեց: Բիթ-Խամբան մարզում գրավեցին Կիմիրրաե բերդը, ինչպես և գերեցին 2530 մարդ: Գրաված բերդերը վերանվանվեցին Կար-Նաբու, Կար-Սին, Կար-Ադադ, Կար-Իշտար»[5] («կար» մասնիկը բուն հայկական բառ է, որ «քար» իմաստից բացի նաև «բերդ» իմաստն է ունեցել): Հետագայում նրանք զինակցում են ուրարտական պետության հետ, միասին պատերազմներ մղում Ասորեստանի դեմ, համատեղ ուժերով նվաճում Կապադովկիան, Պոնտոսը, Փռյուգիան, Լիդիան: Կիմմերների մասին ավելի մանրամասն տեղեկություններ են թողել հույն հեղինակներ Հերոդոտոսը, Քսենոֆոնը, Ստրաբոնը, ըստ որոնց կիմմերները Հարավային Կովկասի մերձկասպյան շրջաններ են թափանցել նաև Ճորա պահակով: Գյումնիաս-Գյումրի տեղանունը, որը, հավանաբար, հանդիսացել է Շիրակ-Վանանդ-Այրարատում գտնվող կիմմերական-սկյութական ցեղերի միության կենտրոնը, ըստ երևույթին, ծագել է կիմմերների «Gimirrai» անունից[6]: Անշուշտ,

[4] Մանանդյան Հակոբ, Հին Հայաստանի և Անդրկովկասի մի քանի պրոբլեմների մասին, Եր., 1944 (այսուհետ՝ Մանանդյան):
[5] Дьяконов И.М., История Мидии, М., Л., 1956, стр. 228-230 (далее- Дьяконов).
[6] Մանանդյան, էջ 20:

«Կումայրի» հին անվանումն ավելի մոտ է արցախյան «կյումերին»: Հենվելով արցախյան տեղանունների ու Կումայրի անվանումների վրա, որոնք անաղարտ ձևով պահպանել են ցեղանվան ճիշտ ձևը, հակառակ հույն հեղինակների կամ ասորական սեպագրերի, կարելի է եզրակացնել, որ նրանց ցեղանունը իրականում «կյումմեր» է եղել: Կյումեր-կիմմերները հիմնականում հաստատվել էին Կապադովկիայում, որի պատճառով էլ հայերը կիմերների անունով այն կոչել են Գամիրք, որի մասին տեղեկություն է հաղորդում նաև Խորենացին: «Սկյութա-կիմմերական ցեղերը հին ժամանակներում իրենց մշակութային ազդեցությամբ լուրջ հետքեր են թողել Հյուսիսային Չինաստանի, Հյուսիսային Հնդկաստանի, հյուսիսիրանյան ու արևելաիրանյան երկրների, Սիրիայի, Փոքր Ասիայի, Բալկանյան թերակղզու հյուսիսի, Մերձդանուբյան շրջանների, ընդհուպ մինչև Ռեյն տարածվող երկրների մշակութա-աշխարհագրական կերպարի վրա: Այս քոչվոր ցեղերը ոչ միայն թալանչիներ էին, այլև խթանել են գրված երկրների տեխնիկական ու մշակութային զարգացումը», - եզրակացնում է Լև Ելնիցկին[7]: Շատ երկրներում, ինչպիսիք են Ուրը, Բաբելոնը, Միջագետքի մյուս պետությունները, Ասորեստանը, Խեթերի թագավորությունը, Մարաստանը, Պարթևստանը, պարսկական Աքամենյանները, Քուշանիքը, Հնդկաստանի հյուսիսը, թագավորական տոհմերը սկիզբ են առնում սկյութական առաջնորդներից: Փաստորեն այն յուրօրինակ համաշխարհային տիրապետություն էր, որն իր հետքն էր թողել քաղաքակրթության զարգացման վրա: Հայտնի է, որ այս քոչվորների մեջ կար «թագավորական սկյութներ» անուն ունեցող մի ցեղ, որն ավանդաբար իշխող քաղաքական դիրք ուներ մյուս բոլոր ցեղերի նկատմամբ: Կիմմերա-սկյութական ակտիվությունը Առաջավոր ու Փոքր Ասիայում բերեց Ասորեստանի ու Լիդիայի անկմանը ու մարական և պարսկական թագավորությունների հզորացմանը, որն էլ ազդեցություն թողեց Վանի թագավորության վրա: Ստրաբոնը վկայում է, որ կիմմերները, որոնց «տրերներ» են ասում (կամ թե նրանց այլ ցեղակիցներ), թափանցել են Պոնտոսից աջ տարածված երկրները, երբեմն հարձակվելով Պաֆալագոնիայի, երբեմն՝ Փռյուգիայի վրա, երբ Միդասը՝ սկյութների թագավորը, ուրիշների պատմելով, ասես «ցուլի արյուն խմած լիներ, ընդհառաջ գնաց իր ճակատագրին»: Բոլոր դեպքերում Լիգդամիդը (կիմմերների առաջնորդ) իր զորքերով հասավ մինչև Լիդիա և Իոնիա, գրավեց Սարդը, սակայն զոհվեց Կիլիկիայում: Ինչպես պատմում են տրերներն ու Կոբը, նրանք, ի վերջո, վտարվել են սկյութների թագավոր Մադիայի կողմից[8]: «Է-ֆորոսը, որն այստեղ տեղադրում է կիմմերներին, հաստատում է, որ վեր-

[7] Ельницкий Л.А., "Скифия Евразийских степей", Новосибирск, 1977, стр. 5.
[8] Там же, стр. 68.

ջիններս բնակվել են գետնափոր տներում. նրա ասելով, կիմմերները իրար հետ կապվել են ինչ-որ ստորգետնյա խրամատներով ու օտարերկրացիներին ընդունել են գուշակության տաճարում, որը գտնվում էր խորը գետնի տակ: Կիմմերներն ապրել են լեռնային արտադրությամբ ու այն մարդկանց նվիրատվությամբ, որոնք կարիք ունեին գուշակության, ու տեղի թագավորը նրանց վրա որոշակի հարկ էր դրել: Գուշակության ծառաների մոտ հնուց եկող սովորություն կար. նրանցից ոչ ոք իրավունք չուներ տեսնել արևը ու միայն գիշերները կարող են նրանք դուրս գալ իրենց այրերից (այս հանգամանքն էլ իր երկում օգտագործել է Հոմերոսը)»[9]:

Փորձենք ավելի ճշգրտել կիմմերների կենտրոնակայանը, որտեղից ասպատակություններ են իրականացվել դեպի այլ շրջաններ: Ճանաչված հնագետ Ի.Մ. Դյակոնովը գրում է. «Կիմմերները Հայկական լեռնաշխարհ են շարժվել Դարյալով ու Այահիրով, ուրեմն հավանական է, որ Փոքր Ասիայի արևելքում նրանց հայտնվելուն նախորդել է Հայկական լեռնաշխարհի հյուսիս-արևելքում գտնվելը»[10]: Իսկ հույն պատմիչ Հերոդոտոսը (մ.թ.ա. 485 - 425 թթ.) ավելի ստույգ է հայտնում նրանց տեղը. «Սկյութները քոչվորներ են ու սկզբում ապրել են Ասիայում, հետո դուրս են մղվել մասսագետների կողմից ու, անցնելով Արաքս գետը, հեռացել են դեպի կիմմերական հողերը»[11]: Իսկ համոզվեցինք, որ կիմմերական հողերը Կյումեր անունով Տրտու գետահովտի արցախյան գյուղերն են: Ի վերջո, Դյակոնովը ևս գրում է. «Այսպիսով, մենք կրկին գալիս ենք այն հետևության, որ քոչվորները VII դարի սկզբին գտնվել են Մաննից հյուսիս՝ Արաքսի հովտում, իսկ գուցե և ավելի դեպի հյուսիս»[12]: Կա այն կարծիքը, որ Սարգոն II-ը մ.թ.ա. 750 թ. սպանվում է կիմմերների դեմ ճակատամարտում: Երեմյանն այն կարծիքն է հայտնում, որ նրանց կենտրոնը հանդիսացել է Կումայրի քաղաքը: Այստեղ մենք կարող ենք ավելացնել. քոչվոր կիմմերների մի մասը ժամանակավորապես տեղաբաշխվել է Տրտու գետի հոսանքում՝ բնիկների հարևանությամբ հիմնելով 6-7 բնակավայրեր, ու հավանական է, որ նրանց հիմնական զանգվածի այս տարածքներից հեռանալուց հետո մի մասը մնացած լինի այս բնակավայրերում ու ձուլված լինի բնիկ հայերի մեջ: Ինչ վերաբերում է քոչվոր սկյութներին ու սակերին, ապա հավանական է Կուր-արաքսյան հովտի դաշտային մասում նրանց ժամանակավոր հաստատված լինելը: Իսկ Սակասենե-Շակաշենի, ինչպես և Պարտատուա (սկյութական թագավոր) - Պարտավի վարկածները պետք է հաստատվեն

[9] Там же, стр. 227.
[10] Дьяконов, стр. 237.
[11] Дьяконов, стр. 245, см. также: Геродот, IV, 11.
[12] Дьяконов, стр. 250.

հին Տրտուականի գետահովտում հնագիտական պեղումներով: «Սխալ չէր լինի ասել, որ սկյութները, անջատվելով կիմմերական աշխարհից, - գրում է Լ.Ա.Ելնիցկին, - հետագայում ամբողջովին կլանել են նրանց, ինչպես հետո իրենք կուլ գնացին իրենց ցեղակից սարմաթներին, իսկ սրանք էլ կուլ գնացին գոթերին ու գուններին»[13]: Մակար եպիսկոպոս Բարխուտարեանցը, վկայակոչելով Սուրբ գրքի ուսումնական նպատակ ունեցող ներածության հեղինակ դոկտոր Անկըսեին, գրում է. «Արդ Յաբեթի սերունդին գալով ... Գոմերէ սերեցան կիմմերացիք, նախնի բնակիչք Խրիմու (Դրիմ), ինչպես նաև կիմբերացիք և Կեղտք (կելտեր), որ գրավեցին Գերմանիա և Մեծ Բրիտանիա»[14]: Խոսքը Աստվածաշնչյան Նոյի որդի Հաբեթի որդի Գոմերի մասին է[15]: Իսկ Աստվածաշնչյան այս անուններից յուրաքանչյուրը մի ցեղի նշանն է կամ անվանումը: Ըստ Սուրբ գրքի՝ Գոմերից ծնունդ է առնում Թորգոմը, որը Հայկի հայրն է: Տվյալ դեպքում Գոմերը համարվում է կիմմերների նախահայրը: Մովսես Կաղանկատվացին «Աղվանից պատմությունում» տեղեկություն է հայտնում Նոյի որդիներից Հաբեթի սերունդների ծագումնաբանության մասին. Հաբեթի որդիներն են՝ Գամերը, որի անունից առաջացել են գամիրները (Գամիրք երկիրը Կապադովկիայում, Կեսարիա մայրաքաղաքով), Մագոգը, որից և կելտերը, և գալաթները, Մադան, իսկ սրանից՝ մարերը, Հունանը, իսկ սրանից՝ հելլենները և հույները, Թոբելը, իսկ սրանից՝ թետալացիները, Մոսոքը, իսկ սրանից՝ լուրիկացիները, Թիրամը, իսկ սրանից՝ թրակացիները, Քետինը, իսկ սրանից՝ մակեդոնացիները: Թիրասի որդիներն են՝ Ասքանազը, որից և առաջացել են սարմատները, Երիփատը, որից՝ սավրոմատները, Թորգոմը, իսկ սրանից էլ՝ հայերը[16]: Սուրբ գրքի Հաբեթի որդի Գոմերը թե ինչքանով է առնչվում արցախյան կյումեր-գոմերի հետ, կրկին թողնենք հնագետներին, որոնք արցախյան Կյումեր անվանումը 2750 տարի պահպանած բնակավայրերի մոտ դամբարանների պեղումների շնորհիվ կարող են պատասխան տալ այս հարցին ևս: Հյուսիսսևծովյան ու մերձկովկասյան ցեղերի առաջին ներթափանցումները Առաջավոր Ասիա, ըստ հնագիտական տվյալների, նկատվում են մ.թ.ա. III և II հազարամյակների շեմին: Հենց այդ ժամանակաշրջանում էնոլիթի ու վաղ բրոնզի Կուր-արաքսյան մշակույթը բնորոշող տարրերը հզոր ալիքով հասցվեցին Ասորեստան և Պաղեստին, հենց այն ճանապարհներով, որոնցով շատ ավելի ուշ՝ մեկ ու կես հազարամյակ հետո, շարժվեցին

[13] Ельницкий стр. 241.
[14] Մակար Բարխուտարեանց, Պատմութիւն Աղուանից, Ա հատոր, Թիֆլիս, 1901, էջ 13:
[15] Աստվածաշունչ, Գիրք ծննդոց, գլ. Ժ, Կոստանդնուպոլիս, 1896, էջ 10:
[16] Մովսես Կաղանկատվացի, Պատմություն Աղվանից Աշխարհի, Եր., 1969, էջ 2, (այսուհետ՝ Կաղանկատվացի):

Կիմմերա-սկյութական ցեղերը[17]: Հին հունական հեղինակները երբեմն ակնարկում են նաև Իրանի հյուսիսից կիմմերների ու սկյութների ծագման վարկածը, որին արդեն հակվում են ավելի շատ ուսումնասիրողներ: Ստրաբոնը պատմում է, որ սակերը (սկյութական ցեղ) կիմմերների նման հարձակումներ էին գործում: Այդպես նրանք գրավել են Բակտրիանան, իսկ Հայաստանում նվաճել են նրա լավագույն հողատարածքը, որին թողել են իրենց անունը՝ Սակասենե, նրանք հասել են մինչև Կապադովկիա: Իսկ Կյուրոսի (550-530 մ.թ.ա.) մասին հույն աշխարհագետ Ստրաբոնը պատմում է, որ Կուր-Արաքսի գետահովտում մի ճակատամարտում պարտություն կրելով սակերից, նահանջում է, մի տեղ ճամբար է դնում, ապա գինին և ուտելիքը թողնում վրանների մեջ ու իբր խուճապից՝ հեռանում: Սակերը, որոնք հետապնդում էին Կյուրոսին, տեսնելով առատ ուտելիքն ու գինին, սկսում են հաղթողի խրախճանքը: Որոշ ժամանակ անց Կյուրոսը ետ է գալիս ու սրի մատնում հարբած, կռվին անպատրաստ սակերի բանակը: Պարսիկները ամեն տարի տոնում էին այդ հաղթանակը, սակերի տարագ էին հագնում, պարում, խրախճալից օր վայելում, այն անվանելով «Սակերի տոն»: Կյուրոսը այս մեծ հաղթանակի առթիվ այդտեղ մի մեծ հողաթումբ է կառուցում, այն պարսպապատում, թումբի կատարին տեղադրում Անահիտի տաճարը»[18]:

Սկյութա-կիմմերական քոչվորների դեպի հարավ առաջխաղացումը կասեցրին հայ-արմենները: Մ.թ.ա. 189 թ. սկսած Արտաշես Ա-ի զորքերի դեպի հյուսիս շարժումով կանգնեցրվեց կիմմերների հարավի ուղղությամբ նոր տեղաշարժը, Հայաստանի մեջ ընդգրկեց ոչ միայն Կուր-արաքսյան հովիտը, այլև Գուգարքն ու Խորձյունը, երկրի սահմանները հասցվեց մինչև Կովկասյան լեռները: Իսկ կիմմերական, սկյութական ժողովուրդները, ենթարկվելով ավելի հզոր ուժին, խառնվել են նրանց և հայացել: Մերձկասպյան շրջաններից ու Հարավային Ռուսաստանից «ներգաղթած այդ ժողովուրդների ավելի քան 500 տարվա քաղաքական և մշակութային մեծ դերը Հայաստանի հյուսիսում ու նրանց միաձուլումը հայերի հետ պատմական մի նոր իրողություն է, որ այսուհետ պետք է նկատի ունենան ոչ միայն պատմագետները, այլև լեզվագետներն ու հնագետները»[19], - եզրակացնում է Մանանդյանը: Եվ ահա Տրտուականի գետահովտում հայտնաբերվում է Արցախի բնիկ հայերի մեջ անհայտացած կիմմերների հագիվ նշմարելի հետքերը, փաստորեն մի կղզյակ, որը պահպանել է երբեմնի հզոր ժողովրդի անունը: Չնայած կիմմերները Տրտու գետի կիրճում բնիկների մեջ

[17] Ольницкий, стр. 27-28.
[18] Страбон, стр. 484.
[19] Մանանդյան, էջ 41:

կորցրել են ցեղային ամեն մի յուրահատկություն, իսկ տոհմապետները խառնվել են տեղի հայկական իշխանական տներում, սակայն մի շարք բնակավայրերում, այնուամենայնիվ, հաջողվել է պահպանել ցեղանունը, ենթարկվելով գավառանվան Մեծ Կյումանք>Մեծ Կյուանք>Մեծ Կուանք ձևափոխություններին: Իզուր չէ, որ Կաղանկատվացին մի քանի անգամ հաստատում է, որ Մեծ Կուանքի տեր Վաչական իշխանական հզոր հարստությունը, որպես թագավորական տուն, երկար ժամանակ տիրել է Հայաղվանքում, ինչպես և որպես վերակացու, կառավարել Բուն Աղվանքի վրա: Սկսած մ.թ. 3-րդ դարի երկրորդ կեսից, ինչպես Արցախի, այնպես էլ Կուր-արաքսյան միջագետքի կյանքում կարևոր դեր են ստանձնում Մեծ Կուանքի իշխանները:

Հետաքրքրություն է ներկայացնում նաև Մեծ Առանք գավառանունը: Մինչ Վաչական տոհմի ուժեղանալն ու տիրապետող դառնալը, ինչպես վկայում է պատմահայր Խորենացին, հենց այս տոհմն էր իշխում Հայոց Արևելից կողմանքում: «Առանք» բառը կազմված է «առ» արմատից և տոհմանվան «անք» վերջածանցից: Առան անունը հենց «առն» բառն է, որը ծագում է «արու» ձևից: «Առ»-ը նշանակում է առնել, հափշտակել[20]: Առյուծ բառը ևս նույնն է նշանակում: Մեծ Առանք գավառում առյուծը իշխող տոհմի տոտեմ-գինանշանն է եղել: Միջնադարում ևս այդ մասին չէին մոռացել այս իշխանական տան ժառանգները: XIII դարի Գանձասարի վանքի գավթի մուտքի երկու կողմերում տոտեմ-առյուծներ են պատկերված: Իսկ հայտնի է, որ Մեծ Առանք գավառի տարածքն ընդգրկել է Տրտու-Թարթառի վերին հոսանքի աջ ափից մինչև Կարկառի ձախ ափերը, որտեղ գտնվում էր և Կարկառ-Շուշի հռչակավոր բերդը: Տարբեր ժամանակահատվածներում ու տարբեր քաղաքական պայմաններում գավառների անուններն ու սահմանները անընդհատ փոփոխություններ են կրել: Ահա ամենահավաստի աղբյուրներից մեկը՝ Մովսես Կաղանկատվացին իր «Աղվանից աշխարհի պատմությունում» գրում է. «Հասանեին ի Ռուտակ գավառն Մեծ Կողմանց ի Չղախեան հովիտն յասպարիաձև դաշտակն առ ափին Տրտուական գետոյն, որ է ի վիճակին Մեծիրանց»[21]: Իրականում գոյություն ունի Կաղանկատվացու առաջարկած Տրտուականի երկու Չղախեան գետահովիտ-հեղեղատ, որից մեկը Մատաղիս գյուղից սկիզբ առնող մեր ժամանակների Չայլախն է, մյուսը գտնվում է Հաթերք գյուղի դիմացի ձորում, որտեղ ևս Տրտուականը ճյուղերի է բաժանվում: Ռուտակը, որ Աղվանքի թագավորական տան կալվածքն է, Ս.Երեմյանը նույնացնում է Ռուստակ կամ Ռոստա-

[20] Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, Եր., 1971, էջ 261, 259, (այսուհետ՝ Աճառյան):
[21] Կաղանկատվացի, էջ 38:

կի հետ ու հայտնում այն կարծիքը, թե հարկ է այն տեղադրել Գյուլիստանում[22]: Իսկ Ալիշանը հայտնում է, որ Հայաստանը Պարսկաստանի կողմից գրավելուց հետո գավառների և իշխանությունների նոր անուններ են լսվում, որոնցից հնագույնն են Ռոստստակն ու Չղախը՝ Ինճե գետի հովտում[23]: Երեմյանն ու Ալիշանը Ռոստստակ գավառը տեղադրում են Գյուլիստանում, որը հակասում է Կաղանկատվացուն: Բացի այդ, Ուտի-Ռուստակ գավառը, ըստ Աշխարհացույցի՝ Ուտիքի տարածքում է և ընդգրկում է 2800 կմ քառ. տարածք, ինչն անհնար է Մեծ Կուանքի լեռներում: Հնարավոր է, որ թագավորական կալվածք հանդիսացող Ռուտակը համանուն դաշտային գավառի ամառանոցը լիներ Մռավի զով փեշերին, իսկ բուն գավառը՝ Տրտու գետի դաշտային գոտում: Ալիշանը Գյուլիստանի համար հայտնաբերել էր մի նոր անուն ևս՝ Զավե («զավ»-ն ըստ Հր.Աճառյանի «սերունդ» է նշանակում[24]), ապա և դրանց տարբերակները՝ Զեյվա կամ Զեյվազ: Այս վերջին անվանումը հիշատակվում է նաև հետագա դարերում: Եթե բերդի Զավեն անունը անհետացել է, ապա այն պահպանվել է մարդկանց հատուկ անուններում: Գյուլիստան - Շահումյանի շրջանում այն պահպանվել է Զեյվա գյուղի անվան մեջ: Ամառանոցային տարբերակով է լուծվում նաև Աղվանից օրենքների սահմանման նպատակով հայտնի ժողովի վայրի՝ Աղվեի տեղադրման խնդիրը: Եթե Աղվե գավառը Ուտիքում է, ապա Աղվե «հովվոցն» ու ամրոցը Երեմյանը տեղադրում է Գյուլիստանում, իսկ Լեոն այն տեղադրում է «Մռավ լեռան վրա, որ Պարտավի դիմացն է»: Ստացվում է, որ Ուտիքի դաշտային գավառներն Արցախի լեռների փեշերին ունեցել են հենց այդ գավառների անուններով ամառանոցներ, որոնք տեղադրվել են այդ գավառներին կից կամ ամենամոտ լեռնալանջերին: Կաղանկատվացին հայտնում է, որ ողջ ամառը Պարտավ-Ուտիքը տեղափոխվում է Արցախի լեռները: Ու մի ամառ (IX դ. սկզբին) անձրևները գոյացրին սաստիկ հեղեղատներ, որոնք Մեծիրանք (Մեծ Առանք) գավառում ութ հարյուր վրան քշեցին տարան թափեցին գետը: Եթե դաշտային Ուտիքից խաշնարած տոհմերն իրենց մանր ու խոշոր եղջերավոր անասունների հոտերը ամռան տոթից փրկելու համար քշում են Արցախի ալպյան մարգագետինները, ապա դաշտային գավառների տերերը հով լեռներում ունեին իրենց ամառանոց ավանները, որտեղ էլ անց էին կացնում տարվա 6 – 7 ամիսները: Արցախի լեռներում ապրող երկրագործները հնուց ի վեր հողատարածքներ ունեին դաշտավայրերում: Ամեն մի գյուղ ուներ իր համայնքին հատկացված տարածքը, որը գարնանից սկսած մշակում էին, ցորեն կամ գարի

[22] Երեմյան, էջ 75:
[23] Ղ-ոնդ Ալիշան, Արցախ, Եր., 1993, էջ 11 (այսուհետ՝ Ալիշան):
[24] Աճառյան, հ. Բ, էջ 85:

ստանում, խոտ կուտակում: Մեծ Կուանքի գյուղերը այդ դաշտերը ոռոգում էին Չղախի (հետագայում՝ Չայլախ) հեղեղատում Տրտու գետից դուրս եկող առուներով: Սա դաշտի ու լեռների բնակիչների կամ խաշնարած ու երկրագործ մարդկանց միջև ստեղծված մի հավասարակշիռ իրավիճակ էր գոյացրել, որը համակարգի էր վերածվել և ապահովում էր փոխադարձ անվտանգությունն ու շահույթը: Դեպի արոտավայրերը տանող ճանապարհներին լեռների բնակիչները վաճառքի տեղեր (շուկա) էին բացում, որտեղ պարզ ապրանքափոխանակություն էր տեղի ունենում տափաստանայինների ու լեռնայինների միջև: Լեռնցիները հիմնականում արհեստագործական ծառայություններ էին իրականացնում (փայտե, կավե, մետաղյա իրեր, գործիքներ, պայտեր, սանձեր և այլն), իսկ խաշնարածները վարձատրում են կաթնամթերքով, բրդով, մորթով... Նման վաճառատեղին Մեծ Կուանքում Կաղանկատույք ավանն էր (Թարթառ Բազար), Մեծ Առանքում՝ Վաճառ ավանը Կոճղուտ գյուղի մոտ, Ծարում՝ Քարվաճառ ավանը: Չմռան ամիսներին Կուր - Արաքսի հովիտը իսկական դրախտավայր էր խաշնարածների համար: Երբ կենտրոնական Ասիայից բացվեց դեպի Իրան տանող ճանապարհը (մինչ այդ ճանապարհը փակում էր Կասպից ծովի հետ ընդհանրություն կազմող Արալյան ծովը, որը ողողում էր միջինասիական անապատները) նվաճողները սկսեցին հաջորդել իրար, և բոլորն էլ իրենց համար ձմեռոց էին ընտրում Կուր - Արաքսի հովիտը: Ամեն անգամ խախտվում էր բնական հավասարակշռությունը, քանի որ անընդհատ փոփոխվում էր դաշտային բնակչության տարրը: 18-րդ դարում Արցախի սիրտը թափանցած քոչվորների առաջնորդները հետագայում թափառական խաշնարած ցեղախմբեր բերեցին Արցախի լեռնային տարածքն ու նստակյաց դարձրին, ապա Ծարի, Քաշաթաղի, Քաշունիքի, Կովսականի և Մուխանքի գավառներում մշտական բնակվելու բերեցին քուրդ վերաբնակիչների, որոնք աստիճանաբար այդ տարածքից դուրս մղեցին բնիկ ժողովրդին: Մինչև այսօր այդ տարածքներում գտնվել են բռնագաղթի ու ջարդերի ենթարկված բնիկների մշակույթի հետքերը, որոնք հազարավոր ճարտարապետական հուշարձաններ են, խաչքարեր, այստեղ ստեղծված ձեռագիր գրքեր:

Նկատի ունենալով Վաչական Գ-ի ակտիվ գործունեության վայրերը, Աղվեն հեռու չէր եղել Ուռեկան արքայանիստ ամառանոցից և գտնվել է հետագայում Բերդակուր կամ Մայրաքաղաք (Քաղաքատեղ) վայրում, որը հանդիսացել է Աղվանից կաթողիկոսների ամառային նստավայրը:

Գյուլիստանին է վերագրվում բերդի ու գավառի մեկ այլ անուն ևս, դա Հերքանն է[25]: Ինչ վերաբերում է գավառանվանումների «մեծ» բառին, ապա

[25] Ալիշան, էջ 41

այն բնիկ հայկական բառ է[26], որն այստեղ «զորեղի» նշանակություն ունի: Այն օգտագործել են նաև Մեծ Հայքի հարևանները, օրինակ, Մցխեթի տեղանունը կազմվել է «Մեծ Խեթ»-ի ձևափոխությունից: Այստեղ «խեթը» հայտնի ցեղանուն է: Ու նման բացատրությունը նաև պատմական հիմքեր ունի և չպետք է վիրավորի վրաց գիտնականների ազգային ինքնասիրությունը:

Առանձին հետաքրքրություն է ներկայացնում Ուռեկան արքայական ապարանքի և IV դարի սկզբներին գործած Ուռնայր Ա արքայի անունների «ուռի» արմատների նույնությունը: Ըստ երևույթին, հեթանոսական շրջանում ուռենին, որպես գարնան ավետաբեր, պաշտամունքի առարկա է ծառայել Մեծ Կողմանքում (Մեծ Կուանք), ուստի և նորածին արքայազնը հեթանոսական անունով է կոչվել: Կարելի է նաև համոզված ասել, որ Ուռեկան-Հոռեկում էր կառուցվել Ուռնայր Ա արքայի նախնիների՝ Քաջ Վաչականի և Վաչեի, ինչպես և նրանց հաջորդների արքայանիստը, ու հետագա դարերին տեղի իշխանները, մինչև Արվյան-Բեկլարյան մելիքների վերջին ժառանգների հողազուրկ լինելը՝ խորհրդային իշխանության հաստատումը, հավատարիմ են մնացել այս ավանդությանը՝ Հոռեկի ապարանքը պահպանելով իբրև իշխանանիստ: Կաղանկատվացու Աղվանից տան թագավորների անվանացուցակում Ուռնայրից հետո Հոչական – Վաչականն է: Առանձին հետաքրքրություն է ներկայացնում Աղվանից արքաների անվանացանկում Մերհավան անունը: Այն կազմված է «մեր» ու «հավան» բառերի միասնությունից, որը յուրահատուկ է արցախցիներին: Օրինակ, «Ապրես» կանչելով, փաստորեն այս անվան տիրոջը անընդմեջ, ուզած չուզած՝ երկար կյանք են մաղթում: «Մերհավան» կանչելով անընդմեջ ասում են, որ հավանում են այս անունը կրողին: Նման նշանակություն ունեն «Անուշը», «Զվարթը», հեթանոսության ժամանակներից մեզ հասած տասնյակ այլ անձնանուններ: Մերհավան, Ասա ու Սատո թագավորների մասին անուններից բացի, Աղվանից պատմության հեղինակները այլ տեղեկություն չեն ավանդել:

Արցախի մասին վկայող առաջին օտար հեղինակը հույն աշխարհագետ Ստրաբոնն է (մ.թ.ա. 63 – մ.թ. 23), որն իր «Աշխարհագրությունում» առաջին անգամ ճշգրտում է Հայաստանի և հարևան երկրների սահմանները: «Կիրը (Կուր գետը) սկիզբ է առնում Հայաստանում, - գրում է Ստրաբոնը, - և մտնում է նշված (Կուր-Արաքսի - Բ.) հարթությունը, ընդունում է Արագը և այլ վտակներ, ապա նեղ հովտով հոսում է դեպի Ալբանիա, այդ հովտի և Հայաստանի միջև գետը հզոր հոսքով անցնում է մի հարթավայրով, ընդունում է ավելի շատ գետեր...»[27]: Ուրեմն, Կուր գետը Ալբանիա (Աղվանք) երկրի ու Հայաստանի սահմանագիծն է: Ստրաբոնի մեկ այլ վկայություն. «Նրանք (աղվանները - Բ.) բնակվում են Իբերիայի և Կասպից ծովի միջև: Հարավային կողմում Հայաստանն է: Հայաստանը մասամբ հարթավայր է, մի մասը՝ լեռնային երկիր է, ինչպես Կամբիսենան (Կամբեճանը - Բ.), որտեղ հայերը միանգամից սահմանակից են Իբերիային և ալբաններին»[28]:

Խորհրդային Ադրբեջանի գիտնական Աբաս - Կուլի - Աղա Բաքիխանովը գրում է. «Դատելով զանազան հանգամանքներից ու աղբյուրների տեղեկություններից, կարելի է եզրակացնել, որ Կուրի աջափնյակը՝ մինչև Արաքսի հետ միախառնվելու տեղը, կազմել է Հայաստանի մասը»[29]: Իսկ Ստրաբոնը տեղեկություններ է թողել նաև Հայաստանի Հյուսիսարևելյան կողմանց նահանգների մասին, որտեղ Օրխիստենան Արցախի հունարեն անվանումն է, «որը տալիս է ամենամեծ թվով հեծելազոր»[30]: Այսպիսով, բոլոր վկայությունները կան, որ հայոց Հյուսիսարևելյան երկրամասը՝ Արցախ - Ուտիքը, բուն Աղվանքից (Ալբանիայից) անջատված է Կուր գետի սահմանագծով, իսկ հարավային կողմում Մարաստանի Ատրպատականից սահմանազատված է Արաքս գետով: Հայ հեղինակներից Փավստոս Բյուզանդը գրում է. «Մուշեղ սպարապետը Կուր գետը սահման դրեց (մեր) աշխարհի և Աղվանքի մեջ՝ ինչպես որ առաջ էր»[31]:

Հայոց Հյուսիսարևելյան կողմանքը հնում Առան է կոչվել: Այս մասին պատմահայր Մովսես Խորենացին գրում է. «Վաղարշակ թագավորը (մ.թ.ա. 134-112 թթ. - Բ.) արևելյան-հյուսիսային կողմի մեծ, բազմաբյուր (բնակչություն ունեցող - Բ.) կողմնակալությունը, (կողմնակալ նշանակելով - Բ.) Առանին, որը անվանի մարդ էր, առաջինը բոլոր մտավորական և հանճարեղ գործերում, Կուր կոչված մեծ գետի ընթացքով, որ անցնում է մեծ դաշտով: Բայց գիտցիր, որ մենք առաջին գրքում մոռացանք այս մեծ և անվանի ցեղը, այսինքն Սիսակից սերված գունդը, որ ժառանգեց Աղվանից դաշտը և այս դաշտի լեռնակողմը Երասխ գետից մինչև Հնարակերտ կոչված ամրոցը, աշխարհն էլ Աղվանից կոչվեց նրա քաղցր բնավորության պատճառով, որովհետև նրան «աղու» էին ասում...: Սրա զավակներից են սերվում ուտեացոց ազգը և գարդմանցոց, ծավդեացոց, գարգարացոց իշխանությունները»[32]: Հետաքրքիր է, որ մինչև ուշ միջնադար Արցախի և Ուտիքի

[26] Աճառյան, հ. Գ, էջ 295:

[27] Страбон, География, Москва, 1964, книга XI, стр. 474 (далее - Страбон).
[28] Там же, стр. 475.
[29] Аббас-Кули-Ага Бакиханов, Гюлистан – Ирам, Баку, 1926, стр.8 .
[30] Страбон, стр.497.
[31] Փավստոս Բյուզանդ, Հայոց պատմություն, Եր., 1987, էջ 323:
[32] Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, Եր., 1990, էջ 73 (այսուհետ՝ Խորենացի):

իշխանական տների ներկայացուցիչները իրենց առանձահիկներ էին անվանում, այսինքն՝ Առան նահապետից սերված իշխաններ: Ու Առանից սկսած նրա ժառանգների իշխանությունը հայոց այս երկրամասում ողջ երկու հազարամյակ տիրել է անընդմեջ: Թերևս, այս տեսանկյունից Արցախի պատմությունը եզակի երևույթ է մարդկության պատմության մեջ: Իսկ որ Առանը միշտ հայկական է եղել, հաստատում են նաև օտար շատ աղբյուրներ: «Ալբոդան» հռչակավոր աշխատության հեղինակ Իբն–ի Ֆակիհը գրում է, որ «Առանը Արմենիայի առաջին հողային կալվածքն է և չորս հազար կալվածքներ ունի»[33]: Այս տեսակետն են արտահայտում նաև իրանցի լեզվագետ Դեհխոդան, արաբ մատենագիր Դամասկոսցին (Դամեշխի): Ինչ վերաբերում է Աղվանքին, ապա այն ընդգրկում է Կուրի ձախ ափից մինչև կովկասյան լեռնաշղթան: Այստեղ ապրել են բազմալեզու 26 ցեղեր: Պատմահայր Խորենացին իր կազմած աշխարհացույցում գրում է. «Աշխարհ Աղբանիա, այսինքն, Աղուանք, լերից Վրաց, յերի Սարմատիոյ առ Կավկասով, մինչև ցՀայոց սահմանաւ, առ Կուր գետու, թէպետ և աստի Կուր զամենայն սահմանս հանեալ ի Հայոց: Բայց մեք ասացիք զբուն աշխարհն Աղուանից, որ ընդ մեջս է մեծի գետոյս Կուրայ և Կավկաս լերինն»[34]:

Ստրաբոնը, նշելով Հայաստանի սահմանները, գրում է. «Այնպես, որ բոլորը միալեզու եղան», այսինքն՝ Հայաստանի սահմաններն ընդունվել են հայող լեզվի տարածման եզրագծով[35]: Ավելի քան հինգ հազար տարի հայերեն են խոսում Կուր - Արաքսի հովտում, Շակաշենում, Կամբեճանում, Փայտակարանում...: Լեզվաբանները հայոց 51 բարբառներից ամենամեծը համարում են Արցախի բարբառը, և ինչպես գրում է մեծ լեզվաբան Հր. Աճառյանը, նրա տարածման «սահմանները կփռվին հյուսիսեն՝ մինչև Կովկասի վերջին ծայրերը, հարավեն՝ մինչև Թավրիզ, արևելքեն՝ Կասպից ծովին եզերքները, արևմուտքեն՝ Սևանա լիճը և Երևանի ու Կարնո բարբառների սահմանագիծը»[36]: Իհարկե, արցախյան բարբառը իր ձևավորման ու գոյության հազարամյակների ընթացքում կրել է հարևան ժողովուրդների, մանավանդ պարսկերենի և ուշ շրջանում՝ Կուր - Արաքսի հովիտ թափանցած քոչվոր ցեղերի ազդեցությունը: Գիտնականներն ապացուցում են, որ այս բարբառը ծնունդ է առել բնիկ ժողովրդի հետ, իհարկե, ժամանակի ընթացքում հարստացել շփումների միջոցով, կրել նաև գրաբարի ազդեցությունը, իր հերթին ազդել գրական լեզվի վրա: Բարբառն իր մեջ անաղարտ

[33] Իբն–ի Ֆակիհ, Ալբոդան Աբուբաքր Ահմադ, Թեհրան, 1970, էջ 130 – 134:
[34] Մովսես Խորենացի, Աշխարհացոյց Մով. Խորենացիոյ յաւելուածովի նախնեաց, Մատենագիրք Հայոց, Ա հատոր, Ե դար, Եր., 2003, էջ 2153:
[35] Ստրաբոն, Աշխարհագրություն, Եր., 1940, էջ 57:
[36] Հր.Աճառյան, Հայ բարբառագիտություն, Մոսկվա, 1911, էջ 61:

պահպանել է հնդեվրոպականի շատ արմատներ, որոնք չկան ժամանակակից գրական հայերենում: Արցախյան բարբառն իր հերթին բաժանվում է երեք ճյուղերի՝ վեց բարբառներով, բազմաթիվ ենթաբարբառների ու խոսվածքների[37]: Գյուլիստանի ենթաբարբառը Թալիշի խոսվածքի հետ արցախյան բարբառի մեջ առանձնանում է հատուկ երանգով, որին յուրահատուկ է հարցական նախադասության վերջին բառի վերջին վանկի մարող բացականչականը: Նման երանգը յուրահատուկ է եղել Փայտակարանի ու Ղարադաղի հայության խոսվածքին, որը մասամբ պահպանվել է թեհրանահայության խոսվածքում: Կարելի է ենթադրել, որ Գյուլիստանի և Թալիշի բնակչության մի մասը, հավանաբար, ուշ միջնադարում գաղթել է Փայտակարանից, իր հետ բերելով նաև Թալիշի լեռների բնակավայրի անունը:

Ինչ վերաբերում է Կուրի ձախափնյա Աղվանք - Ալբանիային, ապա այստեղ, ըստ հույն աշխարհագետ Ստրաբոնի և հետագա հայ հեղինակների, խոսում էին 26 տարբեր լեզուներով ու մեկ ընդհանուր լեզվի գալ չէին կարող, ուստի և դժվար էին իրար հասկանում, չնայած հզոր երկրների պարտադրանքով ընդհանուր պետություն էին ունեցել: Ուրեմն, աղվաներեն լեզու կամ աղվան (ալբան) առանձին էթնիկական խումբ երբեք գոյություն չի ունեցել, ուր մնաց, թե որևէ ազդեցություն ունենար ավելի բարձր մշակութային մակարդակ ունեցող հարևանների՝ Կուրի աջափնյակում բնակվող հայերի լեզվամտածողության վրա, ինչը համառորեն փորձում էին հաստատել Բաքվի գիտնականները, անշուշտ, ունենալով քաղաքական նպատակներ, այն է՝ գիտականորեն հաստատված հիմք ստեղծել Կուր - Արաքսյան հովիտը թուրք–թաթարական նախահայրենիք կոչելու համար: Ինչ վերաբերում է «Ալբանիա» տեղանվանը, ապա այն կելտական բառ է, որը պահպանվել է նաև նրան ցեղակից անգլերենում ու ֆրանսերենում և նշանակում է «լեռների երկիր»: Այս տեղանունը պահպանվել է Շոտլանդիայում, Իտալիայում, Բալկանյան թերակղզում ու Կովկասում: Նման երևույթը բացատրվում է կելտական ցեղերի կատարած ասպատակություններով, որոնց արդյունքում նվաճած երկրներին էին թողնում իրենց հարազատ անվանումը: Հայտնի է, որ կելտ-գալլերի ռազմական միության նվաճումները մ.թ.ա. հազարամյակների կեսերին հասել են մինչև Փոքր Ասիա, այստեղ հիմնել Գալատիա (Գաղաթիա) պետությունը, որի մասին հիշատակում են Խորենացին, Կաղանկատվացին, Եղիշեն: Հետագայում Բուն Ալբանիա թափանցած թրքախոս ցեղերը իրենց լեզվով թարգմանեցին երկրանունը և կոչեցին «Դաղստան»: Կելտ-գալլերի Հարավային Կովկաս թափանցելու մասին է վկայում նաև «Գարդմանք» գավառանունը: Այն կազմված է «գարդ» և «ման» արմատներից, իսկ «ք»-ն երկրանվան կամ տեղանվան հայերեն

[37] Կ.Դավթյան, Լեռնային Ղարաբաղի բարբառային քարտեզը, Եր., 1966, էջ 257:

վերջածանցն է: Եթե առաջինը բացատրվում է Գալատիա>Գալտ>Գարդ ձևափոխությամբ, ապա երկրորդը հնդեվրոպականի «մարդն» է, որի արդյունքում ունենում ենք մինչև մեր օրերը պահպանված «գարդման» կամ «գալաթացի»: Անշուշտ, այս տեղանունը ինքնին հուշարձան է, որ շուրջ երեք հազարամյակ պահպանել է բնիկ ժողովուրդը՝ հայությունը: Այս տեսակետի յուրօրինակ հաստատումն է Աղվենի ժողովի աշխարհիկ ներկայացուցիչների թվում Կաղանկատվացու կողմից Գարդմանքի իշխանների թվում Գերմանոսանի անունը[38]: Սա պատահական երևույթ լինել չէր կարող: Իշխանական տոհմը, չնայած վաղուց հայացել էր հայկական միջավայրում, սակայն պահպանել էր կելտ-գալլական տոհմանունը:

Կարևոր խնդիր է նաև Կուր - Արաքսի հովիտն ընդգրկող Առանի ու Բուն Աղվանքի կարգավիճակի որոշումը: Շիրակացու VII դարի Աշխարհացույցից ու մինչ այդ եղած փաստաթղթերից (գահանամակներ, զորանամակներ և այլն), ինչպես և վաղ միջնադարի հեղինակների վկայություններից հայտնի է, որ Արցախը Մեծ Հայքի 10-րդ նահանգն է, Ուտիքը՝ 12–րդը: Մովսես Կաղանկատվացին իր պատմությունում գրում է Աղվանից թագավորական տան մասին, նշում 10 թագավորների՝ Քաջ Վաչական, Վաչե, Ուռնայր, Հոչական (Վաչական), Մերհավան, Սատո, Եսվաղեն, Վաչե և Վաչական Գ անունները: Ըստ երևույթին, Պարսկաստանի Շապուհ I թագավորի (241/43 - 272) օրոք Մեծ Հայքը թուլացնելու նպատակով նրա Արցախ (տարածքը՝ 11 528 կմ^2) և Ուտիք (տարածքը՝ 11 315 կմ^2) նահանգները III դարի կեսերին բռնի անջատել են, դարձրել Պարսկաստանի վասալ թագավորություն, Արցախի բազմաճյուղ իշխանական տներից առավել ազդեցիկին՝ Մեծ Կուանքի իշխան Քաջ Վաչականին շնորհելով գահ, միևնույն ժամանակ պարսից թագավորական տան հետ ամուր կապ ստեղծելու նպատակով նրան կնության տալով թագավորական տան մերձավոր ազգակցուհիներից մեկին (հաճախ՝ թագավորի եղբոր կամ քրոջ աղջկան): Այս թագավորներին էր հանձնարարված նաև Բուն Աղվանքի՝ Կուր գետի ձախափնյակի երկրի կառավարումը: Թագադրելու այս ավանդույթը պահպանվեց մինչև Վաչական Գ: Իսկ Հայաստանում քրիստոնեությունը որպես կրոն ընդունելուց հետո, որպես կանոն, թագավորազններին պարսից արքունիքում գրադաշտություն էին ընդունել տալիս, նոր միայն պսակում ու գահին արժանացնում: Սակայն հայրենիք վերադառնալուց հետո այս թագավորներն իսկույն վերադառնում էին քրիստոնեությանը, քանի որ Արցախ-ուտիքյան միջավայրն ամբողջովին քրիստոնեական էր: Եթե ձևականորեն նրանք ենթակա էին պարսից իշխանությանը, ապա իրականում նպաստում էին հայ մշակույթի զարգացմանը, անմիջականորեն արձագանքում Մայր հայրենիքի կենտրոնում տեղի ունեցող իրադարձություններին՝ քրիստոնեության ընդունմանը, նոր գրերի տարածմանն ու դպրոցների, եկեղեցիների հիմնադրմանը, հայրենիքի պաշտպանությանն ու ակտիվորեն մասնակցում պարսից բռնակալական լուծի դեմ համահայկական ապստամբություններին, հաճախ՝ առաջնորդում այն: 363 թվականի «ամոթալի» դաշնագրից հետո միայն «օրինականացվեց» Մեծ Հայքից Արցախ – Ուտիքի անջատումը, որը պաշտոնապես ճանաչվեց 387 թ. համաձայնագրով: Բուն Աղվանքի ու հայոց Արցախ-Ուտիքի միացմամբ ստեղծվեց մարզպանություն, որին տրվեց Աղվանքի անունը: Փաստորեն հայոց Առանի (Կուր - Արաքսի հովիտ) վրա վերահաստատվեց մարզպանության Աղվանք (Ալբանիա) երկրանունը: Սակայն պահպանվում էր ողջ մարզպանության տարածքում հայկական թագավորության գերակայությունը: Հայ հեղինակները մարզպանության հայկական մասը Բուն Աղվանքից տարբերելու համար հաճախ օգտագործում էին Հայաղվանք անվանումը:

Մեծ Կուանքի թագավորական դինաստիան փաստորեն տիրել է 3–րդ դարից մինչև 520 թվականը՝ շուրջ 270 տարի:

4309

ՄԵԾ ԿՈՒԱՆՔԻ ՎԱՉԱԿԱՆ ԹԱԳԱՎՈՐԱԿԱՆ ՏԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ 253 – 520 ԹԹ.

III դարի առաջին քառորդի ընթացքում Հայաստանին հարևան Իրանում պարթև Արշակունիների միջև գահակալական կռիվները զգալի թուլացրին երկիրը: Դրանից օգտվեց Պարսք նահանգի Ստահր քաղաքի Անահիտ դիցուհու տաճարի քրմապետ Սասանի թոռ Արտաշիրը: Նա 224 թ. ապրիլի 27-ին Որմիզդական դաշտի վճռական ճակատամարտում հաղթեց պարթև Արշակունի Արտավան V թագավորին, սպանեց նրան, 226-ին Տիզբոնում թագավոր հռչակվելով, հիմնեց Սասանյան դինաստիան: Պարսից գահի հիմնական հավակնորդները հայոց Արշակունիներն էին, ուստի Սասանյան Արտաշիրը ամեն քայլի դիմում էր՝ վերացնելու Մեծ Հայքի Արշակունի թագավորներին: Այդ նպատակով նա ոմն պարթև Անակի միջոցով դավադրություն է սարքում և 253 թ. սպանել տալիս հայոց Խոսրով Ա Մեծ թագավորին:

Միջագետքում Հռոմեական զորքերի 244 թ. Սասանյաններից կրած պարտությունից հետո Մեծ Հայքի թագավորությունը 252 թ. բաժանվեց Հռոմի և Պարսկաստանի միջև: Սասանյան մասում թագավորում էր նրանց դրածոն՝ Խոսրովի ազգական Արտավազդը, որին հետո փոխարինեցին սասանյանների գահաժառանգները: Հայաստանը թուլացնելու նպատակով 253 թ. Հայոց Հյուսիսարևելյան կողմանքը (Արցախ և Ուտիք) Սասանյանները անջատում են Մեծ Հայքից, միացնում Կուրի ձախափնյա Աղվանքին (Ալբանիա), վասալ

[38] Կաղանկատվացի, էջ 69:

թագավոր կարգում Արցախի իշխանական տներից մեկի ներկայացուցիչին, տվյալ դեպքում՝ Մեծ Կուանքի իշխան Քաջ Վաչականին, նրա կառավարմանը հանձնելով նաև Կուրի ձախափնյա Բուն Աղվանքը: Այսպես սկիզբ է դրվում Վաչական թագավորական դինաստիային, որը միացյալ Աղվանքում անընդմեջ տիրեց շուրջ 270 տարի: Հայոց Արցախ-Ուտիքի վրա տարածվեց Կուրի ձախակողմյան երկրի՝ Աղվանքի անունը: Քաջ Վաչականի մասին մատենագիտական տեղեկությունները կցկտուր են: Ժողովրդական մի աղոտ ավանդություն նրա անունը կապում է Մեծ Կուանքի գավառի Էրքեջ գյուղի հետ, որի ճշգրիտ անունը, հավանաբար, Այր Քաջ է եղել: Նրա թագադրումը տեղի է ունեցել Տիզբոնում, որտեղ նախ ամուսնացրել են Սասանյան տոհմի աղջկա հետ, դրանով իսկ նրան ու նրա սերունդներին դարձնելով Սասանյան թագավորական տան ազգակից, ապա և գահ են նվիրել: Ըստ երևույթին, նրան նախ գահերեց են ընտրել Առան երկրամասի իշխանները, նոր միայն ուղարկել Տիզբոն՝ կին և թագ ստանալու:

Ինչպես երկրամասի, այնպես էլ Մեծ Հայքի ու ողջ տարածաշրջանի համար վճռական նշանակություն ուներ կրոնի ու հավատքի շուրջը տեղի ունեցող խմորումները: Քրիստոնեությունը վճռական գրոհի նետվեց Հայաստանում: Քրիստոսի աշակերտներից Թադևոսն ու Բարդուղոմեոսը, չնայած նահատակվեցին, սակայն բավականին հիմք էին ստեղծել քրիստոնեության հաղթանակի համար: Առաքյալների աշակերտները ինքնազոհողությամբ քրիստոնեական ուսմունքը հասցնում էին ամենուր: Իսկ Պարսից թագավորները Հայաստանն իրենց ազդեցության տակ էին պահում Զրադաշտի գաղափարախոսության միջոցով: Իրանից ուղարկված մոգերը, որոնք գալիս էին պարսից զորքերի ուղեկցությամբ, առաջին հերթին անողոք պայքար էին մղում քրիստոնեության տարածման դեմ: IV դարից Հայաստանն ասես լուսավորվեց ու հասկացավ, որ Պարսից լուծը թոթափելու ճանապարհը քրիստոնեության ընդունումն ու այն պետական կրոն հռչակելն է: Քրիստոնեության տարածման համար քիչ ջանքեր չեն թափել Հայաստանում նահատակված առաքյալների աշակերտներն ու նրանց գործի հետագա շարունակողները: Անշուշտ, Թադևոսն ու Բարդուղիոմեոսը, տեսնելով, որ իրենց ուսմունքի համար Իրան թափանցելու ոչ մի հնար չկա, իրենց ջանքերն ուղղեցին դեպի Հայաստանի նահանգները: Սբ. Թադևոսի աշակերտներից Եղիշեն, իր ուսուցչի նահատակվելուց հետո, ինչպես հայտնում է Կաղանկատվացին, գնաց Երուսաղեմ, ձեռնադրվեց Քրիստոսի առաքյալներից սբ. Հակոբի կողմից և ուղևորվեց մասքուտների երկիրը՝ խուսափելով Արցախյան լեռնակողմի բնակչությունից: Նա իր քարոզչությունը սկսեց Չող մայրաքաղաքից, ապա իր հետևորդների հետ գալիս է Ուտիքի Սահառ քաղաքը: Կարելի է ենթադրել, որ Արցախից խուսափում էր Թադևոս առաք-

յալի ժամանակներում ունեցած անհաջողությունների համար: Ելնելով անունից ու հետագա վարքից, կարելի է ենթադրել, որ Եղիշեն Ուտիքի դաշտավայրային հայկական բնակավայրի ծնունդ է, հավանաբար, Գիս քաղաքից, որը հայ հեղինակներից ոմանք տեղադրում են Պարտավ քաղաքի մոտերքում, մյուսները՝ Շաքիում: Գիս քաղաքում նա անարգել կառուցում է եկեղեցի և պատարագ մատուցում, երբ այլ վայրերում նրան ու նրա աշակերտներին մահ էր սպառնում: «Արևելցիների եկեղեցիների սկիզբը այս տեղում եղավ, որը դարձավ մայրաքաղաք և լուսավորության տեղ»[39]: Այստեղից Եղիշեն գնում է Զերգանի դաշտակը, որտեղ էլ նահատակվում է մոլեռանդ հեթանոսների կողմից: Նրա դիակը նետում են մի փոսի մեջ, «որ երկար ժամանակ ծածկվեց այդ տեղում, որ կոչվում է Հոմենք»[40]: Ապա վաղ միջնադարի մեր պատմիչը նկարագրում է, թե ինչպես Մեծ Կուանքի Ուռեկան (Հոռեկ) ավանի (ուշ միջնադարում՝ Գյուլիստանի մելիքություն, Թալիշ գյուղի մոտ) Ստեփանոս քահանան այդ տեղից վերցնում է Եղիշե նահատակի գանգոսկորը, բերում թաղում Ուռեկան ավանում գտնվող վանքում, որի պատճառով էլ այն կոչվեց Գլխո վանք:

IV դարը Հայաստանում սկսվում է մի կարևոր իրադարձությամբ: 301թ. քրիստոնեությունն Հայաստանում ընդունվում է որպես պետական կրոն: Էջմիածնում հավատքի հաստատումից հետո Գրիգոր Լուսավորիչը գալիս է Արցախ և Ուտիք, այստեղ եկեղեցիներ է հիմնում, շարունակում քարոզչությունը: Այս մասին գրում են վաղ միջնադարի հայ պատմիչներ Ագաթանգեղոսը, Խորենացին, Փավստոս Բյուզանդը, Կաղանկատվացին:

Հայոց Տրդատ թագավորը, զգալով քրիստոնեության ուժն ու նրա միջոցով պարսից և բյուզանդական լծից ազատագրվելու հնարավորությունը, 301 թ. առաջինն այն պետական կրոն հռչակեց: Սակայն զրադաշտականության ու մյուս աղանդների դեմ պայքարը երկարատև էր ու արյունալի: Քաջ Վաչականի թոռը՝ Ուռնայրը, որն իր հերթին պարսից Շապուհ II արքայի (309-379) քրոջ ամուսինն էր, «մի քաջ և զորեղ տղամարդ, որ մեծամեծ պատերազմներում հոյակապ անուն վաստակեց՝ հայերի մեջ հաղթության դրոշ կանգնեցնելով»[41]: Գյուտ եպիսկոպոսի՝ թագավորության փոխարեն ճգնավորական կյանք ընտրած սուրբ Վաչեին ուղղված նամակում, որ պահպանվել է Կաղանկատվացու պատմությունում, հայտնում է, որ նրա նախնիներից քաջ Ուռնայրը՝ «Մեծ թագավորը, մեծամեծ նախարարներով, բազմաքանակ զորքով եկավ-հասավ Հայաստան և հանդիպեց հսկայազոր թագավորին (Տրդատին - Բ.)»: Ըստ հավանականության, այն տեղի է ունե-

[39] Կաղանկատվացի, էջ 7:
[40] Նույն տեղում:
[41] Նույն տեղում:էջ 10:

ցել 319 թ., երբ Տրդատ Մեծն ու Գրիգոր Լուսավորիչը վերադառնում էին Կոստանդնուպոլսից, ուր նրանք մեկնել էին Կոստանդիանոս Մեծ կայսրի հրավերով մասնակցելու Բյուզանդիայում ևս քրիստոնեության ընդունման տոնակատարությանը: Ուռնայրն իր զորքով, հալածվելով հոներից, եկել էր դիմելու Հայոց հզոր թագավորի օգնությանը: Տրդատն իր զորքով հոնաց զորքի համար անսպասելիորեն հայտնվում է Գարգարացվոց դաշտում ու դաժան ճակատամարտում հաղթում թշնամուն, մենամարտում հաղթում նրանց հսկա Գեղոեհոն թագավորին: Կասկած չկա, որ Ուռնայրն Աղվանից զորքով մասնակցել էր հաղթական պատերազմին:

Սասանյանները դաժան պայքարը շարունակում են Հայաստանի դեմ: Շապուհը Տրդատի դեմ է հանում նրա քաղաքականությունից դժգոհ նախարարներին և հյուսիսկովկասյան ցեղերին: 339 թվականին վերսկսված պարսկահռոմեական պատերազմի ժամանակ Արծրունյաց տան նահապետ Մեհրուժանը լքում է հայոց արքա Արշակ II-ին, գլխավորում պարսկական կողմնորոշում ունեցող հայ նախարարների խումբը՝ գործակցելով Սասանյան տան հետ: Նա Հայաստանում դաժան պայքար է սկսում քրիստոնեության դեմ, ոչնչացնում հունական բոլոր գրքերը, ավերում եկեղեցիներն ու դպրոցները: Պատմահայր Խորենացին նկարագրում է 371 թ. Ձիրավ դաշտում Պապ թագավորի զորքի և Մեհրուժան Արծրունու գլխավորությամբ պարսից ու հյուսիսկովկասյան ցեղերի միացյալ զորքի միջև վճռական ճակատամարտի մասին. «Սպանդարարը (Կամսարական - Բ.) հարձակվեց, խումբը ճեղքեց..., քաջին (լեզգիների թագավոր Շերգիրին) գետին տապալեց շանթահար եղածի նման և խումբը շուռ տալով փախուստի մատնեց... որոնց թվում էր և Ուռնայրը՝ Աղվանից թագավորը, որ խոցված էր Մուշեղից՝ Վասակ Մամիկոնյանի որդուց, և պատերազմից դուրս հանեցին»[42]: Այս դեպքի մասին վաղ միջնադարի հայ պատմիչ Փավստոս Բյուզանդը գրում է. «Իսկ Մուշեղ Հայոց սպարապետը չարաչար կոտորում էր Պարսից զորքերը և աչք պահելով հանդիպում էր Աղվանից գնդին, և բոլոր զորքերը ջարդում էր, հասնում էր Աղվանից Ուռնայր թագավորին՝ մինչև նա փախչում էր: Մոտենալով, իր նիզակի կոթով երկար ծեծում էր նրա գագաթը՝ ասելով. «Շնորհակալ եղիր, որ թագավոր մարդ ես, գլխիդ թագ ես կրում, ես թագավոր մարդու չեմ սպանի՝ մինչև անգամ եթե շատ նեղն էլ ընկնեմ»: Եվ թույլ տվեց նրան ութ ձիավորի հետ փախչել գնալ Աղվանից աշխարհը»[43]: Հայոց Արևելյան կողմանց արքան հետագայում վարձահատույց է լինում Մուշեղին. «Ապա Աղվանից Ուռնայր թագավորը գաղտնի լուր է ուղարկում Մուշեղին. նրա մոտ մարդ էր ուղարկում և տեղեկություն էր հաղորդում ասելով. «Շատ շնորհակալ եմ քեզանից, որ ինձ չսպանեցիր, աստված ինձ քո ձեռքը տվեց, բայց դու ինձ խնայեցիր, այս քո սերը չեմ մոռանա՝ քանի կենդանի եմ: Բայց իմաց եմ տալիս քեզ, որ Պարսից Շապուհ թագավորը պատրաստվում է բոլոր իր զորքերով անսպասելի կերպով հարձակվել քո վրա»[44]: Կարելի է ենթադրել, որ Պարսից Շապուհ արքան Ուռնայրին ևս - տեղյակ էր պահել դեպի Հայաստան ձեռնարկվող արշավանքի մասին և առաջարկել իր զորքով միանալու իրեն: Աղվանից հայ թագավորը, որին վերահաս վտանգից փրկել էր Հայոց Մուշեղ Սպարապետը, շտապեց տեղյակ պահել Մուշեղին վտանգի մասին, անշուշտ, իր ուղարկած մարդու միջոցով տեղեկացնելով մանրամասների մասին: Այս ճակատամարտում Պարսից զորքը կատարյալ պարտություն է կրում հայ-բյուզանդական միացյալ բանակից: Այս պատմության մեջ միայն զարմանք է առաջացնում Ուռնայրի երկարակեցությունը: Ստացվում է, որ նա երիտասարդ հասակում, ասենք՝ 20-25 տարեկանում, հանդիպել է Տրդատ արքային ու Գրիգոր Լուսավորչին, ապա նվազագույնը, 70 տարեկան հասակում մասնակցել ճակատամարտին, որը անհավանական է: Միակ բացատրությունն այն է, որ Հոչականի և Մերհավանի միջև գործել է Ուռնայր Ա-ի թոռ և Հոչականի որդի Ուռնայր Բ-ն, որի գործունեությունը սխալմամբ հայկական շրջանակներում հայտնի առաջին Ուռնայրին են վերագրել:

Հավանաբար, հենց պատերազմի ավարտից հետո «...Քաջալերում էր նրան սուրբ Գրիգորը Աստծու որդու մարմնավոր գալուստով, ...նույն ժամանակ նրանց շնորհվեց մի երանելի մարդ, որ եպիսկոպոս էր ձեռնադրված Հռոմ քաղաքի կողմից, սա եկել էր Տրդատ թագավորի հետ այս երկնավոր բարիքներով»[45]: Ուռնայր արքայի խնդրանքով էլ Գրիգոր եպիսկոպոսապետը մեկնում է Արցախ՝ Դյուտականում, Ամարասում և այլ վայրերում հիմնում եկեղեցիներ: 331 թ. Սուրբ Գրիգոր հայրապետը առանձնանում է Տարոնի Գլակա վանքում, ապա տեղափոխվում Դարարանաղ, ճգնում Սեպուհ լեռան մի այրում: Նա մահանում է: Ձիմանալով նրա անձը, անծանոթ մարդիկ գերեզմանի վրա քարակույտ են թողնում: Բասենի Կքնո գյուղից Գառնիկ ճգնավորը նրա մարմինը տեղափոխում է Վաղարշապատ, իսկ հետո, երբ կաթողիկոսանիստը տանում են Դվին, Լուսավորչի մարմինը ևս տեղափոխվում է[46]: Սրբի մասունքների մի մասը տանում են Բյուզանդիա և Իտալիա, մյուս մասունքերը ուղարկում երկրի տարբեր հատվածներ, որպես սրբություն, պահում տարբեր վանքերում ու եկեղեցիներում:

[42] Խորենացի, էջ 198:
[43] Փավստոս Բյուզանդ, Հայոց պատմություն, Եր., 1987, էջ 305:
[44] Նույն տեղում, էջ 307:
[45] Նույն տեղում, էջ 14:
[46] Չամչյան, Հ Ա., Եր., 1985, էջ 420:

Վաղարշապատից Աղվանք են ուղարկում սբ. Գրիգոր Լուսավորչի թոռանը՝ 15-ամյա Գրիգորիսին, որը Վրաց և Աղվանից եպիսկոպոս էր ձեռնադրվել: Նա իր հետ վերցնում է քահանայապետ ու նահատակ Զաքարիայի արյունից, ինչպես և Նիկոմիդիա քաղաքում նահատակված սբ. Պանդալյոնի մասունքներից, դրանք տեղադրում Ցրի քաղաքի եկեղեցում, հետո սկսում եկեղեցիներ հիմնել Արցախի և Ուտիքի շեներում և քաղաքներում[47]: Ապա նա մեկնում է Մասքուտների երկիրը: Իր քարոզներում պատանի եպիսկոպոսը կոչ էր անում, որ այլևս չզբաղվեն ավարառությամբ, հափշտակությամբ ու գողությամբ, այլ պետք է վաստակեն աշխատանքով, վայելեն մարդկայնորեն: «Այդ հայոց թագավորի խաբեբայությունն է, - ասում էին մասքութները, - նա ցանկանում է մեզ զրկել Հայաստանի ավարից, իսկ մենք ինչո՞վ պետք է ապրենք, եթե ավար չանենք ու չհափշտակենք»: Նրանք բռնեցին պատանի Գրիգորիսին, կապեցին մի կատաղի ձիու պոչից և բաց թողեցին Վատյան դաշտում: Դա 342 թվականին էր: Գրիգորիսի աշակերտները նահատակի մարմինը տանում են Ամարաս, դնում եկեղեցում:

Մասքուտների (ճիղբեր) Սանեսան Արշակունի թագավորը, պարսից թագավորի հորդորանքներով, հյուսիսային բազում ցեղերի գլուխ անցած արշավեց դեպի Աղվանք և Հայաստան: «Եկավ անցավ իր սահմանը, մեծ Կուր գետն ու սփռվեց, լցվեց հայոց աշխարհը[48]: Մեծ Հայքի զորավար Վաչեն, որ Մամիկոնյան տոհմից էր, հավաքեց հայոց զորքն ու ջարդեց ավարառուների բանակը, Վաղարշապատում գլխատեց Սանեսանին, գլուխը տարավ Խոսրով Բ թագավորին: Վերջինս տեսնելով Արշակունի Սանեսանի գլուխը, բացականչում է. «Վայ, եղբորս գլուխն է...»: Ըստ երևույթին, հայոց թագավորը զուրկ չէր հումորի զգացումից: «Այսպես սուրբ Գրիգորիսի վրեժն առնվեց Սանեսան թագավորից ու նրա բանակից, որովհետև նրանցից ոչ մեկը չմնաց»[49]:

Հայաստանում մշակույթի ընդհանուր զարգացման մակարդակը շուտով դրեց սեփական գրեր ունենալու խնդիրը, մանավանդ, որ պարսիկ մոգերը ամենուր արգելում էին հունարեն գրերն ու դպրոցները, այրում գրքերը: Այս խնդիրը փայլուն կերպով լուծեցին կաթողիկոս Սահակ Պարթև ու Մեսրոպ Մաշտոցը: 404 թվականին Մաշտոցը ստեղծեց հայոց գրերը, որոնք նոր շունչ և ուժ հաղորդեցին հայ ժողովրդին՝ դիմագրավելու հետագայի դժվարությունները, բազմաթիվ անգամ հառնելու մոխիրների միջից... Հայաղվանքը ևս ակտիվորեն մասնակցում էր այս շարժմանը: Մեծ Մաշտոցի աշակերտներից Կորյունը գրում է, որ Հայաստանի շատ վայրերում ուսման և գրքերի թարգմանության գործերը կարգավորելուց հետո Մաշտոցը «ելավ սահմանակից Սյունական աշխարհը: Այնտեղ էլ աստվածասեր հնազանդությամբ ընդունեց նրան Սյունիքի իշխանը, որի անունը Վաղինակ էր: (Մաշտոցն) իր առաջադրած գործի համար շատ օգնություն գտավ նրանից, այնպես, որ պտտեց, վերահասու եղավ Սյունիքի բոլոր կողմերում: Եվ սովորեցնելու համար մանուկներ ժողովեց, ավելի գազանաբարո, վայրենի, ճիվաղաբարո կողմերինը, և այնքան հոգ տարավ, դաստիարակի պես կրթեց, խրատեց, մինչև անգամ այն վայրենիներից կարգեցին Սյունիքի եկեղեցու համար եպիսկոպոս–տեսուչ, որի անունն էր Անանիա, մի սուրբ և երևելի, եկեղեցու ժառանգավորների համար հայրաբարո մարդ[50]: Անանիա մետրոպոլիտի անվանը հանդիպում ենք նաև Սյունիքի պատմիչ Ստեփանոս Օրբելյանի մոտ: «Իսկ Աղվանքի Եսվաղեն թագավորը, որ պարսից թագավոր առաջին Շապուհ Արտաշիրյանի (Շապուհ III – 383 – 388 թթ.) քրոջ թոռն էր, նրան պատիվ անելով երախտահատույց է լինում (հայ գրերը Հայաղվանքում տարածելու, դպրոցներ բացելու, քրիստոնեական քարոզչության համար - Բ.), պարգևում է իր թագավորական դրոշը՝ մետաքսյա ոսկերիզ նուրբ հյուսվածքով, գլխին ոսկեգունդ, վրան՝ պատվական խաչ[51]: Ըստ Ստ. Օրբելյանի, նման թագավորական դրոշ նվիրելը անչափ մեծ պատիվ էր Սյունիքի մետրոպոլիտի համար: Իսկ պատմահայր Խորենացին գրում է. «Ինքն (Մեսրոպը) իջնում է Աղվանք, նրանց Արսվաղեն (Եսվաղեն - Բ.) թագավորի և Երեմիա եպիսկոպոսի մոտ, որոնք հոժարությամբ հանձն առան նրա ուսումը և նրան հանձնեցին ընտիր երեխաներ»[52]: Փաստորեն Մաշտոցը Արցախում և Ուտիքում է եղել 415 թվականին, Դյուտականում, Ամարասում, Արցախի լեռնակողմի այլ վայրերում, Եսվաղենի և Երեմիայի օգնությամբ «գավառներից ու տեղերից դպրության արվեստի համար բազմաթիվ մանուկներ բերել, ժողովել, արժանավոր ու հարմարավոր տեղերում դասատուներ-դպրոցներ (կազմել) և (նրանց) ապրուստի համար թոշակ նշանակել»[53]: Փաստորեն Կորյունը գրում է Մաշտոցի Արցախ և Ուտիք այցելության մասին: «Անցնելով Հայաստանի միջով՝ ճանապարհվում և հասնում է արևելքի սահմանները՝ Ուտի գավառը,— գրում է Կաղանկատվացին:— Գալով այդտեղ՝ բնակվում են ճահճախուտ տեղերում, լոռաբույսեր աճած ճահիճներում՝ մոտիկ Գիս կոչված վայրին: Այդ ժամանակ նա նորոգելով վերականգնում է եկեղեցու հավատը: Ավետարանի քարոզը տա-

[47] Բյուզանդ, էջ 27-28:
[48] Նույն տեղում, էջ 29:
[49] Նույն տեղում, էջ 30-31:

[50] Կաղանկատվացի, էջ 70:
[51] Ստեփանոս Օրբելյան, Սյունիքի պատմությունը, եր., 1986, էջ 98-99, (այսուհետ՝ Օրբելյան):
[52] Խորենացի, էջ 215:
[53] Կորյուն, էջ 41:

բածում է Ուտիքում, Աղվանքում, Կասպքում և Ճորա կիրճում: Այլազգի այն ցեղերին, որոնց Ալեքսանդր Մակեդոնացին գերեվարելով բերել, բնակեցրել էր Կովկասի մեծ լեռան շուրջը, այսինքն՝ գարգարներին, կամիճիկներին, հեփթաղներին, նորից քրիստոնյա է դարձնում»[54]: Մաշտոցը գրեր ստեղծեց նաև գարգարների՝ կոկորդախոս ցեղի համար, նպատակ ունենալով, որ այն կարող է ընդհանուր լեզվի հիմք ծառայել Բուն Աղվանքի 26 ցեղերի համար, դարձնելով այն բյուրեղացնող միջոցը, որը կամրացներ կովկասյան ժողովուրդներին, վերածելով Ճորա պահակը (Դերբենտ) հյուսիսային ավարառուների առջև փակող ամուր պատվարի: Սակայն Բուն Աղվանքի բազմալեզու ցեղերը չընդունեցին որևէ լեզվի գերակայությունը, ու փաստորեն իրենք պատրաստ չէին ընդհանուր գրեր ունենալուն: Իսկ Վիրքում Մաշտոցի ստեղծած գրերը լուրջ խթան հանդիսացան երկրի զարգացման, քրիստոնեության արմատավորման համար:

Հայաղվանքի պատմիչը գրի է առել մի ավանդություն, որտեղ պատմում է Մաշտոցի աշակերտների մասին՝ «Գալով քառասունքի սուրբ պասին՝ զատկի պասեքի յոթերորդ շաբաթում, հասան խորածորերով հարուստ, անտառախիտ ու անտառներով առատ Արցախ երկիրը՝ Մեծ Կվյանք (Կուանք) գավառը: Ճանապարհի կիրճերում խումբը երկու մասի բաժանվեց, առաջին մասը խմբով միասին նստեց այն տեղը, որը կոչում են Աստղաբլուր, այսինքն՝ հյուսիսային կողմում, իսկ երկրորդ մասը բանակեց Տրտու գետի այն կողմը, անտառապատ հովտի հարավային մասում՝ Չղախ անվանված տեղում: Որովհետև նրանք ուխտ էին արել և միմյանց խոսք տվել՝ ամենասուրբ զատիկը կատարել այն տեղում»[55]: Ապա Կաղանկատվացին նկարագրում է, թե ինչպես այդ ժամանակ «Ռոսմոսոքյան թագավորը իր զորքերն ու Թոքելյան բանակը միացրեց, հավաքեց նաև հոների բոլոր զորքերը և անցավ Կուր գետի այս կողմը՝ տարածվելով Ուտիք գավառում: Իր բանակը բերեց, բնակեցրեց Խաղխաղ քաղաքի մոտ: ...Զորքի երրորդ մասը, զատկի սկզբին հասնելով Արցախ, հարձակվում է Մեծ Կյուանքի վրա»: Ռոսմոսոք ասելով, հավանաբար, հեղինակը նկատի ունի անհայտ հյուսիսային երկիրը: «Հարձակվողները ծով ալիքների նման նախ և առաջ հասան Աստղաբլուրի վայրը[56]: Բայց այդտեղ էր նաև Ուտի (Առանձնակ) նահանգից բուն տեղացի ազնվականներից Բագինք գյուղացի Թագուհի անունով մի կին»: Բագինք գյուղը հետագայի Թարթառի շրջանի Բագում Սա-

[54] Կաղանկատվացի, էջ 70:
[55] Նույն տեղում, էջ 71:
[56] Բարխուտարեանց, Արցախ, էջ 129: Մակար եպիսկոպոսը հայտնում է, որ Աստղաբլուրը գտնվում է Հաթերք գյուղի մոտ, Տրտու-Թարթառի ձախ ափին, բլրի վրա կա մի հնաշեն մատուռ, որի մեջ՝ մի գերեզման, որը մեծ ուխտատեղի է արցախցիների համար:

րով գյուղն է, որը, կռահելով անունից, հեթանոսական կենտրոն է եղել, որտեղ պաշտել են կրակը: Այնուհետև ավանդությունը պատմում է քարոզիչների խմբի ու Թագուհու նահատակության մասին:

Պարսից արքունիքը 428 թ. վերացնելով Հայոց թագավորությունը, Առանի (Արցախ և Ուտիք) ու Բուն Աղվանքի վարչական միացումով կազմում է Պարսկաստանին հարկատու մի նոր մարզ[57]: Այս միավորումը արտահայտվում էր նախ Չողում, ապա Պարտավում նստող մարզպանի ներկայությամբ: Սակայն մարզպանը չէր խանգարում, որպեսզի ինչպես Հայոց կաթողիկոս Սահակ Պարթևի «Գահանամակում» էր նշված, յուրաքանչյուր հայ նախարար շարունակեր մնալ իր երկրամասի տերն ու իշխանը: Ինչպես վկայում են բազմաթիվ աղբյուրները, Կուր - Արաքսի միջագետքում Սասանյանները չվերացրին Վաչական թագավորական տան իրավունքները: Ավանդաբար շարունակվում էր թագադրման հնում հաստատված ձևը՝ Պարսից արքայի հարազատներից մեկի դստեր հետ պսակելն ու թագադրելը Տիզբոնում, ինչպես և Զրադաշտական կրոնի պարտադիր ընդունումը: Վաչական տոհմի հայ արքայազնները, որոնք Արցախ – Ուտիքի հայկական միջավայրում քրիստոնեական մթնոլորտում են աճել, կրթվել ու իբրև քաղաքացի ձևավորվել, ստիպված էին առերես ընդունել մոգությունը, սակայն հայրենի եզերք վերադառնալով՝ իրենց ցուցաբերում էին իբրև քրիստոնեությանը նվիրված անձ: Հազկերտ II–ը (439 - 457), գալով իշխանության, իր մոտ է հրավիրում Վաչական հարստության թագաժառանգ Վաչեին, պսակում իր քրոջ դստեր հետ, մազդեզաց կրոնի մոգ դարձնում, թագ նվիրելով, ուղարկում կառավարելու Հայաղվանքը[58]: Այսպես Եսվաղենին հաջորդում է Վաչեն: Վերլուծելով մարզպանական ժամանակաշրջանը, հայտնի արևելագետ Ն. Ադոնցը գրում է. «Հայաստանը, ամբողջությամբ վերցրած, հնուց ի վեր ներգրավված լինելով պարսկական պետությունների համաշխարհային քաղաքականության ոլորտը, դարեր շարունակ պարսիկների հետ գտնվում էր մշակութային միևնույն աշխարհում: Դեռևս այն ժամանակներից, երբ Արշակունիները գրավեցին Պարսկաստանը, և նրանց կրտսեր ճյուղը հաստատվեց Հայաստանում, երկու երկրների հասարակական ու կենցաղային կապը էլ ավելի սերտացավ»[59]: Պարսկաստանը, Հռոմն ու Հայաստանը միշտ շահագրգռված են եղել Ալբանիա - Աղվանք կոչվող աշխարհագրական տարածքում իրենց ենթակա պետություն ունե-

[57] Բ. Ուլուբաբյան, Դրվագներ Հայոց արելից կողմանց պատմության, Եր., 1981, էջ 127 (այսուհետ՝ Ուլուբաբյան):
[58] Եղիշե, էջ 397:
[59] Ն. Ադոնց, Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում, Եր., 1987, էջ 240, (այսուհետ՝ Ադոնց):

նալ, որը ի վիճակի կլիներ Չողի (Ճորա պահակ) անցքում թույլ չտալու հյուսիսային ավարառու ցեղերին հորդալու դեպի հարավ և ավերելու, թալանելու բարեբեր երկրները: Ալբանիայի մեջ միավորված 26 ցեղախմբերը ևս հակված էին հաճախ թալանի նպատակով միավորվելու և ասպատակելու դեպի հարավ ու արևմուտք ընկած երկրները: Հայերն ու վրացիները միշտ պետք է ուշի ուշով հետևեին բազմալեզու Ալբանիայում տեղի ունեցող խմորումներին ու պատրաստ լինեին կանխելու այն և չդառնալ նրա հերթական ասպատակության զոհը: Այդ թալանչիական հարձակումներից առավել տուժում էին Արցախի և Ուտիքի բնակչությունը, քանի որ նրանց բաժանում էր միայն Կուր գետը: 428 թ. Ալբանիա պետության վերացումից հետո պարսից մարզպանության ներկայությամբ Կուր գետի ձախափնյա երկիրը քայքայվեց, կրկին գլուխ բարձրացրին հին մանր ցեղային միավորումները[60]: Եղիշեն հայտնում է, որ Վասակ Սյունեցի իշխանը, որը, դավաճանելով հայ նախարարների միաբանությանը, որոշել էր Սասանյանների օգնությամբ տապալել Հայոց սպարապետ Վարդան Մամիկոնյանին, լուր է ուղարկում Աղվանից մարզպան Սեպուխտին, որ ահա փոքրաթիվ զորքով Վարդանը գալիս Աղվանքի կողմերը, ապահովելու Հայաստանի հյուսիս-արևելյան սահմանների անվտանգությունը և հորդորում է. «Համարձակ դուրս արի նրա առաջ, ամենևին մի վախենա նրա դեմ պատերազմի ելնելուց: Գիտեմ, որ պարտություն պիտի կրեն քո մեծ զորության առջև»[61]: Ճակատամարտը տեղի ունեցավ 450 թվականին, Խաղխաղ (այժմ՝ Թովուզ) քաղաքի մոտ: Պարսից մարզպանի կողմից ճակատամարտին մասնակցում էին Կուրի ձախափնյա երկրների զորքերը: Վարդանի զորքը, չնայած սակավաթիվ լինելուն, ջախջախիչ հաղթանակ է տանում: Ըստ Եղիշեի, Հայոց սպարապետը Արցախն ու Ուտիքը մաքրում է պարսից զորքի մնացորդներից ու մոգերից: «Աղվանից նախարարներից (Արցախի և Ուտիքի իշխանները) ու բոլոր շինականներից շատերն էլ, որոնք Աստծու անվան համար ցիրուցան էին եղել Կապկոհ (Կովկաս) լեռների ամուր տեղերում, երբ տեսան այս գործի հաջողությունը, խառնվեցին Հայոց զորքի հետ և նրանց հետ միաբան ու հավասար մասնակցեցին քաջության գործին: Այնուհետև գնացին և արշավեցին հոների պահակի (Չոր) վրա, որ բռնությամբ գրավել էին պարսիկները, դուռը հանձնեցին Վահանին, որ Աղվանքի թագավորների ցեղից էր...»[62]: Անշուշտ, Վահանը Մեծ Կուանքի Վաչական թագավորական տան ժառանգներից էր, ըստ երևույթին, Վաչե արքայի եղբայրը, որը, որ-

[60] Եղիշե, Վարդանի ու Հայոց պատերազմի մասին, Եր.,1989, էջ 154-155, (այսուհետ՝ Եղիշե):
[61] Նույն տեղում:
[62] Եղիշե, էջ 157:

պես Հայոց սպարապետի դեսպան, գնում է հոների երկիրը և նպաստում Վարդանի և նրանց միջև դաշինքի կնքմանը: Ճորա պահակի պահպանությունը Վարդանը հանձնարարում է Վահանին ու Հայաստան վերադառնում:

Եղիշեն հայտնում է, որ Հազկերտի մահից հետո գահակալական երկամյա պայքար է սկսվում արքայի երկու որդիների միջև, որի արդյունքում Պարսից գահին է նստում Պերոզը (459-484): Տիզբոնում «մինչդեռ նրանք խռովության մեջ էին, - գրում է Եղիշեն, - ապստամբեց նաև Աղվանից թագավորը (Վաչեն- Բ.), որովհետև նրանց քեռորդին էր և, հայրենի հավատի համաձայն, առաջ քրիստոնյա էր, և արքայից արքա Հազկերտը նրան բռնությամբ մոգական կրոնին էր դարձրել»[63]: Կաղանկատվացին հայտնում է, որ Պերոզի հրամանով Վաչեի կողմից շինվեց «Պերոզապատ մեծ քաղաքը, որ այժմ Պարտավ է կոչվում»[64]: Սակայն իրանցի պատմաբան Էնաթոլլահ Ռեզան, հենվելով պարսկական հին աղբյուրների վրա, հայտնում է, որ շատ հնում Հորում, ապա Պարթև է կոչվել[65]: Բայց և վերը նշվել էր, որ այն հաջողությամբ բաղդատվում է նաև Սկյութական Umman manda-ի առաջնորդ Պարտատուայի անվան հետ (VIII դար մ.թ.ա.): Ուրեմն, Պարտավ քաղաքը շատ հին պատմություն ունի, ու Պերոզի հրահանգով Վաչեն այն լրացրել է նոր կառույցներով, նոր անուն կնքել: Վաչեի և Պերոզի համերաշխությունը երկար չի տևում: Վաչեն, որի համակրանքը պարսից դեմ ապստամբած հայոց սպարապետ Վարդանի ու նրա համախոհների կողմն էր, որոնց մեծ մասը դեռ պարսից զնդաններում էր, անցնում է ողջ Աղվանից մարզպանությունում բռնկված ապստամբության գլուխն ու անգիջում պայքար սկսում Սասանյանների դեմ[66]: Վաչեն երկրից քշում, հեռացնում է պարսից հարկահաններին, զինվորականներին ու մոգերին, վերականգնում եկեղեցիների իրավունքներն ու հեղինակությունը: Նա իր ապստամբ զորքով «քանդեց Ճորա պահակը, մասքուտների զորքն այս կողմն անցկացրեց, միաբանեց տասնմեկ լեռնական թագավորների հետ և պատերազմով ընդդեմ կացավ Արյաց զորքին ու մեծ վնաս պատճառեց արքունի զորքին: Երբ Պերոզը փորձում է Վաչեին խաղաղություն առաջարկել, Վաչեն նրանց հիշեցնում էր (հայ) նախարարների մահը և կապվածների (գերիների) չարչարանքները: «Լավ կլինի ինձ համար նրանց չարչարանքները հանձն առնել, - պատասխանում է Աղվանից թագավորը, - քան թե քրիստոնեությունը թողնել»[67]: Կաղանկատվացին հայտնում է, որ Աստված, իբրև

[63] Եղիշե, էջ 397:
[64] Կաղանկատվացի, էջ 31:
[65] Էնաթոլլահ Ռեզա, Ազերբայջան և Առան, Եր., 1994, էջ 43:
[66] Եղիշե, էջ 399:
[67] Նույն տեղում:

փրկության գավազան, պարսից բռնակալ և արյունարբու գազանի դեմ ուղարկեց հեփթաղներին, որոնք կոտորելով ոչնչացրեցին ու համահավասար ջնջեցին Պարսկաստանի անհավատ իշխաններին»[68]: Հեփթաղները (ղփչաղներ, Ղաղաստանի հյուսիսում ապրող ժողովուրդ) Պարսից դեմ հայերի կողմից դուրս եկան հանուն այն դաշնքի, որ նրանք կնքել էին սպարապետ Վարդանի հետ: Հավանաբար, նրանք այլ խնդիրներ էլ ունեին Սասանյանների տան հետ: Մի ճակատամարտում նրանք գերել էին Պերոզին, ու վերջինս փրկագնի հետ խոստացել էր տուրք վճարել հեփթաղներին, սակայն խոստումը չէր կատարել: Երբ Պարսից տերերը տեսնում են, որ ոչ ուժով և ոչ էլ սիրով չեն համոզում Վաչեին, «շատ գանձեր ուղարկեցին խայլանդարների (ալաններ) աշխարհը, բացեցին ալանների դռները (Դարյալի կիրճ), շատ զորք հանեցին հոներից և մի տարի կռվեցին Աղվանից թագավորի դեմ, և պաշարումը երկար ժամանակ տևելու պատճառով աշխարհի մեծ կեսն ավերվեց, բայց ոչ ոք նրանից (Վաչե թագավորից) չերկմտեց ու չբաժանվեց»[69]: Պարսից արքայից արքան համոզվելով, որ Արցախի և Ուտիքի բերդային համակարգն անհնար է զենքի ուժով գրավել, հոգնելով ներքին պատերազմներից, դարձյալ մարդ ուղարկեց նրա մոտ՝«Իմ քրոջն (Վաչեի մորը) և քեռորդուս (Վաչեի կնոջը) ուղարկիր ինձ մոտ, որովհետև ի բնե մոգական կրոնի հետևող էին, և դու քրիստոնյա դարձիր, իսկ աշխարհդ թող քեզ լինի»[70]: Վաչեն մորն ու կնոջը, որ Սասանյան տոհմից են, հավանաբար, նաև երեխաներին, ուղարկեց Պարսկաստան, ինքը 464 թ. հրաժարվում է թագավորությունից, հեռանում աշխարհիկ կյանքից, իր հորից ժառանգած հազար շունչ ունեցող գյուղում՝ երևի Ավետարանոցում, ապաշխարհելով, ճգնավորի կյանք է ապրում, «չհիշելով էլ, թե մի ժամանակ թագավոր է եղել»: Ըստ երևույթին, Վաչեի համար ծանր հարված էր ընտանիքից զրկվելը, ուստի և չկարողանալով տանել այն, որոշում է հեռանալ աշխարհիկ կյանքից, միևնույն ժամանակ հրաժարվելով գահից, երկիրը թողնելով անտերունչ: Տարբեր ձեռագրերում պահպանվել է Գյուտ եպիսկոպոսի (հետագայում՝ կաթողիկոս) նամակը Վաչեին, որտեղ նրան նման վճռի համար դասում է առաջին մեծության սրբերի շարքը:

Ավարայրի ճակատամարտից չորս ու կես ամիս հետո, երբ Հայաստանն աղետի մեջ էր, ու ապստամբությունը քաշվել էր լեռները, 451 թ. հոկտեմբերի 8-ին Քաղկեդոնի «տիեզերական» ժողովում հայությունը կանգնեց մի նոր երկընտրանքի և աղետի առջև: «Մի կողմից Ավարայրն էր, որ դարձնում էր Հայաստանը գերազանցորեն քրիստոնյա, անջատելով նրան ասիական

[68] Կաղանկատվացի, էջ 33:
[69] Եղիշե, էջ 401:
[70] Կաղանկատվացի, էջ 12: Լեո, հ. 2, էջ 94:

Արևելքից ու հեթանոսությունից, մյուս կողմից՝ Քաղկեդոնը, որ այդ քրիստոնյա, եվրոպական ընտանիքի մեջ մտած երկրին բերում էր կղզիացում, մի դրություն, որ կատարյալ անօգնականություն էր քաղաքական տեսակետից և կատարյալ մի խոր ինքնամփոփում՝ ազգային-մշակութային տեսակետից», - գրում է Լեոն[71]: Նման կղզիացումն իրոք վտանգավոր էր, սակայն և հայ եկեղեցու հայրերը արդեն տեսնում էին, թե ինչ ահավոր վտանգ է ներկայացնում բյուզանդական ուղղափառ եկեղեցու հետ նույն աղանդին պատկանելը Փոքր Հայքում, ուր հայերին ստիպողաբար բյուզանդացի էին դարձնում, մարդկանց զրկում ազգային արմատներից: Հռոմի հոգևոր կայսրությունը ձգտում էր ամեն առիթով ընդարձակել իր կայսրությունը, իսկ «տիեզերական» ժողովները լավ առիթ էին դրա համար: Քաղկեդոնի ժողովն ընդունում է Հռոմի պապ Լեոյի տումարը կամ բանաձևը՝ երկբնակ վարդապետությունը, ըստ որի Քրիստոսը սահմանվում է Աստված ճշմարիտ և Մարդ ճշմարիտ, միևնույն ժամանակ ժխտում և արգելում Քրիստոսի միաբնակության, այսինքն՝ միայն Աստված լինելու գաղափարախոսությունը: Միաբնակները հայտարարվեցին հերետիկոսներ և ենթարկվում էին հալածանքի: Արևելյան պետություններում հզոր ապստամբություններ բռնկվեցին քաղկեդոնյան որոշումների դեմ, որոնց հետևանքները շատ ավելի ծանր էին: Այն տևեց շուրջ 200 տարի: Քրիստոնյա աշխարհը երկփեղկվեց, Բյուզանդիան կորցրեց իր դիրքերն արևելքում, պարարտ հող նախապատրաստելով իսլամի հաղթարշավի համար: Հայերը չէին մասնակցում այս ժողովին, քանի որ կաթողիկոսը կալանավորված էր, իսկ եպիսկոպոսները ապստամբների հետ թաքնված էին լեռներում:

Վաչեի գահից հրաժարվելուց հետո երեսուն տարի Հայաղվանքը մնաց առանց թագավորի: 484 թ. Պարսից գահ բարձրացավ Վաղարշը (484 - 488), որը լուրջ փոփոխություններ մտցրեց կախման մեջ գտնվող երկրների նկատմամբ վարած քաղաքականության մեջ: Նա ստիպված էր ներում շնորհել հայկական ապստամբության ղեկավար Վահան սպարապետին, նրան նշանակել Հայոց մարզպան, միևնույն ժամանակ հայ նախարարներին շնորհեց իրենց նախկին իշխանությունները: «Այն ժամանակ, երբ Աղվանքի նախարարներից յուրաքանչյուրը ստանում է իր իշխանությունը, - վկայում է Կաղանկատվացին, - նրանք միաբանվում, վերցնում են բաջարի, հմաստուն խոհականությամբ հմուտ, հասակով բարձր ու վայելուչ Աղվանքի թագավոր Վաչեի եղբոր՝ Հազկերտի որդի, իրենց հայրենի թագավորության ժառանգ Վաչականին ու տանում, թագավոր են դարձնում Վաղարշ Արքայի ձեռքով»[72]: Վաչական թագավորական հարստությունից Վաչական

[71] Լեո, Երկերի ժողովածու, հ. II, էջ 94:
[72] Նույն տեղում, էջ 36:

III-ը միակն էր, որին գահակալությունից առաջ չպսակեցին Սասանյան տան դստերից մեկի հետ: Թագավորը կարող էր ազատորեն սիրահարվել իր հայրենիքի դուստրերից մեկին և պսակվել քրիստոնեավարի, որից զրկված էին նրա նախնիները: Ժողովրդական հեքիաթը պատմում է Վաչականի և Անահիտի սիրային պատմության մասին: Արցախի տարբեր գյուղերում մնացել են տարբեր ավանդություններ այս պատմության տարբերակների շուրջը: Կաղանկատվացին հիշատակում է թագուհու Շուշանիկ անունը, որն իր վարքով ու բնավորությամբ նման է Անահիտի կերպարին: Այնուհետև ժամանակագիրը հայտնում է. «Պարսից Վաղարշակ արքան հրամայում է, որ ամեն կրոն կարող են դավանել ըստ իրենց կամքի ու ցանկության, չպետք է ոչ ոքի նեղելով վերադարձնել մոգության»: Թերևս սա մարդու իրավունքի պաշտպանության և կրոնի ազատության առաջին դրսևորումներից էր մարդկային քաղաքակրթության պատմության ընթացքում: Վաչականը հայրենի Արցախում ծեռնարկում է հեթանոսության, զանազան աղանդների դեմ անհաշտ պայքար՝ հանուն քրիստոնեական հավատքի ամրապնդման: Նա հատկապես դաժան էր մատնահատություն և հերձվածություն կոչվող աղանդները պաշտողների նկատմամբ, որոնց ծեսերում ընդունված էր մանուկներին կենդանի վիճակում մորթազերծ անելը: Հերձվածության գաղտնիքը բացահայտվում է մի պատանյակի միջոցով, որը փախչում է մոլեռանդ աղանդավորների ծեռքից, անցնում Կուր գետը, ազատվում հետապնդումից, հանդիպելով քրիստոնյաներին, պատմում ամեն ինչ: Նրան տանում են արքայի մոտ, որը, լսելով այս ամենը, որոշում է հիմնահատակ ոչնչացնել անմարդկային այս աղանդները: Վաչականը հրաման է արձակում «իր ենթակա Արցախ անառիկ երկրին՝ թողնել և լքել դիվապաշտության օրենքները: ...Չափազանց բարեսիրտ, բարերար, աշխարհաշեն ու խաղաղասեր լինելով՝ հրաման է հանում իր թագավորության բոլոր կողմերում, ու նրանց, որոնց թագավորությունից զրկել էր չար Պերոզը, և այն իշխաններին, որոնց հայրենի բնիկ իշխանությունը վերցրել էր, վերստին յուրաքանչյուրին վերադարձնում է նրանց իշխանությունը: Բազմաթիվ տեղերում նշանակում է եպիսկոպոսներ, քահանաներ, տեսուչներ: Կամբեճանում, Բուն Աղվանքում միևնույն հրամանն է տալիս ու հաստատում»[73]: Իսկ որ թագավորությանը զուգահեռ Աղվանքում պահպանվում էր և մարզպանության ինստիտուտը, հաստատում է մատենագրի մի արտահայտությունը. «Մարզպանները շատ անգամ նրանց (աղանդավորներին - Բ.) բռնում էին, բայց կաշառքներով կուրացած, ազատ էին արձակում»[74]: Վաչական Գ-ի ուժն ու հենարանը Արցախն էր, թագավորանիստ Դյուտական ավանը[75]: Վաչական հարստությունը հրաժարվում էր թագավորանիստ ընտրել հարթավայրային Պարտավը, քանի որ այնտեղ անապահով կզգար իրեն: Իսկ Դյուտականից նա կառավարում էր ողջ երկիրը, որի մեջ էին մտնում նաև Ուտիքը, Կամբեճանն ու Բուն Աղվանքը: Մատենագիրը մեծ տեղ է հատկացնում Վաչական Գ-ի լուսավորչական–կրոնական գործունեությանը: «Երբ ինքը (թագավորը) գյուղ էր գալիս սրբերի հիշատակը տոնելու համար, նստում էր դասարանում, ...հրամայում էր, որ բոլորը (աշակերտները) միասին, միաձայն կարդան, իսկ ինքը նրանց մեջ ուրախանալով պարծենում էր՝ դա համարելով իր համար որպես գյուտ, մի ինչ-որ մեծագույն պարգև»[76]: Վաչականը Վաղարշապատից բերել է տալիս Գրիգոր Լուսավորչի, Հռիփսիմե և Գայանե կույսերի մասունքներից, գտնում Պանդալյոն նահատակի, ինչպես և Վատնյա Դաշտում նահատակված Գրիգորիսի գերեզմանները, նրանց մասունքներից բաժիններ հանելով տարբեր գավառների համար, տարբեր տեղերում հիմնում եկեղեցիներ: Մատենագիրը հավաստում է, որ Վաչականը կառուցում է «տարվա օրերի թվով եկեղեցիներ»[77]: Վաչականի այս գործունեությունը դատարկ տեղում չէր արվում: Նախորդ ժամանակներում Արցախի և Ուտիքի հոգևոր վերափոխության գործի հեղինակներ էին Գրիգոր Լուսավորիչը, նրա թոռ Գրիգորիսը, Մեսրոպ Մաշտոցն ու նրա հետնորդները: Նրանց հենարանն էին անընդմեջ 270 տարի իրար հաջորդած Մեծ Կյուվանքի թագավորական տան 11 անդամները՝ Վաչական Քաջից մինչև Վաչական III-ը: Այս բուռն գործունեության համար ժողովրդի կողմից Վաչականը ստանում է «Բարեպաշտ» անունը: Քրիստոնեության ամրապնդումն ու կրթական գործի զարգացումը Վաչական III-ի համար ռազմավարական տեսանկյունից Մայր Հայրենիքի հետ ներքին միասնության ամրապնդման ամենալուրջ հիմքերն էին հանդիսանում: Օգտվելով Պարսից կենտրոնական իշխանության թողտվությունից, Վաչական թագավորը Կուր-Արաքսի միջագետքում ստեղծում էր մի նոր ամուր, անխորտակելի Հայաստան: Նա լայն գործունեություն էր ծավալել նաև երկրի կառավարման կատարելագործման ուղղությամբ: Պետության կայունացման և ամրապնդման գլխավոր միջոցներից մեկն էր սահմանադրությունը: Դա լավ էր հասկանում Վաչականը, որն իր ժամանակի ամենազարգացած գործիչներից մեկն էր: Նա դաստիարակվել էր Մաշտոցի, Խորենացու, Կորյունի, Եղիշեի, Բյուզանդի երկերով, հայկական մշակույթի ու քրիստոնեական հավատքի շնչով: Բազմաթիվ թելերով կապված լինելով

[73] Նույն տեղում, էջ 35:
[74] Նույն տեղում, էջ 39:

[75] Դյուտականը գտնվում էր Տրտուականի աջ ափին՝ Չարաբերդ-Ջրաբերդի դիմաց:
[76] Կաղանկատվացի, էջ 38:
[77] Կաղանկատվացի, էջ 265:

Հայաստանի սրտի՝ Արարատյան դաշտի հետ, նա, անշուշտ, տեղյակ էր այնտեղ ընդունված Շահապիվանի (443 թ.) կանոնախմբի մասին, որն էլ հիմք դարձավ Աղվենի Սահմանադրության կետերի մշակման համար: Մինչ ժողով գումարելը Վաչականը հարցումներով դիմում է ժամանակի հայ հեղինակավոր մարդկանց կարծիքն իմանալու, որոնց թվում են գիտնական, երեց Մատթեն (որը հանդիպել ու զրուցել էր Հովհան կաթողիկոսի հետ, ապա Դվինից Արցախ բերել Գրիգոր Լուսավորչի և սուրբ կույսերի մասունքները), Աբրահամ Մամիկոնեից եպիսկոպոսը (նրա գրած պատասխանը Վաչական թագավորին պահպանվել է միջնադարի տարբեր ձեռագրերում), Պետրոս Սյունեցի եպիսկոպոսը, ուրիշ ականավոր մարդիկ: Մատենագիրը գրում է. «Աղվանից արքա Վաչականի տարիներին աշխարհականների ու քորեպիսկոպոսների, ազնվականների ու ռամիկների միջև բազմաթիվ հակառակություններ էին լինում: Արքան կամեցավ մի բազմամարդ ժողով գումարել Աղվենում, որը կայացավ մարերի ամսի տասներեքին»[78]: Պատմագիտական գրականության մեջ ընդունված է Աղվենի ժողովի գումարման տարի համարել 488 թվականը[79]: Ըստ ժողովի մասնակիցների ցուցակի, Աղվե էին ժամանել Արցախի և Ուտիքի աշխարհիկ տերերն ու նահապետները, հոգևորականները, իսկ Կուրի ձախափնյա երկրամասից՝ Բուն Աղվանքից, մասնակցում էին միայն Կապաղակի և Ցրիի եկեղեցական ներկայացուցիչները, որոնք նշանակվել էին Աղվանից կաթողիկոսի կողմից: Կանոնների մեջ օգտագործված բոլոր տերմինները հայկական են և արտացոլում են հայ իրականությունը՝ նախարար, ազգապետ, նահապետ, թագավորազն, տանուտեր, ազատ, շինական, աշխարհական, անաշխարհիկ, շեն, ագարակ, վանք, եկեղեցի, սակ, հաս, պտուղ, տասանորդ և այլն: Ինչպես գրում է Բ. Ուլուբաբյանը. «Սա հայ կյանքն է մի երկրամասում, որը, ճիշտ է, բռնի կտրվել է մայր երկրից, սակայն համառ դիմադրողական ուժով ու անհաղթահարելի կենսասիրությամբ դարձել է մի ինքնուրույն ամբողջական մարմին, որի մեջ անաղարտ պահպանվել են նախկին ամբողջի բոլոր գծերն ու հատկանիշները: Կտրվելուց հետո այն կորցրե՞լ է ազգ-ամբողջի որևէ հատկանիշը: Երբեք: Իսկ այս դեպքում՝ առավել ևս, որովհետև այսպիսի պայմաններում այն ստեղծել է իր թագավորությունն ու օրենքները և ապրում է ինքնահատուկ պետական կյանքով»[80]: Սահմանադրության մեջ նոր բառը «Խոստակն» է, որն ըստ գերմանացի գիտնական Հ.Հյուբշմանի, պարթևական բառ է: Ըստ երևույթին, այն ներ է մուծվել պարսիկների կողմից՝ հարկային համակարգը կարգավորելու նպատակով: «Ստակը» տեղ ունի նաև

[78] Նույն տեղում, էջ 65:
[79] Մ.Չամչյան, Պատմություն Հայոց, հ. Բ, էջ 219, (այսուհետ՝ Չամչյան):
[80] Ուլուբաբյան, էջ182:

գավառանվան մեջ ու, հավանաբար, ուղիղ արքունիքին հարկատու լինելու մասին է վկայում: Աղվենից առաջ Շահապիվանում 443 թ. տեղի ունեցած եկեղեցական ժողովի ու Աղվենում ընդունած կանոնների համեմատությունը համոզում է, որ դրանց մեծ մասը կրկնվում է, երկուսն էլ արգելում են մերձամուսնությունը, եղբոր կնոջ հետ ամուսնանալը, տղամարդու քմահաճ ամուսնալուծությունը, կախարդանքներին դիմելը, հոգևորականների վատ վարքը: Իսկ Ս.Երեմյանը Վաչականի կանոնների մեջ իրավացիորեն տեսնում է հայկական մի ուրույն աշխարհի հասարակական կյանքի արտացոլումը: Աղվենի կանոնները փաստորեն նորմեր են սահմանում բոլոր խավերի համար՝ սկսած թագավորազններից մինչև շինականն ու ճգնավորը: Սահմանվում է շինականից ըստ կարողության հարկ գանձելու կարգը, զուգահեռ հարկատու դարձնում նույնիսկ արքայական տոհմից սերվածներին: Սակայն թագավորն էր օրենքներ սահմանողը, բոլորը պարտավոր էին խոնարհաբար ենթարկվել արքունիքի ընդունած ամեն մի վճռին: Գլխավոր դատավորը ոչ թե եկեղեցին է, այլ թագավորը: Կանոններում խոսք կա դպրոցների, եկեղեցիների, իշխանների, հասարակական տարբեր երևույթների ու խավերի մասին, սակայն ոչինչ չի ասվում թագավորության մեջ պարսից մարզպանի հետ հարաբերությունների մասին: Գուցե Վաչականը նրան օրենքից դուրս երևույթ է համարում, կամ թե՝ դա թագավորության ներքին կանոններից դուրս է ու պարսից արքունիքին է վերաբերում: Կանոններում ոչինչ չի ասվում զինված ուժերի, հարկ եղած դեպքում՝ ենթակա իշխանների կողմից ներկայացվող հեծելազորի թվի մասին: Անշուշտ, Վաչականն ուներ իր բանակը, որի մասին բազմիցս ակնարկում է մատենագիրը, այլապես նա չէր կարող կուսակալներ կարգել Կուրի ձախափնյա Ցրի ու Կապաղակ քաղաքներում, ճնշել անհնազանդներին, բռնի վերացնել աղանդները: Ի վերջո, սահմանադրությունը կենսագործելու համար նաև ներքին ուժեր են պետք: Վաչականի հենարանը Արցախն էր՝ Առանշահիկների տերության կենտրոնը: Վաչականը, հետևելով իր նախնիների օրինակին, որպես արքայանիստ ընտրեց Դյուտական գյուղը: Թագավորանիստ այս բնակավայրի տեղադրման խնդրում հեղինակները իրար հակասող կարծիքներ են արտահայտել: Մակար եպիսկոպոս Բարխուտարյանցն այն տեղադրում է Թալիշ և Մատաղիս գյուղերի միջև, մի հին ավերակ գյուղի տեղում[81]: Սակայն այն չունի ամրոցին կամ բերդին յուրահատուկ բնական պաշտպանական հնարավորություններ, ուստի և թագավորանիստ չէր կարող ծառայել: Ռաֆֆին, ելնելով ավանդություններից, այն տեղադրում է Տոնաշեն գյուղի դիմաց, Տրտու-Թարթառի մյուս ափին Կաթողկոսասար կամ Կարապետանց Քար կոչված լեռան փեշին գտնվող հարթակին: Կա-

[81] Բարխուտարյանց, էջ 149:

թողկոսասարի մասին իր ժամանակագրությունում հիշատակում է Մխիթար Գոշը, նկարագրելով Գանձակի շահապ (քաղաքագլուխ) Խուհտուղտի ապստամբությունը Ատրպատականի սուլթանի դեմ, 1142 թ. Կարապետանց քարի եկեղեցու հրկիզումն ու ավերումը[82]: Դժվար է համաձայնվել այս տեղանքը որպես արքայանիստ ընտրված լինելու հետ, քանի որ տեղանքը փոքր է մակերեսով ու չէր կարող տեղավորել Կաղանկատվացու նկարագրած թագավորանիստ ավանը, եկեղեցիները, վանքերն ու ապարանքները ու մյուս բնակավայրերի հետ կապող սայլի ճանապարհ ունենալ, որով Վաչական Բարեպաշտը բերեց սրբերի մասունքները Ամարասից: Հնարավոր է, որ Կաթողկոսասար կամ Կարապետանց քար (բերդ) կոչված վայրը ինչ-որ ժամանակ, ասենք, 7-9-րդ դարերում Աղվանից կաթողիկոսների ամառանոց-թաքստոց ծառայած լիներ: Սակայն Դյուտականի տեղադրության միակ ճիշտ վայրը կարելի է համարել հետագայում Մայրաքաղաք կամ Քաղաքատեղ անվանված բերդաքաղաքը, որը գտնվում է Ջրաբերդի դեմ-դիմաց, գետի աջ ափին, ու ինչպես կարծում է ճարտարապետ Արտակ Ղուլյանը, հռչակավոր անառիկ բերդի հետ պաշտպանական մի համակարգ է կազմել: Վաղ միջնադարի բերդավանն ընդգրկել է 54 հա տարածք, երեք կողմերից խոր ձորերն ու վիհերը նպաստում էին նրա ամրությանը: Մակար եպիսկոպոսը Սկևկլնասեռ կոչվող այս վայրում տեսել է պարիսպների հետքեր, ինչպես և մատուռի 1260 թ. արձանագրություն և 1250 թ. խաչքար: Այս բերդն իր պաշտպանական համակարգով ու անառիկ Ջրաբերդի հարևանությամբ կարևոր դեր է ունեցել ոչ միայն Վաչականների տիրապետության ժամանակներում, այլև միջնադարում և ուշ միջնադարում՝ Հայոց Սղնախների ու Խամսայի մելիքների ժամանակներում: Արքայանիստի նման տեղադրությունը հարմար էր նախ և առաջ օտար նվաճողների, ասպատակիչների հանկարծակի հարձակումներից հաջողությամբ խույս տալու, ընտանիքը արագ, ապահով Ջրաբերդ հասցնելու տեսանկյունից: Հայտնի է, որ գետի աջ ափից դեպի բերդը մի կախովի կամուրջ է եղել, որը բերդի հիմնական մուտքն էր: Կաղանկատվացին գրում է, որ Դյուտականում Վաչական Բարեպաշտը սկսել էր Պանդալոն նահատակին նվիրված եկեղեցու կառուցումը, որտեղ էլ որդուն կնքել է սուրբ նահատակի անունով՝ Պանդալոն: Մակար եպիսկոպոսը հայտնում է, որ Ջրաբերդի Մելիք Ադամ Բ-ն նորոգել է Մայրաքաղաքի ապարանքը, որը հին (V-VI դարեր) և նոր (X-XIII դարեր) որմեր ուներ: Քաղաքի հարավային կողմում է եղել հին Մեծ-շեն գյուղը, որի մեջ կար մի եկեղեցի և գերեզմանոց: Հին ժամանակներում այս գյուղը, որի մարդիկ առանձնանում էին ֆիզիկական տվյալներով, Արցախին տվել են հզոր ու քաջ զորականներ: Ինչ-որ առիթով Մելիք-Ադամի ժամանակներում մեծշենացիները հանկարծ լքում են իրենց ոստանը, գաղթում դեպի Թիֆլիս և Գանձակ, հիմնականում հիմնավորվում Գետաշեն գյուղում: Հետագայում նրանց մի մասը վերադառնում է ու, խուսափելով հին տեղից, նոր վայրում հաստատվում: Սակայն այդ վայրը, ինչպես վկայում են XII կամ XIII դարերից տապանաքարերը, հին գյուղ է հանդիսացել:

[82] Ալիշան, Հայապատում, էջ 386:

491 թվականին Հայոց Բաբկեն կաթողիկոսի հրավերով իրենց եպիսկոպոսներով սուրբ էջմիածնում գումարվող եկեղեցական ժողովի են ժամանում Աղվանից Շուշիհաղիշ (ըստ երևույթին, Սուրբ Եղիշե անվան աղավաղված ձևն է, որ յուրահատուկ էր կոկորդախոս գարգարացիներին կամ լեկզիներին) և Վրաց Գաբրիել կաթողիկոսները: Մայր տաճարում կայացած ժողովի մասնակիցները նզովեցին նեստորականությունը և մերժեցին Քաղկեդոնի տիեզերական ժողովի որոշումները:

Վաչական III Բարեպաշտի թագավորության մասին պատմությունը ավարտվում է Աղվենի ժողովի կանոններով: Մատենագիրն այլևս ոչ մի տեղեկություն չի հայտնում Վաչականի հետագա տարիների մասին: Իսկ X դարի ժողվածուի կազմող Դասխուրանցին իրեն իրավունք չի վերապահել ինքնակամ լրացնելու այդ բացը: Ըստ երևույթին, Վաչական III Բարեպաշտին փոխարինել են նրա որդին՝ Պանդալոնը (Պանդի), ապա թոռը՝ Վռամշապուհը, սակայն արդեն երևի միայն Արցախ-Ուտիքի իշխանաց իշխանի կարգավիճակով: Հավանական է, որ Սասանյանները վճռել են Վաչական III-ից հետո այլևս չթագադրել ոչ ոքի:

Վաչական III-ի մասին տեղեկություններ կարելի է քաղել այլ աղբյուրներից ևս: Միջնադարի պատմիչ Ստեփանոս Օրբելյանը (XIII – XIV դդ.) հաղորդում է, որ Վաչական թագավորն իր դստերը կնության էր տվել Պարսկաստանի թագավորի եղբոր Աբլ-Աբաս որդուն, որը քրիստոնեություն էր ընդունել և ապրում էր Սյունիքում, Երկրորդ Երուսաղեմ վանքի մոտ, Բարկուշատի գետահովտում, Երասխի Քարավազ կոչված տեղում: Վաչականի խնդրանքով Սյունիքի իշխանը հինգ գյուղ էր տվել նրան ու նրա փեսային: Ոչ մի տեղեկություն չի մնացել նաև Վաչականի որդու՝ Պանդալոնի մասին: Միայն Ստ. Օրբելյանը հայտնում է, որ Վաչականի թոռ Վռամշապուհը բազում զորքով գալիս է, առավոտյան հանկարծակի շրջապատում վանքը, կոտորում բոլոր կրոնավորներին, կապում ավագներին, քանդում եկեղեցին, քարերը լցնում գետը[83]: Կարող ենք միայն ենթադրել, որ մինչ այդ ողբերգական դեպքեր էին տեղի ունեցել այսդտեղ, և թոռան այս դաժան հարձակումը վրեժխնդրության էր նման: Սակայն պատմիչը ոչինչ չի հայտնում Վաչականի մահվան մասին: Նա իր գործունեությունը ծավալում էր Պար-

[83] Ստ. Օրբելյան, էջ 117-118:

տավում նստող մարզպանի, պարսից արքունիքի հարյուր ու մի գործակալների առջև, արքայից արքա Վաղարշի ու նրա հաջորդներ Կավատ Ա-ի (487-497 և 501-531), Ջամասպի (497-501) գիտությամբ և թողտվությամբ, որոնք շահագրգռված էին այս երկրամասի կայունությամբ, որի երաշխիքներից մեկն էլ սահմանադրությունն է: Ինչ վերաբերում է կրթության գործի ծավալմանը, ապա օրենքները կարող են ծավալվել միայն մշակութային որոշ աստիճան ունեցող ժողովրդի մոտ, ինչին մեծ ջանքերի գնով հասել էր թագավորը: Կարելի է ենթադրել, որ Վաչականի մահն ու թոռան հարձակումը տեղի է ունեցել 530-ական թվականներին, երբ նա 80-85 տարեկան էր: Վաչական III Բարեպաշտ թագավորը թաղվում է Եղիշե Առաքյալ (Զրվշտիկ) վանքի մի դամբարան-մատուռում, որի ճակատկալ քարի վրա արձանագրված է. «Այս է հանգիստ Վաչական թագաւորին, Ած ողորմի հայրապետա և ոյր ծնողացն, որ շինեց զեկեղեցիս՝ առաջնորդութիւն տր. Սիմեոնի, թիւ ՉԼԵ (1286) էր»[84]: Մատուռ-դամբարանը կառուցվել է Վաչական թագավորի մահից վեց ու կես դար հետո: Գերեզմանին եռանկյուն կտրվածքով երկարավուն, առանց վիմագրության տապանաքար է, որը յուրահատուկ էր V-VI դարերին:

Սակայն ինչ վախճան էլ ունենար այս մեծ գործիչը, նրա ցանած սերմերն արդեն հասցրել էին ծլարձակել, բերքով լցրել Արցախ-Ուտիքի աշխարհը, խորը արմատներ ձգել հայոց հինավուրց երկրամասում: Այսուհետ հայոց կյանքում Արցախին միանգամայն ավելի կարևոր դեր էր տրված: Նա իր կրթօջախներով, վանական համալիրներով, բազմաթիվ եկեղեցիներով, իր ուսումնասեր և աստվածասեր ժողովրդով ավելի ամուր է կապվում Մայր Հայրենիքին, և այսուհետ ինչ նվաճողներ, տիրապետողներ էլ գան ու գնան, այն պիտի հարատևի ինքնահոս ու հզոր գետի նման: Արցախին այլևս վիճակված էր կարևոր ու հենակետային դեր կատարել Հայաստանի գոյության և անկախության համար երկարատև ու դժվարին պայքարում:

«Վաչական Բարեպաշտի թագավորության առեղծվածային վախճանին հաջորդեց նույնչափ առեղծվածային մի ամբողջ դար, - գրում է Բ. Ուլուբաբյանը, - որն այսօր մշուշի պես նստած է Հայոց արևելից կողմանց պատմության այդ հատվածի վրա, և հետազոտողը ոչ մի հնարավորություն չունի բաց անելու մեկ դարու պատմության ծալքերը»[85]: Վաչականի կանոնները շարունակում էին ճշտել հարաբերությունները երկրի ներսում, ներքին խաղաղության մեջ պահել երկիրը:

[84] Ս.Բարխուդարյան, Դիվան հայ վիմագրության, Եր, 1982, էջ 110:
[85] Ուլուբաբյան, էջ 198:

552 թվականին հաստատվեց և սկսվեց հայոց տոմարական թվականը: Իսկ երկու տարի հետո Ներսես Բ կաթողիկոսը գումարեց Դվինի ժողովը, որտեղ մերժվեց քաղկեդոնությունը: Հայոց եկեղեցին անդառնալիորեն վճռեց իր ժողովրդի ճակատագիրը, որովհետև հաստատվեց ազգային ինքնորոշումը այն կոգիացման ու մեկուսացման մեջ, որը լուրջ խոչընդոտ էր լատինական և հունական Եվրոպայի հետ հարաբերություններում: Անշուշտ, դա արվել էր Պարսից արքայից արքա Խոսրով Անուշիրվանի գիտությամբ և թելադրանքով՝ նպատակ ունենալով հայ եկեղեցին ու ժողովուրդը հիմնովին կտրել Բյուզանդիայի ազդեցությունից: Լուրջ բախումներ սկսվեցին Հայաստանի, Վրաստանի և Աղվանից եկեղեցիների միջև: Վիրքի և Աղվանից եկեղեցիների կաթողիկոսները հաստատվում էին Էջմիածնում՝ հայոց կաթողիկոսի ձեռնադրությամբ: Հայաստանի թուլանալուն զուգահեռ Վրաց եկեղեցին աստիճանաբար ձգտում էր ինքնուրույնության: Իսկ Աղվանից եկեղեցին հավատքի մեջ տեսնում էր մայր Հայրենիքի հետ կապող այն միջոցը, որն անհնար էր կտրել: Հետագա դարերում էլ Կուր-Արաքսի միջագետքի երկրամասի աշխարհիկ իշխանները երբեք չկտրեցին իրենց կապը Մեծ Հայքի Միջնաշխարհի տիրակալների հետ: Եթե նրանք ձևականորեն ենթարկվում էին Պարսից բռնակալներին, ապա նրանց ուշադրության կենտրոնն ու ձգտումները Արարատյան նահանգն էր, Մայր Հայրենիքի հետ միանալը, Էջմիածինը:

551 թվականին Աղվանից մարզպանությունը ստեղծեց իր կաթողիկոսությունը, որը կոչվում էր «կաթողիկոսություն Աղվանքի, Լփնաց և Չողա»: «Աղվանք» անվան տակ հասկացվում է Կուր-Արաքսի հովիտը, «Լփինքը» Բուն Աղվանք-Ալբանիան է, «Չողը»՝ Մազքթաց թագավորությունը: Էջմիածնում Ամենայն Հայոց հայրապետի կողմից Աղվանից առաջին կաթողիկոս է ձեռնադրվում Մեծ Առանք (Մեծիրանք) գավառի եպիսկոպոս Աբասը (551-595): Այդ ժամանակներում Արցախ և Ուտիք են թափանցում մի խումբ նեստորական աղանդի գաղափարախոսներ: Աբասը երեք եպիսկոպոսի ուղարկում է Հովհաննես Բ Գաբեղյան կաթողիկոսի մոտ, իմանալու, թե ինչպես վարվեն նրանց հետ: Հովհաննես կաթողիկոսը Աբասին գրած թղթում, որը տեղ է գտել Կաղանկատվացու պատմությունում, թվարկված թեմերի ու նրանց առաջնորդների անունների շարքում հիշատակում է Մեծկողմանց (Մեծ Կյուվանք) եպիսկոպոս Ղևոնդին: Նա Աբասին հանձնարարում է հալածել աղանդավորներին և դուրս քշել երկրից, որն էլ իրականացնում է Աղվանից հովվապետը: Հայաղվանքի հետ Բուն Աղվանքի երկու մասի տրոհված երկրների եկեղեցիները կաթողիկոսական աթոռի միջոցով իրենց ձեռքում պահելու ձգտումը հայոց եկեղեցու առաջնորդների համար նպատակ ուներ հենց քրիստոնեության միջոցով իրենց ձեռքում պահել այս երկրների իշխանական լծակները,

հնարավոր դեպքում ներմուծել հայկական մշակույթը: Եթե խաղաղ ժամանակներում այս ծրագիրը իրականություն էր դառնում, սակայն օտար նվաճողներն այն անմիջապես ի չիք էին դարձնում:

Վեցերորդ դարում Պարսկաստանում իշխել է երկարակյաց արքաներից մեկը՝ Խոսրով Ա Անուշիրվանը (531-579 թթ.), որն, ըստ պատմիչների, եղել է շատ խելամիտ և բարի թագավոր: Հայ պատմագիր Մ.Չամչյանը գրում է. «Այս հզոր և պատերազմասեր, միանգամայն հետամուտ գիտության և փիլիսոփայական նյութերի թագավորը ... ինչպես վկայում է հույն ժամանակակից պատմիչը (Աղաթիաս, գիրք Բ և Դ), ընթերցում էր Պլատոնի և Արիստոտելի երկերը և իմաստունների գիրքը տալիս թարգմանելու պարսկերեն»[86]: Չամչյանը նրան համեմատում է Պարսից Կյուրոս և Դարեհ նախնիների հետ: Խոսրովը հիմնում է Շամախի վաճառաշահ քաղաքը, Կուրի ձախափնյա դաշտավայրի երկիրը կոչում իր անունով Շիրվան: Պարսկաստանի խորքերից պարսիկ բնակչություն է բերում և բնակեցնում այս վայրերում: Պարսից արքայից արքայի այս կառուցումները կապված են Կուրի ձախափնյակի Բուն Աղվանքի հետ, որտեղ բազմալեզու և անմիաբան ցեղերի միջավայրում անհիշխանություն էր տիրում:

Արաբ աշխարհագետ Յակուտ ալ-Համավին (1178-1229 թթ.), վկայակոչելով արաբ հռչակավոր պատմագիր Իբն ալ-Ասիրին (1160-1230 թթ.), իր «Աշխարհագրական բառագրքում» («Քիթաբ Մուջում ալ-Բուլդան») գրում է «Քարքարը (Կարկառ) քաղաք է Առանում, Բայլականի մոտ, կառուցված Անուշիրվանի կողմից: ...Նրա մոտ է Հիսն ար-Ռանը»[87]: Բայլականը Առանի հնագույն քաղաքներից է, գտվում է Արցախի Մուխանք գավառում: Նրա մասին հիշատակել է նաև Ստրաբոնը: Հիսն ար-Ռանը Խաչենի բերդն է, որին հետագայում Կաչաղակաբերդ են անվանել, իսկ ար-Ռանը Աղաւնո (Հակառու) գետի անունն է, որը հանդիպում ենք արաբական աղբյուրներում[88]: Իբն ալ-Ասիրը իր «Լիակատար պատմությունում» հիշատակում է ար-Ռան գետը, որի մոտ 722 թ. հունիսին Հայաստանի կառավարիչ Ջառահի զորքը ճակատամարտեց խազարների դեմ ու հաղթեց[89]: Այնուհետև արաբ պատմիչը հայտնում է, որ մահմեդականները «առաջ խաղացին մինչև որ կանգ առան Հուսայն (Բերդ) կոչված բերդի մոտ: Բնակիչները երաշխավորագիր խնդրեցին դրամական հարկ վճարելու դիմաց: Ջառահը ընդունեց պայմանները...»: Եթե ճակատամարտը տեղի էր ունեցել Հակառու կամ ալ-Ռան գետի մոտ, Բերծորի դիմաց, ապա խազարների համար Ճորա պահակով (Դերբենտ) դեպի Խազարական խաքանաթ տանող ամենակարճ ճանապարհն անցնում է Բերդաձորի կիրճով, որտեղից դուրս են գալիս Միլի տափաստանն ու շարժվում դեպի Կուր գետը: Իսկ հետապնդող արաբներին հանդիպած Բերդը հենց Կարկառ-Շուշին պետք է լիներ:

Հայտնի է, որ Իրանի Սասանյան հարստության վերջին հզոր տիրակալ Խոսրով Անուշիրվան թագավորի ժամանակաշրջանում (իշխել է 531-579 թթ.) կայսրության հյուսիսը ամրապնդելու նպատակով վերակառուցվել է մի շարք բերդեր, ամրություններ[90]: Խոսրովին է վերագրվում Դերբենտի (Ճորա պահակ) վերակառուցումն ու երկաթյա դարպասների տեղադրումը: Այստեղ ծովի խորքից սկսած անանցանելի լեռներով 40 կիլոմետր երկարությամբ ամուր ու բարձր պարիսպ է կառուցվել, որը փակում է հյուսիսային ավարառու ցեղերի, ինչպես և խազարների ճանապարհը դեպի հարավ[91]: Ինչ վերաբերում է Քարքար-Շուշիին, ապա արաբ աշխարհագիրը «կառուցում» ասելով նկատի ուներ սարահարթի հյուսիսային կողմում հին ժամանակներից մնացած բերդապարսպի վերակառուցումն ու ամրացումը: Սակայն արաբ հանրահռչակ հեղինակներ Իբն ալ-Ասիրի և Յակուտ ալ-Համավիի վկայությունները հաստատում են, որ հենց Անուշիրվանի ժամանակներում է վերակառուցվել բերդաքաղաքը: Իսկ նրա հայկական Քարքար անունը հուշում է, որ այն մինչ Իրանի հզոր թագավորի ժամանակաշրջանը ևս նույն անունով բերդաքաղաք է եղել, որը Մեծ Հայքի հետագա թուլացման հետ իր հերթին անկում է ապրել: Բացի Շուշիից, մեկ այլ տեղ փնտրել Քարքար-Կարկառը, սխալ կլիներ, քանի որ Կարկառ գետի վրա անառիկ բերդի այլ տարբերակ գոյություն չունի: Կարկառ գետի անունը ևս վկայում է, որ գետի վրա անառիկ ու հզոր բերդի միակ տարբերակը Շուշիի սարահարթն է: Իսկ գետը իր անունը ստացել է բերդի անունից և ոչ թե հակառակը:

Մի շարք հայ հեղինակներ, սկսած Մակար եպիսկոպոս Բարխուտարյանցից, շփոթել են Գարգար ու Կարկառ տեղանունները, որն էլ թյուր հետևությունների տեղիք է տվել[92]: Գարգար գետակը իրականում գտնվում է Շիրվանում (Շամախի) և իր անունը ստացել է Կուրի ձախակողմյան դաշտում բնակվող ցեղի անունից: Հայերը նրանց «գարգար» են կոչել լեզգիական խոսվածքի մեջ կոկորդային հնչյունների առատության պատճառով:

---

[86] Չամչյան, էջ 239:
[87] Արաբական աղբյուրները Հայաստանի ու հարևան երկրների մասին, Հ.Թ.Նալբանդյանի թարգմանությամբ, Եր., 1965, էջ 103: (Յակուտ ալ-Համավի, Քիթաբ Մուջում ալ-Բուլդան, 4-րդ գիրք):
[88] Ս.Տ.Երեմյան, Հայաստանը ըստ աշխարհացույցի, Եր., 1963, էջ 34:
[89] Արաբական աղբյուրներ, գ. Բ, թարգմ. Արամ Տեր-Ղևոնդյան, Եր., 1981 (Իբն ալ-Ասիր, Ալ Քամիլ ֆի-լ-թարիխ):

[90] Նույն տեղում, էջ 40:
[91] Дербенту 5000 лет, М., 1989, стр. 20.
[92] Մ. Բարխուտարյանց, Արցախ, Եր. 1996, էջ 4 - 14: Տես նաև՝ Մ.Բարխուտարեանց, Պատմություն Աղվանից, Վաղարշապատ, 1902, էջ 18:

Նրանք լեզգիների մի շառավիղն են ու երբևէ Արցախում չեն բնակվել: Այս սխալն էլ հիմք է տվել Դաղստանի և Բաքվի որոշ հեղինակների պնդել, թե Արցախն ու Սյունիքը լեզգիների (գարգարների) հայրենիքն է: Մակար եպիսկոպոսի այս սխալը ճիշտ է նկատել Բ.Ուլուբաբյանը[93]: Իսկ Քարքար-Կարկառը Շուշիի հին անունն է և բառացի նշանակում է քարը քարի վրա, հսկա քար, որից էլ իր անունն է ստացել գետակը: Անուշիրվանի մասին շինարարական այս տեղեկությունները մեզ հիմք են տալիս կարծելու, որ նա, Կարկառից բացի, ամրացրել է նաև Զավեն (Գյուլիստան), Չարաբերդը (Զրաբերդ), Խաչենը, Գարդմանից բերդը... Այս բերդի Կարկար (և ոչ թե Քարքար) անվանումը վկայում է, որ այն առնվազն երեք հազարամյա պատմություն ունի, այսինքն՝ այն ժամանակներից, երբ «քարը» դեռևս «կար» էր կոչվել: Հին աղբյուրները վկայում են, որ Մարաստանում (ներկայիս Արդաբիլի մոտերքում) Խարխար բերդում ամրացած կիմմերների դեմ ասորացիների մ.թ.ա. 716-715 թթ. պատերազմները[94] հիմք են տալիս կարծելու, որ հանրահայտ Կուր-արաքսյան խեցեղենի, մշակույթի այլ նմուշների հետ քոչվոր կիմմերները Տրտու գետի ավազանի բնիկ հայերի հետ միացյալ իրենց ասպատակությունների ընթացքում Մարաստան են տարել նաև արցախյան բերդի «Կարկար» անվանումը, որի ասորական սեպագիր տարբերակը «Խարխար» է դարձել: Հավանաբար, այն հետագայում տարածվել է նաև Արևմտահայաստանի Խարբերդ-Քարքարի վրա:

Երբ Սյունիքի իշխան Վահանը դավաճանորեն իր նահանգի վարչական ղեկավարությունը հանձնում է Ատրպատականին, Սյունիքի եպիսկոպոս Պետրոսը իր թեմը միացնում է Աղվանից կաթողիկոսությանը, որը դառնում է Արցախի, Ուտիքի և Սյունիքի իշխանների ու ժողովրդի միաբանության, օտար նվաճողներից երկրի պաշտպանությունը կազմակերպելու, կուլ չգնալու հզոր միջոցը: Աբաս կաթողիկոսը կարգ ստեղծեց, որ իր ժողովուրդները անպայման ձեռնադրվեն Ամենայն Հայոց հայրապետների կողմից, որը այն թելն էր, որը հայոց այս երկրամասը հայկական էր պահում: Սակայն չէին դադարում Հայաստանի հզոր հարևանների միջև պայքարն ու պատերազմները: 572 թվականին պարսից զորքը հաղթում է Բյուզանդիային: 577 թ. Բյուզանդիայի Հուստինիանոս Բ կայսեր ու Խոսրով Անուշիրվանի միջև դաշինք է կնքվում, որով Պարսկաստանը կրկին տիրում է Հայաստանին: Բյուզանդիան պարտավորվում է 50 տարի շարունակ տարեկան 30 հազար ոսկի տուգանք վճարել Պարսկաստանին, Խոսրովի դատին հանձնել հայ ապստամբ Վարդանին և վրաց ապստամբ Գուրգենին: VI դարի վերջերին

[93] Բ.Ուլուբաբյան, Դրվագներ հայոց արևելից կողմանց պատմության, Եր., 1981, էջ 25:
[94] Дьяконов , стр. 228.

Արցախի և Ուտիքի հայ իշխանները նորից են ապստամբում պարսից մարզպանի հալածանքների, բռնությունների դեմ: Դառը կսկիծով է ժամանակագիրը նկարագրում հայ իշխանների կորուստները, որոնցից շատերը խողխողվեցին, մի մասն էլ տարագրվեցին հեռավոր աշխարհներ: Որմիզդ Բ արքայի մահից հետո պարսից արքունիքում նրա որդիների՝ Խոսրովի ու Վարհամի միջև սուր պայքար է ծավալվում գահին տիրելու համար: Կրտսեր որդին՝ Խոսրովը, Բյուզանդիայի հայազգի Մորիկ կայսրից (582-602 թթ.) օգնություն է խնդրում, որպեսզի նրա աջակցությամբ գրավի գահը, խոստանալով Բյուզանդիային զիջել Ասորեստանն ու Հայաստանը: 591 թ. Մորիկի օգնությամբ Խոսրով Բ-ն հաստատվեց գահին ու կատարեց իր խոստումը, Բյուզանդիային զիջելով մինչև Գառնի, Դվին ու Մակու[95]: Խոսրովի ավագ եղբոր՝ արքայից արքայի գահի թեկնածու Վարհամի դեմ ճակատամարտում է Մուշեղ Մամիկոնյանը և սպանում նրան: Պարսից արքան հեշտությամբ է զիջում Հայաստանը, որովհետև նա գիտակցում է, որ այն բնիկ իր երկիրը չէ: Սակայն Հայաստանյան մարզերը եթե պարսկական տիրապետության տակ որոշակի ինքնավարություն էին ձեռք բերել ու այլևս կրոնի տեսանկյունից չէին հալածվում, ապա ի դեմս Բյուզանդիայի լուրջ վտանգ էր սպառնում թե հայոց միաբնակ առաքելական եկեղեցուն և թե նախարարական համակարգին, որը երկրի աշխարհիկ իշխանության կրողն էր ու հենարանը: VI դարի կեսերից, ինչպես վկայում է «Աղվանից պատմության» հաջորդ ժամանակագիրը, իր մեծ ընտանիքով Աղվանք (Կուրի աջափնյակ) է գալիս Խոսրով Բ Փարվեզ արքայի ազգական Միհրանը, որն ընդհարվել էր արքայի հետ ու փախել նրա հալածանքներից: Նա գալիս է Ուտիք՝ Պարտավ մեծ քաղաքի մոտ, նա կամենում էր այնտեղից էլ գնալ խազիրների մոտ և միանալ (Խոսրովի) թշնամիներին[96]: Խոսրով Բ արքան Միհրանին, որ Սասանյան մեծ տոհմի ճյուղերից մեկն էր ներկայացնում, նամակ է հղում, որով առաջարկում է «որտեղ որ իմ այս հրովարտակը հասնի քեզ, այդ երկիրը թող դառնա քեզ բնակավայր, և վերցրու այնքան, որքան կարող են ընթանալ քո ոտքերը»: Միհրանը այդ ժամանակ Գարդմանք գավառում էր: Նա իր մոտ է հրավիրում այդտեղի իշխաններից տասներկու մարդ, բոլորին դավադրորեն կոտորում և տիրում երկրին: «Նրա սերունդներից քաջ Վարդանը, որը քրիստոնեություն էր ընդունել, իր սրտում դավ է նյութում հայկական նախարարական ցեղի՝ Առանշահիկների դեմ, որպես թե ի սեր բարեկամության ճաշի է հրավիրում և նրանց համար կորստյան հաց է պատրաստում, տալիս է ճաշի մեջ ուտելու իրենց արյան գնով: Վաքսուն տղամարդ է գլխատում, որոնցից միայն իր ցեղին փեսայա-

[95] Սեբեոս, էջ 45, տես նաև Ադոնց, էջ 262:
[96] Կաղանկատվացի, էջ 133:

ցած Զարմիր Առանշահիկին է թողնում կենդանի»[97]: Պարսկական ծագում ունեցող այս տոհմը, ամրանալով Գարդմանքի բերդում, մի կողմից փաստորեն դառնում է Պարսից տիրապետության հուսալի հենարաններից մեկը, մյուս կողմից՝ քրիստոնեություն է ընդունում և աստիճանաբար խառնվում հայկական միջավայրին ու հայանում: Քաջ Վարդանի ծոռ Զիվանշիրը արդեն հայ էր: Սակայն հայ Առանշահիկ իշխանները, որոնք ամրացած էին Արցախի բերդերում, արյան վրեժի ոխակալությամբ լցված՝ հարմար պահի էին սպասում: Ըստ մատենագրի, Միհրանը փախստական է դառնում, խուսափելով Խոսրովի վրեժխնդրությունից իր հոր՝ Որմիզդ արքայի սպանության համար, որը տեղի էր ունեցել 590 թ.: Մյուս կողմից հեղինակը տալիս է Միհրանի տոհմածառը՝ Միհրան - Արամայիլ - Վարդ - Քաջ Վարդան - Վարազ-Գրիգոր - Զիվանշիր ճյուղավորմամբ[98]: Սասանյան արքունիքից Աղվանքի իշխան է ճանաչվել Վարազ-Գրիգոր Միհրականը 628 թ. հետո՝ Աղվանից կաթողիկոս Վիրոյի միջնորդությամբ: Վիրոն Վարազ-Գրիգորի համար իշխանական տիտղոս է ձեռք բերում Պարսից քրիստոնեական ծագում ունեցող թագուհու միջոցով (պարսից պոետ Նիզամի Գյանջեվիի «Խոսրով և Շիրին» պոեմի հերոսուհին՝ գեղեցկուհի Շիրինը Պարտավի տիրուհու աղգականուհին էր, որը հետագայում դառնում է Խոսրով Բ արքայի կինը): Պարսկաստանում 25-ամյա բանտարկությունից հետո հայրենի Առան է վերադառնում Աղվանից կաթողիկոս Վիրոն: Առան-Հայաղվանքը անիշխանությունից հետո վերստին ձեռք է բերում հոգևոր (Վիրո) և աշխարհիկ (Վարազ-Գրիգոր և Զիվանշիր) ինքնավար իշխանություն: Մատենագիրը մեծ գովեստով է գրում Զիվանշիրի, նրա առաքինի տեսքի և քաջագործությունների մասին: «Արքան անմիջապես ձեռքը դնում է նրա գլխին, գովում և նրան անվանում է Աղվանքի սպարապետ»[99]: Նա պարսից զորքի հետ մասնակցում է արաբների դեմ պատերազմին, աչքի ընկնում հերոսությամբ, ստանում վերքեր: Արքայից նվերներ ստանալուց հետո «յոթ տարի» շարունակում է կռվել արաբների դեմ: «Դրանից հետո ճակատ առ ճակատ խմբվեցին մարտ տալու, պարսից չար բանակը տիրոջ կողմից ջարդ ու փշուր եղավ իրենց ժամանակը լրանալու վերջում, և վերևից առաքված վճիռը եկավ, կործանեց նրանց թագավորությունը: Այսպես յոթ տարի այս պատերազմում տանջվելով կռվեց քաջ Զիվանշիրը՝ մարմնի վրա 11 ծանր վերքեր ստացած, վերջապես բաժանվելով նրանցից, եկավ Ուտի գավառը»[100]: Հայաղվանքում ապստամբություն է բռնկվում պարսից տիրապետության դեմ, որը գլխավորում էին Զիվանշիրն ու իր հայրը՝ Վարազ-Գրիգորը: Զիվանշիրը՝ «իրեն կին է առնում Արուիճան տոհմից Սիսական նահանգի իշխանի դստերը, որի համար Սյունիքը ընդմիշտ ուրախանում է»[101]:

Յոթերորդ դարի սկզբներին Պարսկաստանն ու Բյուզանդիան, չբավարարվելով իրենց զորքերի բախումներով, հաճախ մեկը մյուսի դեմ էին գրգռում Հյուսիսկովկասյան ռազմաշունչ ու ասպատակիչ ցեղերի, որոնց հայ մատենագիրները կոչել են ընդհանուր «հոներ» անունով: Արդեն հյուսիսից հանդես են գալիս խազարները, երևի ամենասարսափելի ասպատակիչները հյուսիսային ցեղերից: Խազարական խաքանատը (թագավորությունը) ընդգրկում է Ստորին Պովոլժիեից մինչև Հյուսիսային Կովկասի մերձկասպյան ափերը: Այս անգամ նրանք դաշնակցում են Բյուզանդիայի Հերակլ կայսեր հետ, որը, 624 թ. շրջանցելով պարսից զորքերը, մեծ բանակով եկել էր Կուր-Արաքսի միջագետք՝ Իրանի վրա արշավելու նպատակով: Ատրպատականի մեծ մասը ասպատակելուց հետո անցնելով Արաքսը, վերադառնում է Առան, բանակ դնում Տրտու (Թարթառ) գետի հովտում՝ Դյուտական գյուղի մոտ՝ ձմեռելու նպատակով: Կայսրը դիմում է Արցախի հայ իշխաններին՝ իր զորքի կարիքները հոգալու առաջարկությամբ, այլապես «կգրավեն նրանց ամրոցները և կգերեվարեն նրանց երկրները»: Բայց նրանք Խոսրով Բ-ի հրամանով «թողեցին Պարտավ մեծ քաղաքը և ամրացան զանազան տեղեր: Իսկ քաղաքի քրիստոնյա և հեթանոս (պարսիկ) բնակիչները... մնացին քաղաքում»[102]: Զաքարիա անունով մի հայ քահանա փրկեց քաղաքի բնակիչներին: Հետո նա ընտրվեց Աղվանից կաթողիկոս: Պարսից մի զորք Շահր-Վարազի հրամանատարությամբ գալիս մտնում է Ուտիքի Գարդմանք գավառը, ամրանում հին Տիգրանակերտ[103] բերդում, որտեղ տիրապետում էին պարսից Միհրանյանները, փակում Հերակլի Թփղիս տանող ճանապարհը: Մեկ այլ՝ երեսուն հազարանոց բանակ Շահեն զորավարի գլխավորությամբ բանակ է դնում Արցախի մյուս Տիգրանակերտ (Շահաղբյուր) բերդավանում: Հերակլը հարվածում է այս զորամասին, Կարկառի (հետագայում՝ Շուշիի) ու Բերդաձորի լեռնանցքով անցնում Սյունիք, այստեղից անցնում իր երկիրը: Այս անգամ խազարների՝ Հերակլին միանալը կանխել էր Խոսրովը՝ մեծամեծ նվերների խոստումներով: Հերակլը նոր դաշն է կնքում Խազարական խաքանաթի հետ, ու նրանք համատեղ՝ մեկը հյուսիսից, մյուսը՝ արևմուտքից, նոր արշավանք են ձեռնար-

[97] Նույն տեղում, էջ 134:
[98] Նույն տեղում, էջ 133:
[99] Նույն տեղում, էջ 135:
[100] Նույն տեղում, էջ 139:

[101] Նույն տեղում, էջ 100-101:
[102] Նույն տեղում, էջ 101:
[103] Հայոց արքա Տիգրան Բ մեծը Հայաստանի սահմաններն ամրապնդելու նպատակով հիմնել էր իր անունով չորս բերդաքաղաքներ, որոնցից երկուսը Արցախ-Ուտիքում են:

կում: Խազարների առաջնորդ Զեբու Խաքանը (թագավորը) հսկայական զորքով 627թ. տապալում է Դերբենտի դարպասները և արշավում դեպի հարավ: «Աղվանից երկրի պատմության» այս հատվածի մատենագիրը դեպքերն արդեն նկարագրում է որպես իրադարձությունների ականատես: Հայրենի երկիրը նրա աչքերի առջև հեծում է արյան ու ավերի, սովի ու մահի ճիրաններում: Այդ տարի մկներն ուտում են ցորենի արտերը և խոտը, տեղի է ունենում սաստիկ սով և մահտարաժամ, թերևս՝ ժանտախտի համաճարակ: Խազրաց խաքանի որդին՝ Շաքը, իր բանակով վերադառնում իր երկիրը: Խոսրովի նշանակած Գայշաք մարզպանը սկզբում փորձեց ամրանալ Պարտավում, սակայն հետո սարսափահար փախավ Պարսկաստան: Հայ մատենագիրը այսպես է նկարագրում խազարներին. «Ժանտեսք, հանդուգն երեսով, լայնադեմ, անարտևունք բազմություն, որոնք կանացի կերպարանքով, գիսարձակ վրա էին տալիս հարձակվողների դեմ դիմաց: Նրանք ոչնչացրին Պարտավի բնակչությանը: Միայն մի մասը հասցրեց փախչել ու պատսպարվել Արցախի բերդերում»: Խազարները, միանալով բյուզանդացիներին, միասին արշավում են դեպի Վրաստան: «Նրանք շրջապատում են «վաճառաշահ, հռչակավոր մեծ Տփղիս քաղաքը»: Վրացիներին օգնության է գալիս պարսից զորքը: Բերդը գրավել չի հաջողվում: 630 թ. նրանք միացյալ ուժերով նորից են պաշարում քաղաքը ու հիմնահատակ ավերում այն, կոտորում նրա բնակիչներին: Իրանը, որ արդեն թուլացել էր ներքին անմիաբանությունից, անկարող է լինում լուրջ դիմադրություն ցույց տալ: Պարսկաստանում ներքին խռովություն է բռնկվում: Խոսրով Բ Փարվեզը սպանվում է: Նրա փոխարեն գահ է բարձրանում նրա որդիներից Կավատ Բ-ն: Հաջորդ վեց տարիներին կրկին խռովության շնորհիվ գահակալում են Արտաշիր Գ-ն, ապա Խոռեմն ու Բբորը, Խոսրով Գ-ն, Արզմիկը, Որմիզդ Գ-ն, Հազկերտ Գ- ն, որը սպանվում է 637 թ., և վերջանում է Սասանյանների գահակալությունը: Բոլոր կողմերից էր Պարսկաստանին ուղղված հարվածները, ի վերջո, տապալեցին Սասանյան հարստությունը, որը այս երկրի տրոհումն էր: Այս օրինակը ևս հաստատում է այն ճշմարտությունը, որ բոլոր մեծ թե փոքր քաղաքակրթությունների, կայսրությունների պարտության, ապա և ոչնչացման պատճառը ներքին տրոհումն է: Ամենափոքր պետությունն անգամ ներքին կայունության, միաբանության և ներքին ռեսուրսների ճիշտ կազմակերպման, մեկ ընդհանուր համակարգի մեջ ընդգրկման դեպքում անխուսափելիորեն վերելք է ապրում և մեկը մյուսի հետևից հաղթանակներ տանում: Սակայն այն ի վերջո ապրում է իր գագաթնակետը, հետո անկում է ապրում, եթե չի գտնում ներքին փոփոխությունների, նոր գաղափարախոսության ակունքները, նոր համակարգի մեջ ձևավորվելը:

Հռոմի անկումից հետո Բյուզանդիան չկրկնեց նրա կառույցները: Նրա վերելքի ու հզորության աղբյուրը նոր կրոնն էր, նոր գաղափարախոսությունը: Բյուզանդիան այս տեսանկյունից ավելի թարմ էր, քան մազդեզյան կրոնի վրա հենված Պարսկաստանը: Հուստինիոս կայսեր ռեֆորմները ավելի գործուն ու ճկուն էին, քան Խոսրով Ա արքայի բարեփոխումները, քանի որ առաջինը համակարգ էր ստեղծում, իսկ երկրորդինը կարող էր գործել միայն ուժեղ թագավորի դեպքում: Պարսկաստանի սոցիալ տնտեսական համակարգը, որը հենված էր տոհմային հարաբերությունների վրա, ի վերջո ճեղք տվեց ու քայքայվեց: Դրսի ուժերին այլևս ոչինչ չէր մնում անել, բացի ոտքի տակ տալու Սասանյան հարստությունը: Անդրկովկասի ժողովուրդները՝ հայերը, վրացիներն ու Բուն Աղվանքի բազմալեզու ազգությունները կրկին մնացին հյուսիսային ավարառու ցեղերի, Բյուզանդիայի ու Պարսկաստանի արանքում: Հայերը, զգալով ու տեսնելով այս ամենը, հույսը կտրեցին աշխարհիկ իշխանության՝ թագավորության վերականգնման հնարավորությունից, մեկուսացան իրենց միաբնակ քրիստոնեական կրոնով, պարփակվելով իրենք իրենց մեջ, ապավինեցին իրենց գրին ու գրականությանը, իրենք իրենց մեջ անընդհատ զարգացնելով այն: Սա անմիջականորեն կապված էր եկեղեցու հետ: Մարզպանության շրջանին վերաբերող աղբյուրների տեղեկություններից դատելով՝ Հայոց Արևելից կողմանց, այսինքն՝ Արցախի և Ուտիքի տարածքում կարելի է հանդիպել «ազգ-ազգի արուեստագործաց, որք զգիտութիւն ոսկեծնութեան և արծաթահալութեան, և արկաթահանութեան, և պղնձագործութեան ունէին»: Սոդքի ոսկու, Գանձասարի արծաթի, Մեհմանայի (ԼՂՀ, Մարտակերտի շրջան) բազմամետաղային, Թաղավարդի արճճի, Քարհատի (Դաշքեսան) երկաթի հանքերը վաղուց էին շահագործվում: Արաբական աղբյուրները հիացմունքով են խոսում Արևելից կողմանց արհեստագործական արտադրանքի մասին՝ «Նրանց արտադրած պարանների ու գորգերի, որդան կարմիրի, ծածկոցների ու ներկերի նման ոչինչ չկա», - գրել է արաբ մատենագիր ալ-Մուքադդասին: Առանձին հայությունը չէր կարող անջատ մնալ ընդհանուր հայկական կողմնորոշումից, քանի որ ողջ հայության հետ նա մեկ մարմին էր:

ԱՐԱԲԱԿԱՆ ԽԱԼԻՖԱՅՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆ

Զրադաշտի (Զարդուշտ) ուսմունքն ու գաղափարախոսությունը այլևս ի վիճակի չէր միասնության մեջ պահելու պարսկական տիրապետությունը, որն էլ հանդիսացավ նրա տրոհման ու պարտության պատճառներից մեկը: Դրա փոխարեն Արաբական թերակղզում VII դարի սկզբներին ծնունդ առած մահմեդական ուսմունքը այն հզոր ու թարմ շարժիչ ուժն էր, որը միա-

վորեց արևելքի ժողովուրդներին ու ցեղերին մեկ ընդհանուր աշխարհածավալ պետականության՝ խալիֆաթության մեջ: Դրա վառ արտահայտությունն էր նաև Պարսկաստանի օրինակը: Ապագային մահմեդականության հետ Իրան թափանցեց և արաբերեն գիրը, գրականությունը, լեզվամտածողությունը, փիլիսոփայությունը: Պարսկական հազարամյա ուղի անցած մեծ մշակույթը, փիլիսոփայությունը, լեզուն, գրականությունը այլևս երկրորդական էին հաղթողի ու նրա գաղափարախոսության այն փշրանքների հանդեպ, որոնք Իրան էին թափանցել ու պարտադրվել բնիկ ժողովրդին: Արաբները նվաճած տարածքների հպատակեցումից հետո բռնի մահմեդականացնում էին ժողովրդին, ապա նրանց շնորհում որոշ արտոնություններ, պետական գանձատնից դրամական վարձատրություն հատկացնում: Բուն Պարսկաստանը հեշտությամբ թողեց Արևի ու Կրակի պաշտամունքը և մահմեդականություն ընդունեց: Սակայն Իսլամի տարածվելը միայն կրոնափոխություն չէր: Այն իր ներսում կրում էր արաբականացման, նրա մշակույթի տարածման տարրերը: Արաբները իրենց լեզվին հարմարեցրին Իրանի հյուսիսարևմտյան երկրամասի Ատրպատական հինավուրց անվանումը: Նրանց լեզվին մատչելի չէին «տ», «պ» և «կ» տառերը, որոնք վերափոխվեցին «զ», «բ» և «ջ» հնչյունների: Հազարամյա Ատրպատականը, որ նշանակում է «կրակի տեղ» կամ «կրակի երկիր», վերածվեց «Ազարբայջանի», որն էլ իսլամական գաղափարախոսության և մշակույթի հետ պարտադրվեց բնիկ ժողովրդին: Հայ մատենագիրը շատ պատկերավոր է նկարագրում ժամանակի քաղաքական փոփոխությունները, «...բարձրացած բլուրները (պետությունները - Բ.) հարթվելով հավասարվեցին, անդունդների բարձրալիք, ջրառատ ալեկոծությունները (բազում զորքերի ասպատակությունները - Բ.) իրենք իրենց մեջ սուզվեցին, այդպես պարսից տերության հսկայական փառքը խորտակվեց, և անդունդները ծածկեցին նրա անչափ ամբարտավան մեծությունը: Թևավոր ձայները դադարեցին հողմուռույց ալեկոծությունից, և ազարակի փշերը (արաբները - Բ.) օդասլաց թռիչքով եկան, լայնատարած ծովի (Պարսկաստանի) այլակների վրա տեղավորվեցին»: Իսկ Բյուզանդիայի մասին այսպես է գրում. «Կար ժամանակ, երբ բյուզանդացիների թագավորները մեծաքանակ զորքերով ամբողջովին զարմացնում էին աշխարհի բոլոր ժողովուրդներին: Իսկ այժմ նույն թագավորի բարձրացրած ուժը այնքան է վայր ընկել, մարել, մինչև որ երբեմնի նրան ենթակա մարդկային անտառները գնացին, հպատակվեցին այն մարդուն (Խալիֆին), որ Գեդեոնյան դժնկի[104] նման կպչում էր, և որը

[104] Հին Կտակարան, ժթ. 15, ծառերը ցանկացան թագավոր ունենալ, պտղատու ծառերը չկամեցան թագավոր լինել, կպչող դժնակը հանձն առավ, որ փաթաթվում է ու խեղդում:

բարձելով մարդկանց ուսերին, մարմնի մասերը չէին կարողանում շարժվել անգամ»[105]: Իհարկե, միանգամայն այլ էր իրավիճակը քրիստոնեություն ընդունած երկրներում: Այստեղ իսլամը կտրականապես մերժվում էր, անշուշտ, մեծ զոհերի, զրկանքների գնով: Արաբների առաջին արշավանքը դեպի Հայաստան տեղի ունեցավ 640 թվականի աշնանը: Նրանք ավերեցին Արարատյան դաշտի արևելյան հատվածը, գրավեցին Հայաստանի մայրաքաղաք Դվինը, իրենց հետ տարան մեծաքանակ ավար և գերիներ: Երկու տարի հետո, երբ Արաբները կրկին արշավեցին դեպի Հայաստան, հանդիպեցին հայոց սպարապետ Թեոդորոս Ռշտունու զորքերի լուրջ դիմադրությանը: Արաբները անհաջողությունից հետո մեծ զորքով նոր հարձակում ձեռնարկեցին 646 թվականին: Հայաստանն արդեն անկարող էր պաշտպանել երկիրը: Թեոդորոս Ռշտունին ու Սմբատ Բագրատունին նվերներով ընդհառաջ դուրս եկան արաբներին և հպատակություն հայտնեցին:

Տեղեկանալով այդ մասին, Բյուզանդիայի Կոնստանդին կայսրը (642-667 թթ.) երկյուղելով, որ հայերը կարող են դաշնակցել արաբների հետ և միացյալ ուժերով կործանել կայսրությունը, մեծ զորքով 647 թվականին ամիացյալ ուժերով կործանել կայսրությունը, մեծ զորքով 647 թվականին ամաստարեց Հայաստան մտնել ու պատժել հայ զորավարներին: Հայոց Ներսես կաթողիկոսը մեծ շքախմբով, թանկարժեք նվերներով ընդառաջ եկավ նրան և. հնազանդություն հայտնելով, փրկեց երկիրը նոր ավերածություններից: Կայսրն ընդունեց հնազանդությունը, սակայն Դվինում ստիպեց, որ հայերն ընդունեն քաղկեդոնական հավատքը: Ներսեսը, եպիսկոպոսները առերես ցույց են տալիս, թե ընդունել են այն, սակայն 648 և 651 թվականների եկեղեցական ժողովներում կտրականապես մերժում են այն: Աղվանից պատմիչը մանրամասնորեն նկարագրել է Գարդմանքի իշխան Ջիվանշիրի Դվին Կայսրին այցելելն ու հպատակություն հայտնելու մանրամասները: Ջիվանշիրը պարսկական բանակի կազմում արաբների դեմ Բաղեսիայի ճակատամարտում պարտությունից հետո տուն վերադառնալով ապստամբում է Ուտիքում գտնվող պարսկական կայազորի և մարզպանության դեմ: Անցնելով Կուրից այն կողմ՝ Կամբեճան գավառը, իշխան Ատրներսեհից օգնական զորք է ստանում, «աճապարում է ամենից առաջ արշավել Ուտիք, այդտեղ պարսից զորքից ում որ գտնում է, տեղն ու տեղը սրի ճարակ է դարձնում»[106]: Սակայն, երբ հագարացիների (արաբների) զորքը գալիս է Աղվանք, «Ջիվանշիրը, տեսնելով հարավցու դաժան զորությունը», կրկին անցնում է Կուրի ձախ ափը՝ Կամբեճան[107]: Հորը՝ Վարազ-Գրիգորին, որպես պատանդ արաբները տանում են իրենց հետ:

[105] Կաղանկատվացի, էջ 15:
[106] Նույն տեղում, էջ 139:
[107] Նույն տեղում, էջ 140:

Նրանք ազնվական գերդաստաններից պատանդներ էին տանում, որպեսզի իրենց հեռանալուց հետո ապստամբություն չբռնկվի: Միհրանյան տոհմի ամենաազդեցիկ ներկայացուցիչը՝ Ջիվանշիրը, հանդես էր գալիս որպես Հայոց Արևելից կողմանց հայության քաղաքական ու ազգային-մշակութային շահերի պաշտպանն ու տարածողը: Մատենագիրը պատկերում է Ջիվանշիրի քաղաքական ու դիվանագիտական հասունությունը, դժվարին կացություններից հնարամտորեն դուրս գալը: Չնայած ներքին երկպառակությունների ու գահակալական կռիվների պատճառով Խազարական խաքանաթը տրոհում էր ապրում, ավարառու ցեղերը այստեղից շարունակում էին իրենց ասպատակությունները դեպի Հարավային Կովկաս և Հայաստան: Դերբենտի դարպասները այլևս խորտակված էին, ու ոչ ոք ի վիճակի չէր արգելելու նրանց արշավներին: Ջիվանշիրը այնուհետև ամրացնում է Գարդմանի բերդը (Ուտիքի Տիգրանակերտը), ապա նոր եկեղեցի կառուցում, խաչ տեղադրում: Հոները հյուսիսից բազմահազար հեծյալներով գալիս են, ասպատակում Կուր-Արաքսի հովիտն ու Արարատյան դաշտը, քշում տանում անասունները, կողոպտում երկիրը: Ինչպես հաստատում է Սեբեոսը, 652 թվականին հայոց սպարապետ Թեոդորոս Ռշտունին գնում է խալիֆի մոտ՝ Դամասկոս: Մուավիան նրան է հանձնում ողջ Հարավային Կովկասի՝ Հայաստանի, Վրաստանի, Աղվանքի և Սյունիքի իշխանությունը, որի վերին սահմանը հասնում է մինչև Ճորա պահակ (Դերբենդ)[108]: Արաբները երեք տարի Ռշտունու ընդարձակ «Արմինիա» կոչվող իշխանությունը ազատում են խալիֆաթին հարկ վճարելուց: Սակայն մինչև 661 թվականը շարունակվում են արաբական զորքերի մեկը մյուսին հաջորդող արշավանքները: Սալման իբն-Ռաբիայի գլխավորությամբ արաբական զորքը Առան է մտնում հարավից, նախ գրավում է Բայլականը (որը գտնվում է Մուխանքում), ապա՝ Պարտավը: Ինչպես նկարագրում է արաբ մատենագիր Բալաձորին, բայլականցիների հետ պայմանագիր կնքեց, նրանց պարտավորեցնելով հողային հարկ և գլխահարկ վճարել խալիֆաթությանը: «ու այնտեղ անցկացրեց (որոշ ժամանակ): Այստեղից էլ Սալմանը եկավ Բարտա (Պարտավի արաբերեն անունն է - Բ.) և բանակ դրեց Տրտու (Թարթառ) գետի ափին, որը քաղաքից հեռու է մեկ փարսախից էլ պակաս: Բնակիչները նրա դեմ փակել էին քաղաքի դարպասները, և նա ստիպված էր քաղաքը պաշարած պահել մի քանի օր: Այդ ընթացքում նա հարձակումներ էր գործում քաղաքի շրջակայքի գյուղերի վրա, որոնցում հունձն արդեն ավարտված էր: Այդ նրանց (քաղաքի բնակիչներին) ստիպեց, կնքել այնպիսի պայմանագիր, ինչպիսին կնքվել էր Բայլականի բնակիչների հետ: Նրանք բաց արին քաղաքի դարպասները, և նա մտավ քաղաք, շարժեց իր այրուձին, որը

[108] Սեբեոս, էջ 146, տես նաև՝ Կաղանկատվացի, էջ 152:

գրավեց Շակշինի (Շակաշեն), Մեծկեանի (Մեծ Կուանք), Ուդի (Ուտիք), Մեսիրանի (Մեծ Առանք), Խերխիլանի (Հարջլանք), Տաբարի (Հաբանդ) գավառների գյուղերը և Առանի ուրիշ վայրեր»:

Այնուհետև արաբ մատենագիրը հայտնում է, որ «Բայլականի բնակիչներին ստիպեցին ընդունել իսլամի կրոնը, որին պատասխանեցին ապստամբությամբ: Սակայն Սալմանը ճնշեց այն, բնակչության աննշան մասը ընդունեց Իսլամ...»[109]:

Եթե Առանում (Արցախ և Ուտիք) արաբներին չհաջողվեց վաղուց քրիստոնեություն ընդունած հայերին նույնիսկ մահվան սարսափով իսլամի հավատքին բերել, ապա Կուրի ձախ ափի բազմալեզու ցեղերին իսլամի հավատքին բերելը զանգվածային բնույթ կրեց: Այդ ժողովուրդները (լեզգիներ, ավարներ, լակեր, դարգիններ, թաբասարանցիներ, ծախուրներ...) այդպես էլ չպահպանեցին միասնական գիրը, որ ստեղծել էր Մեսրոպ Մաշտոցը: Իսկ գիր ու գրականություն չունենալու պատճառով մշակույթը այնպիսի արմատներ չէր գցել ժողովրդի մեջ, ինչպես դա Հայաստանում էր կամ նրա հյուսիսարևելյան հատվածում (Առան): Գայթակղիչ արտոնությունները ևս պակաս դեր չխաղացին, որ նրանք մահմեդականություն ընդունեն: Ընդհանրապես, հայոց Արևելքի (Կուր-Արաքսի միջագետք) տիրակալներին յուրահատուկ է եղել Հայաստանի համար ծանր ժամանակներում հզոր տիրակալների հետ բարի դրացիական հարաբերություններ հաստատելը, նրանց հետ հեշտ լեզու գտնելը, եթե, իհարկե, նրանք ճանաչում են այս երկրամասի ինքնավարությունը: Հակառակ դեպքում Արցախի և Ուտիքի լեռները, անտառներն ու բերդերը մի դժոխքավայր են դառնում նվաճողների համար: Հենց դա էր պատճառը, որ նվաճողները հաշվի էին նստում այս երկրամասի տիրակալների հետ: Մատենագրի ներկայացված վավերագիր փաստաթղթերում (Դավիթ և Հովել եպիսկոպոսների թուղթը) խոսվում է Աղվանից Ուխտանես կաթողիկոսի և Ջիվանշիրի մասին, վերջինս անվանվում է «իշխանաց իշխան» տիտղոսով: Ջիվանշիրը պատկերված է ոչ միայն որպես հավատացյալ քրիստոնյա, քրիստոնեական եկեղեցու հովանավոր, այլև արվեստների, նկարիչների, գիր ու գրականության մեծ խնամակալ և հովանավոր. «Մեծ ծախսեր անելով, նկարիչներ գործի դրեց և գմբեթից մինչև դռան բարավորները նկարեց և պաստառեց կերպասներով, իսկ տաճարի դուռը տիեզերքի լույսը պահպանողը, արծաթապատեց և հրաման տվեց քանդակազարդել»[110]: Սակայն ամեն ինչ չէ, որ հարթ էր գնում Հայաղվանքում: Արցախի և Ուտիքի Առանշահիկ իշխանական տան ժառանգները արյան վրեժի ծարավով լցված՝ ոխ էին պահում

[109] Բալաձորի (СМОМПК, вып. 32, 1903, стр. 13:
[110] Նույն տեղում, էջ 153:

Միհրանյան տան ժառանգների նկատմամբ: Մատենագիրը նկարագրում է Ջիվանշիրի իշխանության դեմ ապստամբությունը, երբ Արցախի բնակավայրերում հրի են մատնում, ավերում իշխանամետ մարդկանց տները: Ջիվանշիրն արդեն ապրում էր, ինչպես Լեոն է նկարագրում, «զեխ ու ցոփ կյանքով», որն էլ պատճառ դարձավ, որ նա մի դավադրության զոհ դառնա: Մատենագիրը այս առթիվ գրում է. «Բայց այդ բաղձալին ու հոչակավորը (Ջիվանշիրը) նենգավոր կրքի ախտի շնորհիվ, թափուր ու դատարկ լինելով, անմաս մնաց Աստծու այդ փառքից, որովհետև Աստծու պատվիրանին հակառակ էր գործում: Եվ ահա ամենը եղավ սարդոստայն, շատ շուտ այն չքնաղ վայելչությունները ոչնչացան»[111]: Ջիվանշիրը 61 տարեկան հասակում սպանվեց 680 թ սեպտեմբերին, կեսգիշերին, Պարտավի իր դղյակի պարտեզի խորքում, ուր խաբեությամբ, իբր անառակության հրապույրով, առանց թիկնապահների գայթակղվում է և ընկնում սրի հարվածից: «Տիրասպանը» փախչում է: Իշխանի քեռորդին վերցնում է թիկնապահներից հիսուն հոգու և հետապնդում նրան, ապա գնում են դեպի Արցախ «ոճիրի» դիմաց վրեժխնդիր լինելու: Նրա հոր տունը ավարի են ենթարկում ու հրի ճարակ դարձնում: Տան հարստության նկարագրությունից զգացվում է, որ այն իշխանական տուն էր: Այնուհետև ժամանակագիրը պատմում է Դավթակ բանաստեղծ ճարտասանի մասին, որը հայոց այբուբենական կարգով աքրոստիկոս-ողբ է երգում բարյացապարտ Ջիվանշիրի վրա: Մատենագիրը ամբողջությամբ մատուցում է այս ողբ-պոեմը, որը մտել է հայոց վաղ միջնադարյան պոեզիայի ոսկե ֆոնդի մեջ: Երկրի իշխանները հավաքվում են Եղիազար կաթողիկոսի մոտ և ավագ իշխան ընտրում Ջիվանշիրի եղբայր Վարազ-Պերոժի որդուն՝ Վարազ-Տրդատին. «Նրան հանձնեցին հայրենական գահի առաջին իշխանի աթոռը»[112]: Մատենագիրը հայտնում է, որ Աղվանից իշխանը ստիպված հարկ էր տալիս երեք երկրների խազարներին, բյուզանդացիներին ու արաբներին: Այդ ժամանակ հոների զորավար և մեծ իշխան Ալփիլիթվերը իր զորքով անցավ Կուր գետը, իբր իրեն փեսա Ջիվանշիրի արյան վրեժը լուծելու համար, մտավ Ուտի գավառը և սկսեց ավարը, ապա կրկին անցավ գետը և կանգ առավ Լփինքի սահմաններում: Եղիազար կաթողիկոսը գնում է հոների առաջնորդի մոտ և պատմում, որ իրենք մասնակից չէին Ջիվանշիրի սպանությանը: Կրկին Աղվանքի ու հոների միջև խաղաղություն է հաստատվում:

Բյուզանդիայի կայսրերը ամեն նպաստավոր պահ օգտագործում էին կրկին Հարավային Կովկասը նվաճելու և իրենց հարկատու դարձնելու համար: Երբ Հուստինիանոս 2-րդ կայսրը (685-695 թթ.) տեղեկանում է, որ Հայաստանը հարկատու է դարձել խազարներին, 686 թ. մեծ զորք ուղարկեց, որը, Ասողիկի վկայությամբ, քանդեց 25 գավառ, գերի տարավ ութ հազար ընտանիք և որպես ստրուկ վաճառեց օտար երկրներում: Հաջորդ տարին 40 հազարանոց բանակով կրկին ասպատակեցին Հայաստանը[113]: Այս մասին վկայում են և հույն պատմիչներ Թեոփանեսն ու Կեդրենոսը: Նրանք Աղվանքից պատանդ տարան նաև Միհրանյան տոհմից մեծ իշխան հաստատված Վարազ-Տրդատին՝ իր Գագիկ և Վարդան որդիների հետ: Բյուզանդացիք շարունակում էին տիրապետությունը ամրապնդելու համար քաղկեդոնությունը բռնի տարածման քաղաքականությունը: Հայոց եկեղեցին թե՛ Արարատյան դաշտում և թե՛ Աղվանքում ստիպված էր անվերջորեն պայքարել իր ինքնության համար, մերժելով մեկ կրակապաշտությունը, մեկ մահմեդականությունը, մեկ երկբնակ քաղկեդոնականությունը: Այդ միջոցին բյուզանդացի կրոնապետների համար շատ նպաստավոր պայմաններ էին ստեղծվել Հայաղվանքում: Վարազ-Տրդատի կինը իշխանուհի Սպարամը, համաձայնվեց Աղվանքում քաղկեդոնություն տարածել, միայն թե ազատ արձակեն Կոստանդինապոլիս տարված ամուսնուն և որդիներին: Ամուսնու փոխարեն իր գավառում Սպարամ տիկինը մահացած Եղիազարից հետո ապորինի կերպով Աղվանից կաթողիկոս է դարձնում Գարդմանքի քաղկեդանական Ներսես Բակուրին և ստիպում, որ քաղկեդոնական դարձնի ողջ երկիրը: Սակայն մի շարք եպիսկոպոսներ, ինչպես և Վարազ-Տրդատի տեղապահ Աղվանից Շերո մեծ իշխանը իր ազնվականներով եկեղեցական ժողով են գումարում, նզովում Ներսեսին և նամակ գրում Հայաստան՝ Հայոց Եղիա կաթողիկոսին (703-717թթ.) «աղետավոր անցքերի մասին»[114]: Կաթողիկոսը դիվանագիտորեն է մոտենում խնդրին օգտագործելով արաբների ու Բյուզանդիայի մրցակցությունը, դիմելով արաբական խալիֆ Աբդլմելիք Ամիրմոմնինին, հաղորդելով, որ Աղվանքի Բակուր կաթողիկոսը իր աղոթքներում Բյուզանդիայի կայսեր անունն է տալիս, խորհուրդ տալով անտարբեր չմնալ այս խնդրի վերաբերյալ: Խալիֆը իր հերթին պատասխանում է, որ զորք է ուղարկում ապստամբ Բակուրին և իշխանուհի տիկնոջը շղթայակապ Դամասկոս բերելու և հրապարակավ պատժելու համար[115]: Պարտավ է գալիս Հայոց կաթողիկոս Եղիան: Զերբակալում են Բակուրին: «Ոտ ոտի կցված կապվեց այն կնոջ (Սպրամի) հետ, և պատրաստվում էր Բակուրին օտար երկիր տարագրել, բայց որովհետև ութ օր անսվազ մնաց, ուստի վախճանվեց: Բակուրն անիծեց Շերոյին, որովհետև սա նրան և Սպրամին առաջնորդեց դեպի չարը, և այդ այն պատճառով, որ Շե-

[111] Լեո, Հայոց պատմություն, հ. 2. էջ 330:
[112] Կաղանկատվացի, էջ 173:

[113] Չամչյան, էջ 372:
[114] Կաղանկատվացի, էջ 229:
[115] Նույն տեղում, էջ 230:

ռոյի և Սպրամի միջև տարածայնություն կար իշխանության վերաբերյալ»[116]: Ներսես-Բակուրը որպես կաթողիկոս աթոռակալել էր տասնյոթ տարի: Աղվանից կաթողիկոս ընտրվեց Սիմոնը, իսկ Բակուրի քաղկեդոնական գրքերը Բերդակուր ամառանոցային ապարանքի մոտ (այժմ ԼՂՀ, Մարտակերտի շրջան) նետեցին Տրտու գետը: Եղիա կաթողիկոսը սուրբ ուխտ կնքեց Աղվանից եկեղեցու հետ Քաղկեդոնի ուսմունքը մերժելու և Քրիստոսի միաբնակ լինելու ուսմունքին հավատարիմ մնալու մասին, փաստաթղթերը կնքեց մատանիով ու հանձնարարեց Ներսմիհրի Եղիշե առաքյալի վանքի վանահայր Քշիկին՝ ի պահպանություն, քանի որ Ներսմիհրի վանքը Աղվանից եկեղեցու գլխավոր պահոցն էր: Աղվանից կաթողիկոս Սիմոնը իր հրապարակած կանոններում գրում է, որ Ներսմիհրի (Եղիշե առաքյալ վանք) վանահայր սրբասուն Քշիկը գրել է, թե Աղվանից իշխան Վարազ-Տրդատը մի փոքրիկ գյուղակ է նվիրել սուրբ խաչիս իր հոգու փրկության համար սպասավորելու, իսկ այժմ Փուսան-Վեհ անունով մի աշխարհիկ հեծելակ, որ անառակությամբ կյանք է անցկացնում, թուղթ է մեջտեղ բերում, թե Աղվանքի իշխանը իրեն է տվել այդ եկեղեցին իր վանականությամբ: Այնուհետև կաթողիկոսը որոշում է, որ Փուսան-Վեհը չպետք է տիրի եկեղեցուն, այլ անբիծ ու անարատ քահանաները կիշխեն եկեղեցու վրա: Ապա ընդհանրացնելով հրամայում է, որ զինվորներն ու աշխարհականները եկեղեցու վրա իշխանություն չունենան՝ ինչ թուղթ էլ որ ներկայացնելիս լինեն:

Արաբները Պարտավի ժողովից պահանջում են Աղվանքի իշխանների ցուցակը, որը փաստորեն երդմնաթուղթ էր, ու եթե ցուցակում նշված իշխաններից որևէ մեկը երդմնազանց լինի և քաղկեդոնություն ընդունի, ապա նա պատասխանատու կլինի արքունական դիվանի առջև: Ցուցակում նախ նշված է Միհրական տոհմից Աղվանքի մեծ իշխան Շերոյի անունը, ապա Աղվանից սպարապետ Զվանքոն, հետո գրված են Վարազ-Տրդատի որդիների՝ Վարդան պատրիկի և Գագիկի անունները, որոնք դեռևս Կոստանդնապոլսում էին: Ապա գրված է Վախթանգ Վարազմանյանի անունը, որը միհրական ճյուղից է, հետո արքաների (Վաչագան Բ.) զարմից Պատրիկ Քարոյանը, որը բնակվում էր Աղբերդի գավառում (այժմյան Ադրբեջանի հանրապետության Աղդաշի և Մինգեչաուրի շրջանները), Բաբ Հրահատյանը (տիրում է Կապաղակին և Կողթին), Վահան Վարազ-Հովհանյանը (տիրում է Կամբեճանում), Ռոստոմ Վարազ-Աբոյանը (տոհմը Պարսկաստանի Ստահր գավառից է, տիրում է Կաղանկատույքում, այժմ Թարթառ), Զարմիհր Վարազ-Բուրդակյանը և Մահմադ Շերոյանը (Դղմահողքի տերերը): Մատենագիրը հայտնում է, որ մեծ զորքով Հայաստան է գալիս Մուհամմեդ

[116] Նույն տեղում, էջ 231:

իբն-Մրվանը, Աղվանքով մտնում է Դերբենտ: Նրա թիկունքում հայոց զորքերը, միանալով բյուզանդական զորքերի հետ, ապստամբում են և կոտորում արաբական կայազորը: Մուհամմեդը ետ է վերադառնում, ճնշում ապստամբությունը, հրի ու սրի մատնում ողջ երկիրը: Հայաստանում թողած նրա կառավարիչը՝ ոստիկան Աբդալալանը, խաբեությամբ հավաքեց հայոց նախարարական տների ժառանգներին, իբր արքունական թոշակ նշանակելու նպատակով, լցրեց Նախիջևանի սբ. Գևորգ եկեղեցում և կենդանի այրեց բոլորին, հետո 400 հոգու Խրամում այրեց[117]: Անշուշտ, այս կորուստը հայերի ուղղամիտ և դյուրահավատ լինելու արդյունք էր: Չնայած հայերը արևելյան ժողովուրդ են ու պիտի որ դարերի ընթացքում յուրացնեին արևելյան դիվանագիտության բոլոր նրբերանգները: Սակայն դա այդպես չէր: Աստված ասես նրանց տվել էր մեկ այլ առավելություն, օժտել էր մյուս ժողովուրդների հետ առևտրի բնագավառում հեշտ շփվելու հատկություններ, իսկ հայտնի է, որ առևտրական ճանապարհներով տեղափոխվում էր ոչ միայն ապրանքը, այլև մշակույթը, մտածողությունը, տեխնոլոգիաները, արհեստները: Իրոք, դա մի մեծ առավելություն էր, որի համար համաշխարհային քաղաքակրթությունը պետք է երախտապարտ լինի Աստծուն (բնությանը) մարդկային այս տեսակի գոյության համար: Սակայն Աստված նրան զրկել էր ինքնապահպանման բնազդից, ավելի շուտ՝ շատ քիչ էր տվել այս հատկությունից, որի հիմքն է տոհմային ու ցեղային համախմբման ունակությունը, ընդհանրական մտածելակերպը: Որովհետև այլ բան է հզոր անհատներ ունենալը, որոնք հարմար պայմաններում (հարևան երկրներում) խոշոր զորավարներ են դառնում, հաղթանակներ տանում, իսկ իրենց թույլ և անմիաբան երկրում ոչինչ անել չեն կարող: Ընկնելով երկու «կրակների» (Բյուզանդիա և Արաբական խալիֆություն) արանքում, հայերը պետք է կարողանային չենթարկվել բյուզանդացիների կամքին ու չապստամբել մի այնպիսի ահավոր ուժի դեմ, ինչպիսին խալիֆությունն էր: Իշխանական տների բնաջնջումը փաստորեն ինքնության, պետական մտածողության ոչնչացումն էր Հայաստանում: Որովհետև պետական անկախության, ազատության գաղափարակիրը ազնվականությունն էր: Մի խոշոր ու վճռական ճակատամարտում պարտության պատճառով երկրի կորուստը այնքան մեծ չէր կարող լինել, որքան նրա ողջ ազնվականության նկատմամբ եղեռնը: Այս հարվածը շատ ծանր ազդեց Հայաստանի վրա, որը ավելի պետք է զգացնել տար հետագա դարերում: Շատ-շատերին էլ գերեվարելով, ուղարկեց Դամասկոս: 705 թվականին շղթայակապ Ասորիք տարան նաև Աղվանքի մեծ իշխան Շերոյին՝ մեծ թվով ազնվականների հետ:

[117] Theophonis Cronographia, t. I, Bonnae, 1839, p. 570.

Գերությունից հինգ տարի հետո Աղվանք է վերադառնում իշխան Վարազ-Տրդատը և երկիրը գտնելով ավերակ վիճակում, հանձնում է արաբների տնօրինությանը: «Նույն ժամանակներում անտանելի սով ընկավ Աղվանքի սահմաններում, - գրում է հայ մատենագիրը, - այդ պատճառով ոմանց կողմից առասպելաբանվեց, որպես թե կորեկը ասել է. «Ես կորեկս, Շակաշեն գավառի Հակա վայրում թաքնված էի, գնորդների բազմությունն ինձ անուշադրության էր մատնել և չէր գնում, եկավ մի բարի ժամ, երբ տիրեց իմ եղբայր Սովը, և ահա ես դարձա երևելի ու բարձրացա Վարազ-Տրդատ իշխանի ու եղիազար կաթողիկոսի սեղանները: Ովքեր ինձ կերան, նրանցից արյուն գնաց, ներողամիտ եղեք»[118]: Իսկ իշխանի որդիները Կոստանդնուպոլսում կայսեր զայրույթի պատճառով գնդան նետվեցին, քանի որ նրանց հայրը Վարազ-Տրդատը միայն արաբներին էր հարկ տալիս: Վարդան և Գագիկ եղբայրներին գնդանից հանեց Հուստանիանոսին 711 թ. փոխարինած հայազգի կայսր Փիլիպիկոս Բարդեանը, որը նրանց նվերներ շնորհելով ուղարկեց հայրենի երկիրը:

Արաբները Դերբենտի դռնով արշավանք ձեռնարկեցին խազարների դեմ: Մսլիման զորավարի բանակում ընդգրկված էր նաև Աղվանից այրուձին քաջ Վաչական Պատրիկյանի գլխավորությամբ: Արաբ զորավարը նրան հանձնեց վերջապահ զորքերի հրամանատարությունը: Նրանք հաղթում են խազարներին, ապա ետ են վերադառնում Ալանաց դռնով: Սա Վաչական թագավորական տան ժառանգորդի մասին վերջին հիշատակումն է: Պատրիկյան նոր անունը նշանակում է, որ նրա հայր Պատրիկ Քարոյանն ու ինքը արաբներից կառավարիչ էին կարգված եղել նշանակալից ծառայությունների համար:

Ընդհանրապես, այս ժամանակաշրջանից շատ հազվադեպ են մեր պատմիչների՝ Մեծկողմանց գավառի մասին հիշատակումները: Սակայն երբեմն որոշ իրողություններ ասես պատռում են լռության քողն ու հասնում մեր օրերը: Տարեգիրը հայտնում է, որ Մեծկողմանքի Գլխո վանքի[119] (Թալիշ գյուղի մոտ Հոռեկա վանք) եպիսկոպոս Իսրայելը սկզբում ճգնավոր է եղել ու մի լրիվ տարի Մռավ լեռան վրա մի տեղ «գետնին ծունկի եկած էր քնում», ապա գրում է. «Ճշմարտապատում դրվագներ քիչ հայտնաբերեցի: (Կյանքի) սկիզբը անհայտ է, այլ այն միայն կշարադրենք, ինչ հիշում ենք»: Սակայն Աղվանից պատմության հաջորդ ժամանակագիրը հայտնում է, որ

[118] Կաղանկատվացի, էջ 223-224:
[119] Ըստ Կաղանկատվացու՝ Ուռեկա վանքի քահանա Ստեփանոսը Ձերգունի դաշտակում գտնվող Հոմենք վայրում նահատակված Եղիշեի ոսկորներից հափշտակում է գանգոսկորն ու բերում Ուռեկա վանք, որի համար էլ վանքը ստանում է Գլխո վանք անվանումը: Կաղանկատվացի, էջ 8:

Աղվանից կաթողիկոս Ներսես Բակուրը, որ քաղկեդոնականություն էր ընդունել, «Եկեղեցու արժանաժառանգ ուղղափառ զավակներին հալածեց և դարձրեց տարաբնակ: Ամենից առաջ հալածեց Մեծկողմանքի հրաշագործ երանելի Իսրայելին»[120]: Իր ճգնարանում գիշերը երազում Իսրայելին մի տեսիլք է փայլփլում, որը հուշում է անցյալ ժամանակների մեծ խորհուրդը, թաքցված մասունքների տեղը, «շտապ իջնում է լեռներից... աճապարանքով անցնում է եպիսկոպոսանոցի եկեղեցապատկան ավանը (այժմյան Թալիշ գյուղը - Բ.), ճշգրիտ կերպով եպիսկոպոսին (Դավիթ - Բ.) պատմում է խորհրդավոր հայտնությունը ամբողջությամբ»[121]: Ապա դիմում են այդտեղից ոչ հեռու Դյուտականի ամառանոցում նստող Աղվանից Ուխտանես կաթողիկոսին, որն էլ հանձնարարում է եպիսկոպոսներով գնալ և փորձել գտնել գանձը: Չղախն այն վայրն է, որտեղ սուրբ Մեսրոպի աշակերտները հոների զորապետի կողմից նահատակվելուց առաջ թաղել, թաքցրել էին սուրբ մասունքները: «Այնտեղ կար մի փայտաշեն մատուռ՝ խեցիներով երեսպատված, խաչանիշ զարդարանքներով դրվագված, պատերը զարդափայլ գեղեցկությամբ հորինված: Արդ՝ երբ այդ լուրը տարածվեց, աճապարանքով հավաքվեցին անվանի մարդիկ, քորեպիսկոպոսներ, քահանաներ, սարկավագներ, հարյուրների գավառապետներ, ղեկավարներ ու մեծամեծներ, գործակալներ, տղամարդկանց ու կանանց ժողովրդական բազմություն, որպեսզի բոլորը մասնակցեն Աստծու սքանչելիքի ցուցադրությանը»[122]: Իսրայելի թելադրանքով մատուռի պատարագի սեղանի տակ փորելով, հայտնաբերում են արծաթե տուփերը, որտեղ պահվում էր «Քրիստոսի փրկարար խաչի մասը»: Ինչպես հայտնում է պատմիչը՝ «Դրա համար Աստծու մարդ Իսրայելը եպիսկոպոսների ու ժողովրդի առջև մեծ հարգ ու հեղինակություն ձեռք բերեց, ուստի նրան պատվում էին ըստ իրեն արժանի սրբությամբ»: Սուրբ մասունքները տեղափոխում են Հոռեկ, հանդիսությամբ տեղավորում Գլխովանքում: Անշուշտ, ճգնավոր Իսրայելը Կաղանկատվացու ձեռագրից տեղյակ էր Չղախի և Աստղաբլուրի դեպքերին ու գանձը թաքցնելու մասին, սակայն գտել էր, որ հայտնությանը հանդիսավոր տեսք տալու համար այն պետք է մատուցվեր որպես Աստծո պարգև, որն էլ երկնայինից կարող էր ստանալ միայն երազի տեսքով: Այս ձևով մատուցելիս այն ավելի ընդունելի կլիներ եկեղեցու հայրերի, իշխանավորների ու ժողովրդի կողմից: Աղվանից իշխանաց իշխան Զիվանշիրի և կաթողիկոս Ուխտանեսի հրահանգով մասունքները տանում են Պերոժ-Կավատ (Պարտավ) քաղաքը, ցուցադրում հրապարակում և եկեղեցական ժողո-

[120] Կաղանկատվացի, էջ 229:
[121] Կաղանկատվացի, էջ 159:
[122] Կաղանկատվացի, էջ 161:

վում, ապա ետ տանում Գլխովանք մենաստանը: Մեկ տարի անց Իսրայելը, որ արդեն Մեծկուանքի առաջնորդն էր, գաղտնի, առանց հանդիսության, գնում է Գիսավան, եկեղեցու գմբեթի տակ գտնում սուրբ Մաշտոցի թաքցրած տուփը՝ Քրիստոսի փայտե խաչի մասունքով ու արծաթածույլ խաչով, որով քրիստոնեության քարոզն էր տարածում երանելի Մեսրոպ Մաշտոցը: Ժամանակագիրը նկարագրում է Մեծկուանքի եպիսկոպոս Դավթի մահանալուց հետո Պերոժ-Կավատ քաղաքում Աղվանից կաթողիկոս Եղիազարի ու մեծ իշխան Վարազ-Տրդատի կողմից Իսրայելը Միջնարցախի թեմի առաջնորդ է օծվում, վերադառնում եպիսկոպոսանիստ Տաղծանք (այժմ՝ Թալիշ) գյուղը: Ապա Վարազ-Տրդատ իշխանը Իսրայելին ուղարկում է Արարատյան նահանգ՝ Հայոց մեծ հայրապետ Սահակի ու Գրիգոր մեծ իշխանի մոտ՝ բանակցելու և բարեկամական կապեր հաստատելու նպատակով: Այդ ժամանակ Գրիգոր Մամիկոնյանը Դարանաղից Վաղարշապատ էր բերել սուրբ Գրիգոր Լուսավորչի մասունքները: Իսրայելն իր հայրենակից Հեղինե իշխանուհու օգնությամբ, որ Հայոց մեծ տիկինն էր (Գրիգոր Մամիկոնյան մեծ իշխանի կինը), ստանում է սուրբ Գրիգորի ծնոտի մի մասը, իր հետ այն բերում Գլխովանք, այդպես կրկին հաստատում վանքի անունը, մանավանդ, որ սուրբ Եղիշեի մասունքը Վաչական Գ Բարեպաշտը տեղափոխել էր Զրվշտիկի Ներսմիհր վանքը, Եղիշեին նվիրված հուշասյուն կանգնեցրել:

Վարազ-Տրդատ մեծ իշխանը քաղաքական բարդ իրավիճակներում աչքի է ընկնում դիվանագիտական ճկունությամբ: Իսրայել եպիսկոպոսին Վաղարշապատ ուղարկելով, նա Հայոց կաթողիկոսի և սպարապետի հետ համաձայնեցնում է հյուսիսային համընդհանուր վտանգը՝ հոների ավերիչ արշավանքները կանխելու համար իր հետագա քայլերը: Ունենալով Վաղարշապատի համաձայնությունը, իշխանը երկրի նախարարներին խորհրդակցության է հրավիրում ու որոշում Իսրայել եպիսկոպոսին ուղարկել հոների երկիրը՝ բանակցությունների և հաշտություն կնքելու: Հարկ է նշել մի կարևոր հանգամանք ևս: Դա ունակ մարդուն գորշ միջավայրում գնահատելն ու զատելու ունակությունն է, որով աչքի է ընկնում Վարազ-Տրդատը: Սովորաբար թագավորների ու իշխանների կողմից մարդկանց սխալ ընտրությունը հաճախակի բերում է այս կամ այն բնագավառում ձախողումների, որն էլ իր հերթին ծանր հետևանքներ է ունենում երկրի համար: «(Իսրայելը) որովհետև կյանքում ողջախոհ էր, հոգու իմաստությունը ճառագայթում էր բոլորի վրա և իսկապես սքանչելի էր դառնում՝ փրկելով իր և շատերի հոգիները: Նա կատարեց հնազանդության ու սիրո պատվիրանը, հանձն առավ շուտափույթ ճանապարհ ընկնել ու գնալ հոների հեռավոր երկիրը»[123]: Իսրայելը պատվի-

[123] Կաղանկատվացի, էջ 185:

ռակության հետ ճանապարհ է ընկնում 681 թ. դեկտեմբերի 23-ին[124]: Պարտմության հեղինակը հայտնում է, որ «եպիսկոպոսը անցնում է Կուր գետը, այսինքն՝ Հայաղվանքի սահմանը, հասնում Լփինքի քաղաքներից մեկը: Նա 682 թ. հունվարի 6-ին այստեղ կատարում է աստվածահայտնության տերունական տոնը»: Իսրայելը նպատակ ուներ հիմնականում խնդիրը լուծել քրիստոնեական քաղաքակրթության տարածումով: Հոներին քրիստոնյա ու հայերին հավատակից դարձնելով միայն կարող էին եկեղեցու միջոցով հսկել այս ավարառու ցեղերին: «Այդ ժամանակ ծմեռվա հյուսիսային քամիները անասելի բուք ու մրրիկ բարձրացրին Կովկաս լեռան սարավանդակի մոտ, որտեղ, երեք օր արգելափակված մնալով, չկարողացան աչք բարձրացնել կամ նշմարել անցման ճանապարհը: ...Հասան Վարաչան հոյակապ քաղաքը (այժմյան Բույնակսկ քաղաքի մոտ Կոսֆիր- Կումուխ վայրում) մեծ պասի սկզբում»: Մեծկուանքցի եպիսկոպոսը այստեղ ականատես է լինում հեթանոսական մոլեռանդ ծեսերի՝ «Զուռնա էին փչում ու թմբուկ էին զարկում դիակների վրա, և դաշունահարության հետքեր, դանակի ցտումներ այտերին, մարմնի զանազան անդամների վրա արյունահոս կտրվածքներ, մերկանդամ սահարություններ, դժոխային մի տեսարան, ուր մարտահրապարակի տղամարդ տղամարդու և ջոկ-ջոկի ետևից գերեզմանի դուռն էին հասնում: Եվ խուռն բազմությունը, ըմբշամարտելով միմյանց հետ, անառակություն է անում և ձիարձակ արշավով այս-այն կողմ ճախրում: ...Նույն ձևով տռփական ցանկությամբ անառակություն անելով, ըստ հեթանոսական վայրենամիտ բարքերի, նրանք հոր կնոջը իրենց կին են դարձնում, երկու եղբայրներ մի կին էին պահում, զանազան կանայք էին առնում ...նրանք չէին կարողանում նկատել ու ճանաչել արդարության արեգակը»: Հեթանոսները Վարաչանում «Թանգրի-խան» կուռքին խորոված ձի էին մատուցում: Իսրայելը իր քարոզներով հավատափոխ է անում հոների մեծ իշխան Ալփիլութվերին ու նախարարներին, նրանց օգնությամբ զանազան տեղերում եկեղեցիներ հիմնում, մի դաժան պայքար սկսում հեթանոսության դեմ, ի վերջո, հաղթում, այրում մեհյանները, կործանում Սպանդեատ կռատունը, կտրտում պաշտելի ծառերն ու խաչեր պատրաստում, քրմերին ու մոգերին քրիստոնյա դարձնում կամ պատժում: Հոների մեծ իշխան Իլիթվերն ու բոլոր մեծամեծները, նախարարները ժողով գումարեցին և որոշեցին խնդրել Իսրայել եպիսկոպոսին, որպեսզի մնա իրենց երկրում, հայրապետություն ստեղծի, շարունակի լուսավորել իրենց: Իսրայելը պատասխանեց, որ նման հարցերը իրենց կաթողիկոսն է վճռում, ուստի և պետք է նրանց այդ միտքն ու մտադրությունը գրավոր կերպով հայտնեն Աղվանքի ժողովրդին ու Եղիազար հայրապետին:

[124] А.А.Акопян, О хронологии последних событий в "Истории 684 года", Кавказ и Византия, Ереван, 1988, стр. 32.

Անշուշտ, հոների կողմից նամակով ժողովրդին դիմելու Իսրայելի գաղափարը դիվանագիտական քայլ էր: Հոների մեծ իշխան Իլիթվերը Աղվանից կաթողիկոսին ու մեծ իշխան Վարազգ-Տրդատին ուղղված նամակով և եպիսկոպոս Իսրայելին ետ բերելու հանձնարարությամբ Աղվանք ուղարկեցին երկու զորավարների՝ Խուրսան Զիրթգինին և Խազր Չաթին: Հրովարտակում ասվում է. «Հոգեղեն աչքերի տեսողությամբ ընդունեցինք ձեր կողմից առաքվածին՝ Աստծու այր Իսրայել եպիսկոպոսին և դրա միջոցով ողջունում ենք ձեզ՝ Աղվանքի մեծ հայրապետ եղիազար և մեր սիրելի եղբայր Աղվանքի աշխարհակալ իշխան Վարազ-Տրդատ: Որովհետև դուք մեզանից խնդրում էիք մարմնավոր խաղաղություն, իսկ մենք հոգևոր ողջույնով տեսանք դա ինչպես Աստծու պատկեր և դրա (Իսրայելի) սուրբ վարքի ու նորասքանչ հրաշքների միջոցով, որ բարձրյալը ցույց տվեց, ճանաչեցինք մեր արարչին ու ստացանք մեր հոգիներին խաղաղություն: Եվ արդ՝ ձեզանից խնդրում ենք, որ նույն իրեն՝ Իսրայելին, տաք մեզ եպիսկոպոս ու առաջնորդ, որի միջոցով շատերս հավիտենական փրկություն գտանք, և որպեսզի մեր և ձեր միջև անքակտելի բարեկամություն հաստատվի: Ողջ եղեք տիրոջով»: Նման խնդրանքով հոները մեկ այլ նամակ են ուղարկում Հայոց ամենայն կաթողիկոս Սահակ Գ-ին ու սպարապետ Գրիգոր Մամիկոնյանին: Կաթողիկոսն ու սպարապետը պատասխանեցին, որ եպիսկոպոսի Հոների երկիրն ուղարկելը Աղվանից կաթողիկոսության խնդիրն է: Իսկ Պարտավում հոների զորավարներ Զիթգին Խուրսանին ու Չաթն Խազրին պատասխանեցին, որ Իսրայել եպիսկոպոսն իբրև առաջնորդ իր թեմն ու հոտն ունի, ուստի երկար ժամանակով չի կարող բացակայել երկրից: Սակայն խոստացան երբեմն ուղարկել նրանց երկիրը: Հոների զորականները անհանգստացան, ասելով. «Մեզ մոտ գալն ու գնալը թող ուշ-ուշ չլինի, հավատի դրված հիմքը նորից չքանդվի, և նա մեզ որբ չթողնի, որովհետև ուրիշ վարդապետի մենք չենք լսի ու հնազանդվի»: VII դարում արդյոք պատահակա՞ն էր նման մի դիվանագետ-եկեղեցականի հանդես գալը, որը տարածաշրջանի համար ռազմավարական մի բախտորոշ խնդրի լուծումը մեն-մենակ իրականացնում է հակառակորդի երկրում հեթանոսությունից քրիստոնեության բերելով: Անշուշտ, սա այն աշխատանքի արգասիքն է, որ ձեռնարկել էին Մեսրոպ Մաշտոցն ու նրա հետնորդները, ապա և Վաչական Բարեպաշտը, որոնք Արցախում և Ուտիքում ստեղծեցին կրթական մի ամբողջ համակարգ: Իսկ Իսրայել եպիսկոպոսը այդ կրթական մշակույթի վառ արտահայտություններից մեկն էր:

591 թ. Բյուզանդիայի կայսեր դեմ ապստամբության պարտությունից հետո, երբ գերված Սմբատ Բագրատունուն տանում են Կ.Պոլիս, որտեղ կրկեսում, բյուրավոր հանդիսատեսների առջև մերկ ձեռքերով հաղթում է արջին, ցուլին և առյուծին, ի վերջո, ազատ արձակվում, «այս ժամանակնե-

ից սկսած հետզհետե զօրանում է Մամիկոնեան հոսանքի թեքումը դեպի Արևմուտք, իսկ Բագրատունեացը՝ դեպի Արևելք»[125]: Նիկողայոս Ադոնցը, վերլուծելով VII-VII դարերի իրադարձությունները, գալիս է այն հետևության, որ Հայաստանում կար երկու կուսակցություն՝ Մամիկոնյան և Բագրատունի: «Եթե Մամիկոնյանները հայ խաչելության և սրի շողշողուն քարերն են, Բագրատունիք հայ խոհականության քարէ սիւներն են, - գրում է պատմագետը, ավելացնելով,- Բագրատունիները, որ ձեռքերը անմիջապես չեն երկարում դեպի սուրը, այլ դնում են ճակատին և խորհում»[126]: VIII դարի կեսերին Հայոց իշխանաց իշխանը Աշոտ Բագրատունին էր, որը վայելում էր Մրուանի՝ Արաբական խալիֆայության գահի ժառանգորդի հովանավորությունը: Գրիգոր և Դավիթ Մամիկոնյան եղբայրները փորձում էին Աշոտ Բագրատունուց խլել առաջնությունը: Ներքին ընդհարումների ժամանակ Աշոտը սպանում է Դավթին: Երբ սպանվում է Մրվանը, Գրիգոր Մամիկոնյանը օգտվում է խառնաշփոթ իրավիճակից և ապստամբում արաբների դեմ: Աշոտ Բագրատունին դեմ էր ապստամբությանը, այն համարելով ժամանակավրեպ և անօգուտ, քանի որ արաբները դեռ շատ հզոր էին: Բյուզանդացոց կայսր Կոնստանդինը խոստացել էր օգնել հայ ապստամբներին: Սակայն այդպես էլ բյուզանդական զորքը չեկավ օգնության: Աշոտ Բագրատունին, որպեսզի փրկի Հայաստանը հերթական ավերից, հեռացավ ապստամբներից, գնաց Բագրևանդ և ներկայացավ արաբներին: Գրիգոր Մամիկոնյանը ծուղակ է պատրաստում և բռնում Աշոտին, հանձնում Դավթի ծառաներին, որոնք այրելով կուրացնում են իշխանաց իշխանին: Դա 755 թ. էր: Աշոտին հաջորդեց նրա հորեղբոր՝ Բագարատի որդի Սահակ Բագրատունին, «գեղագեղ երեսօք, երևելի հասակաւ և ազնուական բնութեամբ»: Ապստամբությունից 20 տարի հետո «երկիրը ծածկվեց խռովքի նոր ամպերով»: Արտավազդ Մամիկոնյանը Դվինում զենքի պատրաստություն տեսավ և տեղափոխվեց Շիրակ, Կումայրի ավանում զարկեց արաբներին: Մուշեղ Մամիկոնյանը սպանեց արաբ հարկահանին և ամրացավ հինավուրց Արտագերս բերդում: Ապստամբները իրենց կողմը գրավեցին Կույր Աշոտի որդուն՝ Սմբատ սպարապետին, որը Մամիկոնյանների փեսան էր: Երկրի իշխանաց իշխանը Աշոտն էր՝ Սահակի որդին: Նա ընդդիմացավ ապստամբներին, խրատելով «չանսալ մոլեկան մոնոզոնի (կրոնավորի) քարոզին և ետ կենալ վնասակար ձեռնարկից»[127]: 20 տարի առաջ նույն վիճակում էր մյուս Աշոտը՝ նրա պապի եղբայրը, որը փորձեց Մամիկոնյան-

[125] Ն.Ադոնց, «Բագրատունյաց փառքը», Պատմական ուսումնասիրություններ, Պարիս, 1948, էջ 34 (այսուհետ՝ Ադոնց):
[126] Նույն տեղում, էջ 43:
[127] Նույն տեղում, էջ 38:

ներին ետ պահել գերիզոր խալիֆայության հետ կորստաբեր ընդհարումից: Հեռատես իշխանի խոսքը ոչ ոք չլսեց: Շուտով տեղեկացան, որ 30 հազարանոց արաբական բանակը ոմն Ամրի հրամանատարությամբ Խլաթ էր հասել: Ռամիկներից ու շինականներից կազմված Մամիկոնյանների զորքը ցրվեց: Մամիկոնյան իշխաններն ու նրանց կողմնակիցները որոշեցին կռվել, չնայած համոզված էին, որ փրկություն չկա: Ընդհարումը տեղի ունեցավ 775 թ. ապրիլին, Արճեշում: Նահատակվեցին Մուշեղ Մամիկոնյանն ու Սմբատ Բագրատունին: Երեք հազար հայոց ինքնագոհ քաջերի մարմինները երկար ժամանակ ընկած էին դաշտում անծրևի, արևի տակ: Մուշեղի երկու որդիները փախան Վասպուրական, որտեղ Մեհրուժան Արծրունին ստորաբար սպանեց պատանիներին: Այսպես Մամիկոնյան կարմիր զինվորները իջան Հայոց պատմության ասպարեզից: Կորավ և նրանց հավատարիմ Կամսարական նշանավոր տունը: Նրանց վերջին շառավիղը՝ Ներսեհ Կամսարականը, զոհվեց 785 թ. խազարների եվ հույների դեմ կռիվներում: Այս կռիվներում զոհվեց նաև արաբների կողմից իշխանաց իշխան կարգված Տաճատ Անձևացին, որը թողել էր բյուզանդական ծառայությունն ու անցել արաբների կողմը: Ասպարեզը մնաց Սմբատի որդիներին՝ Աշոտ (Մսակեր) և Շապուհ Բագրատունիներին, որոնք իրենց ենթարկեցին Արշարունիքը, Շիրակը, Աշոցքը և Տայոց գավառը:

XI դարի վրաց հեղինակ Ջուանշերին վերագրվող «Վախտանգ Գորգասալ և նրա հաջորդները» ժամանակագրությունը հայտնում է. «...Իսկ արաբացիք (սարկինոսները) ուժեղացան Ռան (Առան) երկրում և տիրեցին Գաղիրին և Հայքին (Սոմխիթին): Ատրներսեհ (Ադարնասե) Կույրի եղբորորդիք, երեք եղբայրները, որոնք այրեցին հորեղբոր աչքերը, Տարոնից էին եկել Շակի և հաստատվել այնտեղ Արչիլի հրամանով, քանի որ Կովկասի բոլոր ծայրերը Ռանի կողմից անբնակ էին դարձել... և երեք եղբայրները հաստատվեցին մինչ Գուղգուղ (Գուլգուլ)»[128]: Հայկական աղբյուրներում Վիրք գնացած Բագրատունիների հետքերը պարզաբանել է Նիկողայոս Ադոնցը: Աշոտ Կույրը ունեցել է երկու որդի՝ Սմբատ սպարապետը, որը զոհվեց 775-ին և Վասակը, որը ապստամբության պարտությունից հետո թողեց Դարոյնք (այժմ՝ Բայազիտ) ամրոցը և հեռացավ: Ըստ Վարդան Արեվելցու՝ Արաբական իշխանությունները Աշոտի որդի Ատրներսեհի որդի Վասակի որդի Աշոտ հայոց իշխանին տվեց «զերկիրն Վրաց», ուր գնաց հնազանդեցնելու իրեն, իսկ Լևոն Ե հայազգի կայսրը (813-820) Աշոտին ուղարկեց Կյուրապաղատության պատիվ[129]: Ուրեմն՝ Վրաստան դիմողները ոչ թե Աշոտ

[128] Լ. Մելիքսեթ-բեկ, Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հատոր Ա, Եր., 1934, էջ 195-196:
[129] Ադոնց, էջ 119, տես նաև Վարդան,... էջ 77:

կույրի եղբորորդիներն են, այլև որդին ու թոռը: Սխալ է նաև Վասակին ու նրա որդիներին վերագրել Աշոտին կուրացնելը: Վասակի որդի Ատրներսեհը, որը խելացի քաղաքականությամբ կարողացավ շահել արաբական իշխանությունների վստահությունը, վրաստանի իշխան կարգվեց: Այս հաջողությանը անմասն չէր անտարակույս այն վարկը, որ Բագրատունիները ձեռք էին բերել Հայաստանում: Համարյա իրար զուգահեռ Հայոց և Վրաց Բագրատունիները զուգահեռաբար դարձան թագավորներ, Աշոտ Մսակերի թոռը՝ Աշոտ Բագրատունին, 885-ին՝ Հայաստանում, Աշոտ Կյուրապաղատի ծոռը՝ Ատրներսեհ Բագրատունին, 899-ին՝ Վրաստանում: Բագրատունիների մեկ այլ ճյուղը, որը ստանում է Շաքին, շատ արագ ընդարձակում է իր տարածքները դեպի արևելք և հարավ: Քաղաքական այս իրադարձություններն ամենևին էլ պատահականություն չեն: Միջնադարի պատմիչ Բարդանը այս առթիվ գրում է. «Աշոտի իշխանաց իշխան նշանակվելուց հետո ձեռնմուխ եղավ նվաճելու եվ հնազանդեցնելու «զիշխան Հայոց, զՎրաց և զԱղուանից»: Աշոտ Կյուրապաղատը նրան էր ենթարկվում, որի մասին փաստում են բազմաթիվ վավերագրեր: Ու համոզված կարելի է ասել որ Բագրատունիների կողմից Հարավային Կովկասին ու Հայաստանին տիրանալու ծրագրին տեղյակ էին ու հավանություն էին տվել նաև արաբական իշխանությունները: Այն նոր քաղաքական իրավիճակում, երբ ամենուր ապստամբություններ են բռնկվում, անծայրածիր տերությունը իրենց ձեռքում պահելու մի նոր ու նաև հուսահատ քաղաքականություն էր: Անշուշտ, առանց արաբների թողտվության Բագրատունիների հայոց հարստությունը երբեք չէր կարող տիրանալ երեք երկրներին: Վրաստանում վրաց ազգայնական սնապարծությունը անմիջապես ուղիներ փնտրեց Բագրատունիների Վիրք եկած ճյուղը «պոկելու» հայկական հողից: Բագրատունիները, սկսած VI դարից, ընդունում էին Խորենացու թյուր կարծիքը, որ Բագրատունիները հրեաներից են, զորավար Շամբատ Բագարատ նախահորից[130]: Անշուշտ, այս միտքը պատմահորը թելադրել է նրա հովանավորը՝ Սմբատ Բագրատունի իշխանը, ինչն էլ տեղ է գտել «Հայոց պատմությունում»: Ադոնցը այս առթիվ գրում է. «Խորենացու այս ենթադրությունը հաստատուն հող է գտել և անգամ ձգտում առաջ բերել հրեական ծագումը հասցնելու մինչև Դավիթ մարգարեն, որից ոգեներվել է վրաց ազգայնական միտքը և հորինել մի զրույց, ապացուցելու, որ Վրաց Բագրատունիները ամենևին չեն սերում Հայոց Բագրատունիներից, այլ նույն ծագման երկու ճյուղեր են»[131]: Վրաց ժամանակագիրը, տոհմի ծագումը կապելով եբրայական առասպելի հետ, գրում է. «...Յեւ Սողոմոնի այս յոթ եղբայրները յեկան Եկե-

[130] Խորենացի, էջ 67:
[131] Ադոնց, էջ 103:

ղեց (Եկլեց) Ռաքայել տիկնոջ (թագուհու) մոտ, և նրանցից մկրտվեցին: Եւ մնացին Հայոց (Սոմխեթի) յերկրում, և այնտեղ այն օրվանից ցայսօր նրանց զավակները տիրում են Հայքին: Նրանցից չորս եղբայրները յեկան Քարթլի, որոնցից մեկին՝ Գուարամ անուն՝ նշանակեցին իշխան (երիսթավ): Եւ այսպես Վրաց (Քարթլիի) Բագրատունիները այն Գուարամի սերունդն ու ազգականներն են: Իսկ Գուարամի եղբայրը՝ Սահակ անուն՝ գնաց Կախք (Կախեթ) և խնամիացավ Ներսեսին, իսկ մնացած երկու եղբայրները՝ Ասամ և Վարգավարդ անուն՝ գնացին Կամբեչավան, սպանեցին Պարսից սպասալարին և տիրեցին Կամբեչավանին»[132]: Իրականում Բագարատը բուն հայկազունի է: Բագարատ կամ Բագահրատ անունը գալիս է անհիշելի ժամանակներից և կրակ կտրող, բերող աստծո անունն է: Ըստ Հրաչյա Աճառյանի, Բագարատը նշանակում է Միհր աստծու տվածը կամ ստեղծածը[133]:

Աշոտ Կույրի երեք եղբորորդիները 775 թ. Կախեթի թագավոր Արչիլի կամքով հաստատվեցին Շաքիում, որոնց տիրույթը Այրի գետակի ավազանից հասնում էր մինչև Ալազանի վերին հոսանքում գտնվող Գավազանի քաղաքը (այժմ՝ Թելավի մոտ)[134]: Մինորսկին գրում է. «Կապաղակից արևմուտք տարածված էր ավելի կանոր իշխանություն՝ Շաքեն, հայերեն՝ Շաքի, որը հին Աղվանքի մասն էր: Նա տարածված էր Կախեթից արևելք, գլխավորապես Ալազանի արևելյան վտակի երկարությամբ»[135]: Արաբ աղբյուրներից Իբն Հաուկալը Շաքին տեղադրում է Կուրի և Շիրվանի արանքում և երկրի տեր է անվանում Համամին: Իսկ արաբ հեղինակ Բալազորին Շաքիի հիմնադրումը կապում է պարսից թագավոր Կավատի անվան հետ (489-581 թթ.): Շատ հեղինակներ Շաքի և Շակաշեն տեղանունները կապում են մ.թ.ա. VIII-VII դարերում այստեղ հանգրվանած սկյութների հետ: Արաբ մատենագիր Մասուդին, որն անձամբ եղել է Աղվանքում, գրում է. «Ծանարների թագավորության մոտ գտնվում են շաքիները, որոնք քրիստոնեական հավատքի ցեղ են, նրանց մեջ ապրում են մեծ թվով մուսուլմաններ, ...մեր այս գիրքը գրելու ժամանակ շաքիների թագավորը Ատրներսեհն էր՝ Համամի որդին, ինչպես անվանում են նրան»[136]: Իսկ ահա Թովմա

[132] Լ. Մելիքսեթ-բեկ, «Բագրատունյաց պատմությունից», Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հատոր Ա, Եր., 1934, էջ 136:
[133] Հր. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հ. Ա, Եր., 1942, էջ 355:
[134] Աղոնց, էջ 81:
[135] В. Минорский, История Ширвана и Дербента X-XI веков, М., 1963, стр. 116.
[136] Н.А.Караулов, Сведения арабских писателей о Кавказе, Армении и Азербайджане, "Сборник материалов по описанию местностей и племен Кавказа,, вып. XXIX, Тифлис, 1901, стр. 57.

Արծրունին հայ իշխանների Բուղայի կողմից ձերբակալման առիթով գրում է. «Սմբատի որդի Սահլը՝ Շաքիի տերը, որ ձերբակալեց Բաբանին»[137]: Պատահակա՞ն է «Շաքիի տեր» արտահայտությունը: Սահլի հայրը՝ Սմբատը, Արչիլի մոտ գնացած Բագրատունի եղբայրներից մեկն էր[138]: Նա արագորեն ծավալում է իր տիրույթները դեպի արևելք և հարավ, իսկ որդին՝ Սահլը, այն հասցնում է մինչև Արաքս: Արաբների դեմ ծավալված ապստամբության արտահայտություններից էր նաև արաբական զորաջոկատի վրա Սահլ Սմբատյան իշխանի հարձակումը Արցախի Շիկաքար բերդում: Ապստամբությունների առիթը Հայաստանում արաբների ծանր լուծն էր, որը դրվել էր ժողովրդի վրա: «Այս մեծ զրկանք եղավ Աղվանքի համար, - գրում է աղվանից ժամանակագիրը, - որովհետև Պարտավ մայրաքաղաքը արաբները խլեցին Աղվանքի իշխաններից համաձայն իրենց ազգապղծության»[139]: Արաբները ձգտում էին զորացնել արաբական գաղութները Հայաստանում, Աղվանքում և Վրաստանում: Հայ Բագրատունիները մի անգիջում պայքար էին սկսել օր օրի հզորացող արաբ իշխանների դեմ: Արաբները մահմեդական համայնքներ էին ստեղծում քաղաքներում և բերդերում: Արաբները լցվել էին Եփրատի և Տիգրիսի ավազանի տափաստանները: Աղվանքը ևս ծանր կացության մեջ էր: Դվինից Պարտավ փոխադրվեց Արմինիայի փոխարքայության Ամիրի աթոռանիստը: Ամիրները, որոնք նշանակվում էին խալիֆի կողմից, այլևս արաբներ էին կամ պարսիկներ: Արաբները հաստատում են նոր հարկադրույթներ, ծխահարկը փոխարինվում է գլխահարկով և հողահարկով, որոնք գանձվում էին 15-60 տարեկան բոլոր հպատակ տղամարդ բնակչությունից: Հայոց Տեր-Սիոն կաթողիկոսը Դվինից տեղափոխվում է Պարտավ, այստեղ մեծ ժողով գումարում և սահմանում եկեղեցական 24 կանոնները: Տեր-Սիոնին փոխարինած Հայոց Տեր-Եսայի կաթողիկոսը դիմում է Պարտավում նստող Ավբեթլու ոստիկանին՝ ժողովրդի հարկերն ու մյուս ծանրությունները թեթևացնելու թախանձանքով: Սակայն ոստիկանն անդրդվելի էր: Աղվանից Հովհաննես Գ կաթողիկոսը 784 թվականին կաթողիկոսական աթոռը ստիպված էր Պարտավից տեղափոխել Բերդակուր (Մայրաքաղաք կոչվող վայրը): IX դարի սկզբներին Հարուն-ալ-Ռաշիդ խալիֆի օրոք, հարկահանությունը բացարձակ կողոպուտի տեսք է ստանում: Ապստամբությունները փոխարինում էին մեկը մյուսին: Կուր-Արաքսի միջագետքի հարթավայրային մասում տնօրինում

[137] Թովմա Արծրունի ու Անանուն, Պատմություն Արծրույաց տան, Եր., 1985, էջ 299:
[138] Ս.Բարխուդարյան, «Արցախի, Շաքիի ու Փառիսոսի իշխանությունները IX-X դարերում», Պատմա-բանասիրական հանդես, Եր., 1971, N 1, էջ 63:
[139] Կաղանկատվացի.. էջ 254:

էին արաբները, որոնք մեծաթիվ խաշնարած այլ ցեղեր էին բերել և բնակեցրել Առանի բարեբեր դաշտերում: Հայերի մեծ մասը ստիպված լեռներն էին քաշվում: Իսկ Արցախի և Ուտիքի լեռնային մասերում տիրող հայոց Առանշահիկները «կծկված պահում էին հինավուրց իշխանական տոհմի ավանդներն ու հավակնությունները:... Բայց դա զսպանակի կծկումի պես էր...»[140]: «Իսկ երբ լրացավ հայոց երկու հարյուր յոթանասուն թիվը, - գրում է աղվանից պատմիչը, - Պարտավից գաղտնի դուրս եկան արաբ ընտիր մարդիկ, ավարի ենթարկեցին Ամարաս գավառը, և մոտ հազար հոգի գերեվարելով, ամրացան Մեծիրանքի սահմանում մի տեղ, որ կոչվում է Շիկաքար: Այդ ժամանակ քաջ ու շքեղատեսք Սահլ Սմբատյան Առանշահիկ իշխանը և իր քաջազոր եղբայրները իրենց զորքերով լուսադեմին վրա տվին, նրանց բոլորին միասին դիաթավալ արին, ցիրուցան դարձրին և ինչպես առյուծի ժանիքներից, գերիներին խլեցին»[141]:

Այս օրինակը ևս հաստատում է, որ արաբները տիրություն էին անում միայն հարթավայրերում, իսկ լեռներում տիրում էին բնիկ իշխանները, որոնք էլ իրենց ժողովրդի հետ պահում էին հին ազգային մշակույթը, գիրն ու գրականությունը, հավատքը, սովորությունները, ավանդությունները: Այդ իշխանները բերդերից ոչ հեռու լեռնալանջերին ու անտառներում, բարձրադիր տեղերում հիմնում էին նոր սրբարան - եկեղեցիներ ու վանքեր իրենց դպրոցներով ու դպրատներով, շարունակում մեծ գիտնական և լուսավորիչ Մաշտոցի սկսած գործը: Վանքերում մատենագիրները արտագրում, բազմացնում էին եկեղեցական ու պատմական գրքերը: Հենց միայն «Աղվանից պատմությունը» իրադարձություններին ականատես տասնյակ հայ մատենագիրների իրար շարունակող երկ է: Միհրանյանների հարստությունը այնքան էր լուծվել Առանշահիկ իշխանական տների մեջ, որ լրիվ ձուլվել էր հայկական միջավայրին, դարձել քրիստոնեության միաբնակ ճյուղի ամենաջերմ պաշտպանը, իրեն լրիվ հայ էր զգում, միայն առիթ լինելիս պարծենում, որ իրենք սերում են Միհրանյան ազդեցիկ տոհմից: 822 թ. Փիլիպեան Ներսեհ-Ղժնակ իշխանը Դադի վանքի ձորում սպանում է իր ազգական Վարազ-Տրդատ Բ իշխանին, որը վերջինն էր Միհրական տոհմից, ինչպես և նրա որդուն՝ մոր գրկում, հափշտակում նրա ունեցվածքը: Սպանված իշխանի կինն իր Սպրամ դստեր հետ գնում է Ծար բերդավանը, որտեղ նստում է Սահլի որդի Ատրներսեհ իշխանը, Սպրամին կնության տալիս իշխանին:

IX դարի սկզբներին Ատրպատականում սկիզբ է առնում Բաբեկի ապստամբությունը արաբական իշխանության դեմ: Բաբեկը աղանդավոր

[140] Բ.Ուլուբաբյան, էջ 272:
[141] Կաղանկատվացի, էջ 255:

Խուռռմյան կոչված կրոնական շարժման առաջնորդն էր: Խուռռմյանները քարոզում էին ինչքի և կանանց ընդհանրություն, ժխտելով սեփականության իրավունքը: Միևնույն ժամանակ Բաբեկը ձգտում էր նորանոր տարածքներ գրավել: Աղվանից մատենագիրը Բաբեկին նկարագրում է իբրև դաժան և անգութ մարդու, որը անխնա կոտորում է քրիստոնյա բնակչությունը: Բաբեկը իր զորքով եկավ իրեն ենթարկելու Աղվանքն ու Սյունիքը: «Գեղարքունի գավառի բնակիչներից 15 հազար հոգու սրի քաշեց և այրեց մաքենացիների մեծ մայրաքաղաքը, այս ժամանակ հայոց 276 թվականն էր (827թ.)»[142]: Բաբեկի դեմ ապստամբած իշխանները ամրացան Գոռոզ բերդում, որը Արցախի Դիզակի գավառում էր: Այստեղ է ամրանում Եսայի ապու Մուսե հայոց իշխանը, որը 12 տարի տիրեց Վերին Վայկունիք կամ Ծար, Բերդաձոր, Սիսական, Հաբանդ-Ամարաս, Պարզկանք, Մուխանք և Տրի գավառներին, որոնք ընդգրկում են Արցախի արևմտյան և հարավային տարածքները: Բաբեկը իր փոխարեն Ամարասում տեղադրված բանակին հրամանատար է թողնում Ռոստոմին, որը փորձում է ուժով գրավել բերդերը, սակայն ջախջախիչ պարտություն է կրում: Արաբական խալիֆությունը բաժանվելով ամիրությունների, սկսել էր անկում ապրել: Ամիրությունները ձգտում էին անկախանալ և ինքնուրույն պետությունների վերածվել: Պարսիկ Միհրանյան հայացած տոհմի և Առանշահիկ բնիկ հայ տոհմի միջև պայքարը իշխանության համար արդեն հասել էր իր գագաթնակետին: Եթե Միհրանյան տոհմը արդեն սպառվում, վերջանում էր, ապա Առանշահիկները լեռներում նոր բերդեր ու տարածքներ էին գրավում: 829 թվականին տեղի ունեցավ մի դեպք, որը վերջնականապես լուծեց այս մրցակցության խնդիրը: Միհրանյան մյուս ճյուղերը գահերեցություն չունեին և Առանշահիկների հետ խնամիական կապերով ապահովել էին իրենց գոյությունը: Իհարկե, վրեժխնդրությունը շարունակվում է: Միհրանյաններից Ստեփանոսը Սյունիք է բերում Բաբեկին, ու նրա միջոցով ավերում Ներսեհ-Ղժնակ Փիլիպյանի ենթակա գավառները:

837 թվականին 12 հազարանոց հեծելազորով հանկարծահաս Արցախ է արշավում արաբական զորքը: Շաքեի ու ողջ Աղվանքի տիրակալ Սահլ Սմբատյանը «վրա է տալիս, ինչպես որ արծիվը խոյանում է տկար թռչունների մեջ, և ետ շպրտում»[143]: Նույն տարում Սահլ Սմբատյանը ձերբակալում է Բաբեկին, «որը մարդախողխող, աշխարհավեր, արյունարբու գազան էր»[144]: Բաբեկը, ծանր պարտություն կրելով արաբներից, Ատրպատականից անցնելով Արաքսը, Հայաստանով փախչում էր դեպի Բյուզանդիա: Այս մասին է

[142] Նույն տեղում, էջ 256:
[143] Նույն տեղում, էջ 259:
[144] Նույն տեղում:

վկայում նաև արաբ պատմագիր Աբու Խանիֆա ադ-Դինավարին[145]: Աբու Խալիֆ Դինավարին գրում է. «Երբ Բաբեկը անցավ Արաքս գետը, դեպի նրան ուղղվեց Սահլ իբն Սումբատը, երկրամասի կառավարիչը»: Ուրեմն՝ Արաքսը նրա տիրույթի հարավային սահմանն էր: Հայ իշխանը Բաբեկին հանձնում է արաբներին և ըստ ժամանակագրի «Նրանցից իրավունք ստանում Հայաստանի, Վրաստանի և Աղվանքի վրա բոլորին տիրելու արքայական իշխանությամբ»[146]: Արաբ մատենագիր Ցաքումին ասում է, որ արաբ զորավար Աֆշինը, որը հաղթել էր Բաբեկին (հայկական աղբյուրներում Բաբան), մեկ միլիոն դրամ պարգև խոստացավ փախստական ապստամբին բռնելու համար: Սահլ Սմբատյանը (Սահլ իբն-Սմբատ) տեղեկանալով, թե որտեղ է թաքնված Բաբեկը, նրան հրավիրեց իր ամրոցը: Պայմանավորվում են, որ Բաբեկը գնա Սահլի ամրոցը, իսկ նրա եղբայր Աբդուլլահը Եսայի աաբու-Մուսեի (Ներսեհ-Դժնակ իշխանի թոռան) Քթիշ ամրոցը: Որսատեղում Սահլը ձերբակալում է Բաբեկին: Տաբարին այս առիթով գրում է. «Սահլը ուղարկեց իր որդի Մուավիային Բաբեկի հետ Աֆշինի մոտ, որը հրամայեց տալ Մուավիային հարյուր հազար դիրհեմ, և ուղղափառների տիրոջ անունից մեկ միլիոն դիրհեմ Սահլի համար, նաև թանկարժեք քարերով ընդելուզված գոտի և պատրիկի թագ»: Սահլի որդի Մուավիան նույն Համամ-Հովհաննեսն է (ըստ Իբն ալ Ասիրի՝ Առանի պատրիկը):

Այնուհետև ժամանակագիրը հայտնում է, որ 838 թ. խազարների երկրից մորեխներ եկան, որ զարմանալի կերպով ավելի մեծ էին, քան ճնճղուկը և Աղվանքի մի մասի բուսականությունը ոչնչացրին: Երկու տարի հետո սաստիկ ծմեռ եղավ Արցախում: Այդ ժամանակ Կուրի ձախափնյա Բաղասականից թալանի նպատակով զորք եկավ և մեծ վնաս հասցրեց Սիսական, Տրի և Ամարաս գավառներին: Եսայի աբու-Մասեն դուրս եկավ նրաց դեմ ու Կուրից այն կողմ քշեց: Այդ ժամանակներում Արցախում տիրապետող իշխանական տներն էին.

ա/. Սահլ Սմբատյան Բագրատունի մեծ իշխանը,

բ/. Բակ իշխանի տոհմը Ներքին Խաչենում,

գ/. Շիրանշահանց տոհմը՝ Մեծ Կողմանքում, որը նստում էր Մայրաքաղաքում,

դ/. Ներսեհ-Դժնակ Փիլիպյանի տոհմը, որն իշխում էր Վարանդայում, Դիզակում և Բերդաձորում, նստավայրն էր Տումի գյուղը,

ե/. Գարդմանքի Առանշահիկների ճյուղը:

Հայ մատենագիրը հայտնում է, որ խազարցի Փատգոսի որդին սրով գրավեց Աղվանքը, բազմաթիվ եկեղեցիներ այրեց ու գնաց Բաղդադ, Խա-

[145] "Краткие сообщения института Народов Азии", N 47, 1961, стр. 92:
[146] Կաղանկատվացի, էջ 259:

լիֆից իշխանություն ստացավ և հայոց 295թ. (846թ.) կառուցեց Գանձակ (Գյանջա) քաղաքը, այն դարձրեց ոստիկանանիստ: Հայաստանում 850-ական թվականներին բռնկված ապստամբությունը ճնշելու նպատակով խալիֆը մեծ բանակ է ուղարկում դաժան զորավար թուրք Բուղա Շարաբիի հրամանատարությամբ: Հայոց սպարապետ Սմբատ Բագրատունին անմիջապես հպատակություն հայտնեց Բուղային: Այսուհետ Սմբատը Բուղայի խորհրդականն էր և գործակիցը, մասնակցում էր նրա արշավանքներին: Սակայն ինչպես ցույց տվեցին հետագա իրադարձությունները, Սմբատը փաստորեն նաև Բուղայի գերին էր: Նրանց հետ էր նաև Սմբատի 32-ամյա որդին Մուշեղը: Սակայն Սմբատը հայոց պատմագրության մեջ որպես դավաճան չի համարվել: Նա ձեռնարկել էր այս դժվարին և անպատվաբեր գործը, որպեսզի փրկի հայրենիքը Բուղայի ճիրաններից: Թուրք գործակալները արաբներին ծառայության էին մտել Մութասիմի խալիֆայության շրջանում, երբ նա իրանական տարրի հանդեպ ունեցած իր ոխի և թշնամության պատճառով թուրքերին զորություն շնորհեց և քիչ-քիչ Աբասյանների իշխանությունը սկսեց թուրքերի ծառայության լծվել[147]: Սակայն այդ ժամանակ դեռևս թուրքական ցեղերը Իրան և Կովկաս չէին թափանցել: Թուրքերի պատմության սկիզբը համարվում է մ.թ. 545 թ. երբ Չինաստանի հյուսիսային տարածքներում պատերազմ է սկսվում Ալթայի թուրք քոչվորների ու չինացիների միջև[148]: Թուրքերը տիրացան Չինաստանի հյուսիսային սահմաններին մինչև Կորեական թերակղզին: Ապա նրանք շարժվեցին դեպի Իրանի արևելյան շրջանները: VI դարի երկրորդ կեսին թուրքերը գրավեցին Կասպից ծովի հյուսիսային տարածքները և շարժվեցին դեպի Սև ծովի հյուսիսային ափերը: Խոսրով Անուշիրվանի ժամանակ թուրքերը ամեն կողմից դեն քշվեցին: Իսկ 690 թ. չինական զորքերը ջաղջախեցին թուրքերին: 626 թ. թուրքերը, միանալով խազարներին և դաշնակցելով Բյուզանդիայի հետ, հարձակվեցին Իրանի վրա: Երբ աշխարհին տիրում էին արաբները, թուրքերը երբեք չհամարձակվեցին այլևս արշավանքներ կազմակերպել դեպի Իրան, քանի որ արաբների տիրապետության մի ծայրը Միջին Ասիայում էր, մյուսը՝ Հնդկաստանում: Սակայն թուրքական դուզ կամ օղուզ (օքուզ-եզ բառից, որը տոտեմ է) ցեղերի մի մասը իսլամ ընդունեց, որպեսզի հնարավորություն ունենա օգտվելու փարթամ արոտներից: Թուրքերը չունեին ոչ գիր, ոչ գրականություն, ոչ էլ գեղարվեստական որևէ ուշագրավ գործ, ճարտարապետություն և այլն: Պրոֆ. Զուլալյանը գրում է. «Ցայժմ թուրքերի պատմությունը առաջադրվել է չինական, պարսկական, հայկական և բյուզանդական աղբյուրների հիման վրա, իսկ թուրքերից ոչ մի գործ

[147] Էնեաթոլլահ Ռեզա, էջ 131:
[148] Cordier H., Historie generale de Chine, vol. I, parts, 1920, p. 356.

չի մնացել: Սա մի իրականություն է, որ մինչև անգամ թուրք պատմաբաններն էլ պարտավորված են եղել խոստովանել»[149]: Թուրք ամիրաներ էին կարգված Ազարբայջանում, ինչպես և որոշ դեպքերում բանակների հրամանատարությունը նրանց էր վստահված: Սակայն թուրքերի զանգվածային ներհոսը դեռևս տեղի չէր ունեցել: Բայց թուրք հրամանատարները, ինչպես և թուրքական ցեղերից վարձու զորամիավորումները հետագայում լուրջ գլխացավանք դարձան խալիֆաթության համար: Նրանք, տեսնելով արաբների թուլացումը, այս ու այնտեղ սկսեցին ապստամբությունները Աբբասյանների դեմ: 853-854թթ. թուրք զորավար Բուղան արշավում է դեպի Տփղիս, Ուտիք և Արցախ: Նա ծանարներից (մեգրելներ) ծանր պարտություն է կրում, ապա շարժվում դեպի Ուտիք և Արցախ: Արցախի մեծ մասին տիրում էր Եսայի աբու-Մուսե (Մովսեսի հայր) իշխանը, որը IX դարի հայ պատմիչ Թովմա Արծրունու վկայությամբ կարդացող և խաղաղասեր մարդ էր: Հայ իշխանը ամրանում է Քթիշ (Գտիչ) ամրոցում: Բուղան, պաշարելով բերդը, մեկ տարվա ընթացքում 28 գրոհ է ձեռնարկում՝ գրավելու այն, սակայն բոլորն էլ անարդյունք: «(Թշնամին) կրեց մեծամեծ հարվածներ, ինչպես հարդն է քշվում կամ ծուխը ցրվում մրրիկից, և այսպես (նրանք) կորան գնացին աղվանից զորքի առջեից»[150]: Մի բլրի վրա կանգնած, հեռվից արաբական զորքերի վերջին խոշոր հարձակումը դիտում էր Մուշեղ Բագրատունին: Ասես արաբ զորքերին վերջ չի լինելու: Թովմա Արծրունու վկայությամբ, նա հուզված մի ոտանավոր գրեց՝ Քթիշի այդ ճակատամարտը համեմատելով Քրիստոսի երկրորդ գալստյան և ահեղ դատաստանի հետ: Եսայի իշխանի քաջավարժ զորաշարքերը ճշգրիտ տեղաշարժերով գրոհում էին ու լեռան թեքության վրայով հետ մղում թշնամու գնդերը: Արաբները կրկին դիմեցին խորամանկության: Խալիֆի անունից գրություն ուղարկեցին հայոց քաջ իշխանին, որ խաղաղությամբ իր մոտ գա՝ իբր ստանալու իր ընծաներն ու պատիվները: Հայտնի էր, որ Բուղան Վասպուրականի Նկուն բերդի մոտ պարտություն կրելով Գուրգեն Արծրունուց, այնուհետև խաբել էր հաղթող իշխանին, հրավիրել իր բանակն ու շղթայակապ ուղարկել խալիֆի մոտ: Բայց և հազիվ թե արցախցի քաջ իշխանը տեղյակ չլիներ թուրք զորավարի այս խորամանկ ու նենգ վարքի մասին: Հավանաբար, ապավինելով հայոց սպարապետի՝ արաբների հրամանատարի կողքին ներկայությանը, հայ իշխանը տեղի տվեց և ցած իջավ բերդից: Բուղան իսկույն ձերբակալեց անհաղթ իշխանին: Թուրք զորահրամանատարը ձերբակալելով նաև հայոց անվանի նախարարներին սպարապետ Սմբատ Բագրատունուն, իշխան Ատրներսեհին, Սյունյաց Գրիգոր իշխանին, Սահլ Սմբատյանին, Վայոց ձորից Վասակ Իշխանիկին, Սյունյաց Փիլիպե իշխանին, Սևորդեաց Ստեփաննոս-Կոն իշխանին, բոլորին արցախցի Եսայի Ապումուսեյի հետ շղթայակապ ուղարկում է Դամասկոս: Գերի տարված հայ նախարարներին Մութավաքիլ խալիֆը դատում է: Կրկնվում է Պարսից արքունիքում V դարի դեպքը, երբ հայ նախարարներին ստիպում են մազդեական կրոն ընդունել: Խալիֆը ստիպում է հայ իշխաններին մահմեդականություն ընդունել: Սակայն մի քանի հոգի, այդ թվում՝ Սմբատ սպարապետը, կտրուկ հրաժարվում են և նահատակվում: Մնացած իշխանները առերես ընդունում են, թլպատվում և տուն վերադառնում: Սակայն այս պատերազմները սասանեցին արաբների դիրքերը: Խալիֆը չէր հասցնում ճնշել աշխարհածիր երկրի այս ու այն ծայրում բռնկած ապստամբությունները: Ութսուն տարի ևս Հայաստանն ու Հայաղվանքը մնացին արաբական տիրապետության տակ, սակայն արդեն ինքնավար վիճակում, որը մի փուլ էր ինքնուրույնության նախապատրաստման համար:

Սահլ Սմբատյանին հաջորդում է Համամ-Գրիգոր Բագրատունին, որը Աշոտ Բագրատունուն զուգահեռ նույն տարում Աղվանից թագավոր է կարգվում: Փաստորեն իրականանում է Բագրատունիների երազանքը: Նրանց տոհմը տիրում է ողջ Հարավային Կովկասում և Հայկական լեռնաշխարհում: Անշուշտ, Բագրատունյաց տոհմի նախահայրենիքը Շիրակն է և «այստեղից բխած կամ ներշնչված ջանքերը տանում են դեպի մի հոյակապ կառուցում, որ է՝ հավաքել, խմբել կովկասյան բոլոր ցեղերը մի և հանուր քաղաքական հարկի տակ, ներդաշնակել նրանց կյանքն ու գործունեությունը համագործակցության և համերաշխության գետնի վրա, Բագրատունի ծառի հովանու ներքո»[151]: Բ. Ուլուբաբյանը գրում է. «Հայոց թագավորությունը վերականգնող Աշոտ Բագրատունու և նրա տոհմակիցների ու հաջորդների ջանքերն իզուր չանցան: Վերջ տրվեց արաբական տիրապետությանը, և շուրջ երեք դար տևած ծանր մղձավանջից հետո ժողովուրդները լծվեցին խաղաղ կյանքի, տնտեսական ու մշակութային բուռն վերելքին»[152]: Եվ այս համեմատաբար խաղաղ շրջանում «Բագրատունյաց փորձը՝ ընդգրկել համայն Կովկասը ինչպես մի մեծ ընտանիք, մի քաղաքական կենակցության շաղկապի մեջ, ներկայանում է մեզ որպես մի խիզախում՝ գաղափարական լայնությամբ անօրինակ միջնադարյան նեղսիրտ մթնոլորտում և կազմում է այս նշանավոր տոհմի պատմական փառքը»[153], - գրում է Ն. Ադոնցը: Սակայն Բագրատունիների ծրագրերը լիակատար հա-

[149] М.К.Зулалян, Вопросы древней и средневековой истории Армении в освещении современной турецкой историографии, Ереван, 1970, стр. 51-52.
[150] Թ.Արծրունի, Պատմություն Արծրունյաց տան, Եր., 1985, էջ 287:

[151] Ադոնց, էջ 155:
[152] Ուլուբաբյան, էջ 126:
[153] Ադոնց, էջ 136:

ջողություն չունեցան: Նախ ցեղային, կրոնական, ավատատիրական տարբերությունները անմիաբան էին դարձնում երկիրն ընդգրկող իշխանությունները: Կար և բյուզանդական գործոնը, որը վճռական դեր ունեցավ Բագրատունիների, ինչպես և նրանց ծրագրի ճակատագրի խնդրում: Սակայն Բագրատունիների ցանած սերմերը հետագայում պետք է նոր ծիլեր տան հայ-վրացական հարաբերություններում... Այս մասին հետո, քանի դեռ վիճահարույց հարց էր դարձել Սահլ Սմբատյանի տոհմակունքը: Բ.Ուլուբաբյանը ամեն կերպ ձգտում է Սահլին ու նրա հետնորդներին Առանշահիկ «դարձնել»: Անշուշտ, ինքը ևս հավատում էր այս վարկածին: Եվ նա Սահլին (Սահակի կրճատ ձևը) Բագրատունյաց տոհմի հետ կապելու մեջ մեղադրում է Սարգիս Ջալալյանցին, «որը հետագայում տարածվեց պատմագիտական գրականության մեջ»[154]: Թվում է, որ Արցախի հետագա պատմության համար իրական նշանակություն չի կարող ունենալ տեղի իշխանական տոհմերի տեղի առանշահիկյա՞ն, թե Բագրատունյաց ծագում ունենալը, մանավանդ, որ երկուսն էլ Հայկյան սերում ունեն: Միանգամայն կասկածելի և անընդունելի է Սահլի՝ Վաչական թագավորական տոհմի հետ կապելու ենթադրյալ ձևը: Իսկ կասկածի առնել Արծրունու «Շաքիի տեր» արտահայտությունը, երբ նրա հաջորդները ևս հաջորդաբար տարբեր պատմիչների կողմից Շաքիի իշխան կամ թագավոր են հիշվում, ոչ մի քննադատության չի դիմանում: Արցախի կամ Խաչենի իշխանական տան ժառանգների Բագրատունյաց հարստության շառավիղներ լինելը ոչ մի ստվեր չի գցում նրանց վրա, այլ ընդհակառակը, էլ ավելի է բարձրացնում: Այո, Շաքի-Նուխիում (Հերեթ-Կամբեճան) 775-ին հաստատված երեք Բագրատունիների անունները ժամանակագիրները չեն պահպանել: Սակայն նրանցից մեկի՝ Սալի հոր անունը պահպանվել է հռչակավոր դարձած որդու միջոցով: Դա Սմբատն էր, Բագրատունի երեք եղբայրներից մեկը, որի՝ իր եղբայրների հետ լուռ գործունեության հիմքի վրա հենվելով էր որդին՝ Սահլը, հզոր ու հռչակավոր դարձել:

ՀԱՅՈՑ ԲԱԳՐԱՏՈՒՆԻՆԵՐԻ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆ

Ժամանակագիրը հայտնում է, որ 848-873 թթ. Աղվանքի, Լփինքի և Չողի կաթողիկոսն էր Մեծկուվենքի առաջնորդ Հովսեփը: Երբ մահանում է Հովսեփ կաթողիկոսը, Արցախ-Ուտիքի իշխաններն այնքան էին տարված քաղաքական անցուդարձով, որ ժամանակ չունեին հոգևոր առաջնորդ ընտրելու համար: Օգտվելով այս իրավիճակից, Մեծկողմանց Սամվել եպիսկոպոսը, Իմաստասեր կոչված քահանայի հետ խոսքը մեկ արած, առանց կաթողիկոսի օրհնության իր առաջնորդությունը տալիս է Միսայելին, ապա իր եպիսկոպոսի կողմից ձեռնադրվում Աղվանից կաթողիկոս: Լուրը կռիվներով տարված բանակն է հասնում: Իշխանները գրգռվում են: Միաբանության կողմից զեկուցում են Հայոց կաթողիկոս տեր Գևորգին, որն էլ դիմում է հայոց իշխաններին, պահանջում միջամտել այդ գործին ու վերականգնել խաղաղությունը: Իսկ Սամվելը իր հերթին համաձայնեցնում է Աղվանքի գլխավորներին ու իշխաններին և խաղաղություն հաստատում նրանց միջև: Սակայն Աշոտ Բագրատունի մեծ իշխանը պահանջում էր սուրբ Գրիգորի դրած կարգ ու կանոնով վարվել և ձեռնադրվել Հայոց կաթողիկոսի կողմից: Ինքնահավան Սամվելը Աշոտ Բագրատունու հորդորներից հետո ստիպված է լինում մեկնել Դվին ու երկրորդ անգամ ձեռնադրվել հայոց 326 թ. (փրկչական 877 թ.): Ուշադրության արժանի է այն փաստը, որ պարբերաբար որպես ինքնակոչ կաթողիկոսներ են հանդես գալիս Մեծ Կողմանց եպիսկոպոսները: Անշուշտ, նրանք Աղվանից կաթողիկոսական աթոռը Մեծ Կողմանց սեփականությունն էին համարում ու ձգտում, որ այն որպես ժառանգական իրավունք տրվի Մեծ Կողմանց հոգևոր տերերին: Այս պայքարը խորը արմատներ ունի ու պետք է շարունակվի մի ամբողջ հազարամյակ: Իսկ ահա այդ դժնդակ ժամանակներում 863 թվականին Բաղդադից վերադառնում է Ատրներսեհ մեծ իշխանը, որը շուտով մահանում է, ու նրան փոխարինում է որդին՝ Գրիգոր Ա-ն, որին Համամ կոչեցին:

IX դարի վերջերին Աբասյան հարստության թուլացումը աստիճանաբար նոր քաղաքական աշխուժացում է բերում նրա տիրապետության տակ գտնվող երկրներում: Նա այլևս անկարող էր մշտական զորքեր պահել այդ ծայրագավառներում: Անդրկովկասում իրենց ավելի ազատ էին զգում հայ, վրացի և Հայաղվանքի իշխանները: 870-ական թվականներին արաբների դեմ ապստամբեց արևելյան Պարսկաստանը Սաֆֆիի որդի Յակոբի ղեկավարությամբ: Արաբները Արմինիայի իշխանոց իշխան էին կարգել Աշոտ Ա. Բագրատունուն, որին ենթակա էին Վրաստանն ու ողջ Աղվանքը: Աշոտը ինքնիշխան էր և ինքն էր հավաքում խալիֆի հարկերը և ուղարկում Բաղդադ: Յակոբի զորքերին միանում են Աշոտ Բագրատունու և Աղվանից իշխանների զորքերը, հաղթական պատերազմ մղում արաբ ոստիկանի դեմ:

Բյուզանդական կայսրությունը ամեն կերպ ձգտում էր օգնել այդ երկրներին ազատվելու խալիֆի ազդեցության ոլորտից, որպեսզի իր ձեռքը գցի դրանք: Բյուզանդիայում 867 թ. կայսերական գահին տիրացավ ազգությամբ հայ, ինչպես ինքն էր ասում՝ հայ Արշակունյաց թագավորական տան ժառանգ Վասիլ Ա-ն: Տեղեկանալով, որ ավանդաբար Արշակունի թա-

[154] Ուլուբաբյան, էջ 52:

գավորներին ծեռնադրում էին Բագրատունիները. Վասիլը Աշոտ Բագրատունուց՝ թագ է խնդրում: Վասիլ Ա-ն հիմք դրեց Մակեդոնյան (Վասիլը ծնվել էր Ալեքսանդրիա քաղաքում) կամ հայկական դինաստիային, որը կայսերական աթոռը իր ծեռքում պահեց 160 տարի:

IX Դարի երկրորդ կեսին, շուրջ 450 տարվա ընդմիջումից հետո, Հայաստանում վերականգնվեց թագավորությունը: 875 թ. հայոց թագավոր հռչակվեց Աշոտ Բագրատունին (875-899 թթ.), որին 9 տարի հետո ստիպված եղավ ճանաչել խալիֆը: Աշոտի գահակալությունը չճանաչեց Բյուզանդիայի հայ ազգի կայսր Վասիլ Ա-ն (867-885 թթ.): Բյուզանդական հետագա կայսրերը այդպես էլ Բագրատունիներին որպես հայոց թագավորներ չճանաչեցին ու նրանց կոչում էին «Իշխանաց իշխան» տիտղոսով: Նրանք ընդունում էին, որ քրիստոնեական աշխարհում միայն մեկ թագավոր կարող է լինել՝ կայսրը: Ստացվում է, որ Բագրատունիների հարստության հաստատումից ի վեր բյուզանդական կայսրերը որդեգրում են հայկական թագավորությունը վերացնելու ծրագիրը, որն էլ 150 տարի հետո պետք է հաջողվի նրանց: «Բարեպաշտ Համամը (Գրիգոր), որը եղավ նաև Աղվանքի թագավոր», - գրում է աղվանից հայ ժամանակագիրը[155]: Շուրջ 360 տարի ընդմիջումից հետո Հայաղվանքում վերականգնվում է թագավորությունը: Սահլ Սմբատյանի թոռը՝ Համամ-Գրիգորը, ավելի է ընդարձակում իր տիրույթները, փաստորեն վերականգնում Վաչական Բարեպաշտի թագավորության սահմանները, այսինքն՝ Բուն և Հայոց Աղվանից երկրների միասնությունը: «Համամ» անունը «Գրիգորի» արաբերեն թարգմանությունն է, որը նշանակում է «արթուն», «զգոն», «հոգատար»[156]: Նրա տիրույթները արևմուտքում ընդգրկում էին Սևանա լճի արևելյան ափերը Մեծ Մազրա, Շողվազ բնակավայրերով, իսկ արևելքում հասնում էին մինչև Պարտավի (Բարդա) մատույցները[157]: Նա վերակառուցում է Հավքախաղաց ամրոցը, որը գտնվում է Գանձասարից ոչ հեռու լեռան կատարին: Համամ-Գրիգորը ունենում է հինգ որդի: Պատմաբանները հաճախ միացնում են երկու անձնավորությունների՝ Համամ Արևելից իշխանին, որը նստեց Աղվանից գահին և Համամ-Հովհաննես Բագրատունի վարդապետին, որը առակների մեկնաբան էր ու աստվածաբան: Համամ Արևելցի իշխանի մասին կոնկրետ տեղեկություն հաղորդող Հովհաննես Դրասխուրանակերտցի կաթողիկոսը, որը նրա ժամանակակիցն էր ու մոտիկից գիտեր նրան, ոչինչ չի հիշատակում թագավորի գրական-գիտական հակումների մասին: Համամ Բագրատունի վարդապետի մասին գրող ժամանակագիրները իրենց

[155] Կաղանկատվացի, էջ 262:
[156] Ուլուբաբյան, էջ 76:
[157] Բ.Ուլուբաբյան, Խաչենի իշխանությունը X-XVI դարերում, Եր., 1975, էջ 78:

հերթին լռում են նրա իշխան կամ թագավոր լինելու մասին: «Աղբյուրագիտական անառարկելի փաստերից այժմ կարելի է հանգել մի եզրակացության. Համամ Արևելցի իշխանը և Համամ վարդապետ Բագրատունին տարբեր անձեր են եղել»[158],-գրում է Բ. Ուլուբաբյանը: Վաչական թագավորներից սկսած, պարսից արքունիքը Հայաղվանքի տերերին էր հանձնել նաև Կուրի ձախափնյա շրջանների վերահսկողությունը: Համամը իր մշակութային գործունեության շնորհիվ ստանում է Բարեպաշտ անունը, որին իր նախորդներից արժանացել էր Վաչական Գ-ն: Համամ-Գրիգոր թագավորի ժամանակաշրջանում է, որ Աղվանքի տարածքներում ծավալվում է վանքերի և եկեղեցիների շինարարությունը: Թագավորը մեծ ուշադրություն է դարձնում Ճար (Զար), Թալա և Բելուկան բնակավայրերին, որոնք Կովկասի հարավային ստորոտում են (այժմ Զաքաթալայի և Բելոկանի շրջաններ, Ադրբեջանի Հանրապետություն), բերդերից բացի Մամրուխի և Լիկիտի կլոր հատակագծով զվարթնոցատիպ եկեղեցիների կառուցումը, որոնք, ճիշտ է, գեղարվեստական ու ճարտարապետական տեսանկյունից զգալի զիջում են իրենց փառավոր նախորդին, բայց իրենց հերթին կառուցողական արվեստի ուրույն նվաճում են[159]: Համամ-Գրիգորը ունենում է հինգ որդի՝ Ապուլի (Ապու Ալի Հայկազունի), Ատրներսեհ Բ, Վասակ, Սմբատ, Սահակ Սևադա: Ինչպես հայտնում է մատենագիրը, Սմբատը սպանում է ավագ եղբորը Ապուլին, որը կոչվում էր «Աղվանքի մեծ իշխան»: Դա մեծ սուգ պատճառեց իր տոհմին, «իսկ մյուս որդին՝ Սահակը, որ կոչվեց նաև Սևադա, մի քաջ և խելացի մարդ էր»:

Ըստ երևույթին, Սմբատ Բագրատունին, իրեն ենթարկելով Աղվանքի մեծ մասը, փաստորեն վերացնում է Աղվանից թագավորությունը: Հենց դա էր Խաչենի տեր Սահակ Սևադայի ու Սմբատ Բագրատունու դաժան ու անզիջում պայքարի պատճառը: Համամ-Գրիգորի որդիներից Ատրներսեհը իշխում էր Կամբեճան-Շաքիում՝ իր նախնիների՝ Բագրատունի երեք եղբայրների կալվածքը, այստեղ 910 թ. հավաքում հոր՝ Համամ-Գրիգորի ընդարձակ թագավորության մնացորդները: 908 թ. Ատրներսեհի մասին հիշատակում է Հայոց Հովհաննես Դրասխուրանակերտցի կաթողիկոսը, որը Սմբատ

[158] Ուլուբաբյան, էջ 80:
[159] Բաքվի գիտնականները, ինչպես, օրինակ, Դ.Ա. Ախունդովը, դրանք թվագրում են որպես IV-V դարի կառույց, որը միանգամայն անհնար է: Սակայն նրանք ավելի շատ քաղաքական նպատակ են հետապնդում, փորձելով այն չկապել հայկական մշակույթի Հայաղվանքի ծյուղավորման հետ և այն ներկայացնել իբրեւ ադրբեջանական ճարտարապետություն, որը թյուրիմացություն է: Բաքվի պատմաբանը իր վերակազմությունների մեջ գմբեթի վրա դիտավորյալ ավանդական խաչով ավարտվող վեղար չի տեղադրել:

Բագրատունու կողմից պատգամավոր էր գնացել Յուսուֆ ոստիկանի մոտ: Վերջինս ձերբակալում է կաթողիկոսին: Հայոց հայրապետը փախչում է բանտից, մինչև Անի հասնելը շրջում Աղվանքում, այստեղ հանդիպում «Առ թագաւորն նոցոնց Ատրներսեհ, որ ըստ արևելից հիւսիսոյ Կովկասու, զի նոքա ի ժողովուրդեն էն մերմէ և խաշն արօտի մերոյ էին»[160]: Արաբ մատենագիր Մասուդին, որ անձամբ եղել էր Աղվանքում, գրում է. «Ծանարների թագավորության մոտ գտնվում են շաքիները, որոնք քրիստոնեական հավատքի ցեղ են, նրանց մեջ ապրում են մեծ թվով մուսուլմաններ, ...մեր այս գիրքը գրելու ժամանակ շաքիների թագավորը Ատրներսեհն էր, Համամի որդին, ինչպես անվանում էին նրան»[161]: Ադոնցը, հենվելով վրաց աղբյուրների վրա, գրում է, որ 915 թ. Կախեթի տեր Կյուրիկեն եվ Ափխալքի տեր Կոնստանտինը միացյալ ուժերով արշավեցին Հերեթ-Շաքիի վրա, եվ Ատրներսեհը ստիպված զիջեց իր երկրի որոշ մասը, որոնց մեջ՝ Գավազնի քաղաքը՝ Թելավի մոտ[162]: Համամ-Գրիգորի մյուս որդու մասին Աղվանից պատմիչը գրում է. «Իսկ մյուս որդին՝ Սահակը, որ կոչվեց նաև Սեվադա, մի քաջ ու խելացի մարդ էր: Սա միաժամանակ տիրեց Գարդմանին, Քոսա եվ Փառնա գավառներին (Փառիսոս - Բ.), այլև ամբողջ Ջորագետի ավազակապետների իշխանը դարձավ ու հետամուտ եղավ գրագիտության և իր տան մեջ ուսուցիչներ նշանակեց: Սրա դեմ մեծ ջանքերով ու հնարներով պայքարեց Սմբատ թագավորը, բայց նրան չկարողացավ շեղել իր մտադրությունից»[163]: Հովհաննես Հայոց կաթողիկոսը, որը քաղաքից քաղաք էր թափառում, հալածվելով արաբ ոստիկանի կողմից, նախ եղել է Համամ-Գրիգորի որդի Սահակ Սեվադայի մոտ, ապա անցել Կուրի ձախափնյակը՝ Հերեթ-Շաքի «առ թագավորը նոցոնց Ատրներսեհ»: Համամ Գրիգորի մյուս որդիներից Վասակը, ըստ Բ.Ուլուբաբյանի, տիրում է Խաչենում, իսկ Սմբատը՝ Վերին Խաչեն գավառում, որի մեջ էր մտնում եվ Ծարը: Այսպիսով, Համամ-Գրիգորի չորս որդիների միջոցով Աղվանից թագավորությունը տրոհվում է մասերի, ինչին էլ արդեն ձգտում էին Հայաստանյան Բագրատունիները, որոնք իրենց թագավորության մեջ են ներառնում և Արցախն ու Ուտիքի լեռնային մասը, ինչպես և Պարտավն ու Շաքի-Հերեթը, տեղի գահերեց որոշ իշխանների շնորհելով թագավորական տիտղոս՝ ինքնավար իրավունքներով: Բագրատունյաց թագավորության մեջ մտած Հայաղվանքի հյուսիսային սահմանը հասնում էր Կովկասյան լեռների հարավային փեշերին, մինչև Բելուական, Ճար (Ձար) և Թալ, որոնք ևս ընդգրկված էին Առանշահիկ իշխանական տան տարածքում: Իհարկե, հարկ էր լինում անընդհատ մաքառել, դաժան պատերազմների միջոցով պահպանել անկախ պետականությունը: Մեկ հարձակվում էին արաբները, մեկ բյուզանդացիները, պակաս նեղություն չէին տալիս և Ատրպատականի տիրակալները: Անի ամրոցը դառնում է Հայաստանի մայրաքաղաքը: Այսպիսով, Արցախի և Ուտիքի հայությունը իրենց իշխանությունների հետ կարողանում են ինքնությունը պահպանել արաբական դաժան տիրապետության տարիներին ևս ու առաջին հազարամյակի ավարտը դիմավորում են Մայր հայրենիքի գրկում: Հայաստանի տարածքը հարավում հասնում է Մանազկերտ, արևմուտքում՝ Բասեն, հյուսիսում՝ Շամքոր և Շաքի: Սակայն արաբական տիրապետության միջով անցնելով, դեռևս մշտնջենական խաղաղություն չի ստանում ոչ Հայաստանը, ոչ էլ նրա ծայր արևելյան հատվածը՝ Արցախ-Ուտիքը:

Հայաստանում 892 թ. վախճանված Աշոտին փոխարինում է Սմբատ Ա. Բագրատունին (892-914 թթ.): Ատրպատականի կառավարիչ Ափշինը Սմբատի և Լևոնի (Բյուզանդիա) մերձեցումը որպես իր դեմ դավադրություն ընդունեց: Նա իր բանակով անակնկալ հարձակվեց Դվինի վրա: Ի վերջո Սմբատը հաղթեց ճակատամարտում: Սմբատ Ա. Բագրատունին նորանոր տարածքներ է նվաճում, միացնում Հայաստանին: Նա շուտով գրավում է Կուրի ձախափը, հասնում է Ալանաց դռանը (Դարյալի կիրճ), ապա գրավում Պարտավը, Տուսը (Թաուզ), Շամքորը, Սյունիքը, Նախճավանը, Բասենը, Հարքը, Տարոնը: Հայաստանի հյուսիսային սահմանները Սև ծովից Կովկասով, Կախեթով, Դարյալի կիրճով իջնում էր Աղվանք[164]: Բյուզանդական կայսրությունը մշտական կապեր էր պահպանում թե Հայաստանի և թե հարակից պետությունների, նույնիսկ Հայաստանին ենթակա կարևորագույն նահանգների հետ, ձգտում տեղի ունեցող իրադարձություններին հետևել ու հարկ եղած դեպքում՝ միջամտել: Այսպես, կայսր և պատմիչ Կոնստանդին է Ծիրանածինը (Պորֆիրոգեն) թվարկելով Հայկական պետական այն կարևորագույն միավորումները, որոնց հետ կայսերական արքունիքը կապեր ունի, հիշատակում է և Խաչենի իշխանությունը: Նրանց նամակները ուղարկվում էին «Խաչենի իշխանին՝ Հայաստան» հասցեով[165]:

---

[160] Հ. Դրասխուրանակերտցի, էջ 119:

[161] Н.А.Караулов, Сведения арабских писателей о Кавказе, Армении и Азербайджане, "Сборник материалов по описанию местностей и племен Кавказа", вып. XXX, Тифлис, 1901, стр. 57 (далее - СМПОМПК).

[162] Ադոնց, էջ 133:

[163] Կաղանկատվացի, էջ 267:

[164] «Արարատ» ամսագիր, 1919 թ., Ա-ժբ, էջ 51, ինչպես և Լեո, երկերի ժողովածու, հ.2, էջ 51 (այսուհետ՝ Լեո):

[165] Կոնստանդին Ծիրանածին, Թարգմանություն բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ՝ Հրաչ Բարթիկյանի, Երևան, 1970, էջ 151: Ինչպես նաև՝ Կ. Ծ. Բյուզանդական արքունիքի արարողությունների մասին, գիրք բ, գլ. 48, ինչպես նաև՝ Բ. : Տես նաեւ՝ Ուլուբաբյան, էջ 50:

Սահակ Սևադան տիրում էր նաև Գուգարքի մի մասին: Նա բարեկամական հարաբերություններ է հաստատում Սմբատ Բագրատունուն փոխարինած Աշոտ Բ Երկաթ թագավորի հետ, նրան կնության տալով իր դստերը: Սևադա Բագրատունի իշխանն արդեն հանդես է գալիս իր փեսայի զինակցի դերում: Շաքի-Կամբեճանի և Արցախի իշխանությունները շարունակում էին մնալ Բագրատունյաց հարստության կազմում: Երբ Ուտիքում ապստամբում է Մովսես իշխանը, Աշոտ Երկաթը, միացած Սևադայի հետ, ճնշում են ապստամբությունը, ձերբակալում Մովսեսին, որպես պատիժ կուրացնում: Սահակ Սևադան իր երկրորդ դստերը տալիս է Կարսի Մուշեղ թագավորին (962-984 թ.) կնության: Սևադան բարեկամական սերտ կապեր է հաստատում նաև Սյունաց տերերի հետ, գահերեց իշխան Սմբատին տալով իր մյուս դստերը՝ Շահանդուխտին: Շրջահայաց և դիվանագիտական ունակություններով օժտված Սահակ Սևադան ասես հայոց այս երեք թագավորությունները Աղվանից իշխանության միջոցով միավորող օղակի էր վերածվել: Այս Սմբատը Բաղաց Կապանում թագավորություն է հիմնում: Ընդհանրապես, Արցախ-Ուտիքի և Սյունիքի ժողովուրդների կապը շատ հնուց է գալիս: Նրանք փաստորեն նույն արմատներից են սերում, խոսում են հայերենի նույն բարբառով: Արցախը հաճախ ընդգրկվում էր Սեծ Սյունիքի կազմում և կոչվում էր Փոքր Սյունիք: Դժվարին իրավիճակներում հարևան իշխանները հնարավորության դեպքում հաճախ էին իրար օգնության հասնում: Աղվանքի մեծ իշխան Սահակ Սևադայի իշխանությանը ոչ միայն հայոց թագավոր Աշոտ Բ-ի, այլև ամենայն հայոց կաթողիկոսի, Ատրպատականի կառավարիչ Յուսուփի և ներքին կռիվներից հալածյալ իշխանների ու կրոնավորների ապաստարանն էր: Օտար բռնակալներից հալածված հայոց կաթողիկոս և պատմագիր Հովհաննեսը որոշ ժամանակ ապաստանում է Սահակ Սևադայի և նրա եղբոր՝ Կամբեճան-Շաքի թագավոր Ատրներսեհի մոտ: Հայոց թագավոր Աշոտ Երկաթը ևս, իր դեմ հորեղբոր որդու՝ Աշոտ Շապուհյանի (որին թագադրել էր հայոց թշնամի Ատրպատականի կառավարիչ Յուսուփը) լարած դավադրությունից նեղվելով, ապաստան է գտնում աներոջ՝ Սահակ Սևադայի մոտ: Սակայն շուտով իրար հակառակվում են Աղվանից մեծ իշխան Սահակ Սևադան և իր փեսա Աշոտ Բագրատունին: Վերջինս, լսելով անվստահելի մարդկանց խորհուրդները, ձերբակալում է Վասակին, որը Գեղարքունիքի իշխանն էր, բանտարկում Ձորափորի Կայան բերդում: Սևադան, որը շատ դժգոհ էր փեսայի այս վճռից, ապստամբում է նրա դեմ: Անխուսափելի ճակատամարտը խափանվում է Հովհաննես կաթողիկոսի ջանքերով: Սակայն Աղվանից մեծ իշխանը իր զորքով գնում է Ձորավար (Տավուշ - Թաուզ), գրավում Կայան բերդը ու շղթաներից ազատում Վասակին, որը գնում է իր Գեղարքունի գավառը: Սևադան գրավում է մյուս բերդերը ևս, տեղի ժողովրդին տեղափոխում իր իշխանությունը: Աշոտ Երկաթը, որը գնացել էր Վրաստան՝ իր դեմ ապստամբած Գուրգենին պատժելու, այստեղ նրան հաղթելուց եվ հաշտություն կնքելուց հետո, լսելով աներոջ ապստամբության մասին, շտապում է Ձորափոր: Աշոտն այստեղ հանդիպում է աներոջ ութ հազարանոց զորքին, որի կողմից շրջապատվում է: Աշոտ թագավորը մի եպիսկոպոս է ուղարկում իր աներոջ մոտ, հաշտություն խնդրելով նրանից, առաջարկելով իրար հետ լինել հայր և որդի: Սևադան չի զիջում և որոշում է ճակատամարտել: Աշոտ Բագրատունին անսպասելիորեն հարձակվում է, հաղթում եվ գերում Սահակ Սևադային ու նրա որդուն Գրիգորին, անգթորեն կուրացնում երկուսին էլ: Դրանից հետո Աշոտը գրավում է Սահակ Սևադային պատկանող Գարդման բերդը ևս, այն հայտարարում իր սեփականությունը, այստեղ կառավարիչ նշանակում Ցլիկ մականունով Ամրան իշխանին: Ողջ Ուտիքի ժողովուրդը ապստամբում է Աշոտ Բագրատունու դեմ, որը արաբական խալիֆից Շահնշահի (արքայից արքա) տիտղոս էր ստացել:

Աղվանից Դավիթ կաթողիկոսից հետո կրկին ինքնակոչ կաթողիկոս է հայտնվում, դա Մեծ Կողմանքի Սահակ եպիսկոպոսն էր, որը միաբանելով Սյունյաց Յակոբ մետրոպոլիտի հետ, ապստամբում են Մայր-Աթոռ ս. Էջմիածնի՝ դարերով սրբագործված իրավունքի դեմ: Սովորաբար Սյունիքի եպիսկոպոսները ձեռնադրվում էին Հայոց հայրապետի կողմից ու սրբալույս մեռոնը ստանում նույն հայրապետից: Եվ ահա նրանք այլևս ձեռնադրվում էին Աղվանից կաթողիկոսի կողմից, որից էլ ստանում մեռոնը: Հայոց Անանիա կաթողիկոսը փորձում է գրագրություններով կարգավորել իրավիճակը, սակայն ոչինչ չի ստացվում: 958 թ. Անանիա Մոկացի կաթողիկոսն այցելեց Աղվանք: Այդ ժամանակ Հերեթ-Շաքիում Ատրներսեհին փոխարինել էր Իշխանակը, որին արաբները կոչում էին Աբո Աբդ ալ-Մալիք: Աղվանքում եկեղեցական ժողովին եկած Անանիա հայրապետը գրում է, «Տէր ծագեաց ի սիրտս հզորացն Աղուանից ի թագաւորն, որ կոչեր Իշխանակ՝ որդի Ատրներսեհի...»[166]: Մինչ այդ կաթողիկոսը այցելել էր Սյունիք, որտեղ Հակոբ մետրոպոլիտը մեղա է գալիս և խոստովանում իր մեղքերը: Սակայն կաթողիկոսը չի կարողանում Աղվանք հասնել, քանի որ Աշոտ Երկաթին փոխարինած Աբաս թագավորից լուր է առնում թագուհու մահվան մասին և ստիպված ետ է վերադառնում: Այդ ժամանակ Աղվանից կաթողիկոս Սահակը մահանում է, որին փոխարինում է նրա եղբայրը՝ Գագիկը՝ նույն անկատար օծությամբ: Կաթողիկոսը Աղվանից իշխաններին թուղթ է գրում՝ չենթարկվել ինքնակոչ Գագիկին: Հովնան անունով մի եկեղեցականի ուղարկում են օծվելու Հայոց կաթողիկոսի կողմից: Տեր Անանիան սի-

[166] Մոկացի Անանիա կաթողիկոսի ինքնագիր թուղթը, «Արարատ», 1897, էջ 181:

րով կաթողիկոս է օծում և ուղարկում Աղվանք: Սակայն սուր վեճեր են ծագում Գագիկի և Հովնանի կողմնակիցների միջև: «Անանիան, այս բոլորը լսելով, իր մտքում վարանում և տարակուսում էր եկեղեցու տեսակ-տեսակ պառակտումների ու ապստամբությունների պատճառով, և հավաքելով եպիսկոպոսների ու գլխավոր հայրերի բազմությունը, խաչն ուսն առած՝ որպես առաջամարտիկ՝ գալիս է եկեղեցու շեղված ու պառակտված պաշտոնյաների հարցով, դիմում, գնում է Աղվանք»,- գրում է Սյունյաց պատմիչը[167]: Հայոց հայրապետը հասնում է Խաչենի գավառը, որտեղ նրան հյուրընկալում է Գրիգոր իշխանը: Տեր-Անանիան իշխաններին, եպիսկոպոսներին ու վանականներին հավաքում է Արդախ կոչված վայրում, գալիս են և Գագիկն ու Հովնանը: Հայրապետը ծանոթանում է Աղվանից աշխարհի պատմությանը: Երկու թեկնածուներին էլ կարգալույծ է անում ու հեռանում: Ժողովը հավաստիացնում է Հայոց կաթողիկոսին, որ իրենք համապատասխան մեկին կընտրեն և կուղարկեն օծվելու:

Համաշխարհային վիթխարի ուժը՝ արաբական խալիֆաթը այլևս իրենից ոչինչ չէր ներկայացնում: Նա չէր կարող տիրել կամ ճնշել որևէ երկրի: Նրան ենթակա բոլոր երկրներն ու իշխանությունները անկախացան և ինքնիշխան դարձան: Բաղդադի գահը այսուհետ ներքին կռիվների թատերաբեմ էր միայն: Մոսուլում հաստատվել ու հետզտհետե զորեղանում էր Համադանյան արաբական հարստությունը: Եգիպտոսն ու Սիրիան ընկան Ֆաթմյան հարստության ձեռքը: Կասպից ծովի հարավային մասերը, ուր Թաբասարանն էր (այժմ՝ Մազանդարան), տիրապետում է Բուվեյհյան զուտ պարսիկ հարստությունը, որի սահմանները շուտով հասնում են Իրանի հարավին՝ Պարսից ծոցին, նրանք նույնիսկ նվաճեցին Բաղդադը՝ խալիֆին մի խաղալիք դարձնելով իրենց ձեռքում[168]: Փաստորեն Հարավային Կովկասին մի խաղաղ ընդմիջում է շնորհվում: Ատրպատականի դաժան տիրակալ Յուսուֆի սպանությունից հետո այս ամիրությունը ևս իրենից լուրջ վտանգ չէր ներկայացնում: Այս ժամանակամիջոցում ասես խորը քնից արթնանում և հզորանում է Բյուզանդիան: Թվում է, թե Հայաստանի ու Հայաղվանքի համար շատ նպաստավոր պայմաններ են ստեղծվել: Բյուզանդիայի հայկական դինաստիայի մեջ երևան են գալիս երեք հզոր աշխարհակալ կայսրեր և զորքերի անպարտելի հայ հրամանատարներ: Կոնստանդին է Ծիրանածին կայսերը զուգահեռ երկիրը կառավարում էր նրա աները՝ հայազգի Ռոմանոս Լեկաբենոս ծովակալը (919-944 թթ.): Այդ ժամանակ բյուզանդական զորքերի գլխավոր հրամանատարն էր հայազգի Հովհան Կուրկուասը (Գուրգեն)՝ X դարի խոշորագույն զորավարը: 941 թ. Կուրկուասը ջարդում է

[167] Ստ. Օրբելյան, էջ 242:
[168] Լեո, էջ 571:

ռուս իշխան Իգորի բանակը, որը մոտեցել էր Կոնստանդնուպոլսին՝ թալանի նպատակով: Հետաքրքրական է, որ ռուսների մասին նույն ժամանակահատվածի վերաբերյալ տեղեկություն է հաղորդում «Աղվանից աշխարհի պատմության» մատենագիրը. «Միևնույն ժամանակներում հյուսիսային կողմերից հայտնվում է այլակրոն, անծանոթ մի ցեղ, որին ռուզիկ են անվանում»: Սա, անշուշտ, Կ.Պոլսի վրա հարձակմանը նախորդած Իգորի դրուժինան (զորաբանակ) էր, որ թալանի նպատակով Անդրկրովկաս էր թափանցել Դերբենտի դռնից: Մինչ այդ ռուս վարձկանները գալիս էին հոների և խազարների հետ: Այսուհետև մատենագիրը հայտնում է. «Սրանք ոչ ավելի, քան երեք ժամ ընթանալով մրրիկի նման համատարած Կասպից աշխարհածովի ելքով (Դերբենտ), հանկարծ հասան Աղվանքի Պարտավ մայրաքաղաքը, սա ուժ չունեցավ նրանց դիմադրելու, և քաղաքը մատնեցին սրածության, խլեցին բնակիչների ամբողջ ունեցվածքը: Նույն ինքը՝ Սազարը (Ատրպատականի մարական Դելմիկների ցեղից տիրակալ), պաշարեց նրանց, բայց ոչ մի վնաս չկարողացավ տալ, որովհետև ուժի կողմից անհաղթելի էին: Իսկ քաղաքի կանայք հնար մտածելով, թույն խմեցրին ռուզիկներին (ռուսներին). սրանք իմացան դավադրությունը և անխնա կոտորեցին կանանց ու նրանց մանուկներին: Եվ Պարտավում վեց ամիս մնալով՝ թափուր ու դատարկ թողին, գնացին»[169]:

Աշոտ Բ Երկաթի մահից հետո Հայաստանում թագավում է նրա եղբայրը՝ Աբաս Ա-ն (930-952 թթ.), որը գահանիստ է դարձնում Վանանդի Կարս բերդը: Հայաստանի հյուսիսում աշխուժանում են աբխազները, որոնց Բեր թագավորը մեծ զորքով արշավում է դեպի Հայաստան, նպատակ ունենալով գրավել Կարսը և հպատակեցնել երկիրը, ինչպես ինքն էր ասում, տիրանալու Աբասի կառուցած տաճարին: Աբասը զորքով ընդառաջ է ելնում ու բանակները կանգնում են դեմ դիմաց՝ Կուրի աջ և ձախ ափերին: Ճակատամարտում Աբասը գլխովին ջախջախում է ինքնավստահ Բերին, գերում նրան և շղթայակապ տանում Կարս՝ ցույց տալու իր կառուցած տաճարը[170]:

Իսկ Արցախում Սահակ Սևադային հաջորդում է նրա ավագ որդին՝ Հովհաննեսը: Ինչպես հաղորդում է Աղվանից աշխարհի պատմության վերջին շարահարող հայ մատենագիր Մովսես Դասխուրանցին. «Բարձրյալի (Քրիստոսի) աջը Հովհաննեսին ընտրեց, որը Սենեքերիմ կոչվեց, բարձրանալով թագավորական գահը: Ամենակալ տերը սրա միջոցով վաղուց ի վեր խափանված թագավորությունը վերականգնեց»[171]: Սենեքերիմ-Հովհաննես

[169] Կաղանկատվացի, էջ 264:
[170] Լեո, էջ 576, Լեոն հաղորդում է, որ 1920թ. թուրքերը այդ տաճարը մզկիթի են վերածել:
[171] Կաղանկատվացի, էջ 267:

(958-1003 թթ.) Աղվանից թագավորին թագ, երիվար և թագավորական զգեստ ուղարկեց պարսից թագավորը (Բուվեյհյան հարստություն), ինչպես և բյուզանդական կայսրության ներկայացուցիչ Դավիթ Մագիստրոսը, որը «մի չքնաղ թագ և արքայական ծիրանի ուղարկեց այդ աստվածահաջող մարդուն՝ իբրև պատիվ և գովեստ, որը հայրապետական աջով (հավանաբար Թեոդորոս Ա կաթողիկոսի) թագավորական օծում ստացավ ի փառս Քրիստոսի»[172]: Սենեքերիմը իր նստավայրը ընտրեց Փառիսոս քաղաքը, որը գտնվում է Շամքոր գետակի վրա (այժմյան Ադրբեջանի Հանրապետության Կալաքենդ գյուղի մոտ)[173]: Փառիսոսի թագավորությունը տարածվում էր Մռավի լեռներից մինչև Շամքոր քաղաքը, ընդգրկելով և ողջ Գարդմանը: Փառիսոս քաղաքը տեղադրված էր Կուրի աջակողմյան Չարեք (Շամքոռ) վտակի երկու կողմերում, ներկայիս ադրբեջանաբնակ գյուղի տեղում: Քաղաքն ուներ 12 եկեղեցիներ ու վանքեր[174]: Փառիսոսի բերդը՝ թագավորության գլխավոր հենարանը, գտնվում է քաղաքից ոչ հեռու, գետի ձախ ափին: Միջնադարի հայ պատմիչ Ասողիկը հայտնում է, որ Կարսի Աբաս թագավորի մայրն էր Փառիսոսի Սենեքերիմ և Գրիգոր (որին կուրացրեց Աշոտ Բ. Երկաթը) թագավորների քույրը[175]: Փառիսոսի թագավորությունը տևեց հարյուր տարի:

Աղվանքի Մեծ իշխան էր համարվում Աշոտ Բ-ի կողմից կուրացված Գրիգորը, որի նստավայրն էր Գանձասարի դիմաց գտնվող Հավքախաղաց բերդը: Իսկ Արցախի հարավում շարունակում էին իշխել Եսայի Ապումուսե իշխանի ժառանգորդները: Խաչենի, Ուտիքի և Կամբեճան-Շաքիի մասնատված այս իշխանապետությունները պետք է շարունակեին անմատույց պահել Հայաստանի հյուսիս-արևելյան սահմանները: Սակայն, քանի որ Հայաստանի Բագրատունյաց թագավորները ավելի շուտ զբաղված էին արտաքին ու ներքին պատերազմներով, երկրի հյուսիսարևելքը ինքնահոսի էր թողնված: Հայոց կաթողիկոսները ևս պատերազմների պատճառով չէին կարողանում կապ պահպանել Սյունիքի ու Աղվանից իրենց ենթակա եկեղեցիների հետ: X դարի կեսերին Աղվանքի Սահակ կաթողիկոսը, ապա և նրան Փոխարինած Գագիկը, որը Սահակի եղբայրն էր, սերտ կապեր ունեին Սյունաց եպիսկոպոս Տեր-Հակոբի հետ և համախոհներ էին: Նրանք սկսել էին իրենց երկրների իշխանների նման իրենց անկախ զգալ ու չենթարկվել հայոց կաթողիկոսներին: Անանիա Մոկացի կաթողիկոսը (943-

[172] Ստ. Օրբելյան, էջ 257:
[173] Լեո, էջ 571:
[174] Б. Карапетян, С. Карапетян, Тайны Гандзака (Кировабада) и Северного Арцаха,, Москва, 1998, стр. 77.
[175] Վարդան Արևելցի, Պատմություն տիեզերական, Մոսկվա, 1861, էջ 198

965 թթ.) ստիպված եկավ Սյունիք: Հակոբ եպիսկոպոսը խոստովանում է իր մեղքերն ու ենթարկվում կաթողիկոսի կամքին: Աղվանից Գագիկ կաթողիկոսը օծված չէր Հայոց կաթողիկոսի կողմից, ուստի Անանիան թուղթ ուղարկեց Աղվանքի իշխաններին և հոգևորականներին, որ չենթարկվեն Գագիկին: Աղվանքից կաթողիկոսի մոտ ուղարկեցին Հովնանին՝ ձեռնադրվելու: Երբ Հովնանը ետ՝ Աղվանք գնաց, Գագիկի հետ մեծ հակասություն եղավ, ուստի երկուսն էլ մերժվեցին: Անանիան մեծ շքախմբով 949 թվականին գնաց Խաչեն, Արդախ կոչված վայրը, որտեղ գտնվում էր Գանձասարի վանքը: Նրան հյուրընկալում է Գրիգոր Մեծ իշխանը: Գանձասարում Անանիա կաթողիկոս Մոկացուն ասում են, որ Աղվանից կաթողիկոսությունը չպետք է ենթարկվի հայոց եկեղեցուն: Անանիան պահանջում է Մովսես Կաղանկատվացու «Աղվանից աշխարհի պատմությունը» գիրքը: Ընթերցելով գիրքը, համոզվում է, որ Աղվանից առաջին եպիսկոպոս Գրիգորիսը ձեռնադրվել է հայոց առաջին եպիսկոպոսապետ Գրիգոր Լուսավորչի կողմից: Անանիան Գանձասարում ժողովի է հրավիրում Խաչենի, Ուտիքի և Կամբեճան-Շաքիի հոգևոր ու աշխարհիկ տերերին: Ժողովին մասնակցում էին Իշխանիկը, որը Արցախի գահերեցն էր, Իշխանաց իշխան Սենեքերիմը, որը մի քանի տարի հետո թագավորություն հիմնեց Փառիսոսում, Խաչենի Գրիգոր իշխանի որդի Սենեքերիմը, Գորոզվաց իշխան Վաչականը, որը Եսայի Ապումուսեի ժառանգներից էր, Հայոց արևելքի մեծ իշխան Գուրգենը, եպիսկոպոսներ, այլ իշխաններ[176]: Անանիան կարգալույծ արեց թե իր ձեռնադրած Հովնանին և թե Գագիկին՝ իրար դեմ բամբասելու համար: Ապա մերժում է Խաչենի իշխան Գրիգորի խնդրանքը՝ վերստին ձեռնադրելու Գագիկին: Հայոց կաթողիկոսը առանց որևէ մեկին ձեռնադրելու հեռանում է Աղվանքից: 958 թվականին մեռնում են թե Սյունաց եպիսկոպոս Հակոբը և թե Աղվանքի արքեպիսկոպոս Գագիկը: Անանիան վերստին գալիս է Սյունիք, գնում Կապան՝ Ջիվանշիր իշխանի մոտ, Սյունյաց եկեղեցապետ կարգում իշխանի եղբորը՝ Վահան եպիսկոպոսին, որը Վահանավանքի միաբանության առաջնորդն էր:. Սակայն Աղվանք գնալ չի հաջողվում, քանի որ հայոց Աշոտ Գ. (Ողորմած) Բագրատունի թագավորն Անի մայրաքաղաք է կանչում: Սենեքերիմն ու Իշխանիկը Հայոց հայրապետի մոտ որպես Աղվանից կաթողիկոս ձառնադրվելու են ուղարկում Խոտակերաց կամ Քարկոփի վանքից (Վայոց Ձորի Խաչիկ գյուղի մոտ) Դավիթ եպիսկոպոսին: Աղվանից իշխանները կաթողիկոսական աթոռի թեկնածու են ընտրում Խոտակերաց վանքի (Վայոց ձորի Խաչիկ գյուղի մոտ) Դավթին և ուղարկում Հայոց հայ-

[176] «Արարատ», «Տեառն Անանիայի հայոց կաթողիկոսի՝ յաղագս ապստամբութեան տանն Աղուանից», 1897, էջ 143:

ռապետի մոտ օծության: Անանիա Մոկացին օծում է նրան և ուղարկում Փառիսոս[177]:

Անանիա կաթողիկոսը ոչինչ չի գրում Հերեթ-Շաքիում տեղի ունեցող դավանափոխության մասին, որը ծեռնարկել էր Իշխանակ թագավորի մայրը՝ վրացուհի Դինարը: Նիկողայոս Մառը գրում է, որ Հերեթը X դարում դարձավ քաղկեդոնական ու միացավ Կախեթին[178]: Վաղուշտի Բագրատունի ժամանակագիրը «Կախեթի և Հերեթի պատմությունում» 918 թ. տակ գրում է. «Դինար թագուհին Հերեթն հերձվածքից ուղղափառ դավանության դարձրեց»[179]: Դինարը, ըստ Ադոնցի, Աջարիայի և Ղուելի իշխան Գուրգենի (896-941) քույրն էր, Աշոտ Կյուրապաղատի թոռան թոռը: Ինչ խոսք, որ դա հայոց եկեղեցու պասսիվության հետևանք էր: Շուրջ 70 տարի Հայոց կաթողիկոսության կողմից Աղվանից եկեղեցին անտերության էր մատնված: Իսկ եթե աշխարհիկ իշխանությունը չի ամրապնդվում եկեղեցու կողմից, անպայման այն կործանման է ենթակա: Աղվանից եկեղեցին առանց կրոնապետի թողնելու Հայող հայրապետի քայլը խիստ բացասաբար անդրադարձավ: Շաքիի Իշխանիկ թագավորը, որը Գանձասար ժամանած Հայոց կաթողիկոսից խնդրում էր Աղվանից կաթողիկոս հաստատել Գագիկին, նկատի ուներ նրա միջոցով երկիրը փրկել վրաց եկեղեցականների հարձակումից, որը ծեռնարկել էր իր մայրը՝ Դինարը: Սակայն Անանիա Մոկացին անսասան էր: Նա միայն կարողացավ ցույց տալ, որ թագավորների կամքն անգամ իր համար նշանակություն չուներ: Իսկ դրա արդյունքում հայերը կորցրին Շաքի-Շիրվանը: Հերեթում հայերը կորցրին ոչ միայն հավատքը, այլև հայության այդ հատվածը վրացիներ դարձան, երկրամասը մեկընդմիշտ կտրելով հայկական միջավայրից:

Հայաստանում գահ է բարձրանում Աշոտ Դ Բագրատունի Ողորմածը (952-977 թթ.): Նա մայրաքաղաքը Կարսից տեղափոխում է Անի ամրոցը, կաթողիկոսական աթոռը տեղափոխում Շիրակ՝ Արգինա գյուղը, որը հեռու չէր Անիից: 961 թվականին հանդիսությամբ կատարեցին Անիի որպես մայրաքաղաքի նվիրագործումը: Աղվանքից հրավիրեցին Դերբենտի թագավոր Փիլիպպոսին՝ իր շքախմբով, ինչպես նաև Աղվանից կաթողիկոս Հովհաննեսին՝ 40 եպիսկոպոսներով: Այս առթիվ XII դարի ժամանակագիր Մատթեոս Ուռհայեցին գրում է. «Անհրաժեշտ եղավ հրավիրել Աղվանից աշխարհի ամենագովելի կաթողիկոս տեր Հովհաննեսին (Հովնան Ե - Բ.), նրա հետ նաև քառասուն եպիսկոպոսների: Մեծ շուքով հրավիրեցին նաև Աղվանից թագավոր Փիլիպպոսին, մի աստվածահաճո և սուրբ մարդ՝ Վաչականի որդի

[177] Ստ.Օրբելյան, էջ 240-248:
[178] Н. Марр, Аркаун, монгольское название христиан, Петербург, 1905, стр. 67.
[179] Մելիքսեթ-բեկ. Վրաց աղբյուրները..., հատոր Գ, էջ 67:

Գոշակտակի որդուն, ովքեր թագավորել էին Աղվանքում: Այդ օրը գումարվեց կարևոր և մեծ ժողով Անի քաղաքում, որն այն ժամանակվանից սկսած դարձավ հայոց թագավորանիստ քաղաք»[180]: Քիչ անց ժամանակագիրը ճշգրտում է Փիլիպպոսի թագավորության տեղը. «Այն ժամանակ (974 թ.) հայոց Աշոտ Բագրատունի թագավորի մոտ հավաքվեցին հայոց բոլոր թագավորազունները, ազատները, իշխաններն ու արևելյան շրջանների ղեկավարները՝ Կապանի թագավոր Փիլիպեն, Աղվանից թագավոր Գուրգենը (Կյուրիկե-Բ.), Կարսի տեր Աբասը, Վասպուրականի տեր Սենեքերիմը և ողջ Սասնա տունը»[181]: Հետագայում Ուռհայեցին ավելի է ճշտում թագավորության տեղն ու ժամանակները. «Կային և ուրիշ հայ թագավորներ՝ Դարբանդ գավառում, որ կոչվում էր Կապանք՝ օգերին և աղվաններին սահմանակից, նրանք ազնիվ և սրբակրոն թագավորներ էին և պատարագներում հիշվում են նրանց անունները՝ աստվածասեր այլ սուրբ թագավորների շարքում, այն է՝ Վաչականի, նրա որդու՝ Գոշակտակի որդու՝ Փիլիպեի, Փիլիպեի որդու՝ Սևադայի, Սևադայի որդու՝ Սենեքերիմի, Սենեքերիմի որդու՝ Գրիգորի, որը մեր այս մատյանի գրության ժամանակ (1136 թ.) դեռ կենդանի էր »[182]: Դերբենտի հայ-աղվանական թագավորության մասին մանրամասներ է հաղորդում Սեդրակ Բարխուդարյանը[183]: Սարգիս Ջալալյանը Խաչմաս գյուղի (Ադրբեջանի Հանրապետություն, Կասպից ծովի մոտ) գերեզմանոցում տեսել է Դերբենտի երեք թագավորների գերեզմանները, գրի առել վիմագրերը[184]: 1041-1042 թթ. Դվինի քուրդ ամիրա Աբուլսուարը, որը Կյուրիկյան Դավիթ Անհողինի քրոջ ամուսինն էր, Տուրդիլի հետ միացած արշավում է, գրավում Պարտավն ու Գանձակը, սպառնում Դավիթին: Վերջինիս օգնում են Բագրատունի Հովհաննես-Սմբատը և Կապանի (Դերբենտ) թագավորը երկու հազարանոց զորագնդով[185]: Մակար եպ. Բարխուտարեանցը հայտնում է, որ Աղվանքի հին մայրաքաղաք Կապաղակի մոտ Փիլիպպե թագավորը հիմնել է իր անունով կոչվող երկու ամրոց[186]: Նրա իշխանությունը ընկած էր Կուր գետի և Կովկասյան լեռնաշղթայի միջև ու ընդգրկում էր Ջարը (Ջար), Բելականը, Շաքին (Նոխուտ), Կութկաշենը, Վարդաշենը, Կուսարին, Խաչմասը, Դերբենտը: Փիլիպպոսի իշխանությունը ժառանգում են նրա

[180] Մ.Ուռհայեցի, Ժամանակագրություն, 1973, էջ 2 (այսուհետ՝ Ուռհայեցի):
[181] Նույն տեղում, էջ 11:
[182] Նույն տեղում, էջ 151 - 152:
[183] Ս. Բարխուդարյան, Դերբենտի հայ-աղվանական թագավորությունը, «Պատմա-բանասիրական հանդես», Եր., 1969, N3, էջ 125:
[184] Ս.Ջալալյան, Ճանապարհորդություն ի Մեծն Հայաստան, մաս Բ, Տփղիս, 1858, էջ 240:
[185] Ս. Բարխուդարյան, Դերբենտի..., էջ 130:
[186] Մ. Բարխուտարյանց, Պատմութիվն Աղուանից, Թիֆլիս, 1901, էջ 137-138:

Հովհաննես և Գրիգոր որդիները: Խաչմասում գտնվող նրանց տապանաքարին մինչև XX դարի սկզբները պահպանվել էր «Յովհաննես կրտսեր և Գրիգոր կրտյսար» վիմագրությունը»[187]: Նրանց հաջորդում է Բալա-Ղազարը, որը, հաստատվելով Խաչմասում, դաժան պատերազմներ է մղում լեզգի լեռնականների դեմ: Դերբենտի հայոց թագավորությունը գոյատևեց շուրջ 200 տարի: Եթե Ս. Բարխուդարյանը ենթադրում է, որ Դերբենտի թագավորական տան ժառանգները սերում են Սյունիքից, ապա Մակար եպիսկոպոսը, առանց նշելու աղբյուրը, նրանց Բագրատունի է համարում: Նկատի ունենալով Բագրատունիների՝ հարավ-կովկասյան ընդհանուր միացյալ հզոր պետություն ստեղծելու ծրագիրը, հակված ենք կարծելու, որ Դերբենտում հայկական թագավորության հիմնումը պատահական չէ ու այն Բագրատունյաց տան մեծ ծրագրի մի մասն է, ուստի նման պատասխանատու գործը նրանք կարող էին վստահել միմիայն Բագրատունյաց հարստության ներկայացուցիչին, ինչպես դա արվեց մյուս բոլոր դեպքերում:

Բյուզանդիայի կայսերական աթոռին 963 թվականին նստում է հայ զորավար Նակեփոր Փոկոսը: Նա շուտով նվաճում է Կիլիկիան: Իսկ Արևելքի զորքերի գլխավոր հրամանատարն էր հայազգի մեծ զորավար Հովհաննես Չմշկիկը, որը 969 թվականին գահ է բարձրանում: Հայաստանի համար դա մի շատ բարեհաջող շրջան էր: Այստեղ գահին տիրում է Սմբատ Բ. Բագրատունին (977-990 թթ.): Նա շուտով պատերազմում է աբխազների (վրացիների) դեմ, իր հետ տանելով Վասպուրականի, Սյունիքի և Աղվանքի բանակները: Աբխազների թագավոր Գուրգենը վախենում է Դավիթ Կյուրապաղատին (Կայսերական Բյուզանդիայում կայսրից հետո չորրորդ աստիճանը) միացած Սմբատի ուժից, հաշտություն է խնդրում և ետ դառնում:

Սմբատ թագավորի եղբայր Գուրգենը, նշանակվելով Տաշիր գավառի կառավարիչ, իրեն 982 թվականին այստեղ թագավոր է հայտարարում և հիմք դնում Գուգարքի Բագրատունի թագավորության, որը հայտնի է նաև Կյուրիկյան անունով, քանի որ Գուրգենին հույները Կյուրիկե էին կոչում: Պատերազմ և խռովություն չսիրող Սմբատը ոչինչ չձեռնարկեց երկրի այս մասնատման դեմ: Նա ավելի շատ զբաղված էր Անիի շինարարությամբ: Կառուցում էր նոր տաճարներ, եկեղեցիներ, պարիսպներ...

Հայոց գահին Սմբատից հետո բարձրանում է նրա եղբայրը՝ Գագիկ Ա. Բագրատունին (990-1020 թթ.), որը ավագ եղբոր համեմատ քաջ էր ու պատերազմասեր: Նա առաջին հերթին արշավում է դեպի Սյունյաց Վայոց

[187] Մ.Բարխուտարյանց, Պատմութիւն Աղուանից , հատոր Բ, Թիֆլիս, 1907, էջ 15: Մակար եպիսկոպոսը մինչև իր ժամանակները պահպանված տապանաքարերի արձանագրություններով գտնում է Փիլիպոսյան հարստության շառավիղները, որոնք ձգվում են մինչև XIX դ. կեսերը:

ձորն ու Խաչենը՝ հպատակեցնելու նպատակով և շատ բերդեր է խլում: Խաչենում հասնում է մինչև Տիգրանակերտ (Շահաղբյուր) բերդը, որտեղ հուշարձան է թողնում՝ արձանագրությամբ: Գուգարքում 989 թվականին Գուրգենին փոխարինել էր որդին՝ Դավիթը: Գուգարքը կարևոր կետ էր հայ-վրացական սահմանագլխին: Դավիթը Վրաստանից և Ուտիքից նոր հողեր նվաճելով, ընդարձակեց իր թագավորությունը: Նա, նեղելով Թիֆլիսի էմիրին, նրան ևս հպատակ դարձրեց իրեն: Դավիթը շատ հողեր նվաճելու համար ստանում է Անհողին անունը: Ավելի շատ նա խորացել էր Ուտիքի մեջ: Սա շատ կարևոր է այն տեսանկյունից, որ Գանձակում նրա հանդիման հաստատվել էր Շեդդադյան էմիրական հարստությունը, որը ծագումով քուրդ էր[188]: Նրանք իշխում էին նաև Դվինում: Երեք եղբայրներ Դվինից, գալով Գանձակ, սպանում են տեղի էմիրին և իրենք տիրապետում այստեղ: Էմիր է դառնում երեք եղբայրներից Փատլունը, որն իր զորքով փորձեց կանգնեցնել Դավիթի առաջխաղացումը դեպի Գանձակ: Առաջին իսկ ընդհարումից պարտություն կրեց քուրդ Փատլունը և հազիվ կարողացավ փրկվել զոհվելուց: Դավթի դեմ ապստամբում են նրան ենթակա Գագ (այժմ՝ Ղազախ, Ադրբեջանի հանրապետություն) գավառի հայ իշխանը, որը վրացադավան էր դարձել, վրաց թագավորից ստացել «արքայիկ» տիտղոս: Դավիթը հեշտությամբ ճնշում է ապստամբությունը: Նա իրեն անկախ է հայտարարում, չենթարկվելով «Շահնշահ» տիտղոս ունեցող Գագիկ Բագրատունուն: Իսկ Գագիկը ձգտում էր կենտրոնացած հզոր պետություն ստեղծել, միավորելով բուն Հայաստանի նահանգները: Սակայն դրա համար նա պետք է կրկին վերանվաճեր հենց Հայաստանի մեծ մասը, որի գավառներում ծնվում էին նորանոր թագավորություններ: Սյունիքում բավականին հզոր էր Բաղաց թագավորությունը: Արցախում, որն արդեն Խաչեն անունով էր հայտնի, թագավորներ էին հռչակվել Եսայի Ապումուսեյի ժառանգները, ինչպես նաև Վերին Խաչենի, Փառիսոսի, Կամբեճան-Շաքիի տերերը:

Գագիկ թագավորը առանց մեծ ճիգերի նվաճեց Գուգարքի թագավորության տարածքները, ու Դավիթը ստիպված դիմեց Սարգիս կաթողիկոսի միջնորդությանը: Դավիթը հպատակվեց հորեղբորը և լծվեց նոր բերդերի շինարարությանն ու երկրի ամրացման կարևոր գործին: 1003 թվականին, երբ մահանում են Փառիսոսի տերերը, Գագիկ Բագրատունին իսկույն իր իրավունքի տերը կանգնեց: Գանձակի էմիր Փատլունյանը ևս ուզում էր իր ձեռքը գցել բերդերով հարուստ և խիստ ամուր երկրամասը: Կարճատև պատերազմը բերեց մի համաձայնության, որի հետևանքով Փառիսոսը բաժանվեց Անիի թագավորության և Գանձակի էմիրության միջև: Ըստ հավա-

[188] Стенли Лен-Пуль, Мусульманские династии, стр. 294.

նականության, ռազմավարական տեսանկյունից Գագիկին ձեռնտու էր միայն լեռնային մասը, որը պետք է պահպաներ երկրի հյուսիսարևելյան սահմանները: Սակայն Սևադայի ժառանգները շարունակում էին իշխել Փառիսոսում մինչև XI դարի կեսերը: Փառիսոսում լավ հիմքերի վրա էր դրված կրթությունը, մշակույթը: Սրա արգասիքն է դառնում Փառիսոսի հայ մեծ փիլիսոփա, պատմիչ և մեկնաբան Հովհաննես Իմաստասերի ծնունդն ու գործունեությունը (XI դարի կեսերին):

919 թվականին Վասպուրականում արևելքից հայտնվեց մի ասպատակիչ զորաբանակ, որը զարհուրելի էր ոչ միայն իր դաժանությամբ ու վայրենի բարքով, այլև արտաքին տեսքով, որոնց հայ պատմիչ Ուռհայեցին անվանում է «թունավոր օձեր»: Արևելքում ծնունդ էր առել մի նվաճող ուժ, որը պետք է պատուհաս դառնար շատ ժողովուրդների համար: Դրանք Միջին Ասիայի տափաստանների հարազատ զավակներն էին սելջուկ-թուրքերը: X դարի վերջերին Ղուզերի (Օղուզ-եզ, որ տոտեմական նշանն է) որոշ խմբակցություններ սկսել էին թափանցել Իրանի Սամանյանների արքունիքը և ազդեցիկ դիրքեր գրավել այնտեղ[189]: Սելջուկն ղուզ-օքուզների իշխաններից էր, որ իշխում էր նրա մի ճյուղին: Սելջուկը իր զորքով շարժվում է դեպի իսլամական աշխարհը ու մահմեդականություն ընդունում: Երբ Իլաքի որդի Բաղրխանը ներխուժեց սամանյանների երկիրը, վերջինները դիմեցին Սելջուկի օգնությանը, որն իր որդուն Ալփասլանին ուղարկեց կռվելու նրանց կողմից: Ի վերջո Սամանյանները պարտվում են: Նրանց երկրի մի մասին տիրում են Կարախան թուրքերը: Սելջուկի ցեղակից Ալփ-Թագինը Խորասանում սպարապետ է դառնում ու Ղազվինում հիմնում իր իշխանությունը: Հետո սպարապետ է դառնում թուրք Մահմուդը, որն իրեն է ենթարկում Խորասանն ու Խորեզմը: Այստեղ Մահմուդը պատերազմում հաղթում է Սելջուկի որդի Ալփասլանին ու Ղուզերից հիսուն հազար թուրքերի բնակեցնում Խորասանում: X դարի վերջերին խաշնարած թուրք-օղուզները սկսեցին թափանցել Իրանի խորքերը, իրենց յուրտերը (վրաններ) հաստատելով Իրանի տարբեր վայրերում: Ատրպատականի այդ ժամանակվա տիրակալը Վեհսուդանն էր, որ թշնամական դիրք էր գրավել հարևան երկրների, այդ թվում Սյունիքի, Արցախի իշխանների և Գանձակի Շադդադյանների նկատմամբ: Քուրդ էմիրը, տեսնելով այս ցեղի ռազմատենչությունը, շատ ուրախացավ և նրանց բնակավայր տվեց իր երկրում: Բայց սրանք հանգիստ չնստեցին, շարունակաբար խուժեցին և ասպատակեցին Հայաստանն ու այլ վայրեր և չզլացան կողոպուտներ և ավերներ կատարելուց[190]:

[189] Էնաթոլլահ Ռեզա, Առան և Ազարբայջան, Եր., 1994, էջ 134:
[190] Ահմադ Քասրավի, «Քարվանդ-է Բասրավի» ժողովածու, Թեհրան, 1977, էջ 328:

Հենց այս պատուհասի ժամանակաշրջանում հայոց գահը ժառանգում է մի շատ թույլ, միայն սեփական անձի մասին հոգացող անձնավորություն՝ Հովհաննես-Սմբատ Բագրատունին: Վասպուրականի Սենեքերիմ թագավորը, որը սարսափել էր սելջուկ-թուրքերի առաջին հարձակումից, իր որդուն՝ Դավիթին 1021 թվականին ուղարկում է Վասիլ Բ. (976-1024 թթ.) կայսեր մոտ, առաջարկելով վերցնել իր հողերը, դրա փոխարեն տարածքներ տալ Բյուզանդիայի խորքերում: Դրանից առաջ Վասիլը նույն կերպ 1001 թվականին Բյուզանդիային էր կցել Հայոց Տայքը: Սենեքերիմը չի զրկվում իր գահից և իր ժողովրդի մի մասի հետ տեղափոխվում է Բյուզանդիայի խորքը՝ Սեբաստիա, այնտեղ ապահով շարունակում իր իշխանությունը: Բյուզանդիայի կայսրը Սենեքերիմից ստանում է 72 բերդ, 8 քաղաք, 400 գյուղ, 115 վանք: Իսկ Հովհաննես-Սմբատը բարեկամական կապեր հաստատելու համար Վասիլ կայսեր մոտ է ուղարկում Պետրոս կաթողիկոսին, որը կրթություն էր ստացել Բյուզանդիայում և հունասեր էր: Կայսրը հայոց թագավորին խոստանում է պաշտպանել նրա տերությունները թե՛ ներքին և թե՛ արտաքին թշնամիներից, թագավորին կատարյալ հնարավորություն է տրվում հանգիստ ապրելու մինչև իր օրերի վերջը, և նույնիսկ կայսերական գանձարանից դրամական նպաստ է ստանում: Իսկ դրա փոխարեն Բյուզանդիան որպես ժառանգություն Հովհաննես-Սմբատի մահից հետո ստանում է Անի քաղաքը: Արիստակես Լաստիվերցի պատմիչը Տրապիզոնի այս դաշնագրի մասին գրում է, որ այն եղավ հայոց կորստյան գիրն ու նամակը[191]: Ինքը՝ Պետրոս կաթողիկոսը, որն ընչաքաղց մարդ էր, այս դաշնագրության համար Վասիլից մեծաքանակ արծաթ և ընծաներ է ստանում: Թագավորը նրան չէր լիազորել այս վաճառքը: Սակայն Պետրոսը դավաճանորեն վաճառեց հայրենիքի անկախությունը: 1025 թվականին մեռնում է Խորամանկ և մեծ դիվանագետ Վասիլ կայսրը, որին փոխարինում է նրա Կոստանդին եղբայրը: Սա թագավորեց երեք տարի և դրանով վերջացավ հայկական դինաստիան:

1033 թվականին Պետրոսը հեռանում է Անիից, գնում բյուզանդացիների մոտ: Հովհաննես-Սմբատը կաթողիկոս է նշանակում Սանահինի վանքի առաջնորդ Դիոսկորոսին: Պետրոսի կողմնակիցները խիստ դժգոհ էին, ուստի թագավորը առաջարկում է Աղվանից Հովսեփ կաթողիկոսին միջնորդել և լուծել խնդիրը: Հովսեփը Անիում եկեղեցական մեծ ժողով է գումարում, որին մասնակցում են չորս հազար հոգևորականներ և իշխաններ: Ժողովը գահընկեց է անում Դիոսկորոսին, վերստին հաստատում Պետրոսին:

[191] Ա. Լաստիվերտցի, Պատմութիւն Արիստակեսայ Վրդ.. Լաստիվերտցվոյ, Թիֆլիս, 1912թ., էջ 17:

1040 թվականին Աղվանքի արևմտյան գավառները, որոնք Դավիթ Անհողինի տիրապետության տակ էին, լցվում են Դվինում տիրող քուրդ Աբուլսուար էմիրի զորքերով: Դավիթը, որն ուներ ընդամենը 10 հազար զինվոր, դիմեց Անիի, Սյունիքի և Աբխազիայի թագավորներին, որ եթե օգնական զորք չուղարկեն, կմիանա քրդերի հետ և կոչնչացնի նրանց երկրները: Օգնական ևս 10 հազար զորք ստանալով, դիմում է Հովսեփ կաթողիկոսի օգնությանը: Փոքրաքանակ զորքով Դավիթը ջախջախում է Քրդի մեծ բանակին:

Հաջորդ տարի մահանում է Հովհաննես-Սմբատ Հայոց թագավորը: Բյուզանդիայի Միքայել Ե. կայսրը պահանջում է, որ իրեն տրվի Անին ըստ Տրապիզոնի դաշնագրի: Պետրոս կաթողիկոսն ու Վեստ Սարգիսը ամեն ինչ անում էին դյուրացնելու բյուզանդացիների գործը: Վահրամ Պահլավունու հրամանատարությամբ հայոց 30 հազարանոց զորքը ճակատամարտում հաղթում է Անին «ստանալու» եկած բյուզանդական զորքին: Թագավոր է կարգվում Աշոտ Ե-ի որդին՝ 18-ամյա Գագիկ Գ-ն (1042-1045 թթ.): 1042 թվականին կայսր դարձած Կոնստանդին Մոնոմախը ամեն ինչ անում է վերացնելու հայոց թագավորության վերջին բեկորը: Նա պահանջեց Գագիկ Բագրատունուց կատարելու դաշնագրության պայմանը: Կայսրը պայմանավորվում է Դվինի էմիր Քուրդի հետ, որ նա թիկունքից հարվածի հայերին և որպես վարձ ստանա այն հողերը, որը կգրավի հայերից: Գագիկը նախ ջարդեց բյուզանդական զորքին, ապա դարձավ դեպի Քուրդի զորքերը: Վեստ Սարգիսը, որը ևս դավաճան էր, բյուզանդացիներին հուշեց, որ խորամանկ քայլերի դիմեն: Կայսրը Գագիկին հրավիրեց Կ. Պոլիս, իբրև խաղաղության դաշինք կնքելու: Գագիկը հասկանում և զգում էր լարած որոգայթը: Բայց մյուս դավաճանը՝ Պետրոս կաթողիկոսը, հորդորում, համոզում է, որ մեկնի: Պետրոս Գետադարձ կաթողիկոսը Հայաստանում ամենահարուստ մարդն էր: Նա ուներ սեփական 500 գյուղ և ապրում էր մի այնպիսի շքեղության մեջ, որի նմանը չէր կարող երազել Բագրատունյաց հարստության և ոչ մի ժառանգորդ: 1045 թվականին Գագիկը մեկնում է Կոստանդնուպոլիս ու այլևս չի կարողանում ետ վերադառնալ: Այսպես, Հայոց Բագրատունյաց թագավորությունը 158 տարի գոյատևելով, թուրքական հարձակումների շեմին ողբերգական ավարտ ունեցավ:

Պետրոս կաթողիկոսը դիմում է կայսրին՝ «Ի՞նչ կտաս, եթե Անին ու մյուս բերդերը քեզ հանձնեմ»: Կոնստանդինը մեծաքանակ գանձեր է ուղարկում ընչաքաղց կաթողիկոսին: Դա ամենասոսկալի դավաճանությունն էր: Սակայն դավաճանության համար էլ պարարտ հող էր պատրաստվել Բյուզանդիայի կողմից: Բյուզանդիայի Կոնստանդին Մոնոմախ կայսրը, ռազմավարական տեսանկյունից ոչ միայն զիջում էր իր նախորդներին, այլև իր անխոհեմությամբ ու սխալներով կործանման եզրին հասցրեց հենց իր երկիրը՝ երբեմնի մեծ ու հզոր Բյուզանդական կայսրությունը: Բյուզանդագետ Գ. Հերցբերգը գրում է. մինչդեռ առաջ Հայաստանի ռազմասեր լեռնային շրջաններն իրենք էին մեծ քաջությամբ պաշտպանում իրենց հայրենիքը, այժմ այդ վտանգավոր տեղերի պաշտպանությունը կախված է առավելապես Կ.Պոլսի կառավարության կանխատեսությունից, ուժից և միջոցներից: Անմիջական վնաս բերեց այն մեծ սխալը, որ արեց Կոնստանդին թագավորը... Նա դրամական հարկ դրեց արևելյան սահմանամերձ բնակիչների վրա, որոնք մինչ այդ ազատված էին հարկերից: Այս դրամական վճարումների փոխարեն Կոնստանդինն նրանց (իշխաններին) ազատեց մշտական զորք պահելու պարտավորությունից, մի զորք, որը մշտապես պատրաստ էր սահմանագլուխը պաշտպանելու: Այսքան անհեթեթ կարգադրությունների հետևանքով արձակվեցին վրաց և հայոց տեղական զորքերի մոտ 50 հազար զինվորները, իսկ բյուզանդական կենտրոնական իշխանության վրա դրվեց մի նոր ծանր պարտավորություն, որ նա, տարաբախտաբար, չկարողացավ կատարել ինչպես հարկն է»[192]: «Մեծ էր Բյուզանդիայի պատասխանատվությունը քաղաքակիրթ մարդկության առջև, - գրում է պատմաբան Լեոն: - Այս պատասխանատվությունը նա չիրագործեց: Պատճառը, անշուշտ, ներքին քայքայումն էր, բարոյական անկումը: Կործանելով Հայաստանը, այս հսկա երկիրը փաստորեն զրկեց իր արևելյան սահմանները ահարկու և արյունարբու գազանից պաշտպանելու հնարավորությունը»:

Սելջուկ-թուրքերը, որ սարսափում էին Բյուզանդիա անունից, տեսնելով նրա կոտրված թևերը ու վահանի բացակայությունը, համարձակորեն խուժեցին երկրի ներսը: 1049 թ. կայսրի ու Տուրղիլ-Բեկ սուլթանի միջև հաշտություն կնքվեց: Օգտվելով այս զինադադարից, Մոնոմախը կարգաթող, ապա ներքինացված քահանա, բայց և տաղանդավոր զորավար Նիկիփորի գլխավորությամբ մի զորաբանակ ուղարկեց Դվինի և Գանձակի քուրդ էմիրների դեմ: Նիկիփորը նախ անցավ Արցախի լեռները, գրավեց Գանձակը, հասավ մինչև Դերբենտ: Դվինի էմիր Աբուլսուարը և Գանձակի էմիր Փաղլունյանը իրենց պարտված ճանաչեցին և հանձն առան հին պարտավորությունները: Նիկիփորը պատանդ վերցրեց Փաղլունի որդի Արտաշիրին և վերադարձավ Կ. Պոլիս:

XI դ. երկրորդ կեսին թուրք-սելջուկները իրենց են ենթարկում ողջ Հայաստանն ու Հայաղվանքը: Ալփ-Արսլան սուլթանին հաջորդած Մելիք- շահի գահակալության ժամանակ (1072- 1092թթ.) որոշակի կարգ ու կանոն է հաստատում իրեն ենթակա երկրներում, արտոնություններ տալիս եկեղեցիներին: Նա առանձնապես բարյացակամ էր Խաչենի և Սյունիքի իշխան-

[192] Г.Ф.Герцберг, История Византии, М., 1987, стр. 227-228.

ների նկատմամբ: Սակայն նրա մահից հետո Սելջուկյան պետությունը սկսում է քայքայվել: Կրկին հանդես են գալիս տեղական անկախ իշխանությունները, թալանչիական հարձակումներ գործում մեկը մյուսի վրա:

1136թ. սեպտեմբերին գիշերվա ժամին Հայաղվանքի տարածքում տեղի ունեցավ ահավոր երկրաշարժ: Կործանվեցին Գանձակը, Փառիսոսը, Զրաբերդն ու Խաչենը: Տասնյակ հազարավոր մարդիկ մնացին փլատակների տակ: Այս աղետը սրտառուչ է նկարագրում Մխիթար Գոշը[193]: Իսկ Կիրակոս Գանձակեցին գրում է, որ երկրաշարժից փլվում է և Ալիրակ լեռը, և լցվելով ձորը, արգելում է գետակի ճանապարհը ու լճակ է առաջանում, որի մեջ ազնիվ ձկներ են բազմանում: Այս լիճը, որ նախկինում բնակիչները Մարիամ լիճ էին անվանում, այսինքն՝ աստվածամոր կամքով ստեղծված, հետագայում եկվոր բնակիչները տվել են Գյոլ-գյոլ (Կապույտ լիճ) անունը: Վրաց Դեմետրե թագավորը իր զորքը բերում է թալանի, իր հետ տանում է Գանձակի երկաթյա դռները: Աղվանից Տեր Ստեփաննոս կաթողիկոսը, որ փրկվել է աղետի ժամանակ, հաստատուն տեղ չունենալով, գալիս հաստատվում է Չարեքի դիմաց Քարհերձ վայրում: Գանձակի Կուճի Բատրատին ամիրան հրավիրում է Ստեփաննոս կաթողիկոսին օրհնելու Գանձակի ջուրը: Գանձակի մահմեդական բնակչությունը գազազում է, կալանավորում իրենց ջուրը խաչով «պղծած» Ստեփաննոսին: Նրա փոխարեն կաթողիկոս է օծվում Տեր Հովհաննեսը, որը նստում է Գարդմանքի Չարեք բերդի մոտ Քարհերձում, ապա տեղափոխվում Միափոր գավառ, այնտեղ հիմնում Խամշի վանքը:

Փաղլունյան տոհմի ներկայացուցիչները, որ վարչական կենտրոն էին դարձրել Գանձակը, տիրություն էին անում դաշտային մասերում: Սեպի պես խրվելով Հայոց արևելից կողմանց միասնության մեջ, նա դարձավ տեղական հինավուրց իշխանությունների ախոյանն ու նրանց մի մասի ոչնչացման պատճառը[194]: Առանի դաշտային տարածքներում իշխող Առանշահիկ իշխանները ստիպված էին քաշվել լեռները՝ ճնշվելով Գանձակի մահմեդական քուրդ իշխաններից: Իսկ մի մասն էլ, վերցնելով իրենց ընտանիքները, թափառում էին օտար երկրներում: Դրանցից էր և հինավուրց Առանշահիկներից սերվող Օշին իշխանը, որը 1123թ. հեռանալով հայրենի Ուտիքից, Միջերկրականի ափին Կիլիկիայում հիմնեց հայկական նոր իշխանություն[195]: Օշին իշխանի հաջորդն էր Հեթում Ա-ն, որի անունով էլ թագավորական հարստությունը կոչվեց Հեթումյան: Օշին իշխանի հայրենիքը

[193] Մ. Գոշ, Հայ Գանձակ, Ալիշան, Հայապատում, էջ 361
[194] Կ. Գանձակեցի, Պատմություն Հայոց, Եր., 1961, էջ 117 (այսուհետ՝ Գանձակեցի)
[195] Բ. Ուլուբաբյան, էջ 95

Ուտիքի Շակաշեն (Արշակաշեն) գավառն էր, Մայրեաց ջուրքը, որ հեռու չէր Գանձակից[196]: Քուրդ էմիրից նեղվելով Բաղաց Կապան էր փոխադրվել Աղվանից կաթողիկոս Ստեփանոսը, որը մահացավ Սյունաց Վահանավանքում: Երկրաշարժից հետո Արցախի և Ուտիքի վրա է հասնում մի նոր աղետ, արդեն Գանձակից: Քաղաքի շահապ (քաղաքագլուխ) կարգված Խուհտուղտին ապստամբում է Մասուդ սուլթանի (1134-1155թթ.) դեմ, որը Մելիքշահի թոռն էր, մեծ զորքով շարժվում է շրջակա գավառների վրա, նպատակ ունենալով ընդարձակել իր տիրապետության սահմանները և հիմք դնել մի նոր ամիրության: Ինչպես պատմում է Մխիթար Գոշը, նա 1142թ. գալիս է Կաթողիկոսի Քար կամ Կարապետի Քար (Մայրաքաղաք) կոչվող բերդը, պաշարում դրանք, ավերում, հրկիզում ամեն ինչ, քանդում եկեղեցիները[197]: Խուղտուղտի ապստամբությունը ճնշելու համար սուլթանն ուղարկում է Չոլի զորավարին: Նա պատժում է ապստամբին, հանելով նրա աչքերը, ապա շարժվում դեպի Արցախ, գրավում բերդերը, ավերում եկեղեկիներն ու բնակավայրերը, սրի քաշում շատերին, մեծ մասին գերի տանում: Սամուել Անեցին պատմում է, որ Չոլին խաբեությամբ իր մոտ է կանչում Խաչենի իշխաններին, կալանավորում նրանց[198]: 1145-1146 թվականներին Չոլին իր զորքով կրկին ասպատակում է Խաչենը, որի իշխանների անհնազանդությունից գազազել էր թուրք զորապետը, ավերում է ամրոցները, վանքերը: Գոշը դառնությամբ գրում է, որ հրկիզում է նաև Դադի վանքը: Այդ ժամանակներում Հայաղվանքի բնակչությանը հաճախ էր օգնության ձեռք մեկնում Վրաստանի թագավորը, որի հզորությունը օրըստօրե աճում էր: Խաչենի իշխաները ստիպված էին մշտական պատերազմների մեջ լինել Գանձակի ամիրայության դեմ, պաշտպանել իրենց ինքնուրույնությունը: Այս մասին հարուստ տեղեկություններ են պահպանել Խաչենի վիմագրերը: Այսպես, Հաթերքի տեր և Վերին Խաչենի իշխանաց իշխան Հասանը 1182թ. գրում է, որ 40 տարի շարունակ շատ պատերազմներ է մղել և հաղթել իր բոլոր թշնամիներին[199]: Երբ Սելջուկյան հսկայածավալ տիրապետությունը քայքայվում էր, տեղական կառավարիչները իրենց ինքնիշխան էին զգում և ազատորեն թալանում բնակչությանը: Շատ դեպքերում իշխանները ստիպված էին լինում իրենց դուստրերին կնության տալ բռնակալին, խնամիանալով փրկել իրենց իշխանությունը: Դա գրգռում էր մյուս իշխաններին, տեղի տալիս թշնամության: Խաչենի ներսում սկսվում

[196] Ս. Անեցի, Հաւաքմունք ի գրոց պատմագրաց, Վաղարշապատ, էջ 117
[197] Հայապատում, էջ 386, տես նաև Բ. Ուլուբաբյան, էջ 115: Կաթողիկոսի քարը գտնվում է ԼՂՀ Մարտակերտի շրջանի Մաղավուզ գյուղի դիմաց, Թարթառի աջ ափին, այժմ կոչվում է Կաթողիկոսասար կամ Մայրաքաղաք:
[198] Անեցի, Հաւաքմունք ի գրոց պատմագրաց, էջ 132
[199] Բ. Ուլուբաբյան, էջ 118

են նեքին անհաշտ կռիվներ: Այսպես, օրինակ, Խոխանաբիրդի իշխան Գրիգորին փեսայացել էր Տողանը, որը որպես կառավարիչ նստում էր Չարաբերդ (Զրաբերդ) ամրոցում: Գրիգորի տոհմակից Հասանը իր դստերը տվել էր թուրքմեն առաջնորդից մեկին, ձգտելով իր փեսայի միջոցով ազդեցության նոր ոլորտներ ձեռք բերել: Գրիգոր ու Հասան իշխանները թշնամանալով, անհաշտ կռիվներ էին մղում իրար դեմ: Իսկ Տողանը իր աներոջ միջոցով ձգտում էր գրավել ողջ Առանը: Գրիգոր իշխանը (1147թ.) միանալով Տողանին, զորքով գալիս է Արցախի Հերքան գավառը (հետագայում Գյուլիստանի մելիքություն). Կայծի ծառ կոչվող լեռան մոտ, որը գտնվում է Հերքան (Գյուլիստան կամ Ձեվու) բերդի մոտ[200]: Նրանք ընդհարվում են Գուրբուղայի փեսա Ռովադի դեմ: Տողանը առաջարկում է հպատակվել, սակայն Ռովադը, որի թուրքմենական զորքը Դիվախոռ լեռան վրա էր, հարձակվում է և մինչև վերջին մարդը կոտորում հակառակորդին: Սպանված Գրիգորին բերում են Գանձասար, թաղում նախնեաց տապանատանը: Նմանօրինակ կռիվներն անվերջ էին: Օգտվելով տիրող այս անիշխանությունից, Նախճավան նահանգի տեր դարձած էլկտուզ ամիրան նվաճում է Գանձակը, ապա Ատրպատականում մահացած Մասուդ սուլթանի տեղում թագավոր կարգում Սալան-շահին, ինքը դառնում Աթաբակ (սուլթանի խնամակալ), տիրանում Արևելյան Հայաստանին և Վրաստանին:

Սակայն նրան չի հաջողվում տիրել Արցախի իշխաններին, քանի որ նրանց բերդերը անմատույց էին, Արցախի տերերն ու ժողովուրդը անհնազանդ: Այս երկարատև պատերազմներից տրոհվում էին Արցախիի նախարարական տները: XII դարի երկրորդ կեսին Խաչենի իշխանությունը երեք մասի էր բաժանվել: Մեկի նստավայրը Խաչենագետի աջ կողմում գտնվող Խոխանաբերդն էր, կամ նրա ստորոտում գտնվող «Դարպասներ» ապարանքը, մյուսինը Հաթերք ամրոցն ու Ականաբերդը, որ Թարթառ գետի ձախ ափին էր, երրորդը Հանդաբերդում, որ Ծար գավառում էր: Այս իշխանական տները ոչ անցյալի ընդհանուր արմատի պատճառով համերաշխ էին իրար հետ: Սրանց զուգահեռ կային այլ մանր իշխանություններ, որոնք ենթակա էին երեք հզորներից մեկին, որը գահերեց էր մյուսների նկատմամբ: Հնուց ի վեր պահպանվում էր Իշխանաց իշխան տիտղոսը, որն անցնում էր այն տոհմին, որի առաջնորդը ավելի ազդեցիկ դիրք ուներ և զորեղ էր: Ուրեմն, եթե տեղի իշխանները վաղուց կորցրել էին թագավորական կարգավիճակը, ապա պահպանել էին Իշխանաց Իշխան տիտղոսը, որը ամբողջացնում, մեկ ընդհանուր համակարգի մեջ էր փորձում պահել երկրամասի պաշտպանությունն ու ինքնությունը: XII դարում հզորացավ Վրացական պետությունը, հատկապես Թամար թագուհու օրոք (1184-1213թթ.): Ստեղծվեց հզոր բանակ: Վրաստանում թագավորում էր Բագրատունիների տոհմը, որի ակունքները սկիզբ են առնում հայ Բագրատունյաց իշխանական տնից: Սպերում, Տայքում և Կղարջքում տիրող Բագրատունյաց ճյուղը, IX դարում ընդունելով քաղկեդոնական դավանանք, վերաճեց վրացական ազգային հարստության: Այն իր հզորացման ակունք դարձրեց հայ իշխանների հետ միասնականությունը, համատեղ ծրագիրը՝ այն է անդուլ պայքարը թուրք- սելջուկների դեմ: Վրաց թագավորությունը, որի զորքերի մեջ կռվում էին հայկական զորամասեր, կարողացավ ոչ միայն իր երկիրն ազատագրել ասպատակիչներից, այլև նրանց դեմ մղած հերոսական ճակատամարտերում փրկել սահմանակից հայկական նահանգները՝ Անի մայրաքաղաքով: Վրաց .թագավորության հզորացման մեջ զգալի դեր ունեն Զաքարյան իշխանները: Հայոց զորքերի սպարապետ Սարգիս Զաքարյանն իր զորքով մտնելով վրաց-հայկական զինակցության մեջ, շուտով դարձավ զորքերի գլխավոր հրամանատարը, խոշոր դեր կատարելով թագավորության ամրապնդման և հզորացման գործում[201]: Ինչպես գրում է պատմաբան Աշոտ Հովհաննիսյանը, «Վրաց Բագրատունիները հանդես էին գալիս Հայաստանում ոչ որպես նվաճողներ, այլ որպես գահաժառանգորդներ, որին աջակցում էր հայ ժողովուրդը: Վերամիավորելով Հայաստանն ու Վրաստանը, վրաց Բագրատունիները չէին դիտում Հայաստանը որպես իրենց անձնատուր եղած մի երկիր, այլ որպես իրենց տոհմին պատկանած մի տիրույթ, որի ֆեոդալական ազատությունները վերականգնվել էին հայ և վրաց ուժերի համատեղ ջանքերով»: Այս իմաստով նրանք փորձում ին իրականություն դարձնել դեռևս VIII դարում ծնված Բագրատունյաց Համակովկասյան ընդհանուր պետություն ստեղծելու ծրագիրը:

Վրացական թագավորության մեջ ամիրսպասալարության ու աթաբակության պաշտոնները ժառանգաբար պատկանում էր Զաքարյան իշխանական տանը: Հետաքրքիր է, որ Սարգիս Զաքարյանը հայոց տարբեր հատվածները ի մի բերելու նպատակով իր չորս դուստրերին կնության տվեց Հյուս-արևելյան Հայաստանի ամենաազդեցիկ իշխանական տների պայազատներին, խնամիական կապով ի մի բերելով երկիրը: Անշուշտ, Զաքարյանները երազում էին վերականգնել հայոց թագավորությունը, որը մոտ էր իրական դառնալուն: Զաքարյանները բազում հաղթական պատերազմների միջոցով ազատագրում են Գարդմանքը, Քարհերդը, Երգեվանքը, Տավուշը, Կածարեթը, Տերունականը, Գագը և Շամքորը[202]: Որտեղի՞ց էին սերում Զաքարյանները: Այս հարցին սպառիչ պատասխան է տալիս Ի-

[200] Հերքանը Գյուլիստանն է, քանի որ ,Հայապատումե էջ 387-ում նշվում է Պարիս գյուղը, որը Գյուլիստանի բնակավայրերից է:

[201] Բ. Ուլուբաբյան, էջ 125:

[202] Կ. Գանձակեցի, էջ 163 :

վանե Զաքարյանի ընդարձակ վիմագիրը՝ Հայոց աշխարհը սելջուկներից ազատագրելու և ի հավերժացումն նոր վախճանված Զաքարիայի հիշատակի, Հաղարծնի վանքի գավթի վերանորոգման մասին, որը տեղադրված է արտաքուստ, արևմտյան դռան բարավորից վերև. «Կամաւ ամենակալին ԱՅ. Այս մեր գիր յիշատակի է և արձան մշտընջենաւոր որդեաց մեծի Սարգսի յազգե Բագրատունեան՝ Իվանէի և Զաքարէի, յորժամ նախախանամութիւնն ԱՅ. էհաս յարարածս և ետ... արառին սէփական ժառանգութեանն նախնեաց մերոց, ես ի ծեռս մեր յառաջ զանառիկ դղեակն Անբերդ, և զքաղավորանիստ քաղաքն Անի, ապա զամուրն Բջնի, զՄարանդ, միչք և գավազանք ի Թաւրեժ, զԿարնոյ քաղաք մինչև Խլաթ, զՇաքի և զՇրուան, Պարտաւ, մինչև Բելուական և այլ զբազումս իւրեանց սահմանաւք, զոր ավելորդ համարեցաք յիշատակել...»[203]: Ըստ երևույթին, այս Զաքարյանները հայաստանյան թագավորական տան շառավիղներից են: Հենց դա է եղել պատճառը, որ որպես արյունակից հարազատներ ընդունվելով Վրաց Բագրատունիների կողմից, այդքան մեծ պատվի և վստահության են արժանացել Վրաստանի թագավորների կողմից, նշանակվելով երկրորդը՝ իրենցից հետո: Եւ Զաքարյան Բագրատունիները, անշուշտ, Բագրատունյաց վրացական ճյուղի հետ համատեղ, սրբությամբ իրականացնում էին Աշոտ Մսակերի, հավանաբար, նաև Կույր Աշոտի՝ Կովկասյան համահավաք պետության ստեղծման ծրագիրը:

Սարգիս ամիրսպասալարը (սպարապետ) իր մի դուստրին Խորիշահին, կնության էր տվել Նեքին Խաչենի (Խոխանաբերդի) տեր Վախտանգ-Տանգիկին, Դոփին տվել էր Վերին Խաչենի իշխանության Ծարա ճյուղի տեր Հասան Ա-ին, Նանային՝ Լոռու Կյուրիկյան Աբասին, իսկ Նրջիսը հարս էր գնացել Դսեղի Մամիկոնյանների տունը: Հայաստանի ազատագրված նահանգի տերերը տարբեր աստիճանի կախվածություն ունեին Զաքարյաններից: Սակայն Ներքին Խաչենի տերերը իրենց համարում էին իրենց երկրամասի ինքնակալ իշխանապետները[204]: Այս գավառի տերերը սերում են Աղվանքի թագավոր Գրիգոր-Համամից ու նրա որդի Սահակ Սևադայից և համարվում են Բագրատունյաց տոհմի ճյուղավորումներից մեկը: Նրանց զուգահեռ ճյուղը տիրում էր Հաթերքում: XII դարի կեսերից Արցախի գահերեց իշխանը կամ իշխանաց իշխանը Հաթերքի տեր Հասանն էր[205] (1142-1182թթ.), որի մահից հետո գավառի (Վերին Խաչենի) տեր է դառնում նրա

[203] Դիվան հայ վիմագրության, հ. II, Եր., 1977, էջ 22:
[204] Բ. Ուլուբաբյան, էջ 134
[205] Առանի, ինչպես և Սյունիքի իշխանական տներում այդ ժամանակներում տարածված էր արաբական տիրապետության ժամանակաշրջանից ընդօրինակած մահասան անունը, որը նշանակում է գեղեցիկ:

ավագ որդին՝ Վախտանգը, որն ուներ ևս հինգ եղբայր՝ Վասակը, Սմբատը, Գրիգորը, Խոյդանը և Գրիգորիսը: 1184թ. Գանձակում նստող Աղվանից կաթողիկոս Ստեփաննոսի խարդավանքներից ու դավերից հալածված, ժամանակի մեծագույն գիտնականներից մեկը, մեծ իրավագետ, պատմիչ և առակագիր Մխիթար Գոշը ապաստան է գտնում Հաթերքում՝ իշխանաց իշխան Վախտանգի մոտ: Եվ իր հռչակավոր Դատաստանագիրքը սկսել էր գրել Հաթերքում, որի մասին գրում է գրքի հիշատակարանում[206]: Գոշը վկայում է, որ Վախթանգը այլ իշխանների գլխավորն է, և նրա իշխանությունն առավել նշանակալից և հուսատու բեկորն էր կորսված հայոց թագավորության: Վախտանգն ու նրա հինգ եղբայրները 1191թ. Մխիթար Գոշի համար Աղստևի հովտում[207] կառուցում են Նոր-Գետկի վանքը, որը հաստատվում է այստեղ թողած վիմագիր արձանագրությամբ: Գոշը իր Դատաստանագրքի օրինակներ է ընծայել իշխանաց իշխանին: Ուրեմն, այն արդեն կիրառություն էր գտել Արևելյան Հայաստանի երկրամասում: Չնայած Խաչենի իշխանությունը ևս մտնում էր վրաց - հայկական զինակցության մեջ, նրանք իրենց ամուր բերդերի վրա հենվելով ինքնուրույն էին և անկախ: Դրա ապացույցն է և մի օրինակ, որը նկարագրում է վրաց տարեգիրը, ըստ որի իրենց թագավոր Դավիթը հռչակավոր մի նժույգ էր գնել Հաթերքի մեծ իշխան Վախտանգ Խաչենեցուց՝ դիմացը վճարելով Գարդմանք բերդն ու մի ավան[208]: Ձիերն ու ծիաբուծությունը դեռևս հարգի էին Արցախում, դարեր շարունակ պահպանվում էր այս մշակույթը: Ինչպես ցույց են տալիս Արցախյան խաչքարերի ու տապանաքարերի վրա սովորական դարձած ձիերի ու հեծյալների բարձրաքանդակները, ձին շարունակում էր որպես պաշտամունքի առարկա մնալ արցախցիների համար: Իսկ որ արցախյան ցեղի ձիերը ռազմական տեսանկյունից ամենադիմացկունն էին, դա վաղուց էր հայտնի: Խաչենի իշխանությունը այդ ժամանակներում շարունակում էր հերոսաբար ետ մղել թուրք-սելջուկների բռնատիրության մնացորդների հարձակումները: Խաչենցիները կռվում էին ոչ միայն Խաչենում, այլև Հայաստանի այլ մասերում: Օրինակ, Վախթանգի եղբայրը՝ Վասակը, թուրքերի դեմ իր զորքերով կռվում է Սյունիքում 1201 թվականին, որտեղ և նահատակվում է: Ուրեմն՝ Հայաստանի արևելյան հատվածում գոյություն ուներ պաշտպանական մի ընդհանուր համակարգ՝ Զաքարյանների գլխավորությամբ: 1212 թվականին Վախտանգի մահից հետո, քանի որ մահացել էին

[206] Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Ե-ԺԲ դարեր, Եր., 1988թ., էջ 242, Գիրք Դատաստանի, տես նաև՝ Մխիթար Գոշ, Հիշատակարան սակավաք, Եր., 1988, էջ 242:
[207] Այժմ յան. Դիլիջան և Իջևան քաղաքների միջև:
[208] Վրաց աղբյուրները Հայաստանի մասին, Բ, էջ 1:

նաև նրա երկու որդիները, Իվանե Զաքարյան աթաբակը, որը ձգտում էր Հայաստանի բոլոր իշխանությունները հավաքել Զաքարյան զարմիկների կամ թե նրանց հետ խնամիացած տոհմերի ձեռքում, ժառանգորդ չունեցող Հաթերքի իշխանությունը միացնում է Վերին Խաչենի կամ Ծարա իշխանությանը: Այստեղ իշխանական աթոռին տիրում էր Իվանեի քույր Դոփը, որի ամուսինը մահացել էր: Իսկ Վախտանգի մահվանից հետո նրա կին Արզու Խաթունը, որը Տփղիսի ամիր Քուրդ Արծրունու դուստրն էր[209], շինարարական լայն գործունեություն ծավալեց, կառուցելով Դադի վանքի փառավոր Կաթողիկեն, ձեռագործ զարմանահրաշ ծածկոցներով ու վարագույրներով զարդարեց վանքի բեմը: Իսկ Ծարում Դոփը իր հզոր եղբոր Իվանեի օժանդակությամբ իր իշխանության համար մի արտոնյալ վիճակ էր ստեղծում Արևելյան Հայաստանում, և պատահական չէ, որ Վերին Խաչենի իշխանությունը, ինչպես և ողջ իշխանական տոհմը կոչվում էր «Դոփյան»: Այս իշխանությունը բավականին ընդարձակ տարածություն էր ընդգրկում Սևանի շրջակայքից (Գեղարքունի) մինչև Արցախի Դաշտային շրջանը:

Տեր-Ստեփաննոս Աղվանից կաթողիկոսը, որը հալածվելով մահմեդականների կողմից, սկզբում տեղափոխվում է Չարեք բերդի դիմաց գտնվող Քարհերձի վանքը, ապա տեղափոխվում Միափոր գավառ, այնտեղ հիմնում Խամշի վանքն ու զբաղվում ժամանակագրությամբ: Ահա նախկին կաթողիկոսը իր տարեգրությունում հայտնում է. «ՈԾ (1201) սպարապետքն Հայոց ու Վրաց Զաքարէ և Իվանէ առին զԴվին և կոտորեցին և թափեցին զաշխարհս Հայոց ի տաճիկեն, ի Կուռ գետոյ մինչև յԵրասխ և Բարկուշատ, մինչ ի Մժնկերտ»[210]: Ապա հայտնում է, որ Զաքարեն և Իվանեն 1211 թ. թուրքերից գրավել են Ականան ու Զրաբերդը: Իսկ հետո լրացնում. «ՈԿԹ (1220) թիւն ագևոր աստղն (գիսաստղ) ելավ և զթաթարն վրացին կոտորեաց ի Կռոմանա ջրին»[211]: Գիտնականները կարծում են, որ այն Կուրակ գետն է: Մոնղոլների 20 հազարանոց զորքով այս հետախուզական արշավանքի ժամանակ Գանձակ չեն մտել, այլ անցնելով Դերբենտը, պատերազմներ մղելով արշավել են մինչև Ղրիմ:

Այս ժամանակներում ևս չէին դադարում կրոնական վեճերն ու ընդվզումները բյուզանդական կրոնապետների և հայոց միաբնակ եկեղեցու միջև: Բյուզանդական եկեղեցու պետերն ու արքունիքը երբևէ չէին հրաժարվում իրենց հայակուլ քաղաքաց նկրտումներից, քանի որ նրանց կարծիքով հայ ժողովրդի մեկուսի գոյությունը խանգարում էր բյուզանդական քաղաքական ու կրոնական տիրապետությանը արևելքում: Հույների նոր

[209] Կ.Գանձակեցի, էջ 215:
[210] Մանր ժամանակագրություններ, XIII-XVIII դդ.., հ. 1, Եր., 1951, էջ 32:
[211] Նույն տեղում, էջ 38:

առաջարկությունները 1179 թվականին քննարկվեցին Հռոմկլայում, որը Կիլիկյան հայոց կաթողիկոսների աթոռանիստն էր: Եկեղեցական ժողովին հրավիրել էին նաև Հյուսիս-արևելյան Հայաստանի կրոնական առաջնորդներին ու վարդապետներին, որոնք Կիլիկիա գնալու փոխարեն ուղարկեցին իրենց համախոսական թուղթը միութայն մերժումով: Վերջապես, շատերը համոզվեցին, որ Բյուզանդական եկեղեցու առաջնորդները «միություն» անվան տակ հասկանում էին իրենց գերիշխանությունը և մյուսների վերացումը: Այս մերժմանը ի պատասխան կայսրը դաժան միջոցներ է ձեռնարկում հայերի դեմ: XIII դարի սկզբին քաղկեդոնության պարտադրումը հայերին ձեռնարկեց հայ ամենահեղինակավոր պետական գործիչը Զաքարե ամիրսպասալարը: Հավանաբար, հայերի և վրացիների հավատքի մեջ տարբերությունները որոշ դժվարություններ էին հարուցում նրա միապետական տիրապետության համար: Եկեղեցու առաջնորդները դեմ են կանգնում Զաքարեի նորամուծություններին: Ի վերջո, մեզ հայտնի է պատմությունից, որ քաղկեդոնության նկատմամբ զիջումները հող նախապատրաստեցին Կիլիկյան հայկական թագավորության կործանման համար: Զաքարե ամիրասպասալարի նորամուծությունների դեմ կանգնեց Հաղբատի վանքի առաջնորդ Գրիգորիսը, որը հենց Զաքարեի քրոջ Դոփի որդին էր:

Բյուզանդիան ու նրա եկեղեցին, ինչպես և Նրանց քաղաքականության հետագա ժառանգորդները ոչ մի կերպ չէին հաշտվում այն մտքի հետ, որ իրենց կողքին գոյություն ունի մեկ այլ ինքնուրույն եկեղեցի: XIII դարի կեսին Հռոմի պապը դիմում է Կիլիկիայի Հայոց թագավոր Հեթումին առաջարկելով իրենց գերիշխանությունը, քանի որ իբր միայն Հռոմի աթոռը կարող է որոշել բոլոր եկեղեցիների ու քրիստոնյա երկրների կարգն ու կանոնը[212]: Հետագայում ևս հայոց ինքնուրույն դավանանքի դեմ չդադարեցին լատին բռնատիրական հարձակումները, ինչպես և երբեք չթուլացավ հայ եկեղեցու արևելյան թևի վարդապետների պայքարի թեժությունը: XIII դարը, թերևս, ամենածանրն էր հայոց, ինչպես և նրա հյուսիս-արևելյան հատվածի Ուտիքի և Խաչենի (Արցախ) համար: Այս նոր աղետի ակունքը Կենտրոնական Ասիայում բնակվող թաթար-մոնղոլներն էին, որոնք 1206 թվականին Տեմուչինի գլխավորությամբ մեծ և հզոր պետություն էին ստեղծել: Հետախուզական մի քանի արշավանքներից հետո, որոշելով ուժերի հարաբերակցությունը, սկսեցին նվաճողական արշավանքները: Իսկ մինչ այդ Խաչենում, ինչպես և ողջ Հյուսիս-Արևելյան Հայաստանում Զաքարյան իշխանների վարած քաղաքականության շնորհիվ մի ծաղկուն շրջան էր սկսվել, երբ ամենուր նոր վանքեր, տաճարներ, բերդեր էին կառուցվում:

[212] «Թուղթ Կոնստանդայ կաթողիկոսի Հայոց զոր գրեաց առ Հեթում թագավորն...», Գիրք թղթոց, Թիֆլիս, 1901, էջ 501-50:

Ներքին Խաչենի տեր Վախտանգի մահից հետո (1214թ.), նրա տեղը գրավում է ավագ որդին՝ Հասան-Ջալալը: Թե միջնադարի և թե ուշ շրջանի մատենագիրները միշտ գովեստով են խոսել 13-րդ դարի հայ ականավոր գործչի մասին: 1216 թվականին նրա եղբոր՝ Սմբատի կանգնեցրած խաչքարի արձանագրությունում Հասան-Ջալալին անվանում է «արքա»[213]:

Եթե նրա «Հասան» արաբական անունը նշանակում էր «գեղեցիկ»[214], ապա «Ջալալը» նույն արաբերենով նշանակում է «փառք, վեհություն, մեծություն»[215]: Հասան-Ջալալ անվանը արձանագրություններում ավելացված է նաև «Դավլա» անունը, որը դավլաթ բառից է, և նշանակում է «հարստություն, մեծություն, իշխանություն»[216]: Հասան-Ջալալը Հաթերքի իշխանության թուլանալու պատճառով, ինչպես և անձնական բնատուր օժտվածության շնորհիվ շուտով իշխող դիրք է գրավում ողջ Խաչենում և գահերեց դիրք գրավելով, կոչվում Իշխանաց-իշխան կամ թագավոր: Նրա կենսագրության մեջ նշանակալից մաս է կազմում շինարարական գործունեությունը, որը ծավալել էր ոչ միայն հայրենի Խաչենում, այլև նրա սահմաններից դուրս՝ Հաղբատում ու Կեչառիսում: Հասան-Ջալալը եկեղեցիներ է նորոգում, կառուցում նորերը, կանգնեցնում խաչքարեր, օժանդակում մատյաններ ստեղծելուն, դրանք նվիրում եկեղեցիներին: Առաջին արձանագրությունը, որը պատմում է իշխանաց իշխանի շինարարական գործունեության մասին, պահպանվել է նրա նստավայրից՝ Դարպասներ դղյակից ոչ հեռու Վաճառ ավանի եկեղեցու ավերակներում. «Ես Հասան որդի Վախտանգի և Խորիշահի, տէր Խաչենի, շինեցի սուրբ եկեղեցիս... ՈՀԸ (1229թ.)» : Գանձասարի տաճարի բարձրաքանդակներում պահպանվել է Վաճառի եկեղեցու մանրակերտ-քանդակը, որից դատելով կարելի է եզրակացնել, որ այն հիմքում կլոր է եղել, որ հայտնի է «զվարթնոցատիպ» անունով, ըստ երևույթին կրկնել է Անիի Հովվի եկեղեցու հորինվածքը: Վաճառ ավանը այդ ժամանակ առևտրական կարևոր կենտրոն էր, որը մեծ նշանակություն ուներ Առանի դաշտային վայրերում ապրող խաշնարածների և լեռնային բնիկ ժողովրդի (հայերի) միջև փոխհարաբերություններում: Ցավոք, այս ավանը կործանվեց երկրաշարժից: Խաչենի խաչքարերին յուրահատուկ է պատկերաքանդակների առատությունը, որոնք աշխարհիկ բնույթ ունեն: Այստեղ պատկերված են զինվորներ, ռազմական ու կենցաղային զանազան տեսարաններ: Հասան-Ջալալ իշխանը 1216 թ. ձեռնարկում է Գանձասարի վանքի շինարարությունը: Նա այս գործում ընդգրկում է ժամանակի

[213] Բ.Ուլուբաբյան, էջ 174:
[214] Հ. Աճառյան, հայոց անձնանունների բառարան, հատոր Գ, էջ 51:
[215] Նույն տեղում, հատոր Դ, էջ 268:
[216] Նույն տեղում, հատոր Բ, էջ 76:

հայ շինարարական, ճարտարապետական և քանդակագործական լավագույն ուժերը: «Թաթար-մոնղոլների առաջին արշավանքների, ավերի ու ավարի միջոցին նրանք ասես վերացել էին ժամանակից ու տարածությունից և կառուցում էին հավերժության համար, հաստատելով այն պարզ ճշմարտությունը, որ արարիչ ձեռքը անհնար է կտրել» - գրում է պատմաբան Բ. Ուլուբաբյանը[217]: Վանքի շինարարությունն ավարտվում է 1238թ., իսկ օծումը տեղի է ունենում 1240թ., որին ներկա էին Աղվանից կաթողիկոս Ներսեսն ու ողջ Հայաստանից հյուր եկած 700 եպիսկոպոսներ: Վանքի մասին գովեստով է գրում օծմանը ներկա եղած պատմիչ Կիրակոս Գանձակեցին, այն անվանելով «երկնանման տաճար փառացն աստծո»[218]: Ճարտարապետության պատմության մասնագետ ռուս գիտնական Ա. Լ. Յակոբսոնը ԳանՆձասարի վանական համալիրի մասին իր ուսումնասիրություններում գրում է, որ այն պետք է համարել «XIII դարի հայ ճարտարապետության հանրագիտարանը»[219]: Իսկ Փարիզի Սորբոնի համալսարանի բյուզանդական ճարտարապետության պրոֆեսոր Շարլ Դիլը, բնութագրելով հայ ժողովրդի ճարտարվեստի գործերից համաշխարհային մշակույթի գանձարանը մտած հինգ ամենաուշագրավ երևույթները, Վանա լճի Ախթամարի եկեղեցուց ու էջմիածնի Հռիփսիմեի տաճարից հետո երրորդը համարում է Գանձասարի վանքը[220]:

Այժմ տեսնենք, թե ինչ վիճակում են Արցախի իշխանական տները: Խաղբակյան իշխաններից Ջաջառը բնակվում էր Գառնաքարի ծորում: Ջալալյան իշխանը ամրացել էր Խոխանաբերդում, Վախտանգ թագավորազնը՝ Հաթերքում, Դոփի որդի Գրիգորը՝ Ծար բերդաքաղաքում: Կյուրիկե Գ-ի որդիները բնակվում էին Գարդմանքի Սլգնաբերդում, Վահրամ իշխանը՝ Շամքորում, Շահնշահը՝ Լոռիում: Մեծ Կողմանքում իշխում էր Շիրանշահանց իշխանական տոհմը: Տեր Հովհաննեսի միջոցով, որ իրենց տոհմից էր, վերանորոգում են Գլխո և Եղիշե առաքյալի վանքերը, հիմնում Գյուլիստանի Միջի ու Վերի վանքերը, ամրացնում Գյուլիստանի բերդերը:

Մինչ թաթար-մոնղոլների գալը Հայաղվանքին մի նոր պատուհաս է հասնում Իրանից: Փախչելով ու հալածվելով թաթար-մոնղոլների ասպատակություններից, Խորասանի սուլթան Ջալաէդդինը իր զորքով գալիս,

[217] Բ.Ուլուբաբյան, էջ 117:
[218] Գանձակեցի, էջ 270:
[219] А.Л.Якобсон, "Из истории армянского средневекового зодчества", Исследования по истории культуры народов Востока. Сборник в честь И.Орбели, М.,-Л., 1960, стр. 144-158.
[220] Թ. Թորամանյան, «Հայկական ճարտարապետության փոխազդեցության շուրջը», Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, Եր., 1948, էջ 25:

գրավում է Գանձակը, օգտվելով անիշխանությունից ու վրացական պետության թուլացումից, ասպատակություններ է սփռում շուրջը. 1255թ. գրավում ու թալանի ենթարկում Թիֆլիսը[221]: Սակայն նա, ի վերջո, պարտվում է Աղվանք հասած թաթար-մոնղոլներին: Այսպես, չարն ու համայն կոտորածը կրկին հասան Հայաստան: Մոնղոլական 30 հազարանոց բանակը Չարմաղանի հրամանատարությամբ անցնում է Արաքսը, առանձին զորաջոկատների բաժանվելով, ասպատակում տարբեր ուղղություններով՝ Խաչեն և Ուտիք, Վրաստան, Հյուսիսային Հայաստան: Մոնղոլները պաշարում են Անին, ի վերջո, գրավում այն: Ինչպես վկայում է Կիրակոս Գանձակեցին, մոնղոլները իրենց համար որպես ձմեռոց են ընտրում Կուր-Արաքսի բարբեր հովիտը, նրա Մուխանք դաշտը, «լի ամենայն բարությամբ՝ ջրով, փայտով, մրգով և որսով»[222]: Այստեղից նրանք ասպատակություններ են սփռում շրջակա երկրների վրա: Մոնղոլները, 1231-32թթ. հանկարծակի հարձակվում են Գանձակ քաղաքի վրա, որի բնակիչների մեծ մասը պարսիկներ էին, փոքր մասը՝ հայեր[223]: Բնակիչները, տեսնելով այս պատուհասը, հրկիզում էին իրենք իրենց ու տունը, որպեսզի ոչինչ չմնա մարդակեր ոհմակին: Ողջ քաղաքը ավերվում է, ժողովրդի մեծ մասը՝ սրի քաշվում, մի մասը՝ գերի տարվում: Վրաստանում իշխում էր Ռուզուդանը՝ Թամարի դուստրը, որին իր վավաշոտության (տռփամոլության) համար Կիրակոս Գանձակեցին նրան համեմատում է Շամիրամի հետ: Սակայն նա, հակառակ իր մոր, անընդունակ էր կառավարելու երկիրը: Իսկ Իվանե Զաքարյանի մահից հետո (1234թ.) վրացական զորքը արդեն լիովին անընդունակ էր որեէ լուրջ դիմադրություն ցույց տալ մոնղոլներին: Այլևս խաթարվել էր հայ- վրացական զինվորական դաշնակցությունը, առանց որի անհնար էր մոնղոլ նվաճողներին դիմադրության կազմակերպումը: «Երկիրը լցվել էր մեռյալների դիակներով, ու ոչ ոք չկար, որ թաղեր նրանց, և չկար մեկը, որ լացեր նրանց համար», - գրում է Կիրակոսը[224]: Մոնղոլները Մոլար-Նոյինի գլխավորությամբ պաշարում են Շամքորը, որտեղ տիրում էր Վահրամ իշխանը: Քաղաքը պարիսպներից բացի պաշտպանված էր քաղաքի շուրջը փորած փոսով: Մոնղոլները այն լցնում են ծղոտով ու փայտով, սակայն քաղաքի հայ պաշտպանները գիշերը հրկիզում են այն: Հետո մոնղոլները փոսը լցնում են հողով, գրավում քաղաքը, կոտորում բնակիչներին, ավերում տները: Ապա մոնղոլները գրավում են Գարդմանքի Տէրունականը, Երգեվանքը, Մեծաբերդը, ապա գրավում Չարեքն ու Գետաբակը, հետո ար-

[221] Գանձակեցի, էջ 226
[222] Նույն տեղում, էջ 235
[223] Նույն տեղում, էջ 235
[224] Նույն տեղում, էջ 248

շավում դեպի Տավուշ, Կածարեթ, Նոր Բերդ, Գագ (Ղազախ)[225]: Իսկ Վահրամ իշխանը փախչելով փրկվում է: Կիրակոսը մանրամասն նկարագրում է Խաչենի կոտորածը ու իշխան Զալալի և մոնղոլների հարաբերությունների մասին: 1238-39թթ. մոնղոլների հետ ընդհարվում է և Հասան-Զալալ իշխանը: Կիրակոսը նրան պատկերում է իբրև «հեզ և հանդարտ, ողորմած և աղքատասեր, հույժ քահանայասեր և ուսումնասեր, ընթերցող աստվածային կտակարանացն»: Բայց իշխանը օժտված էր նաև դիվանագիտական տաղանդով, ինչպես նաև հարկ եղած դեպքում քաջ պատերազմող էր: Իշխանն ու բնակչության մի մասը ապաստանում են Խոխանաբերդում: Երբ մոնղոլները պաշարում են, բայց և տեսնում, որ բերդն առնել անհնար է, դիմում են իշխանին, առաջարկելով խաղաղություն: Իմաստուն իշխանը տեսնելով, որ դիմադրությունն անիմաստ է ու այն մեծ ավեր ու կոտորած կբերի, հնազանդություն է հայտնում, պարտավորվում իր զորքով մասնակցել նրանց պատերազմներին: Նրանց հարկը իշխանն էր տալիս, այդպես և ժողովրդին ազատելով մոնղոլների բռնություններից: Իշխանը ստիպված է լինում զորապետ Չարմաղանի որդուն՝ Բորա-Նոյինին կնության տալու իր դստերը՝ գեղեցկուհի Ռուզուքանին: Մոնղոլների տիրապետության ժամանակաշրջանում Վերին Խաչենն ու Ծարը ենթակա էին Իվանեի որդի Ավագ Զաքարյանին, որը մոնղոլական հպատակություն էր ընդունել: Իսկ Ներքին Խաչենի իշխանական ճյուղը մոնղոլների գալուց առաջ էլ պահպանել էր իր անկախությունը: Գանձասարի վանքի իր մեծ արձանագրությունում, որ գրվել էր 1240թ. երևի օծումից առաջ, Հասան-Զալալը իրեն ներկայացնում է «Ինքնակալ բարձր և Մեծ Արցախական աշխարհի թագավոր»[226]: Սակայն հայ իշխանները, որոնք արյուն չէին թափել իրենց երկիրը մոնղոլներից պաշտպանելու համար և հպատակություն էին հայտնել, այժմ նրանց զորքերի կազմում իրենց զորամասերով մասնակցում էին մոնղոլական նվաճողական պատերազմներին: 1242թ. սկզբներին համրացած Չարմաղանի փոխարեն զորահրամանատար է նշանակվում Բաչու-Ղուրչին, որը Արևմտյան Հայաստանը սելջուկ սուլթան Ղիյասէդդին քայ- Խոսրովից նվաճելու համար հայկական զորագնդերից բանակ է կազմում, որի մեջ է ընդգրկում նաև Հասա-Զալալին, Ավագ և Շահնշահ Զաքարյաններին, այլ իշխանների[227]: Այս ժամանակներում Հասան-Զալալի դիվանագիտական միջնորդությամբ հայկական Կիլիկիայի թագավոր Հեթումի և մոնղոլ Բաչու խանի միջև դաշինք է կնքվում, որի շնորհիվ հայկական պետությունը

[225] Նույն տեղում, էջ 243
[226] Մ.Բարխուդարյան, Դիվան հայ վիմագրության, V պրակ, Եր., 1982, էջ 38, տես նաև Բ.Ուլուբաբյան, էջ 192
[227] Գանձակեցի, էջ 280

փրկվում է հարևան երկրներին վիճակված ավերածություններից[228]: Կիլիկիան արաբ Ղյասէդդին սուլթանի դաշնակիցն էր և ենթակա էր նրա ճակատագրին: Սակայն մոնղոլական արշավանքներին մասնակցելը կամ ճկուն քաղաքականությունն ու կապերը չկարողացան օգնել Խաչենի տիրակալին ազատվելու մոնղոլ հարկահանների ճիրաններից: Հարկահաններ են նշանակվում Բուղան և Արղունը, որոնք աչքի են ընկնում նենգությամբ ու դաժանությամբ: Հասան-Ջալալը 1249թ. դիմում է Բաթու խանի որդի Սարթախի օգնությանը, որը քրիստոնեություն էր ընդունել և ամեն կերպ օգնում էր քրիստոնյա իշխաններին ու հոգևորականներին: Կիրակոսը համակրանքով է գրում Սարթախի մասին: Հասան-Ջալալը Սարթախի մոտ է գնում մի փոքրիկ պատվիրակության հետ, որի կազմում էին բազմահմուտ դիվանագետ ծերունի Գրիգոր Տղան (Իվանե իշխանի մոտ հեջուբ եղած Գրիգորը), երիտասարդ իշխան Դեսումը, վարդապետ Մարկոսը և եպիսկոպոս Գրիգորը[229]: Սարթախը Ջալալյան իշխանին ու նրա պատվիրակությանը ուղեկցում է իր հոր՝ Բաթու խանի մոտ, որը գտնվում էր Աթլ (Վոլգա) մեծ գետի մոտ, Կասպից ծովի ափին Իթլ (այժմյան Աստրախան) քաղաքում: Բաթու խանը մեծ պատվով ընդունում է Հասան-Ջալալին և նրան վերադարձնում «իր հայրենի Չարաբերդը, Ականաբիրդն ու Կարկառը»[230]: Այս բերդերի աշխարհագրական տեղաբախշումը ցույց է տալիս, որ Հասան-Ջալալն իշխում է ողջ Արցախի վրա: Այս երեք բերդերը այն կարևոր հենակետերն էին, որոնց տերը կարող է իշխել ոչ միայն Արցախի, այլև շրջակա երկրների վրա: Եթե Չարաբերդը Թարթառի վրա գտնվող հռչակավոր Ջրաբերդն է, իսկ Ականան Հաթերքի մոտ Բերդավանն է, ապա Կարկառը գտնվում է համանուն գետի վրա և XV դարից սկսած հայտնի է դառնում Շուշի անունով: Վրացական մի աղբյուրի համաձայն Կարկառը ոչ միայն քաղաք է (բերդաքաղաք), այլև գավառ և ընկած է Խաչենի ու Բայլականի միջև[231]: Արղուն հարկահանը նոր սադրանքներ է նյութում Հասան-Ջալալի դեմ: Հայ իշխանը նեղվելով բռնավորի կողմից, այս անգամ արդեն իր կնոջ՝ Մամքանի ու միակ որդու՝ Աթաբակի հետ, կրկին Սարթախի ուղեկցությամբ 1256թ. մեկնում է Կարա-Կորում՝ Մանգու մեծ խանին գանգատվելու: Մեծ խանը իր հերթին նրան է վերադարձնում նրա ժառանգությունը: Սարթախը նշանակվում է վախճանված հոր՝ Բաթու խանի տեղ՝ Հյուսիսի և Կովկասի կուսակալ[232]: Մանգու մեծ խանի՝ բոլոր մոնղոլների տիրակալի մոտ էր գնացել և

[228] Մ. Չամչյան, Պատմություն Հայոց, հ. 3, Եր., 1984թ., էջ 219:
[229] Գանձակեցի, էջ 359:
[230] Նույն տեղում, էջ 359:
[231] Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ. Բ, Եր., 1936, էջ 14:
[232] Գանձակեցի, էջ 373:

հայոց Կիլիկիայի թագավոր Հեթում առաջինը: Մեծ խանը հաստատում է Կիլիկիայի հետ մոնղոլների դաշինքը՝ խոստանալով Հեթումին իր հովանավորությունը, իհարկե, նաև պահանջելով, որ օգնական զորք տա Եգիպտոսի արաբների դեմ պատերազմներում: Հետագայում Հեթումը ստիպված էր երկրորդ անգամ գնալ Հորդա, արդեն ականատես լինելու մոնղոլների նոր առաջնորդի ընտրությանն ու նրան ևս իրեն դաշնակից դարձնելու նպատակով: Հասան-Ջալալից հետո հաջորդ տարի երկրորդ անգամ Մանգու խանի մոտ էր գնացել նաև Սյունիքի իշխան Սմբատ Օրբելյանը: «Նախքան Սմբատի գնալը, ինչ-որ մատնության պատճառով Արղունին կանչել էին արքունի դուռը և նրա (Սմբատի) հասնելու ժամանակ Արղունն արդեն կապանքների մեջ էր: Մատնիչները Սևինճ բեկը ու Շարափ-էդդինն էին, ... որոնք կամենում էին նրա տեղը»[233]: Սմբատը արդարացնում է Արղունին, որին Մանգու խանը ազատում է և կրկին նշանակում իր տեղում[234]: Իսկ Հասան-Ջալալի ամբողջ այս ճամփորդությունը տևում է հինգ տարի: Վերադարձին իշխանը մնում է Թավրիզում, իսկ կնոջն ու որդուն ուղարկում Խաչեն: Երբ իշխանը Թավրիզից տուն է հասնում, կնոջը գտնում է վախճանված: Իշխանի բախտը չի բերում մի կարևոր հարցում ևս. իր բարեկամ Սարթախը շուտով թունավորվում է մերձավորների կողմից և մահանում: Իսկ ամենաոխերիմ թշնամին Արղունը, վերադառնում է վեզիրի իր պաշտոնին՝ Հասան-Ջալալից վրեժ լուծելու մտադրությամբ: Այս ամենի մասին 1261թ. հայ իշխանը գրել է մի ավետարանի հիշատակարանում, որը պահվում է Մատենադարանում[235]:

1260թ. մոնղոլների դեմ ապստամբում է վրաց թագավոր Դավիթը, սակայն նա անհաջողություն է կրում և փախչում: Արղունը ճնշում է ապստամբությունը, կալանավորում Դավիթի կնոջը, Զաքարե ամիրսպասալարի որդի Շահնշահին, որը սպարապետն էր, ինչպես նաև Հասան-Ջալալին: Ըստ երևույթին, նա ևս մասնակից էր այդ ապստամբությանը: Արղունը Խաչենի տիրակալին կապանքների մեջ առած տարավ Ղազվին: Ռուզուքանը, որ մոնղոլ զորապետի կինն էր, փորձում էր իր կապերով ազատել հորը: Սակայն Արղունը տեղեկանալով այդ մասին, շտապ դահիճ է ուղարկում, որը հոդակոտոր անելով սպանում է «սուրբ և արադար այրին»: Որդին՝ Աթաբակը, գնում է, մի պարսիկի օգնությամբ ցամաք ջրհորի հատակից վերցնում է հոր նշխարները, բերում Գանձասար, ու Ջալալյանների տոհմական տապանատանը՝ վանքի գավիթում հողին հանձնում: Հուլավա Խանը հոր փոխարեն Խաչենի իշխան է կարգում նրա որդուն՝ Աթաբեկին, որին պատմիչը

[233] Ստ. Օրբելյան, էջ330:
[234] Անդ, էջ 331:
[235] Մատենադարան, ձեռագիր N387, էջ 8բ, 9ա:

նկարագրում է իբրև «այր սրբասնունդ, պարկեշտ ու հնարամիտ աղոթական, զի ծնողքն նորա այսպես սնուցին զնա»[236]:

Ժամանակին հեղինակները, ինչպես և վիմագիր արձանագրություններում Հասան-Ջալալ իշխանին արքա կամ թագավոր են անվանում: Ըստ պարսիկ մի անանուն ժամանակագրի տեղեկության «Խաչենը դժվարամատչելի մարզ է, լեռների ու անտառների միջև: Այն Առանի նահանգներից է: Այնտեղ հայեր են բնակվում: Աբխազի (Վրաստանի) մարդիկ նրանց Փատիշահին կոչում են թագավոր»[237]: Ինչ խոսք, որ այստեղ «թագավորը» այն հին ավանդական նշանակությունը չունի և միայն կարող է իր ընդարձակ երկրի ինքնուրույն իշխանը լինել: Նրա իշխանապետությունը, որը կոչվում է Խաչեն, ընդգրկում էր ողջ հին Արցախի տարածքը իր գավառներով՝ Արաքսի ափից մինչև Գարդմանքի սահմանները: Սակայն Սուխանք գավառը ընդմիշտ կտրվեց Արցախից, որն արդեն ոտքի կոխան էր դարձել եկվոր հորդաների սմբակների տակ: Այն XII-XIV դարերում ասպատակիչ մոնղոլների ու թաթար հորդաների ծմեռոցն էր: Հասան-Ջալալի որդին՝ Աթաբակը Խաչենում իշխում է մինչև իր մահը՝ 1287 թվականը:

Արցախ-Խաչենի XIII դարի մշակույթը հայ մշակույթի մեջ իր ուրույն տեղն ունի: XIII դարը առանձնահատուկ է ողջ Հայաստանում, ինչպես և Կիլիկիայում, ազգային հոգևոր ու մշակութային կյանքի մեծ առաջընթաց ապրեց, որի պատճառով էլ այն կոչվել է «արծաթե դար»: Դարասկզբին մշակութային բուն վերելքը շարունակվեց և դարի երկրորդ կեսում՝ մոնղոլների տիրապետության շրջանում: Այս վերելքի արգասիքն են անգերազանցելի Գանձասարի վանքը, Դադի վանքի Կաթողիկեն, Խաթրավանքը, Ծարա Սբ. Աստվածածինը, Վաղուհասի Մայրաքաղաքը, Հոռեկավանքը: Նկարչական արվեստի բարձր մակարդակի վկայություն են Դադի վանքի Կաթողիկե տաճարի որմնանկարները: Նկարչական արվեստը հիմնականում իր զարգացումն էր ապրում մանրանկարչության մեջ: Խաչենի վանքերում ստեղծված գրչագրերը համեմված են մանրանկարներով ու զարդապատկերներով: Արցախի վանքերում գործում էին բազմաթիվ դպրոցներ, որտեղ գրագիտությունից, փիլիսոփայությունից բացի սովորում էին նկարչություն, իսկ կույսերի համար դասավանդվում էր ասեղնագործություն: Խաչքարի արվեստը, որը Արցախում սկիզբ էր առել վաղ միջնադարում, նոր վերելք է ապրում XII-XIII դարերում: Հազարավոր իրար չկրկնող խաչքարերի մեջ իրենց նրբագեղությամբ ու ճոխ զարդամոտիվներով առանձնանում են Դադի վանքի անգերազանցելի զույգ խաչքարերը, որոնց պահպանելու համար հատուկ ժամատուն է կառուցվել: Այս խաչարձաններին չէին զիջում և Գտչավանքի խաչարձանները, որոնք միջնադարի հայ քանդակագործական արվեստի նվաճումներից են: Խաչեն-Արցախը անթիվ թելերով կապված էր Հայաստանի մյուս մարզերի ու կենտրոնների հետ, ընդհուպ մինչև Կիլիկյան հայկական թագավորությունը: Վանական վարդապետը, որը Հասան-Ջալալի հովանավորյալն էր, կապված էր ժամանակի մշակույթի ազգակից գործիչների հետ: Կիլիկիայում և Արևմտյան Հայաստանի հոգևոր կենտրոններում ստեղծված բազմաթիվ ձեռագրեր են բերվել Խաչեն՝ ինչպես նվիրատվությունների ու գնումների ճանապարհով, որը արձանագրված է այդ ձեռագրերի հիշատակարաններում, այնպես էլ թաթար-մոնղոլական արշավանքների ընթացքում Խաչենի իշխանների ձեռքով փրկվելու եղանակով: Այս ամենն էլ իրենց դրոշմն են թողել երկրամասի մշակութային զարգացման մեջ: Իհարկե, Արցախն իր հերթին՝ քիչ բան չի տվել հայրենի երկրին: Հայոց գիր ու գրականությունն էր, որ սելջուկների, ապա և թաթար-մոնղոլների բռնատիրության պայմաններում լեռներում ապաստանած հայությանը հայ տեսակի մեջ պահեց: Այլևս ոչ մի բռնատիրություն ի վիճակի չէր մարդկանց մեջ կոտրել սերը դեպի իր հոգևոր արժեքները, իր գիրն ու գրականությունը, պատմությունը, արգելակել հայեցի ու հայերեն ստեղծագործելու այն շունչը, որը պետք է հարատևեր հետագա դարերում, անիշխանության, բազում արհավիրքների միջով պահպաներ իր պետականությունը վերականգնելու փափագն ու ձգտումը, դրա նախահիմքերի կառուցումը: Հայաստանի զանազան հոգևոր ու մշակութային կենտրոններում մեծ ազդեցություն են թողել ծնունդով ու կրթությամբ արցախցի եկեղեցու ու մշակութային զանազան գործիչներ: Հաղբատի վանական համալիրում երկար ժամանակ առաջնորդում էին Խաչենցի հոգևորականները, որոնք էլ կառուցում էին նոր հոյակերտ տաճարներ, կանգնեցնում հուշակոթողներ, ձեռնարկում նոր ձեռագիր գրքերի ստեղծումը: Ինչ խոսք, որ սկսած արաբական տիրապետության շրջանից Առանի (Արցախ և Ուտիք) դաշտային մասը էթնիկական որոշակի փոփոխություններ է կրում: Որպես տիրապետող գերիշխանության զինվորներ, հարկահաններ, վարչական այլևայլ ծառայողներ, առևտրականներ, ինչպես նաև արհեստավորներ են եկել այլացեղ տարրեր՝ արաբներ, պարսիկներ, հրեաներ, XI դարից հետո՝ սելջուկներ: Նրանք հիմնականում բնակություն էին հաստատում քաղաքներում՝ Պարտավում, Գանձակում, Բայլականում: Գրավոր պատմությունը չի հիշատակում, թե երբևէ բռնակալ արաբների, սելջուկների կամ մոնղոլների կողմից գյուղական նստակյաց բնակչություն բերված լինի Կուր-Արաքսի միջագետը (Առան), այսինքն, գյուղական բնակչությունը հայկական

[236] Գանձակեցի, էջ 392:

[237] Н.Д.Миклухо-Маклай, "Географическое сочинение XIII века", на персидском языке, Ученые записки Института востоковедения, т. IX, Ленинград, 1951.

էր մնում իր եկեղեցիներով, ազգային նիստ ու կացով, սովորություններով, տեղանքին յուրահատուկ բարբառով: Արաբ ժամանակագիր Ռաշիդ-ադ-դինը արձանագրել է մի դեպք, որը տեղի է ունեցել 1276 թվականին և վկայում է Առանի գյուղացիության մասին: Հուլավու խանի (1256-1282թթ.) հաջորդ մոնղոլ Աբաղա խանը (1265-1282թթ.) եկել էր իրեն հպատակ Առան երկրամասը: Մի օր նա այստեղ որսի էր դուրս գալիս իր թիկնապահներով: Հանկարծ զինված տեղացիների մի խումբ հանկարծակի հարձակվում է խանի ու նրա մարդկանց վրա: Տեղի է ունենում ընդհարում, որից հետո ապստամբները հեռանում են: Աբաղա խանը կարգադրում է այդ վայրը բերել նահանգի աշխարհազորը ապստամբներին ճնշելու համար: Հետո ապստամբների գլխավորը խանին է ներկայանում և հայտնում իր հնազանդությունը[238]: Հեղինակը ապստամբների էթնիկական պատկանելության մասին ոչինչ չի ասում: Պատմաբան Լ.Բաբայանը ուսումնասիրելով ժամանակագրի տեղեկությունը, եզրակացնում է. «Առանի տարածքում այդ ժամանակաշրջանում տակավին գերիշխող էթնիկական տարրն էր հայ ազգաբնակչությունը, ուստի սխալված չենք լինի, եթե նկատենք, որ այդ անհնազանդները ամենայն հավանականությամբ, եղել են հայ գյուղացիները»[239]: Եթե Պարտավում և Գանձակում տիրում էին արաբ, ապա և թուրք (սելջուկ) բռնակալները, ապա լեռնային ու նախալեռնային շրջանների լիիրավ տերերը մնում էին Բագրատունի և Առանշահիկ իշխանների ծյուղավորված ժառանգները: Այս պայմաններում, ինչ խոսք, որ պետք է զարգանա հայ մշակույթը, հայ արվեստը, որից հազարավոր հուշարձաններ հասել են մինչև մեր օրերը ու լիարժեք պատկերացում են տալիս ազգային միջավայրի, մշակույթի մասին: Իսկ ասպատակիչները շատ քիչ հետքեր են թողել Առանում: Դաշտային հատվածում խազարներից մնացել են քարակոփ կուռքեր կամ բաբաներ, արաբներից՝ մի դամբարան Նախճավանում, սելջուկ-թուրքերից ու թաթար-մոնղոլներից՝ ոչինչ: Դրա փոխարեն նրանք ավերել են հարյուրավոր եկեղեցիներ, տաճարներ, դղյակներ, բերդեր ու քաղաքներ, այրել հազարավոր ծաղկազարդ գրչագրեր...

Մակար եպիսկոպոսի մի հնագույն Ավետարանի (1069 թ.) հիշատակարանից արտագրած և հրատարակած մասունքներից մեկում հայտնի է դառնում, որ Մեծ Կողմանց իշխան Շիրվանշահեանց Ուզի որդի Հասանը մասնակցել է Փոքր Ասիա կատարած մոնղոլական արշավանքներին, Կեսրիայում օտարների ձեռքից գնել է մագաղաթյա սբ. Ավետարանը: Մակարը մա-

[238] Рашид-ад-Дин, Сборник летописей, Т. III, пер. А.К.Арендса, М.-Л.,1946, стр. 91.
[239] Լ. Բաբայան, Հայաստանի սոցիալ-տնտեսական և քաղաքական պատմությունը XIII-XIVդ.դ., Եր., էջ 375:

գաղաթյա, ամբողջապես գլխատառերով գրված Ավետարանը, որի հիշատակարանը բացակայում էր, տեսել է Թալիշ գյուղում մի «աշխարհականի» տանը: Շիրանշահանց Հասանը ավետարանի վերջին թերթին գրում է. «Զաստուածափառ և զաշխարհայոյս սուրբ աւետարանս որ ձեռաւք Հասանայ Ուզին որդոյ բերաւ ի Կեսարիոյ և նոյն Հասանայ և ամուսին Ելթի և պարծանաց որդիք իւր Հասըմբեր և Սասնայ ետուն զսա յիւրեանց տապանատունս որ էին տեղւոյս իշխանք զտուն Շիրանշահանց Դաւթի ձեռաւք ի վանս Եղիշէի և հաստատի սմա բանիւն Աստուծոյ և յանուն Հասնային և Եյթոյն ետ մահու պատարագ ի Քրիստոս յամեն եկեղեցիս ի զատկին յարութեան աւրն, որ յարոյց ընդ իւր բազում մեռեալք և յարուսցե Քրիստոս փառաւք զՀասանայն և զԵլթի հանդերձ իւր ծնելավք միւս անգամ գալստեանն: Արդ որք խափանեն զպատարագն և կամ հանէ զավետարանս և զՇիրանշահեանց տունն ի Տապանատնես, հանեսցի նա յարքայութենէն Աստծոյ: Առանց աշխարհավերի թիւն Հայոց էր ՉԺԷ (1268): ՉԻԱ (1282) շինեցավ ժամատունս (Եղիշեի)»[240]: Եթե ինշխանական տան տապանատունը, ինչպես վկայում է Հասան Շիրանշահանց իշխանը, հնուց ի վեր Եղիշե առաքյալի վանքն է եղել, ապա իշխանական տունը պետք է որ հեռու չլիներ այդ վայրից: Երկու տարբերակից՝ Դյութական Մայրաքաղաքից ու Հոռեկից այս դեպքում նախընտրելի է Մայրաքաղաքը, որտեղ ևս հայտնաբերվել են իշխանական ապարանքների փլատակներ: Դրանց վերակազմությունը տվել է ճարտարապետ Արտակ Ղուլյանը[241]: Սակայն այս դեպքում կարող էին որպես տապանատուն ընտրել Հոռեկի Գլխո վանքը: Իշխանի գրությունից առաջ Ավետարանում զստեղված է մեկ այլ գրություն. «Յանուն Աստուծոյ մեք Ներքի տանուտերքս... յիշե Զավելի դի Մոսին. ես Դավիթ իմ վանական եղբարքս վկայ եմ այս գրոյս ի թուականութեանս ՇԺԶ (1069) հաստատուն, եթե աստուած կամի»: Ուրեմն՝ Ավետարանը ստեղծվել է 1069 թվականից ավելի վաղ: Եթե իշխանն ակնարկում է իր և կնոջ՝ Ելթիի հաջորդ գալստյան մասին, ուրեմն, նրա բնակավայրը ամենևին էլ մոտ չի գտնվում Զրվշտիկից: Մեծ Կողմանց իշխանական տան մասին ավելի ստույգ տեղեկություն է հայտնում Մայրաքաղաքի Հին Մեծ-շենի հանգստարանում գտնվող եկեղեցու մուտքի ճակատկալ քարին պահպանված վիմագրությունը. «Թիւ ՉԹ (1260) էր կամավն Աստուծո ես Խուռում (Հռիփսիմե) շինեցի զեկեղեցիս, եղբայր իմ Վահրամ Շահ ի յիշատակ մեզ և ծնողաց մերոց ի յիշխանութեան Ուքանին և յամիրութեան Փախրայդինին ի ի յառաջնորդութեան Տէր Սուքիասին յաղավթս...:»: Կարելի է ենթադրել, որ «Շահը» իշխանական տոհմանվան կրճատ ձևն է, իսկ Խուռումն

[240] Բարխուտարեանց, Արցախ, էջ 146:
[241] Ա.Ղուլյան, էջ 50:

ու Վահրամը՝ այդ իշխանական հարստության մի ճյուղը: Արցախի Գետաշեն ավանի Ավագ սուրբ Նշան մատուռում պահվում էին չորս ձեռագիր ավետարաններ: 1116 թվականին ստեղծված մագաղաթյա պատկերազարդ ավետարանի հիշատակարանում գրված է, որ Հաղբատի Սարգիս կրոնավորը, ձեռք բերելով այն, 1223 թ. «ընծայեաց զսա Մեծ Կողմանց եպիսկոպոսարանիս... ի յիշխանութիւնս հզաւրին Հասանայ որդւոյ Վախթանգայ և ի հայրապետութեանս տեառն Յովհաննիսի...»: Եպիսկոպոսարանի տեղը ճշգրտվում է գրքի երրորդ նորոգողի թողած հիշատակարանում. «ՊԼԲ (1363) էր, մեհեկի ամսի ԻԶ էր, որ կազմեցավ, որ է Սուրբ Ավետարանս Մեծ Կողմանց Խաչենոյ եպիսկոպոսարանեն Մայրաքաղաքենս, իշխանութեան պարոն Զալալին, եպիսկոպոսութեան տէր Գրիգորին Գեռաքարեցին...»[242]: Ուրեմն կարելի է վստահությամբ ասել, որ Մայրաքաղաք ավանը XIV դարի երկրորդ կեսին դեռ կար և եպիսկոպոսանիստ էր ծառայում: Հայտնի է, որ Մեծ Կողմանքի Հասան իշխանին հաջորդում է Համբեր Շիրանշահանցը: Այս իշխանական հարստության ներկայացուցիչ էր Մեծ Կողմանց առաջնորդ Յովհաննես երիսկոպոսը: XIII դարի երկրորդ կեսին կառուցված Մեծ Կողմանքի վանքերի ու եկեղեցիների մուտքերի ճակատքարերին որպես հիմնադիր հիշատակվում է նրա անունը: Հոռեկա վանքի ճակատքարին արձանագրված է. «Ի քահանայապետություն Ստեփաննոսի զշինող զեկեղեցիս զտեր Յովհաննես յիշեցեք ի Քրիստոս նաև զծնողս և զեղբարսն իւր թիւ ՉԻԸ (1279)»: Իսկ գավթի մուտքին նույն եպիսկոպոսը գրել է. «Յաշխարհակալ տէրութեան Ապաղա խանին և ի հայրապետութեան տէր Ստեփաննոսին և ի պարոնութեան Նորադինին և Սրաադինին և Գուրզադինին ես տէր Յոհաննես շինեցի զգավիթս յիշատակ ինձ և ծնողաց իմոց ՉԼԳ (1284)»: Շիրանշահաց տոհմի իշխանական տունը նույն եպիսկոպոսի միջոցով կառուցում է Գյուլիստանից ոչ հեռու Միջի և Յերի վանքերը, Մայրաքաղաքի ուսումնարանը, վերանորոգում Զրվշտիկի, Հոռեկա, Գետաշենի Եղնասարի վանքերը, որոնք ծանր ու դժվարին ժամանակներում կարևոր դեր ունեին ազգապահպանման գործում: Արցախ-Ուտիքի հյուսիսի՝ Գարդմանքի իշխանները, ասես մրցակցելով իրար հետ, կառուցում են Պանդալյոնի, ս. Աստվածածնի, ս. Սարգսի, Քարխանաց, Թարգմանչաց, ս.Ամենափրկիչ, Հոռոմաշեն, վիմափոր Քարահերձ վանքերն ու եկեղեցիները: Իսկ «Շիրանշահը» Շիրվանշահի կրճատ ձևն է: Կարելի միայն ենթադրել, որ այս տոհմը Շիրվանում տիրապետող դիրք է ունեցել, որին դուրս են մղել մահմեդականները:

Գիր ու գրականությունն էր ու հայոց եկեղեցին, որ թուրք-սելջուկների, ապա և թաթար-մոնղոլների դաժան բռնատիրության պայմաններում լեռնե-

[242] Բարխուտարեանց, Արցախ, էջ 170:

ում ապաստանած հայությունը հայ պահեց: Ինչքան էլ ներսում անմիաբան ու կենտրոնախույս լինեին, այլևս ոչ մի բռնատիրություն անընդունակ չէր մարդկանց մեջ կոտրել սերը դեպի իր հոգևոր արժեքները, իր գիրն ու գրականությունը, պատմությունը, հավատքը, արգելելու հայեցի ու հայերեն ստեղծագործելու այն շունչը, որը պետք է հարատևեր հետագա դարերում, անիշխանության պայմաններում փայփայեր պետականությունը վերականգնելու փափագն ու ձգտումը:

1271 թվականին վախճանվում են հայոց մեծ պատմիչները՝ Կիրակոս Գանձակեցին ու Վարդապետ Բարձրաբերդցին: Հաջորդ ժամանակաշրջանը նշանակալից պատմիչ չի ծնում, և ասես հետագա իրադարձությունները կրկին ընկղմվում են խավարի մեջ:

XIII դարի վերջերին Չինգիզ խանից ժառանգություն մնացած տիեզերական տիրակալությունը (Հնդկաստանից մինչև Միջերկրական ծովը, Ռուսական հյուսիսից մինչև Պարսից ծոցը) սկսվել է տրոհվել առանձին պետությունների: Այսպես գոյացավ Հուլավու խանի պետությունը, որն իր մեջ ընդգրկում էր ողջ Հարավային Կովկասը, Հայաստանն ու Ատրպատական-Ազարբայջանը: Ազգային ու ցեղային տեղաշարժերը բավականին էքսիկական փոփոխություններ իրականացրին Իրանում, Արևմտյան Հայաստանում ու Բյուզանդիայի արևելյան մասերում: Պարսիկ ժողովրդի այն հատվածը, որը «մար» էր կոչվում, խառնվում է արաբների, եկվոր թուրքական ցեղերի հետ: Չամչյանը գրում է, որ ոմանք նրանց պարսիկ են անվանում, ոմանք թուրք[243]: Սակայն նրանց արմատը մարական է մնում, չնայած հետագայում աստիճանաբար տիրապետող է դառնում թուրքերենի, պարսկերենի և մարական հին լեզվի մի խառնուրդ, որին հետագայում պետք է տան «ազարի» անունը:

ՂԱՐԱԲԱՂԸ XIV-XV ԴԱՐԵՐՈՒՄ

XIV դարի առաջին կեսին աստիճանաբար տրոհվում է մոնղոլական տիրապետությունը: Մոնղոլ խաներն ու զորապետները ընդհանուր հզոր իշխանության բացակայության պայմաններում իրարից խլխլում են երկրները, անընդհատ պատերազմում իրար դեմ, իհարկե, ասպատակում մեկը մյուսի տիրույթը, թալանում, կեղեքում ժողովրդին: Այս ժամանակաշրջանի մասին հարուստ տեղեկություններ են պահպանվել բազմաթիվ հիշատակարաններում և վիմագրերում: Հայաստանի տարբեր շրջաններում սկիզբ է առնում մեծ արտագաղթը, որի հետևանքով դատարկվում են հայոց բարեկարգ բնա-

[243] Ս. Չամչյան, էջ 418:

կավայրերը: Իսկ Ուտիքի և Արցախի հայությունը, ապավինած իր լեռներին, դիմադրեց այս փորձությանը, պահպանեց իր գյուղերն ու ավանները, սպասելով ավելի բարեհաջող ժամանակների: Անընդհատ ասպատակությունները, ավազակային հարձակումները գյուղացուն զրկել էին տնտեսական աշխատանքներ (ցանք և բերքահավաք) անելու հնարավորությունից: Արցախցին ապավինում է իր հարուստ բնությանը, բերքառատ անտառներին, որտեղ, ամառ թե ձմեռ, միշտ ուտելու բան էր գտնում: Սելջուկներից սկսած, ասպատակիչները հիմնականում ձմեռում էին Մուխանքում, որը XIV դարի կեսերից անվանում էին Ղարաբաղի դաշտ, իսկ ողջ Արցախը թաթարները կոչեցին Ղարաբաղ (սև այգի): Այս անունը կազմված է թուրքերեն «ղարա»-սև ու պարսկերեն «բաղ»-այգի արմատներից: Ըստ երևույթին, այն արտահայտում է երկրի բերրի սևահողային լինելը, ու այս իմաստով Առանի (բերրի երկրի) մեկ այլ արտահայտությունն է: «Ղարաբաղ» անվանումը առաջին անգամ հանդիպում ենք XIII դ. սկիզբն ընդգրկող վրացական պատմագրության մեջ[244]: Ակադեմիկոս Ս. Երեմյանի կարծիքով, «Ղարաբաղ» անունը «Բաղակարանի» այլափոխված ձևն է: Ղարաբաղ անվանումը հանդիպում ենք նաև XIV դարի պարսից պատմագիր Համդ-Ալլահ Մուստավի Ղազվինիի «Նուզհաթ-ալ-Բուլաբի աշխարհագրական մի մասը» գրքում[245]: Ըստ այս հեղինակի, Ղարաբաղի հարթավայրային մասը կոչվում էր Բաղ-ի սաֆիդ (Սպիտակ այգի), իսկ լեռնային մասը Բաղ-ի սիախ, այսինքն՝ սև այգի, որն էլ Իրանում տիրապետող թուրքալեզու դասի լեզվով կոչվեց «Ղարաբաղ»: Ընդհանրապես, թուրքալեզու նվաճողներին միշտ յուրահատուկ է եղել նվաճված երկրներում աշխարհագրական տեղանունները անմիջապես փոխելն ու թուրքերեն անվանելը: Սա նվաճած երկիրը իրենցը դարձնելու եզակի մարտավարություն էր, որը բնորոշ էր թուրք-թաթարական ցեղերին: Քանի որ աշխարհագրական տեղանունների՝ հանդերի, դաշտերի, բնակավայրերի, լեռների, բլուրների, գետերի, աղբյուրների անվան մեջ պահպանվում էին բնիկ ժողովրդի լեզվի, մշակույթի տարրերը, այս իմաստով հսկայական կորուստներ են ունեցել Իրանը, Միջին Ասիան, Արաբական երկրները, Բալկանյան թերակղզին, բոլոր այն վայրերը, ուր ոտք է դրել թուրքը: Իսկ Փոքր Ասիան (Բյուզանդիա, Կիլիկիա, Հայաստան) իր բոլոր աշխարհագրական անուններով թուրքացվել է: Անդրկովկասում նույն քաղաքականությունն էին վարում XVII դարի վերջերին ու ողջ XVIII դարում այստեղ թափանցած թափառական թրքախոս ցեղերը:

[244] Վրացական ժամանակագրություն 1207-1318 թթ., թարգմ. Փ. Մուրադյան, Եր., 1971, էջ 112:
[245] Hamid-Allah Mustawi of Gazwin, The Geographical Part of the Mushatal-Qulab, by le Strange, G. Leyden, 1919, pp. 173-174.

XIV դարի երկրորդ կեսին Միջին Ասիայում նախապատրաստվում էր համաշխարհային մի նոր չարիք, որը դաժանությամբ պետք է գերազանցեր իր նախորդներին: Դա ազգությամբ ուզբեկ-թաթար, սամարղանդցի Լենկթեմուրի իշխանությունն էր, որը տեղի սուլթանի մահից հետո 1366 թ. նստում է գահին: Միջին Ասիական ասպատակիչների՝ դեպի արևմուտք արշավանքների ճանապարհին միշտ Իրանն էր, որն էլ նրանց ուժերի առաջին փորձաքարն էր դառնում: Ահա Լենկթեմուրը (Կաղ Թեմուրը) փորձում է զավթել Խորասանը: Սակայն Խորասանի տեր Շահմասուրը ետ մղեց նրանց զորքերին: Լենկթեմուրը դիմում է խորամանկության ու անսպասելի հարձակումով հաղթում Շահմասուրին, տիրում Սպահանին ու Շիրազին, մահ ու ավեր սփռում ամենուր: Լենկթեմուրը շարժվում է դեպի Ատրպատական: Թավրիզը Ահմեդ էմիրից գրավել էր Ղրիմի խան թաթար Թոխտամիշը: Վերջինս, տեղեկանալով Լենկթեմուրի արշավանքի մասին, 1375 թ. ձմռանը Նախճավանը, Սյունիքն ու Արցախի Ծար գավառը ավարի ենթարկելով, նահանջում է դեպի Դերբենտի դուռը: Սակայն շուտով նա թողնում է ողջ ավարն ու գերիները, փախչելով փրկում կյանքը: Ատրպատականում Լենկթեմուրը զորահավաք է հայտարարում, գումարում 700 հազարանոց զորք և արշավանքներ կազմակերպում տարբեր ուղղություններով: 1387 թվականին ասպատակում է Սյունիքը, Արարատն ու Արցախը: Նա չէր ներում ոչ իր դեմ կռվողներին և ոչ էլ հպատակվողներին: 1401 թվականի հուլիսի 9-ին Բաղդադը գրավելուց հետո վերադառնում է Ատրպատական: Այս ժամանակաշրջանից հետաքրքիր տեղեկություններ է հաղորդում գերմանացի Յոհան Շիլտբերգերը: Խաչակիրների ու թուրքերի միջև ճակատամարտերում 1394 թ. գերմանացի զինվորը գերի էր ընկել թուրքերի ձեռքը, ապա և գերվել թաթարների կողմից ու շուրջ 31 տարի նվաճող զորքերի հետ ճանապարհորդել Ասիական ու Աֆրիկյան երկրներում, ի վերջո, 1427 թ. վերադառնալով տուն, գրել է իր ճամփորդության մասին: Յոհան Շիլտբերգերն էլ հաղորդում է, որ Թամերլանը (Լենկթեմուր) 1401 թ. Թավրիզից գնում է ձմեռելու Ղարաբաղում: Լենկթեմուրի մահից հետո Յոհանը ծառայում է նրա որդուն՝ Շահռուխին: «Նա (Շահռուխը) սովորություն ուներ ձմեռել մեծ հարթավայրում, որը կոչվում էր Ղարաբաղ: Այն առանձնանում էր լայն արոտավայրերով... նրա (Արաքսի) ափերին հավաքվում է ամենալավ մետաքսը: Չնայած այդ հարթությունը գտնվում է Հայաստանում, այնուամենայնիվ այն պատկանում է հեթանոսներին (մահմեդականներ), որոնց հայկական գյուղերը ստիպված են հարկ տալ»[246]: 1405 թ.

[246] Путешествие Шильтбергера по Европе, Азии и Африке с 1394 по 1427 г. поеревод и примечания Ф. Беруль, Одесса, 1866, стр. 110. Գիրքը կրճատումներով և Զ.Բունիաթովի առաջաբանով վերահրատարակվում է

ահեղ բռնակալի մահից հետո նրա ժառանգների ու տարբեր երկրամասերում կարգած կուսակալների ու զորապետների միջև պատերազմներից ազատվելով, թուրքական կարա-կոյունլու ցեղը հաստատում է իր տիրապետությունը: Նրանց առաջնորդ Կարա-Յուսուփը պակաս դաժան ու անմարդկային չէր, քան Լենկթեմուրի զորապետները: 1406 թ. Պետրոս Բ աղվանից կաթողիկոսին հաջորդում է տեր Կարապետը: Նա Գանձակից հեռանում է Կապաղակ և Ճալեթում կառուցում Ճալեթի վանքը: Տաճարի մուտքի ճակատկալ քարին գրված է. «Յանուն Աստծոյ ես Կարապետ կաթողիկոս շինեցի զեկեղեցիս ի թիւն ՊԿ (1411) յիշատակ հոգւոյ իմոյ, յաղաւթս յիշեցեք»[247]: Խաչենում շարունակում էր տիրել հին իշխանական տունը, որը այսուհետ կոչվում էր Ջալալյան: Ժառանգաբար նրանց էր պատկանում նաև Գանձասարի վանքի առաջնորդությունը: Անշուշտ, այսուհետ ևս դժվար ճակատագիր էր վիճակված Հասան-Ջալալի իշխանության ժառանգնորդներին: 1282 թ. մահացած Աթաբակ-Իվանեին փոխարինում է նրա որդին Ջալալ Բ-ն: XIV դարի երկրորդ կեսում ևս Ներքին Խաչենի իշխանները գահերեց էին Արցախում[248]: XIV դարի վերջը աղետաբեր էր նաև հայոց Կիլիկյան թագավորության համար: 1375 թվականին հարևան արաբական պետությունների հարվածներից խորտակվում է հայոց Կիլիկյան պետությունը, որը 300 տարի Միջերկրականի ափին պահպանել էր իր գոյությունը, ունեցել ծաղկման և անկման ժամանակաշրջաններ: Նրա վերջին թագավորները հույսը դրել էին Հռոմի պապի ու Եվրոպական երկրների օգնության վրա: Իսկ այդ նեղ ժամանակաշրջանում Հռոմը Կիլիկիայի հայերից պահանջում էր հավատափոխություն և կաթոլիկության անվերապահ ընդունում:

Ինչքան էլ դառն լինեին ժամանակները, Արցախում շարունակում էին նոր մատյաններ գրվել, արտագրվել ավետարաններ, ճաշոցներ, ճառընտիրներ, դրանց հիշատակարաններում նշել ժամանակաշրջանի իրավիճակի մասին, տեղեկություններ հաղորդել իշխանների ու հոգևոր առաջնորդների մասին: Ահա 1428 թ. նման ավետարան է ստեղծվում Շուշի բերդավանում: Սա Կարկառի բերդի անվան վերափոխության առաջին հիշատակությունն է: Արցախցի գրիչ Տեր-Մանուելը իր ստեղծած Ավետարանի հիշատակարանում գրում է, որ գիրքը գրել է 1428 թ. Շուշի կոչվող գյուղի սբ.Աստվածածին եկեղեցում, Աղվանից կաթողիկոս Տեր-Հովհաննեսի, բռնակալ Իսկանդարի, որը «քրիստոնյաների չարչարող էր, և հույսն աստվածն է»: Հին աղբյուրներում հիշատակված Կարկառ բերդաքաղաքը ոչ միայն կորցրել էր իր բերդի նշանակությունը, այլև XV դարի առաջին կեսում գյուղի էր վերածվել, չնայած պահպանում էր որպես մշակութային կենտրոնի իր նշանակությունը, քանի որ ամեն տեղ չէ, որ գիրք էր ստեղծվում: Ժամանակի մասին հարուստ տեղեկություններ են հաղորդում ոչ միայն գրքերի հիշատակարանները, այլև եկեղեցիների վիմագրերը, խաչքարերը, տապանագրերը: Վաղուց Արցախում կար մի սովորություն, ըստ որի եկեղեցու նվիրատուները իրավունք ունեին տաճարի պատին հատկացված մասում արձանագրել իր նվերի ու իր տոհմի, ինչպես և ժամանակաշրջանի մասին: Այսպես, Գանձասարի վանքի պատերին արվել են 250 արձանագրություններ, որոնք փաստորեն Կաղանկատվացու «Աղվանից աշխարհի պատմության» շարադրանքի շարունակությունն են: Պակաս արձանագրություններ չեն պարունակում Արցախի և Ուտիքի հարյուրավոր մյուս վանքերը, եկեղեցիները, խաչարձանները:

XV դարի կեսերին հզորանում է Ջհան շահը: Նա հայոց բեկերին տալիս է մելիքության կարգավիճակ, իրավունք տալիս զորք պահել զորավար հարյուրապետի (յուզբաշի) հրամանատարությամբ: Յուրաքանչյուր իշխան պարտավոր է իր ժառանգությունը ծնողից հետո հաստատելու համար անձամբ թագավորից հատուկ հրովարտակ (փիրման) ստանալ: Շիրվանում թագավորական տան շառավիղներից Կարա-Քեշիշ Օղլի (Սև-Տերտերի որդի) Ալի-ջանը 1444 թ. Շաքիի խան է կարգվում, Ջհան շահի արքունիքում հաստատելով նախնիներից՝ Բագրատունի Սահլ Սմբատյան ու Սահակ Սևադա իշխանաց իշխաններից ու Իշխանիկ թագավորից եկող ժառանգական իրավունքը: Բագրատունիների ժառանգորդը խանական տիտղոս է ստանում մահմեդականություն ընդունելու գնով[249]: 1457 թ. Ալի-ջանին հաջորդում է նրա որդին՝ Թամիր-խանը: Շուրա քաղաքի սբ. Աստվածածին եկեղեցում պահվող 1477 թ. ստեղծված պատկերազարդ Ավետարանի հիշատակարանում Մակար եպիսկոպոսը ընթերցել է Կարա-Քեշիշ անունը, որը 1501 թ. միջնորդել է, որպեսզի Ավետարանը վաճառվի Դանիելի որդի Յովհանին[250]: Շահ Թահմասպը 1551 թ. Կարա-Քեշիշ-Օղլիների փոխարեն Շաքիի կառավարիչ է նշանակում ղզլբաշների ցեղից: «Շահմիր խանը՝ Շաքիի խաքիմը, Շաքիի հին տերերի տոհմից է (այսինքն, տեղի հնուց եկող Քեշիշ-Օղլի խանական դինաստիայի ժառանգորդը, որին 1551 թ. գահից գրկել է շահ Թահմասպը)»[251]: Շահ Թահմասպ I-ը (1525-1576 թթ.) էմիր Ջի-

Բաքվում, 1984թ. «Ադրբեջանի պատմության աղբյուր» խորագրով: Բունիաթովը հեղինակի «Հայաստան» անվան փոխարեն հասկանում է «Ազերբայջան»:

[247] Բարխուտարեանց, Պատմություն Աղուանից, Հ. Բ, Թիֆլիս, 1907, էջ 175:

[248] Բ.Ուլուբաբյան, էջ 304:

[249] И. П. Петрушевский, Очерки по истории феодальных отношений в Азербайджане и Армении в XVI-XIX вв., Ленинград, 1949, стр. 138. (Смотри так же: Абд-ал-Лятиф-эфенди, Ц и Т, изд. Баку, 1926, рус. стр. 5-6).

[250] Մ. Բարխուտարյանց, Աղուանից երկիր և դրացիք, Երեւան, 1999, էջ 19:

[251] Петрушевский, стр. 104.

յաղ-օղլուին, որը դաջարական ցեղից էր, Ղարաբաղի բեկլարբեկ նշանակեց, հողեր և արոտներ նվիրելով Ղարաբաղում: Վրաց ժամանակագիրը հայտնում է, որ 1548 թ. Շահ-Թահմասպը ավերել է Շաքին, իսկ Շաքիի տեր Դավրիշ-Մահմադը փախավ Գյուլիստանի բերդը[252]: Դա ամենևին էլ պատահական չէր, քանի որ Շաքի-Նուխիի հայազգի տերերը սերտ կապեր էին պահպանում Արցախի, մանավանդ Գյուլիստանի տերերի հետ, ուստի և նրա ամրությունները որպես վերջին ապաստան են ծառայել: Ու ամենևին էլ պատահական չէր XVII դ. սկզբներին այս տոհմի քրիստոնյա մնացած շառավիղներից Սև Աբովի ընտանիքի հետ այստեղ տեղափոխվելը: XVII դ. թուրք պատմիչ Ռաշիդը «Ջիհան-նյուայում» գրում է, որ Գյուլիստանի սեպաձև, բարձր ու ամրակուռ բերդը Շիրվանի (հայ) մելիքների համար որպես ամառային բնակավայր է ծառայել[253]: XVII դ. երկրորդ կեսին թուրքական իշխանության ժամանակ կրկին Շաքի-Հերեթում տիրում են հայազգի Կարա-Քեշիշ-Օղլիները: «1598 թ., երբ Ալեքսանդրե խանը (վրաց թագավոր) հպատակություն ցույց տվեց (թուրքերին - Բ.), նրան հանձնարարվեց Շաքիի բերդի գրավումը, - գրում է թուրք ժամանակագիր Փեչևի-Իբրահիմը, - դրա համար ուղարկվեցին զինվորական մասից 200 սիփահի (հեծելազոր) և էմիրներից Միրզա Ալիբեյն ու (Լեվենդի-Լևոն - Բ.) Լազոս-Սիմեդ բեյը: Այս հնագույն երկիրը Սիմեդ բեյի հայրենիքն է, որի հայտնի առյուծներից ու գայլերից է ինքը: Բայց նրանց ճանապարհի վրա գտնվող Կրմը (Ալազանի - Բ.) գետի խիստ հորդացած ու տղմոտ լինելու պատճառով մի քանի օր ուշացան: Հետո հարմար առիթ գտնելով գետն անցան և պաշարեցին Շաքիի բերդը: Բարձրյալն Աստծո բարերարությամբ նրանք բերդը գրավեցին փադիշահական պետության համար: Իր հոր այդ ծառայության Լևենդի (Լևոնի) որդին՝ Առաքել-Միրզան, նշանակվեց այդ էլայեթի իշխողը»[254]: Նրանց իշխանությունը ճանաչում և հաստատում են նաև Շահ-Աբբաս Մեծն ու նրա հաջորդները: Տոհմի «Սև» անունը, հավանաբար, մնացել է Սևադայի անունից: X դարի բյուզանդական կայսր և պատմիչ Կոնստանդին Ծիրանածինը այլազգիներին ուղղված նամակների թվում հիշատակում է և Շաքիի տերերին «Սևորդեաց, այսինքն՝ Սև Որդիներ կոչվող երեք իշխաններին» հասցեն[255]: Իսկ VIII - XI դարերի իրադարձություններից մեզ հայտնի է, որ Շաքի-Հերեթում իշխում էր Բագրատունյաց մի ճյուղը: Արաբ

[252] Գր. Լ. Մելիքսեթբեկ, Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ. Գ, Եր., 1955, էջ 68:
[253] Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին, հ. Բ, Եր., 1973, էջ 17:
[254] Նույն տեղում, հ. Ա, Եր., 1973, էջ 38-39:
[255] Կոնստանդին Ծիրանածին, «Բյուզանդական արքունիքի արարողությունների մասին», Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ. 6, Եր., 1970, էջ 15:

պատմիչ Մաադին Սևորդիների տոհմը համարում է «հայոց մի ճյուղը»: Վերջին անգամ այս անվանը մենք հանդիպում ենք Շիրվանից Թալիշ-Գյուլիստան տեղափոխված Աբովի անվան հետ (Սև Աբով), որն այս տոհմի շառավիղներից է: XVII դ. թուրք պատմիչ Չելեբին «Ջիխան-նյումայում» գրում է. «Մակամատայի» (Մաքամ - Բ.) Շարնեշին (իրանա-արաբական բանասեր Աշ-Շարիշի, մահ. է 1222 թ. - Բ.) ասել է, որ «Հայաստանը կազմված է երեք մասերից. դրանցից առաջինը Դեբիլն է, Կալիկալան, Խլաթն ու Շեմիսաթը, երկրորդը՝ Բարդան (Պարտավը), Բայլականը, երրորդը՝ Նախիջևանը»[256]:

Հայերը այս երկու պետություն-համակարգերի՝ Պարսկաստանի և Օսմանյան Թուրքիայի միջև մի առանձին դիրք են գրավում՝ շնորհիվ մեծ առևտրի մեջ ունեցած ազդեցության: Հայ վաճառականներն էին տիրում մետաքսի մեծ ճանապարհին, որն ընդհատվել էր Բյուզանդիայի վերացումով: Հայ առևտրականների հետ Եվրոպա էին գնում նաև հոգևորականներ, գիր ու գրականության մարդիկ: Այսպես, XVI դարի սկիզբը Վենետիկում մեծ շրջադարձ էր հայ ժողովրդի կյանքում: Ահա այս պայմաններում սկիզբ է առնում մարդկության համար նոր ժամանակաշրջանը:

ՂԱՐԱԲԱՂԸ ՆՈՐ ԴԱՐԱՇՐՋԱՆՈՒՄ

(XVI - XVII դդ.)

XVI դարի սկզբին արդաբիլցի Շեյխ-Սեֆիի թոռը՝ շեյխ Իսմայիլը, որ 20-ամյա պատանի էր ու տոհմի միակ ժառանգը, յոթ հազարանոց զորքով անցնում է Արաքսը, ապա և Կուրը, անսպասելիորեն հարձակվում Շիրվանի կենտրոն Շամախիի վրա: Շամախին, որպես առևտրական կենտրոն և վաճառաշահ քաղաք, իր հարստությամբ մեծ հռչակ էր ձեռք բերել: Նման մի հարձակման ժամանակ արդաբիլցի թուրքերը պարտվել էին, իսկ Իսմայիլի հույսը Շեյխ-Հեյդարը՝ զոհվել: Պատանի Իսմայիլը գրավում է քաղաքը, սպանելով շիրվանշահին՝ լուծում է հոր վրեժը, ապա գրավում Բաքուն: Տեղեկանալով, որ ակ-կոյունլուների ցեղապետը զորքով շարժվում է իր դեմ, շտապում է հանդիպել նրան, ու Նախճավանի մոտ 1501թ. ճակատամարտում հաղթում: Ողջ Իրանի երկրամասերը այնպիսի մի իրավիճակում էին, որ վաղուց հասունացել էր մի կենտրոնածիգ ուժի շուրջը միավորվելու կարիքը: Իսմայիլի այս հաղթանակները նրան այնպիսի հռչակ բերեցին,

[256] "Джихан-нюма" и "Фезлеке" Кятиба Челеби как источник по истории Армении, XVII, Ереван, 1973, стр. 93, см. также: И.Ю.Крачковский, изб. соч., стр. 306.

որ նա անարգել իրեն շահ հռչակեց նոր պետության մայրաքաղաք դարձնելով Թավրիզը: Նրան են միանում Ֆարսն ու Խորասանը: Իսմայիլ շահը աչքի է ընկնում կազմակերպչական ջիղով ու ռազմավարական ծրագրերն ընկալելու և այն իրականացնելու խորաթափանց մտքով: Շուտով Իրանը տարածվում է հին Սասանյան պետության սահմանների մեջ՝ Միջին Ասիայից մինչև Եփրատ, Պարսից ծոցից մինչև Կովկասյան լեռնաշղթա: Այսպես շահ Իսմայիլը սկիզբ է դնում Սեֆևիների հարստությանը, որը կոչվեց ղզլբաշների պետություն: Անդրկովկասը ընդգրկվում է Երևանի խանության մեջ[257]:

Երբ 641 թ. ողջ Իրանը գրավեց արաբական խալիֆաթը, թվում էր, թե մահմեդականություն ընդունելով ոչ միայն երկիրը, այլև ժողովուրդն ու նրա բազմադարյան մշակույթը ամբողջությամբ կուլ կգնա արաբներին, մանավանդ որ արաբները ապազգայնացման քաղաքականություն էին վարում: Սակայն պարսից հին մեծ մշակույթը, ազգային ինքնագիտակցությունը դիմադրեցին այս փորձությանը: Պարսկական կրոնը՝ զրադաշտականությունը ոչնչացվեց: Կրակապաշտների մի փոքր խմբի հաջողվեց իրենց կրոնի հետ Հնդկաստան տեղափոխվել, այնտեղ պահպանել անշեջ կրակը: Պարսկական մշակույթի մի մասն, իրոք, կորսվեց անվերադարձ: Պարսիկները արաբացման վտանգից միայն մի ելք ունեին՝ ազգայնացնել իսլամը: Հենց սեփական կրոնը՝ Շիա աղանդն էլ միակ ելքն էր ստեղծված վիճակից: Արդաբիլում ապրող Շեյխ-Սեֆիի գերդաստանը իրար է միացնում Իրանի բաժան-բաժան եղած ծվենները: Իսկ Իսմայիլ շահը պետականացնում է կրոնը, որը միավորում, կուռ ամբողջության մեջ է ընդհանրացնում Իրանում ապրող ժողովուրդներին: Ատրպատականը այդ ժամանակներում վաղուց արդեն Ազարբայջան էր կոչվում, քանի որ Իրանը նվաճող արաբները միայն այդպես կարող էին արտասանել երկրամասի անունը: Իսկ թուրքա-

[257] Որոշ պատմաբաններ, մանավանդ բաքվեցի գիտնականներ, սեֆևիների հիմնադրած ղզլբաշների պետությունը իր ծագումով, էթնիկական ու ռազմական կազմով համարում են ադրբեջանական պետություն (И. Петрушевский, Азербайджан в XVI-XVII вв.,Сборник статей из истории Азербайджана, Баку, 1949, стр. 233, также: История Азербайджана, т. I, Баку, 1958, стр. 288). Սակայն Շահ-Իսմայիլ Ա-ն իրեն հայտարարեց Իրանի շահնշահ: Պետական լեզուն Պարսկերենն էր, ու ամեն ինչ արվում էր վերականգնելու իրանական պետական ավանդները ու նվաճելու Սասանյան կայսրության մեջ մտնող բոլոր երկրները՝ Խորասանից մինչև Միջագետք ու Հայաստան: Այս շրջանի համար ևս հատկանշական է պետության աստվածապետական բնույթը: Ազարբայջան-Ատրպատականը այս պետության մի նահանգն էր միայն և ոչ ավելին, ու Սեֆյան հարստության պատմիչները այն երբեք ազարբայջանական չեն համարել, իսկ քաղաքական նպատակներով պատմության կեղծումը, վաղ թե ուշ, բացահայտվում է:

կան խաշնարած ցեղերը Ատրպատական-Ազարբայջանում սկսեցին բնակվել սելջուկների տիրապետության շրջանում: Դա հաստատում է և թուրք պատմաբան Զեքի Տողանը[258]: Պետք է ասել, որ զուտ թուրքական զանգվածները բնաջնջվել էին Չինական կայսրության բանակների հարվածներից: Երբ նրանց փրկված մասը գաղթում է դեպի արևելք, նրանք միախառնվում են Միջին Ասիայի այլ ցեղերի հետ, ստեղծում նոր ցեղեր, որոնք բնիկ թուրքեր չէին, լեզուն ևս խառնածին էր, չնայած պահպանվում էր «թուրք» անվանումը[259]: Այս կապակցությամբ Ռաշիդ-էդդին Ֆազլուլլահ Համադանին գրում է. «Օղուզի զավակներից 24 ճյուղ առաջացավ, ինչպես որ մանրամասն գրվել է ցուցակի մեջ: Յուրաքանչյուրն ունեցավ իր անունն ու տիտղոսը, և աշխարհում գտնվող բոլոր թուրքմենները այդ ցեղի սերունդն են և Օղուզի որդիներից են սերում: Անցյալում թուրքմեն անունը գոյություն չի ունեցել, և անապատաբնակ թուրքանման բոլոր ցեղերին պարզապես թուրք էին կոչում»[260]: Իբն Ֆազլանը այսպես է գրում թուրքերի թաղման մասին. «Եթե նա իր կենդանության ժամանակ մարդ էր սպանել, ուրեմն և արի մարդու համբավ ուներ, նրա ձեռքով սպանված մարդկանց թվին հավասար փայտե ինչ-որ ձևեր էին տաշում, դնում նրա գերեզմանի մեջ և ասում. «Սրանք նրա ծառաներն են և արքայությունում պիտի ծառայություն մատուցեն նրան»[261]: Ատրպատական թափանցած թուրքերը իրենց վրանները հաստատում էին գյուղերում և ջրառատ շրջաններում, ուր ընդարձակ արոտավայրեր կային, քանի որ իշխող տարր էին և հաղթող: Գյուղի բնիկները շատ շուտ ձուլվեցին խաշնարած ցեղախմբերի մեջ, մոռանալով իրենց բարբառն ու լեզուն[262]: «Թուրքերեն լեզուն նախ գյուղերում է գերիշխել տեղական լեզվի վրա և հետո միայն տարածվել դեպի քաղաքները և առևտրական կենտրոնները», - գրում է Էնաեթուլլահ Ռեզան: Հենց Սեֆևիների օրոք Ատրպատականում իշխող է դառնում պարսկերենի և Միջին Ասիայից բերած խառնածին լեզվի մի նոր խառնուրդը, որը «ազարի» է կոչվում: «Սեֆեիների բոլոր գործերը ազերիների ձեռքում էր և նրանց արքունիքում, լինի Թավրիզում, Ղազվինում և կամ Սպահանում, խոսում էին ազերիների լեզվով, նաև տիտղոսների և անունների մեծ մասը այդ լեզվով էր...»,— գրում է Համդուլլահ Մուսթոֆին[263]: Ուրեմն, թե լեզվական և թե էթնիկական բավականին տարբերություններ կային Բյուզանդիայում հաս-

[258] Togan Zeki Velidi, Umumi, Turk tarihie giris, C-1 Ankara, 1946, p. 186-187.
[259] Էնեաթուլլահ Ռեզա, էջ 131:
[260] Ռաշիդ-էդ-Դին Ֆազլուլլահ, Ջամե-ուլ-Թավարիխ, հ.1, Թեհրան,1959, էջ 35:
[261] Նարխաշի, Աբու Բաքր Մուհամմադ բին Ջաֆար, «Թարիխե Բուխարա», Թեհրան, 1972, էջ 102:
[262] Էնեաթուլլահ Ռեզա, էջ 140:
[263] Համդուլլահ Մուսթոֆի, Նիվզհաթ-ուլ-Կուլաբ, Թեհրան, 1957, էջ 3

տատված օսմանյան թուրքերի ու Իրանում տիրող Սեֆևիների միջև, որպեսզի նրանց միջև անհաշտ թշնամություն առաջանար: Փոխադարձ ատելության պատճառներից մեկն էլ կրոնական տարբեր աղանդների պատկանելն էր: Թուրքերը սունի աղանդն էին ժառանգել, իսկ իրանցիները շիա էին: Նրանց միջև պատերազմներին կրոնական կերպարանք էր տրված: Օսմանցիների մեծ մուֆթին հայտարարում էր, որ աստծու համար մի հատ շիայի մահն ավելի հաճելի է, քան յոթանասուն քրիստոնյաների մահը[264]: Սելիմ սուլթանի հրամանով Թուրքիայում մահապատժի են ենթարկում 40 հազար մահմեդականների միայն այն բանի համար, որ նրանք շիա աղանդին են պատկանում: Մեկը մյուսի դեմ արշավանքներն անցնում էին նրանց միջև ընկած Հայաստանի տարածքով: Հաճախ ճակատամարտերը տեղի էին ունենում հենց Հայաստանում: Իհարկե, պատերազմների բուն պատճառը երկու տերությունների նոր երկրներ նվաճելու մրցակցությունն էր ու թալանի իրավունքը: Այս ամենը հայ ժողովրդին XVI դարում բերեց նոր աղետներ ու փորձություններ: Հայաստանը երկու երկրների համար հարմար հենակետ էր իրենց հետագա արշավանքների, նվաճումների համար: Հայկական ձեռագրերի հիշատակարաններում հարյուրավոր սահմռկեցուցիչ նկարագրություններ են պահպանվել օսմանյան թուրքերի բռնությունների մասին: Շահ Իսմայիլը մի անգամ Հայաստանով անցնելիս ձգտում է ավերել երկիրը, որպեսզի պարեն և սնունդ չթողնեն հալածող սուլթանի բանակի համար: Ի վերջո, 1555 թ. Ամասիայում երկու երկրների միջև կնքվում է դաշնագիրը, որի համաձայն Հայաստանը կրկին կիսվում է, ու Արևելյան Հայաստանը, որի հետ էլ Արցախն ու Ուտիքը, անցնում են Իրանին: Երևելի թագավորներին թե Իրանում և թե Թուրքիայում փոխարինելու են գալիս ընդունակություններով շատ թույլ տիրակալներ: Ընդհանրապես, Իրանի կառավարման համակարգն այնպիսին էր, որ նրա ուժեղ կամ թույլ լինելը կախված էր շահի ունակություններից: Այս երևույթը բնորոշիչ է նաև Կենտրոնական Ասիայի երկրներին: Բավական է, որ երևան գա մի ռազմական տաղանդով օժտված Սելջուկ, Չինգիզ, Թեմուր, Օսման կամ Իսմայիլ, որպեսզի բոլորը միավորվեն նրա շուրջն ու սկսեն ասպատակությունները: Հենց մեռնում է այս տաղանդավոր կազմակերպիչը, երկիրը կամ պետությունը նույն պահին քայքայվում է, իսպառ վերանում: Օսմանյան Թուրքիայի բանակը Իրանի համեմատ, իր մեջ որոշ կայուն համակարգեր էր պահպանել, որոնք փոխառել էր բյուզանդականից, ուստի ավելի կազմակերպված տեսք ուներ և, չնայած թույլ սուլթանների, իներցիայով պահպանել էր ուժը:

[264] Ph.Lavalee, Historie de l'Empire Ottoman, Paris, 1855, p. 206 , տես նաև Լեո, էջ 172:

Լավ հրետանի ունենալով, նա հաճախ առավելություններ էր ձեռք բերում պարսկական բանակի նկատմամբ:

Ղզլբաշների (Շահ-Իսմայիլ Ա) 1505 թ. ավերիչ պատերազմների հետևանքով Արցախի հայերի մի մասը Վրաստանի Կախեթ գավառ է գաղթում: Այդ նույն թվականին Աղվանից կաթողիկոսության աթոռին տեր Թովմային հաջորդում է տեր Առաքելը, որը նստում է Ճալեթի վանքում: Նույն վանքի միաբան Ստեփան եպիսկոպոսը մի ավետարան է գրել տալիս, որի հիշատակարանում կաթողիկոսը գրում է. «Ի թիվ ՉԿ (1511) ես՝ տեր Առաքել կաթողիկոս, գնեցի վերստին պարոն Հասան բէկէն եկեղեցւոյս դրան Ճալեթ գիւղս ԳՌ (3000) թանկա խարճ արի և տուի վասն մեր հոգւոյս սբ. Աստուածածնիս, և ով հակառակի այս գիւղ Ճալեթիս կամ խլե...»[265]: Տեր Արիստակես Բ-ն, որը, սկսած Գրիգորիսից, 72-րդն է Աղվանից կաթողիկոսների շարքում, հիշատակված է Շահ Թահմազ Ա-ի հրովարտակում, այսինքն պարտադիր հաստատում է ստանում շահից, գահակալում է Գանձասարում: Իսկ Գրիգոր կաթողիկոսը 1573 թ. ուրանում է հավատը, նրան փոխարինում է Արջածորից տեր Դավիթ Թ-ն, որին անհայտ պատճառով խաչենցիք կախում են Գանձասարի վանքի զանգակատնից: Այդ ժամանակներում Դիզակում և Վարանդայում իշխում էր Հախիջան իշխանի որդի Մելիք Պապին, Խաչեն, Զրաբերդ ու Գուլիստան գավառներում՝ Զալալյանների տոհմից Սայտունի որդի Մելիք-Հատիրը, Ծար և Սոդք գավառներում՝ Շահնշահ իշխանի որդի Մելիք-Ուլուբեկը: Մելիքներն իրավունք ունեին սեփական զորք պահել իրենց հարյուրապետներով[266]:

1541 թվականին էջմիածնի կաթողիկոս էր ընտրվել Ստեփաննոս Սալմաստեցին, որի պատանեկությունն անցել էր Կ.Պոլսում, ապա եղել էր Լեհաստանում և Մոսկվայում, լավ ծանոթ էր արևմտյան աշխարհի քաղաքական հանգամանքներին, գիտեր մի քանի օտար լեզուներ: Նա վաղուց էր փայփայում Հայաստանը արևմտաեվրոպական երկրների օգնությամբ ազատագրելու երազանքը: 1547 թ. կաթողիկոսը էջմիածնում գաղտնի ժողով է հրավիրում, որին մասնակցում էին թե՛ աշխարհիկ տերեր, թե՛ կրոնապետներ: Ժողովը վճռում է, որ կաթողիկոսը գնա Եվրոպա, դիմի քրիստոնյա պետությունների ու Հռոմի պապի օգնությանը, պարտավորվելով այդ գնով վերացնել դավանական տարբերությունները կաթոլիկ և հայ եկեղեցիների միջև: Ինչպես հայտնի է, Ստեփաննոս կաթողիկոսի այս առաքելությունը դեպի Եվրոպա և Ռուսաստան ոչ մի հետևանք չունեցավ: Սակայն դա Կիլիկիայի վերջին թագավորներից հետո առաջին դեպքն է, որ հայերը նման հարցով փորձում են դիմել Եվրոպայի թագավորներին: Չինադարը

[265] Մ.Բարխուտարեանց, Պատմություն Աղուանից, Թիֆլիս, 1907, էջ 20:
[266] Բարխուտարեանց, Պատմություն..., էջ 178-179:

Իրանի և Թուրքիայի միջև երկար չի տևում: Երկու երկրների պատերազմական գործողությունների թատերաբեմ է դառնում Անդրկովկասը: Ընդհարումները տեղի էին ունենում Վրաստանում, Արարատյան դաշտում, Ղարաբաղում, Շաքիում, Շիրվանում... Թուրք Օսման-Յուզդեմիրը, 1579 թ. պարտություն կրելով պարսիկներից, գնաց Դերբենտ, նվաճեց Դաղստանը, Հյուսիսային Կովկասով գնաց Ղրիմ, իրեն միացրեց այնտեղի խանին և Դաղստանի ռազմատենչ ցեղերին, արշավեց Իրանի դեմ: Ղրիմի խանը Անդրկովկասից գերեվարեց 160 հազար մարդ, որոնց մեջ շատ հայեր կային և տարավ Եգիպտոս վաճառելու[267]: Թուրքերի, թաթարների և դաժանությունների մասին նկարագրել է Հովհաննեսիկ վարդապետ ժամանակագիրը, որը ականատես էր այդ բռնություններին: XVI դարում Արցախի եկեղեցին տվեց մի այնպիսի գործիչ, ինչպիսին է Հովհաննեսիկ Ծարեցին (1560-1623 թթ.) դարի երկրորդ կեսի ժամանակագիրն ու գրիչը, որը գործել է Ղադի վանքում, տեղի մատենադարանը հարստացնելով իր գրչագրերով (Գոշի «Դատաստանագիրքը» և իր «Ժամանակագրությունը»), նորոգում հին ձեռագրերը: Այնուհետև Հովհաննեսիկը, որը սերում է Ծարա իշխանական տան Չհանշահանց իշխանական գերդաստանից, կարևոր գործերից մեկն է համարում Գեղամա գավառում սբ.Աստվածածին եկեղեցու կառուցումը (1618 թ.): Նա իր ժամանակագրությունում առավել ցայտունորեն է նկարագրել թուրք ասպատակիչների ավերածությունները զորապետ Օսման Յուզդեմիրի գլխավորությամբ (1578 թ.): Պատկերում է Գյանջա (Գանձակ), Պարտավ քաղաքների, Զրաբերդի, Խաչենի, Վարանդայի, Դիզակի Չարեկի գետից մինչև Երասխ կոտորածն ու թալանը: Ասպատակությունը տևել է երեք տարի 1576-1580 թթ.: Առավել սարսափելի էր Գանձակի և Ղարաբաղի վիճակը: Օսմանի հետ հայտնվեց և ժանտախտը: Գանձակը, Խաչենը, Զրաբերդը, Վարանդան, Դիզակը մինչև Արաքս գետը ավերեցին մի քանի օրվա ընթացքում: Երկրում ավերից ու թալանից հետո մնացել էին կոտորված մարդկանց դիակները: «Եվ եթե մի որևէ անկյունում մնացել էր շինություն, - գրում է հայ տարեգիրը, - այնտեղ էլ տնանկներն են ու մերկերն էին զետեղվում: Մնացած ժողովուրդը ոտի վրա էր, անդադար ման էր գալիս, թափառում էր մի կտոր ուտեստ գտնելու համար»[268]: Հեղինակը ցնցող գույներով ու սոսկալի փաստերով նկարագրում է սովի համատարած տեսարանը[269]: Թերևս, ամենաճշմարտացի նկարագրությունը այս իրադարձությունների ականատես Հովհաննեսիկ Ծարեցունն է. «Ի թվականիս ՌԻԸ (1579) եղև սաստիկ և մեծ տարաժամ մահ ի Յատրպատական և

[267] Լեո, էջ 184:
[268] Նույն տեղում, էջ 195:
[269] «Ճռաքաղ» ամսագիր, Մոսկվա, 1859., էջ 69-70:

ամենայն ազգեաց, մինչ բազում տունք անտերունջի և բազում հայրք և մայրք անզաւակ մնացին: Եւ երկիրս Յաղուանից ի մեջ այսպիսի վտանգի գոլով. զմեռեալն սգալով և զկենդանի զանկեալն և զինքեանք ևս հոգալով մտածմամբ ասէին՝ Ո~հ թե զերծանիմք ի տարաժամ մահուանես, թե ոչ»[270]: 1583 թ. Հովհաննեսիկ Ծարեցի վարդապետը վախճանվում է: Սակայն չնայած այս համատարած ավերին, «Հայկական լեռնաշխարհում կային տակավին որոշ վայրեր, ուր թուրք-իրանական տիրապետության այս դարերում իսկ պահպանվել էին տոհմատիրական կարգերի կենդանի հետքերը, վայրեր, ուր հայ ֆեոդալական իշխող խավը չէր կորցրել կապը ազատության համար մարտնչող ժողովրդական մասսաների հետ: Որպես օրինակ կարող ենք հիշատակել Լեռնային Ղարաբաղը, Սասունը, Զեյթունը և Լոռին...»[271]: Այդ ժամանակներում ոչ միայն նեղացել էին Արցախի իշխանների ազդեցության ոլորտները, այլև նրանք իրենց ձեռքն են վերցնում նաև վանքերի կառավարումը, իրենց տոհմից որևէ մեկին ժառանգաբար կարգելով եկեղեցու առաջնորդ[272]: Այդպես էր Ծարա իշխանությունում, որտեղ տիրում էին Դուփյանները, Խաչենում, ուր ժառանգաբար տիրում էին Զալալյանները: Գանձասարի վանքի առաջնորդությունը ևս այդ տոհմի ժառանգական սեփականությունն էր: «Ինչպես Ներքին Խաչենի, այդպես էլ Ծարա կամ Վերին Խաչենի իշխանական տների, իսկ հետո նրանց հիմքի վրա ստեղծված մելիքությունների պատմությունը ոչ այլ ինչ է, եթե ոչ հայկական ավատական դասի մի հատվածի կենդանի ու չընդհատվող շղթան, որի ամբողջ երկարությամբ այդ տները, ճիշտ է, հպատակ էին եկվոր տիրողներին, կիսանկախ էին նրանցից, հաճախ էլ ինքնիշխան, բայց երբեք ոչնչացած»[273]: Պարսկական գերիշխանությունը Անդրկովկասում կազմել էր երեք ռազմավարչական միավորներ՝ Շիրվանի (Շամախի կենտրոնով), Չուխուր-Սաադի (Երևանի կամ Փոսա նահանգ) ու Ղարաբաղի (Գանձակ կենտրոնով) բեկլարկբեկությունները: XVI դարի վերջին Ղարաբաղը Երևանի բեկլարբեկության կազմի մեջ էր առնված[274]: Մատենադարանի պարսկերեն վավերագրերի մեջ կալվածագրերը տեղեկություններ են թողել այնպիսի դեպքերի մասին, երբ օտար նվաճողները (ակ-կոյունլուներ, թուրքեր և այլն) բռնագրաված կալվածքները «օրինավոր» կերպով վաճառում են այդ

[270] Հովհաննեսիկ Ծարեցու ժամանակագրությունը, Մանր ժամանակագրություններ, XIII-XVIII դդ., հ 2, Եր., 1951, էջ 242:
[271] Աշ.Հովհաննիսյան, Դրվագներ հայ-ռուսական հարաբերություններից, հ. Ա, էջ 461:
[272] Նույն տեղում, էջ 455-456, ինչպես և Բ.Ուլուբաբյան, էջ 345:
[273] Բ.Ուլուբաբյան, էջ 346:
[274] Մատենադարանի ձեռագիր .N 4375, էջ 264ա, ինչպես նաև Աշ.Հովհաննիսյան, Դրվագներ, հ. Բ, էջ 24, ծան. 2:

հողերի ժառանգական տերերին[275]: Աղվանքի 552 թ. հիմնված կաթողիկոսության նստավայրն էր Պարտավը, իսկ ամառանոցը՝ Բերդակուր ամրոցը Մայրաքաղաքում: VII դ. Հովհաննես Բ կաթողիկոսը, նեղվելով Պարտավում նստած արաբ բռնակալների կողմից, Աղվանից կաթողիկոսությունը տեղափոխում է Բերդակուր: Սակայն հետագայում Աղվանից կաթողիկոսության կենտրոն է դառնում Գանձակ քաղաքը, իսկ Կաթողիկոսասարը մնում է որպես ամառային նստավայր: Աղվանից կաթողիկոսները միշտ էլ ենթակա էին Ամենայն Հայոց կաթողիկոսին, որի կողմից էլ ձեռնադրվում էին: Իսկ իրենց հերթին Աղվանից կաթողիկոսներին էին ենթարկվում Շաքիի, Շիրվանի և Դերբենտի հայ և բնիկ ժողովուրդների հոգևոր առաջնորդները[276]: Ըստ երևույթին, XIV դարում կաթողիկոսության կենտրոնն են դառնում Սբ. Հակոբա և Գանձասարի վանքերը, որոնք դառնում են կաթողիկոսության գահանիստ, քանի որ այս գահին տիրանում են Խաչենի Հասան-Ջալալյան տան հայրապետները, որոնք էլ դառնում են այս գահի ժառանգական տերերը: Այս իրավունքը ճանաչվում էր ոչ միայն Ամենայն Հայոց կաթողիկոսի, այլև հաստատվում էր եկվոր տիրակալների հրովարտակներով, որոնք պահպանվել են: Այսպես, օրինակ կարա-կոյունլու սուլթան Ջհանշահին ժամանակավոր փոխարինած նրա կինը՝ Բեգում-խաթունը (Սուլթանը գնացել էր Բաղդադ ճնշելու ապստամբությունը) 1462 թ. օգոստոսի 6-ի հրովարտակով Գանձասարի կաթողիկոս է հաստատում Ջալալ Մեծ իշխանի որդի Հովհաննեսին[277]: Այս հրովարտակում նաև նշվում է, որ Հովհաննեսը գահակալական իրավունքը հիմնավորելու համար արքունիք է ներկայացրել Մատթևս կաթողիկոսի գահակալությունը հաստատելու մասին Ջհանշահի հրովարտակը, որն իր հերթին հաստատվել էր արքա Շեյխ-Ուվեյս Բահադուրի (1356-1374 թթ.) հրամանագրով: Այս փաստաթուղթը հաստատում է, որ Աղվանքի կաթողիկոսները նախապես ձեռնադրվում են Կիլիկյան Հայքի թագավորի («Սսի թագավոր») ու հայոց կաթողիկոսի կողմից: Ըստ հրովարտակի, Աղվանքի կաթողիկոսը բավականին լայն իրավունքներով է օժտվում արքայի կողմից: Արքան նախ կարգադրում է այս վիլայեթում իր տերության ներկայացուցիչներին, որպեսզի Աղվանքի կաթողիկոսին «ճանաչեն այդ վիլայեթում ապրող հայերի առաջնորդ ու ղեկավար, և նրա ձեռքը այդ գործում ուժեղ և իրավազոր համարեն, նրան պատկանող վայրերում չիջևանեն, նրանց չորքոտանիներն ուլաղ չվերցնեն, նրանցից ու նրան ենթարկվող հոգևորականներից ջիզյայի և բեյթ-ուլ-մալի

[275] «Մատենադարանի պարսկերեն վավերագրերը» (այսուհետ՝ ՄՊվ), II, Կալվածագրեր, կազմեց Վ.Փափազյանը, Եր., 1968, էջ 77, ՄՊվ, I, էջ 116:
[276] Բ.Ուլուբաբյան, էջ 37
[277] ՄՊվ, Ա, էջ 45:

պատրվակով ոչինչ չպահանջեն»: Իսկ երկրի հոգևորականներին ու քրիստոնյաներին կարգադրում է. «Աղվանքի, Գանձասարի հայերը թող նրան ճանաչեն որպես իրենց առաջնորդին ու ղեկավարին և իրենց կրոնի վերաբերյալ նրա ասած խոսքերի և խրատների սահմաններից դուրս չգան, նրան ենթարկվելն անհրաժեշտ համարեն և երբեք նրանից չանջատվեն, ոչ մի արարած նրա գործերին չխառնվի ու չմիջամտի, նրան ենթակա հոգևորականների ու մերձավորների նկատմամբ հանցանք չգործեն, նրանցից ոչինչ չպահանջեն և որևէ ցանկություն ու ակնկալություն չունենան»[278]: Պարսից Սեֆևիները ևս հանդուրժողական քաղաքականություն էին վարում Աղվանից կաթողիկոսների նկատմամբ՝ հաճախ նրանց շնորհելով անսահմանափակ արտոնություններ, որը արձանագրվում է շահի հրովարտակներում[279]: Սակայն միշտ չէ, որ եկեղեցին ազատվում է հարկերից: Հայ հոգևորականության բարեկամը համարվող Շահ Աբաս Ա-ն կարգադրում է տարիների ընթացքում կուտակված հարկը համարել «թաֆավուտ-ե ջիզյա» (այլադավանության համար գանձվող հարկի տարբերություն) և գանձել եկեղեցուց[280]: Աղվանից կաթողիկոսությունը հաճախ դառնում է էջմիածնի կողմից վարվող պառակտողական քաղաքականության զոհը: Մի բողոքագրի տակ, որը ստորագրել են «Շամախու, Էիրվանի, Շաքիի և առհասարակ Ալանաց երկրի» բնակիչները, ուղղված էր ընդդեմ նրանց, ովքեր ուզում են նրանց անջատել Աղվանից կաթողիկոսությունից և ուղիղ ենթակայեցնել էջմիածնին»[281]: Քանի որ Գանձասարի կաթողիկոսությունը արտոնյալ վիճակում էր, ու նրա ենթակաները ազատված էին շատ ու շատ հարկերից, իշխանները ինքնակամ առատ նվիրատվություններ են կատարում եկեղեցուն, որի տերը իրենց տոհմն է: Հատկապես շատ էին օգտվում տապանատուն-վանքերը: Այս ձևով աշխարհիկ ավատատերերը եկվոր նվաճողների կողոպուտից զերծ էին պահում իրենց տնտեսությունը: Այս նվիրատվությունները սովորաբար արձանագրվում էին վանքերի, եկեղեցիների պատերին:

XVI դարի վերջերին պատմությունը մի նոր անակնկալ մատուցեց՝ քայքայված, արևմուտքից թուրքերի, արևելքից՝ ուզբեկների հարվածներից խորտակվող Իրանին տալով շատ տաղանդավոր մի թագավորի՝ շահ Աբաս Առաջինին, որին շուտով Սեծ պետք է կոչեն նրա ժամանակակիցները: 1586 թ. Խուդաբանդա-Շահին հաջորդեց նրա որդի Աբբասը: Նա շտապեց թուրքերի հետ ծանր պայմաններով հաշտություն կնքել՝ զիջելով Անդրկովկասն

[278] Նույն տեղում, էջ 46:
[279] Մատենադարանի ձեռագիր N 6644, էջ 166բ, 167ա:
[280] ՄՊվՀ, Բ, էջ87:
[281] Թոփճեան, Ցուցակ ձեռագրաց, Խ.Դաղեան, Բ, էջ 19:

ու Ատրպատականը: Իրանի տիրակալը ձգտում էր ամեն գնով ժամանակ շահել ուժ հավաքելու համար: Ուզբեկները գրավել էին Խորասանը, ավերել Հերաթն ու Մեշեդ սրբազան քաղաքը: Երկրի ներսում ծայր էին առել ապստամբությունները: Ուժերի գերլարումով Շահ-Աբբասը 1597 թ. ճակատամարտում ջախջախում է ուզբեկների զորքը: Դա վերականգնում է Սեֆևիների հարստության անունը: Մի հանճարեղ կանխատեսմամբ նա շարունակեց իր նախորդների սկսածը, ամբողջացրեց և զարգացրեց այն համակարգը, որը միացնում էր պարսկական պետության բոլոր հատվածները կրոնի և լեզվի ամուր կապերով[282]: Բանակի վերակառուցմանը զուգահեռ նա հոգ է տանում երկրի տնտեսական զարգացման, առևտրի բնագավառում նոր հնարավորություններ ստեղծելու ուղղությամբ: Իր երկրի բարգավաճման համար նա ձեռնարկեց մի դաժան ու բարբարոսական ձեռնարկ, ինչպիսին է հայերի մեծ տեղահանության ծրագիրը:

Իսկ Թուրքիայում 1596-1610 թթ. կատարյալ անիշխանություն էին տիրում: Այստեղ ծայր էր առել զինվորական ապստամբությունները: Թուրք փաշաները միանում էին ավազակախմբերին, իրենց անվանում Ջալալիք, ավերում, թալանում Ստամբուլից մինչև Երևան: Հսկայական զորախմբերը գրավում էին բերդերը, թալանում բնակիչներին: Սրանց մեջ էր նաև Քոռօղլի ավազակապետը: Թուլական սուլթան Մուհամմադը, որ գահ էր բարձրացել 1595 թ., ոչինչ անել չէր կարող: Սա պարսից շահի համար շատ հարմար ժամանակաշրջան էր: Իրանի բանակի վերակառուցման գործում շահին օգնում էին երկու անգլիացի՝ Անտոնի և Ռոբերտ Շերլի եղբայրները, որոնց նպատակն էր Եվրոպայի համար մեծ վտանգ ներկայացնող Թուրքիայի թիկունքում հզոր ուժ ստեղծել: Նրանք Իրանի շահին օգնում էին դիվանագիտական հարցերում՝ Իրանը կապելով եվրոպական երկրների, ինչպես նաև Հռոմի պապի հետ[283]: Անդրկովկասից հայերի, վրացիների, մահմեդականների ներկայացուցիչները հայտնվում էին Իրանի մայրաքաղաք Սպահանում, ներկայանում շահի Ալի-Ղափ պալատը, խնդրում, որ շտապի գալ Հայաստան և Վրաստան, ազատել իրենց օսմանյան բռնակալությունից: Հայ պատմագիր Առաքել Դավրիժեցին հիշատակում է Աղվանքից Շահ Աբբասին ներկայացած իշխանների՝ Սարուխան-բեկ և նրա եղբայր Նազարը՝ Ոսկանապատից (Ուտիք), Օղլան-բեշիրը (քահանա) և իր եղբայր Ղալաբեկը՝ Հաթերքից, Ջալալ-բեկը և իր եղբորորդիները՝ Խաչենից, Մելիք-Մուջումը՝ Դիզակից, Մելիք-Փաշիկը՝ Քոչիզ գյուղից, Մելիք-Բարեն Բրիտիս գյուղից, Մելիքսեթ եպիսկոպոսը՝ Վերին Ջալամի Մելիքզադա գյուղից, Մելիք-Հայկազը՝ Ջանգեզուրի (Քշտաղ) Խնածախ գյուղից: Պատմագիրը նաև հա-

[282] Լեո, հ. 3, գ.1, էջ 224:
[283] М.С.Иванов, Очерки истории Ирана, М., 1952, стр. 64.

ղորդում է, որ Արցախի Դիզակի գավառից չորս գյուղ, հալածվելով թուրքերից, անցան Պարսկաստան, և շահը նրանց բնակեցրեց Սպահան քաղաքում[284]: Շահ-Աբբասը, նախապատրաստելով բանակը, թշնամու համար անսպասելիորեն հայտնվում է Թավրիզի մատույցներում ու շեշտակի գրոհով խուճապի մատնում թուրքերին: Թավրիզից ոչ հեռու Սոֆյանի դաշտում շահը ջախջախեց օսմանցիների բանակը, գերեց հրամանատարին: Թուրքերը, հանձնելով Նախճվանը, ամրացան Երևանի բերդում: Շահը, անցնելով Արաքսը, 1604 թ. հյուրընկալվեց Զուղայում: Վաճառականների քաղաքը ընդունելություն կազմակերպեց իրենց «ազատարար» շահի պատվին, որը քիչ զարմանք չպատճառեց հենց իրեն՝ հզոր արքային: Ժամանակի միջազգային առևտրական ուղիներում հանգուցային դեր ունեին Զուղայի հայերը, որն էլ նրանց մեծ հարստություն էր բերում: Զուղացիները XV-XVI դարերում առևտուր էին անում մի կողմից Հնդկաստանում ու Չինաստանում, մյուս կողմից՝ Արևմտյան Եվրոպայի երկրներում: «Վաճառական թագավոր էր Շահ-Աբասը», - գրում է պատմաբան Լեոն[285]: Նա կառավարում էր մետաքսի առևտուրը արևելքի ու արևմուտքի միջև, որը ոսկով լցնում էր արքունական գանձարանը: Սա ևս ցույց է տալիս, որ Շահ-Աբբասը, հակառակ իր նախորդների, երկրի վերելքի միակ ճանապարհը համակարգ ստեղծելու մեջ էր տեսնում: Եվ ահա շահը, տեսնելով Արաքսի ժայռերեն լանջին թառած ոսկեղեն քաղաքը, վճռում է պոկել այն այստեղից և տեղափոխել Իրանի սիրտը՝ Սպահան մայրաքաղաքը: Ինչպես պաշարումից հետո պարսից բանակը, առանց կռվի, 1604 թ. հունիսին գրավեց Երևանը: Պարսից զորամասերը անարգել թալանում էին հայերի տները, ապա իրար մեջ բաժանում երեխաներին ու կանանց, հետո տանում վաճառելու Իրանում: Սա մի նոր պատուհաս էր հայ ժողովրդի գլխին: Շահը իր բանակը ուղարկեց Կարսի ուղղությամբ: Նրան ընդառաջ դուրս եկավ թուրքական բանակը: Շահը, երբ փոքր ինչ կասկած էր ունենում ճակատամարտի ելքի վրա, ընտրում էր թշնամուն հաղթելու այլ մարտավարություն: Նա սկսեց նահանջը: Սակայն դա սովորական նահանջ չէր: Շահը վճռեց թուրքական բանակից Պարսկաստանը պաշտպանել արհեստականորեն ստեղծված «անապատով», որը անանցանելի կլինի օսմանյան բանակի համար: Եթե չկար այդ անապատը, ապա նա որոշեց ստեղծել այն, ամեն ինչ ավերել, ոչնչացնել Հայաստանում, իսկ ժողովրդին բռնի տեղափոխել Իրանի խորքերը: Սակայն սա միայն մարտավարություն չէր: Նա Պարսկաստան էր տեղափոխում հայերի վաճառականական ընդունակությունները, արհեստագործությունը: Շահը լավ գիտեր, որ երկրի իսկական հարստութ-

[284] Առաքել Դավրիժեցի, Պատմություն, Եր., 1988թ. էջ 25:
[285] Լեո, հ. 3-1, էջ 238:

յունը ոչ թե ոսկին է, այլ ոսկի ստեղծող շնորհալի մարդը: Զուղայի 12 հազար հայությանը տեղափոխեց Սպահան՝ Զայանդռուդ գետի աջ ափին մեծ հողատարածք հատկացնելով նրանց: Սակայն դատարկեց նաև Արարատյան դաշտը. Ապարանը, Լոռին, Շիրակը, Կաղզվանի ծորը, Մակուն, Աղբակը, Խոյը, Սալմաստը, Ուրմին (Որմի), որոնց տեղափոխեց Սպահանից ոչ հեռու լեռնային գոտի՝ Փերիա, Չհարմհալ, Բուրվար[286]: Միայն 10-15 տարի հետո Շահ-Աբբասն ու Երևանի կառավարիչ Ամիր-Գունա խանը հասկանում են, որ երկրի ամայացման ռազմավարությունը միանգամայն հակառակ հետևանքներ ունեցավ: Տեղահանելով բնիկ հայ ժողովրդին, նրանք միանգամայն անարգել են դարձրել թուրքական բանակի տեղաշարժը: Շահը ըմբռնեց, որ պետք է հայ բնակչության մեջ կայուն հենարան ունենալ: Ամիր-Գունա խանը, որին դրական գույներով է պատկերել ժամանակագիր Զաքարիա Քանաքեռցին, ձեռնարկում է Արարատյան դաշտի հայերով վերաբնակեցումը[287]: Դա պարսից արքունիքին ձեռնտու էր նաև հայերից գանձվող «ջիզյա» գլխահարկի պատճառով, որը բավականին մեծ գումար էր կազմում: Ամիր-Գունան Արևմտյան Հայաստան արշավելով, խորանալով մինչև Արծկե և Խլաթ, հայերին գաղթեցնում էր Արարատյան դաշտավայր: 1606 թ. Պարսից բանակը օսմանյան զորքին (Զղալօղլի փաշա) ջարդելուց հետո, անցնում է Արաքսը, պաշարում Գանձակը: Ի վերջո, օսմանցիները, որ դիմադրում էին, անձնատուր եղան: Բոլոր օսմանցի թուրքերին և տեղի Չեկիրլու սունի ցեղի բնակիչներին անգթորեն սրի մատնեց: Թիֆլիսից ետ դառնալիս շահը հյուրընկալվում է Մազրա (այժմ՝ Զոդ) գյուղում (Գեղամա գավառ), Մելիք-Շահնազարի տանը: Դավրիժեցին գրում է. «Մելիք-Շահնազարը հայ էր, հավատով քրիստոնյա, նա իշխան էր հզոր ու փառավոր և շահին այնպես հյուրընկալեց, ինչպես վայել էր թագավորին, ինքը բարեկամ ու մտերիմ էր (թագավորին) և հարգված թագավորի մոտ: Այդ պատճառով էլ թագավորը թանկագին ու ազնիվ զգեստներ նվիրելով շքեղացրեց: Նրան գավառի մելիքության իշխանությունը պարգևեց, այլև դաստակերտներ, գյուղեր տվեց նրան ու նրա եղբայրներին: Հաստատուն հրովարտակ գրեց, թագավորական կնիքով կնքեց ու տվեց նրանց, որպեսզի հաստատուն լինի այդ ժառանգությունը սրանց ու նրանց զավակների համար սերնդեսերունդ մինչև հավիտյան»[288]: Պատմաբան Բ.Ուլուբաբյանը ժամանակի աղբյուրներով ճշգրտում է, որ Մելիք-Շահնազարը 1606 թ. մահացել էր, ուստի շահը իր նախորդներով ու զորապետներով հյուրընկալվում է Մելիք-Շահնազարի որդիների՝ Յավրի բեկի, Քամալ բեկի և ազգականների

[286] Դավրիժեցի, էջ 52, ինչպես նաև՝ Լեո, էջ 246:
[287] Զաքարիա Սարկավագ, հ. Ա, էջ 45-46:
[288] Դավրիժեցի, էջ 85:

կողմից[289]: Բ.Ուլուբաբյանը հին վիմական արձանագրությունների և հիշատակարանների քննությամբ ցույց է տալիս, որ Սոդքի այս իշխանական տունը, սկսած Ուլուբեկից, Ծարա Դոփյան իշխանական տան մի ճյուղ է, որը առանձին հարստություն էր դարձել: Շահ-Աբբասը մելիքի որդիներին է նվիրում նաև Արցախի Վարանդա գավառի իշխանությունը: Իսկ այդ ժամանակներում Հայաստանում մտցվել էր գավառների կառավարման մելիքական վարչակարգը: «Մելիք» տիտղոսը Հայաստանում սկսել է գործածվել XVI դարի սկզբներից, այն օրինականացվեց միայն դարի երկրորդ կեսին, երբ Մելիք-Շահնազար Ա-ի հայր Մելիքբեկը մելիք հաստատվելու մասին շահական ֆիրման ստացավ: Պարսից արքունիքը փաստորեն խրախուսում էր իշխանական տների՝ մանր ճյուղերի տրոհումը, տեղական ինքնավարի արտոնություններ շնորհելով այդ տրոհված ճյուղերին: Ամեն մի գավառապետ իր հարևանի թշնամին էր և կարոտ օտար գերագույն տիրապետողի հովանավորության[290]: Նվաճված երկրի նկատմամբ այս քաղաքականությունը ամենևին էլ նորություն չէր: Դեռևս V դարում, վերացնելով հայոց միասնական թագավորությունը, պարսից Սասանյանները խրախուսում էին նախարարական տների կենտրոնախույս ձգտումները: Արաբական խալիֆաթն իր հերթին խրախուսում էր մանր թագավորությունների ստեղծումը: Հետազոտողները հայտնում են, որ մելիքական վարչակարգը ավելի կանոնավոր ձև ստացավ Շահ-Աբբաս Մեծի օրերից: Պարսից արքան Խաչենի, Սյունիքի և Գեղարքունիքի մելիքներին խրախուսում է կանոնավոր զորք պահել, որը հարկ եղած դեպքում կարող էր օգտագործել շահն իր արշավանքների ժամանակ: Մելիքներն իրենց տրված երկրամասի ինքնիշխան տերերն էին և հանդիսանում էին հին նախարարական-իշխանական տոհմերի բեկորները: «Մելիքական տոհմերի ծննդաբանությունը մեզ տանում է Հայոց պատմության այն փառավոր շրջանը, երբ Հայաստանի հյուսիսային լեռնական նահանգներում կազմակերպվեց հայ իշխանական տոհմերի մի հզոր դաշնակցություն՝ Զաքարե ամիրսպասալարի գլխավորությամբ »[291], - գրում է Լեոն: Գոյություն ուներ մելիքի հաստատման կարգ: Մելիքը նախ ստանում էր ժողովրդից համախոսական՝ որ համաձայն են նրա մելիք կարգվելուն: Այս համախոսականը Երևանի կամ Շամախու բեկլարբեկի ստորագրությամբ վավերացվում էր, նոր միայն դիմում էին պարսից արքունիք՝ հարստության հրովարտակ ստանալու համար: Մելիքական իշխանությունը ժառանգական էր, սակայն ժառանգը պետք է շահից ստա-

[289] Բ.Ուլուբաբյան, էջ 412, ինչպես նաև՝ Սմբատ Տեր-Ավետիսյան, Ցուցակ Ա, էջ 67-68:
[290] Բ.Ուլուբաբյան, էջ 419:
[291] Լեո, հ. 3-2, էջ 14:

նար նրա իշխանությունը հաստատող ֆիրմանը: Իր կողմից մելիքը պարտավոր էր արդարադատ լինել, հոգ տանել երկրի բարօրության մասին: Նա պարտավոր էր հավաքել արքունական հարկը և ուղարկել անմիջապես բարձր կառավարությանը: Այս մելիքները վաղուց խաբարված հայկական պետականության պահպանված սերմերն էին, որոնք, լեռնային ամրոցներին ապավինելով, պահպանել էին ոչ միայն իրենց գոյությունը, այլև իշխանությունը, ինչպես և իշխելու իրավունքը: Ղարաբաղում էր, որ ծնունդ առավ հայրենի պետականության վերստեղծման գործը: Դա բնական էր, քանի որ Ղարաբաղում էր, որ պահպանվել էր ազնվականությունը: Իբրև ազգային իշխանության կազմակերպված միավոր և իբրև ռազմական հզոր ոժ Արցախ-Ղարաբաղն էլ դարձավ հայոց ազատագրական պայքարի օրրանը[292]: XVII դարի սկզբներին Սյունիքում սկիզբ է առնում եկեղեցական մի շարժում, որը լուսավորչական ու մտավոր զարթոնքի պայմաններ է ստեղծում Հայաստանում: Այս շարժման հեղինակները երկու համեստ հոգևորականներ էին՝ Սարգիս եպիսկոպոսն ու Կիրակոս քահանան, որոնք, իրար հանդիպելով Երուսաղեմում, որոշում են նոր միաբանություններ ստեղծել: Նրանք գործունեության վայր են ընտրում Սյունիքը: Որոտանի կիրճում, Տաթևի վանքից ցած 1610 թ. հիմնում են Մեծ Անապատը: Սահմանում են խիստ կանոններ. աշխարհիկ կյանքից կատարյալ խզում, խստակեցություն, զրկանքներ, պահեցողություն: Պարտադիր օրենք էր հոգու փրկությունը որոնել գրքերի ընթերցանության մեջ: Միաբանության անդամները, կտրված աշխարհից, արտագրելով, բազմացնում էին հին գրքերը: Մեծ Անապատը մի հսկա դպրոց էր: Դա ոչ թե ճգնավորական հիմնարկ էր, այլև կոչված էր ծառայելու երկրի կարիքներին: Այստեղ պատրաստվում էին գործ սիրող, անձնվեր, բարեխիղճ կրոնավորներ, որոնք դուրս գալով Տաթևի ձորից, ցրվում էին զանազան կողմեր, հիմնում էին նոր միաբանություններ, գրասիրություն տարածում չորս կողմերում: Այս միաբան քարոզիչները ամենուր տարածում էին մաքրության, ընդհանուր բարիքի գաղափարը: Արցախի լեռներում ու խոր անտառներում ևս բացվում են անապատներ, որոնք շարունակում են Մեծ Անապատի դպրոցի գործը: Լուսավորչական այս շարժումը, անշուշտ, շուտով տալիս է իր պտուղը: Առաջին հերթին դա գրագիտության տարածումն էր, երկրի անցյալի պատմության իմացությունը և, անշուշտ, պետականության վերակենդանացման գաղափարի ծնունդը: Արցախն իր հերթին անմասն չի մնում եկեղեցական այս շարժումից: Անապատներ են հիմնվում Գյուլիստանում, Ջրաբերդում, Ծարում, Գարդմանքում:

[292] Նույն տեղում, էջ 27:

1653 թվականին կաթողիկոս է կարգվում տեր Պետրոս Գ Խանձկեցին, որը նորոգում է Հայոց ու Աղվանից եկեղեցիների ի սկզբանե հաստատված հարաբերությունները, ձեռնադրվում էջմիածնում, ապա և պաշտպանում Գանձասարի կաթողիկանիստ լինելու իրավունքը Պարսից շահի պալատում: Սակայն Ջրաբերդի եպիսկոպոսները ոչ մի կերպ չեն հանդուրժում Գանձասարի նախաթոռությունը, իսկ տեղի մելիքական տոհմն իր հերթին համաձայն չէր, որ Ջալալյան տոհմից լինեն կաթողիկոսները: Ջրաբերդցիները լավ գիտեին, որ հին և միջին դարերում Դյուտական-Մայրաքաղաքն է կաթողիկոսանիստ հանդիսացել: Եվ ահա մեծշենացի Սիմոն եպիսկոպոսը ինքնակոչ կաթողիկոս է կարգվում: Նրան պաշտպանում էին Ջրաբերդի, Գյուլիստանի, Հյուսիսային Արցախի եկեղեցիները: Հայոց Հակոբ Ջուղայեցի կաթողիկոսը բանադրում է Սիմոնին, Ջալալյան Երեմիա վարդապետին 1676 թ. կանչում էջմիածին, որպես Աղվանից կաթողիկոս ձեռնադրում և օծում, ուղարկում Գանձասար: Տեր Երեմիայի մահից հետո Ջալալյան իշխանական տնից նրան հաջորդում է Եսայի Հասան Ջալալյանցը:

ՀԱՅՈՑ ՍՂՆԱԽՆԵՐԸ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՅՔԱՐՈՒՄ

«Ահա Ղարաբաղի լեռնաստանում էր, որ ծնվեց և գլուխ բարձրացրեց հայրենիքի ազատության գործը, - գրում է Լեոն,- այս բնական էր, նա չէր կարող ոչ ծնվել, ոչ էլ սնվել այնպիսի մի տեղ, ուր չկար հայ ազնվականություն, իբրև իշխանության կազմակերպված ուժ և իբրև ռազմիկ տարրերի առաջնորդ: Ղարաբաղն էր, որ ուներ այդ բոլորը: Ղարաբաղն էլ կարող է դառնալ հայոց ազատագրական պատմության օրորոց: Ինչպես միշտ անցյալում՝ ազնվականությունն ու հոգևորականությունն էին իրենց ձեռքն առնում շարժումը, և ժողովուրդը հետևում էր նրանց»[293]:

Մինչ Արցախ-Ուտիքում Օսմանյան Թուրքիայի հարձակումներից երկրամասը պաշտպանելու նպատակով Հայոց Սղնախների գործունեության մասին պատմելը, քննության առնենք, թե ովքեր էին իշխում Հայոց ծայր հյուսիս-արևելքում:

Ջրաբերդն ու Գյուլիստանը մինչև մելիքական վարչատարածական բաժանումը Մեծ Կյուվանք (հետագայում՝ Մեծ Կողմանք) գավառի մասն էին կազմում: Ուշ միջնադարում Մեծ Կողմանքը տրոհվում է Թալիշ-Գյուլիստանի և Ջրաբերդի մելիքությունների: Գյուլիստանի կամ Թալիշի մելիքությունը ձգվում է «Մռավ լեռից ու այգեշատ Գյուլիստանից մինչև Կուր գետը՝ եր-

[293] Լեո, հ. 3, գ. 2, եր., 1973, էջ 27:

կայնությամբ և Թարքառ գետից մինչև Գերան (Գուրան)՝ լայնությամբ[294]: Գյուլիստանում իշխող մելիքական տոհմն, ըստ Մակար եպիսկոպոսի, ծագում է Ծարում իշխող Հասան Գ-ից, որին հաջորդում են Աղբուղան, ապա Տարսունը և Այտինը: Անշուշտ, այս վարկածը ևս հավանական է, չնայած հեղինակը չի նշում իր այս տեղեկության աղբյուրը: Սակայն իշխանական այս տոհմից Ղարա-Հասանը մի քանի սերունդ հետո՝ Սև Աբով անունները հուշում են, որ «Սևը» նրանց տոհմանունն է: Այս գերդաստանի մի ճյուղը մահմեդականություն էր ընդունել, այդպես պահպանել իր իշխանությունը Կուր գետի ձախափնյակում: Հետագայում պարսից շահից նրանք խանական իրավունք և կոչում են ստանում, իշխում Շաքի-Հերեթում: Այս խաներից, թերևս, ամենազորեղը Հաջի Չալաբի խանն էր, որն Օսմանյան Թուրքիայի հովանավորությամբ ու դրդմամբ ապստամբել էր Պարսկաստանի դեմ և անկախացել: XV դարի կեսերին այս տոհմի մի ճյուղի նախահոր դերը վիճակվեց կատարել Այտինին, որը Շաքիի իշխանական տոհմի քրիստոնյա մնացած շառավիղն էր ներկայացնում, Ջհան շահից հարյուրապետի աստիճան էր ստացել, 1455 թ. վերադարձել հայրենիք: Նա շահից իբրև սեփականություն ստանում է հայրենի Նիժ ու Սոլթան-Նուխի ավաններն իրենց գյուղերով, և իր գերդաստանով բնակվում է Նիժ ավանում: Տեղի հայ և ուտի բնակչությունը Այտին-յուզբաշուն ընդունում է իբրև Հայոց իշխանական տոհմի օրինավոր ժառանգորդ ու հպատակվում նրան: Այտինին հաջորդում է Ղարա Հասան (Սև Հասան) յուզբաշին, ապա Վարդան-յուզբաշին և Դավիթ-յուզբաշին: Վերջինիս հաջորդած Սև-Աբով-յուզբաշին, թուրք ջալալիների հարձակումներից ու թալանից խուսափելու միջոց է գտնում երկրից հեռանալը: Նա Խաչենի Հասան-Ջալալյան իշխանների խորհրդով 1600 թ. իր 50 ազգակից ընտանիքներով տեղափոխվում է Տրտու (Թարթառ) գետի կողմերը, հաստատվում հինավուրց Հոռեկում, վերակառուցում հին ապարանքներն ու բերդերը: Կարելի է հաստատապես ասել, որ Աբովի Հոռեկ գալը պատահական չէր: Ըստ մի ավանդության, որը գրի էր առել 1881 թ. Արցախում ճանապարհորդած վիպասան Ռաֆֆին, Սև-Աբովը անուն է հանում: «Մի օր նրա գրաստները դաշտում արածելու ժամանակ վրա հասան մի խումբ ավազակներ և ավարի առին անասունները, - գրում է Ռաֆֆին, - այդ միջոցին դուրս եկավ Սև հարյուրապետը և նրա հետ մի քանի երիտասարդներ, նետվեցին ավազակների ետևից: Մի քանի ժամից հետո վերադարձան նրանք, բերելով իրենց հետ ոչ միայն կողոպտված անասունները, այլև ավազակներին, որոնց բոլորին կալանավորեցին: Մյուս օրը հայտնվեցան մի այլ խումբ ծիավորներ, որոնք դիմելով «Սև հարյուրապետին» (Ռաֆֆին կարծում էր, թե Սև անունը մաշկի թուխ լինելու համար

[294] Միրզա Յուսուֆ Ներսեսով, Ճշմարտացի պատմություն, Եր., 2000, էջ 43:

էին կնքել, այնինչ այն ազգանվան սկզբնամասն էր, - Բ.), ասացին նրան, թե իրանք Բարդայի խանի մարդիկ են, թե իրենց հրամայված էր այդ ավազակներին բռնելու, որովհետև նրանք մեծ վնասներ են հասցրել երկրին և այժմ շատ ուրախ են, որ ավազակները կալանավորվեցան առանց իրենց աշխատության: Այդ խոսքերով առնում են ավազակներին և տանում են Բարդայի խանի մոտ, առանց հայտնելու նրան, թե ով եղավ ավազակների բռնողը, որպեսզի խանի պարգևը իրենք ստանան: Խանը հրամայում է ավազակներին գլխատել, իսկ իր մարտիկներին վարձատրել, նրանց քաջության համար: Այդ միջոցին ավազակապետը ասում է խանին. «Պատժեցեք մեզ, որպես ձեր կամքն է, որովհետև մենք քո երկրները ավերակ դարձրինք: Բայց մի անպատվեք մեզ, այդ ողորմելի մարդիկների չկատարած քաջությունները վարձատրելով, իբր թե դրանք են եղել մեզ հաղթողները...»[295]: Խանը պարգևում է ճշմարտությունն ու Սև Աբովին որպես բնակավայր շնորհում Գյուլիստան գավառի Թալիշ գյուղը: Մելիքը վերականգնում է Հոռեկա դղյակն ու ամրոցը, մելիքական իրավունք ստանում շահից, ամրանում այդտեղ: Ապա վիպասանը հայտնում է, որ Հոռեկա վանքի մոտ գտնվող Սև Աբովի տապանաքարի վրա գրված էր նրա մահվան ՌՁԱ (1632) թվականը: Սև Աբովին հաջորդում է որդին՝ Մելիք-Յավրին, որի մասին վկայում է Թալիշ գյուղում պահվող Ավետարանի հիշատակարանը: Երվանդ Լալայանը գրում է, որ հիշատակարանում կարդացել է, թե 1650 թ. Թառիջ (Թալիշ) գյուղում իշխել է Մելիք-Յավրին[296]: Սրան հաջորդում է Մելիք-Բեգլար Ա-ն, ապա Մելիք-Աբով Բ-ն, որին Կաղ Աբով էին ասում: Նա քաջ ու համարձակ մարդ էր, իր իշխանությունն ընդարձակում է Գյուլիստանում որպես նախնեաց ժառանգություն իշխող Աբրահամ հարյուրապետից (Իբրահիմ գյավուր) խլում ու իր տարածքին միացնելով Գյուլիստանի գավառի Վերին շեն, Ներքին շեն, Էրքեջ գյուղերն ու Գյուլիստանի բերդը: Ըստ ավանդության, որը գրի էր առել ազգագրագետ Երվանդ Լալայանը, մի անգամ Գանձակի ճանապարհին մելիքը հիվանդանում է, ջերմում, իջնում ծիուց և Տուլուզ (հետագայում՝ Ղարաբուլախ գյուղի մոտ) գյուղի հանդեպ ծառի տակ նստում հանգստանալու: Այդ պահին Գանձակի մեծահարուստ կալվածատեր Միրզա-Մահմատ Մուստաֆայի գեղեցկուհի դուստրը՝ Ղամար Սուլթանը, շրջապատված աղախիններով, զբոսնելու էր դուրս եկել: Կաղ Աբովը հենց տեսնում է գեղեցկուհուն, մոռանում է ջերմի մասին, առևանգում է, յուր ծիու գավակն առնելով, փախցնում է Ամենափրկիչ վանքը (Ընապատ), քրիստոնյա է մկրտել տալիս և ամուսնանում հետը: Հայ մելի-

[295] Ռաֆֆի, Խամսայի մելիքությունները, Երկերի ժողովածու, հ. 10, Եր., 1964, էջ 165-166:
[296] Ե. Լալայան, Երկեր, հ. Բ, Եր., 1988, էջ 210:

քի հետ մի քանի կռիվներում խայտառակ պարտություններից հետո, ի վերջո, Միրզա-Մահմատ Մուստաֆան ստիպված է լինում հաշտվել ինքնակոչ փեսայի՝ Մելիք-Աբովի հետ և նրան նվիրում Գյուլիստանի գավառի մյուս գյուղերը[297]: Կաղ Աբովին XVII դ. վերջերին հաջորդում է Մելիք Թամրազ Ա-ն, որի մասին է վկայում Հոռեկի մելիքական ապարանքի դռան ճակատքարի «Յիշատակ է Ոհան Բաբուն մերէն Մելիք Թամրազ ՌԵԾ (1701)» արձանագրությունը[298]: Նրան հաջորդում է Մելիք-Իսախանը, որը հիշատակվում է Արցախի մելիքների՝ 1716 թ. Պետրոս Մեծին գրած նամակում: Այս մելիքին հաջորդում է Մելիք Բաղին, որը լուրջ դեր ուներ Սղնախներում: Նրա ժամանակ Գյուլիստանի սղնախի զորահրամանատարներն էին Միրզա և Մելքում հարյուրապետները: Գավառանունը աստիճանաբար, ըստ պարսիկ տերերի հաճության, վերափոխվում է Գյուլիստանի, որը հարմար էր տիրապետողների լեզվին, իսկ բնիկները հեշտությամբ հարմարվում են դրան:

Զրաբերդ-Չարաբերդի մելիքությունը երկայնությամբ տարածվում է Ղըրխ-ղըզից մինչև Բայաթի անտառը և Պարտավ, իսկ լայնությամբ՝ Խաչենագետից ու Ղաբարթուի հովտից մինչև Մռավ լեռը[299]: Զրաբերդի նախկին տերերի՝ Շիրանշահանց իշխանական տան ճակատագրի մասին XV դարի վերջից ոչ մի տեղեկություն չի պահպանվել: Այդ ժամանակի տեղեկությունները վկայում են, որ Զրաբերդն ընկել էր Խաչենի Զալալյան իշխանների տիրապետության տակ: Մի տապանագիր հետաքրքիր տեղեկություն է պարունակում Զրաբերդի քաջ զինվորականների՝ օսմանյան բռնակալների դեմ մղած պատերազմների մասին. «Այս է տապան Ղուպատ որդի Յովհան(նիսի) չ~է եղբարսն զայն ստացո թվ. ՌՁ (1557) եկաւ երկրիս շատ տեղ ... ցայք վերջին... ղալօամե տեսար ասգար եկաւ մեզ վերայ է ճ(700) թուփկոլա եկաւ, իմ քարեն (Զրաբերդ) չկարաց օնել, յետոյ մասիհադարն դան (տան) սպանեցին»[300]: Մակար եպիսկոպոսը հայտնում է, որ շիրմաքարին քանդակված է քաջ հեծյալի պատկեր, որը թուրը բարձրացրել է օսմանցու ֆեսով ասկյարի վրա, որն իջել է ձիուց, բռնել սանձից, խղճալի դիրքով կանգնած, իր թուրը հանձնում է հաղթողին: Մելիքական շրջանում այստեղ տիրապետում էին Մելիք-Իսրայելյանները: Ռաֆֆին ու Մակար եպիսկոպոսը միակարծիք են, որ նրանք Զրաբերդ են գաղթել Մեծ Սյունիքից: Ռաֆֆին հայտնում է, որ 1687 թ. Մելիք-Իսրայելյանի որդի Մելիք-Եսային ստիպված գաղթում է Ղարաբաղ, իր հետ բերելով բազմաթիվ ընտանիքներ, «տիրում է Կուանք կոչված ծորին և սկսյալ Ռմբոստյան լեռներից մին-

[297] Նույն տեղում, էջ 211:
[298] Լալայան, էջ 252:
[299] Միրզա Յուսուֆ Ներսեսով, ճշմարտացի պատմություն, Եր., 2000, էջ 43:
[300] Բարխուտարեանց, պատմություն, էջ 23:

չև Դյուտական գյուղը, որ այժմ կոչվում է Կաթողիկասար, տարածում է իր տիրապետությունը»[301]: Միրզա Ներսեսովը գրում է, որ մելիքական այս տունը եկել է Մաղավուզից[302], որը Սյունիքի Աղահեճք, հետագայում՝ Քաշաթաղ գավառի անվանումներից մեկն է: Ինքը բնակություն է հաստատում Զրաբերդ գավառի Մոխրաթաղ գյուղում, իսկ գաղթական բնակիչներին բնակեցնում է Մաղավուզ, Տոնաշեն և Մեծ-Շեն գյուղերում: Ըստ ավանդության, Մռավի փեշին այստեղ գաղթած Մելիք-Իսրայելյանները սահմանաքար են տեղադրում՝ «Այս է սահմանը Սյունիքի»: Նոր տերերին թվում է, թե իրենց հետ ձգել, բերել են և հայրենի եզերքի սահմանը: Տոնաշեն գյուղում հաստատվում են Մելիք-Իսրայելյանների տոհմաճյուղերից Եդիգարի երեք որդիները՝ Թունին (Հարություն), Առստամն ու Եդիգարը՝ իրենց ընտանիքներով: Տոնաշենը հինավուրց Դոնի շեն գյուղն է, որը, ելնելով հնդեվրոպական նախալեզվից, «ջրաշեն» կամ «գետաշեն» է նշանակում: Այս գյուղի մի թաղամասը պահպանել է Կյետին կյուղեր (Գետագոմեր) անունը, որն առնվազն մ.թ.ա. 750 թ. հնություն ունի: Գանձակի սբ. Հովհաննես Մկրտիչ տաճարում պահվող ավետարաններից մեկում Մակար եպիսկոպոսի գրի առած հիշատակարանը տեղեկություն է հաղորդում Զրաբերդի մելիք Եսայու մասին. «Ի թուաբերութեան Հայոց ՌԵՀԳ (1724) ապրիլի ԺԸ (18) առի աստուածախոս Ավետարանս ես մեղապարտ և անարժան Մելիք Եսայիս յերկրէն Չարապերթու և ի կեղմէն Մոխրաթաղու: Արդ լուայ զձայն աստուածային, որ ասէ. երանի այնորիկ, որ ունի որդի Սիոնի և ընտանի յերուսաղէմ և ի գութ շարժեալ որդւոյ իմոյ առի զաստուածախոս սուրբ Ավետարանս յիշատակ իմ և ծնողաց մարմնաւորաց իմքց և մօրն իմ ևս կողակցին իմոյ Հուրին և որդւոյն իմ Յովսեփին, Մեժլումին, Դանիէլին, Իսրայէլին և դստերացն իմոյ և տուի յիշատակ և վախմ սուրբ Երից մանկանց ... ի հայրապետութեան Աղուանից տեառն Ներսեսի հեզահոգի կաթուղիկոսին»[303]: Մելիքության զորահրամանատարներն էին Շիրվան և Սարգիս հարյուրապետները:

Խաչենի երբեմնի հզոր իշխանության իրավահաջորդը XVII դարասկզբին Խաչենի մելիքությունն էր: Հասան Զալալյան իշխանաց իշխանից սկսած Խաչենի ճյուղը հասավ մելիքական շրջան, մինչև Զալալ Մեծը, որն իշխել է XV դ. առաջին կեսին: Նրա մասին տեղեկություն է պահպանել Խաչեն գավառի Ս. Հակոբա վանքում ստեղծված XIII դ. ավետարանի հիշատակարանը: Զալալ Մեծին հաջորդում է Աղբաստ - Սայտուն - Վելիջան

[301] Հակոբ Հիսուսիի ժամանակագրությունը, Մանր ժամանակագրություններ, Եր., հ. 1, էջ 170:
[302] Ներսեսով, էջ 43:
[303] Բարխուտարեանց, Արցախ, էջ 29:

Ա (XVI դարի 2-րդ կես) - Հատիր Մելիք - Մեհրաբբեկ Ա - Բաղդասար բեկ. - Վեյիջան բեկ ճյուղը: Սղնախների ժամանակաշրջանում Խաչենի մելիքությունը ժառանգում է Մելիք Գրիգորը՝ իր Պաղի, Սարուխան և Օհան յուզբաշի հրամանատարներով: Մելիք Գրիգորը շեկ լինելու պատճառով թուրքերը նրան «Սարը-մելիք» էին անվանում: XIII դ. սկսած Խաչենի հոգևոր կենտրոնը՝ Գանձասարի վանքի առաջնորդարանը, Հասան-Ջալալյան իշխանական հարստության ժառանգական մենաշնորհն էր դարձել: XIV - XV դդ. Աղվանքի կաթողիկոսությանը տիրացած Հասան Ջալալյանները աթոռանիստը տեղափոխում են Գանձասար: Կաթողիկոսները, պահպանելով դարավոր ավանդությունն ու կարգը, պարտադիր ձեռնադրվում էին Հայոց հայրապետի կողմից ու նաև հրովարտակով հաստատվում օտար տիրակալների կողմից: Մինչ Հայոց Կիլիկյան թագավորության անկումը Աղվանից կաթողիկոսները հաստատվում էին նաև Կիլիկիայի թագավորների կողմից: Կաթողիկոս Գրիգոր Ջալալյանը (Մեհրաբբեկի որդին) հիշատակվում է որպես ուրացող: 1574 թ. բռնակալ Փաթիշահը թլպատել է տալիս նրան ու բռնի մահմեդական դարձնում: Նրա հաջորդին՝ Դավիթ կաթողիկոսին, Արջաձոր գյուղում անհայտ մարդիկ կախաղան են հանում:

Շահ-Աբբասյան շրջանում փոխվում է Վարանդայի մելիքակիան տունը: Մինչ այդ այստեղ իշխում էին Դիզակի մելիքները: Սրանց մի ճյուղը, Մելիք Պապից սկսած, առանձնանում է Վարանդայի Քոչիզ գյուղում, շարունակում գավառի առանձին կառավարումը: Մելիք Պապին հաջորդում են Մելիք Ավանը, այնուհետև նրա եղբայր Մելիք Աղամը և որդին՝ Մելիք Փաշան ու Մելիք Մուշումը: Նրանց հաջորդում են Մելիք Դանիելն ու Մելիք Մուզաֆֆարը, որն էլ հրաժարվում է մելիքությունից, տեղը զիջում Մելիք Շահնազարյանների ներկայացուցիչ Մելիք Բաղիին, որին մելիքական վկայագիր էր շնորհել Շահ-Աբբասը: Վարանդայի այս մելիքները սերվում են Սոդքի Մելիք-Շահնազարյաններից, որոնց Շահ-Աբբասը լայն արտոնություններ էր շնորհել: Մելիք-Շահնազարյաններն, իրենց հերթին, Հաթերքի իշխանական տան մի ճյուղավորումն են: Մելիք Բաղի Ա-ն Մեծ Մազրայից Վարանդայի Ավետարանոց գյուղն է տեղափոխվում 1627-1628 թթ., ամրացնում մելիքանիստի բերդը: Նրա սպանվելուց հետո հաջորդում է Մելիք-Շահնազար Ա-ն: Սղնախների շրջանում Վարանդայում տիրում էր Մելիք-Պաղի Բ-ն, որի զորահրամանատարներն էին Ավան, Ջաքաիա, Դավիթ և Թարխան հարյուրապետները: Ավանը, որը Շիրվանից էր Արցախ տեղափոխվել, ամրացնելով հինավուրց Կարկառի բերդը, որն արդեն Շուշի էր կոչվում, այստեղ սղնախ է հիմնում: Ավանը փաստորեն Արցախի ընդհանուր զորահրամանատարն էր:

Դիզակի իշխան Ներսեհ-Դժնդակի իշխանից մինչև Մելիք Պապին իշխում էին Դիզակում, Վարանդայում և Բերդաձորում: Դիզակում իշխող Մելիք Սուջումը, որը գնաց Սպահան, սակայն շուտով ետ վերադարձավ: Նրան հաջորդում է Մելիք Ավանը, որը, չկարողանալով դիմադրել Ջալալիների ավազակային հարձակումներին, 1607 թ. 50 ընտանիքի հետ նա գաղթում է Վրաստան, ապա հաստատվում Լոռիում: Նրան հաջորդում է Մելիք Բախտամ Բ-ն, իսկ նրան՝ թոռը՝ Մելիք Ավան Բ-ն, որը հոգնած կալվածական վեճերից ու ընդհարումներից, իր հոր՝ Ղուկաս վարդապետի հետ 1716-ին հայրենի Դիզակ է վերադառնում[304]: Հայրը նորոգում է Գտիչ վանքը, միաբանություն հաստատում և բնակվում վանքում: Մելիք Ավանը ամրացնում է Տողը, հաստատվում այստեղ: Այնուհետև մելիքին Ատրպատականի թուրքերը Մելիք Եգան անունով են կոչում:

Ծարի մելիքության ակունքը Վերին Խաչենի Դոփյան իշխանական տունն է, որը XV դ. 2-րդ կեսին բաժանվում է երեք ճյուղերի: Մեկն իշխում էր Սոդքում, մյուսը Ծարում, երրորդը՝ Փառականքում (այժմյան Ծովինար գյուղն իր շրջակայքով): Ծար իշխանանիստ ավանը տեղադրված է բարձր սարահարթում, որի երեք կողմերը վիմահերձ ապառաժներ են, իսկ արևմտյան կողմը վիմահերձից վիմահերձ ամուր պարիսպներով են պատված և փաստորեն անմատչելի բերդավանի է վերածված: Ծարա տերերը հիշում էին իրենց անմիջական նախնու՝ Ջհանշահի (վխճ. 1387 թ.) անունը: Նրան հաջորդուն են Հասանը, Ջհանշահ Բ-ն, Միրզաջանը: Վերջինիս հաջորդ Մելքոնը ունենում է յոթ զավակ՝ Հովհաննեսիկ վարդապետ Ծարեցին (1560-1623), Թումա քահանան, Միրզաբեկը, Ուլուխանը, Փարին, Խանսուլթանն ու Նազլուհին: Սրանցից նշանավորը տաղանդավոր տարեգիր Հովհաննեսիկ Ծարեցին է, որի ժամանակագրությունը բացառիկ երևույթ է հայ գրականության մեջ: Նրան նախորդել էր պապի եղբայր Հովհաննես վարդապետը, որը ևս իր դարի ժամանակագիրներից է: Այն վկայում է, որ այստեղ մշակութային լուրջ հիմքեր ու ավանդություններ ունեցող դպրոց է եղել: Գավառի հոգևոր կենտրոնը Դաղի վանքն էր:

Գարդմանից մելիքների նստավայրը Ոսկանապատ գյուղն էր: Առաջին մելիքը, որի մասին հիշատակվում է, Մելիք-Շահնազարն է: Թե ինչ կապ ունի նա Մեծ Մազրայի իշխանական գերդաստանի հետ, անհայտ է մնում: Հայտնի է, որ Մելիք Նազարը մի խումբ այլ մելիքների հետ Սպահան՝ Աբբաս Մեծի մոտ էր գնացել: Նրան հաջորդում է Մելիք-Հովսեփը, ապա և Մելիք Յավրին, որին էլ բախտ է վիճակվում գործել Սղնախների ժամանակաշրջանում: 1720 թ. նրան հաջորդում է Մելիք Հովսեփ Բ-ն, որի զորահրամանատարներն էին Փանոս և Սաղի հարյուրապետները:

---

[304] Բարխուտարյանց, Պատմություն..., էջ 36-37:

Չնայած մելիքները մշտական զորք չէին պահում, սակայն կարիք լինելու դեպքում նրանցից յուրաքանչյուրը կարող էր անմիջապես հազար զինվորից կազմված մի զորագունդ հավաքել: Սակայն Գյուլիստանի մելիքները սովորաբար կարողանում էին երեքից չորս հազարանոց զորք հավաքել: Համեմատության համար նշենք, որ Ղարաբաղի բեկլարբեկությունը պետությանը (Իրանին) պահանջի դեպքում պարտավոր էր տալ 1430 զինվոր, իսկ պատերազմի դեպքում միայն Ղարաբաղը տալիս էր 6084 զինվոր, Հայաստանն ու ողջ Ատրպատականը միասին՝ 27566 զինվոր[305]: Ամեն տուն պարտավոր էր մելիքի պահանջի դեպքում մի զինվոր տալ, իսկ եթե դրությունը ծանր է լինում, զինվում էին զենք կրելու ունակ բոլոր մարդիկ: Զինվորն ինքը պետք է հայթայթի իր զենքն ու ձին: Իսկ եթե նա չի կարող, ապա այս խնդրում նրան օգնում է մելիքը, որն ընդհանուր հրամանատարն էր: Զորագունդը բաժանված էր խմբերի, որի հրամանատարներն էին հարյուրապետները (յուզբաշի), որոնց պաշտոնը ժառանգական էր: Զինվորական համազգեստ գոյություն չուներ: Զինավարժության հատուկ օրերին փոխարինում էին տոնական օրերին կամ հարսանիքներին երիտասարդ զինվորների մրցակցությունը՝ ձիարշավները, խաղերը, հրաձգությունները: Մելիքը ներկա էր լինում այդ խաղերին: Սովորություն էր մեծ պասի առաջին օրը մելիքի հետ զուռնա-դհոլի ուղեկցությամբ ձիարշավի գնալը: Ունևոր գյուղացիք խոնչաներով ուտելիք էին բերում, հյուրասիրում հեծյալ տղաներին: Վերջում մելիքի տուն էին գնում, ու մելիքը կարգադրում է ձիարշավի բոլոր մասնակիցներին մի-մի թաս գինի տալ: «Մելիքի մին օրը հազար դառնա» կոչելով նրանք խմում են ու գնում իրենց տները: Զինվորները ռոճիկ չէին ստանում: Զրաբերդից կամ Գյուլիստանից նրանք հաճախ էին դեպի տափաստանային գյուղերը հարձակումներ գործում ու բերած ավարից մելիքի բաժինը տալուց հետո մնացածը իրար մեջ բաժանում: Սակայն և նրանք միշտ պետք է պատրաստ լինեին մելիքության գյուղերը պաշտպանելու հարթավայրի քոչվորների կամ դաղաստանցիների թալանչիական հարձակումներից: Զինվորների զենքն էր թուրը, դաշյունն ու հրացանը: Մելիքները ձախ կողքից կեռ թուր էին կապում, առջևից՝ դաշյուն, ձախ ուսով ձգում էին վառոդամանը, որից վառոդ էին լցնում հրացանի կայծառի մեջ, աջ ուսով ձգում էին փամփշտակալը, որի փոքրիկ պարկերում պատրաստի կամ օգտագործած փամփուշտերն էին տեղադրում: Մելիքին հետևում էր նրա հրացանակիրը, որն իր հետ մելիքի համար միշտ պատրաստ պահում էր երկու կամ երեք հրացան: Հրացանը Գյուլիստանի բերդում էին պատրաստում կամ նորոգում, իսկ վառոդը՝ Վրին շենում, որտեղ բորակի (селитра) հանք

[305] Петрушевский, стр. 138.

կար: Մելիքն իր մոտ մշտապես պահում էր 300 հոգանոց թիկնազոր: Վառոդի պատրաստելը մելիքի իրավունքն էր: Իրեն վստահված երկրի պաշտպանության համար մելիքն ուներ բերդեր ու ամրոցներ: Եթե վտանգ լինելու դեպքում Զրաբերդի մելիքը Մայրաքաղաքի տարածքից անմիջապես կարող էր շարժական կամրջով անառիկ Զրաբերդում հայտնվել, ապա Գյուլիստանի մելիքները ապաստանում էին Գյուլիստան բերդում: Լավագույն բերդերը ապահովված էին ջրով ու հացով: Զրաբերդի տարածքն այնքան ընդարձակ էր, որ ցորեն էին ցանում: Իսկ ջրի համար անցք էին փորել, որը բացվում էր գետի մեջ ու դրսից չէր երևում: Այն «ջրագողի» ճանապարհ էր կոչվում: Խաչենի Կաչաղակաբերդը (արաբներն անվանում էին հիսն Ար-ռան) թեև անմատչել էր, սակայն ջրի խնդիրը լուծված չէր: Բերդում պաշարվածները ապառաժի մեջ պատրաստած փոսերի մեջ ջուր էին ամբարում, որը սակայն երկար չէր կարող պահել նրանց: Սառնորակ ջուր ուներ Քթիշ բերդը: Այս բերդերը, մելիքներին ենթարկվելուց բացի, ընդհանուր պաշտպանական համակարգի մեջ էին մտնում: Բավականին լավ մշակված էր ազդանշանային համակարգը: Ողջ երկրամասում վտանգի ազդանշանը կրակի միջոցով ընդամենը 15-20 րոպեում հյուսիսից հարավ ու արևելքից արևմուտք էր հասնում: Դրան հասել էին բերդերի հատուկ տեղադրությամբ ու միջանկյալ ազդանշանային աշտարակների միջոցով: Մելիքների ապարանքներն ու վանքերի մեծ մասը պարսպապատ էին, չորս անկյուններում աշտարակներով: Մելիքական լավագույն ապարանքներից էին համարվում Հոռեկի մելիքական տունը, Մայրաքաղաքի տարածքում Բերդակուրն ու Մոխրաթաղի պալատները: Մելիքն օժտված էր իր ենթակայության տակ գտնվող ժողովրդին դատելու իրավունքով: Թեթև հանցանքները գյուղի տանուտերն էր վարում, ծանր հանցանքների դեպքում՝ մելիքը: Տանուտերի վճռից դժգոհ գյուղացին կարող էր բողոքարկել մելիքին: Իսկ մելիքի վճռից դժգոհ գյուղացին հաճախ անցնում էր մելիքին հակառակորդ մելիքի կամ խանի կողմը, կամ էլ՝ լրտեսություն անում նրանց օգտին, ամեն կերպ ձգտելով վնաս հասցնել իր տիրոջը: Նման դեպքերը ևս պատահում էին: Վճռի իրականացումը տանուտերի կամ մելիքի ձեռքին էր: Դատավճռի փոխարեն զգիրը ցույց էր տալիս մելիքի կնիքը: Դատավարության համար հատուկ օրենքներ չկային: Միակ օրենքը նահապետական ավանդությունն էր: Մելիքը դատավարությունն իրականացնում էր կիրակի օրերին, ամռանը՝ իր տան բակում, ցուրտ օրերին՝ ապարանքի սրահներից մեկում: Գանգատավորները պարտավոր էին իրենց ցուցմունքը հաստատել վկաներով կամ երդումով: Շատերը ձգտում էին ամեն կերպ խուսափել երդում տալուց, քանի որ հավատում էին, որ երդման կեղծ լինելու դեպքում կպատժվեն Աստծո կողմից: Ընդունված էր որպես պատիժ կիրառել ծեծը,

բանտարկությունը, անվանարկությունը (անառակ կնոջ երեսին մուր էին քսում ու էշի վրա նստած պտտեցնում գյուղերով), դաղմա խփելը (հետույքին կնիք խփելը), այրումը (շիկացրած փլավքամիչը հագցնում են մեղադրյալի գլխին), կախաղան, ծիու պոչից կապելն ու քաշ տալը: Մելիքները սովորաբար հյուրասեր էին: Գանգատավորների, այլ վայրերից եկած գյուղացիների և հասարակ հյուրերի համար ամեն օր առատորեն ճաշ էր պատրաստվում «քարխանա» կոչվող տանը, որտեղ էլ հյուրընկալում էին նրանց: Այստեղի սեղանը ամենքի համար բաց էր: Ամենահեռավոր գյուղում էլ գիտեին, որ մելիքի մոտ գնալիս երբեք սոված չեն մնա: Նման հյուրասիրությունը փոխանցվել է նաև ժողովրդին, որն էլ ավանդական է դարձել:

XVII դարի վերջին քառորդից սկսած Սեֆյան Իրանը ներքին քայքայում էր ապրում: Եթե Շահ-Աբբաս Մեծից հետո Իրանի թագակիրները զգալիորեն զիջում էին իրենց մեծ նախորդին, ապա Շահ-Սուլթան Հուսեյնը (1694-1722 թթ.) ավելի թուլամորթ էր ու անդեմ: Շահն ու իր արքունիքը ավելի շատ զբաղված էին հարեմով ու գինարբուքով, քան պետական գործերով: Պետական գանձարանի պակասը լրացնելու միջոցը նրանց համար հարկերի անընդհատ բարձրացումն էր, սեփական ժողովրդի անխնա կեղեքումը, որն էլ պիտի բերեր պետության քայքայմանը: Հենց Իրանի հզորության թուլացման պատճառով է, որ կրկին Անդրկովկասի վրա է բևեռվում մեծ երկրների ուշադրությունը: Թուրքերը հարմար առիթի էին սպասում Իրանից խլելու Անդրկովկասը, ինչպես նաև Ատրպատականը, դրանով իսկ ճանապարհ հարթելու դեպի Միջին Ասիա, ապա և նախահայրենիք Ալթայ (ըստ երևույթին, թուրքերը մի անվերջանալի անհաղթահարելի կարոտ են զգում դեպի հայրենի Ալթայը ու ձգտում, ինչ գնով էլ լինի, վերադարձնալ, բայց և տիրել Միջերկրական ծովին Ադրիատիկից մինչև Սիբիր): Թուրքիայից բացի, Անդրկովկասի իրավիճակին էր ուշադրությամբ հետևում ռուսական արքունիքը: Ռուսաստանը աճող կայսրությունների նման ամեն առիթ օգտագործում էր նորանոր երկրներ նվաճելու համար: Իսկ քրիստոնեական Հայաստանը հարմար հենակետ կարող էր ծառայել հետագա նվաճումների և Պետրոս Առաջինի ռազմավարական նոր ծրագրերի իրականացման ճանապարհին: Ռուսաստանը Իրանի և Թուրքիայի նկատմամբ ուներ այն առավելությունը, որ հայերն ու վրացիները քրիստոնյա էին ու կարող էին հավատալ քրիստոնեական Ռուսաստանի «ազատարար» դերին և կամա թե ակամա նպաստել իր նվաճողական քաղաքականությանը: Հայերին ու վրացիներին այս դեպքում մնում էր ընտրել, թե որ տիրապետողն է «հարմար» ռուսը, պարսիկը, թե թուրքը: Եթե վերջին երկուսին վաղուց էր ծանոթ, ապա առաջինին դեռևս չէին ճանաչում, ուստի հայացքները դեպի հյուսիս էին ուղղել: Դեռևս 1665 թ. Արցախի մելիքները, հավաքվելով կաթողիկոսանիստ Գանձասարի վանքում, նամակ էին հղել Ռուսաստանի թագավոր Ալեքսեյ Միխայլովիչին՝ խնդրելով օգնել ազատագրելու Հայաստանը: 18-րդ դարի շեմին հայ ժողովուրդը դեռևս ուշքի չէր եկել Շահ-Աբբաս 1-ինի կազմակերպած բռնագաղթից: Սակայն հայ ժողովուրդը երբեք չէր դադարել ազատության ձգտումից: Մանավանդ Հայաստանի հյուսիս-արևելյան մասերում, որտեղ պահպանվել են հնուց եկող իշխանական սաղմերը, XVIII դարի շեմին օրեցօր թափ էր առնում ազատության և անկախության գաղափարը: 1678 թ. էջմիածնում հավաքվում է մի փոքրիկ խորհրդակցություն, որին մասնակցում էին վեց հոգևորական և վեց աշխարհական: Ժողովը վճռում է կաթողիկոսի գլխավորությամբ մի պատվիրակություն ուղարկել Հռոմ՝ կաթոլիկ եկեղեցու հավատքին միանալու առաջարկով: Դրա փոխարեն պետք է ռազմական օգնություն և քաղաքական հովանավորություն ստանան Հայաստանի պետականության վերականգնման համար[306]: 1699 թ Հռոմի պապին հասցեագրված Արցախի մելիքների մի նոր նամակում պատմվում է այս խորհրդակցության հանգամանքների և պատվիրակության Հռոմ մեկնելու մանրամասների մասին: Կաթողիկոսին պետք է ընկերակցեր Իսրայել իշխանը, «որը սերված է հայերի մեջ հռչակավոր Պռոշ իշխանից»[307]: Սակայն հետագայում նրա փոխարեն որպես պատվիրակ է մեկնում որդին՝ Յավրին: Սա, անշուշտ, Ստեփանոս Սալմաստեցի կաթողիկոսի անկատար մնացած գաղափարի իրականացման մի նոր նախաձեռնություն էր: Հակոբ կաթողիկոսը նախ մեկնում է Թիֆլիս՝ Վրաստանի թագավորի հետ խորհրդակցելու ու հայ-վրացական միություն ստեղծելու առաջարկով: Ապա մեկնում է Կ.Պոլիս, որտեղ հանդիպում է Երուսաղեմից իր հետ հանդիպելու եկած Կիլիկիո կաթողիկոս Եղիազարին և Հռոմի պապի ուղարկած երկու պատվիրակներին: 82-ամյա կաթողիկոսը չկարողացավ Հռոմ գնալ ու Կ.Պոլսում մահացավ 1680 թ.: Պատվիրակությունը վերադարձավ էջմիածին: Սակայն պատվիրակության անդամներից 21-ամյա Իսրայել Յավրին (հետագայում Ֆրանսիայում Օրի է դառնում) գնաց Եվրոպա՝ հայոց խնդիրը ներկայացնելու եվրոպական պետություններին: Իսրայել Յավրի-Օրին երեք տարի ապրում է Վենետիկում, ապա տեղափոխվում Ֆրանսիա, ուր 10 տարի մասնակցում է ֆրանսիական բանակի պատերազմներին, ռազմական փորձ ձեռք բերում, հետո գերևարվում է անգլիացիների կողմից, ազատվելով՝ տեղափոխվում Գերմանիա՝ Դյուսելդորֆ: Նա Ֆրանսիայում այդպես էլ հնարավորություն չունեցավ հանդիպելու Լուի XIV թագավորին և պատմելու Հայաստանի մասին: Այդ ժամանակ Թուրքիայի դեմ ռազմական պայքարի լծակները արդեն Փարիզից տեղափոխ-

[306] Լեո, 3-1 էջ 337:
[307] Պռոշյան իշխանական տոհմը Ջալալյան իշխանական տան մի ճյուղն է:

վել էին Վիեննա՝ Ավստրա-Հռոմեական կայսրության արքունիք: Լուին արդեն հրաժարվել էր ազատարար խաչակրաց արշավանք ձեռնարկելու ծրագրից: Թուրքական խնդիրը պետք է լուծեր Լեոպոլդ կայսրը: Իսկ կայսրին Հայաստանի խնդիրը մատուցելու լավագույն ձևը Պֆալֆցի կյուրֆուրստ Հովհան-Վիլհելմի հետ մերձ հարաբերություններ ստեղծելն էր: Կյուրֆուրստը ազգակցական կապեր ուներ եվրոպական բոլոր թագավորական տների հետ և այդ ժամանակ եվրոպական ամենաազդեցիկ իշխաններից մեկն էր: Թուրքական բանակը առաջին խոշոր պարտությունը կրեց Վիեննայի մատույցներում, երբ պաշարել էր Հաբսբուրգների ոստանը, և ուր որ է ամբողջ Եվրոպան պիտի ընկներ թուրքական բռնատիրության լծի տակ: Լեհաստանի թագավոր Յան Սոբեսկին փառավոր հաղթանակ տարավ՝ փախուստի մատնելով թուրքերին: Ավստրիայի, Լեհաստանի և Վենետիկի դաշնակցությունը պաշտպանությունից անցավ հարձակման: Դաշնակցությանը միացավ նաև Ռուսաստանը՝ նպատակ ունենալով ոչնչացնել «անբուժելի հիվանդ մարդուն», ինչպես պատկերավոր կերպով Եվրոպայի դիվանագետները որակում էին Թուրքիայի դրությունը: Ռուսական թագավորները չէին մոռանում, որ իրենք Բյուզանդիայի վերջին կայսր Կոստանդինի օրինական ժառանգորդն են, քանի որ Բյուզանդիայի վերջին կայսեր ազգականուհին Իվան III ցարի կինն էր՝ Սոֆիա Պալեոլոգը: Ռուս ցարերն իրենց վրա էին վերցնում Կոստանդնուպոլիսը (Ստամբուլը) ազատագրելու խնդիրը: Այս դաշնակցությանը մեծ ու հզոր Ռուսաստանի միացումը ազատագրական շարժման մեծ ալիք առաջացրեց Թուրքիայի բռնատիրության լծի տակ հեծող երկրներում: Եվրոպան զգում էր, որ արդեն որոշված է թուրքական կայսրության ճակատագիրը, այն պետք է քայքայվի: 1696 թ. ռուսական բանակը տարավ առաջին հաղթանակը՝ ազատագրելով Ազով քաղաքը: Պետրոս Մեծը եվրոպական տերություններին առաջարկեց համատեղ արշավանք կազմակերպել քրիստոնյա ժողովուրդներին օսմանյան լծից ազատագրելու համար: Պետրոսը Հոլանդիայում պատրաստել տվեց իր պատկերը, որի տակ գրված էր. «Պետրոս, ռուս-հունական թագավորության միապետ»[308]: 1697թ. ավստրիական զորքերը Եվգենիոս Սավոյացիի հրամանատարությամբ Տիսսա գետի մոտ խոշոր հաղթանակ տարան՝ գլխովին ջախջախելով թուրքական բանակը: Հովհան-Վիլհելմ կյուրֆուրստը, զգալով, որ հարմար պահ է Հայաստանի ազատագրման ծրագրի կենսագործման համար, Իսրայել Օրիին դիվանագիտական առաքելությամբ ուղարկեց Հայաստան: Լեոպոլդ կայսրը հրաժարվեց հանձն առնել Հայաստանի ազատագրման խնդիրը, քանի որ արդեն դաշինք էր կնքել Թուրքիայի հետ, ընդունել նրա զիջումները: Մեծ դժվարությամբ Օրիին հաջողվեց Թուրքիայով 1699 թ. ապրիլի սկզբներին հասնել էջմիածին: Հայոց կաթողիկոս Նահապետը չէր բաժանում Հայաստանի ճակատագրի վերաբերյալ իր նախորդների քաղաքականությունը և ավելի շատ մտահոգված էր կաշառքի միջոցով իր աթոռը պահելու խնդրով[309]: Օրին շտապում էր Արցախ, որտեղ գտնվում էր ժամանակի հայ ազատագրական շարժման ոգին: Եթե մելիքները պատրաստ էին օժանդակելու Օրիին, ապա էջմիածնի և Գանձասարի կաթողիկոսները մերժեցին կաթոլիկ եկեղեցու հովանու տակ մտնելու առաջարկությունը: Սյունիքի 11 մելիքներ Անգեղակոթի տեր Մելիք-Սաֆրազի տանը գաղտնի խորհրդակցություն են անցկացնում, որը տևում է 20 օր: Ժողովը նամակ պատրաստեց՝ ուղղված Հռոմի պապին, որտեղ ցանկություն էր հայտնվում կաթոլիկություն ընդունելու մասին[310]: Հաջորդ դիմումը ուղղված էր Հովհան-Վիլհելմին, որտեղ հայ մելիքները նրան առաջարկում են Հայաստանի թագը: Կյուրֆուրստը նախապես պետք է օգնական զորքով Հայաստան ուղարկեր իր եղբորը՝ Կառլոսին, ու երբ ամեն ինչ պատրաստ լիներ, ինքը պետք է ընդուներ հայոց գահը: Անգեղակոթի ժողովը մեկ այլ խնդրագիր էլ ուղղում է ռուսաց ցար Պետրոս Մեծի անունով: Այն իր բովանդակությամբ տարբերվում էր գերմանացի իշխանին հղած նամակից: Այստեղ ոչ թագ է առաջարկվում, ոչ էլ այլ պայման: Հայ իշխանավորները միայն խնդրում են ռազմական օգնություն, որի դիմաց խոստանում են հնազանդություն Ռուսաստանին: Այս ձևակերպման մեջ հայ մելիքները հասկանում էին ինքնավար հայկական պետություն՝ Ռուսաստանի հովանու և պաշտպանության տակ: Եթե Հռոմի պապին և հռոմեական կյուրֆուրստին խոստանում են հավատափոխություն և գահ, որը ամենևին էլ հայ իշխանների սրտից չէր բխում, և ընդունվել էր քաղաքական անելանելի վիճակի ճնշման տակ, ապա ռուսական օգնության տարբերակը ավելի ընդունելի էր:

Եվրոպայում իր դիրքերը զիջող Թուրքիային զուգահեռ, XVII դարի վերջին քառորդից սկսած Սեֆյան Իրանը ևս անկում էր ապրում: Պետական գանձարանի պակասը լրացնելու միակ միջոցը նրանց համար հարկերի անընդհատ բարձրացումն էր, սեփական ժողովրդին անխնա կեղեքումը, որն էլ իր հերթին ապստամբություններ էր առաջացնում և խորացնում ճգնաժամը, քայքայում երկիրը: Հենց Իրանի այս թուլացումն էր, որ առիթ

[308] M.Y.Saint-Martin, Memories historiqu et geograpiques sur L'Armenie, t. II, Paris, 1819, pp. 479-485.

[309] Լեո, էջ 37:

[310] Նամակը պահվում է Վատիկանում: Այն լատիներեն է թարգմանել լեհահայ գիտնական Ստեփանոս Ռոշքան (Ստեփանոսի Ռոսքա, ժամանակագրություն, Վիեննա, 1964, էջ 190): Նամակը հրատարակել է Էզովը, Эзов, Сношения Петра Великого с армянским народом, СПб, 1898, стр. 2-6 (далее - Эзов).

տվեց հարևան երկրներին Անդրկովկասի վրա բևեռելու նրանց ուշադրությունը: Թուրքիան ևս մի հարմար և հզոր հենարան ուներ Անդրկովկասում, դա Կուրի ու Կովկասյան լեռնաշղթայի միջև ընկած տարածքում ապրող բնիկ ժողովուրդն է՝ լեզգիները, ավարները, ուտիները, ծախուրները, թաբասարանցիները, որոնք հավատքով սունի էին, ավելի հակված դեպի օսմանյան Թուրքիան: Այս ժամանակաշրջանում Իրանի խորքերից, մանավանդ Խորասանից, Առանի դաշտ ու Վրաստանի հարավային սահմաններն էին սկսել գաղթել քոչվոր խաշնարած ցեղեր, որոնք շիա աղանդին էին պատկանում, և իրենց էթնիկական կերպարը կամ հասկացությունը չունենալով, իրենք իրենց «մուսուլման» (մահմեդական) էին կոչում: Նրանք խոսում էին թուրքական բարբառի ու պարսկերենի խառնուրդից գոյացած մի խառնածին լեզվով: Սրանց վրա շատ վստահ չեն կարող լինել ոչ թուրքերը, ոչ էլ պարսիկները, քանի որ նրանք միշտ ուժեղի կողմն են բռնում:

Ահա Անդրկովկասն այս իրավիճակում էր, երբ հայոց դեսպան Իսրայել Օրին ընկերակցած խանաբերդցի վարդապետ Մինաս Տիգրանյանի հետ, վերադառնում է Եվրոպա: Օրին այստեղ կազմում է Հայաստանն ազատագրելու մի ընդարձակ ծրագիր՝ 36 կետերով: Այս ծրագրի հիմնական միտքը Եվրոպայի ռազմական ու քաղաքական միջնորդությամբ Արևելյան Հայաստանը Պարսկաստանից խլելն էր և Հայաստանի թագավորության վերականգնումը: Եվրոպական դաշնակցության միացյալ զորքը պետք է Ռուսաստանով հասնի Կասպից ծովի Անդրկովկասյան ափերը (Բաքու), գրավի Շամախին, Գանձակը, Ղափանն ու Նախճավանը, անցնելով Արաքսը՝ շարժվի մինչև Թավրիզ: Ծրագրում Թուրքիայի բռնատիրական լծի տակ հեծող Արևմտյան Հայաստանի մասին խոսք չկար, քանի որ թուրքական իշխանությունները այնպես էին խաթարել Հայկական լեռնաշխարհի այս հատվածի էթնիկական կերպարը, երկիրը լցրել թուրք ու քուրդ տարրերով, որ Իսրայել Օրին սրա ազատագրումը չկապեց Արևելահայաստանի խնդրի հետ: Պարսկաստանին ենթակա մասում հայերը, հանձինս եկեղեցու և հայ իշխանների, որոշակի ինքնուրույնություն ունեին: Իսկ Ղարաբաղը Հայաստանի համար այն միջնաբերդն էր, որն իր ներքին ուժով, ներքին միասնականությամբ և բնական պայմանների շնորհիվ պահպանել է իր ամբողջականությունը: Մեկը մյուսին հաջորդող օտար նվաճողների արշավանքների ժամանակ, պահպանելով իր որոշակի ինքնուրույնությունը, ղարաբաղցի հայը անխաթար էր պահել իր ազգային նկարագիրը: Արցախ-Ղարաբաղը փաստորեն անառիկ բերդերի մի հսկա համակարգ է, որն ամբողջովին գրավել ու հպատակեցնել ոչ մի ուժի չի հաջողվել: «Այստեղ ցևային ինքնորոշման և ինքնապահպանման բնազդը գերակշռող է հանդիսանում կենսական մյուս բոլոր պայմաններից», - գրում է Լեոն: Երբ Հայաստանը ներքին

խռովությունների և երկպառակությունների պատճառով թուլանում էր և նվաճվում օտարների կողմից, արցախցիները անմիջապես փորձում էին ճկուն դիվանագիտության ու սեփական ուժի համադրմամբ ինքնավար պետական կարգավիճակ ստանալ և պահպանել ամբողջականությունը: Այդպես էր IV-V դարում՝ Հայաստանը Բյուզանդիայի և Իրանի միջև բաժանումից հետո: Առանձին դեպքերում արցախցիները ստեղծում էին իրենց ինքնուրույն թագավորությունը: Հայ իշխանների վեհապետական իրավունքները ճանաչեց և օրինականացրեց Սեֆյանների Պարսկաստանը: Հայ իշխանները իրենց հերթին պարսից շահին էին ճանաչում որպես ամենաբարձր իշխանություն և նրանից էլ ստանում էին «մելիքե» տիտղոսն ու կալվածքները: Շահ-Աբբաս Առաջինն ու նրա հետնորդները հետևողականորեն իրականացնում էին այս քաղաքականությունը: Սակայն Իրանի թուլացումն ու ներքին խռովությունները արդեն լուրջ տագնապ էին առաջացրել ողջ Հայաստանում, ու ազնվականությունը ելք, ինչպես և նոր հովանավոր տերություն էր փնտրում իր վաղեմի երազանքը՝ իր շահերը պաշտպանող պետականության վերականգնումը իրականացնելու համար: Հայ իշխանները պատմության դառը փորձից արդեն գիտեին, որ ուր որ է գալու է օտար նվաճողը, ավերի երկիրը, ուստի եռանդորեն հզոր հովանավոր երկիր էին փնտրում: Սակայն Օրիի այս ծրագրին վիճակված չէր իրականություն դառնալու: Շուտով Եվրոպայում ծագեցին նոր պատերազմներ: 1700թ. մահանում է Իսլանդիայի թագավորը, որն անմիջական ժառանգ չուներ իր աշխարհասփյուռ տիրապետության համար: Ժառանգորդներ էին համարվում Ֆրանսիայի Լուի XIV թագավորն ու ավստրիական Լեոպոլդ կայսրը: Իսպանացին իրեն ժառանգ էր կարգել Ֆրանսիայի թագավորի թոռանը: Սակայն Լեոպոլդը նպատակ ուներ իր որդուն նստեցնել Իսպանիայի գահին: Անգլիան ու Հոլանդիան, դաշնակցելով Ավստրիայի հետ, պատերազմ են սկսում Ֆրանսիայի դեմ: Լեոպոլդը, որը պետք է գլխավորեր Հայաստանի ազատագրման ծրագիրը, լիովին կլանվում է իր համար շատ կարևոր այս պատերազմով: Այդ ժամանակ սկիզբ է առնում նաև ռուս-շվեդական պատերազմը: Պետրոս Առաջինը, ձգտելով Ռուսաստանի համար ելք ստեղծել դեպի Բալթիկ ծով, 1700 թ. նոյեմբերի 19-ին 45 հազարանոց զորքով պաշարում է Նարվա բերդը: Ռուսները պարտություն են կրում: Պետրոսը եռանդով սկսում է պատրաստվել նոր հարձակման:

Վճռվում է, որ Իսրայել Օրին կրկին Հայաստան գնա, բայց այս անգամ արդեն Ռուսաստանով: Հովհան-Վիլհելմի օգնությամբ ստանում է Հռոմի պապի նամակը՝ ուղղված պարսից Սուլթան-Հուսեին շահին: Կաթոլիկ եկեղեցու գլխավորը խնդրում է, որ շահը արգելի հարստահարումը իր հպատակ քրիստոնյաների նկատմամբ: Հայ դեսպանին այս նամակը ավելի

շատ անհրաժեշտ էր, որպեսզի այն շահին հանձնելու պատրվակով Պարսկաստան գնա և մինչ դեպի Անդրկովկաս ռուսական արշավանքը տեղեկություններ ստանա Իրանի և Թուրքիայի մասին: Անդրկովկասի վերաբերյալ զգացվում են եվրոպական երկրների ռազմավարական մի շարք կարևոր փոփոխություններ: Հայոց դեսպանին հանձնարարելով դիմել Ռուսական ցարին, Եվրոպան փաստորեն Անդրկովկասը ճանաչում է որպես Ռուսաստանի ազդեցության ոլորտ: Օրին Եվրոպայում ձեռք է բերում հրազեն և զինամթերք Աստրախանում կազմակերպելիք հայկական գունդը զինելու համար: Այս գունդը ռուսական զորքերի հետ պետք է մասնակցեր Հայաստանի ազատագրմանը:

1701 թ. հուլիսի սկզբներին Սմոլենսկի վոյեվոդա Շերեմետևը հաղորդում է ռուսաց ցար Պետրոս Առաջինին, որ երկու օտարերկրացիներ են ժամանել Լիտվայի սահմանից և ցարի մոտ են գալիս Հռոմ-Գերմանիայի կայսր Լեոպոլդի, Լեհաստանի թագավոր Յան Սոբեսկու և բավարական Պֆալֆցի կյուրֆուրստ Հովհան-Վիլհելմի Պետրոս Առաջինին հասցեագրված նամակներով: Օտարերկրացիներից մեկը Իսրայել Օրին էր, մյուսը Մինաս վարդապետը: Պետրոս Առաջինը, որին շատ էր հետաքրքրում դեպի հարավ երկրի սահմանների ընդարձակումը, 1701 թ. հոկտեմբերի 7-ին Պետրոգրադում կանգնեցնում է Գոլովինի տանը հանդիպում է Իսրայել Օրուն ու նրա օգնականին: Օրին Հայաստանի ազատագրման մի ընդարձակ ծրագիր է ներկայացնում ռուս ինքնակալին: Ըստ այդ ծրագրի, ցարը պետք է կազակներից և չերքեզներից կազմված 25 հազարանոց զորք ուղարկի Հայաստան: 10 հազարանոց բանակը պետք է ափ դուրս գա Նիզաբադի նավահանգստում, շարժվի դեպի Շամախի, տիրի Հայաստանի չորս ամրություններին[311], ապա Արցախի մելիքների հետ միացյալ ուժերով արշավեն Օրդուբադի վրա: Օրին նկատի ուներ այն հանգամանքը, որ Օրդուբադի զինագործական արհեստանոցներն են Իրանի բանակին զենք մատակարարողները: Այստեղ վերազինելով բանակը, ինչպես և համալրվելով Զանգեզուրի կամավորականներով, կգնան Երևանի վրա: Ցարը հավանություն տվեց այս ծրագրին և խոստացավ իրականացնել այն:

Ռուս-շվեդական պատերազմի ձգձգման պատճառով Օրին ձգում է Ռուսաստանում մնալու ժամկետը: 1707 թ. հունիսին 50 հոգանոց խմբով Իսրայել Օրին Մոսկվայից շարժվում է դեպի Աստրախան, այստեղից Շամախի, որտեղ սպասելով շահի թույլտվությանը Սպահան մեկնելու համար, մնում է շուրջ երկու տարի[312]: Ինչպես երևում է, Օրին չէր շտապում: Աշխարհի չորս ծայրերից Շամախի էին գալիս հայ վաճառականները և Օրիին

[311] Эзов,19-20.
[312] Լեո, հ. 3-2, էջ 12:

կարևոր լուրեր հաղորդում: Շամախին առևտրական այն կարևոր կետն էր, որտեղ կապվում էին Ռուսաստանն ու հարավային երկրները՝ Չինաստանից մինչև Թուրքիա: Այս գործում գլխավոր դերը պատկանում էր հայ վաճառականներին: Դեռևս 1667 թ. Ալեքսանդր Միխայլովիչ ցարը հատուկ հրահանգով արտոնություններ էր շնորհել հայ վաճառականներին սահմանելով նրանց մաքսային հարկերը[313]: Շամախիում Իսրայել Օրին պարբերաբար հանդիպումներ էր ունենում Եսայի կաթողիկոսի ու Արցախի մելիքների ներկայացուցիչների հետ: Օրիի հոգսերից մեկը Արցախում զինված ստորաբաժանումների ստեղծումն ու ամրապնդումն էր: Ահա այս առիթով Օրիի մոտ են գալիս շիրվանցի հայ զորականներ, առաջարկում իրենց ծառայությունը: Ըստ հավանականության, այստեղ էլ Օրին հանդիպում է շիրվանցի Ավան զորապետին: Վարակվելով Օրիի հայրենասիրական շնչով և Եսայի Ջալալյան կաթողիկոսի անսահման հավատով դեպի ռուսական զենքն ու քաղաքականությունը, Ավանը հանձն է առնում շիրվանցիների զորախումբ կազմել և գնալ Արցախ, կազմակերպել երկրամասի պաշտպանությունը, ինչպես նաև նախապատրաստել ռուսական բանակը դիմավորելու և համատեղ ուժերով Հայաստանը շահի տիրապետությունից ազատագրելու գործը: Իսրայել Օրին Եվրոպայում ձեռք բերած հրազենի ու զինամթերքի մի մասը հատկացնում է Ավանին, մյուս մասը՝ հայ վաճառական Պետրոս դը Սարգիս Գիլանենցին, հայրենասեր մի մարդու, որը հանձն էր առել ռուսական զորքի կազմում կռվող հայկական հատուկ էսկադրոնի հավաքագրումն ու զինումը: Իրանի թուլացման պայմաններում հաճախակի էին դառնում կովկասյան լեռնականների ասպատակությունները դեպի Անդրկովկաս: Այս հարձակումների դեմն առնելու համար թույլ Իրանը ոչինչ չէր ձեռնարկում: Արցախահայության համար փրկության միակ միջոցը սեփական ուժերով պաշտպանական համակարգի ստեղծումն էր: XVII դարի վերջերին Արցախ-Ղարաբաղում և Ուտիքի լեռնային հատվածում, որտեղ բնակչության հիմնական մասը հայերն էին, ստեղծվում է Հայոց Սղնախներ (ամրացված վայր) պաշտպանական համակարգը: Սկզբնական շրջանում այն ընդգրկում էր վեց կենտրոններ՝ Գարդման կամ Մլզնաբերդ (Ուտիքի Տիգրանակերտը), Մեծ Կողմանց գավառ կամ Գյուլիստան, Ջրաբերդ, Կաչաղակաբերդ (Խաչեն), Ավետարանոց (Վարանդա) և Տող ամրոց կամ Ցորաբերդ (Դիզակ)[314]: Ղարաբաղը այս ժամանակաշրջանում հայտնի էր Հայոց Սղնախներ անունով և փաստորեն ինքնագլուխ կարգավիճակ ուներ:

[313] Сборник актов относящиеся к обозрению истории армянского народа, М., 1833.
[314] Մակար Բարխուսարյանց, Պատմություն Աղվանից, Վաղարշապատ, 1902. հ Բ, էջ 43:

Սղնախներում երկրի գլխավոր դեմքերը ոչ թե մելիքներն էին, այլ զինվորական հրամանատարները: Իսկ Զրաբերդում և Գյուլիստանում հրամանատարությունը իրենց ձեռքն էին վերցրել տեղի ֆեոդալները՝ մելիքները: Սղնախների գլխավոր հավաքատեղին Գանձասարի վանքն էր: Աղվանից կաթողիկոսի նստավայրը, ուր պարբերաբար ժողովի էին հավաքվում Սղնախների հրամանատարներն ու մելիքները: Եսայի կաթողիկոս Ջալալյանը իրականացնում էր Հայոց Սղնախների քաղաքական ղեկավարությունը: Նա երկրի միաբանության ոգին էր: Իսկ միաբանության հիմնական գաղափարախոսությունը ռուսաց զենքի օգնությամբ Հայաստանի պետականության վերականգնումն էր, այսինքն՝ Իսրայել Օրիի ծրագիրը: Արդեն երևան են գալիս ռուսական, պարսկական և թուրքական կողմնորոշման կուսակցությունները: Ռուսական կողմնորոշման կողմնակիցները համոզված էին, որ Ռուսաստանը, Իրանից նվաճելով Անդրկովկասը, շահագրգռված կլինի դրանց պաշտպանությունը ապահովելու համար քրիստոնյա բնակչության միջոցով պետություններ վերստեղծել: Յուրաքանչյուր սղնախ իր հերթին կազմված էր մի քանի բերդերից և հսկում էր իրեն ենթակա բնակավայրերը: Սղնախներում մեծ ոգևորություն է առաջացնում շվեդների նկատմամբ 1709 թ. Պոլտավա քաղաքի մոտ ռուսական զորքի հաղթանակի մասին Իսրայել Օրիի հայտնած լուրը: Արևելաեվրոպական քրիստոնյա երկրները դիմում էին Պետրոս Մեծին՝ ազատագրելու թուրքական լծից: Դա, անշուշտ, համապատասխանում էր դեպի հարավ ռուսական նվաճողական քաղաքականությանը: Ռուսաստանը եռանդուն նախապատրաստվում էր այս պատերազմին: Մոսկվայում վրաց իշխանները ևս եռանդուն գործունեություն էին տանում ռուսական օգնական ուժեր բերելու համար: Վրաց թագավորազն Արչիլն իր հերթին Մոսկվայում բանակցություններ էր վարում՝ Վրաստանը ազատագրելու խնդրով: Արևմտաեվրոպական պետությունները, վախենալով Ռուսաստանի հզորացումից ու սահմանների դեպի հարավ ընդարձակումից, դիվանագիտական ճանապարհով փորձում էին խոչընդոտել նրան: Լուի XIV-ի առևտրական ներկայացուցիչ Միշելը Սպահանում պարսից արքունիքին հուշում էր, որ Իսրայել Օրին ձգտում է ռուսների միջոցով վերականգնել հայոց թագավորությունը, ինքն էլ այդ գահի գլխավոր հավակնորդն է: Սակայն շահ Սուլթան-Հուսեյնը մեծ շուքով 1709 թ. ընդունում է Իսրայել Օրուն, նրա միջոցով ռուսաց Պետրոս կայսրին հղում հետևյալ պատասխանը. «Համաձայն Ձեր ցանկության Իսրայել Օրու դեսպանության կատարյալ հաջողության համար մենք ցույց տվինք նրան մեր ողորմած ուշադրությունը, օգնությունը և հարգանքը: Թող պարզ լինի Ձեր պայծառ հայացքին, որ թեև հիշյալ քրիստոնյա ժողովուրդների մեջ կան տգետներ, որոնք մեր պետության արժանապատվությունը նկատի

առնելով պիտի արժանի պատիժը կրեին իրենց վատ արարքների կամ վատ ուղղության համար, բայց Ձեր բարեկամական նամակը, որ ամրացնում է մեր մեջ վաղուց գոյություն ունեցող բարեկամությունն ու համաձայնությունը, հրավիրում է մեզ գնալ ողորմությունների և մեր հպատակներին հարգելու մեր ընտրած ճանապարհով, և մենք վեհանձնաբար ներում ենք հիշյալ ժողովուրդների բոլոր արարքներն ու մեղքերը այն պայմանով, որ նրանք այսուհետեւ այլևս այդպիսի սխալների մեջ չընկնեն»[315]: Պարզ է, որ պարսից արքունիքը ուշի ուշով հետևում էր Անդրկովկասի քաղաքական ընթացքին եւ տեղյակ էր տեղի ունեցող խմորումներին:

Օրին Մոսկվա չի հասնում: Նա մեռնում է Աստրախանում: Օրիի այս հանկարծակի մահը հայոց փրկության մեծ գործը կիսատ թողեց: Նրան արժանի փոխանորդ չկար: Սակայն նրա ծրագիրը արդեն ընթացքի մեջ էր: Այդ ժամանակ մի շարք դեպքեր տեղի ունեցան Աֆղանստանում: Շահը Աֆղանստանի Ղանդահար քաղաքն է ուղարկում Գուրգին խանին (վրաց թագավոր, որ նեղվելով Վրաստանի իր ախոյաններից, իր զորագնդով անցել էր Իրան)՝ տեղի ապստամբությունը ճնշելու համար: Շահը շուտով Ղանդահար է ուղարկում նաև տեղի առաջնորդ Միր-Վեյսին՝ իբր թե երկու հակառակորդները կպայքարեն իրար դեմ և կթուլացնեն իրար: Սակայն աֆղանցի Միր-Վեյսը շատ խորամանկ էր: Նա, խաբելով վրացի մահմեդականին, սպանում է, կողոպտում նրա զորագունդը և լուրջ սպառնալիք ներկայացնում Իրանի համար: Սպահանում մոտիկից տեսնելով պարսից արքունիքն ու թուլացած պետականությունը, նա արդեն գիտեր, որ նետ ու աղեղով զինված աֆղանցիներով կարող է գրավել ողջ Իրանը: Այս հանգամանքը լուրջ անհանգստություն էր պատճառում շահին:

Արցախում ապստամբության ղեկը իր ձեռքն է վերցնում Գանձասարի Եսայի կաթողիկոսը: Նա 1716 թ. Մինաս վարդապետին Ռուսաստանում ապրող հայերի առաջնորդ է նշանակում, նրան հանձնարարելով նաև Ռուսաստանում իր դեսպանը լինելու պարտականությունը: Պետրոս Առաջինը Պարսկաստան է ուղարկում իր դեսպանին՝ Արտեմի Վոլինսկուն: Նա, Սպահանում ուսումնասիրելով երկրի վիճակը, ռուսաց կայսրին գրած նամակում հայտնում է. «Իմ թույլ բանականությամբ ես մի ուրիշ բան չեմ կարողանում մտածել, բայց միայն այն, որ Աստված այս թագը տանում է դեպի կորուստ, դեպի որը նրանք քաշում են մեզ իրենց անխելքությամբ, չեմ զարմանում, տեսնելով նրանց հիմարությունը, կարծում եմ, որ այդ Աստծու կամքն է՝ ի բախտավորություն ցարական մեծության: Թեկուզ մեր այժմյան պատերազմը (շվեդական) արգելել էր, սակայն տեսնում եմ այստեղի թու-

[315] Эзов, стр. 247.

լությունը, մենք կարող ենք պատերազմ սկսել առանց որևէ երկյուղի, որովհետև ոչ թե մի ամբողջ զորաբանակով, այլ մի փոքրիկ կորպուսով այս երկրի մեծ մասը կարելի է միացնել Ռուսաստանին, սրա համար ավելի հարմար ժամանակ, քան այժմյանը, չի լինի, որովհետև եթե առաջիկայում այս պետությունը վերանորոգվի մի ուրիշ շահի ձեռքով, այն ժամանակ կարգն էլ ուրիշ տեսակ կլինի»[316]: Այդ ժամանակ Արցախում մի եռանդուն գործունեություն է սկսում Ավան հարյուրապետը՝ լծված Իսրայել Օրու ռուսական ծրագրի իրականացմանը: Իր եղբոր՝ Թարխանի և շիրվանցի հայ զինականների հետ Արցախ գալով, նա որպես հենակետ է ընտրում Շուշի (հնում՝ Կարկառ) անառիկ բերդը: Բերդի Շուշի անվանը մենք հանդիպում ենք Երևանի Մատենադարանում պահվող մի ձեռագրում, որի հեղինակն է արցախցի գրիչ Տեր-Մանուելը: Նա տեղի սբ.Աստվածածին եկեղեցում ստեղծում է ձեռագիր Ավետարան, որի հիշատակարանում գրում է. «1428 թվականին ի գյուղ Շուշի կոչեցեալ Ամարասա վիճակի: Արդ գրեցավ աստվածագիծ գրչի Տեր-Մանուելի – ՊՀԷ (1428) ի կաթողիկոսություն Տէր Հովհաննիսի, ի բռնակալութիւն Ըսքանտարին, որ է թորգոմածին և չարչարող քրիստոնեից, և հույսն Աստված է»[317]: Ամարասի եպիսկոպոս Ալեքսանոսը գրքի հիշատակարանում գրում է. «... և դառն ու անբարի ժամանակիս, որ թորգոմացի ազգն տիրեն աշխարհի, և ամենեքեան ի մեծ վշտի կան, և ազատութեան տեառն կամքն է»: Շուշի բերդը, որը վաղուց էր աչքաթող արված, մինչ Ավան հարյուրապետի գալը որևէ լուրջ դեր չուներ Սղնախների համակարգում և հարևան Շոշ գյուղի բնակիչների համար որպես ամառանոց ու ագարակ էր ծառայում[318]: Կովկասյան ավարառու ցեղերի դեմ մղված անընդմեջ պատերազմներում ռազմական մեծ փորձ ձեռք բերած Ավանը, ծանոթանալով բարձրադիր սարահարթի հնարավորություններին, իսկույն գնահատում ու երևակայությամբ տեսնում է ապագա անառիկ բերդն ու այն իր գլխավոր հենակետը դարձնում: Շուշիի սարահարթի 2/3 մասը երիզված է անդնդախոր կիրճով եւ ուղղաձիգ ապառաժներով: Այստեղից 20 կմ հեռու գտնվող Շիկաքար բերդի հետ Շուշին ասես հայացքի տակ է առնում դաշտավայրից Կարկառի հովիտ թափանցած օտար ամեն մի շարժում: Ավանը իր եղբոր հետ ձեռնամուխ է լինում նախ սարահարթի ամենաբարձր կետում՝ բարձր ապառաժների վրա կիսաքանդ իշխանական դղյակի և չորս անկյուններում աշտարակներ ունեցող ամրոց-միջնաբերդի վերակառուցմանը: Այս ապարանքից քիչ ներքև, քարանձավի խոռոչի վրա

[316] Соловьев, История России, т. 18. стр 29-30.
[317] Երևանի Մատենադարան, ձեռագիր N 8211:
[318] Հակոբ Պողոսյան , Պատմություն գավառին Արցախու, Երևանի Մատենադարան, ձեռագիր N 2734, էջ 3:

կառուցում է երկրորդ ապարանքը, պատերին տեղադրելով հրակնատներ: Ավան զորապետին պակաս չէր հրապուրում և Հունոտի կիրճը: Այստեղ ևս երկու հսկայական քարանձավներ կան: Ավանն այստեղ վերականգնում է հին ջրաղացներն ու կառուցում նորերը: Կիրճի յուրօրինակ միկրոկլիմայի շնորհիվ Ավանը, ըստ Իսրայել Օրիի ծրագրի, վերածում է ռուսական զորքի համար ձիերի ու անասունի հսկա պահոցի: Այն նաև մի օժանդակ տնտեսություն էր Շուշիի բերդապահների համար: Շուտով Ավանը ձեռնարկում է պարսպի վերականգնումը: Սարահարթի հյուսիսային կողմում երկու վերստ ձգվող հզոր պարիսպն ուներ 50 աշտարակ: Շինարարները պարսպից ոչ հեռու բերդի տարածքում վերականգնում էին հին թաղածածկ գլխատները, դրանք իրենց համար կացարանների վերածում: 1717 թ. Ավանը ավարտում է բերդի վերակառուցումը: XVIII դարի առաջին կեսում ապրած ժամանակագիրը հաղորդում է, թե՝ «Ավան յուզբաշին (հարյուրապետ) եկավ Շոշվա քարն մտավ սահիբ խուրուշ իլավ ՌՁԿՁթ.»[319]: Սակայն ամեն ինչ չէ, որ հարթ է գնում Արցախում: Երկիրը տրոհված է երկու եկեղեցիների՝ Գանձասարի և Երիցմանկանց վանքերի միջև: Երիցմանկանց վանքի վանահայրերը, իրենց շուրջը պահելով Ջրաբերդի ու Գյուլիստանի մելիքներին եւ զորապետներին, հակադրվում էին Գանձասարի վանքի (Խաչենի) տերերին, իրենց վանքն էին համարում Աղվանից կաթողիկոսության կենտրոնը: Եթե Գանձասարում Աղվանից կաթողիկոս էր հռչակված Եսայի Հասան Ջալալյանը, ապա Երիցմանկանց վանքում կաթողիկոսական աթոռին հավակնում էր Ներսեսը: Այս հակամարտությունը սկսվել էր կաթողիկոսական աթոռը Կաթողիկասարից (Բերդակուրից) Գանձասար (Խաչեն) տեղափոխելուց ի վեր: Այս եկեղեցիները միաբանվելու, վեճը հարթելու փորձեր միշտ էլ արել էին: Դեռևս 1677 թ. սեպտեմբերի 25-ից Սիմեոն կաթողիկոսը պարտավորագիր է տվել էջմիածնի Հակոբ և Աղվանից Երեմիա կաթողիկոսներին, որ ինքը քանի կենդանի է, առանց Երեմիայի հրամանի ոչ մի քայլ չի անի և որ իր ազգակիցներից ոչ ոք կաթողիկոսության չկանչվի իրենից հետո: Փաստաթղթի պատճենը ստորագրել ու կնքել են էջմիածնի երեք միաբաններն ու կաթողիկոսը: 1691 թ. փետրվարի 10-ին Արցախի մելիքներն ու իշխանները, ժողով գումարելով Գանձասարում, համախոսական են հռչակում առ այն, որ իրենք դեմ են Սիմեոնի կաթողիկոսության ու օրինական կաթողիկոս են ճանաչում միայն Երեմիային: Սակայն Երիցմանկանց քահանայապետները ոչ մի կերպ չէին հրաժարվում կաթողիկոսության աթոռին հավակնելուց: Դյուտական-Մայրաքաղաք-Բերդակուրի կաթողիկոսական ամառանոց-աթոռանիստի հիմնահատակ ավերումը ևս կապված էր Ջրաբերդի ու Խաչենի մրցակցական պայքարի հետ: Սիմեոնի հաջորդները ևս Աղ-

[319] Աշ.Հովհաննիսյան, Դրվագներ..., Եր., 1959, գ.2, էջ 699:

վանից կաթողիկոս էին հռչակվում ու իրենց հերթին խարխլում Արցախի միասնությունը: Նրանք հակադրվում էին նաև քաղաքական կողմնորոշմամբ, որը վեր էր ածվում բացարձակ թշնամանքի: Եթե մինչ Իսրայել Օրու ծրագրի երևան գալը գանձասարցիները հակված էին դեպի պարսկական տիրապետությունը, նրանց հովանու ներքո էին տեսնում Արցախի գոյությունն ու ինքնավարությունը, ապա Երիցմանկանց վանքի տերերը հակված էին դեպի օսմանյան Թուրքիայի տիրապետությունը: Էջմիածնի կաթողիկոսները իրենց հերթին ոչ միայն սկզբունքային չէին այս հարցում, այլ ներքուստ կողմ էին նման մասնատմանը, որը թուլացնում էր Աղվանից կաթողիկոսությունը և իրենցից միշտ կախման մեջ պահում: Էջմիածնի կաթողիկոսները միշտ ձգտել են թուլացնել Աղվանից եկեղեցու ազդեցությունը շրջակա երկրների վրա, հարմար առիթի դեպքում նրանցից ազդեցության տարածքներ խլել: Օրինակ, XVIII դարի առաջին քառորդում Էջմիածինը իրեն ենթարկեց Շամախու թեմը՝ այնտեղ ուղարկելով իր ներկայացուցիչներին: Շամախու թեմը, վաճառաշահ քաղաքի շնորհիվ, նյութական լուրջ օժանդակություն էր հանդիսանում Եսայի Ջալալյան կաթողիկոսի քաղաքական ձեռնարկի խնդրում, ուստի Գանձասարի վեհապետը մեկնեց Էջմիածին և վերստացավ Շիրվանի թեմը: Եկեղեցական ընդվզումներին զուգահեռ լուրջ ընդհարումներ էին ունենում Ջրաբերդ-Գյուլիստանի ու Շուշի-Ավետարանոցի սղնախները:

1720-ական թվականների սկզբներին հաճախակի էին դառնում աղվանների առաջնորդ Միր-Վեյսի որդու՝ Միր-Մահմուդի արշավանքները դեպի Իրան: Պարսիկ զորավար Լուֆթ-Ալի խանը Քիրման քաղաքի մոտ հաղթեց Միր-Մահմուդին, սակայն շուտով դարձավ շահի կանանոցի ու ներքինիների վրեժխնդրության առարկան և բանտարկվեց: Այդ ժամանակ ավելի սանձարձակ էին դառնում Դաղստանի լեռնականները: Նրանց առաջնորդներից լեզգի Դաուդ-բեկը կապ ուներ թուրքաց սուլթանի հետ ու նրա հրամաններով էր շարժվում: Շամախու Հասանալի խանը փորձեց ավարառուների առաջն առնել, սակայն լեզգիները հանկարծակի գրոհով ոչնչացրին նրա զորքը և սպանեցին խանին: Լեռնականները 1720 թ. Սուրխայ Շամխալի, Իսմիի, Հաջի Դաուդի ու Ալի Սուլթանի գլխավորությամբ հարձակվեցին Շամախու վրա: Քաղաքի պաշտպաններին օգնության եկան Հայոց Սղնախներից, Գանձակից և Մուխանքից: Ճակատամարտը տևեց ութ օր: Ի վերջո, լեռնականները զիջեցին ու ետ դարձան: Հաջորդ տարի ավելի մեծ զորքով օգոստոսին լեռնականները կրկին հայտնվեցին Շամախու մոտ: Այն շատ համեղ պատառ էր ավարառուների համար: Հասան Ջալալյան կաթողիկոսը մանրամասն նկարագրել է քաղաքի գրավումն ու թալանը: Սունի բնակիչները, որ Սարու Թորփաղ թաղամասում էին, գիշերը բացեցին քաղաքի դռները: Կովկասյան լեռնականները անխնա կոտորեցին ղզլբաշներին ու շիաներին, որոնց արհամարհաբար «ղաջար» էին անվանում: Եսայի կաթողիկոսը գրում է, որ շուկայում արյան գետ էր հոսում: Քաղաքի 800 մեծամեծները իմամի մոտ էին ապաստանել: Սունի լեզգիները, որ ատելությամբ էին լցված շիա մահմեդականների նկատմամբ, բոլորին հենց մզկիթում գլխատեցին: Հայերին շատ չէին վնասում, սակայն նրանց զավակներից շատերին գերի տարան: Թալանեցին ողջ քաղաքի հարստությունը: Ռուս վաճառականները կորցրին շուրջ 500 հազար ռուբլի[320]:

Երևանից ու Պարտավից պարսիկների զորքը եկել էր կանգնեցնելու թալանչիների առաջխաղացումը: Մինչ նրանք Կուրի ափին, Պարտավի մոտ հանգստանում էր, լեզգիները անսպասելիորեն հարվածեցին ու ոչնչացրին ծույլ ու դանդաղաշարժ բանակը: Կենդանի մնացածները փախան դեպի Հայոց Սղնախները: Պարսից արքունիքը ոչնչով չպատասխանեց լեռնցիների այս հարձակումներին, քանի որ ամբողջությամբ զբաղված էր Միր-Մահմուդի գլխավորած արշավանքների դեմն առնելու հոգսերով: 1722թ. մարտին լեզգիները «իբրև զմարախ բիւրք և հազարք հազարաց», անցնելով Դերբենտի դռները, ի վերջո, հայտնվեցին Դիզակում, այն թալանելուց և բնակիչներին կոտորելուց հետո անցան Վարանդա: Այստեղի մելիք Բաղիր Բ-ն ընծաներով դիմավորեց նրանց, ազատեց երկրամասը ավերումից, միևնույն ժամանակ ազատագրեց դիզակցի գերիների մի մասին: Մելիք Բաղիր Բ-ն Գեղարքունիքի (Սոդք-Մազրա) Շահնազարյան մելիքական ցյուղից էր: Նրա նախնիներից Միրզաբեկը, որը Մելիք Շահնազար Ա-ի եղբայրն էր, 1603 թվականին Վարանդա էր եկել պարսից Շահ-Աբաս Մեծի տված մելիքության վկայականով: Մելիք Շահնազարյանների այս ցյուղը, թիկունքում ունենալով հզոր շահի պաշտպանությունը, ետին պլան մղեց Վարանդայի ավանդական մելիքական տոհմին: Միրզաբեկին հաջորդել են Բաղր խանը, Բաղր Ա-ն ու Մելիք Շահնազար Ա-ն: Մելիք Բաղր Ա-ն 1627թ. Մազրայից Ավետարանոց և Շուշի է տեղափոխում տեղի հայությանը: Արցախի գահերեց Ջալալյանների խորհրդով մելիքը ամրացնում է այս բերդը: Մելիք Բաղր Ա-ն «Օժանդակությամբ տեղական և նորեկ ժողովրդականաց փութացնում է Ավետարանոց բերդի (վերակառուցման) ավարտումը և իւր ապաստարանը հաստատում բերդումն»[321]: Մելիք Բաղր Բ-ն, որին Գյուլիստանի Մելիք Բաղրից տարբերելու համար Բաղի էին ասում, շարունակելով իր նախնիների ավանդական ճկուն քաղաքականությունը, ոչ մեծ փրկագնով լեզու գտավ լեզգիների հետ: Իհարկե, մելիքի այս ձեռնարկին թիկունք եղան և Ավան զորապետն ու Թարխան հարյուրապետը, որոնք շիրավանցի

[320] Եսայի, էջ 44:
[321] Մակար Բարխուտարեանց, Պատմութիւն Աղվանքի, հ.Բ., էջ 43:

լինելով լավ գիտեին լեռնցի ավարառուների բարքն ու սովորությունները: Ընդհանրապես, նման կարևոր հարցերը սղնախի զինվորական խորհրդում են վճռվում: Իսկ Խաչենում ոչ դիմավորեցին, ոչ էլ դիմադրություն ցույց տվեցին: Սա ևս վկայում էր Սղնախների անմիաբանության մասին: Ավարառու հրոսակները թալանում էին, մարդկանց գերևարում, տները հրկիզում: «Զգերին եւ զանասուն ընդ միմեանս խառնեալ էին իրբեւ յհեղեղ յորդ», - գրում է Զալալյան կաթողիկոսը, որը Գանձասարի վանքի բարձունքից տեսնում էր գյուղի կոտորածն ու կողոպուտը: Լեզգիները չկարողացան վնասել ոչ Զրաբերդին, ոչ Գյուլիստանին, ոչ էլ Շուշիին: Սակայն լեռնցիների այս ասպատակությունները ցույց տվեցին, որ Սղնախները դեռևս պատրաստ չէին միացյալ ուժերով պաշտպանելու երկիրը: Որոշակի դիմադրություն ցույց տվին Զրաբերդն ու Գյուլիստանը: Մելիքների Պետրոս Մեծին հղած նամակում հայտնվում է, որ 12 հազարանոց զորքով իրենք կռվել են լեզգի ավարառուների դեմ, կոտորել ու հեռացրել իրենց երկրից: Մելիքները հայտնում են, որ սպասում են ռուսական զորքի գալստյան[322]: Այդ ժամանակ էլ Իրանը ծնկի եկավ աղվանների առջև: Միր-Մահմուդը հաղթեց վճռական ճակատամարտում և իրեն նստավայր ընտրեց Սպահանի մոտ գտնվող շահի շքեղ պալատը: Շահի որդին Թահմասպը, փախավ Ղազվին: Իրանի խաները շուտափույթ նրան շահ հռչակեցին: Իսկ կովկասյան լեռնականները, թալանն ու գերիներին անցկացնելով Կուր գետը, Հաջի Դաուդի և Կազի-Կումուխի առաջնորդ Սուրխայի գլխավորությամբ մայիսին պաշարեցին Գանձակը: Քաղաքին 30 հազարանոց զորքով օգնության հասավ Վրաստանի թագավոր Վախթանգը: Լեզգիները, խուսափելով բախումից, հեռացան Գանձակից: Սակայն գանձակցիները հրաժարվեցին վրացիներին տալ օգնության դիմաց խոստացած ոսկին: Գանձակի Զավադ խանը հուշեց վրացիներին, որ պարտքի դիմաց թալանեն սունի թուրքական ցեղերին, որոնց հրավերով էին ասպատակում լեզգիները: Եսայի Զալալյան կաթողիկոսը, որը Գանձակ Վախտանգի հետ բանակցելու էր եկել, մանրամասն նկարագրում է վրացիների թալանը, որը ոչ պակաս պատուհաս դարձավ հայերի համար: Վրացի զինվորները ոչ մի տարբերություն չէին դնում հայերի ու թափառական ցեղերի միջև: Հայերը աղ ու հացով, տոնական զգեստներով դուրս էին գալիս դիմավորելու քրիստոնյա եղբայրներին, իսկ վերջիններս հարձակվում էին, հանում մարդկանց հանդերձները, կողոպտում եկեղեցիները, տները: Ողջ թալանի 10-րդ մասը 25 հազար ոչխար և 9 հազար արջառ, տվեցին իրենց թագավորին Վախթանգին: Եսայի Զալալյանը գրում է, որ վրացիները իրենց ագահությամբ ու անողորմությամբ գե-

[322] Эзов, стр. 340-341.

ռազանցում էին լեզգիներին: Սակայն այս իրադարձությունները չխանգարեցին, որ Գանձակի մոտ Եսային բանակցություններ վարի Վախթանգի հետ և համոզի միացյալ ուժերով դիմավորել ռուսաց կայսրի զորքերին: Եսայի կաթողիկոսը վճռեց Վախթանգի հետ գնալ Թիֆլիս և այնտեղ շարունակել բանակցությունները միասնական ուժեր ստեղծելու համար, ինչպես նաև օգնելու Վախթանգին նրա ուժերի մեջ ներգրավելու թիֆլիսահայությանը: Վախթանգի որդի Շահնավազը (քրիստոնեական անունը Բակուր) հոր հանձնարարությամբ 30 հայ զինվորական ու քաղաքական գործիչների ուղարկում է Հայաստանի տարբեր գավառներում ապստամբություն նախապատրաստելու համար: Նրանց թվում էին այնպիսի գործիչներ, ինչպիսիք էին Դավիթ-Բեկը, որը գլխավորեց ազգային-ազատագրական շարժումը Ղափանում, Մելիք Եգանը, որն ամրացավ Դիզակում, շիրվանցի Ավանը: 1722 թ. սեպտեմբերի կեսերին Վրաստանի բանակը Վախթանգի հրամանատարությամբ շարժվեց դեպի Գանձակ: Ջորքի մեջ, շնորհիվ Եսայի կաթողիկոսի ջանքերի, հայերը մեծամասնություն էին կազմում: Եսայի Զալալյանը գրում է, որ Վախթանգը ավելի շատ հավատ ու սեր էր ընծայում հայերին, քան թե իր ազգին, որոնք «միշտ նենգավոր են եւ խորամանկ»: Երբ զորքը Խրամ գետի վրա Կոտրած կամրջին է հասնում, Եսայի կաթողիկոսն իր արցախցի ուղեկիցների հետ առաջ է անցնում, շտապում Գանձասար լուր հաղորդում Սղնախներին, որ միացյալ զորքով միանան վրացական բանակին: Դա մի բարեպատեհ ժամանակ էր արցախցիների համար, երբ ռուսական զորքի գալստյան լուրը հաշտեցրել էր Եսայի և Ներսես կաթողիկոսներին: Ներսեսը իր հոր մեծշենցի Սիմեոնի պես խոստացել էր իր բոլոր քայլերը համաձայնեցնել Եսայի կաթողիկոսի հետ: Հաշտվել էին նաև սղնախների հրամանատարները: Բոլորն ընդունում էին Ավանի գլխավորությունը: Ավանը մի այնպիսի պաշտպանական համակարգ էր ստեղծել Շուշիում, որ այն արդեն գլխավոր հենակետ էր դարձել ողջ Արցախում: Հրամանատարական խորհուրդը որոշեց վրացիների հետ միացման համար 10 հազարանոց զորք կազմել, յուրաքանչյուր սղնախից հատկացնելով երկու հազարական սպառազեն հեծյալ: Ավանը Շուշիի (Փոքր) սղնախում կազմակերպել էր զենքի, ինչպես և վառոդի արտադրությունը: Իր փոխարեն սղնախում թողնելով եղբորը Թարխան հարյուրապետին, զորքին գումարելով Դիզակից եկած զինվորներին, շարժվեց դեպի Գանձակ՝ ճանապարհին միացնելով Ավետարանոցի, Զրաբերդի ու Գյուլիստանի սղնախներից առանձնացված գնդերը Շրվան, Շահան ու Սարուխան հարյուրապետների գլխավորությամբ: Ըստ նախնական ծրագրի, հայ-վրացական միացյալ զորքը շարժվելով դեպի Շամախի, կջախջախի Հաջի Դաուդի լեզգիական ավարառուներին, կգնա ռուսական զորքին ընդառաջ և միասնական ուժերով կազա-

տագրեն Հայաստանն ու Վրաստանը, կարշավեն Վրաստանի խորքերը: Նաև հայտնի էր, որ շահ Թահմասպը Անդրկովկասում իր տեղապահ (վալի) Վախթանգին հանձնարարել էր Սղնախների հետ միացյալ ուժերով գնալ Շամախի՝ լեզգիների դեմ: Ինչ խոսք, որ սա ռուսական զորքին ընդառաջ գնալու մի քողարկված առիթ էր ստեղծում: Եթե որևէ պատճառով ռուսների հետ միացումը չիրականանա, ապա Վախթանգը կվկայակոչի շահի հրամանը: Հայոց զորքը հայ իշխանների ու եկեղեցու առաջնորդների հետ հասան Գանձակի մոտ, Չոլակ վայրը: Վախթանգի զորքը, որը բանակել էր Ղոչղարի գետի (Ղարա-արխ) մոտ, ընդառաջ գնաց՝ հանդիսավորությամբ դիմավորելու և ողջունելու հայոց զորքին: Եսայի կաթողիկոսը, որ քիչ ջանք չէր թափել այս միավորման համար, մեծ խանդավառությամբ է նկարագրում այս երկու բանակների հանդիպումը: Մեր պատմության մեջ օտար նվաճողների դեմ պայքարում երկու ժողովուրդների վերջին միասնությունը կայացել էր Զաքարյանների ամիրսպասալարության ժամանակ XII-XIII դարերում, երբ փաստացիորեն վրաց-հայկական միացյալ պետություն էր ստեղծվել: Եվ ահա երկուստեք ուրախությունը չափ ու սահման չուներ: Բանակները ճակատ առ ճակատ կանգնել էին, ու նրանց միջև գոյացած տարածքում հայ ու վրացի քաջամարտիկ հեծյալները վարժություններ էին ցուցադրում, խաղում, մրցում միմյանց հետ, պարեր բռնում: «Փոշեխառն ծուխ նորին իբրեւ զկայծակնափայլ ամպ արգելել զճառագայթս արեգականն մինչ զի զմիմիեանս հագիվ տեսանեաք»: Բոլորին համակել էր անսահման ուրախությունը: Եկել էր քրիստոնյաների փրկության ժամը: Բոլորը տեղյակ էին, որ ռուսական զորքը առանց գնդակ արձակելու գրավել էր Դերբենտի երկաթյա դուռը: Ռուսական զորքը դեռևս հուլիսին էր Պետրոս Առաջինի գլխավորությամբ անարգել շարժվել մինչև Դերբենտ: Պարենը, հրետանին ու ձիերի մնացած մասը տեղափոխում էին նավերով: Սակայն նավերի մեծ մասը խորտակվեցին ծովում: Իսկ Գանձակում հայ-վրացական զորքը անհամաբեր սպասում էր Պետրոս Մեծի հրահանգին, անտեղյակ, որ Կայսրը հոկտեմբերի 4-ին Աստրախան էր վերադարձել: «Սպասում էին ինքնակալին, ինչպես Քրիստոսին՝ Երուսաղեմում», - գրում է Թիֆլիսի հայոց առաջնորդ, արքեպիսկոպոս Մինաս Փարվազյանը: Երկու ամիս սպասելուց հետո զորքերը բաժանվում են: Վախթանգը վճռականություն չի ցուցաբերում ընդառաջ գնալու ռուսներին, այլ անորոշության մեջ մնալուց հետո զորքով վերադառնում է Թիֆլիս: Հայոց գնդերը վերադառնում են իրենց սղնախները: Հայերն ու վրացիները կրկին մնացին երեք կրակի՝ թուրքերի, պարսիկների ու կովկասյան լեռնցիների արանքում: Ինչպես ցույց տվեցին հետագա իրադարձությունները, ռուսաց կայսրը շվեդական պատերազմից հետո լավ էր զգում իր զորքի հնարավորությունները,

ու ամենևին էլ մտադիր չէր ուժասպառ բանակով բախվելու թուրքերի կամ պարսիկների հետ: Նա նպատակադրվել էր օգտվել Իրանի թուլությունից և նրանից խլել Կասպից ծովի արևմտյան եզերքը: Դերբենտից հետո ռուսական զորքը առանց ճիգերի գրավեց Բաքուն ու Ռեշտը: Իսկ ողջ Անդրկովկասի գրավումը թողեցին հետագային: Պետրոս Մեծը հանձնարարեց հայտնել շահին, որ Շամախու վրա են գնում ոչ թե Իրանի դեմ պատերազմելու, այլ պատժելու լեզգի խռովարարներին, որոնք նեղություն են պատճառել ռուս վաճառականներին, միևնույն ժամանակ՝ արգելելու Թուրքիային գրավելու Կասպիականի ափերը: Ի վերջո, Իրանը ստիպված եղավ դաշնագրով այն զիջել Ռուսաստանին: Ռուսները նույն միջոցին բանակցում էին Օսմանյան Թուրքիայի հետ, որը ևս ձգտում էր օգտվել Իրանի թուլացումից ու գրավելու Հայաստանն ու Վրաստանը, ինչպես եւ արգելակել Ռուսաստանի առաջընթացը: Եթե Վախթանգը չսպասեր ռուսների հատուկ հրահանգին և միացյալ զորքով շարժվեր դեպի Շիրվան, երևի քաղաքական կացությունը այլ ընթացք կստանար: Ի վերջո, ռուս զինվորականներն ու դիվանագետները մեղադրում էին Վախթանգին դանդաղկոտության և անվճռականության համար: Կախեթիայի Մուհամմադ-ղուլի խանը (Կոստանդ), որը մահմեդականություն էր ընդունել, միանալով Գյանջայի Օղուրլու խանին և Երևանի, Բորչալուի, Ղազախի բռնավորներին, գրում են պարսից շահ Թահմասպին, որ Վախթանգը միաբանելով Հայոց Սղնախների հետ, ռուսներին հրավիրում են տիրելու Իրանը: Անխոհեմ շահը պահանջեց, որ իրեն բերեն Վախթանգի գլուխը: Մուհամմադ ղուլի խանը մատնությամբ մտնում է բերդն ու թնդանոթներով ռմբակոծում նրա ապարանքը: Վախթանգը վրացիներից ու հայերից զորք է հավաքում և ուրացող Կոստանդինին դուրս քշում Թիֆլիսից: Վերջինս դիմում է լեզգիների օգնությանը, որպես վարձ խոստանալով, որ թույլ կտա թալանելու Թիֆլիսը: Եվ ահա հետևում է Կովկասյան ավարառուների հարձակումը Ալիսուլթանի գլխավորությամբ: Վախթանգը, որ մշտական զորք չէր պահում, փախչում է, ապաստանում Գորի բերդում: Լեզգիները թալանեցին Թիֆլիս քաղաքն ու շատերին գերի տարան՝ ծանր տուրք դնելով քաղաքացիների վրա: «Դերվիշ-Մահամադ-աղան (մահմեդականություն ընդունած Շաքի-Հերեթի հայազգի տերերի ժառանգներից, - Բ.) գնալով դեպի Թիֆլիս, Մուհամմադ ղուլի խանի հետ մի քանի անգամ տեսակցեց, համոզեց, որ նվիրական իսլամական կրոնի պահապանին եւ ամբողջ աշխարհի վեհափառ խալիֆին ի սրտե հավատարիմ եւ հպատակ կլինի, - գրում է Իսմայիլ-Ասըմ էֆենդի Չելեբիզադե: Վախթանգը եւ որդին՝ Շահնավազը, հպատակություն են հայտնում (թուրքերին) եւ հանձնում Գորի բերդը»[323]: Մուհամմադ ղուլի

[323] Իսմայիլ-Ասըմ էֆենդի, «Թարի Չելեբիզադե», Թուրքական աղբյուրները

խանը, որը շահ Թահմասպի նահիրն էր, ու նրան էր հանձնված Վրաստանի, Արարատյան նահանգի ու Գանձակի տարածքները, ինչպես ու Արցախը, պատվիրակ է ուղարկում Շուշի՝ Ավան զորապետի մոտ, առաջարկելով բարձր պաշտոնով և ռոճիկով ծառայության մտնել իր մոտ: Փոքր սղնախի (Շուշի բերդի) զինվորական խորհուրդը մերժում է, ուրացող խանին պատասխանելով, որ իրենք ռուսական «իմփերաթորին» են ծառայում, ու սպասում են նրա զորքի գալուստին, իսկ եթե ռուսները չգան, ապա իրենք կցրվեն իրենց տները, բայց երբեք չեն ծառայի հավատուրաց խանին: Վրաց խանը, որ մատնությամբ ու լեզգիների միջոցով հաղթել էր Վախթանգին և առիթ էր որոնում սղնախի զորապետ Ավանին ևս հաղթելու համար, իր զորքը միացնելով Երևանի բերդի պարսկական զորքի հետ, շարժվում է դեպի Արցախ: Սղնախների զորքը Ավանի գլխավորությամբ ընդառաջ է դուրս գալիս վրաց-պարսկական միացյալ բանակին, ճակատամարտում կատարյալ հաղթանակ տանում և դուրս քշում Հայոց Սղնախներից: Պարտված խանը նահանջի ճանապարհին իր վրեժը լուծում է Գեղարքունի գավառի հայերից, կոտորելով երկու հազար անմեղ բնակիչների[324]:

Պետրոս Առաջինը Իրանը նվաճած Միր-Մահմուդի, Իրանի շահ Թահմասպի, Օսմանյան Թուրքիայի հետ միաժամանակյա դիվանագիտական և աշխույժ խաղերին զուգահեռ, անընդհանուր ձգտում էր պահել հայերի ու վրացիների հավատը դեպի ռուսական ազատարար արշավանքը: 1723 թ. հունիսի 3-ին կայսրը գեներալ Ֆյոդոր Ապրաքսինի և գաղտնի խորհրդական կոմս Պյոտր Տոլստոյի հետ քննարկում է հայ ժողովրդին հղված հրովարտակը, որը պետք է ուղարկվի հատուկ դեսպանի՝ հայազգի Իվան Կարապետի միջոցով: Այս փաստաթղթի ստեղծման առիթը Երիցմանկանց վանքի կաթողիկոս Ներսեսի և մելիքների նամակն էր ուղղված Պետրոս Մեծին, «վերև Աստված, նեքրևում դու... ազատիր մեզ...»: Ներսեսը, որ առերես հաշտվել էր Եսայի կաթողիկոսի հետ, նամակում նրա անունը չի հիշատակում: Դա հակաթոռ կաթողիկոսի կողմից մի փորձ էր Գանձասարի աթոռից խլելու ազատագրական շարժման մեջ գրաված ղեկավար դիրքը: Արքունիքը գրում է մի երկրորդ փաստաթուղթ ևս, որը կոչվում է Մեմորիա (հուշագիր): Պետրոսի հրովարտակը գրված է ընդհանուր խոսքերով և անորոշ արտահայտություններով: Այն ոչ մի կոնկրետ խոստում չի պարունակում հայ ժողովրդի ազատագրության գործում օգնություն ցույց տալու մասին: Հիմնական խնդիրը հայ առևտրականներին օգնությունն է, որպեսզի նրանք ակտիվ գործունեություն ծավալեն Կասպից ծովի շրջանում: Կանցլեր Գոլովինը բացատրում էր, որ

Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին, հ. Ա, 1973, էջ 130:

[324] Լեո, հ. 3, գ. 2, էջ 212:

այդպես է գրվել, որպեսզի եթե հրովարտակն ընկնի թուրքերի կամ պարսիկների ձեռքը, դրա պատճառով նեղություն չտան հայ ժողովրդին: Իսկ իրական օգնության ծրագրի մասին Պետրոս Առաջինը գրել է «Հուշագրի» մեջ, որտեղ հայտնում է, որ իրազեկ է հայ ժողովրդի ծանր վիճակին, ուստի նպատակահարմար է գտել ուղարկել իր դեսպանին՝ հանձնարարելով վստահեցնել ժողովրդին, որ ինքը նրան վերցնում է իր հովանու տակ և պատրաստ է ազատել օտար լծից: Բայց այդ ձեռնարկից առաջ նա ցանկանում է ամրանալ Կասպից ծովի ափին, նոր միայն օգնության ձեռք մեկնել[325]: Պետրոս Մեծը Հայոց Սղնախներ որպես պատվիրակ (էլչի) ուղարկեց հայազգի Իվան Կարապետին, որը Պետերբուրգում բնակություն հաստատած հայ առևտրականներից էր: Նրա եղբայրը՝ Ղուկաս Շիրվանովը (Лука Ширванов), ցարական արքունիքում որպես թարգմանիչ էր ծառայում: Ըստ ռուս պատմաբան Վ.Լիսցովի՝ Իվան Կարապետը նույն Իվան Եփրեմովն է, որը հայ երկու այլ առևտրականների հետ միասին 1723 թ. մայիսի 10-ին հրավիրվել էր սենատ և հանձնարարություններ ստացել՝ Ռուսաստանում առևտուրը զարգացնելու համար[326]: Իվան Կարապետը արցախցի չէ, ինչպես ենթադրում էին որոշ գիտնականներ: Դա մատնում է նրա զեկուցագրերի և նամակների բարբառը, որն ավելի մոտ է Շիրվանի խոսվածքին: Իհարկե, Շիրվանի բարբառը ևս արցախյան բարբառի ճյուղերից է: Ի վերջո, Իվան Կարապետը Ղզլարում (այժմ՝ Կիզլյար) մետաքսի գործարան էր հիմնել: Եթե նկատի ունենանք նրա եղբոր Շիրվանով ազգանունը, ապա պատվիրակի տոհմը Շամախիից է: Բաքվում Պետրոսի պատվիրակ Իվան Կարապետը հանդիպում է կայսեր մոտ մեկնող ղարաբաղցի պատվիրակներ շամախեցի Անտոն քահանա Առաքելյանին ու քյոխվա Չալաբիին[327], որոնք Պետրոս Մեծին էին տանում Եսայի կաթողիկոսի և զորապետների նամակը: Եսային, նկարագրելով իրավիճակը, խնդրում է Ռ(1000) զինվոր ուղարկել Արցախ, «միայն թե Քո անունը մեզ վրա լինի, մենք Քո զորությամբ և Աստծո խնամակալությամբ կարող ենք հալածել Քրիստոսի խաչի թշնամիներին»[328]: Իվան Կարապետի ուղևորությունը Պետերբուրգից մինչև Արցախ տևեց շուրջ յոթ ամիս, որի ընթացքում նոր իրադարձություններ էին տեղի ունեցել տարածաշրջանում: Հայության կացությունը հետաքրքիր է նկարագրում Սալյանի վանքի Ալեքսան քահանան՝ 1723 թ. դեկտեմբերի 20-ին Դերբենտի պարետ Յունգերին ուղղված նամակում. «Պա-

[325] Эзов, стр. 357.

[326] В. Лысцев, Персидский поход Петра I, М., 1951, с. 59.

[327] Քյոխվա Չալաբին մի դժբախտ հայ էր, որի 19 հոգուց բացկացած ընտանիքը գերել, տարել են լեզգիները: Նա հույս ուներ իր այս դեսպանական առաքելությունների ընթացքում ռուսների օգնությամբ ազատել ընտանիքը գերությունից:

[328] Эзов, стр. 365.

քում, որ հայ էլչի (դեսպան, - Բ.) Կարապետ կայր, թաքավորն հրաման էր տվել, եկավ ԻԶ (26) օր գեղջս, դեկտեմբերի 24-ին գնաց Հայոց Սղնախն վեց մարդով: Որ Սուրխայը՝ Շամխալի դղեն, գնացին դեպի Ղարաբաղ, դեպի Ագուլիս, մինչև այսօր խաբար չկա, որ ճշմարտություն գրենք...: Իսմի դղեն գնաց, Քոռն (Կուր գետը) անցավ, գնաց Շահսևանի վրայ, չաշմիշ արին, շատ ապրանք բերին: Յետով Իսմի դղեն էլ գնաց դեպի Ղարաբաղ (թալանի- Բ.): (Օսմանցիք) ԿՌ (60 000) մարդով եկին Գանջու վրայ, տասներկու փաշայ ին, թոփխանբարայ (հրանոթ) շաղ ունին, քաղաքի մինչև կեսն առին, մեր հայոց ազգն ողջ ապրանքն թալանեցին, որն կողորեցին, որն գերի դարան: Ով փող ուներ՝ գնաց իր էրէխեքն ետ առին: Վաքսուն տուն քշեցին, դարան Հոռոմաց դուն (Թուրքիա), մնացյալն փախստական, մերկ, պոպիկ, գնացին Հայոց Սղնախն (Արցախ): Սայ է մեր հայոց հալն...: Թե իմանաս, Գանջու վրա՝ փախան հոռմէցիքն: ԲՌ մարդ էր կողօրվէլ: Գնացին Թիֆլիզ, կէսըն գնացին Ըստանպոլ, որ արզ անեն իրանց խանքարին՝ էդ շատ ղոշուն (զորք) վեր առնէն, որչափ որ երկիր կայ՝ էլ շատ ղոշուն վեր առնեն գան...»[329]: Հոկտեմբերին 80 հազարանոց թուրքական բանակը Իբրահիմ փաշայի գլխավորությամբ արշավեց Գանձակի վրա: Թուրքերը 20 օր ավերում էին Գանձակի հայոց գյուղերը, շատերին գերեվարում: Սղնախներից մի պատվիրակություն դիմեց Իբրահիմ փաշային, պահանջելով, որ արձակի հայ գերիներին: Թուրք փաշան հայերի համակրանքը շահելու համար արձակեց հայ գերիների մի մասը: Ապա Իբրահիմը պատվիրակ է ուղարկում Ավան զորապետի մոտ, առաջարկելով նրան իր զորքով միանալ իրենց: Իհարկե, թուրքերը որոշ տեղեկություններ ունեին Շուշիի վերակառուցված բերդի մասին: Ավանը, խորհրդի հրավիրելով հրամանատարներին, մերժեց թուրք զորապետի առաջարկը: Իսկ դրա փոխարեն Ավան զորապետն իր գնդով շտապում է օգնելու Գանձակի պաշտպանությանը: Դեռևս նախորդ տարվա հոկտեմբերին, երբ սղնախների զորքերը վրացիների հետ միանալու էին գնացել, Ավանն ու Եսայի կաթողիկոսը Գանձակի խանի հետ փոխօգնության դաշինք էին կնքել: Քաղաքի մատույցներում տեղի ունեցած ճակատամարտում թուրքական բանակը, կորցնելով 2000 զինվոր, պարտվում է ու շտապ հեռանում դեպի Թիֆլիս, այստեղ կազմալուծվում: Թուրքերն արդեն հասկացան, որ դեպի Կասպից ծով տանող ճանապարհին իրենց առջև ծառացել է մի հզոր ամրոց, որը շատ դժվար կլինի անցնել: Դա Արցախամուր աշխարհն է իր պաշտպանական հզոր համակարգով՝ Հայոց Սղնախներով: Գանձակի ճակատամարտը դեպի Կասպիականի ափերը թուրքական արշավանքի առաջին լուրջ անհաջողությունն էր: Իսկ Սղնախների զինվորները, առաջին անգամ բախվելով թուրքական կանոնավոր բանակի հետ, հավատացին, որ կարող են հաղթել: Ներսեսին զուգահեռ օրեցօր հզորացող Շուշիի սղնախի հետ սկսեց հակադրվել և Գյուլիստանը, որի մելիք Բաղիրն ամեն քայլի դիմում էր՝ Արցախից հեռացնելու ազատագրական պայքարին լծված շիրվանցիներին: Բաղիրը, իբր հաշտվելու նպատակով, Գյուլիստանի բերդ է հրավիրում Շիրվանի ջոկատի 45 հրամանատարների, հյուրասիրում, ապա բոլորին գլխատում, գլուխները ուղարկում շահ Թահմասպին նվեր[330]: Նա նամակ է գրում Իրանի շահին, հրավիրելով գալ Ղարաբաղ և կոտորել ապստամբներին: Այնինքում ևս ազատագրական ապստամբություն էր բռնկվել Դավիթ Բեկի գլխավորությամբ, որը երկրամասից դուրս էր քշում պարսից իշխանավորներին: Թե՛ Ավանի և թե՛ Դավիթ Բեկի առաջին հաջողությունները խուճապ են առաջացնում իրանական արքունիքում: Թահմասպ II-ի գահակալությունից անմիջապես հետո նորընծա շահին են ներկայանում Ղարաբաղից եկած իրանամետ Գյուլիստանի, Գարդմանքի պատգամավորները, որոնք տագնապով պատմում են Արցախի ապստամբության մասին, ավելացնելով, որ այն ծավալվելով, սպառնալից բնույթ է ստացել և եթե շտապ միջոցներ չձեռնարկվի, շուտով Գանձակի և Երևանի բերդերը ևս նրանց ձեռքը կանցնեն[331]: Ըստ երևույթին, այս պատգամավորների մեջ էր նաև հետագայում Դիզակի մելիք կարգված Եգանը: Այս մասին մտածելու հիմք է տալիս մելիք Եգանի տան դռան շուրջը նրա թողած արձանագրության սկիզբը «ՌԶՉԶ (1737թ.) Այս ընդունարանս անունն է Մելիք Եգան, նախապես ժողովուրդը հավաքվեց և հիշատակ է: Այսպես է, որ ես՝ Ղուկաս վարդապետի որդիս, որ ի ինձ քյոխվա (տանուտեր) կարգեց: Դրանից հետո երկիրը խառնակության մատնվեց, Սուլթան-Հուսեյնի որդի շահ Թահմասպ թագավորին որոշ ծառայություն մատուցեցի, և նա բերեց սրանց (վրա) (Դիզակի, - Բ.) ինձ մելիքություն տվեց: Այսուհետև օսմանցին եկավ...»: Ինչ խոսք, որ շահը հենց այնպես, առանց կարևոր ծառայության Եգանին մելիք չէր կարգի: Սակայն Եգանի այս քայլը դժվար է դավաճանություն համարել, քանի որ այստեղ որևէ խոշոր պետության նկատմամբ կողմնորոշման խնդիր է, կար նաև այն համոզմունքը, որ դեպի անհայտ, թեկուզ և քրիստոնեական Ռուսաստանը կողմնորոշումը, ի վերջո, կործանարար է, քանի որ այդքան մոտ գտնվելով, նրանց զորքերը զլացան օգնության ձեռք մեկնել հսկա Թուրքիայի դեմ օրհասական կռիվ մղող արցախցիներ-

[329] Ա.Գ.Աբրահամյան, «Մի էջ Անդրկովկասի ժողովուրդների և հայ-ռուսական հարաբերությունների պատմությունից», Եր., 1953, էջ 143-144, (Այսուհետ՝ Աբրահամյան), տես նաև՝ ГАФКЭ, ф. С РА, 1724, Но. 4, л.2.

[330] Լեո, էջ 145:

[331] Մուհամադ-Քազիմ, Նամե-յե Ալամարա-յե Նադերի (պարսկ. բնագիր), հատ 1, Մոսկվա, 1960, էջ 99 (այսուհետ՝ Մուհամադ-Քազիմ), ինչպես նաև՝ Հակոբ Փափազյան, «Հայ-իրանական զինակցությունը 1726-1736 թթ. և արևելյան Հայաստանի քաղաքական իրավիճակը Նադիր-շահի օրոք». Բանբեր Երևանի համալսարանի, 1972, N12, էջ 92:

ին[332]: Բարձրագույն դիվանի վաքիլ նշանակված Մուրթուզա-Կուլի խանը կարգադրում է ամիր Ռոստոմ Կարակոյունլուին 20 հազարանոց բանակով գնալ ճնշելու հայերի ապստամբությունը: Միաժամանակ հրահանգ է ուղարկվում Մարաղայի, Ուրմիայի, Խոյի, Սալմաստի, Դումբալիի, Բուրգուշատի և այլ շրջանների խաներին ու ամիրներին, որ իրենց զորքերով հիջրայի 1135-ին (1723թ.) զինվեն Թավրիզում: Սակայն մինչ խաները կներկայանային, ենթարկվելով պալատականներից Մահամադ-Ալի խանի սադրանքին, շահը հրամայում է գլխատել Մուրթուզա-կուլի խանին: Սա զորքերի, դասալքության ու խաների միջև պառակտման պատճառ է դառնում: Պետրոս Մեծի պատվիրակ Իվան Կարապետը իր ուղեկիցների հետ Սալյանի հայկական վանքում վարդապետական հանդերձներ հագնելով, ինն օր գնում և դեկտեմբերի 30-ին հասնում է Փոքր սղնախ Շուշի, հյուրընկալվում Ավան և Միրզա զորահրամանատարների կողմից: Ողջ Շուշին ցնծությամբ է ընդունում ռուսաց ինքնակալի պատվիրակին և նրա հորվարտակը հայ ժողովրդին: Ավանը հունվարի 1-ին Շուշի է հրավիրում Դիզակի և Վարանդայի զինվորականության, եկեղեցու ու բնակչության ներկայացուցիչների և ընդունում ռուսական հպատակության հավատարմագիր. Ավանը հրավիրում է Դիզակի ու Վարանդայի զինվորականության, եկեղեցու, բնակչության ներկայացուցիչներին ու ընդունում Դիզակի ու Վարանդայի բնակչության ռուսաց հպատակության հավատարմագիրը, որը Իվան Կարապետն իսկույն ուղարկում է Պետրոս Առաջինին: Ահա հինավուրց բերդի վերականգնումից հետո Շուշիում գրված առաջին փաստաթուղթը. «Պատճառ գրոյս այս է, որ թվին փրկչի 1724 յունվար ամսի չորսումն մեք Դիզագոյ ու Վարանդոյ երկրիս ուզբաշեքս, և մեք մեր թամամիյ մեծօվ ու փոքրօվ, վարանդապետօվ ու քահանայիւքը, մելիքօվ ու քոդխոդէքով, քէվխօվ և ըռայթով, թամամի մեր ասկարօվս, ներքոյ գրեալքս մեր կամօքն և մեր յոժարութեամբն ծառայ դարձանք վերոգրեալ մեծին արքային, որ էս թարեղեն մինչի գալուստն Քրիստոսի կամք ներքոյ հրամանին, որ ինչ որ մեծ թագավորն մեզ հրաման առի, ուր հրամանն կատարեմք: Եվ եթե ինչ որ հրաման առի, հրամանըն կատարեմք ոչ, դառնամք, 'թէ խաբեմք, մեր գլուխն 'մեր ապրանքըն թագավորին լինի, առաջի աստծոյ թագավորն անպարտ լինի 'մեք պարտական լինեմք:

Գրեցավ գիրս Շուշոյ Սղնախումն թիւն հայոց ՌԵՀՔ (1724) յունվար ամսուն, գրոյս վերջ»:

Հայոց Սղնախները, որպես վարչատարածքային միավոր, իր ռազմաքաղաքական իրավիճակով ճանաչվում էր հարևան երկրների ու խանությունների կողմից, և բոլորն էլ հաշվի էին նստում նրա փաստացի գոյության, ուժի հետ: Սակայն նրան մի լուրջ քայլ էր մնում կատարել դեպի պետակա-

[332] Հ.Փափազյան, ԼՆԳ N5, էջ 77:

նություն, որի վճռականությունն ու կամքը չունեցան արցախցիները: Ավելի շուտ հարցը այդպես չէր էլ դրվել: Նախ պետք է որոշվեր, թե որ հզոր երկրի խնամակալության տակ պետք է ստանան այդ կարգավիճակը: Ահա այս հարցում ևս Արցախի ուժերի մեջ նոր պառակտում առաջացավ: Ներսես կաթողիկոսը դրժում է Եսայի Ջալալյանի հետ հաշտությունը և Զրաբերդում ստեղծում միայն իրեն ենթակա ռազմական հենակետը: Պառակտման գլխավոր պատճառը նրա կողմնորոշումն էր դեպի Օսմանյան կայսրությունը, որի հարձակումից Արցախը պաշտպանող ուժ չէր տեսնում: Նա իր եղբոր Զրաբերդի Մեծ սղնախի հրամանատար Սարգիս հարյուրապետի հետ բաժանվում է Գյուլիստանի սղնախից, ստեղծում իր առանձին կայանն ու ձգտում ջլատել Սղնախների ուժերը: Սղնախների ներքաղաքական հարաբերություններում որոշակի լույս են սփռում մոսկովյան արխիվներում պահպանված նամակները: Երիցմանկանց վանքի Աղվանից Ներսես կաթողիկոսը, 1774 թ. հունվարին նամակ է գրում Պետրոս Մեծի դեսպան Իվան Կարապետին և Թարխան հարյուրապետին. «Ի տեր Ներսես կաթողիկոսի օրհնութեամբ ել բազում սիրով եւ ողջունիւ ծանուցումն լիցի հոգեւոր սիրեցեալդ մերոյ պարոն էլչի Իւան Կարապետիդ եւ պարոն Թարխան ուզբաշիդ: Ձեր թուղթն մեզ հասավ ձեռամբ Օղուզին (նամակատար - Բ.), ամենայն որպիսութիւն լիով իմացանք: Բայց այն մասլահաթին՝ թուղթ գրելոյն դեպի հիւսուսոյնոցն (Ռուսաստան - Բ.) զայն դուք գիտասջիք՝ թե մասլահաթ է՝ է՞ր չէիք գրել, տուք սոքա եղբայր եք, լինի թե աստուծոյ ողորմութեամբ օգնութիւն, այն եկած թղթեր (Պետրոս Մեծի հրովարտակը - Բ.) թէ որ մէք էլ տեսնէինք, մեղք չէր: Մեր եղբայր Եսայի հոգեւոր տէրն թե տէստ է, մեշխուշոկութիւն չանեմք: Եւ այլ դուք լերուք ողջ տերամբ: Դարձեալ հոգեւոր որդի իմ Թարխան, շատ խորհրդավոր բան շատ ունիք ընդ քեզ, մին տիտղպարի մարդ ուղարկէս, որ իմ խորհուրթս իմանայ: Եւ դու թէ գալու լինիս դեպի Մոխրաթաղ, չգաս առանց իմ թղթի, եւ ամենայն կապիւ պատրաստ կաց, այտ կողմանետ այլ խոսք եմ լսում: Դարձեալ մեր Սարգիս (Զրաբերդի հրամանատարը, - Բ.) ընդ քեզ է ճշմարտապէս, որ այլ ուրիշ խօսկ ականջտ չմըտնու, Չանկաթաղե կողմանէն, գիտեմ, խօսկ ես լսել, Օղուզն գիտէ, որ քեզ կասի: Եվ դու լեր տէրամբ»: Նամակը ստորագրել էր նաև Սարգիս հարյուրապետը: Եթե Գանձասարի Եսայի կաթողիկոսն անվերապահորեն հավատում է ռուսաց գալուն ապա շրջահայաց Ներսես կաթողիկոսը Մելիք Թամրազին ուղղված պատասխան նամակում գրում է, «...Միայն այտ ըռուսացտ գալն չէինք գիտում, թե ինչպես է, փոքր գալն մեզ օգուտ չկայ, լերուստ կողմանէ օսմանցիք լսեն՝ հայկական ազգիս լաւ չի, մինչեւ թէ աստուած այց անէ, որ բազմից զօրք թագավորիւ գան...»[333]: Ռուսական հպա-

[333] Նույն տեղում, էջ 152:

տակություն ընդունելու խնդրում չի շտապում նաև Գյուլիստանի մելիք Բաղին, որը երևում է հունվարին Ավետարանոցի հրամանատարներ Թարխանին և Բաղի յուզբաշուն գրած նամակում. «Մելիք Պաղէս պարով հասցէ ձեզ՝ Թարխան ուզբաշի, Պաղի ուզբաշի: Եդ ուռուսէդ գիր էր պէրեր, յզե տեսնինքշ Ինչ որ քրեյ կո գայք, ես կո դամ: Մեր կողմանավս քիլ չիլի: Հալպաք, հազար հալպաք, կանոխ (շուտ - Բ.) յդե տենի, այլեւայլ չի անիք, տեսնում եք թէ ժամանակս ինչպես այ, մուղայեթ կենաք (զգույշ եղեք - Բ.), ամեն պանուն փարաղաթ (դանդաղ) մեք կենալ: Եւ դուք ողջ լերուք, բաւ է»[334]: Պետրոս Մեծի պատվիրակ Իվան Կարապետը 1724-ի հունվարի զեկուցագրում հայտնում է, որ երեք սղնախներ հնազանդություն են հայտնել, իսկ մյուս երկուսը՝ Զրաբերդն ու Գյուլիստանը դեռ չեն համաձայնել: Մեկը օսմանլվին է ուզում, մյուսը՝ ղզլբաշին, հայտնում է պատվիրակը, ավելացնելով. «Էս խայերին գլուխ չկայ, առանց գլուխ ան, չուն ուրէնց միջումն մեծաւոր չունեն»[335]: Իսկ նույն տարվա փետրվարի 2-ի զեկուցագրում հայտնում է. «Ներսես կաթողիկոսը եւ իր եղբայր Սարգիս ուզբաշին եւ Աբրահամն եւ երկու Եսային օսմանլուին են ուզում», իսկ Գյուլիստանի մելիք Բաղերի մասին գրում է, որ ղզլբաշին է ուզում, հաճախակի հարձակվում է, հայկական գյուղերը թալանում, այրում տները... Այստեղ ուզում են գնան նրա փոքր բերդը այրեն, բռնեն մելիքին: Նա 55 ուզբաշիների կանչել էր իր տունը, պատիվ տվել, գլուխները կտրել, ուզարկել շահին: Վերջում պատվիրակն ավելացնում է. «Մինչեւ նրան չբռնեն, ես Մեծ Խայերի (Սյունիք - Բ.) չեմ կարող գնալ»[336]: Իսկ դրանից առաջ գրել էր, որ Զրաբերդի հրամանատարներ Սարգիսն ու Աբրահամը «եկին, մին գեղ չափմիշ (թալան - Բ.) արին, հայի գեղ»: Այս առիթով բողոքի նամակ ստանալով Իվան Կարապետից, Գանձասարի կաթողիկոս Եսայի Ձալալյանը մարտի 5-ին գրած պատասխանում իր հերթին բողոքելով Թարխանենց (Ավետարանոցի սղնախ) ու գյուլիստանցոց միջև ծագած կռվից, գրում է. «Այս տղացոց գեղի վերայ կռիւն՝ ինձ վերայ թոհմաթ էք գրել, ես դոցա վաքիլ չեմ, կամ թէ՝ ո՞ւմ են լսում: Դուք հալա Փարազ իք, որ ես էս տէղեն դուրս եկի, գնացի ներքին գէղաէնքն, այլ չգիտեմ՝ ի՞նչ բանի վերայ այդպես արին: Յառաջ ի եկել ին պարիշել, հիմա լ դպես են արել... մեկին հետ խոսում ես, մեկն խռովում... ես խօ նոցայ կամ դոցայ ընկեր չե՞մ»[337]: Պատվիրակը դեռևս հունվարի 5-ին ներքին միաբանություն ստեղծելու փորձ էր արել, ստիպելով Սղնախների հրամանատարներին վստահագիր տալ Գյուլիստանի մելիք Բաղուն

[334] Նույն տեղում, էջ 150:
[335] Նույն տեղում, էջ 156:
[336] Նույն տեղում, էջ 158:
[337] Նույն տեղում, էջ 178:

չվնասելու մասին: Վստահագրում ասվում է. «Պատճառը գրոյս այս է, որ թիվն ՌՃՀԳ յունվարի ամսի հինգումն, մեք՝ Շուշի սղնաղի գլխավոր՝ ես Ավան եւ ես Միրզայ ուզբաշիս, մեք մեր թաբուն թալեղօվն, եւ մեր սղնախի մեծօվ եւ փոքրով, քէվխով եւ քադխոդէքօվ եւ ըռըյաթօվ, մեք էս գիրս տվինք էլչի բեկ Իվան Կարապետին մելիք Բաղերին ջահտուն: Թէ մեք մեր Սղնախի մեծօվ եւ փոքրով եւ մեր թաբուն թալէղօվն, էս ըլթզոմնը տվինք էլչի բեկին մելիք Բաղէրն բերէ մեր սղնաղն, եւ թէ ինչ տեղ որ բերի, թէ մելիքին սպանենք կամ բռնենք եւ թէ նեղութուն տանք, մեր գըլուխն եւ մեր ապրանքըն թագաւորին լինի եւ մեք գունախար լինենք...»[338]: Ինչպես վկայում են հետագա իրադարձությունները, վստահագիրը, զորականների երդումը չհաշտեցրեց մելիքին: Անշուշտ, հիմնական պատճառը հայրենի եզերքի փրկության խնդրում քաղաքական կողմնորոշումն էր: Ավան զորավարը դժվարությամբ էր զսպում իր զինվորներին դեպի Գյուլիստան պատժիչ արշավանք կատարելուց: Բոլորն էլ լավ էին հասկանում, որ թուրքական բանակը վերստին կգա: Ավան զորավարը Իվան Կարապետի միջոցով մի հայտարարություն է ուղարկում ռուսաց արքունիք՝ Շուշիի սղնախի զինված ուժերի մասին: Ըստ այս փաստաթղթի, Շուշիի գունդը կազմված է հրազենով զինված 500 հոգիանոց հեծելազորից: Իսկ մնացած 6400 հոգին հրազեն ու ձի չունեին: Գրության հեղինակը ռուսաց կայսրին խնդրում է «օգնել հրազենով ու ռազմապաշարով, որպեսզի ծառայեն ռուսաց շահերին»[339]: Գանձասարում ևս ցնծությամբ են ընդունում ռուսաց կայսրի հրովարտակն ու նրա պատվիրակին: Եսայի Ձալալյան կաթողիկոսը ժողով է գումարում վանքի գավթում: Եսայի կաթողիկոսը, որ Սղնախների քաղաքական ղեկավարն էր, ու Ավանը, որը ռազմական ղեկավարն էր, լավ էին հասկանում, որ այս հրովարտակի ու պատվիրակի միջոցով կարող են փրկել Ղարաբաղն ու Սղնախները տրոհումից, և միավորող ուժ կհանդիսանան: Երեք սղնախներից՝ Դիզակից, Վարանդայից ու Խաչենից, Գանձասարում են հավաքվում 12 հազար զինվոր: Ութ օր այստեղ համաժողովրդական տոնախմբություն էր: Եսայի կաթողիկոսը Գանձասար է հրավիրում Ներսես կաթողիկոսին ու Զրաբերդի զինվորականներին: Սակայն Ներսեսը մերժում է, պատճառաբանելով, թե Սարգիս, Թարխան ու Փանի հարյուրապետները Թթոտ գյուղ են գնացել (ոչ հեռու Զրաբերդից), իսկ ինքը ձի չունի, որ Գանձասարի վանք հասնի: Իվան Կարապետը մարտի 10-ի զեկուցագրում հայտնում է. «...քանի մարդից լսեցի՝ թէ Գոլստանայ (հավանաբար, խոսքը Զրաբերդի մասին է) ղալին (բերդ) գլխայվորն Սարգիս եւ Աբ-

[338] Նույն տեղում, էջ 147:
[339] Ա.Գ.Աբրահամյան, էջ 145:

ռահամըն օսմանլվին թաբէ ան, քեզ քէ սպանէն: Ես թաղաֆուլ տվի, գնացի, ես հայոց երկիրն ման եկի, ստոնց հինգ սղնախն տեսի եւ ետոյ գնացի Սարգսին եւ Աբրյամին բերքըն, աղիս (Պետրոս Մեծի) տված գիրն նշանց տվի: Դրին գլխներին վրէն, կարդացին, շատ ուրախութիւն արարին մէծօվ եւ փոքրով, ասացին թէ՝ մեք մեր աղին ծառայ անք: ...Ես հարցրի՝ թե ինչո՞ւ եք օսմանլվին ուզում, ձեր մարքը գնացել է նրանց զորքի մոտ: Սարգիսը եւ Ապրայամը պատասխանել են. «Ի սէրն Քրիստոսի, աղեն թող գայ մեզ անօրինի ձեռնիցն ազատի, մենք ո՞նց գէ գնանք, անհավատի ղուլաղ անենք, օսմանլուն արեկ Գանջայ, Ժ սհաթէն ճանապար մնաց մինչի մեր բերթն, անճար մնացինք, տեսինք, որ մեր աղիցն շաղավարթ եւ քօսակ (օգնություն-Բ.) չէ խասալ՝ անճարութէնէն, քանի հետ օսմանլվին սարասքարն մեր վերէն գիր գրեց՝ թե ձեզնեն մին երկու մարթ գեք իմ կոշտըս, թէ չէ դոշուն կուղարկեմ ձեր երկիրն քանդեմ եւ ձեր օղլուշաղն եսեր կառնեմ: Էս ջահտն վախեցանք, երկու մարթ ուղարկեցինք, սաբաբըն (միջնորդ - Բ.) մեր հավատքին եւ մեր օղլուշաղին համար, որ կարենք ոչ մինչի մեր աղին գալն: Չուն որ մեր աղին գիրն եկալաս, բերէլ, մեր գլխով, մեր մէծով եւ փոքրով աղին ծառայ անք: Եւ իրեքն էլ գիր ան գրել...»[340]: Կայսեր պատվիրակը քիչ ջանքեր չի թափել Արցախի մելիքների և Գանձակի ուժերի միջեւ փոխօգնության դաշինք կնքելու հարցում: Գանձակի հայ մելիքներից բացի, Մահմադ Ղուլի խանն ու մյուս ֆյոդալները համախոսականով հպատակություն են հայտնում Ռուսաց ցարին: 1724 թ. մարտի 21-ին պայմանագիր են կնքում գանձակցիների հետ. «...էտ ջահտսն ես՝ Եսայի կաթողիկոսըս եւ ես՝ Ներսես կաթողիկոսըս, եւ ես՝ Ավան ուզբաշիս, եւ ես՝ Միրզա ուզբաշիս, եւ ես՝ Թարխան ուզբաշիս, եւ ես՝ Բաղի ուզբաշիս, եւ ես՝ Սարգիս ուզբաշիս, եւ ես՝ Աբրայամ ուզբաշիս, եւ ես՝ մէլիք Թամրազս, եւ ես՝ մէլիք Բաղէրըս, եւ ես՝ մէլիք Գրիգորըս, եւ ես՝ մէլիք Դանիելըս, եւ ես՝ մէլիք Եկանըս... որ է գանջեցոց վերէն, թե օսմանլուի եւ թե լակզոյ դոշուն գայ, մեր հայոց ազգըս, թամամի վերոյգրեալքս, գընանք գանջեցոց քօսակ, չուն Գանջայ էյ մեր թագաւորին թաբէ այ: Եւ թե մեզ վերէն օսմանլու կամ լազգի գայ, գանջեցիք գան մեզ քօսակ...:

Կնիք էս վերոգրեալն ինձ՝
Ավան ուզբաշոյս
ղաբալ այ 'իմ
մորս այ

էս վերոգրեալն ինձ՝
Միրզա ուզբաշու
ղաբալ այ 'իմ
մորս այ»[341]:

[340] Նույն տեղում, էջ 186:
[341] Աբրահամյան, Մի էջ..., էջ 145

«Մորս այ» արտահայտությունը վերաբերում է կնիքին, որի վրա մուր (բարբառում՝ մոր) է քսված:

Սակայն շուտով Զրաբերդի հարյուրապետ Սարգիսն իր մերձավորների հետ ներկայանում է Իվան Կարապետին և հպատակություն հայտնում ռուսաց կայսրին:

Ռուսաց պատվիրակը 1724 թ. ապրիլի 9-ի զեկուցագրում հայտնում է. «Խայեր էսօր գնացին ... Ղափան... Աստուծով... ես էլ գէ գնամ Ղափան»[342]: Գյուլիստանի Եսայի ու Զրաբերդի Սարգիս զորահրամանատարները հունիսի 4-ին ցարական արքունիք ուղարկած նամակում հայտնում են, որ Գանձակին ու Սղնախներին թուրքական բանակի հարձակման վտանգի պատճառով Իվան-Կարապետը ետ է կանչվել Ղափանից. «Եթե կամենաք Իվան-Կարապետի մասին հարցնել, մեկ ամիս առաջ նա գնացել է Ղափան... և մարդիկ ենք ուղարկել այնտեղ, որպեսզի նա ետ վերադառնա»[343]:

Ի վերջո, Իվան Կարապետին հաջողվում է թուրքական ագրեսիայի նախաշեմին միավորել հայ ֆեոդալներին ու զինվորականությանը: Թե՛ Զրաբերդի և թե՛ Գյուլիստանի տերերը ու զինվորականությունը հպատակություն հայտնեցին ռուսաց հզոր կայսրի կամքին ու երդվեցին ամեն ինչով նպաստել ռուսական զորքի կովկասյան գործողություններին: Ավանը այս միջոցին եռանդագին պատրաստվում էր դիմավորելու ռուսական զորքին, որի համար Շուշիի Ներքին բերդում (Հունոտի կիրճ) մեծաքանակ նժույգներ, ոչխար և կով, ինչպես նաև պարեն էր կուտակում: Հետաքրքիր է, որ Եսայի Զալալյանի և Ավան զորապետի կողքին Արցախում երևան է գալիս ազատագրական շարժման մի նոր առաջնորդ եւս: Դա Պետրոս Մեծի պատվիրակ Իվան Կարապետն էր: Նա, որ մի առիթով Մեծ սղնախ՝ Ավետարանոց էր գնացել, հրաժարվում է Շուշի վերադառնալ: Հետաքրքրություն է ներկայացնում Ավան և Միրզա հրամանատարների նամակը Իվան Կարապետին. «... մեր թաք ու պարծանք հրամանքդ է, մեր գլուխ դու ես, մեք քեզ ծառայ ենք:... Դարցեալ այն, որ մեզ պարիշացիր, պիտի որ էն թարափն (կողմը և Բ.) պարիշացնես չումի (մինչև և Բ.) որ դանջենանք (հանգստանանք և Բ.): Դարցեալ հրամանքդ Թարխան ուզբաշուն վեր առնայ քեաս, կընանք Ղափան»[344]:

Իվան Կարապետի միջոցով ռուսաց թագավորին հնազանդություն է հայտնում Գանձակի խանը: Երևանի ու Բայազետի խաները դիմում են էջմիածնի կաթողիկոս Աստվածատուր Համադանցուն, խնդրելով հայտնել,

[342] Նույն տեղում, էջ 204:
[343] Նույն տեղում, էջ 88:
[344] Նույն տեղում, էջ 208:

իրո՞ք ռուսները հայոց Սղնախներ են եկել, ու եթե դա իրականություն է, ապա իրենք ևս պատրաստ են հպատակություն հայտնելու ռուսաց թագավորին: Իվան Կարապետի ու նրա առաքելության նկատմամբ առանձին հետաքրքրություն է ցուցաբերում Վրաստանի Մուհամմադ Ղուլի խանը, սուրհանդակի միջոցով խնդրում պատվիրակից տեղեկություն հաղորդելու ռուսական զորքի ծրագրերի մասին:

Իհարկե, Վախթանգը շրջահայաց էր և զգույշ: Նա չէր ուզում կորցնել Իրանի շահի վստահությունը, փոխարենը ոչինչ չունենալով, թեկուզ և շատ գայթակղիչ էին քրիստոնյա ռուսի միջոցով ազատագրվելու մասին զրույցները: 1724 թ. մարտի 5-ի Պետրոս Մեծին ուղղված նամակում սղնախների զորահրամանատարներն ու մելիքները գրում են, որ 20 հազարանոց զորք ունեն, որից 10 հազարն է հրազենով զինված: Նրանք կրկին խնդրում են կայսրից օգնական զորք ուղարկել[345]: Իվան Կարապետը, որը դիվանագետի տաղանդ և հմտություն էր ցուցաբերում, Պետրոս Մեծին ու ռուս գեներալներին ուղղված իր զեկուցագրում ձգտում է նրանց մոտ մեծ հետաքրքրություն ու գայթակղություն առաջացնել դեպի Ղարաբաղը, իր հերթական նամակում գրում է երկրի բնական ու ընդերքի մեծ հարստությունների մասին, առաջարկում գոնե ձևի համար, ի տես ամենքի, մի գունդ ուղարկել Հայոց Սղնախներ: Սակայն մեծ երկրների քաղաքական շահերը նրանց այլ քայլեր էին թելադրում: Ռուսական դիվանագետները, եթե Պարսկաստանի շահ Թահմասպ II-ին առաջարկում են ռուսաց օգնությունը աֆղանների դեմ, ապա աֆղանների առաջնորդին հորդորում են ամուր մնալ տեղում և չզիջել թուրքերին (պարսիկների խնդիրը վերջացած էին համարում): Զուգահեռաբար բանակցություններ են վարում թուրքական իշխանությունների հետ՝ մի կողմ դնելով վրացիների ու հայերի ազատագրման ծրագրերը: Երկարատև բանակցություններից հետո, 1724 թ. հունիսի 12-ին Երևանի բերդը օսմանյան բանակի կողմից գրավելուց հինգ օր հետո Ռուսաստանն ու Թուրքիան դաշնագիր են ստորագրում: Ռուսները շտապում էին իրենց մերձկասպյան նվաճումները ամրապնդել պայմանագրով և օրենքի ուժ տալ: Ըստ դաշնագրի, Շամախի քաղաքը իր շրջակայքով ու Շիրվանի դաշտի բնակավայրերով հանձնվում է սուլթանի վասալ Հաջի Դավուդի տիրապետությանը: Փաստորեն լեզգիները, թեկուզ վասալական կարգավիճակով, բայց և այնպես ինքնավարություն են ստանում: Կասպից ծովին կից գավառները մնում են ռուսական տիրապետության տակ: Անդրկովկասի մնացած մասն անցնում է Թուրքիային: Կուր և Արաքս գետերի միախառնման վայրը դառնում է երեք տերությունների՝ Ռուսաստանի, Թուրքիայի, Պարսկաստանի սահմանային կետը: Ռուս-թուրքական դաշնագրի համաձայն, եթե Իրանը (շահ Թահմասպ II) դեմ լինի, ապա Ռուսաստանն ու Թուրքիան պետք է միասին պատերազմեն նրա դեմ[346]: Ղափանում ևս մեծ հետաքրքրություն են ցուցաբերում ռուսաց պատվիրակի նկատմամբ: Դավիթ Բեկն ու Արցախի Սղնախները, որպես ազգային ազատագրական շարժման թևեր, սերտորեն կապված էին իրար հետ և օգնում էին իրար: Ղափանից շուտով լուր են ուղարկում Շուշի՝ Ավանին, որ քրդերը հարձակվել են Ղափանի վրա, կոտորել բնակիչներից չորս հազար հոգու, շատերին գերի տարել: Ավան հարյուրապետը իր զորքով իսկույն մեկնում է օգնության:

Մարտավարական տեսանկյունից Ղափանի ու Հայոց Սղնախների կռիվները տարբեր էին: Ղափանում շատացել էին թուրքախոս պարսիկների բնակավայրերը: Ուստի Դավիթ Բեկի զորքերը հարկադրված էին անսպասելի ու շեշտակի գրոհներով հանկարծակիի բերել ու ոչնչացնել նրանց: Դա պարտիզանական պատերազմ էր հիշեցնում: Իսկ Արցախում նման բնակավայրեր չկային, ու արցախցիները պատրաստվում էին արյունահեղ ճակատամարտերի թուրքական բանակի դեմ: Ըստ երևույթին, այս երկու թևերի միջև գոյություն ուներ նաև կողմնորոշման որոշակի տարբերություն: Եթե Ավանը անվերապահորեն ռուսական կողմնորոշում ուներ, ապա Դավիթ Բեկը ավելի շրջահայաց էր ու քաղաքականապես ավելի ճկուն և սպասում էր հարմար պահի՝ կողմնորոշվելու համար: Սյունիքում լուրջ խնդիր էր դառնում և քրդական գործոնը: Ըստ երևույթին, քրդերը նոր էին հայտնվել շահ Թահմասպի հրահանգով՝ նպատակ ունենալով ցրել հայկական զորքերը: Ավան զորավարի հետ Սյունիք է մեկնում նաև Պետրոս Մեծի պատվիրակ Իվան Կարապետը: Ղափանի ապստամբության առաջնորդներն ու ողջ բնակչությունը հպատակություն են հայտնում ռուսական կայսրին, հատուկ նամակով խնդրում, որ օգնեն ազատագրելու իրենց երկիրը: Թուրքական զորքերը 1724 թ. ամռանը, գրավելով Թիֆլիսը, Բորչալուն, Ղազախը, Լոռին, մոտեցել էին Գանձակին: Պայմանագրով ողջ տարածքը նրանց էր ենթակա, սակայն Ղարաբաղը արդեն այն խնձորն էր, որը երկաթի ամրություն ունի, և կծելու առաջին իսկ փորձից պետք է ջարդի օսմանլու թուրքի ատամները: Ղափանը ևս կենաց և մահու կռիվներ էր սկսում թուրքական զորքերի դեմ: Հետաքրքրական են այս իրավիճակում Իրանի Սեֆեվի վերջին շահ Թահմասպ II քայլերը: Ահա 1724 թ. օգոստոսի 21-ի նրա հրովարտակը. «...(Բարգուշատի տեր կարգված Ֆաթ-Ալի սուլթանը) պետք է իր մոտ հավաքի այդ կողմերի բոլոր զինված ուժերն ու կռվի ելած ամբոխը (իլջարի) և անմիջապես գնա Օրդուբադ քաղաքը և Նախիջևանի ու Մարանդի բարձրաստիճան հաքիմների հետ միասին, որոնց նույնպես կարգադրված է գնալ նշված գյուղաքաղաքը, գան Չախուր-Սաղի բարձրաստի-

[345] Լեո, էջ 150:

ճան բեկլարբեկի՝ Մանսուր-խանի մոտ և վերջինիս հետ խորհրդակցելով, միացյալ ուժերով հայերին, անարգ օսմանցիներին և քրդերին վանեն ու ոչնչացնեն, և հիշյալ գյուղաքաղաքը (Ղափանը) նրանց ձեռքից ետ վերցնեն: Անհրաժեշտ է նաև, որ նա հավաքի և հուսադրի ջիվանշիրի ու քաբիրլու ցեղերին և սրտապնդելով, անհրաժեշտ հոգատարություն դրսևորի նրանց նկատմամբ, և թող իրեն այս պարտականություններից ազատ չհամարի: Քանզի մեր արքայական մեծությունը հայերի և մյուս հակառակորդների սաստումը նրանից է պահանջում, և թող իմանա, որ հայերին սաստելու գործում նրան ազատություն է տրված, իրերի լավ կամ վատ ընթացքի համար մենք նրան ենք պատասխանատու ճանաչում...»[347]: Երբ Ղարաբաղի ու Սյունիքի հայությունը պատերազմի էր բռնվել թուրքական զորքերի դեմ, Իրանի շահը, որը չէր տիրապետում իրավիճակին, պատահական լուրերից ու բամբասանքներից ելնելով, իր հսկա ախոյանի դեմ կռվող հայերին իրեն թշնամի է համարում և հանձնարարում ոչնչացնել նրանց: Թուրքական զորքերի հրամանատար Ումար փաշան ստիպում է էջմիածնի Աստվածատուր կաթողիկոսին նամակ գրել Գանձասարի Եսայի կաթողիկոսին, պահանջելով, որ համոզի Սղնախների զինվորականությանը՝ հպատակություն հայտնել Թուրքիային, պատգամավորություն ուղարկել թուրքերի հրամանատարություն, այլապես սպառնում են մտնել Ղարաբաղ և կոտորել հայերին: Սղնախների հրամանատարներն ու հոգևոր առաջնորդները որոշեցին մերժել թուրք փաշայի առաջարկն ու սկսեցին պատրաստվել դիմագրավելու թուրքերի ներխուժումը: Ներքին կարգով Պետրոս Մեծը հանձնարարում է իր պատվիրակ Իվան Կարապետին՝ ամեն կերպ թույլ չտալ թուրքերին մտնել Ղարաբաղ, մինչև որ իրենք օգնության գան: Սղնախների ուժերի համախմբման գործում մեծ աշխատանք է կատարում Պետրոսի պատվիրակը, որը փաստորեն կոորդինացնում էր ապստամբությունը: Ավան զորավարն ու շիրվանցի հայ զինվորները երբեմն չէին դիմանում Գյուլիստանի ու Զրաբերդի մելիքների դավերին և վճռում էին հեռանալ Արցախից, մանավանդ, որ Պետրոս դի Սարգիս Գիլանենցը (հայ վաճառական, որը առևտրականների մի ամբողջ համակարգի միջոցով կարևոր տեղեկություններ է հավաքում տարբեր երկրների մասին ու հաղորդում ռուսական հրամանատարությանը) Շամախիի ու Շաքիի հայերից էսկադրոն էր կազմել, որը կռվում էր ռուսական բանակի կազմում: Ամեն անգամ Շուշիի շրջակայքի բնակիչները աղաչում էին Ավանին, որովհետև, ինչպես Իվան Կարապետն է գրում իր 1724 թվականի հունիսին գրած զեկուցագրում. «Եթե շիրվանցին էս երկրես թե էսօր դուրս գնայ, յեքսն անհավատն զէ գայ էս երկիրըս, զէ զավթի և եսիր կանի»: Ապա գանգատվում է գյուլիստանցի հայրապետ Եսայիից. «Եւ Եսային գրում այ՝ թե ինչ աս նստեյ շիրվանըցոց քշտին, վեր կաց գնայ: Եվ մին էլ ասում այ թե՝ գնալ չես, քեզ կտամ Չոբան Յաշամին»[348]: Եսայի կաթողիկոսը, որ այցի էր գնացել Ավանին, նամակ է գրում Մեծ Սղնախ՝ Իվան Կարապետին. «Թե էս կողմերի ալ հալն իմանաս, ես եկի Տուզուղս (Դիզակ - Բ.) Ավանին եարան (վերքը և Բ.) փոքր է աստուծով շուտ կու լավանայ: Իրեանց մեջն էլ հալա փարաղաթ (կամաց-կամաց - Բ.) են, վերջն աստված գիդի. ճշմարտութիւն չկայ: Մեք էլ շատ խոսեցինք սոցա մեջն:... Չալաբիտ (քյոխվա - Բ.) հոգսն էլ քաշող չիլալ (Մոսկվա գնալու ճանապարհածախսի մասին է խոսքը - Բ.) դորա կողման է, պիտի որ խարջի չտալու համար չգրես, մէկ էս անգամ էլ գնայ գայ: Եւ լէր ողջ տէրամբ»[349]: Հավանաբար, Ավան հարյուրապետը Դիզակում վիրավորվել էր թուրքերի հետ ընդհարման ժամանակ: Գյուլիստանի հրամանատարներ Եսային, Աբրահամն և Սարգիսը հարձակվում են Մեծ Սղնախի վրա՝ գիշերը անակնկալի բերելով Ավանի եղբորը՝ Թարխան զորապետին: Ետ ճանապարհին գյուլիստանցիք թալանում են Վարանդայի գյուղերը: Գերեվարած Թարխանին, տանում են Գյուլիստանի բերդը, այստեղ ստիպում, որ հպատակություն հայտնի իրենց: Սակայն Բաղիրը, ենթարկվելով Իվան Կարապետի ճնշմանը ու խուսափելով Ավանի վրեժխնդրությունից, Թարխանին ազատ է արձակում:

Այս ժամանակաընթացքում Պետերբուրգում հասունանում էր մի նոր աղետ ևս, որին արցախցիներն առնչվեցին վեց ամիս հետո: Շամախեցի Անտոն քահանա Առաքելյանը, որը տանուտեր Չալաբիի հետ Պետերբուրգ էր մեկնել, տանելով Եսայի կաթողիկոսի և մելիքների նամակներն ու հավատարմագրերը, պատռում է նամակներն ու նախապես կնքված թղթերի վրա մելիքների ու զորահրամանատարների անունից նոր նամակներ գրում, խնդրելով «Նորին կայսերական մեծությանը, որ բարեհաճի նրանց իր հովանավորության տակ վերցնել եւ հրամայել նրանց համար բնակության տեղեր նշանակել Կասպից ծովի մոտ՝ Գիլանում, Սալյանում, Բաքվի մոտ եւ Դերբենտում, որովհետեւ նրանք՝ հայերը, բոլորովին չեն ուզում այլեւս լինել մահմեդական լծի տակ...»[350]: Դեռևս 1722 թ. գեներալ Մատյուշկինին ուղարկելով նվաճելու Կասպյան ծովեզերքը, Պետրոս Մեծը հրահանգում է նվաճած տարածքները բնակեցնել հայերով և այդպես ամրապնդել ռուսական դիրքերը: «Աշխատանք գործ դնել ամեն կերպ՝ հայերին, թե կան, կանչելու Գիլան և Մազանդարան ու բնակեցնել, իսկ մուսուլմաններին, այն է՝ թուրքաց օրենքին հետևողներին շատ խաղաղ կերպով, որպես-

[347] Ա.Գ .Աբրահամյան, էջ 145:

[348] Աբրահամյան, «Մի էջ...», էջ 210:
[349] Նույն տեղում, էջ 169:
[350] Լեո, հ. 3-2, էջ 160:

զի իմացող չլինի, որքան կարելի է, քչացնել»[351]: Ըստ երևույթին, այս ծրագիրը, Անտոն քահանայից բացի, Ղարաբաղում ևս ուներ իր կողմնակիցները, որոնց գլխավորը Ավան զորապետն էր: Գեներալ Մատյուշկինի վկայությամբ՝ «Ավանը, հավաքելով 10 հազար զինված մարտիկ, ցանկացել է Շուշիի սղնախից հեռանալ Գիլան՝ ռուսների մոտ: Բայց թուլազոր մարդիկ լաց լինելով խնդրել են նրան, որ եթե նա գնա, իրենց բոլորովին կոչնչացնեն և որ ժողովրդի հույսը նրա վրա է: Եվ նա լուրջ խորհելով, մնացել է սղնախում, բերդ է կառուցում»[352]: Ուրեմն Ավանը շարունակում է ամրացնել Շուշիի բերդի պարիսպներն ու աշտարակները: Թուրքական բանակը մտադիր էր 1725 թ. գարնանը արագորեն գրավել Ղարաբաղը, մտնել Շամախի, ապա շեշտակի գրոհով գրավել Բաքու նավահանգիստը: Թուրքական առաջին զորամասը, շուրջ 4700 ասկյար՝ Շահին Սալահ և Ալի փաշաների հրամանատարությամբ, շրջանցելով Գանձակը, անսպասելիորեն հայտնվեց Վարանդայում: Այս սղնախի զինվորականությունը հանկարծակիի գալով, զգաց, որ պատրաստ չէ զինված դիմադրություն ցույց տալու թուրքերին: Վարանդայի մելիք Բաղր Բ-ն, որն ավելի կողմ էր ճկուն քաղաքականության և դիվանագիտական քայլերով արդեն մեկ անգամ փրկել էր իր մելիքությունը լեզգիական ավարառուներից, ընծաներով ընդառաջ գնաց թուրք զորապետներին ու առաջարկեց ձմեռը ապահով անցկացնել Ղարաբաղի գյուղերում, իր վրա վերցնելով սննդի, կացարանի հոգսերը: Թուրք հրամանատարությունը, որն արդեն քանիցս տեսել էր լեռնցի հայերի զենքի ուժը և իր հերթին խուսափում էր նրանց հետ բախումից, շատ գոհ լինելով նման ելքից, սիրով ընդունեց այս առաջարկը: Օսմանցի զինվորներին 100-ական, 200-ական և 300-ական խմբերով բաժանեցին 33 գյուղերում և երկու օր կուշտ կերակրեցին: Սակայն սա պարզապես լավ նախապատրաստված ծուղակ էր: Գիշերը հայ զինվորները բոլորին կոտորեցին, գերի վերցնելով Սալահ փաշային: Միայն 150 հոգու հաջողվեց փախչել: Սպանվեցին Շահին ու Ալի փաշաները: Սալահ փաշան պատմեց, որ թուրքերը որոշել էին իրենց մոտ հրավիրել հրամանատարներին, կոտորել գլխավորներին և տիրել Ղարաբաղին[353]: Թուրքերի դեմ տարած այս փայլուն հաղթանակն ավելի միավորեց հայ զինվորականությանը: Հայկական Սղնախներն ավելի համախմբվեցին զինվորական հրամանատարության շուրջը: Պարսից Թահմասպ շահը, լսելով այս նշանավոր հաղթանակի լուրը, անմիջապես նամակ է ուղարկում Հայոց Սղնախներ: Համոզված լինելով, որ օսմանյան ավելի մեծ բանակ է գալու սղնախների վրա, արցախցիները ավելի

[351] Эзов, стр. 334.
[352] ГАФКЭ, ф. СРП, 1725, N5, л. 365.
[353] Эзов, стр. 419-421.

իրական դաշնակիցներ էին փնտրում: Բոլոր սղնախներից 200 հոգանոց մի պատվիրակություն է մեկնում Ղազվին՝ շահ Թահմասպի նստավայրը, որտեղ Քյալբալահի բեկի հետ խաղաղության պայմանագիր են կնքում: Շահը առատաձեռնորեն բոլորին ընծաներ է տալիս, հրամանատարներին մեկական բաճկոն է նվիրում[354]: Սակայն այս նույն զինվորականությունը դեռևս - փայփայում էր ռուսների խոստացած ռազմական օգնությունը ստանալու հույսը: 1725 թ. մայիսի 16-ին Անտոն քահանան և քյոխվա Չալաբին բերում են Պետրոսի հրովարտակը հայերի գաղթի մասին: Վեց ամիս ճանապարհին լինելով, նրանք չգիտեին, որ 1725 թ. հունվարի 28-ին արդեն մահացել էր ռուսաց կայսրը, որին փոխարինել էր նրա կինը՝ Եկատերինա Առաջինը (1725-1727 թթ.): Անտոն քահանան զգուշության նպատակով Գանձասարի փոխարեն Ավան զորապետի մոտ՝ Շուշի բերդ է գնում, քանի որ Ավանը տեղյակ էր այդ ծրագրին ու պաշտպանում էր այն: Պետրոս Մեծի գրած հրովարտակը Շուշիում քննարկելու են հավաքվում Եսայի կաթողիկոսը, Սղնախների հրամանատարներն ու մելիքները, ինչպես նաև ռուսաց պատվիրակ Իվան Կարապետը: Ռուսաց կայսրը միաժամանակ հրամաններ էր ուղարկել Դերբենտի, Բաքվի, Գիլանի և Մազանդարանի կառավարիչներին, որ գաղթող հայերին բնակության տեղեր հատկացվեն: Պետրոս Մեծը գրում է բրիգադային գեներալ Ռումյանցևին, որը արտակարգ դեսպան էր Կ.Պոլսում՝ հունիսի 12-ի դաշնագրի վավերացման օրինակը տեղ հասցնելու համար. «Մեզ մոտ եկան հայոց պատգամավորները խնդրելու մեր պաշտպանությունը թշնամիներից, իսկ եթե այդ անկարելի է, ապա թույլ տալ նրանց գնալ ապրելու Իրանից մեր նոր ձեռք բերած նահանգներում: Մենք նրանց պատասխանեցինք, թե զորքով օգնել նրանց չենք կարող Բ. Դռան հետ կնքված դաշնագրի հետևանքով, իսկ գաղթել մեր մերձկասպյան նահանգները թույլատրեցինք և մեր հուսադրական հրովարտակն ուղարկեցինք: Եթե թուրքերը սկսեն մեզ հետ խոսել այդ մասին, պատասխանեցեք, թե մենք ինքներս հայերին չենք կանչել, այլ նրանք հավատակցության պատճառով խնդրեցին մեզ ընդունել իրենց մեր հովանավորության տակ, մեզ քրիստոնեության պատճառով, հայերին, իբրեւ քրիստոնյաների մերժել անկարելի էր, ինչպես և ինքը՝ վեզիրը, հաճախ հայտարարում էր, թե հավատակցության հովանավորություն խնդրողներին մերժել անկարելի է, պետք է միայն նայել, որ հողերը պատկանեն նրան (այն պետությանը - Բ.), որի անունով նշանակված են դաշնագրության մեջ, իսկ ժողովուրդներին չպետք է արգելել, որ այս կամ այն կողմն անցնեն: Բ. Դռան համար ավելի ձեռնտու կլինի, որ հայերը դուրս գնան, որովհետեւ նրանք այդ դեպքում առանց դիմադրության կտիրեն նրանց հողերին: Ավելացրու, որ եթե Բ.

[354] Լեո, հ. 3-2, էջ166:

Դուռը կկամենա դեպի իր կողմը կանչել Իրանից մեր ծեռք բերած նահանգների մահմեդականներին, այս բանին մենք հակառակ չենք լինի, եթե գրավոր հուսադրություն պահանջեն՝ տվեք»[355]: Սա, անշուշտ, բացահայտում է խոշոր տերության քաղաքական ու դիվանագիտական խաղերի, քարոզչության տակ թաքնված իրական նպատակները: Գերտերության համար չի կարող լինել որևէ փոքր ժողովրդի շահի գերակայություն իր շահի նկատմամբ: Իր շահի համար նա կարող է շոյել մեկի գլուխը, սիրաշահել՝ նրան դրդելով իր թշնամու դեմ: Երբ արցախահայությունը, հավատալով Ռուսաց կայսրի հրովարտակին ու օգնության գալու հավաստացումներին, օրհասական կռիվ էր մղում թուրքական բանակի դեմ, որի հետ անմիջական բախումից խուսափում էր ռուսական բանակը, դրժեցին իրենց խոստումն ու չեկան օգնության: Ահա նրանք իրենց գրված տարածքներն ամրապնդելու նպատակով ծրագրել են արցախահայությանը բնակեցնել այդ տարածքներում, անշուշտ, ոչ ի շահ այդ վերաբնակիչների: Շուշիում հավաքված ռազմական խորհուրդը որոշեց հարթեցնել խնդիրը, գրել, որ Անտոն քահանայի (իրականում՝ Ավան զորավարի) հայտարարությունը գաղթականության մասին չի համապատասխանում հայ ժողովրդի տրամադրությանն ու ցանկություններին և այն սոսկ անձնական կարծիք էր միայն: Փաստորեն պատվիրակը ևս դժգոհ էր հայությանը Ղարաբաղից գաղթեցնելու գաղափարից: Անսպասելիորեն Անտոն քահանան անհետանում է: Ոչ ոք չի կասկածում, որ մերձկասպյան տարածքներ գաղթելու գաղափարի դրդողը Ավան զորավարն էր:

1725 թ. օգոստոսին թուրքական 40 հազարանոց բանակը Սարը-Մուստաֆա փաշայի գլխավորությամբ գրավում է Գանձակը: Նրան օգնության էին եկել լեզգիների առաջնորդ Դաուդ-բեկը, նրա եղբայր Հաջին, Ահմեդխանը՝ իրենց գնդերով: Դաուդ-բեկը սուլթանից պահանջեց նոր զորքեր ուղարկել Բաքվի վրա արշավելու համար: Բայց օսմանյան բանակի ճանապարհին Արցախն էր՝ Հայոց Սղնախները, առանց որոնց հաղթելը անհնար կլիներ դեպի Շամախի և Բաքու արշավելը: Թուրքերը լցված էին վրեժխնդրության զգացումով: Արցախցիների դեմ կռվին նրանք հատուկ էին պատրաստվում, բայց և երկյուղում էին Սղնախների միացյալ ուժերից, որի հարվածներից խայտառակ պարտություն էին կրել Գանձակի մոտ: Հատկանշական է Շաքիի հայերի կողմից Ռուսաստանի կայսերը գրած նամակը. «Ըռուսի եւ մեր բարեպաշտ եւ աստվածայսեր թագաւորիս մերոյ. Ղապալու (Կաբալա) երկրիցս հայոց է արդ լիցի հրամանոցդ. Օսմանցի ղոշունն եկավ, Գանջայ առաւ, Սղնախն մնաց խեղճ, այսօր կամ վաղն Սղնախն էլ կառնեն, ապայ յետոյ կու գան Շամախի, քանի որ Սղնախն առել չեն, Շամախի գալն

[355] Соловьев, стр. 74.

վախենում են, թե մեջ կու գցեն զմեզ կու կոտորեն. մեր գեղերանքն թամամ եւ Շաքու երկիրն թուրքացրել են ուժով, մեր գիր-գրեանքն եւ եկեղեցիքն այրեցին, մեր քահանայքը կոտորեցին, շատ մարդ հավատոյ խաթրին սուրով գնացին: Հիմա ցերեկն թրքություն ենք անում, գիշերն՝ հայություն... մեր խնդիրքն այս է, որ ի սերն Քրիստոսի, մեզ մեկ փրկութիւն հասուցանես, ղոշուն ուղարկես Շամախին առնու, համ մենք ազատուինք, համ Սղնախն: Թամամ գանք քո հրամանոց ղոշունի մեջն, հրամանոցդ իրահաթութիւն (հպատակություն) անենք, ինչ որ հասք եւ իրաւունք ունինք, հրամանոցդ տանք, ինչպես որ հրամանք կանես, էնպես գլխով ծառայութիւն կանենք: Մեր անուն որ թուրք է, գնում ենք Գանջայ օսմանլուի մէջն, ղոշունի մեջ ման ենք գալիս, մեզանից խոսք չեն թաքցնում, օսմանցիք ասում են, թե որ Շամախին առինք, Պաքուին, Դարպանդին շատ նեղութիւն կուտանք, այսպես օսմանցի ղոշունն ասում է, իւրեանց փիքրն այլ է: Գրեցաւ Թվն ՌԾՀԴ (1725) հոկտեմբերի ամսոյ 18-ումն: Նիժ գեղի Բարսեղ եւ Ատվածատուրե, Չարլուի Ալլահվերդիե, Բումի տէր Մինասսէ եւ Պայրումէ, Թալու Թորոսէ, Մեխլուղավախի Նասիպե, Թոսիկի Վարդան»[356]: Վերջապես ռուսական արքունիքի պատվիրակ Իվան Կարապետին հաջողվում է համաձայնության բերել Գյուլիստանի մելիքությանը: 1726 թ. մայիսի 24-ին Գյուլիստանի քաղաքական ու ռազմական ղեկավարները՝ 24 հոգի, հավատարմագիր են գրում ռուսական արքունիքին. «Առաջին պարոն էլչի Իվան Կարապետին: Պատճառը գրոյս այս է, որ ես Գուլիստանա գեղոյս Գէորգի որդի Ապրհամ ուզբաշիս, ես՝ Ղուկասի որդի Գրիգորս, ես՝ տեր Մէլիքսէթի որդի Թամրազս, ես՝ Սարքիսի որդի Նավասարթս, ես՝ Մօսեսի որդի Միրզախանս, ես՝ Հախնազարի որդի Ալավերդիս, ես՝ Աղասի որդի Ղազարս, ես՝ Ակոբի որդի Մկրտիչս, ես՝ Պաղիի որդի Մռավղուլիս, ես՝ Ակոբի որդի Մէլքումս, ես՝ Մանուչարի որդի Գրիգորս, ես՝ Ավաքի որդի Պապս, ես՝ Ավաքի որդի Աթամս, ես՝ Սարգիսի որդի Ներսեսս, ես՝ Վանեսի որդի Եղիէս, ես՝ Առստակի որդի Ներսեսս, ես՝ տեր Ղազարի որդի Ակոբս, ես՝ Վանեսի որդի Մխիթարս եւ Պապս, ես՝ Մեհրապի որդի Զալս, ես՝ Վանէսի որդի Սարգիսս, ես՝ Պայանդուրի որդի Ներսէսս, ես՝ Աղապեկի որդի Ղարիպս, ես՝ Ղազարի որդի Խաչատուրս, ես՝ Ալեքսանի որդի Մավասարթս, ես՝ Սարգիսի որդի Պաղտասարս, Պարզումի որդի Այտինս, Վանեսի որդի Մարտիրոսս, Աղապեկի որդի Պետրոսս, ես՝ Աթայպէկի որդի տէր Յովաննէսս, ես՝ տէր Մելիքսեթի որդի Մարկոսս, մեր մեծ եւ փոքր թապունքալուղովս, այս գիրս տուինք վերոյգրեալ էլչի պեկին, որ հրամանէն, խճսկեն, թէ եւ մասլահաթէն դուրս գանք, թակաւորին խային լինենք եւ մեր ապրանքն եւ տան ինչը

[356] Բարխուտարեանց, Պատմություն..., էջ 85-86: Տես նաև՝ Эзов, стр. 427-428.

թանպէյջեզայդ անի, մեզ դապուլ եւ արժանի է: Մեք գլուխդանայ մեծ եւ փոքրովըս վկայ եմք եւ հնազանդ այս վերոգրեալ պանիս»[357]:

Թուրքերի առաջին հարձակումը դեպի Արցախ տեղի ունեցավ 1726թ. հունիսին: Առաջին զոհը Ղազանչի, Ղապրթու և Չանկաթաղ գյուղերն էին (այժմ ԼՂՀ, Մարտակերտի շրջան): Թուրք ասկյարները կոտորեցին անզեն բնակիչներին, թալանեցին տները: Սղնախների զորքերը հակահարձակման անցան հունիսի 10-ին: Խաչեն գետի մոտ տեղի ունեցավ ճակատամարտը: Թուրքերը պարտություն կրեցին և, թողնելով ավարն ու գերիներին, մեծ զոհերի գնով դեպի Պարտավ փախան: Սակայն օսմանյան հրամանատարության գլխավոր նպատակը Ղարաբաղի ամենաամուր հենակետի՝ Շուշի բերդի գրավումն էր: Սարը-Մուստաֆայի ներկայացուցիչը դիմում է Ավան զորապետին՝ հանձնվելու առաջարկով: Թուրք փաշան Սղնախներից հինգ տարվա հարկ էր պահանջում: Ավանը պատասխանում է, որ հայերը ոչինչ չունեն տալու թուրքերին, իսկ եթե գալու միտք ունեն, թող գան, քանի որ Աստծո օգնությամբ կդիմավորեն, ու ոչ մի երկյուղ չունեն նրանցից: Պատվիրակ Իվան Կարապետի՝ գրաֆ Գոլովինին ուղղված նամակից հայտնի է դառնում, որ Պարտավից Սարը Մուստաֆան շարժվել է դեպի Շամախի, սակայն թիկունքում զգալով Հայոց Սղնախների շունչը, համալրվել է Դաուդ-բեկի գնդերով, հսկա բանակով գնացել Պարտավ, այստեղ վերադասավորելով ուժերը, ուշադրությունը կենտրոնացրել է դեպի Ավանի նստավայրը: «Երբ վերոհիշյալը (սերասքերը) Շամախիում էր գտնվում, - գրում է թուրք պատմիչ Ասըմ-էֆենդի-Չելեբի զադեն,- նրանք (սղնախցիները) հազարի չափ հեծելազորով Սղնախի վրա ամենազանդություն էին ցույց տվել...սղնախցիների պարագլուխը, Ավան անունով մի հայ, թնդանոթով եւ խումբարայով (հրազեն) եկել եւ սղնախի վրա ամրացել էր: Հաղթական (օսմանյան) բանակը իր ղեկավարով Սղնախի գնդակի տակ գտնվող Շուշի գյուղը եկավ եւ հանկարծակի հարձակումով մինչեւ երեկո մի քանի թնդանոթով գնդակոծեց Սղնախներին»[358]: Թուրք ռազմավարները հասկանում էին, որ գրավելով Շուշին, կտիրեն և ողջ Ղարաբաղի վրա: Թուրքերը սկզբում ուժերը կենտրոնացրին Շուշիի Ներքին բերդի վրա՝ երկու կողմից պաշարելով Հունոտի կիրճը: Այստեղ ուժերը խիստ անհավասար էին, և Ավանն իր մարտիկներով ապառաժները բարձրանալով, վերևից ձորը մտած ասկյարների նկատմամբ մի իսկական սպանդ սարքեց: Թուրքերին հաջողվեց տիրանալ այստեղ գտնվող նժույգների երամակների, ոչխարի հոտերի և կովերի նախիրների մի մասին, որը Ավան զորապետը կուտակել էր սպասվող ռուսական զորքի համար: Ավանը կռվելով նահանջում է Ավետարանոցի բերդը, այստեղից շարունակում անսպասելի հարձակումները: Թուրքական բանակը իր ողջ ուժերը նետում է դեպի Շուշիի սարահարթը՝ Վերին բերդը: Այստեղ պաշտպանությունը գլխավորում էին Օհան և Սիմոն զորավարները: Շրջակա գյուղերի բնակիչները հավաքվել էին բերդում և օգնում էին պաշտպաններին: Նրանք քարերի կարկուտ էին թափում թշնամու վրա: Թուրքերը փորձեցին թնդանոթներով փլել պարիսպը, սակայն ապարդյուն: «Այդ գիշերը սղնախցին իր տրամադրության տակ գտնվող հայերի հետ միասին փախավ, - գրում է թուրք ժամանակագիրը, - հաջորդ օրը իսլամական զինվորները գրավեցին նրանց ինչքերն ու ապրանքները և փախստականներից ձեռք ընկած 400 անկրոն հայերի սպանեցին: Ջմեռվա վերահաս ցրտի պատճառով սերասքերը շարժվեց դեպի Գենջե»[359]: Ութ օր տեւած Շուշիի ճակատամարտում թուրքերը կորցրին 800 զինվոր, սպանվեցին Ղրխչեշմե և Ենգիչար հրամանատարները: Գլխավոր հրամանատար Սարը Մուստաֆա փաշան «քշերով վեր կացավ երկու օրեն ճամբան մին օր գնաց»[360]: Հայ զինվորականությունը գիտեր, որ այսուհետ ավելի անխնա և կատաղի են դառնալու թուրքական բանակի հարձակումները, ու այլևս առանց ռուսների օգնության դժվար կլինի: Սղնախներում մեծ ոգևորություն առաջացրեց քյոխվա Չալաբիի Պետերբուրգից բերած կայսրուհի Եկատերինա Առաջինի հրովարտակը, որով շուտափույթ օգնություն էր խոստանում: Հրամանատարական մի պատգամավորություն է մեկնում Ռեշտ՝ ռուսական զորքերի հրամանատար գեներալ Դոլգորուկովից ստանալու կայսրուհու խոստացած օգնությունը: Գեներալը հայտնում է, որ ինքը կայսրուհուց Սղնախներ զորք ուղարկելու թույլտվություն չի ստացել: Իշխան Դոլգորուկովը իր կառավարությանը հղած զեկուցագրում զարմանք է հայտնում, թե Սղնախների հայերը ինչպես են կարողանում դիմանալ թուրքական հզոր բանակի հարվածներին: Նա իր կառավարությանը առաջարկում է համաձայնություն կնքել Բ.Դռան հետ՝ մինչև Արաքսի հովիտը ընկած տարածքը ետ ստանալու պայմանով, որի դեպքում ռուսները իրենց հովանու տակ կառնեն հայերին, իսկ հայերն էլ օգտակար կլինեն ռուսների համար: Միևնույն ժամանակ գեներալը հայտնում է, որ Արցախի հայության համար միանգամայն անիմաստ կլիներ թողնել իրենց բարեբեր և ընտիր հողերը ու տեղափոխվել անպտուղ տեղեր[361]: Ըստ երևույթին,

[357] Աբրամյան, էջ 217 (փաստաթղթի աջ կողմից, ողջ թերթի երկարությամբ՝ 24 մատնահետքեր ու չորս կնիքներ՝ Աբրահամի, Սարգսի ու Սարգսի ստորագրությամբ):
[358] Իսմայիլ-Ասըմ էֆենդի, «Թարի Չելեբիզադե», Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին, հ. Ա, 1973, էջ 159:

[359] Նույն տեղում:
[360] ibid, p. 439:
[361] Լեո, 3-3, 171:

հյուսիսայինները անընդունակ էին հասկանալու Արցախի ու Սյունիքի հայերի կապվածությունը հայրենի երկրի հետ, որտեղ գտնվում են նախնիների գերեզմանները, սրբավայրերը, հազարավոր վանքերն ու եկեղեցիները, խաչքարերը, պապենական տները... Այս ամենը արցախցին կամ սյունեցին ինքնակամ երբեք չի լքի, մանավանդ, չի թողնի թուրքերին ու հեռանա այլ երկիր: Իր հայրենի եզերքը պահպանելու այս անկոտրելի և արմատացած նախապաշարմունքը արցախցին ու սյունեցին հազարամյակների ընթացքում սերնդեսերունդ ժառանգել է հայրերից, ու իր ծուխը, գյուղը, երկիրը պահպանելը սրբազան պարտք է նրա համար: Օտար նվաճողները եկել, կոտորել, ավերել, գերեվարել, կարծես թե ամայացրել են երկիրը, բայց միշտ նոր ծիլ է տվել երկրամասը, բազմացել, նորից կառուցել, ցանել, տնկել...

1726 թ. Ղափանում հրամանատարության մեջ տարակարծություն կար քաղաքական կողմնորոշման մեջ: Ահա սպարապետ Մխիթարը իր զինակիցներով աղերսագիր ուղերձ է հղում ռուսական արքունիք սպասելով նրանց օգնությանը[362]: Սակայն Դավիթ Բեկը դեմ էր այս դիրքորոշմանը, որովհետև նա իրական դաշնակից էր տեսնում Պարսկաստանին: 1727 թ. Հալիձորի տակ թուրքերի նկատմամբ ջախջախիչ հաղթանակից հետո Դավիթ Բեկը մի պատվիրակություն է ուղարկում Ագուլիսից ոչ հեռու, Արաքսի աջ ափին գտնվող Ղուզալի խանի մոտ, որը շահ Թահմասպ II-ի զինակիցն էր, առաջարկելով միացյալ ուժերով պատերազմել օսմանցիների դեմ[363]: Երբ Դավիթ Բեկը Ագուլիսի Թովմա առաքյալի վանքում շրջապատված էր թշնամիներով, պարսիկներն օգնության շտապեցին և ազատեցին նրան[364]: Ավելի ուշ շահ Թահմասպը հատուկ հրովարտակով իշխանական իրավունքներ շնորհեց Դավիթ Բեկին, հանձնարարելով պարսից խաներին ենթարկվել նրա կամքին: Սա արդեն հայ-պարսկական նոր զինակցության սկիզբն էր, որը պետք է ավելի իրական դառնար Նադիրի ժամանակներում:

Պետրոս Առաջինից հետո երկրի իշխանությունն անցնում է Գերագույն Գաղտնի խորհրդին, որն արևելյան հարցերում ամենևին էլ հետևողական չէր: Իսկ արքունիքն անցնում է օտարերկրացիների ձեռքը (Բիրովշչինա), ու այլևս անհնար էր բարձրացնել հայերին օգնության հարցը: Բացի այդ, ռուսական ծրագրերի իրականացմանը լրջորեն խոչընդոտում էին նաև Անգլիան ու Ֆրանսիան, որոնք Թուրքիայի միջոցով փորձում էին խափանել ռուսների առաջխաղացումը: Ռուսների նկատմամբ խորը հիասթափություն է ապրում թե Սղնախների զինվորականությունը և թե հայ ժողովուրդը: Մեղադրանքների մեծ մասը ուղղվում են Եսայի Ջալալյան կաթողիկոսի և Ավան զորապետի դեմ: Պատմաբան Լեոն գրում է, որ «իր այս պաշտոնին (ռուսների նկատմամբ հավատին - Բ.) Հասան Ջալալյան կրոնապետը վերաբերվել էր մի անդրդվելի շիտակությամբ և հավատարմությամբ, որին բոլորովին չէր համապատասխանում ռուսական ցարի երկդիմի քաղաքականությունը»[365]: Երբ օսմանյան բանակը չկարողացավ կոտրել Հայոց Սղնախների դիմադրությունը, նրա հրամանատարությունը փորձեց կաշառքներով իր կողմը գրավել Եսայի կաթողիկոսին: «Գուցե հայերը կարողանային օգուտ քաղել իրենց թշնամու այս տրամադրությունից և լավացնել իրենց դիրքը համաձայնության գալով նրանց հետ, - գրում է Լեոն, - բայց մենք արդեն շատ անգամ տեսանք, որ լեռնցիները որքան լավ կռվողներ էին, այնքան էլ վատ քաղաքագետներ էին»[366]: Եսայի կաթողիկոսը կտրականապես մերժեց թուրքերի հետ մերձենալու ամեն մի հնարավորություն: Եսայի Ջալալյան կաթողիկոսը վախճանվեց 1728 թ.: Նույն տարում վախճանվեց նաև Սյունիքի առաջնորդը Դավիթ Բեկը: Դա շատ ծանր հարված էր հայոց ազգային ազատագրական պայքարին: Եսայի կաթողիկոսը 1711 թ. մինչև 1728 թ. գրի է առել տեղի ունեցող դեպքերն ու իրադարձությունները և իբրև պատմիչ կարևոր տեղ է գրավում հայ մեծ հեղինակների շարքում: Ավան զորավարը թուրքերի նկատմամբ տարած հաղթանակների համար Իրանի շահից ստացավ «խան» և «սպասալար» (սպարապետ) տիտղոսները, որոնք վկայում էին նրա հեղինակության մասին: Թվում էր, թե նա կօգտվեր իր նկատմամբ նման վերաբերմունքից և մի կարգավիճակ ու իրական օգնություն կստանար Արցախի համար: Սակայն նրան խանգարեց ռուսների նկատմամբ աներեր և ուղղամիտ հավատը, հավանաբար, նաև սերը: Շուտով այս մեծ ու տաղանդավոր զորավարը իր եղբոր Թարխանի և մյուս զորապետների ու 232 զինվորների հետ լքում է Սղնախներն ու տեղափոխվում Ռուսաստան, ծառայության մտնելով ռուսական բանակում: Սակայն նա այս քայլով տրոհում, ոչնչացնում է և Արցախի կուռ ու անխորտակելի պաշտպանական համակարգը Սղնախները: Իսկ ռուսների հրամանատարությունը որոշեց օգուտ քաղել այս իրավիճակից եւ հայ փորձված զինվորականներին բարձր ռոճիկով իրենց կողմը տեղափոխել, որն էլ մասնակիորեն հաջողվեց նրանց: Սակայն Արցախը շարունակում էր կռվել թուրքական զորքերի դեմ: Այդպես էլ օսմանյան Թուրքիան, որը գրավել էր իրանական Ատրպատականը, ողջ Անդրկովկասը,

[362] Армяно-русские отношения в первой трети XVIII в. Сборник документов, т. 2, ч. 2, Ереван, 1967, стр. 273-274.
[363] Ընտիր պատմութիւն Դաւիթ Բեգին և պատերազմաց հայոցն Խափանու.... Վաղարշապատ, 1871, էջ 53:
[364] Նույն տեղում, էջ 62:

[365] Լեո, 3-2, 172:
[366] Նույն տեղում, էջ 173:

չկարողացավ ծնկի բերել արցախցիներին: Ինչպես գրում է Մինաս վարդապետ Տիգրանյանը, Արցախում թուրքերի հետ ընդհարումներն ու արյունահեղ կռիվները շարունակվում էին ամեն օր[367]: Թուրքերը ջախջախիչ հարված ստացան Ջրաբերդի Մեծ սղնախում, որի զորահրամանատար Տոնմազի գլխավորությամբ հայ զինվորները, կասեցնելով թուրքերի անընդհատ հարձակումները, 1728-29 թվականներին կոտորել են 5800 թուրք զինվորների[368]: Այսպիսով հայկական հերոսամարտերը թուրքական բանակի դեմ խանգարեցին Թուրքիային Կասպից ծովի առափնյա տարածքները խլելու ռուսներից: Իսկ Ավան զորավարը, որը ազգային հերոս էր, այսուհետ կործանիչ ուժ դարձավ Արցախի համար: Շուշիից, Ավետարանոցից և այլ վայրերից իրենց ընտանիքներով զինվորները հեռանում էին իրենց զորապետի մոտ ծառայելու նպատակով: Ավան զորավարի եղբայր Թարխան հարյուրապետը 1729 թ. հոկտեմբերի 21-ին Պետերբուրգյան արտգործնախարությունում, պատասխանելով իրեն ուղղված հարցերին, պատմեց, որ Արցախում հայկական զորքերը բաժանված են չորս մասի, որոնց հրամանատարներն են՝ Ավանն ու Թարխանը, Աբրահանը, Օհանը, Բաղին և Ավագը: Ռուսական իշխանությունները խրախուսեցին հայ զինվորականության գաղթը սահմանամերձ ռուսական տարածքները՝ հրապուրելով նրանց բարձր ռոճիկով ու սպայական աստիճաններով: Ավանին ու Թարխանին նշանակվեց տարեկան 1000-ական ռուբլի ռոճիկ: Իհարկե, Ավանը հնարավորություն ուներ Շուշիում Ղարաբաղի խանություն հիմնելու՝ Պարսկաստանի հովանու ներքո: Այդ դեպքում, անշուշտ, կկանխվեին հետագա տարիների այն կործանարար դեպքերը, որ տեղի ունեցան Արցախում, ու թափառական ցեղերի համար չէր ստեղծվի Արցախի սիրտը թափանցելու միակ նպաստավոր իրավիճակը: Սակայն այս ազգային հերոսը՝ Ավանը, եթե ռազմական մարտավարության ու կազմակերպչական տեսանկյունից մեծ գործիչ էր, ապա քաղաքականության ու ռազմավարության ասպարեզում մեծ սխալ գործեց՝ անձնական շահերը գերապատվելով ազգային շահերի նկատմամբ: Հավանաբար, վճռորոշ էր նաև նրա անձ-նվեր ու անվերապահ նվիրվածությունն ու խորը հավատը ռուսների նկատմամբ: 1730-ական թվականներից սկսած Շուշի բերդը այլևս կորցրեց իր պաշտպանական նշանակությունը եւ Վարանդայի տերերի համար իբրեւ ամառանոց էր

[367] Эзов, стр. 459.

[368] Այժմյան Մարտակերտի շրջանի Դաստագիր գյուղից դեպի հին Եղակեր վայրը տանող ճանապարհին Ուխտապատ վայրում Մատուռի պարսպի հյուսիսային մուտքի մոտ ներքուստ տապանաքարին գրված է. «ՐՇՅՃ. (5800) ես Տոնմազս բեկեցի (կոտորեցի - Բ.) թվ. ՌՃՆԷ (1728թ.)», տես՝ Ս.Բարխուդարյան, Դիվան հայ դիմադրության, V պրակ, Եր., 1982թ., էջ 111:

ծառայում: Իշխան Դոլգորուկովի կարգադրությամբ Պետրոս Մեծի պատվիրակ Իվան Կարապետը ևս իր առաքելությունն Անդրկովկասում ավարտված համարելով, Ավանի հետ հեռացավ Սղնախներից՝ դժգոհ ռուսական արքունիքի երկդիմի քաղաքականությունից: 1720-ական թվականներին Հայոց Սղնախների հաջող պայքարը թուրքական հզոր բանակի դեմ կրկին անգամ ապացուցում է, որ վճռորոշը ոչ թե բանակի մեծ թիվն է, այլ եղած ուժերի բարոյականային հատկանիշները, պաշտպանության գործի ճիշտ կազմակերպումը, նպատակասլացությունը, բնական պայմանների ճիշտ օգտագործումը: Ավան զորավարը կարճ ժամանակամիջոցում Շուշիում կազմակերպել էր ոչ միայն վառոդի, այլեւ հրազենի տարբեր տեսակների արտադրությունը, ստեղծել ժամանակի ոգուն ու տեխնիկային համապատասխան մարտունակ եւ արագաշարժ բանակ: Գլխավոր խնդիրը Սղնախների ներսում միաբանությունն էր: Այս դեպքում միավորման խթանիչ հանդիսացավ ռուսաց սպասվող օգնությունը: Ու առաջին անգամը չէ, որ Արցախի հայությունը միավորվում է, պաշտպանում իր երկիրն ամենաահեղ թշնամիներից: Սակայն երբ նա կորցրել է իր միասնականությունը եւ երկրամասում գերակայել են անջատողական միտումները, նա կորցրել է նույնիսկ շատ թույլ թշնամու նկատմամբ դիմադրողականությունը: Ճիշտ է, Սղնախները քայքայվեցին, սակայն արցախցիների մեջ մնաց ու կրկին ամրապնդվեց միասնական, հավաքական ուժի նկատմամբ խորը հավատը:

ԽԱՄՍԱ

Իրանի շահ Թահմասպ II-ը, գլուխը կորցրած, իր իշխանությունը փրկելու համար «խեղդվողի նման ձեռքը գցում էր ամեն մի շյուղի»: Նա էլ էր զգում, որ բավական է տաղանդավոր մի զորավար, որպեսզի միավորի ուժերն ու երկիրը փրկի իրենցից ոչինչ չներկայացնող արյունարբու աֆղան տիրակալներից: Թահմասպը սկզբում մեծ հույսեր կապեց տաղանդավոր զորավար Դավիթ Բեկի հետ: Սակայն դառը ճակատագիրը երկիրը զրկեց այս զինակցությունից: Անսպասելիորեն Դավիթ Բեկը մահացավ: Իրանը մեծ պոտենցիալ ունեցող երկիր էր: Սակայն նրանում ստեղծված ու դարերի ընթացքում կարծրացած ավանդական համակարգը այնպիսին էր, որ երկրի բարեկեցությունը կախված էր միմիայն գահակալի ունակություններից: Այսինքն՝ ամեն ինչ այս երկրում թողնված է ճակատագրի քմահաճույքին, նայած թե ինչ ունակություններ կունենա թագավորի հաջորդը: Իրանն ունեցել է Դարեհի, Կյուրոսի, Արշակ Մեծի, Խոսրով Անուշիրվանի ու Աբբաս Մեծի պես խելամիտ և հզոր թագավորներ, որոնց ժամանակ երկիրը ծաղկել է, հզորացել, տիրել ու հաղթել ամենուր: Սակայն նրանցից ոչ մեկը

չկարողացավ գահակալին հավասարակշիռ մի այնպիսի համակարգ ստեղծել, որ հետագա տարիներին ինչքան էլ թույլ լինի թագավորը՝ երկիրը ուժեղ մնա: Թույլ գահակալներն էլ էին տիրում և ձգտում ինքնահաճ իշխել: Երկիրը քայքայվում, տրոհվում էր ներսից: Իսկ դրսի ուժերը թե՛ արևելքից եւ թե՛ արևմուտքից, ուշի ուշով հետևում էին Իրանի ներքին իրավիճակին ու միշտ հայտնվում էր որևէ Չինգիզ, Թամիր կամ Միր Վեյս, որն իր ավարառուներին տանում էր դեպի կործանվող, անիշխան և անմիաբան երկիրն ու թալանում, բազմում նրա գահին, իր թափառականների քմահաճույքին հանձնում երկիրը: Ահա Իրանը նույն այս վիճակում էր ու որոշվում էր նրա լինել-չլինելու հարցը, երբ օտար լծի դեմ ապստամբ խմբերի մեջ իր քաջագործություններով ու մարտավարական հմուտ գործողություններով մեծ համբավ էր ձեռք բերում թուրքմենական ավշարների կըրկլու ցեղից Նադիր-ղուլի (հրաշքների ստրուկ) ավազակապետը: Գնահատելով նրա պատերազմական եզակի տաղանդը, Թահմասպ II-ը նրան իր մոտ ծառայության վերցրեց՝ շնորհելով Թահմազ-ղուլի (Թահմասպի ստրուկ) անունը: Շուտով Նադիրը դարձավ Իրանի սպարապետը: 1729 թ. սեպտեմբերի վերջերին Մեհմանդուստ գետի հովտում և նոյեմբերի 13-ին Սպահանից 60 կմ հեռու Մուրչեխորթ գյուղի մոտ Թահմազ-ղուլի խանը (Նադիր) ջախջախեց աֆղանների առաջնորդ Աշրաֆի զորքերը, որի արդյունքում Թահմասպ II-ը վերադարձավ Սպահան և հանդիսավոր կերպով բազմեց իր հոր գահին: Սակայն շահը, երկյուղելով Նադիրի լայն ժողովրդականությունից, որպես դրա դեմ պայքարի միակ միջոց տեսավ սեփական հաղթանակներ կռելը: Նա, հակառակ թուրքերի դեմ չպատերազմելու Նադիրի նախազգուշացումներին, արեւմուտքում սեփական նախաձեռնությամբ պատերազմական գործողություններ սկսեց Թուրքիայի դեմ: ծանր պարտություններ կրելով, ստիպված եղավ ստորացուցիչ պայմանագիր կնքել թուրքերի հետ՝ իր հերթին հաստատելով Թուրքիայի գերիշխանությունը Անդրկովկասում: Նադիրի փայլուն հաղթանակներից հետո այս դառը պարտությունները դժգոհության ալիք բարձրացրին ողջ երկրով մեկ: Թուրքիայում ևս ժողովուրդը դժգոհ էր սուլթան Ահմադ 3-րդ եւ մեծ վեզիր Դամատ Իբրահիմից: Այստեղ սուլթան հռչակվեց Մահմուդ I-ը: Նա ծրագրել էր անպայման կոտրել Նադիրի հաջողությունների թափը: «25-րդ օրը մտան Ղարաբաղ կոչված երկիրը, որն իր լեռներով և հարուստ այգիներով շատ հայտնի գավառ էր Աջեմի մեջ, - սուլթան Սուլեյմանի 1733 թ. արշավանքի մասին գրում է Փեշեվի-Իբրահիմը: - Անսպասելի կերպով երկիրը մի այնպիսի փոշով ծածկվեց, որ մարդը մարդուց չր կարելի ջոկել, լուսավոր ցերեկը մութ գիշերվա վերածվեց: Այս գավառի բնակչությունն այն աստիճան ցրվել եւ ոչնչացվել էր, որ մարդու հետք անգամ չերեւաց: Սակայն

գտնվեցին որոշ տեղերում պահված եւ քարայրներում թաքցված գանձեր ու զանազան ապրանքներ, բանակն անսահման հարստություններ ու ավար ձեռք բերեց, իսկ հարստությունների մի մասը, որ տանելու հնարավորություն չկար, կրակ տվին ու այրեցին: 27-րդ օրը հասան Նախիջևանի դաշտը: Ոչ մի արշավանքում բանակն այս աստիճան հարստություններ ձեռք չէր բերել: Չկար մի վրան, որի մեջ գտնվող սիրեկան և սիրուհիների թիվը երեքից պակաս լիներ, հինգից, տասից ավելին ունեցող վրաններն անթիվ էին...»[369]:

Արցախում Սղնախների իշխանության անկումով կրկին իրենց գավառների տեր ու տիրակալ դարձան մելիքները: Այստեղ գավառները իրար հետ միավորող պետական կարգավիճակին փոխարինում էին մելիքական ընտանիքները իրար հետ կապող խնամիական կապերը, որը երկրամասը փաստորեն վեր էր ածել մի ամբողջական դաշնակից միության: Այս միությունն էր, որ անընդհատ ետ էր մղում Արցախ թափանցելու և այնտեղ բնակություն հաստատելու թափառական ցեղերի ամեն մի փորձ: Անշուշտ, նման կապերը երբեմն այնպիսի ճեղքվածքներ են տալիս, որոնք ոչ մի «շաղախով» չի լինում փակել: Սղնախների զինվորները հավաքագրվեցին մելիքների մոտ: «Հայ քաղաքական մտքի պատմության մեջ XVIII դարի 30-ական թվականները այն հազվադեպ ժամանակաշրջաններից էին, երբ պատմական ամենաբուռն վայրիվերումների պահին, քաղաքական- հասարակական կյանքի ղեկի մոտ գտնվող անձինք, ստեղծված բարդ իրադրության պայմաններում կարողանում էին արագ և ճիշտ կողմնորոշվել ու որդեգրել ստեղծված նոր իրադրությունից թելադրվող քաղաքական դիմորոշման բոլորովին այլ ուղղություն», - գրում է հայ-իրանական հարաբերություններն ուսումնասիրող պատմաբան Հակոբ Փափազյանը[370]: Հայ զինվորականությանը արդեն տեսնում ենք Նադիր խանի բանակում: 1732 թ. Թոփալ Օսման Փաշայի բանակի դեմ մարտերում՝ Համադանում և Իրան-Իրաքյան սահմանում վեց հայկական զորախմբեր էին կռվում[371]: 30-ական թվականներին հայ-իրանական հարաբերություններում խոշորագույն քաղաքական դեմքը Դիզակի մելիք Եգանն էր: Ըստ Ռաֆֆու, այս տոհմը Արցախ է եկել Լոռիի Արտու կոչվող գյուղից և Լորիս-Մելիքյան իշխանական ճյուղից էր: Եգանը անընդհատ կռիվներ էր մղում իր տոհմակից Մելիք-Էլիզբարի հետ, որը բռնությամբ խլել էր նրա հայրենի ժառանգությունը՝ Փամ-

[369] Թուրքական աղբյուրները Հայաստանի հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին, հ. Ա, էջ 85:
[370] Հակոբ Փափազյան, Հայ-իրանական զինակցությունը 1726-1736 թթ. և Արևելյան Հայաստանի քաղաքական իրավիճակը Նադիր-շահի օրոք, «Բանբեր Երևանի համալսարանի», 1972, էջ 74 (այսուհետ՝ Հ. Փափազյան):
[371] Աբրահամ Երևանցի, Պատմութիւն պատերազմաց, Եր., 1938, էջ 75-76:

բակի ծորը և Լոռու մի մասը: Նա ստիպված էր լինում իր հոր Ղուկաս Վարդանյանի հետ իր ժողովրդով Տող գյուղը տեղափոխվել: Այստեղ նրա հայրը նորոգում է Գտիչ վանքը, միաբանություն հաստատում: Իսկ որդին Եգանը, Տողում եկեղեցի հիմնեց, ամրացրեց գյուղը շրջապարիսպներով[372]: Նադիրի պալատական պատմիչ Մահամմադ Քյազիմը իր եռահատոր պատմության առաջին գրքում հիշատակում է Մելիք-Եգանին որպես նուրբ քաղաքագետին հատուկ արտակարգ ունակություններով օժտված իմաստուն մի գործչի, որը Նադիրի կողմից սիրո և վստահության էր արժանացել: Իրանցի պատմիչը հայ զինվորականության առաջնորդների մեջ առաջին տեղը հատկացնում է Մելիք-Եգանին, ապա հիշատակում է Մելիք-Թամրազի (Գյուլիստան) և Մելիք-Հարությունի (Զրաբերդ) անունները[373]: Մելիք-Հարությունը, աչքի ընկնելով օսմանյան բանակի դեմ ճակատամարտերում, Նադիրից ստանում է «Ալահ-դուլի Սուլթան» անունն ու կոչումը: Թուրքական բանակի դեմ Ղարաբաղի և Սյունիքի հերոսական պաշտպանությունը ինքնըստինքյան հայերին դարձրել էր Նադիրի դաշնակիցները, որն էլ հիմք դրեց հայ-իրանական նոր ռազմաքաղաքական գործակցության: Ռուսները, խուսափելով օր-օրի հզորացող Նադիրի բանակի հետ բախումից, Ռեշտում 1732 թ. կնքեցին ռուս-իրանական պայմանագիրը և Իրանին վերադարձրին Կասպից ծովի ափամերձ տարածքները: Նադիրը նույն տարում, օգտվելով Թահմասպ II-ի նկատմամբ ժողովրդի դժգոհությունից, նրան գահընկեց արեց և իր խնամակալության ներքո շահ հայտարարեց նրա նորածին որդուն Աբաս III-ին: Սակայն երկրի իշխանությունը Նադիրի ձեռքին էր: Նադիրը թուրքերի դեմ պատերազմը տեղափոխում է Իրաք: Այստեղ Բաղդադի Ահմադ փաշան ստիպած պայմանագիր է կնքում Նադիրի հետ Թուրքիայի կառավարության անունից խոստանում զորքերը ետ քաշել: 1639 թ. թուրք-իրանյան պայմանագրով հաստատված սահմանները, ստիպված եղավ ճանաչել և սուլթան Մահմուդ I-ը: 1734 թ. Թուրքիայում արեւելյան զորքերի ընդհանուր հրամանատար նշանակվեց Քյուփրլուզադե Աբդուլլա փաշան, որն էլ անմիջապես շարժվեց դեպի Անդրկովկաս: Թուրքերը միշտ էլ ձգտել են ամեն գնով նվաճել Անդրկովկասը, ասես մի ներքին զգացումով վախ զգալով նախահայրենիքից իրենց արմատներից կտրվածությունից: Իսկ այս կապը սեպի պես խզում էր Անդրկովկասն ու Ատրպատական-Ազարբայջանը: Բացի այդ, արեւմտյան կորուստներից հետո այս կայսրությունը ձգտում էր դրանք կոմպենսացնել արևելյան նվաճումներով:

[372] Ռաֆֆի, Խամսայի մելիքություն, Երկերի ժողովածու, հ. 10, էջ 173 (այսուհետ՝ Ռաֆֆի...):
[373] Մուհամմադ-Քյազիմ, Նամե-յե Ալմարա-յե Նադերի, (պարս. բնագիր), հ. 1, Մոսկվա, 1960, էջ 99 (այսուհետ՝ Մուհամմադ-Քյազիմ):

Եվ ահա, մինչ Աբդուլլա-փաշան կհասնի Կարս, Նադիրը Թավրիզով և Արդաբիլով արագ երթով մտավ Շիրվան ու մի ճակատամարտում պարտության մատնեց լեզգիների առաջնորդ Սուրխային, որը Դավուդի պես թուրքական սուլթանի կամակատարն էր, ավերեց Շամախին ու Կազիկումուխը, ապա պաշարեց Գանձակը: 1735 թ. մայիսին Նադիրը Գանձակը թողեց պաշարման մեջ, Լոռի-Փամբակով անցավ Կարս, որտեղ Աբդուլլա փաշան փակվել էր բերդում: Շրջակա բնակավայրերը թալանելուց հետո Նադիրը բանակ դրեց Եղվարդի դաշտում: Իրենց զորքերով Նադիրի մոտ էին Մելիք-Եգանը, Գեղարքունյաց Մելիքջան Մելիք-Շահնազարյանը, Երևանի Մելիք-Մկրտումը և Մելիք-Հակոբջանը[374], Զրաբերդի Մելիք-Հարությունը (Ալլահ-կուլի սուլթան), Գյուլիստանի Մելք-Թամրազ Բ-ն: Մահամմադ Քյազիմը ճանրամասնորեն նկարագրում է, թե ինչպես Դիզակի Մելիք-Եգանը հանդամանորեն Նադիրին բացատրում է հայ եկեղեցու և կաթողիկոսի նշանակությունը, համոզում Իրանի տիրոջը այցելել էջմիածին: «Անհամար նվերներ մատուցելով Նադիրին, - գրում է Մուհամմատ Քյազիմը, - Մելիք-Եգանը խնդրում է վեհապետին, որպեսզի նա բարեհաճի այցելել սուրբ վայրը (էջմիածին)..., դրանով նա կուրախացնի եվրոպական երկրների (Ֆրանգստանի) թագավորներին և կպատվի կարողություն և ուժ ունեցող բոլոր մելիքներին, և բոլոր հայ համայնքների համար, որոնք ապրում են այս և ուրիշ երկրներում, արևից էլ պարզ կդառնա նրանց նկատմամբ եղած սերն ու գթությունը, և քանի պտտվում է երկիրը, աշխարհի բոլոր մասերում կհռչակվի ու կփառաբանվի նրա հոգատարությունը իր ծառաների և այրող ատելությունը թշնամիների նկատմամբ»[375]:

Հայոց Աբրահամ Կրետացի կաթողիկոսը մանրամասնորեն նկարագրել է Նադիր շահի հետ իր հանդիպումները: Նա ծնվել է Կրետե կղզում: Քսանհինգ տարեկանից գլխավորել է Թեքիր-դաղի առաջնորդարանը Թրակիայում: 1734 թ. նա ուխտագնացություն է սկսում դեպի էջմիածին եւ Տարոնում գտնվող «ի սբ. բանքն Գլակայ» (սբ. Կարապետ վանքը, որի հիմնադրումը կապվում է սբ. Գրիգոր Լուսավորչի անվան հետ): Օգոստոսի 3-ին հասնում է էջմիածին, հանդիպում կաթողիկոս Աբրահամ II Խոշաբեցուն, որը հյուրին ամեն կերպ պահում է իր մոտ և թույլ չի տալիս շարունակելու ուխտագնացությունը: Նոյեմբերի 4-ին մահանում է կաթողիկոսը: Թուրք փաշաները, հաշվի առնելով նրա թուրքերենի իմացությունը, հավանաբար, նաև նախորդ կաթողիկոսի ցանկությունը, Աբրահամ Կրետացուն ստիպում են կաթողիկոս օծվել: Սակայն Կրետացին փորձում էր մերժել, քանի որ նա ցանկանում էր իր առաջնորդարանը վերադառնալ: Թուրք փաշան ասում է,

[374] Հ. Փափազյան, էջ 77:
[375] Մուհամմադ-Քյազիմ, հ. 1, էջ 633:

որ Թուրքիայից ու Իրանից մեծաթիվ զորքեր են շարժվում իրար դեմ, ու եթե էջմիածնում առաջնորդ չլինի, նրանք կավերեն «Ուչքիլիսեն» (էջմիածին) և ցիրուցան կլինեն եկեղեցականները: Կարելի է ասել, որ բռնի կերպով, մահվան սպառնալիքով նոյեմբերի 24-ին էջմիածնում Աբրահամին կաթողիկոս են օծում: 1735 թ. ամռան սկզբներին Երևանի Մելիքջան քալանթարը (քաղաքապետ) նորընծա կաթողիկոսին խորհուրդ է տալիս ընծաներով և պատրաստությամբ տեսության գնալ Ապարանում բանակ դրած պարսից Թահմազդուլի խանին (հետագայում՝ Նադիր շահ)[376]: Կաթողիկոսը «Երկրորդ Ալեքսանդրին» էջմիածին է հրավիրում: Սակայն հզոր խանի էջմիածին գալու օրը ոչ թե ինքն է գնում «հյուրին» առաջնորդելու, այլ եկեղեցականներից մեկին է ուղարկում: Սա շատ վատ են ընդունում խանի շրջապատում: Կաթողիկոսը գնում է մեծ խանի մոտ, հավատացած լինելով, որ այլևս ետ չի գա: Սակայն կաթողիկոսը բացատրում է, որ ինքը ծանոթ չէ պարսիկների սովորությանը և շարժվել է օսմանցիների սովորության համաձայն: Ի զարմանս բոլորի, Թահմազդուլի խանը ներում է «խալիֆին» և գովում նրան: Խանը էջմիածին է գալիս և իր գոհունակությունը հայտնում, որ կերակրվել են ձիերն ու զինվորները, որի համար ինքը վարձահատույց կլինի «խալիֆին»: Էջմիածնում Նադիրը նոր հրովարտակներով հաստատում է կաթողիկոսի, հոգևորականների և հայ համայնքի հնուց սահմանված իրավունքները[377]: Ըստ պարսից պատմիչի, նա վանքի վերանորոգումը հանձնարարում է հմուտ վարպետների հատկացնելով հազար թուման, տաճարը զարդարում հինգ ման (15 կգ) կշռող ոսկե ջահով և կարգադրում Քիրմանի նահանգային սարքարարությանը ամենաընտիր գորգերը բարձել պետական գրաստներին և ուղարկել էջմիածին[378]: Ինչ խոսք, որ Մելիք-Եգանը նուրբ քաղաքագետ էր, և հասկանում էր, որ եկեղեցու, ֆեոդալների ու հզոր շահի միջև նրա դաշնակցությունը այդ ժամանակաշրջանում հայ ժողովրդի փրկության միակ ելքն էր: Ինչպես գրում է Լեոն, «Նադիրի այս արարքը տաղանդավոր բռնակալին հատուկ անհասկանալի քմահաճույք չէր»[379]: Նադիրը գիտակցում էր, որ առանց հայերի պես հուսալի դաշնակիցների երբեք չէր կարող իրականացնել իր ծրագրերը: Թուրքական ու պարսից զորքերն իրար դեմ էին դուրս եկել Արա լեռան ստորոտում՝ Եղվարդի դաշտում: Ուղիղ 15 տարի առաջ նույն դաշտում թուրքական 900 հոգանոց զորախումբը գլխովին ջախջախել էր 12 հազա-

[376] Աբրահամ Կրետացի, Պատմություն, Եր., 1973 (այսուհետ՝ Ա. Կրետացի):
[377] Աբրահամ Կրետացի, Պատմութիւն անցիցն իւրոյ եւ Նատր-Շահին պարսից, Վաղարշապատ, 1870, էջ 13:
[378] Մահամմադ-Քյազիմ, էջ 622-634:
[379] Լեո, հ. 3-2, էջ715:

րանոց պարսից բանակին: Եվ ահա պարցից 18 հազարանոց բանակը պետք է ճակատամարտեր թուրքական 80 հազարանոց բանակի դեմ: Հիմնական ուժերը թաքցնելով ձորում, պարսից զորահրամանատարը թուրքերի դեմ է դուրս հանում հազարական զինվորով երեք գունդ: Թուրք փաշաները որոշում են, որ լուրջ ճակատամարտ չի լինելու: Մի պահ պարսկական հետևակը նահանջում է, իր ետևից քաշելով Արա լեռան փեշին դիրքավորված թուրքական գնդերը: Անսպասելիորեն հայտնվում են պարսից գնդերը: 1735թ. հուլիսի 8-ին Եղվարդի ճակատամարտում, չնայած թվական գերակշռությանը, թուրքական բանակը պարտություն կրեց: Ջեզայիրչիները անսպասելիորեն թափանցել էին թշնամու բանակի խորքն ու գրավել 60 թնդանոթներից կազմված թուրքական հրետանին, իսկ պարսից հրետանին նշանառու համազարկերով խուճապ էր առաջացնում թուրքերի շարքերում: Պարսից հեծելազորի ճակատային շեշտակի հարվածները, ի վերջո, վճռեցին ճակատամարտի ելքը[380]: Թուրքիան պարսիկներին հանձնեց Երևանի, Գանձակի և Թիֆլիսի բերդերը ու ետ քաշվեց Անդրկովկասից[381]: Սպանվում են Քյոփուռլու օղլի փաշան, Մուստաֆա փաշան և մյուս հրամանատարները: Թուրքերից սպանվում են 40 հազար զինվոր, պարսիկներից՝ 20 հոգի: Կաթողիկոսը հավաքում է թուրքական կողմի վիրավոր հայերին, օգնում ապաքինվելու և ուղարկում իրենց բնակավայրերը: Օսմանյան կայազորը պարսիկներից խնդրում է 1000 սայլ՝ իրենց եզներով ու սայլապաններով, որպեսզի Երևանի բերդից դուրս տանեն իրենց ունեցվածքի կեսը, իսկ մյուս կեսը, ըստ պայմանագրի, պետք է մնար պարսիկներին: Կարսը գրավելուց հետո պարսից զորավարը Հայոց կաթողիկոսին հրավիրում է Թիֆլիս: Իհարկե, Նադիրի իշխանության հաստատումով ամենևին էլ չի թեթևանում հայ բնակչության վիճակը: Առավել ծանր էր ռազմական «սուրսաթ» կոչվող հարկը, որը գանձվում էր ամենայն խստությամբ: 1735թ. պահպանվել են Արցախի հայ մելիքների Նադիրին փոխանցած մի քանի խնդրագրեր և զեկուցագրեր, որոնցում Խաչենի, Վարանդայի և Ջրաբերդի տերերը նկարագրում են «սուրսաթի» գանձման ընթացքը: Խաչենի մելիք Դավիթը խնդրում է Նադիրին, որպեսզի նրա զինվորները ապօրինի պահանջներով չնեղեն իր հպատակներին, նրանց վիճակը առանց այն էլ ծանր է, քանի որ «դեռ առաջին սուրսաթը լրիվ չվճարած, երկրորդ սուրսաթի գանձման հրահանգ է ստացել նորին գերազանցությունից»[382]: Աբրա-

[380] Աբրահամ Կրետացի, էջ 17, 20, տես նաև՝ Մահամմադ-Քյազիմ, էջ 600-607, տես նաև՝ Միրզա-Մուհամմադ-Մեհդի խան Աստարաբադի, Թարիխ եւ Նադերի (պարս.), Թավրիզ, 1869, էջ 85-89:
[381] Հ. Փափազյան, էջ 79:
[382] Երևանի Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 2բ, վավ. 181:

համ կաթողիկոսը Թիֆլիսում ապագա շահին առաջարկում է երկրի ֆինանսական ու տնտեսական գործերը կարգավորելու նպատակով Երևանում զարապխանա (դրամահատարան) հիմնել, որը հավանության արժանացավ անծայրածիր երկրի իրական կառավարչի՝ Թահմասպկուլի մեծ խանի կողմից: Վերջինս հրամայել էր Թիֆլիսի հայ և վրացի 300-ական ընտանիքներ տեղահանել և տեղափոխել Խորասան: Ըստ երևույթին, նա ցանկանում էր կրկնել իր մեծ նախորդի՝ Շահ Աբասի փորձը: Հայոց հայրապետը ամեն ջանք գործադրեց այս պատուհասից փրկելու հայ ընտանիքներին:

Դաղստանյան անհաջող արշավանքից հետո Նադիրը բանակ դրեց Մուղանի դաշտում և «Կուրուլթայի» (ավագանու ժողովի) հրավիրեց Իրանի աշխարհիկ և հոգևոր ավատատիրական վերնախավին, որին մասնակցում էին նաև հայ մելիքներն ու Ամենայն Հայոց կաթողիկոս Աբրահամ Կրետացին: Հաջորդ տարվա մահմեդական Նովրուզ-բայրամի օրերին Ղարաբաղի Մուխանքի դաշտում նշանակված էր Թահմասպղուլի խանի՝ շահ ընտրվելու և օծվելու արարողությունը, որին հրավիրված էր Աբրահամ III Կրետացի հայոց կաթողիկոսը: Նա պետք է ճանապարհորդեր Երևանի կառավարիչ Մեհմեդղուլի խանի հետ, որը ծագումով Գողթան գավառից էր՝ Մուսաբեկենց ազգից: Նրա պապը Շահ-Աբասի ժամանակ հավատափոխ էր եղել: Կաթողիկոսը, որպեսզի ճանապարհին հնարավորություն ունենա այցելելու տարբեր համայնքներին ու վիճակներին, պատճառ բռնելով իր ծերությունն ու տկարությունը, մեկ ամիս առաջ է սկսում ճամփորդությունը: 1735 թ. դեկտեմբերի 3-ին դուրս գալով էջմիածնից, նա իր հետ տանում էր 10 ուղտ, 10 ջորի, 16 ձի՝ բեռնված համապատասխան նվերներով: Նա ուներ 25 ուղեկիցներ: Նրա ճանապարհն անցնում էր Խոր Վիրապով, Շարուրով, Երնջակով: Մեկ օր մնում է Ցղնայում, երեք օր՝ Ագուլիսում: Այստեղ նրան միանում է Մեհմեդղուլի խանը ու միասին անցնում են Արեևիքը, Կովսականում Խուդափիրինի կամրջով անցնում են Արաքսը, հունվարի 3-ին հասնում են Կուր և Արաքս գետերի միախառնման տեղը, որտեղ նշանակված էր մեծ կուրուլթայը: Մոնղոլներն ու Թամերլանը ձմռանը Մուխանքի դաշտում էին գումարում իրենց ժողովները: Երեգալուցի օրը կաթողիկոսը ձիով զբոսնեց գետափին, տեսավ գետերի միախառնումը: Պարսիկները ժամանակավոր երկու կամուրջ էին կառուցել, մեկը Արաքսի վրա, մյուսը՝ միախառնումից հետո Կուրի վրա: Պարանով կամ ճոպանով իրար կապած նավակներ էին շարել գետի լայնքով, ամրացրել գերաններով ու տախտակներով: Պաշտպանական նպատակներով Կուրի կամրջի երկու կողմերում աշտարակներ ունեցող դղյակներ էին կառուցել, որտեղից հսկում էին կամրջի անցուդարձը: Այն կապում էր Դերբենդից ու Իրանից եկող ճանա-

պարհները: Այստեղ լուրջ վտանգ էր ներկայացնում դաղստանցիների հարձակումը: Իսկ Երասխի կամուրջը հսկում էին միայն մի քանի հոգի, որպեսզի պատերազմից բերած գերիները չփախչեն: Այս կամրջի ճանապարհը Իրանը կապում էր Արցախի, Գանձակի, Սիսիանի հետ: Ճամբարում հյուրերի համար կառուցել են 500 եղեգնյա վրաններ: Հաջորդ օրը կաթողիկոսը եկեղեցանման հատուկ վրան կանգնեցրեց՝ թմբուկ-վեղարով, գունազարդ պաստառներով, խաչերով ու զարդամոտիվներով: «Բաւականին փոքր ի շատէ, զոր ինչ եկեղեցական անօթ եւ թափօրական պատրաստութիւն ունինք ընդ մեզ, կարգաւորօք, սարկաւագօք, դպրօք, ագուցեալ պատմաճանօք եւ լուցեալ մոմեղինօք, խաչիւ,ավետարանաւ եւ սուրբ մեռօնաւ գնացինք ի վրանէն առընթեր եւ եզրն Երասխայ», - գրում է Աբրահամ Կրետացին[383]: Արարողությանը մասնակցում էին 300 հայեր: Այնտեղ էին Երևանի քալանթար Մելիքջանը, մելիք Հակոբջանը, մելիք Մկրտումը,Դիզակի մելիք Եգանը, Երևանի աղաներ, շեխիսլամը, ղազին, խանի յուզբաշիները, զորականներ և բեկեր, ինչպես նաև այլ մահմեդականներ: Երբ մեռոնը թափում է Երասխի մեջ, Աբրահամին զարմանք է պատճառում այն հանգամանքը, որ արարողությանը ներկա մահմեդականները ևս լվացվում էին Երասխի մեռոնախառն օծյալ ջրով: Ավանդության համաձայն կաթողիկոսը խաչը նետում է ջրի մեջ: Ցուրտ ձմռանը համարձակվում է գետը մտնել արցախցի գահերեց մելիքը՝ Եգանը, որն էլ Երասխի հատակից հանում է խաչը: Սուրբ ծննդյան օրը առատ ձյուն տեղաց, որը եզակի երևույթ էր Մուղանի դաշտում: Կաթողիկոսը որոշեց գնալ Դիզակ, այնտեղ սպասել մեծ խանի գալուստին: Նադիրը, զբաղված լինելով դաղստանցիների դեմ պատերազմով, ուշանում էր: Աբրահամ կաթողիկոսը դեռ Դիզակի ճանապարհին էր, երբ սուրհանդակը հայտնում է, որ խանն արդեն եկել է: Կաթողիկոսը ստիպված ճամբար է վերադառնում: Հունվարի 14-ին իրենից առաջ ուղարկելով նվերներով բեռնված ուղտերն ու ջորիները, կաթողիկոսը գնաց խանի մոտ: Թահմասպղուլի խանի շահ օծման արարողակարգին հայոց կաթողիկոսը նշանակված էր որպես արձանագրող, որի պատճառով էլ նրա կարծիքը բարձր էր գնահատում մեծ զորավարը: «Բարի եկար, խալիֆ, - ասում է խանը, - ինչպե՞ս ես, լա՞վ ես զգում քեզ, ձմռան պատճառով դժվարություններ՞ ունես, վաղո՞ւց ես եկել»: «Իմ խան, թող Աստված քեզ երկար կյանք տա, - թուրքերենով պատասխանում է Աբրահամ կաթողիկոսը, - այժմ, երբ ես տեսա քո լույս ու գիշեր գերապատիվ սուրբ երեսը, ձմեռն ինձ համար գարուն դարձավ: Փառք ստեղծողին, որ ես քեզ տեսնում եմ անվնաս և առողջ ու պայծառատես»: Խանը ժպտաց և ասաց. «Աբդուլ-Հասան-

[383] Ա. Կրետացի, էջ 80:

բեկ, խալիֆին լավ տեղ հատկացրու, նա լավ մարդ է»[384]: «Ես քեզ նշանակում եմ բոլոր երեւանցի աղաների տեր: Ես քեզ վստահում եմ», - ասաց մեծ խանը: Նույն օրը կաթողիկոսին կրկին կանչեցին խանի մոտ: Նադիրը հետաքրքրվեց Երևանի կողմերի, Կարսի, քարավանների շարժման, ինչպես և Բայազետի, Քրդստանի մասին: Աբրահամ կաթողիկոսը հայտնեց, որ արդեն քարավաններ են գալիս բոլոր կողմերից: Ապա խանը հարցրեց վար ու ցանքսի մասին: «Վար ու ցանքսը բավարար չեն, - ասաց կաթողիկոսը, - չկան եզներ, որ հերկեն: Թող լինի քո թույլտվությունը, որ գարնանը Բայազետից և Կարսից ցուլ բերեն, որպեսզի վար անեն ու ցանեն, քանի որ գարնան հերկը ջրելով է և լավ է անցնում»: Խանը Քյալբալի-բեկին գաղտնի ուղարկում է Արարատի մարզ, ստուգում կաթողիկոսի խոսքերի ճշմարտացիությունը[385]: Նույն օրը Նադիրը հայոց կաթողիկոսին ուղարկեց երկու թանկարժեք խալաթ՝ կարած ոսկեզօծ թելերով: Յուրաքանչյուր խալաթի վրա կար 12-ական ասեղնագործ պատկերներ՝ կապված Քրիստոսի կյանքի հետ: Ամեն առավոտ տարբեր երկրամասերի ներկայացուցիչներն անցնում էին մեծ խանի առջևով, «սելամ» (բարև) տալով նրան: Բայրամի երկրորդ օրը կրկին «սելամի» գնացին, իսկ օրվա երրորդ ժամին բաց դաշտում, որը մեծ խանի նստավայրից ծիաև մի արշավի հեռավորություն ուներ, ամեն խան իր մարդկանցով առանձնացավ խորհուրդ անելու, թե ում ընտրեն երկրի կառավարիչ: Հետո մեծ խանի կողմից եկան յոթ հոգի՝ Միրզա Զաքին, միրզա Մեհթին, Բելի Թահմասպ Իսպահանի մայար-բաշին, Քաշանի Աբդուլ-կադիմ-Միրզան, Խորասանի Ալի-Աքպեր-Միրզան, մեծ խանի սանդուխտարը: Յուրաքանչյուր խմբի առանձին հրավիրում էին, շրջան կազմած նստեցնում փարթամ ածած խոտերին, իրենք կանգնում կենտրոնում, ասում. «Մեծ խանը հանձնարարել է, որ խորհրդակցենք իրար հետ. ո՞ւմ կցանկանայիք երկրի կառավարիչ, խաղաղությունն ու հանգիստը ապահովող տեսնել: Ինքը՝ մեծ խանը ծեր է և հոգնած պատերազմներից, և ահա աստծո օգնությամբ Պարսկաստանն ազատեց թշնամիներից, ջարդեց և քշեց երկրից: Իսկ ինքը ցանկանում է առանձնանալ Խորասանի իր դղյակում, աղոթել ձեզ և իր համար: Խորհրդակցեք մինչև 9-րդ ժամը: Բայրամի 3-րդ օրը, որ հինգշաբթի էր, 5-ը փետրվարի, գնացին նույն տեղը: Արարատյան մարզի խմբից ընտրեցին միայն մահմեդականների, իսկ հայերից պետք է խոսեին հայրապետը, քալանթարն ու մելիքը: Բոլորը մեծ շրջան կազմեցին, որի մեջ տեղ գրավեցին նույն յոթ հոգին: Վեքիլ-Թահմասպն ասաց, «Լսեցեք, խաներ, սուլթաններ, բեկեր, աղաներ, հայոց սերեֆրազ խալիֆայ, քետխուդեք, այաններ և ամեն եկվորներ հեռու և մոտիկ տեղերից: Մեծ խանի հրամանն է, «Որովհետև չթողեցիք և չկամեցաք, որ գնամ իմ տեղս հանգստանամ, և ոչ էլ հեռացաք իմ դրոշից, ես ձեզանից երեք պահանջ ունեմ. նախ՝ եթե որոշ ժամանակ անց հայտնվի շահի որդին կամ հայտնի ազգական, նրան չմիաբանեք և չընդունեք: Երկրորդ՝ հայհոյանքներն ու անեծքները, որ արտահայտում էիք Օմարի և Օսմանի հասցեին, այլևս չասեք և Նովրուզ-բայրամի օրը այլևս չկտրտեք, չարյունոտեք ձեր դեմքերը հանուն Հասանի և Հուսեինի, այլ համաձայն մեր պայմանի, մնացեք անշարժ: Այդ անեծքների, հայհոյանքների արյուն է հեղվում երկու ժողովուրդների միջև, որոնք պաշտում են ղուրանը, երկու պետությունների՝ Իրանի և Թուրանի միջև: Մեր մարգարեն նույնն է, նույնպես և ղուրանը, նամազը ևս նույնն է: Որովհետև օսմանցին ձեռքը սրտին կդնի և կաղոթի, իսկ մենք ձեռքը կախ ազատ կպահենք, թող այդպես էլ լինի: Թող իրենք իրենց ծեսն անեն, մենք՝ մերը, և իրար չանիծենք: Եվ թող Իրանից Քապե խաջի գնացողներին ընդունեն, ինչպես իրենց հաջիներին: Միաբանության այս պայմանը չխախտել: Երրորդ՝ քանի որ ցանկացաք, որ ես թագավորեմ, իմ մահից հետո, իմ ընտանիքի և իմ որդիների վրա չարություն չանեք, այլ եղեք հավիտյան հնազանդ: Այս երեք պայմանները գրավոր արձանագրեք և կնքեք ձեր կնիքներով և տվեք ինձ: Ի՞նչ կասեք, հանձն կառնե՞ք, թե՝ ոչ»: Եվ ամենը միաբերան գոչեցին. «Այո, կամենում և հանձն ենք առնում ու հնազանդվում»: Նադիրը իր երկրորդ պահանջով նպատակ ուներ միավորել մահմեդականության շիա և սունի աղանդները: Այս պահանջի առթիվ բողոքել էր մոլլաբաշին, հայտարարելով. «Իշխանների գործը չէ կրոնի օրենքներ սահմանելը», միևնույն ժամանակ զգուշացնելով, որ չփորձի վերափոխել հաստատված կրոնը, քանի որ դա կարող է վտանգավոր հետևանքներ ունենալ[386]: Մեծ խանը, ճնշելով ամեն մի ընդդիմություն իր դեմ, հրամայում է խեղդամահ անել մոլլաբաշուն: Ընդհանրապես, այստեղ հավաքված Իրանի իշխանները փարախում հավաքված կենդանիների կարգավիճակում էին զգում իրենց, քանի որ փոքր ինչ կասկածը հերիք է, որ պատժվեն շահի թախտին նստող մեծ խանի կողմից: Մուխանքի ժողովականների ճամբարը չորս կողմից շրջապատված էր բանակային ստորաբաժանումներով: Ուրբաթ, հինգերորդ ժամին պատվիրակությունները հերթով մոտեցան մեծ խանին և գլուխ խոնարհեցին, գնացին իրենց հատկացված հանգստի սենյակները: Վալինամաքը ճաշի հրավիրեց խաներին: Նա ասաց. «Ձեր մեջ ընտրեցեք մեկ այլ մարդ, որը կարողանա կառավարել երկիրը, իսկ ինձ հանգիստ թողեք, ես այլևս ուժ չունեմ»: Իսկ խաները համոզում էին, շողոքորթում, խնդրում, համոզում, որ երկիրը ձեռքից բաց չթողնի: «Բայց ձեզանից շատերը կարող են դեմ լինել և նրանք իրավունք

[384] Նույն տեղում, էջ 85:
[385] Նույն տեղում:

ունեն, քանի որ ես շատերի ունեցվածքը խլեցի, շատերին սպանեցի (շահ Թահմասպի նշանակած խաներին ոչնչացրել էր, բացառությամբ երեք հոգու, - Բ.), ոսկին ու արծաթը խլեցի, շատ տեղեր ավերեցի, երկիրը սասանեցի և աղքատացրի: Եվ թող մարդիկ գոնե հիմա հանգստանան այս նեղություններից»: Խաները պատասխանեցին. «Այո, ճշմարիտ եք ասում: Բայց դա անհրաժեշտ էր քո մեծության և զորապետության համար, ու եթե այդքան արի չլինեիր, այդքան հաջողություններ չէին լինի: Ուրեմն և խնդրում ենք հետայսու ևս այդպես վարվել, քանի որ Աստված է շնորհել քեզ կառավարելու երկիրը: Քանի որ բոլորս պարտ ենք քեզ, ենթարկվում ենք քո կամքին: Ովքեր կհակառակվեն քեզ, արժանի են դատաստանի: Իսկ ովքեր հնազանդ են քո հրամաններին, թող արժանանան պատիվների և խալաթներ հագնելուն: Եթե այդպես չլինի, երկիրը չի լինի կառավարել»: Հետո նա հավանեց այս ամենը և հանձն առավ թագավորել: Կրկին կարդացին ֆաթեն, իսկ հայոց հայրապետը լռելյայն, ինքն իրեն «Հայր մերն» ասաց: Երբ արձանագրությունը պատրաստ էր, խաներն ու սուլթանները, միրզաներն ու մերսոֆիները, հազարապետներն ու հարյուրապետները, քալանթարներն ու մելիքները, այաններն ու աղաները, շեխիսլամներն ու ղազիները, պարսիկ և հայ սկսեցին կնքել արձանագրությունը: Առաջինը մոտեցան խորասանցիները, ապա Հերաթի, Մաշադի, Մազանդարանի ու կարգով հասան Ատրպատականին: Կնքումը տևեց երեք օր: Երբ փետրվարի 10-ին գնացին բարև տալու թագավորին, վերջինս կանչեց. «Խալիֆա, խալիֆա...»: Հայոց հայրապետն ասաց. «Այո, իմ Վալինեմաթ»: «Գիտե՞ս - դու, որ ես շատ լավ եմ կարգադրել ձեր գործերը», - ասաց շահը: Հայրապետը պատասխանեց. «Կամքը ձերն է, օ լուսապայծառ, թող այն օրհնյալ լինի»: Այդ պահին վազքով եկավ և շահի առջև կանգնեց Հերաթի Փիր-Մահմադ-խանը, ձեռքերը դնելով սրտին: Նորընծա շահը Հերաթի խանին նշանակեց Երևանի խան, հանձնարարելով լսել խալիֆին, խորհրդակցել քալանթարի, մելիք Մկրտիչի և մելիք Հակոբջանի հետ, որը Երևանի բերդում թուրքերի մեջ է եղել ու ծառայել իրեն: «Այդ վիլայաթի խաղաղության համար դու ես պատասխանատու և պետք է հոգաս նրա բարեկեցության համար: Այս խալիֆան շատ լավ մարդ է, Ուչ-քիլիսեն (էջմիածինը, - Բ.) լավ տեղ է: Քեզ եմ հանձնում: Ինչ ասի քեզ, դու պետք է լսես նրան և հարգես: Շատ պատվական մարդ է: Նա հոգում է երկրի, ժողովրդի և պետության մասին...», - հանձնարարեց շահը: Սկզբում խալաթ նվիրեց իր եղբորը, որին նշանակեց Ատրպատականի սարասկյար, նրա ենթակայությանը հանձնելով նաև Նախիջևանը, Արարատի մարզը և Վրաստանը: Հետո խալաթ հանձնեց Բաբա-խանին, նրա ենթակայությանը հանձնելով Խորասանն ու Հերաթը: Նվիրում էր նաև հայ կամ վրացի գերիներ, որին՝ կին, մյուսին՝

տղա կամ աղջիկ: Կիրակի օրը երևելի խաները, շուրջ հարյուր հոգի, հագած իրենց նոր խալաթները, գնացին քեշիկխանա, որտեղ ղեյլան էին ծխում, ծիծաղում: Երբ շահի առջև բոլորն աղոթում էին, Հայոց հայրապետը խաչակնքեց ու մի պահ մնաց կանգնած: Շահը տեսավ նրան և ասաց. «Խալիֆա, մոտ արի, գիտե՞ս, որ վաղը չէ մյուս օրը արձակում եմ ձեզ»: «Թող բազմապատկվեն իմ Վալինամաթի կյանքն ու իշխանությունը,-պատասխանեց կաթողիկոսը, - խնդրում եմ Աստծուն և ստեղծողին, ինչպես այժմ ես տեսա Իրանի նվաճողիդ մեծությունը, Աստծո կամոք լինեք Ղանդահարի և Հնդկաստանի հաղթող»: Շահն ուրախ ծիծաղեց եւ ասաց. «Ապրես, խալիֆա, շատ ապրես...»: Կաթողիկոսն ասաց. «Օ լուսապայծառ, ես խնդիրք ունեմ, որը պետք է կատարվի»: «Լավ, - ասաց ահեղ շահը, ապա կարգադրեց,-խալիֆին տարեք Միրզա-Մումինի մոտ, ասեք, ինչ էլ ասի խալիֆը՝ միտք կամ պահանջ, թող կատարեն»:

Հանդիսության ավարտից հետո Աբրահամ կաթողիկոսի հոգսը հայ գերիներին ազատելն էր: Հաճախ խաներից գնում էր, երբեմն էլ խաներն իրենք էին կաթողիկոսին նվիրում գերիներին: Ծանր հոգս էր նրանց կերակրելն ու տուն ուղարկելը: Կային նաև կանայք, որոնք հղիությունից հետո էին գերեվարվել, ու գերության մեջ ծննդաբերեցին: Կաթողիկոսը արու զավակների անունը Մուխան էր կնքում: Այս անունը շուրջ 200 տարի գոյատևվեց Արցախում: Կաթողիկոսը լուծեց նաև Շամախու հայերի խնդիրը: Ապստամբության պատճառով Նադիրը հիմնահատակ քանդել, ավերել էր Շամախին ու նրանց համար նոր տեղ չէր տալիս: Դժվարությամբ կաթողիկոսը համոզեց, որ հին Շամախուց ոչ հեռու, հարմար տեղում հայերին նոր բնակավայրի թույլտվություն տա: Աբրահամ կաթողիկոսը հայր Թովմասին հանձնարարել էր ներկա լինել թագադրության ծեսին, որպեսզի հետագայում պատմի իրեն: Մուխանքի ժողովի մասնակիցների թվում էր եւ Հակոբ Շամախեցին՝ Աբրահամ Կրետացուց հետո հաջորդ Հայոց հայրապետը: Իսկ թագադրումը տեղի ունեցավ փետրվարի 26-ին: Թագը, որ ոսկի սաղավարտ էր, Նադիր շահի գլխին է դնում Զաքի միրզան: Այսպես Իրանում վերջացավ Սեֆևիների թագավորությունը և սկիզբ առավ Աֆշարների հարստությունը: Մինչ այդ՝ փետրվարի 23-ին, Աբրահամ Կրետացին մեկնեց և վեց օրից հասավ Դիզակ: Այստեղ նրան էր սպասում Աղվանից կաթողիկոս Ներսեսը, որի մասին Աբրահամ Կրետացին գրում է. «Անդ էր եւ Աղուանից կաթողիկոսն, որուն անունն էր Ներսես՝ այր խոհեմ եւ քաղցրաբարոյ, մնայր գալստեամբ իմոյ»: Հայոց հայրապետը Ներսեսի խնդրանքով դիմել էր Նադիր շահին, որպեսզի նա հաստատի Ներսեսի կաթողիկոսությունը Հայաստանի արևելքում, քանի որ ինքը ի վիճակի չէ այցելելու այդ տարածքները և հսկելու հոտը: Շահը համապատասխան թուղթ տվեց, որով

հաստատվում էր Ներսեսի Աղվանից կաթողիկոսությունը: Մի քանի օր Հայոց կաթողիկոսը մելիք Եգանի հյուրն էր: Եկան Խաչենի, Վարանդայի մելիքները, նվերներ մատուցեցին վեհապետին և խնդրեցին հյուր գնալ իրենց երկրները: Սակայն հայրապետը մերժեց: Բարիկենդանը միասին տոնեցին Տողում և Հադրութում, ապա «զաղուհացից սկիզբն երկուշաբթի չուեցի ի Հադրութ գեղէ»: Հետագայում Հայոց կաթողիկոսը այցելում է Թավրիզ՝ Նադիր շահի եղբորը՝ Հայաստանի, Վրաստանի եւ Ատրպատականի գլխավոր հրամանատար (սիպասխալար) Իբրահիմ խանին, նրան դիմում մի շարք կարևոր խնդիրներով: Նադիրն էր հանձնարարել, որ հարկ եղած դեպքում իր եղբորը դիմի: 1738 թ. վերջերին Իբրահիմ խանը առանց շահի գիտության արշավանք է ձեռնարկում դեպի Դաղստան, որտեղ ավարներից դաժան պարտություն է կրում Ախ-բյուրգ վայրում: Ճակատամարտում զոհվում է Գյանջայի Ուղուրլու-խանը (Զիյադ-օղլի դաջարական ցեղից): Իբրահիմին այս քայլին էր դրդել Թավրիզի Սամայ-բեկը: Որպես պատիժ առգրավեցին նրա ունեցվածքը՝ 220 հազար ոչխար, 30 հազար ձի, 20 հազար ցուլ, 7 հազար ուղտ, երկու հազար եզ[387]:

Նադիր շահը, հակառակ ռուսների, ըստ արժանվույն գնահատեց արցախցիների թուրքերի դեմ տարած հաղթանակները և ծնունդ տվեց Խամսայի մելիքություններին, որը փաստորեն Ղարաբաղում վարչատարածքային ինքնավար կարգավիճակ էր: Նադիրը վավերացրեց այն, ինչ 15 տարիների հերոսական պայքարի շնորհիվ ձեռք էր բերել Ղարաբաղի ազատատենչ հայությունը: Խամսայի (հինգի) մելիքությունների կենտրոնը Տող ավանն էր, որտեղ որպես հյուր այցելել էր և Նադիր շահը: Շահը իր ախոյան Գանձակի խանին թուլացնելու համար (վերջինս Մուղանի դաշտում, Մեծ Ժողովին, դեմ էր Նադիրի շահ դառնալուն) սահմանային փոփոխություններ է մտցնում, Խամսայի մելիքներին հանձնարարում այլևս կախում չունենալ Գանձակի խանից, նրանց սահմանները հաստատում Գանձակից մինչև Արաքս գետը: Մելիք Եգանի տան դռան արձանագրության մեջ նշված են այն մելիքությունները, որոնք ընդգրկված են «Խամսայի» մեջ. «մէկն Թալիշ (Գյուլիստանի մելիքություն), մէկն Չմբայ (Զրաբերդ), մէկն Խաչեն, մէկն Վարանդայ, մէկն Քոչեզ (Քաշաթաղ), մէկն Տուզաղ (Դիզակ), այսդունդ (սրանց) խանը (Նադիրը) պակլարպէկայ տեղ արխտ ինձ...»: Փաստորեն Եգանը բեկլարբեկի տիտղոս է ստանում և Շիրվանի, Երևանի ու Գանձակի բեկլարբեկներին հավասարազոր պետք է ենթարկվեր Թավրիզում նստող Իբրահիմին (Նադիրի եղբորը): Նադիրը Գանձակի խանին ավելի թուլացնելու նպատակով Կուր-Արաքսի դաշտավայրից Խորասանի Սերեկս գավառը գաղթեցրեց ջիվանշիր, օթուզիքի, քաբիրլի խաշնարած թափառական ցեղերին, որոնց մեջ էր և սարուջալիի տոհմը: Այսինքն, գաղթեցրեց այն վայրերը, որտեղից որ XVII դարի վերջերին թափանցել էին Անդրկովկաս: Այս ցեղերը հանդիսանում էին Գանձակի խանի հիմնական ուժն ու հաճախ էին միանում Դաղստանի ավարառու ցեղերի արշավներին ու միասին ասպատակում հայկական ու պարսկական բնակավայրերը: Մելիք Եգանի արձանագրության մեջ Խամսայի կազմում նշված էր և Քաշաթաղը (այժմ ԼՂՀ), որն ընդգրկում էր Հակառու գետի հովիտը: Քաշաթաղը հնում միշտ մտել էր Սյունիքի իշխանության կազմում[388], և առաջին անգամ է կցվում Ղարաբաղին, և Օրբելյան պատմիչը այս գավառում նշում է 53 գյուղ: Իսկ Կովսական (Զանգեզուր) գավառը (այժմ ԼՂՀ) վաղուց արդեն Դիզակի մելիքության մի մասն էր: Աբրահամ Կրետացին ոչինչ չի գրում Մուխանքի ժողովին մելիք Եգանից բացի Խամսեյի մյուս մելիքների մասնակցության մասին: Եթե Մելիք Եգանի հետ մյուս մելիքները ևս ներկա գտնվեին Մուխանքի ճամբարում, ապա հենց եղեգյա վրանում կարող էին միաբանություն հաստատել: Կաթողիկոսը հասավ նրան, որ Նադիրը արգելեց Գանձակի խանին այսուհետ կազմակերպելու հայկական բնակավայրերի թալանը: Սակայն ավելի կարևոր էր տեղական ինքնակառավարման համակարգի ստեղծումը, ասենք՝ իրական բեկլարբեկության հիմնումը, ինչը չարվեց: Ըստ երևույթին, մելիք Եգանը ժողովի օրերին այդպես էլ հնարավորություն չունեցավ մոտիկանալու Իրանի ընտրյալին: Իսկ Աբրահամը մելիքին չհատուցեց իր պարտքը Եղվարդի ճակատամարտի օրերին Նադիրին էջմիածնի նկատմամբ համապատասխան քաղաքականություն կիրառելու համար: «Նադիրն իր երախտագիտությունը հայ մելիքների վերաբերմամբ արտահայտեց և նրանով, որ հաստատեց նրանց իրենց հին ժառանգական իրավունքների մեջ, որոնցից ամենագլխավորն այն էր, որ մելիքները կախում պիտի ունենային միմիայն պարսից շահից, - գրում է Լեոն, շարունակելով, - սրա ամենախոշոր ապացույցն այն է, որ հենց Նադիրի ժամանակներից էլ Ղարաբաղի լեռնաստանը պատող մելիքական ցանցի մեջ զատվում և առաջին կարգն են անցնում հինգ մելիքություններ, որոնք իրենց ստացած դիրքով դառնում են ամբողջ երկրի ճակատագիրը տնօրինողներ, պատմություն շինողներ, հատկացնելով մյուսներին երկրորդական, աննշան դեր եւ դիրք: Այդ հինգ մելիքությունների երկիրը կոչվում է Խամսա կամ Խամսայի երկիր, որ նշանակում է «Հինգի երկիր»[389]: Նադիրը այն բռնապետը չէր, որը բավարարվեր ձեռք բերածով և սկսեր զբաղվել Իրանի հզորությունը ամրապնդելու, այն համակարգի վերածելու խնդրով: Նրա երակներում հոսում էր մեծ ճանապարհների ավազակապետի անհանգիստ արյունը:

[387] Петрущевский, Очерки по истории..., Л-д, 1949, цтр. 115.

[388] Ստ. Օրբելյան, Սյունիքի պատմությունը, Եր., 1986, էջ 401 :
[389] Լեո, III հատոր, գիրք 3-րդ, էջ 255-256:

Նադիրը պատերազմողի իր մեծ տաղանդին զուգահեռ, ինչպես հատուկ էր մեծ նվաճողներին, ուներ և մեծ թերություններ: Քանի նա կենդանի էր եւ ունակ, պետք է անընդհատ պատերազմեր ու նորանոր երկրներ նվաճեր: Նադիրը, բացի մարտավարական ու ռազմավարական ունակություններից, օժտված էր նաև մարդկանց կարողությունները ճանաչելու և նրանց օգտագործման ճիշտ տեղը որոշելու ընդունակությամբ, որը պակաս կարևոր խնդիր չէր երկիրն ու զորքը կառավարելու համար: Հայոց կաթողիկոս Աբրահամ Կրետացու խորհրդով Նադիրն իր մոտ ծառայության է վերցնում Թուրքիայի դեմ Գարդմանքի սղնախի կռիվներում աչքի ընկած երկու հերոս եղբայրների՝ Ամիրին և Զոհրաբին, որոնք, մասնակցելով պարսից արշավանքներին, որպես զորավարներ՝ մեծ հաջողության են հասնում, շահից ստանում խանական տիտղոսներ ու կալվածքներ: Ամիրխանը դառնում է Իրանի պատերազմի նախարարը, իսկ Զոհրաբխանը՝ Նադիրի թիկնապահ զորքի հրամանատարը[390]: Այս հայ զորավարները միշտ կապեր էին պահպանում Ղարաբաղի մելիքների հետ:

1737 թ. Նադիրը ներխուժում է Աֆղանստան, գրավում Հերաթն ու Ղանդահարը: 1739 թ. նա ջախջախում է Մուհամմադ շահի բանակը, գրավում Դելին, կողոպտում Հնդկաստանը, Իրանի գանձարանը լցնում ոսկով: Նադիրը երեք տարի Իրանի ժողովրդին ու խաներին ազատում է պետությանը հարկեր վճարելու պարտականությունից: Նադիրի տիրապետությունը ընդգրկում էր Հնդկաստանից մինչև Կովկասյան լեռները, Միջին Ասիայից մինչև Պարսից ծոցի ափերը: Նա ձեռք է բերում «Երկրորդ Ալեքսանդր» մականունը: Սակայն այս աշխարհածավալ տերությունը հենված էր մեկ մարդու՝ շահի ուսերին: Բավական էր, որ նա չլինի, գետին ընկած ապակու նման այն ևս փշուր-փշուր կդառնա: Շուտով Նադիրի վերընթացին հետևում է և կտրուկ անկումը: Դրա սկիզբը Դաղստանյան պատերազմն էր: Լեռնականներին պատժելու նպատակով նա Դերբենտից շարժվեց երկրի խորքերը, որտեղ և սոսկալի պարտություն կրեց: Իրեն զգացնել տվեց և միանձնյա կառավարման ձևի սնանկությունը: Նադիրը ավելի կասկածոտ ու դյուրագրգիռ էր դարձել: Նա կտրել էր տալիս հազարավոր մարդկանց գլուխներ, ամեն տեղ իր դեմ դավադրություն էր տեսնում: Շուտով շահը դարձավ պալատական ինտրիգի զոհը: Նրան հավատացրին, որ հարազատ որդին՝ Ռիզա-Ղուլի Միրզան, իր դեմ դավադրություն է կազմակերպում: Առանց քննելու խնդիրը, Նադիրը հրամայում է իսկույն կուրացնել թագաժառանգին: Սակայն երբ հետաքննում է ու պարզում, որ իր սիրելի որդին ոչ մի դավադրություն էլ չի սարքել իր դեմ, նա ներքին տառապանք-

[390] Բակուր Կարապետյան, Հարյուր տարվա երկխոսություն, գ. 2, եր., 1996, էջ 72-73:

ների ցանցն է ընկնում: Դառնում է ավելի կասկածոտ, ավելի դյուրագրգիռ եւ դաժան: Աճում են և նրա նկատմամբ դժգոհությունները: Նադիրը կորցնում է հմուտ զորավարի ու ռազմավարի ունակությունները: 1747 թ. մերձավորները ննջարանում սպանում են Իրանի շահին: Նադիրը մեռնում է 47 տարեկան հասակում՝ իր հետ մեռցնելով և Մեծ Իրանը:

Նադիրի համակրությունը շահած մելիքների թվում էր և Զրաբերդի մելիք Ալլահ-Ղուլին, որը պատերազմներում դրսևորած անձնվիրության և քաջագործությունների համար շահից ստացավ «սուլթան» կոչումը: Զրաբերդցին իր հերոսությամբ աչքի էր ընկել թուրք սերասկյար Քեփրուլու Օղլի Աբդուլա փաշայի դեմ Նադիրի մղած ճակատամարտում: Արցախի մելիքները, վերահաստատվելով իրենց ժառանգական իրավունքների մեջ, կախում ունեին միմիայն պարսից շահից: Գյուլիստանի մելիքությունում իշխում էին Մելիք Աբովյանները, որոնց նախահայրը հանդիսանում է Սև Աբովը: Նրա ժառանգները մելիքության կենտրոն են դարձնում Գյուլիստան գյուղը: Սեւ Աբովի որդուն՝ Մելիք Բեկլար Ա-ին հաջորդում է Մելիք Աբով Բ-ն, որին Կաղ Աբով էին ասում: Նա մեծ անուն հանեց իր քաջագործություններով: Անընդհատ գյուղեր ու նոր տարածքներ գրավելով Գյուլիստանի սպարապետ Աբրահամից, իշխող դիրք է գրավում Մռավ լեռան արևելյան հատվածում: Այս քաջ մելիքին հաջորդում է որդին՝ Մելիք Իսախանը, որից հետո՝ Մելիք Բաղրը, որի անունը հիշատակվում է բազմաթիվ վավերագրերում: Նրան պետք է հաջորդեր որդին՝ Մելիք-Հովսեփը, սակայն մանկահասակ լինելու պատճառով խնամակալ է կարգվում հորեղբայրը՝ Նադիրի պատերազմներին մասնակից Մելիք Թամրազ Բ-ն, որը առիթ էր որոնում մելիքական իրավունքից զրկելու զարմիկին: Նա մի անգամ պարսից հարկահաններին պատմում է, որ պատանի մելիքի մոտ նախնիներից ժառանգած մի թանկարժեք հրացան կա, որը Իրանի շահի գանձարանին է վայել: Հարկահանը պատանի Հովսեփից պահանջում է հրացանը: Արդեն 18-ամյա դարձած մելիքը ստիպված տալիս է նախնիների հիշատակը: Մայրը հանդիմանում է որդուն թուլակամության համար: Զրաբերդի մելիք Ադամի օգնությամբ Թարթառի կիրճում պատանի Հովսեփը հարձակվում է հարկահանների ու նրանց թիկնապահ ջոկատի վրա, կոտորում և ետ վերցնում հրացանը: Ապա նա Զրաբերդի նույն մելիքի օգնությամբ հանկարծակի հարձակումով ձերբակալում է իր հորեղբորը՝ Կյուլ-մելիք (Գայլ-մելիք) կոչվող Մելիք-Թամրազ Բ-ին ու նույն տեղում հսկայական սոսի ծառից կախում նրան: Հետագայում այդ ծառը ժողովուրդը կոչեց «Արյունոտ չինար»: Մելիք Թամրազը, որն իր ձեռքն էր գցել մելիքությունը, Պարսից շահի կողմից հաստատվել էր մելիքական աթոռին: Նրա անունը պահպանվել է Գետաշենի վերին (հյուսիսարևելյան) ծայրում Կուրակի ձախ ափին Ընապատ

(Անապատ) կոչվող սբ. Մինաս եկեղեցու մուտքից վեր վիմագրությունում. «Այս է Մելիք Թամրազին (Կիւլ Մելիք) որդի Սարուխանին եխպար Եաւրին, Քապաճին Աբովի որդի, ... մելիք Օսեփին ...Պեհեզ Սարգսին, Պեհեզ»[391]: Եկեղեցին որպես կուսանաց անապատ է ծառայել, որտեղ մնում էր Մելիք-Բեգլարյանների տոհմից մի կույս: Հանուն այս կույսի էլ Մելիք-Թամրազի որդին նորոգել է եկեղեցին: Իսկ կուսանոցի հյուսիսային պատին պահպանվել է «Կամավն Աստուծոյ շինեցինք խորանս տանուտէրն Ուլուխան, աշխատողք երկու տէր Դաւիթն, Սպարապետն, պտղն, առ հասարակ ժողովուրդքն, թվ. :ՌԵԸ: (1659)»[392]: Այս արձանագրությունները ևս վկայում են, որ Գետաշենի ենթաշրջանը մտնում էր Թալիշ-Գյուլիստանի մելիքության մեջ:

Վարանդայում Մելիք Բաղիից իշխանությունը ժառանգում է նրա որդին Մելիք-Շահնազարյան մելիք Հուսեինը: Նա ևս իր զորախմբով մասնակցել էր Նադիրի արշավանքներին և իր հավատարիմ ծառայության համար ազատվել արքունիքին հարկ վճարելու պարտականությունից: Այս մասին է վկայում Ավետարանոցում մինչև հիմա պահպանված տապանաքարի արձանագրությունը. «Այս է տապան Մէլիք Շահնազարի որդի Մէլիք Յիսէին, թվ.: ՌԵՁԵ: (1736) Ոգեմ զբանս գովեստի, ի վերայ մելիք Հուսեյնի, զոր գրեցի այս տապանի: Սա էր տէր Երկրին Վարանդայի Լե (35) մասն գեղի. Սա էր հացով, սեղանով լի, ողորմեր ամեն ազգի, կերպարանքն էր գովելի, թագ պարծանք հայոց ազգի, յոյժ կոտորեաց ազգէն տաջկի (թուրք), պատերազմեաց յետ օսմանցի, սա ոչ ետ հարկ թագավորի, ամուր պարիսպ էր աշխարհի, որ է Եաշն թվին :ՌԵԾԸ: (1709)»[393]: Քաջ մելիքին 1736 թ. փոխարինում է Մելիք-Բաղրի որդին Մելիք-Միրզաբեկը: 1744 թ. նրա մահից հետո մելիք է կարգվում Մելիք-Հուսեյնի որդին Մելիք-Հովսեփը, որը թույլ կամքի տեր, հեզաբարո, ֆիզիկապես թույլ ու կաղ, բայց գրասեր ու խելացի մարդ էր: Նադիր շահի օրոք տեղի են ունենում մի շարք իրադարձություններ, որոնք բախտորոշ են դառնում Խամսայի (Ղարաբաղի) համար:

Նադիրի մոտ Առանից (Կուր-Արաքսի դաշտ) Խորասան արտաքսված սարուջալու ցեղից ոմն Փանահ-Ալի, որպես չառջի (մունետիկ) ծառայության է մտնում շահի մոտ: Մի հանցանքից հետո այս մունետիկը, վախենալով Նադիրի պատժից, իր ազգակիցների հետ փախչում է շահի ճամբարից դեպի Առան, որտեղ միանալով Զար-Բելականի ավարների հետ, ավազակային խմբերով թալանչիական հարձակումներ է գործում Կուրից հարավ ընկած բնակավայրերի վրա: Նադիրը Շաքիի և Շիրվանի խաներին հանձնարարում է ծերբակալել ավազակապետ Փանահին: 1746 թ., տեղեկանալով Նադիր Շահի սպանության մասին, 200 ավազակների հետ Փանահը գալիս է դաշտային Ղարաբաղ, սկզբում Զրաբերդի տիրոջ թույլտվությամբ հաստատվում է Թարթառի ստորին հոսանքում Թարթառ-բազար կոչվող բնակավայրում, որի համար հարկ էր հավաքում իր ցեղակիցներից և վճարում Զրաբերդի մելիք Ալլահ-Ղուլի սուլթանին: Խորասանից Փանահի մոտ են վերադառնում նրա ցեղակիցները: Ձմռան ամիսներին այս թափառականները դաշտավայրի գետնափոր խորշերում էին անցկացնում, իսկ ամռանը ոչխարի հոտերով քոչում Մռավի լեռնային արոտները, որի համար Զրաբերդի ու Խաչենի մելիքներին «տասնորդ» կոչվող հարկ էին վճարում: Հայ մելիքներին շահավետ էր մի այսպիսի հարկատու ունենալը, ուստի Զրաբերդի մելիքը, իր հովանու տակ առնելով Փանահին, հրաժարվում է նրան Շամախու խանին հանձնելուց: Ըստ ավանդության, Փանահի նախնիներից մեկը, որը շեկ էր, Սարուջայ-Ալի անունն էր ստացել, որի անունն էլ մնում էր տոհմի վրա: Փանահը իր ավազակային խումբը մեծացնելով Խորասանից վերադարձող ցեղակիցներով, օգտվելով երկրում տիրող անիշխանությունից, թալանի էր ենթարկում Շաքիից մինչև Նախիջեւան գտնվող բնակավայրերը, մեծ հարստություն դիզում: Ամուսնանալով քաբիրլի ցեղապետի դստեր հետ, մեծ աջակցություն է ձեռք բերում, ավազակապետի դիրքից անցնում տիրապետողի դիրքի ու այսուհետ նստակյաց կյանք վարում: Նա ամրանում է հինավուրց Բայաթ բերդում, այն դարձնում իր ասպատակությունների հենակետը: Շիրվանի խան Հաջի-Չելեբին իր զորքով անցնում է Կուրը միանալով Խամսայի մելիքների հետ, պաշարում է բերդը նպատակ ունենալով պատժել այս ավազակապետին: Հաջի-Չելեբին ծագումով հայ էր: Նրա նախնիներից էր Բարսեղ անունով քահանան, որը XVII դարի վերջերին ապրում էր Շիրվանի Ղաբալա (Կաբալա) գավառի Սոգութլու գյուղում: Նա Հերեթ-Շաքիի տեր Բագրատունիներից էր սերում և տեղի մահմեդականներից Ղարա-քեշիշ (Սև քահանա) անունն էր ստացել: Ինչպես պատմում է Եսայի Ջալալյան պատմիչը[394], Բարսեղը գնում է Սպահան, ապացուցելով իր իշխանական ծագումը, շահից մելիքական ֆիրման է ստանում: Սակայն նրա հակառակորդ Կութկաշենի տեր Մուհամմեդը, որը ևս նույն տոհմի մահմեդականացված ճյուղից էր, խանգարում է Բարսեղին հիմնելու իր մելիքությունը: Բարսեղը ևս մահմեդական դարձավ: Այս Բարսեղի որդին էր Ղասաբ Կուրբանալին (մսավաճառ Կուրբանալին): Սրա որդին Հաջի Չելեբին հզորացավ, թուրքերի օգնությամբ դարձավ թե Շիրվա-

[391] Մ.Բարխուտարյանց, Արցախ, էջ 171:
[392] Ս. Բարխուդարյան, Դիվան հայ վիմագրության, պր. 5. Եր., 1982, էջ 248:
[393] Նույն տեղում:

[394] Եսայի Ջալալյան, Պատմութիւն կամ Յիշատակ ինչ ինչ անցից՝ դիպելոց յաշխարհին Աղուանից, Շուշի, 1839թ., էջ 32:

նի և թե Շաքիի տերը[395] («Հաջի» անունը հավաստում է, որ նա մահմեդականություն ընդունելուց հետո Մեքքա էր գնացել): Բայաթի բերդը գրավել Հաջի Չելեբիին չի հաջողվում: Փանահը իր այս հաջողությունից հետո հպատակություն է հայտնում Թավրիզի սարդարին, կաշառքի միջոցով նրանից ձեռք բերում խանական կոչում: Հայ մելիքները, անհանգստացած իրենց հարևանությամբ այսպիսի ավազակապետի գոյությամբ, դիմում են Քարթլիայի իշխան Թեյմուրազի (1744-1762) և նրա որդու՝ Կախեթի իշխան Հերակլի (1714-1798) օգնությանը: Թեյմուրազն ու Հերակլը ևս մեծ ծառայություն էին մատուցել Նադիր շահին, վերահաստատվել իրենց երկրներում: Նրանց նախաձեռնությամբ վրաց-հայկական մերձեցում էր սկսվել: Այս առիթով Լեոն գրում է. «Պարսկական անիշխանության սկզբից երկու թագավորները սկսեցին ամրացնել իրենց դիրքը: Նրանք գործում էին թե նուրբ քաղաքականությամբ եւ թե զենքով: Քաղաքական տեսակետով՝ նրանք ավելորդ համարեցին պաշտոնապես ջնջել իրենց «վալի» տիտղոսը, որ ցույց էր տալիս, թե նրանք պարսկական փոխարքաներ են միայն: Այդ չէր արգելում, որ Արեւելյան Վրաստանը լինի ոչ միայն անկախ, այլեւ բարձրացնի իր քաղաքական հեղինակությունն ամբողջ Անդրկովկասում: Քարթլինիայի եւ Կախեթի արշավանքները շրջապատի մահմեդական ազգերի դեմ հաղթական էին մեծագույն մասամբ: Հայերն այդ հաղթությունների ազդեցության տակ աշխատում էին, որ քրիստոնյա տիրապետությունն ավելի եւս ուժեղանա եւ տարածվի նաեւ Վրաստանի սահմաններից դուրս»[396]: 1749 թ. օգոստոսին Խամսայի մելիքների հորդորանքով Գանձակի և Երևանի պարսից կառավարիչները դիմում են բեկլարբեկ Թեյմուրազին՝ Փանահ-Ալիի դեմ համատեղ պայքարի առաջարկով: Փանահը մինչ այդ, հավաքելով Մուղանի դաշտի թափառական ցեղերին, պաշարել էր Գանձակը: Թեյմուրազը այս արշավանքին մասնակցելու համար խաներից նախ պահանջեց 5 հազար, ապա և 40 հազար ռուբլի: 1750 թ. գարնանը Թեյմուրազն ու Հերակլը արշավեցին դեպի Գանձակ: Վրացիներին էր միացել նաև Գյուլիստանի մելիք Թամրազը, որի հետ էր նաև Եսայի կաթողիկոսին փոխարինած Երիցմանկանց վանքի կաթողիկոս Ներսեսը: Փանահը ստիպված էր արագ հեռանալ Գանձակի մատույցներից: Վրացական բանակը սկսեց հետապնդել Փանահին: Պարտավի մոտ վրացիք, հանկարծակի հարձակվելով, ջարդեցին թարաքամա ցեղի առաջնորդ Մամադ բեկի զորքը, ապա Բարգուշատում շրջապատեցին Փանահին: Խորամանկ Փանահը դիմեց հին ու ամենակարող միջոցին՝ կաշառքին. փրկագին և թանկարժեք ընծաներ ուղարկելով Թեյմուրազին: Վրացի իշխանն ու Փանահ

[395] Ռաֆֆի, էջ 210:
[396] Լեո, 3-3, էջ 275:

Ալին, հակառակ հայ մելիքի կամքի, դաշինք կնքեցին: Այս դեպքերը մանրամասնորեն նկարագրել է վրացի ժամանակագիր Պապունա Օրբելիանին. «...Փանահխանի զորքը Գյանջան այն աստիճանի էր հասցրել, որ բերդից զատ ոչ մի տեղ ոչ մի շինություն չէր թողել, նույնիսկ մզկիթները քանդել էր»[397]: Վրաց զորքին միացավ «Սղնախի մելիքը (Գյուլիստանի մելիք Թամրազը) եւ Գանձասարի հոգեւոր տերը (Աղվանից Ներսես կաթողիկոս) մատուցին արքաներին ընծաներ եւ հանձն առան ծառայել ու զորքի համար բերեն մթերք ու պարեն»[398]: Փանահին ու նրա քոչվոր ցեղակիցներին հետապնդող վրաց զորքը իջևանում է Տողում, այստեղ թողնելով պարենն ու հրետանին, շարժվում դեպի Բարգուշատ և Արաքս: «Գնացինք Սղնախից եւ ուղղվեցինք այն կողմն, որ Փանահ խանի կայանն էինք ենթադրում, սակայն Փանահը իսկույն եւ եթ փախել էր, - գրում է Օրբելիանին, - երկրորդ օրն արքաները մեկնեցին, ուր Փանահ խանի խրամատն էր գտնվում, Սղնախի ծայրին՝ Թողում (վրաց ժամանակագիրը մելիքանիստ Տող ավանն ի նկատի ուներ, - Բ.), ուր Փանահը թողել էր թոփխանան ու զինարանը (ջաբախանան): Եկավ Թողի մելիքը (Մելիք Եսային), որը մեծ զորքով գտնվում էր Փանահի մոտ եւ խնդրեց իր հանցանքի ներումն եւ հանձն առավ ծառայել արքաներին: Ներեցին նրա հանցանքը, հրամայեցին Սղնախներին զորքի վեց օրվա պարեն տալ եւ պարտավորեցրին նրան գնալ դեպի Բարգուշատ՝ Փանահի փախած քոչվորների դեմ: Փանահին քիչ մարդկանցով նկատեցին Խոդափերինի կամրջի վրա, ...իր քոչվորներին թողեց, փախավ. քիչ մարդկանցով հանդերձ ազատվեց: Արքաներն իջան Արազի ափին, զորքը գնաց եւ ավերեց Մուղանի դաշտի (չոլի) վերին մասը... վրացիներս այնքան ավար բերինք, որ առաջինից շատ էր, ավարն այնքան շատացավ, որ նրա պահելը ոչ ոք ի վճակի չէր: Երկու շահով ոչխար էինք ծախում եւ հինգ աբասով՝ կով, երկու մինալքանով՝ գերի, երեք հազար գերի ետ վերցրին՝ փրկանք տալով: Մերոնք դարձյալ եկան Թող»[399]: Այդ ժամանակներում Ղարաբաղում սկիզբ են առնում ներքին գժտություններ, որի հետևանքով լեռնային երկրամասը քայքայում է ապրում: Այս դժբախտության սկիզբը Վարանդայում տեղի ունեցած դեպքերն էին: Մելիք Հովսեփի կրտսեր եղբայր Շահնազարը, որն, ի տարբերություն ավագ եղբոր, բարձրահասակ էր, գեղեցկադեմ ու չափազանց փառամոլ, ձգտում էր եղբորից խլել մելիքությունը: Մելիք Հովսեփն ու Շահնազարը խորթ եղբայրներ էին: Նրանց հայրը Աննա-Խաթունի մահից հետո ամուսնացել էր Նախիջևանի

[397] Պապունա Օրբելիանի, «Քարթլիի անցքերը, 1759», Մելիքսեթբեկ, Վրաց աղբյուրները..., հ. Գ, էջ 127 (այսուհետ՝ Մելիքսեթբեկ, վրաց...):
[398] Մելիքսեթբեկ, վրաց..., էջ131:
[399] Նույն տեղում, էջ 138:

խանի դստեր՝ Զոհրա խանումի հետ, որից էլ ծնվել էր Շահնազարը[400]: Հավանաբար, հենց թրքուհի մոր դաստիարակությունն էլ թողել էր իր կնիքը որդու վարքի վրա: Մի անգամ գիշերը Շահնազարը հարձակվում է եղբոր տան վրա, իր ձեռքով սպանում եղբորը, ոչնչացնում նրա ողջ ընտանիքը: Ավետարանոց գյուղը, որը հայ ազատագրական պայքարի կենտրոններից էր, վերածվում է Ղարաբաղի հզորությունն ու միասնությունը կործանող միջոցի: Մելիք Հովսեփը Խաչենի տիրակալ Ջալալյանների տան փեսան էր: Իրենց սիրելի փեսայի, նրա ընտանիքի ոչնչացումը պատճառ է դառնում, որ այս ազդեցիկ տոհմը լցվի վրեժխնդրությամբ ոճրագործի նկատմամբ: Խամսայի մելիքները միաբանվում են պատժելու եղբայրասպանին եւ վերականգնելու արդարությունը: Իրեն մելիք հռչակած Շահնազար Բ-ն ամրանում է Ավետարանոց բերդում, որը պաշարում է Գյուլիստանի մելիք Հովսեփի, Զրաբերդի մելիք Ալլահ-Ղուլի սուլթանի (Մելիք-Հարություն), Խաչենի մելիք Ալահվերդու և Դիզակի Եսայու միացյալ զորքը: Սակայն մոտ էր ձմեռը, ու մելիքները որոշում են հեռանալ՝ գարնանը հարձակումը վերսկսելու վճռականությամբ: Մելիքները վախեցել էին, որ իրենք ևս հերթով նման հեղաշրջման զոհ կդառնան, ուստի որոշեցին հենց տեղում ոչնչացնել այս գաղափարը: Անշուշտ, Խամսայի մելիքները այս խնդրում ևս չկարողացան ճիշտ գնահատել իրավիճակն ու, քաղաքական շրջահայացություն ու ճկունություն հանդես բերելով, միանգամայն այլ ելք ու լուծում գտնել: Ինչ խոսք, որ զգացնել էր տալիս նաև գահերեց իշխանի պակասը: Անշուշտ, Շահնազարը իր կազմակերպչական ունակություններով զգալիորեն գերազանցում էր ոչ միայն իր թուլամորթ եղբորը, այլև մյուս մելիքներին: Երկրամասի ընդհանուր շահերը պահանջում էին, որ մելիքները հաշտվեն եղելության հետ և ընդունեն նոր իշխանին: Ի վերջո, եթե Մելիք-Հովսեփը թույլ չլիներ (իսկ իշխանը թույլ լինելու իրավունք չուներ), հազիվ թե եղբայրը կարողանար նրա կենդանության օրով տիրանալ նրա գեղեցկուհի կնոջը: Ինչպես երևում է, Շահնազարը վաղուց էր տիրացել ողջ Վարանդային, մնում էր ձևական կողմը, այն է՝ վերացնել օրինական մելիքին: Խամսայի շահերը պահանջում էին, որ մելիքները բանակցեին Վարանդայի նոր տիրակալի հետ ու նոր դաշինքով մի ամուր պարիսպ ստեղծեին Ղարաբաղում՝ պաշտպանվելու խաշնարած թաթարական ցեղերի, կովկասյան ավարառուների ասպատակություններից: Սակայն պարզամիտ ու տաքարյուն մելիքները, առանց երկար մտածելու, դիմում են զենքի ու այդպես դնում երկրամասի քայքայման ու կործանման սկիզբը: Սարուջալու ցեղի պետ Փանահ-Ալին, որի հայացքը դեպի լեռնային Ղարաբաղն էր՝ նրա անառիկ բերդերից մեկում ամրանալու երազանքով, Բայաթից տեղափոխվում է

[400] Ռաֆֆի, էջ 198:

Խաչենագետի վրա գտնվող Արցախյան Տիգրանակերտ[401] բերդի ստորոտում գտնվող Շահաղբյուրի ամրոցը, որը Վարանդայի մելիքության սեփականությունն էր: Այս ամրոցը տիպիկ հայկական միջնադարյան մելիքական ապարանք է՝ թաղածածկ սրահներով, կամարակապ մուտքերով, բարձր պարիսպներով, որոնք անկյուններում միանում են կլոր աշտարակներով: Այստեղից Փանահը ընդհարումներ է սկսում Զրաբերդի և Գյուլիստանի մելիքների հետ՝ ձգտելով քանդել արցախյան միասնությունը: Եվ ահա Վարանդայի նոր տերը՝ եղբայրասպան Մելիք-Շահնազար Բ-ն, դաշնակցում է Խամսայի ոխերիմ թշնամի Փանահի հետ, համատեղ ուժերով հարձակվում Խաչենի վրա, ի վերջո հաղթում, այս մելիքությունը խլելով Ջալալյանների տոհմից, հանձնում մեկ այլ դավաճանի՝ Խնձրիստան գյուղի տանուտեր Միրզախանին: Այսուհետ Ղարաբաղի երբեմնի հզորությունն արդեն ջլատված էր: Դիզակը կտրված էր Զրաբերդից ու Գյուլիստանից:

Այս տարիներին Գյուլիստան գյուղում կառուցվում է Աբրահամ հարյուրապետի հետնորդների ապարանքը: Քարակիր ու կամարակապ ապարանքի արձանագրությունը հայտնում է. «Շնորհիւն Աստուծոյ շինեցաւ ապարանս ի թվ. ՌՄԱ. (1752) ես Յակոբոս ծառայ Աստուծոյ իշխող գեղոյս որդի Աբրահամ ըսպարապետին»: Ըստ երեւույթին, գյուլիստանցի Աբրահամը սպարապետություն էր անում Զրաբերդի Մելիք-Իսրայելյանների մոտ, իսկ Գյուլիստան գյուղը մնացել էր որպես Աբրահամ հարյուրապետի ժառանգների նստավայրը, որտեղ բնակություն չհաստատեցին գավառի նոր տերերը՝ Մելիք-Աբովյանները:

ՇՈՒՇԻԻ ԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Չնայած Դիզակի մելիք Եգանը (1716-1744 թթ.) բեկլարբեկի կոչում էր ստացել շահ Նադիրից և աչքի էր ընկել քաղաքագետի ու դիվանագետի ունակություններով, այնուամենայնիվ, չկարողացավ օգտվել պատեհ առիթից ու միասնական ինքնավար և կուռ պետական կառույցի վերածել Խամսան (Ղարաբաղը): Գուցե նա գերադասում էր հանգիստ ապրել հզոր Նադիրի հովանու տակ: Սակայն և դժվար է ասել, թե Եգանը չէր ցանկանա նման իշխանություն ստեղծել: Նա մինչեւ վերջ էլ մելիք մնաց: Ըստ երևույթին, Նադիրը բանավոր էր նրան բեկլարբեկ կամ խան կոչել, իսկ համապատաս-

[401] Այս բերդը հայոց արքա Տիգրան Մեծի հիմնած չորս Տիգրանակերտներից մեկն է, գտնվում է Մարտակերտ քաղաքից ոչ հեռու Շահաղբյուր վայրում, Իշխանասարի վրա: Տեղի թուրքերը այն անվանում էին Թառնակյուրտ, իսկ ղարաբաղցիները՝ Տկրակերտ:

խան փաստաթղթով (հրովարտակ կամ ֆիրման) դա չէր հաստատել, որի մասին էլ ոչինչ չի հաղորդում Աբրահամ կաթողիկոս Կրետացին: Եվ դա էր պատճառը, որ այս փաստը միայն մելիքի տան մուտքի պատին է արձանագրվել[402]: Նադիրը կամ ընդհանրապես պարսից իշխանավորները (իհարկե, սրանք արդեն այն հին պարսից իշխանների կամ շահերի ժառանգները չէին) շատ չէին վստահում հայ քրիստոնյաներին՝ նկատի ունենալով նրանց ազատագրական մղումներն ու հայոց թագավորության վերականգնման ձգտումները: Նադիրը չէր կարող չիմանալ XVIII դարի առաջին քառորդին Հայոց Սղնախների ազատագրական պայքարի ու Ռուսաստանի արքունիքի հետ սերտ կապերի մասին: Եթե մելիք Եգանը մահմեդականություն ընդուներ, հավանաբար, նման պաշտոնի կարժանանար: Բայց ինչպես դա կընդունեին մյուս մելիքները, եկեղեցին ու արցախահայությունը, անհայտ է: Վրաստանում իշխանները հեշտորեն հպատակվում էին, վալիություն ստանալու համար թլպատվում, մահմեդական անունով կնքվում, բայց մեծ մասամբ նրանք իրենց երկրում քրիստոնյա էին մնում, նման զոհողությամբ պահպանում իրենց երկրի ինքնավարությունը, իրենց եկեղեցում թագավոր օծվում: Շաքիում ևս տեղացի դարձած Բագրատունի իշխանական տան հետնորդները իրենց իշխանությունը պահպանելու համար մահմեդականություն էին ընդունում, թլպատվում, մահմեդական անուն ընդունում, բայց և անդառնալիորեն մոռանում իրենց ազգությունը, հավատքը, հայրենիքը...: Վրաց Անանուն ժամանակագիրը վկայում է. «Շաքիի խանի պապը Հաջի Չալաբ էր կոչվում, և այս Հաջի-Չալաբի հայրը հայ երեց էր, և ինքը՝ Հաջի Չալաբը, մահմեդականացել էր: ...Այս երկրում բնակվում են շատ քրիստոնյաներ, դավանությամբ հայեր՝ բացահայտ, և վրացիներ՝ գաղտնաբար, մահմեդականներից երկյուղ կրելու պատճառով»[403]: Հազիվ թե մելիք Եգանը չհասկանար այս իրողությունը: Ըստ երևույթին, մեղավորը երկրում ընդհանուր մթնոլորտն էր, ներքին անմիաբանությունը, իրենց ներսում որևէ մեկին գահերեց չընդունելը: Հետաքրքիր գնահատական է տալիս վրաց Անանուն «աշխարհագիրը» Արցախին նվիրված հատվածում. «Խամսան ունի մեծ ամրոց, շատ լեռներ, թեև ժայռոտ ու անտառոտ, եւ դաշտ էլ ունի ջրաբաշխ, հույժ բերքատու: Իր երկրում ջվանշիրը ի վիճակի է դուրս հանելու 2 հազար և 500 ռազմիկներ և հայերն ևս 4500: Այս Խամսայի մարդիկ, որոնք հայեր են, հույժ քաջարի են, ռազմատենչ եւ խիզախ: Եվ այս մելիքների միջեւ փոխադարձ նախանձի և թշնամության առաջացումը ջվանշերի (քոչվորի - Բ.) ձեռքը գցեց այս հայերին»[404]: Սղնախների

[402] Ս. Բարխուդարյան, Դիվան հայ վիմագրության, պր. V, էջ 181:
[403] Մելիքսեթբեկ, Վրաց... էջ 150:
[404] Նույն տեղում:

ժամանակ, երբ երկիրը գտնվում էր լեզգի եւ թուրք հակառակորդների աքցանում, մելիքներն ամեն կերպ խոչընդոտում էին Ավանի պես տաղանդավոր զորապետի հրամանատարությանը: Մարդկության պատմության մեջ միշտ զորեղ և հաղթող են հանդիսացել այն ժողովուրդները, որոնք միաբան ու միակամ են եղել, մեկ կենտրոնի ու պարզ գաղափարախոսության շուրջն են հավաքվել: Սակայն երբ նրանք այս կամ այն պատճառով կորցրել են միասնականությունն ու կազմակերպվածությունը, ներսից քայքայվել են, ու միշտ էլ գտնվել է այն հարևանը, որը ոտնատակ է տվել երկիրը, թալանել, ամայացրել այն: 1744 թ. մելիք Եգանի մահից հետո նրա ժառանգները՝ մելիք Արամն (1744-1745) ու մելիք Եսային (1745-1781) Խամսեի գահերեցության իրավունք չժառանգեցին ու միմիայն Դիզակի մելիքությունն էր նրանց տրված: Հենց այս հանգամանքն էլ հնարավոր դարձրեց թափառական խաշնարած ցեղերի մուտքը Արցախի սիրտը: Փանահը զգալով, որ դաշտավայրում չի կարող դիմադրել թշնամիներին, ծրագրում է, ի վերջո, մուտք գործել Արցախի լեռներն ու ամրանալ նրա անառիկ բերդերից մեկում: Այս դեպքում նա կարող է ապահովել խաշնարած ցեղի հոտերի անարգել շարժը դեպի ալպյան մարգագետինները, իսկ նրանցից գանձվող տուրքը ոչ թե կգնա հայ մելիքներին, այլ կհարստացնի իրենց իսկ գանձարանը: Թե չէ՝ եթե իրենք չտիրեն լեռներին, ապա մի օր էլ այս հայերը գարնանը կփակեն իրենց հազարավոր հոտերի ճանապարհը, այդ դեպքում արդեն խաշնարած ցեղերի գոյությունը ոչ մի իմաստ չի ունենա: Այդ ժամանակ էլ Մելիք-Շահնազարը, հանձինս Փանահ-Ալիի տեսնելով իր դաշնակցին ու փրկչին, առաջարկում է իր իշխանության տարածքում գտնվող Շուշի բերդը: Փանահը, ծանոթանալով տեղանքին, այս սարահարթում էլ տեսավ այն անխորտակելի բերդը, որի միջոցով կարող էր նվաճել ողջ Արցախը: Իհարկե, ընդամենը *25* տարի էր անցել Շուշիի սղնախի հզորության ժամանակներից, և, հավանաբար, նա շատ էր լսել այս անառիկ բերդի, նրա քաջարի պաշտպանների, օսմանյան զորքի պարտությունների մասին: Նա արդեն տեսնում էր, որ շատ քիչ բան էր պետք անել՝ վերականգնելու բերդապարիսպը: Մնացել էին Շուշիի հին գլխատները, մնում էր ամրապնդել հյուսիսային պարիսպները: Այստեղից հայացք ձգելով դեպի չորս կողմերը, Փանահը արդեն համոզված էր, որ այս բերդից նա կարող էր իշխել ողջ Անդրկովկասի՝ Գանձակի, Շիրվանի, Շաքիի, Վրաստանի, Հայաստանի վրա, հետո կհափշտակի Ազարբայջանը, ինչու չէ, նաև ողջ Իրանը, նրա թագը, թե չէ՝ ինչո՞վ է պակաս Սարուջալուն Ավշարից կամ Ղաջարից[405]: Փանահն ու Մելիք-Շահնազարը Արցախի բոլոր վայրերից Շուշի

[405] Ղաջար - Ջալաիրի ցեղ, որոնց Միջին Ասիայից Իրան էր տեղափոխել Չինգիզխանի թոռ Գուլակու խանը: Սուրտակը, որը Արղու խանի խնամակալն էր

հրավիրեցին հայ շինարարների՝ խոստանալով նրանց ազատել արքունական և հասույթի հարկերից: Բերդի ամրացման աշխատանքները սկսվեցին 1752 թ. ամռանը[406] (XIX դարի թաթար պատմիչ Միրզա-Ջեմալ Ջիվանշիրը բերդի հիմնադրումը համարում է հիջրայի 1170 թվականը (1759 թ.)[407]: Խորհրդային Ադրբեջանի պատմիչները քաղաքական նպատակներից ելնելով դիտավորյալ մերժում էին Շուշիի մինչ 1752 թ. գոյությունը ու համառորեն բերդի հիմնումը կապում իրենց ցեղակից Փանահ-Ալիի անվան հետ: Այսպես, Շուշինսկին գրում է. «Շուշի քաղաքի հիմնադիրը եղել է ղարաբաղցի Փանահ-խանը»[408]: Իսկ թե «ղարաբաղցի» ասելով ինչ է հասկանում հեղինակը, պարզ չէ: Ինքը՝ Փանահը, առաջին անգամ Արցախի հող է մտել 60 տարեկան հասակում: Նման հորջորջումները յուրահատուկ էին Խորհրդային Ադրբեջանի մյուս գիտնականներին ու պատմաբաններին, որոնք իրականացնում էին պատմական Հայաստանի տարածքները (առաջին հերթին՝ Արցախը և Ուտիքը) «ադրբեջանացնելու» պանթուրքական ծրագիրը: Սակայն այս երազանքը մատնված է անհաջողության, որովհետև հենց Առանի տարածքում «Ազերբայջան» անունով պետության ստեղծելն իսկ կեղծիք է, քանի որ հայտնի է, որ բուն Ատրպատական-Ազարբայջանը Արաքսից հարավ է գտնվում և Իրանի անբաժանելի մասն է կազմում: Շուշի բերդն ուներ երկու հիմնական մուտք՝ հարավայինը կոչվում էր «Երևանյան», որը բացվում էր դեպի Գորիս, Երևան ու Թիֆլիս տանող ճանապարհի վրա, հյուսիսային մուտքը կոչվում էր «Ջրաբերդի», հետագայում՝ «Գանձակ-Գյանջայի»: Պաշտպանական համալիրի վերակառուցումը անձամբ ղեկավարում էր Մելիք-Շահնազարը, որը շտապում էր իր նոր դաշնակցի հետ ամրանալ այստեղ և անխոցելի դառնալ Խամսայի մելիքների համար, հնարավորության դեպքում հարձակվել ու կործանել նրանց: Հայ շինարարները թե պարիսպը և թե աշտարակներն ու ապարանքները վերականգնելիս հարազատ էին մնում հայկական ավանդական ճարտարապետությանը: Հաճախ քարերի շարվածքը ասես ապառաժի շարունակությունն էր կազմում և ընդգծում ձեռակերտի ու բնության միասնականությունը: Դա ավանդական այն արվեստն է, որ իրար են փոխանցել Կաչաղակաբերդի, Խոխանաբերդի, Ջրաբերդի, Գյուլիստանի, Գտչաբերդի, Տողաբերդի, Գորոզաբերդի, Հանդաբերդի կառուցողների սերունդները: Տաժանակիր աշխատանքին շատերը չէին դիմանում: Ջուգահեռաբար վերանորոգում էին մելի-

ու Խորասանի և Թաբասարանի կառավարիչը, իր որդուն տվեց Ղաջար անունը, որն էլ անցավ ողջ ցեղին:

[406] Հակոբ Պողոսյան, Պատմութիւն գաւառին Արցախու, Մատենադարան, ձեռագիր N 2734, էջ 23:

[407] М.Д.Джеваншир, "Карабах", газета "Кавказ", Тбилиси, 1855, N 61, с. 62.

[408] Ф.Шушинский, Шуша, Баку, 1968, с. 4.

քական ապարանքները՝ իրենց պարիսպներով: Փանահ Ալին յուրացնում է բարձր ապառաժներին կառուցած ապարանքը, իսկ կողքի բարձունքի ապարանքը մնում է Մելիք-Շահնազարին: Այս ապարանքը գտնվում էր դեպի Ավանի քարանձավն ու Հունոտ գյուղը տանող գաղտնի գետնափոր ուղու վրա:

Շուշիի վերաբնակեցմանը նախորդել էին մի շարք իրադարձություններ, որոնք էլ կանխորոշեցին բերդաքաղաքի բնակչության կազմը: Նախիջևանի Հեյդար-Ղուլի խանը խիստ մեծ հարկերով ծանրաբեռնել էր Գողթանի հայությանը, որն այլ ելք չունենալով, ապստամբում է: 1750 թ. առաջինը զենքի դիմեցին Շահկերտ (Ղազանչի) հայաբնակ ավանի մարդիկ՝ իշխան Հովհաննես Խանդամիրյանի գլխավորությամբ: Խանը ամեն հարձակման ժամանակ անհաջողության էր մատնվում ու չնայած օգնական ուժերին, ետ շպրտվում ամրացված ավանից: Հեյդար-Ղուլին ստիպված հաշտություն է առաջարկում: Սակայն ապստամբության առաջնորդը խաբեությամբ թունավորվում է նենգ խանի կողմից և մահանում: Շահկերտի բնակչությունը, խուսափելով արյունարբու խանի վրեժխնդրությունից, անցնում է լեռներն ու գաղթում Ղափան: Նրանց մի մասը տեղափոխվում է Շուշի[409]: 1752 թ. նման մի աղետի է հանդիպում նաև Ագուլիս քաղաքի բնակչությունը: Նադիր շահի սպանությունից հետո անիշխանության տարիներին Իրանի հյուսիսում տիրում էր Ազատ խանը, որը փորձում էր նոր տարածքներ գրավել: Դեպի Երևան արշավելիս նա բախվում է վրացական զորքին և պարտվում: Նահանջի ճանապարհին Ազատ խանը թալանում է Նախիջևանի հայաբնակ գյուղերը: Նա մոտենում է իր հարստությամբ հռչակված Ագուլիս քաղաքին: Ագուլիսը շահից «խաս» կոչվող կարգավիճակ էր ստացել և տուրք էր տալիս միայն արքունիքին, ուստի բնակիչները մերժում են Ազատ խանի՝ տուրք տալու առաջարկը: Ագուլիսի մելիք Եսային, որը մեծամիտ և շատ հարուստ մարդ էր, հրաժարվեց բանակցել խանի հետ: Խանը առաջարկեց սնունդ և մթերք վաճառել կամ փոխ տալ իրենց: Գոռոզ մելիքը կրկին մերժեց զենք բաժանելով բնակիչներին: Պարսիկ զինվորները հարձակվեցին, թալանեցին ողջ Ագուլիսը, գերեվարեցին շատերին: Մելիք-Եսային ու նրա մերձավորները փակվեցին Թովմա Առաքյալի վանքում, որը պարսպապատ էր: Զինվորները բացում են երկաթյա դռները, կոտորում բոլորին, թալանում Ագուլիսի 11 եկեղեցիները: Ագուլիսցիների մի մասը գաղթեց դեպի Արևմտահայաստան, մյուս մասը գնաց Շուշի[410]: Բերդաքաղաքի սարահարթի հյուսիսային հատվածում տեղադրված հին բերդավանի պարիսպներին մոտ հատվածը Փանահը խլում է հայ բնակիչներից, Շահաղբյուրի ապա-

[409] Լեո, Երկերի ժողովածու, հ.3-2, Եր.,1973թ.էջ 230-234 (այսուհետ՝ Լեո):

[410] Նույն տեղում, էջ 234-236:

ռանքից այստեղ տեղափոխում ռայաթներին, բեկերին, զինվորականների ընտանիքներին, ծառայողներին[411]: Իսկ հին բնակավայրերի վերին մասը, որտեղ գտնվում էր սբ.Աստվածածին քարաշեն եկեղեցին ու Քամու Խաչ սրբատեղի-ուխտատեղին, թողնվում է տեղաբնիկ հայերին: Սարահարթի վերին հարավային հատվածը հատկացվում է Շահկերտից (Ղազանչի), Ագուլիսից, Մեղրիից գաղթած հայերին, որոնք էլ հիմնում են իրենց թաղամասերը: Դրանք կառավարվում են իրենց ընտրած տանուտերերի կողմից: Եթե մահմեդական բնակչության մեջ գերակշռում էին քոչվորները, նոքարները, բեկերն ու զինվորականները, ապա հայերը որմնադիրներ էին, շինարարներ, արհեստավորներ, ինչպես և վաճառականներ ու առևտրականներ: Հայ վաճառականներն իսկույն Շուշիի սարահարթը կապում են Խուդափիրինի կամրջով Թավրիզից Գանձակ ու Թիֆլիս տանող առեւտրական ճանապարհի հետ, աշխուժացնում Պարսկաստանից եկող Գորիս-Երևան առևտրական ճանապարհը: Հայ բնակչությունը ամեն կողմից Շուշի էր տեղափոխվում օտար ավարառուներից ու ասպատակիչների հարձակումներից պատսպարվելու համար: Բերդաքաղաքի Երևանյան և Զրաբերդի դարպասների միջև ձգվող ճանապարհի երկու կողմերում բացվում են ագուլիսցի ու շահկերտցի առևտրականների խանութները: Հայ արհեստավորները բացում են իրենց արհեստանոցները: Մեծանում է Ղափանից Շուշի բերվող պղնձի քանակը: Շահկերտցի պղնձագործները իրենց արհեստանոցներում պատրաստում են կաթսաներ, պղնձե գործիքներ: Հայ վաճառականները սկսում են Արցախի բնակավայրերում զարգացնել շերամապահությունը, աստիճանաբար կարևոր դիրք գրավում մետաքսի առևտրում: Յուրաքանչյուր թաղամաս սկզբում հիմնում է իր փայտաշեն եկեղեցին: Իսկ քոչվոր թաթարները Կուրի ափից բերեցին եղեգն եւ դրանցով վրանատիպ մզկիթ կառուցեցին: Ինչպես պատմում է Միրզա-Ջեմալ Ջիվանշիրը, ռազմավարական հարցերը Շուշիում վճռվում էին հատուկ խորհրդակցություններում, որոնց ոգին Մելիք-Շահնազարն էր: Փանահ Ալին բերդն անվանեց իր անունով՝ Փանահաբադ: Թուրք եւ թաթար նվաճողների համար սովորական երևույթ էր իրենց նվաճած երկրներում անվանափոխել իրենց նվաճած երկրների տեղանունները, կոչել իրենց լեզվով: Սակայն այս անգամ Շուշիի ստվարացող բնակչությունը չընդունեց օտար անվանումը: Իսկ թուրքախոս բնակչությունն էլ հաշտվեց Շուշի անվան հետ, փոփոխության ենթարկելով միայն անվան վերջին տառը՝ «ի»-ն դարձնելով «ա»: Այս դեպքում «շուշա» բառը թուրքերենով արտահայտում է «հայելի» իմաստը: Իսկ թե երբ էր բերդի «Կարկառ» հին անվանումը «Շուշիի» փոխվել և ինչու են մոռացության մատնել հին անունը, անհայտ է: Բերդի այս անվանը առաջին անգամ մենք

[411] М.Д.Джеваншир, История Карабаха, Баку, 1959, стр. 72.

հանդիպում ենք Շուշիի սբ.Աստվածածին եկեղեցում 1428 թ. Տեր-Մանուել գրչի ստեղծած Ավետարանի հիշատակարաններում: Հաջորդ Ավետարանը Մանուելը գրել է Գթիչ (Գտիչ) վանքում, որի հիշատակարանում գրում է. «... եւ դառն է անբարի ժամանակիս, որ թորգոմացի ազգն տիրեն աշխարհի, եւ ամենեքեան ի մեծ վշտի կան, եւ ազատութեան տեառն կամքն է»: Շուշիում հայկական հոգևոր մշակութային կյանքն սպառվե՞ց արդյոք: Հավաստի վկայություններ կան նաև հաջորդ ժամանակների վերաբերյալ: Մեզ է հասել մեկուկես դար հետո նույն սբ. Աստվածածին եկեղեցու գրչատանը գրված մեկ այլ Ավետարան ևս, որի հիշատակարանում գրված է. «Կատարեցի... զմաքրափայլ Ավետարանս ի Փոսա Նհանկ գավառս Վերընթր, ի գաւղս, որ կոչի Շուշոյ... ընդ հովանեալ սբ. Աստվածածին: Գրեցա ի թվականութեանս ՌՀԴԵ (1575)»[412]: Դիզակի եւ Վարանդայի բնակչության 1724 թ. հունվարի 4-ին ռուսաց հպատակություն ընդունելու առթիվ տված հավատարմագրի վերջում գրված է. «Գրվեցավ գիրս Շուշոյ սղնախումն թիվն հայոց ՌԵՆԳ (1724 թ.), յունվար ամսուն, գրոյս վերջ»[413]: Իսկ Լեոն եզրակացնում է՝ «այժմյան Շոշու գյուղն ավելի իր անունը բերդից է ստացել, քան թե անուն է տվել նրան»[414]: Շոշ բառը արցախյան բարբառում ընծյուղն է կամ շիվը: Այն Պարսկաստանի հին մայրաքաղաք Շոշի հետ կապող ոչ մի աղբյուր չկա, ու դժվար է նման ենթադրությանը հավատալ: Պատմության կեղծումը Առան թափանցած խաշնարած թափառական ցեղերի մոտ սկիզբ է առել դեռեւ XIX դարի կեսերին, երբ իրենք ևս սկսեցին առնչվել գիր ու գրականության հետ: Նրանց առաջին պատմիչները՝ Միրզա-Ջեմալ Ջիվանշիրն ու Ադիգյոզալբեկը, որոնք շարադրել են Շուշիի խանության պատմությունը, երբեք չէին հիշում, որ մինչ Փանահի ու նրա տոհմի Արցախ ոտք դնելը (1752 թ.) այստեղ բերդեր, ժողովուրդ են եղել: Արդեն երևան է գալիս տեղի երկրների հնագույն պատմություններն իրենց ժողովրդին վերագրելու միտումը, սեփական հայրենիք ստեղծելու ձգտումը, քանի որ ալթայան, ապա և միջինասիական հայրենիքից՝ բուն արմատներից կտրված անհայրենիք կյանքը ոչ մի ապահովություն չի խոստանում իրենց, ու նրանք արդեն կարիք էին զգում քաղաքակիրթ ժողովուրդների պես իրենց «մշտական» հայրենիքն ունենալ: Արդեն համոզվել էին, որ «անհայրենիք» տարածք չկա ոչ մի տեղ, իսկ բարեբեր երկրներում՝ առավել ևս: Պարզվում է, որ որևէ երկիր թափանցելը, այստեղի արոտներում վրան

[412] Մատենադարան, ձեռագիր 1575, էջ 264ա:

[413] ԳԱՖԿՀ, Ֆ. CPA, 1724, N 4, l. 19, կամ՝ պրո. Ֆ.Ա. Աբրահամյան, Մի էջ Անդրկովկասի ժողովուրդների և հայ-ռուսական հարաբերությունների պատմությունից, Եր., 1953, էջ 145:

[414] Լեո, էջ 267, կամ՝ Լեո, Պատմություն Ղարաբաղի հայոց թեմական հոգևոր դպրոցի, Թիֆլիս, 1914թ., էջ 60:

խփելը քիչ է: Երկիրը նվաճելը ևս: Մոնղոլները, թաթարները ևս նվաճեցին, սակայն ոչինչ էլ նրանցը չէր: Քանի որ նրանք իրենց հայրենիքն ունեին: Իսկ ահա թափառական ցեղերը, գալով նվաճողների հետեւից, մնացին ուրիշի նվաճած երկրներում: Նրանք սկզբում լցվեցին Իրանի նահանգները, Ատրպատականում (հին մարերի երկիր) աստիճանաբար խառնվեցին բնիկ ժողովրդի մարական ցեղերի հետ, որոնք պարսիկ ժողովրդի մի հատվածն են՝ նրանց պարտադրելով իրենց լեզուն, կենցաղը: Իհարկե, նրանք իրենց հերթին վերցնում էին բնիկների ունեցած ամեն ինչը՝ կենցաղը, սովորությունները, ամեն կերպ ձգտում էին ավելի շատ խառնվել, մոռանալ իրենց անապատային անցյալը: Եվ ահա հաջորդ փուլն արդեն բնիկների պատմության, մշակույթի յուրացումն էր: Առանի դաշտից հայերին դժվար չէր քշել, քանի որ նրանք վաղուց պետականություն չունեին, իսկ առանց մեծ զորքի կամ միության անհնար էր պաշտպանվել: Իսկ Իրանի փոփոխվող տերերի համար միևնույն էր, թե որ ժողովուրդը հարկ կմուծի: Սակայն դաշտը նվաճելը բավարար չէր: Մինչև չամրանաս լեռներում, ուժեղ լինել չես կարող: Անիշխանության այս ժամանակահատվածում բոլոր իրադարձությունները իրենց օգտին էին: Առանում բնավորված թափառական ցեղերի հույսը Փանահ-Ալին էր: Նրա հետ արդեն հաշվին էին նստում հարևան տիրակալները: 1752 թվականին վրաց իշխաններ Թեյմուրազն ու Հերակլը, Ղարադաղի Քյազիմ խանը, Նախիջևանի Հեյդար խանը, Գանձակի Շահվերդի խանն ու Փանահը, իրար հետ դաշնակցած, Գանձակի մոտ պատրաստվում էին պատերազմելու Կուրի մյուս ափին Մինկեչավր (հայոց Քանդակ) գյուղում բանակ դրած Շիրվանի Հաջի-Չելեբի խանի դեմ: Շիրվանի տիրակալը հավատարմորեն ծառայելով սուլթանական Թուրքիային, շարունակում էր մնալ նրա կովկասյան դաշնակիցն ու գործակալը: Փանահի հետ էր և Վարանդայի Մելիք-Շահնազարը՝ իր գնդով[415]: Թեյմուրազը, ինչպես ցույց տվեցին հետագա իրադարձությունները, այլ ծրագիր էր հետապնդում: Նա որպես իշխանաց իշխան իր բանակում խորհրդակցության է հրավիրում «դաշնակից» խաներին, հյուրասիրում իր վրանում ու անսպասելիորեն ձերբակալում է նրանց, կասկածելով, որ նրանք նպատակադրվել են միանալ Հաջի-Չելեբիի հետ ու միասին հարձակվել վրաց զորքի վրա: Վրաց ժամանակագիրը հայտնում է, որ մեծ իրարանցում է սկսվում վրաց բանակում: Հաջի Չելեբին, որը տեղեկանալով այս իրադարձություններին անսպասելիորեն հարձակվում է: Նրան են միանում Ղարադաղի, Նախիջևանի, Գանձակի ու Ղարաբաղի զորքերը: Վրացիները ծանր պարտություն են կրում, քանի որ զորքը անկառավարելի էր դարձել: Փրկված վրացիների մի մասը գնաց Սղնախ, մի մասը՝ Երևան, իսկ իշխանաց իշխանը՝ Թփղիս հասավ: Շիրվա-

[415] Զ.Ավագով, Присоединение Грузии с Россией, СПб, 1901, стр. 91.

նի տերը գերությունից ազատում է խաներին, հալածում վրացիներին մինչեւ Թիֆլիսի մատույցները, ապա Թեյմուրազի և Հերակլի առջև պայման դնում, որ հրաժարվեն «թուրքական» հողերից: Այս պայմանը հաստատում է, որ Հաջի Չալաբին շարունակում էր ծառայել Թուրքիային: Փանահը, երբանիկ պատահարով ազատվելով այս փորձանքից, որոշում է այլևս չհապաղել և գրավել ողջ Լեռնային Ղարաբաղը: Իսկ հայ մելիքներն այլևս անհամաստ են համարում Շահնազարից վրեժ լուծելու համար Շուշի բերդի վրա հարձակվելը, քանի որ դրա համար իրենք բավարար ուժեր չունեին: Փանահն ու Մելիք-Շահնազարը, օգտվելով Իրանում տիրող անիշխանությունից, մտածում են, թե ինչպես իրենց ենթարկեն մելիքներին կամ խլեն նրանց տարածքները: Նրանք հարձակվում են Զրաբերդի վրա: Թարթառ գետի վրա մի բարձր ու մուտք չունեցող հսկա ապառաժի վրա գտնվող այս բերդը ևս շատ հին պատմություն ունի ու միշտ էլ հայության համար հուսալի ապաստան է ծառայել՝ օտար նվաճողների դեմ անվերջանալի պայքարում: Մելիք Ալլահ-Ղուլի սուլթանի դեմ ոչ մի հաջողության չհասնելով, Փանահը, որը նախկինում այս հզոր պատերազմողի մոտ որպես հարկահավաք էր ծառայել, հաշտություն է առաջարկում, արևելյան խորամանկ ու նենգ տիրակալի նման հարմար առիթ փնտրելով այս քաջ ու զորեղ իշխանին վերացնելու համար: Զրաբերդցի մելիքը, չնայած պատերազմական իր մեծ փորձին՝ ուղղամիտ էր և ազնիվ, ընդունում է Փանահի առաջարկը: Նրանց միջեւ երկրորդ հանդիպումը տեղի է ունենում Ամարասի վանքում, որը գտնվում էր Մելիք-Շահնազարի տիրույթում: Այստեղ ձերբակալում են Նադիր շահի սիրելի հերոսին, տեղափոխում Շուշիի բանտը: Դավադրության կազմակերպիչը Մելիք-Շահնազարն էր: Ժողովրդի մեջ երկար ժամանակ հիշվում էին այն երգերը, որ հայ հսկան երգում էր բանտի իր խցում: Նա կանչում էր իր քաջ եղբորը՝ Մելիք-Ադամին, իր անպարտելի զինակցին՝ հսկա Ավագ վարդապետին, որին թշնամիները Դալի-Մահրասա (գիժ վարդապետ) էին կոչում, նրանց հորդորում էր քանդել Շուշին, իրեն ազատել բանտից[416]: «Դալի Մահրասան Ղարաբաղի հայոց Քոր-Օղլին էր. ժողովուրդը գուցե մինչև հավիտյան կհիշե այն բոլոր հրաշքները, որ կատարել է նա իր կռիվների մեջ: Երբ նստում էր իր նշանավոր մոխրագույն (բոզ) նժույգի վրա եւ կայծակի նման նետվում էր դեպի պատերազմի դաշտը, նրա ահարկու, որոտալից ձայնը բավական էր թշնամուն սարսափեցնելու համար: Եկեղեցու մոլեռանդությունը պատժեց գիժ աբեղային իր կատարած արյունահեղությունների համար: Սիմոն կաթողիկոսի ժամանակ նրան տարան էջմիածին եւ բանտարկեցին սառցարանի մեջ, որ ապաշխարե: Մի

[416] Ռաֆֆի, Երկերի ժողովածու, հ. 10, Խամսայի մելիքություններ, Եր., 1964. (այսուհետ՝ Ռաֆֆի), էջ 204:

օր իր բանտի մեջ լսեց նա, որ վանքում ինչ-որ աղմուկ ու իրարանցում է տիրում: Նրա հարցին ասատասխանեցին, թե Ջալալի քրդերը եկան, վանքի անասունները թալանեցին, հիմա վտանգ կա, որ վանքն էլ կողոպտեն: «Կարող եք տալ ինձ մի ձի եւ մի քանի զենքեր», - ասաց ապաշխարողը: Երբ նրա խնդիրը կատարվեցավ, նա նստեց ձին եւ նետվեցավ ջալալիների ետեւից: Մի քանի ժամից հետո վերադարձավ նա, ետ բերելով քրդերի տարած ավարը: Այդ օգուտը վանքին տալուց հետո, նրան արձակեցին, խոստմունքը առնելով, որ այլեւս մարդասպանություն չանե»[417]: Ավագ վարդապետը, Թուլի-Արզամանն ու Ջալաղան-Յուզբաշին յոթ տարի թույլ չտվեցին, որ մի թուրք անցներ Մազե կամրջից[418] դեպի Զրաբերդի և Գյուլիստանի կողմերը: Սակայն շուտով սպանում են բանտարկված մելիքին: Մելիք դարձավ նրա եղբայրը՝ Ադամը: «Դա իր հատկություններով շատ նման էր իր քաջ եղբորը, - գրում է Ռաֆֆին, - մանկության հասակից իբրև պատանդ պահված լինելով Դաղստանի Խոսրով-սուլթանի մոտ, Մելիք-Ադամը վարժվեցավ տեղային լեռնաբնակների հերոսական հատկությունների մեջ: Նրան ազատեց այնտեղից Նադիր-շահը իր Դաղստանի արշավանքի ժամանակ»[419]: Փանահի զորքը, համալրվելով Կուր-Արաքսի դաշտավայրի թափառական ցեղերով, կրկին հարձակվեց Զրաբերդի վրա: Մելիք-Ադամը ստիպված էր զորքով անտառով նահանջել դեպի Գյուլիստան: Կռիվները տեղափոխվեցին Գյուլիստանի ամրությունները: Մելիք-Ադամն ու Մելիք Հովսեփը ստիպված էին իրենց զորքի ու ժողովրդի մի մասի հետ հեռանալ իրենց տիրույթներից և ապաստան գտնել Գանձակի Շահվերդի խանի մոտ, որը Փանահի հակառակորդն էր: Գանձակի խաները այդպես էլ չէին հաշտվում Նադիր շահի Գանձակի խանության ուժերն ու տարածքները ջլատելու որոշման հետ ու Փանահին անօրեն ու ինքնակոչ էին համարում: Գանձակի Շահվերդի խանը, որը սերտ կապեր ուներ հայ մելիքների հետ, ուրախությամբ էր ընդունում նրանց: Ի վերջո. Գանձակի խանը ստիպված հաշտվում է այս իրողության հետ և նոր կալվածքներ նվիրում: Բացի այդ, Շահվերդի խանը երախտապարտ էր Զրաբերդի մելիքին, որը նրան օգնել էր իր եղբոր Մամադ խանի դեմ գահակալական կռիվներում, և օգնել վերստին տիրելու Գանձակին[420]: Եվ ահա Շահվերդի խանը այս երկու հայ մելիքներին բնակության տեղեր է հատկացնում Շամքորի շրջակա լեռներում: Մելիք-Ադամն

[417] Այս դեպքը ոչ թե Սիմեոն Երևանցու, այլ Հակոբ Շամախեցու ժամանակ էր, քանի որ 1763 թ. Սիմոնը դեռևս կաթողիկոս չէր, էջմիածին եկած էմինը տեղեկանում է, որ Ավագ վարդապետը կենդանի չէ:
[418] Մազե կամուրջը գտնվում է Կարկառ գետի վրա Վարարակն գյուղի (այժմ՝ Ստեփանակերտ) մոտ:
[419] Ռաֆֆի, էջ 204:
[420] Ռաֆֆի, էջ 206:

ու Մելիք-Հովսեփը «ամրանալով այստեղ, սպասում էին հարմար առիթի՝ Փանահ խանի հետ իրենց արյունոտ վեճը շարունակելու համար»[421]: «Ղարաբաղի Փանահ խանն ուժ էր գործադրել Սղնախի մելիքների նկատմամբ. հայերն այլևս չէին կարող դիմանալ. մի ձորի մելիք Յուսուֆ-բեկը (Գյուլիստանի Մելիք-Հովսեփ) հարյուր ծուխից բաղկացած խիզաններով տեղահան էր եղել ու (1755 թ.), գալով Վրաստան, տեղ խնդրել վրաց թագավորներից: Այս հանգամանքները զեկուցեցին թագավորներին Թելավում, իսկույն ևեթ մարդ կցեցին նրանց և այս սղնախցիներին բնակեցրին Տփղիս քաղաքի Քարափի թաղի կողմը, իսկ իրեն՝ մելիքին, կանչեցին Կախեթ: Գնաց Մելիք-Յուսուֆ-բեկն իր զորքով Կախեթ, միացավ թագավորներին: Հրամայեցին ողորմածություն ցույց տալ նրան և պատվելով պահեցին»[422]: Մելիք-Ադամը իր ընտանիքը ուղարկել էր Գանձակ, իսկ ինքը ամրացել Զրաբերդում: Արցախում Փանահի միակ զորեղ թշնամին մնում էր Դիզակի Մելիք Եսային: Փանահը երկու անգամ հարձակվում է Տողի ամրոցի վրա ու պարտություն կրում: Սակայն հաջորդ ճակատամարտում դիզակցիները պարտվում են, ու Մելիք-Եսային հաշտության առաջարկություն է անում Շուշիի տիրոջը, որն ընդունեց ու հաշտություն կնքեց: Մելիք Եսային ապրեց մինչև խոր ծերություն՝ 1781 թ. հպատակ մնալով Շուշիի խանությանը: Այլևս ոչինչ չէր խանգարում Փանահին ընդարձակելու իր տիրության սահմանները: Հաջող ասպատակություններով նա Ղարաղաղի խանից խլեց Մեղրին, Նախիջևանի շրջանից՝ Տաթևն ու Սիսիանը, Թավրիզի Բեկլարբեկից՝ Կապանն ու Գորիսը: Ապա Փանահը գրավեց Թարթառ գետի ներքին հովիտը՝ մինչև Կուր գետը, հետո և Զաբրայիլը: Ամեն կողմից թաթարական ավազակախմբեր էին գալիս միանալու Փանահին, քանի որ նա միշտ հովանավորում էր թալանն ու ավազակությունը: Նախիջևանից եկան և նրան միացան Դեմիրչի-Հասանլու հազարապետները, Վրաստանից՝ Ջինլի ցեղապետը: Փանահի զորքերի մեջ էին ընդգրկված Կուր-Արաքսի միջագետքում (Առան) ջիվանշիրի, օթուզիքի (երեսուներկու), քեբիրլի ցեղախմբերը: Սակայն Շուշիի պես մի անմատչելի հենակետ ունեցող և դեպի աջ ու ձախ նվաճումներ անող, տերությունն անընդհատ ընդարձակող խանը լուրջ վտանգ էր ներկայացնում նաև Իրանի մյուս տիրակալների համար, որոնք ծրագրեցին Փանահից խլել Շուշիի բերդը[423]: Նման առաջին փորձը ձեռնարկեց Մազանդարանի կառավարիչ Մուհամադ-Հասան խան Ղաջարը: Նա մեծ զորքով անցնելով Արաքսը, բանակ դրեց Շուշիից ոչ հեռու Խաթունարխ վայրում: Ավետարանոցից հայկական ջոկատներն անընդհատ հար-

[421] Լեո, էջ 270:
[422] Մելիքսեթբեկ, Վրաց աղբյուրները..., էջ 144:
[423] Լեո, էջ 272-273:

ծակումներ էին գործում ու փախցնում նրանց ծիերի երամակները: Մազանդարանի կառավարիչը պաշարեց Շուշին և պատրաստվում էր վճռական հարձակման, սակայն մեկ ամիս հետո, տեղեկանալով, որ իր դեմ լուրջ սպառնալիք է ստեղծվել բուն Իրանում, նրա դեմ է ապստամբել Շիրազի վեքիլ Քերիմ-խան Զենդը, արագորեն հեռանում է Արցախ-Ղարաբաղից: Նա այնքան է շտապում, որ Արցախում է թողնում իր ծանր հրետանին: Փանահը, ուրախանալով այս «նվերի» համար, թնդանոթները տեղափոխում է Շուշի:

Բերդաքաղաքում հայկական թաղամասը առանձնացված էր մահմեդական թաղամասից, և յուրաքանչյուր թաղամաս ապրում էր իր ներքին կյանքով: Տարբեր վայրերից Շուշի եկած ու տարբեր բարբառներով խոսող հայերը աստիճանաբար մոռացան իրենց մայրենի խոսվածքն ու յուրացրին արցախյան բարբառը, ստեղծեցին մի նոր յուրօրինակ քաղաքային մթնոլորտ: Այն իր ազդեցությունն ունենալով ողջ Ղարաբաղի բնակավայրերի վրա, շատ բան փոխեց երկրամասի նահապետական կենցաղի, սովորությունների մեջ: Սակայն մարդկանց այս եզակի խառնարանը պետք է հեզորեն հպատակվեր խանական իշխանությանը, անհատույց ծառայեր նրան, օգներ հարստություն դիզելու, աջակցեր Արցախի գավառներում հայկական ավանդական իշխանությունների դեմ պայքարում: Հաջորդ տարի 1761 թ., 30 հազարանոց բանակով Շուշին նվաճելու է գալիս Ուրմիայի կառավարիչ Ֆաթալի խան ավշարը, որը Նադիրի ժամանակ բանակի հրածիգների հրամանատարն էր: Նա արդեն իրեն էր ենթարկել ողջ Ատրպատականը, ծրագրել էր հպատակեցնել Հայաստանն ու Հարավային Կովկասը, ապա և գրավել Իրանի գահը: Այս արշավանքում Ֆաթալի խանին էին միացել Վրաստանի Հերակլ թագավորն ու Զրաբերդի և Գյուլիստանի մելիքներ Աղամն ու Հովսեփը: Պարսից զորքը բանակ դրեց Խոջալու գյուղում, որը գտնվում էր Ասկերանի ամրոցի և Վարարակն գյուղի միջև: Ֆաթալի խանը պայմանավորվում է հայ մելիքների հետ, որ ծերբակալելով Փանահին, հայերի ձեռքը կհանձնի նրան, միայն թե օգնեն գրավելու բերդը: Փանահը, խուսափելով բերդում երկարատև պաշարված մնալուց, որը դեռևս ամրացված չէր, հավաքելով Ջիվանշիրի ցեղերի առաջնորդներին իրենց զորքերով, ընդառաջ է գալիս Ուրմիայի կառավարիչին և վճռական ճակատամարտում պարտություն է կրում: Փանահն ու Մելիք-Շահնազարը, ուրիշ ելք չունենալով, հպատակություն են հայտնում ուրմեցի խանին, որպես փրկագին նրան ուղարկելով 10 հազար ոսկի[424]: Փանահը խոստացավ պատանդ տալ իր որդուն, որն էլ կլինի հպատակության երաշխիքը: Շուշիի խանը իր որդուն՝ Իբրահիմ Խալիլին խաբելով, թե իբր Ֆաթալին իր դստերը նրան

[424] ՐԱՖՖի, էջ 208:

կնության է տալիս, թանկարժեք նվերներով ուրմեցու վրանն է ուղարկում: Ֆաթալի խանը իսկույն ծերբակալում է Իբրահիմին ու բավարարված 6-ամսյա պաշարման նման ելքից, իր բանակով Պարսկաստան է վերադառնում, տանելով և Փանահի ավագ որդուն: Ֆաթալին շտապում էր Իրան վերադառնալ, որտեղ նրա դեմ աստիճանաբար հզորանում էր մեկ այլ ախոյան՝ Շիրազի կառավարիչ պարսիկ Քերիմ Զենդը: Իրեն փոխանորդ թողնելով կրտսեր որդուն՝ Միհրալիին, Փանահը միանում է Ֆաթալի խանի դեմ Ուրմիա արշավող Քերիմ Զենդին՝ որդուն գերությունից ազատելու հույսով: Ֆաթալի խանը մի ճակատամարտում սպանել էր Զենդի եղբորը՝ Ասկար խանին, ու Զենդը լի էր Ուրմիայի կառավարիչի նկատմամբ վրեժխնդրությամբ: Զենդը տիրում էր Իրանի մեծ մասին և համարվում էր անչափահաս Իսմայիլ շահի խնամակալը: Այս հակամարտությունը նաև բուն պարսիկների և թուրքական ցեղերի (ավշար և դաջար) միջև Իրանում իշխելու համար համառ ու անզիջում պայքարի մի ուրույն դրսևորում էր: 1762 թ. Քերիմ-խան Զենդը Ուրմիայի մոտ վճռական ճակատամարտում հաղթում է, գերի վերցնում Ֆաթալի խանին և գլխատում այն նույն վայրում, որտեղ զոհվել էր իր եղբայրը: Իրանի նոր տերը գերությունից ազատում է Իբրահիմ Խալիլին և հոր՝ Փանահի հետ տանում Շրրազ: Փանահը հասկանում է, որ ինքն արդեն հավերժ գերության է դատապարտված, ուստի և որոշում է ազատվելու համար խորամանկության դիմել: Փանահը հայտնի թմրամոլ էր, ու մի օր, օպիումի մեծ թմրաբաժին ընդունելով, խոր քուն է մտնում: Քերիմ-խանը որոշել էր խոչընդոտելու Փանահին նորից տիրելու Ղարաբաղում: Իբրահիմը դիմում է Քերիմ-խանին, խնդրելով թույլ տալ հոր աճյունը տանելու Ղարաբաղ և թաղելու տոհմական գերեզմանոցում: Պարսիկ խանը, որ հասկացել էր թափառական թաթարների խորամանկ քայլը, պատասխանում է, որ ինքը վճռել է Փանահին պատվով հուղարկավորել, ուստի մարմինը չհոտելու համար հրահանգում է զմռսել այն: Դահիճները կենդանի Փանահին հերձում են, դուրս թափում փորոտիքը: Քերիմ-խանը Իբրահիմին խանական կոչում է տալիս և հոր աճյունի հետ Ղարաբաղ ուղարկում: Փանահին թաղում են Աղդա (սպիտակ տուն) գյուղի մոտ Իմարաթ վայրում[425]: Թաղումից հետո սկիզբ է առնում երկու եղբայրների՝ Իբրահիմի և Միհրալիի միջև անզիջում պայքարը: Եթե Իբրահիմը իրեն ուժեղ էր զգում Շուշիում, ապա Միհրալին կողմնակիցներ է գտնում Ղարաբաղի տափարակում, ուր նրան են միանում Փանահից ու Իբրահիմից դժգոհ թափառական ցեղերը: Իբրահիմին աջակցում են իր հոր դաշնակիցները՝ ավարցիները: Իսկ մելիք Միհրալիին հովանավորում է Դերբենտի կառավարիչ Ֆաթալի խանը, որը թշնամի էր ավարներին: Դերբենտի խանը Շամախու իր վրանում բանակ-

[425] Ф.Шушинский, стр. 11.

ցությունների ժամանակ սպանել էր ավարների առաջնորդ Մուհամմադ-Նուցուլին[426] ու մեծ հաճությամբ էր ուզում վերացնել ավարների դաշնակիցների որջը և այնտեղ հաստատել իրեն հավատարիմ Միհրալիին: Ֆաթալի խանը, որ գրավել էր Գանձակը, պետք է Ղարաբաղի դաշտում միանար Միհրալիին ու միասին սկսեին Շուշի բերդի պաշարումը: Սակայն դեպքերի հաջորդականությունը Միհրալիի համար կործանարար էր: Գանձակում հանկարծամահ է լինում Ֆաթալի խանը, իսկ Միհրալին սպանվում է մերձավորների կողմից: Իբրահիմը, որ սարսափահար սպասում էր իր կործանմանը, առանց խոչընդոտի տիրանում է խանությանը: Նա իր հորից ժառանգել էր արևելյան քաղաքագետի հատկությունները, սակայն շատ ավելի նենգ էր ու դաժան: Նա, հաշվի առնելով Շամքորի կողմերում ամրացած Գյուլիստանի և Ջրաբերդի մելիքների վտանգավոր ուժը, ձգտում էր նրանց վերադարձնել իրենց տիրույթները, այդպես առժամանակ վերացնել նրանց կողմից սպառնացող վտանգը: Սակայն Գանձակի խանին ձեռնտու չէր կորցնելու այս, ինչպես Սիմեոն Երևանցի կաթողիկոսն էր գրել «հզոր ու քաջ իշխաններին»[427]: Իբրահիմը թարմացնում է, ամրապնդում դաշինքը Մելիք-Շահնազարի հետ պսակվելով նրա դստեր գեղեցկուհի Հուրի-զադի հետ: Վերջինս նաև Դիզակի Մելիք-Եսայու թոռն էր: Մելիք-Շահնազարի առաջին կինը Սոնան, Մելիք-Եսայու դուստրն էր, որին նա խլել էր եղբորից Մելիք-Հովսեփից, դեռևս նրա կենդանության օրոք: Իբրահիմը գիտեր, որ այս հանգամանքը պետք է ավելի գրգռեր Ղարաբաղի մյուս մելիքներին Շահնազարի դեմ, որից էլ օգտվողը ինքը պետք է լիներ: Իսկ հայ մելիքների քաղաքական կարճատեսությունը լրացուցիչ դժվարություններ էր ստեղծում, որից էլ ճարպկորեն օգտվում էր Իբրահիմ խանը: «Ղարաբաղի ազատագրական շարժումը վտանգող հզորագույն հանգամանքներից մեկը, ինչպես տեսանք, այն էր, որ այդ շարժման ղեկավարները կարծում էին, թե կարող են նույն պայքարն ավելի նպաստավոր և հեշտ լուծելի դարձնել, եթե հեռանան իրենց երկրից»,-գրում է Լեոն[428]:

1763 թվականին Ռուսաստանում գահ է բարձրանում Եկատերինա II-ը, որը փաստորեն Պետրոս Առաջինի քաղաքականության ժառանգորդն էր: Կրկին առաջին պլան է մղվում Սև ծովի, նրա նեղուցների գրավման խնդիրը: Սակայն այդ ճանապարհին էին Թուրքիայի վասալ Ղրիմի թաթարների խանությունն ու Թուրքիայի եվրոպական տիրապետությունը: Արքունիքում

[426] Х. Геничутлинский, Историко-биографические и исторические очерки, Махачкала, 1992 (перевод с арабского Т. Айтберова), (далее-Геничутлинский).
[427] «Սիմեոն կաթողիկոսի «Յիշատակարանը», (Դիվան հայոց պատմության), գիրք Գ. Թիֆլիս, 1894, էջ 491:
[428] Լեո, 3-3, էջ 298:

ամենաազդեցիկ մարդը իշխան Գրիգորի Ալեքսանդրովիչ Պոտյոմկինն էր: Նա նպատակադրվել էր Թուրքիային դուրս քշել Եվրոպայից: Թագուհու շրջապատում մեծ ազդեցություն է ձեռք բերում հայ մեծահարուստ վաճառական արդյունաբերող և կալվածատեր Հովհաննես Լազարյանը (Իվան Լազարև): Նրա հայրը վաճառական Եղիազարը (Աղազար) 1747 թ. իր չորս որդիների հետ Նոր Ջուղայից (Սպահան) տեղափոխվում է Մոսկվա, այստեղ ծավալում է իր առևտրական գործունեությունը: Հովհաննեսը շուտով տեղափոխվում է Պետերբուրգ ու մտնում պետական ծառայության, աչքի ընկնում ֆինանսական գործերում, դառնում Պետական բանկի վարչության անդամը, նշանակալից ծառայություններ մատուցում ռուսաց կառավարությանը: Նա արքունիքից գնում է Պետերբուրգի շրջակայքում գտնվող Ռոպշա կալվածքը իր շքեղ ապարանքով, որը վերածվում է արքունիքի, թագուհու ընտանիքի և Ռուսաստանի ամենաազդեցիկ մարդկանց հյուրընկալող ու սիրելի վայրերից մեկը: Հովհաննեսը այս ամենին զուգահեռ մեծ հայրենասեր էր, Հայաստանում պետականության վերականգնման մեծ ջատագով: Այս ժամանակ էր, որ Սիմեոն կաթողիկոսը Ռուսաստանի հայոց թեմի առաջնորդ է նշանակում Հովսեփ արքեպիսկոպոս Արղությանին, մի եռանդուն գործիչ և մեծ հայրենասերի, որը փաստորեն հայոց դեսպանն էր Ռուսաստանում: Հովհաննես Լազարյանն ու Հովսեփ Արղությանը շուտով նամակներ են հղում Արցախի մելիքներին, հաղորդելով, որ շուտով կգա ռուսական օգնությունը: Ուրեմն, Ռուսաստանը չի հրաժարվել Անդրկովկասն ու Կասպից ծովի ափամերձ շրջանները վերանվաճելու քաղաքականությունից և կրկին նախապատրաստում է բնիկ քրիստոնյա ժողովուրդներին դյուրին դարձնելու այս ծրագրի իրականացումը:

Ղարաբաղում կրկին սկիզբ է առնում կաթողիկոսական աթոռի շուրջ սուր պայքարը: Սակայն այն ոչ միայն զուտ երկու եկեղեցական թևերի Գանձասարի ու Երիցմանկաց վանքերի պայքարն էր, այլև քաղաքական սուր և անզիջում պայքար երկու հզոր ախոյանների Գանձակի ու Շուշիի խաների միջև: Ամենքը՝ իշխան թե ռամիկ, տիրացու թե եպիսկոպոս, կլանվեցին այս պայքարի մեջ, կարծես թե միայն այս հարցից էր կախված երկրի ճակատագիրը: Աղվանից կաթողիկոսությունը Եսայի Ջալալյանից հետո անցել էր ջրաբերդցի Ներսեսին, որը էջմիածնի կաթողիկոսին հատուկ գրությամբ խոստացել էր իրենից հետո իր տոհմակիցներից ոչ ոքի իրեն ժառանգորդ չնշանակել, այլ աթոռը թողնել Խաչենի տեր Ջալալյաններին: Ներսեսը խոստացել էր նաև նստել Գանձասարի վանքում: Սակայն նա այդպես էլ Գանձասար չգնաց՝ հավանաբար խուսափելով Շուշիի խանի իշխանության տակ ընկնելուց, և նստում էր Ջրաբերդից ոչ հեռու Երիցմանկաց վանքում, իսկ մելիքների երկրից հեռանալուց հետո Գանձակ տեղափոխ-

վեց: 1763 թ. 120-ամյա Ներսես կաթողիկոսը Գանձակում մահամերձ պառկած՝ իր շուրջը հավաքելով հայ մելիքներին ու զինվորականներին, հայտնեց, որ իր հաջորդ է նշանակում եղբորորդուն՝ Իսրայել եպիսկոպոսին: Ներսեսի մահից հետո Աղվանից կաթողիկոսությանը ենթակա բոլոր շրջաններից՝ Շաքիից (Նոխուտ-Նուխի), Շամախիից, Դերբենտից, Բաքվից և այլ վայրերից հրավիրեցին եպիսկոպոսների ու Գանձակի սբ.Հովհաննես եկեղեցում մեծ հանդիսավորությամբ կաթողիկոս օծեցին երիցմանկանց վանքի եպիսկոպոս Իսրայելին: Ավանդությունն ասում է, որ երբ տեսնում են, որ օծումը օրինական համարվելու համար եպիսկոպոսների պահանջվող քանակը մեկով պակասում է, եպիսկոպոսական հանդերձներ հագնելով, նրանց շարքը համալրում է Շահվերդի խանը: Ամենայն Հայոց կաթողիկոս Սիմեոնը պահանջում է Իսրայելից, որ էջմիածին գա՝ օծվելու: Սակայն Իսրայելը հրաժարվում է էջմիածին գնալուց: Նույն տարում Խամսայի մելիքական տների անդամները, շուրջ հիսուն հոգի, Գանձասարի վանքի Հովհաննես Ջալալյան վարդապետին տանում են էջմիածին և խնդրում Սիմեոն կաթողիկոսից՝ Աղվանից կաթողիկոս օծել: Շուշիի խանը ևս պահանջագիր է ուղարկում Սիմեոնին, որ Գանձասարի ներկայացուցչին օծի որպես կաթողիկոս: Սիմեոնը մերժում է, հայտնելով, որ Աղվանից կաթողիկոս է նշանակված Իսրայելը: Վերադառնալով Գանձասար, պատգամավորները հենց վանքում Հովհաննեսին կաթողիկոս են օծում: Ի վերջո, Սիմեոն Երևանցին ընդունում է Գանձասարի ընտրյալի գահերեցությունը, քանի որ Իսրայելը հրաժարվում է նստել Գանձասարում: Կաթողիկոսը շրջաբերականներ ուղարկեց ամեն տեղ, որ Իսրայելին որպես կաթողիկոս չճանաչեն[429]: Սակայն երկպառակտությունը ավելի էր խորանում: Ի վերջո, Իսրայելն էլ մի գործիք էր Գանձակի խանի ձեռքում, ինչպես և Հովհաննես կաթողիկոսը՝ Իբրահիմ խանի ազդեցության տակ էր: Իսրայելը շարունակեց իր կաթողիկոսությունը, և հաճախ դիմում էր օտար իշխողների օգնությանը, վնաս հասցնելով հայրենի երկրի կենսական շահերին: Կաթողիկոսական աթոռի համար պայքարում հաղթեց Իբրահիմ խանը: Խամսայի մելիքներին իրենց կողմը գրավելու պայքարում ևս Իբրահիմը մի նոր հաղթանակ տարավ: Նա ուղիղ բանակցություններ ձեռնարկեց Գյուլիստանի մելիք Հովսեփի հետ անցյալի թշնամությունը մոռանալ՝ հաշտ ապրելու պայմանով: Հովսեփի պահանջն էր, որ խանը ճանաչի իր ժառանգական իրավունքը և չխառնվի իր գործերին: Սակայն Գանձակի խանը այս համաձայնությանը դեմ էր: Հովսեփի ու Շահվերդու հարաբերությունները լարվեցին, որը ևս ձեռնատու էր Իբրահիմին: Շուշիի Իբրահիմ խանը բանակցություններ սկսեց Գյուլիս-

[429] Սիմեոն Երևանցի «Ջամբռ», Երևանի Մատենադարանի ձեռագիր N978, կամ՝ Симон Ереванци, Джабр, Памятная книга..., Москва, 1958, стр. 280.

տանի մելիքի հետ, համաձայնություն տալով, որ նա վերադառնա իր երկիրն ու անկախ տիրապետի: Սա ավելի լարեց մելիքի հարաբերությունները Գանձակի Շահվերդի խանի հետ: Մելիք Հովսեփը 1765 թ. տեղափոխվեց Հերակլի մոտ[430]: Շուտով հայրենի Զրաբերդ վերադարձավ նաև Մելիք-Ադամը: Հարևան երկրների դժգոհությունը Գանձակի խանի նկատմամբ աճում էր, և ահա Շամախու Հուսեին խանը, Իբրահիմ խանը, Շամշադինի թուրքերը, ինչպես և Հերակլի զորքը Գյուլիստանի մելիք Հովսեփի հրամանատարությամբ շարժվում են դեպի Գանձակ: Շահվերդին դիմում է Զարի լեռնականներին, խնդրելով օգնության գալ, փոխարենը խոստանալով մեծ կաշառք ու հարուստ ավար: Ի վերջո, լեզու գտնելով Իբրահիմի և Հովսեփի հետ, հաշտություն է կնքում, իսկ Գանձակը պաշտպանելու եկած ավարլեզգիական խառնամբոխին վարձի փոխարեն ուղարկում է Երևանի կողմերը՝ թալանի: Ավարների ասպատակիչ զորքի մեջ էր և հայ քաղաքական գործիչ, ազատագրական գործի մեծ ջատագով Հոսեփ էմինը: Նա ծնվել է 1726 թ. Իրանի Համադան քաղաքում, վաճառականի ընտանիքում[431]: Պատանեկության տարիներին նա շատ էր լսել Հայոց Սղնախների հերոս պաշտպանների մասին պատմությունները և երազել երբևէ այնպիսի ունակություններ ձեռք բերել, որոնք անհրաժեշտ կլինեին հայրենիքին, նրա անկախ պետականության վերականգնմանը: Հայրը ստիպված էր տեղափոխվել Իրանից Հնդկաստանի Կալկաթա քաղաքը: Այստեղ երիտասարդ էմինը ծանոթանում է անգլիական ռազմական նորագույն տեխնիկայի, նավատորմի հետ և վճռում անպայման գնալ Եվրոպա, այնտեղ ստանալ համապատասխան ռազմագիտական ուսում, գուցե և փորձ, նոր միայն գնալ Ղարաբաղ, միանալ այնտեղի հերոս զինվորներին, մելիքներին, և օգնել վերականգնելու հայոց թագավորությունը: Եվ ահա 1751 թ. փետրվարի 14-ին 25-ամյա էմինը «Վալպոլ» անգլիական նավով, ծնողներից գաղտնի, մեկնում է Անգլիա: Ծանր օրերից հետո մի դիպվածով նա սերտ հարաբերություններ է հաստատում Լոնդոնի արիստոկրատական շրջաններում, շփվում անգլիական առաջավոր մտքի հետ: էմինը ընդունվում է Վուլվիչի թագավո-

[430] Լեո, էջ 300:

[431] «Հովսեփ Էմինի կյանքն ու արկածները» գիրքը, որը լույս է տեսնում Լոնդոնում 1792 թ.: Այն ունենում է հայերեն մի քանի հրատարակչություններ: Իր կյանքի մայրամուտին 1788 թ. Կալկաթայում էմինը անգլերեն գրում է իր կենսագրությունը, որը լույս է տեսնում Բեյրութում, 1958 թ.: Էմինի կյանքի ու գործունեության մասին հետաքրքիր աշխատություն է գրում Ա.Ռ.Հովհաննիսյանը, որը լույս է տեսնում ռուսերեն "Иосиф Эмин" վերնագրով, 1945թ.: Էմինի գաղափարի մասին վերլուծական էջեր են գրել Լեոն (Լեո, երկերի ժողովածու, 3-2, Եր. 1973, էջ 282), ինչպես նաև Բագրատ Ուլուբաբյանը (Բ.Ուլաբաբյանը, Ոսկե շղթա, Երևան, 1979, էջ 206-255):

ական ռազմական ակադեմիա: Էմինը մասնակցում է 1756 թ. Ֆրանսիայի դեմ պատերազմին, ձեռք բերում պատերազմական փորձ: Ապա Էմինը զինվորագրվում է պրուսական թագավոր Ֆրիդրիխ II-ի բանակում: Լոնդոնից Էմինը նամակ է գրում Վրաստանի թագավոր Հերակլին, հայտնելով, որ իրեն Անգլիայում հովանավորում է թագավորի որդին, խնդրում է նրան ընդունել իրեն իր բանակում որպես «եվրոպական սպա», որպեսզի ինքը հնարավորություն ունենա տեղի զինվորներին սովորեցնել «կռվելու եվրոպացիների նման»: 1759 թ. Էմինը Անգլիայից մեկնում է դեպի Հայաստան: Ի վերջո, Թուրքիայով Էմինը հասնում է Էջմիածին, որտեղ նոր էր կաթողիկոս օծվել Հակոբ Շեմախեցին: Նա, հետևելով վրաց թագավոր Հերակլի և նրա հոր՝ Թեյմուրազի օրինակին, իր հերթին նամակ է գրում ռուսաց կայսրուհուն, խնդրելով օգնել պաշտպանվելու լեզգիական ավարառուների մշտական արշավանքներից: Նաև խնդրում է օգնել Ռուսաստան մեկնած Թեյմուրազին: Էմինը որպես ուխտավոր մնալով Էջմիածնում, տեղեկանում է, որ Գանձակում զոհվել է քաջ վարդապետ Ավագը: Իսկ Էմինը ծրագրել էր այստեղից մեկնել Ղարաբաղ, անպայման միանալ հայ ազատագրական պայքարի հերոս Ավագին և նրա հետ ընդարձակել ազատագրական գործը խանի դեմ, այստեղից նոր միայն առաջարկել Հերակլին միասնական ճակատով կռվել: Անսպասելիորեն Էմինը փոխում է իր որոշումը և Թիֆլիս գնալու փոխարեն որոշում է վերադառնալ Անգլիա: Նա որոշում է հաջորդ անգամ Անդրկովկաս գալ Ռուսաստանով, այսինքն, կրկնելով իր մեծ նախորդի՝ Իսրայել Օրու ճանապարհը: 1761 թ. մայիսին Էմինը արդեն Լոնդոնում էր: Այստեղ Ռուսաստանի դեսպան իշխան Գոլիցինից նա ռուսական անձնագիր է ձեռք բերում, ինչպես նաև՝ հանձնարարական նամակ իշխանի անունից: Նրան Սանկտ Պետերբուրգում ընդունում է Ռուսաստանի վարչապետ Միխայիլ Իլարիոնովիչ Վորոնցովը: Էմինը հանդիպում է Վրաստանի թագավոր Թեյմուրազի հետ, որը որդու՝ Հերակլի հետ ունեցած ընդհարման պատճառով երկրից հեռացել էր Ռուսաստան: Էմինը չկարողացավ հանդիպել Ելիզավետա կայսրուհուն, քանի որ նա արդեն մահամերձ էր և ոչ ոքի չէր ընդունում: Սակայն իշխանուհի Եկատերինան տեղյակ էր Էմինի առաքելության մասին: Ելիզավետային փոխարինում է Պետրոս III-ը: Թեյմուրազը, որը որոշել էր վերադառնալ հայրենիք, նույնպես մահանում է: Էմինը, ստանալով նոր անձնագիր, որտեղ նշված է «Բեկի որդի», իր հետ վերցնելով նաև վարչապետի հանձնարարական նամակն ուղղված Հերակլին, մեկնում է: Ինչպես երևում է, Էմինի՝ հայրենիքի ազատագրման ծրագրերը համապատասխանում էին ռուսական շահերին, որն էլ Ռուսաստանի վարչապետին դրդեց օգնել նրան: Մոսկվայում նա հանդիպում է ծնունդով ղարաբաղցի մտավորական Մովսես Բաղրամյանին և իր հետ վերցնելով, մեկնում

է Աստրախան, ապա Կիզլար, որը ռուսական վերջին սահմանապահ կետն էր Կովկասում: Էմինին Կիզլարի պարետը ետ՝ Պետերբուրգ է ուղարկում, քանի որ նրա անձնագրում ստորագրված էր Պետրոս III-ի անունով, որն արդեն գահընկեց էր արված: Ռուսական վարչապետը մի քանի անգամ Էմինին առաջարկում է ծառայել ռուսական բանակում, ընդունել Աստրախանում գտնվող «Հայկական էսկադրոնի» հրամանատարությունը, որը Էմինի ծրագրերին չէր համապատասխանում: Էմինը Մոսկվայում ծանոթանում է Հովհաննես Լազարյանի հետ: 1763 թ. փետրվարին Մովսեսի հետ ճանապարհվում է Մոսկվայից դեպի Վրաստան: Էմինը հանդիսավոր մտնում է Թիֆլիս: Հերակլը՝ Նադիր շահի հնդկական արշավանքի մասնակիցն ու սիրելին, Իրանի կենտրոնական իշխանության թուլացումից հետո ու գահակալական կռիվների ընթացքում հոր հետ բավականին հզորացրել էր Վրաստանը և իշխող դիրք ուներ Հարավային Կովկասում: Սակայն լեզգիական արշավանքներն ու մշտական պատերազմները քայքայել էին երկիրը: Հերակլին հետաքրքրում էր Եվրոպայում ռազմական կրթություն ստացած հայ Էմինը: Սակայն նա հակված չէր իրականացնելու Էմինի ծրագրերը: Հերակլին չէր հետաքրքրում հզոր Թուրքիայի դեմ պատերազմը՝ հանուն հայկական տարածքների ազատագրման: Իսկ Իրանի խնդրում նա գոհ էր իր վասալական կախվածության վիճակից: Իհարկե, Ռուսաստանի Անդրկովկաս գալու դեպքում կցանկանար ձեռք բերել նրա հովանավորությունը: Էմինի ծրագիրը նա ընկալել չէր կարող, քանի որ այն նրա անձնական ու իշխանական շահերին չէր համապատասխանում: Իհարկե, նա ձգտում էր եվրոպական մարտավարության գաղտնիքներին տիրապետող ու պատերազմական փորձ ունեցող Էմինին ներգրավել իր գործերի մեջ: Քանի որ սպասվում էր Քերիմ խանի արշավանքը դեպի Անդրկովկաս, Էմինը հավաքագրում է 800 հայ երիտասարդների՝ հատուկ ջոկատ պատրաստելու համար: Սակայն Քերիմ խանի դեմ է ապստամբում նրա եղբայրը՝ Զաքի խանը, ուստի վեքիլը ստիպված Ուրմիայից վերադառնում է Սպահան[432]: Էմինը դիմում է Հերակլին, խնդրելով տալ 1000 հոգիանոց վրացական ջոկատ: Այն լրացնելով հայ կամավորականներով, ցանկանում է մտնել Ազարբայջան ու հանկարծակի հարձակումով ջարդել Քերիմ խանին: Հերակլը կտրականապես մերժում է: Էմինը Հերակլի համաձայնությամբ իր 24 հոգիանոց ջոկատով 1763 թ. հոկտեմբերին մեկնում է Հաղպատ, այնտեղ պայքարելու լեզգիական ավարառուների դեմ: Ճանապարհին հանդիպում է 52 հոգիանոց լեզգիական խմբին: Մարտը տևում է 10 ժամ: Լեզգիները ստիպված են լինում փախուստի դիմել՝ կորցնելով 14 հոգու: Իսկ իր ջոկատից վիրավորվում են երեքը: Սակայն Հերակլը խաբել էր Էմինին՝ մթերք չուղարկելով

[432] Չամչեան, հ.Գ, էջ 859:

նրա փոքրիկ ջոկատի համար: Էմինը առաջարկում է Հերակլին իրեն զորք տալ, որպեսզի ինքն արշավի դեպի Արևմտահայաստան Կարս, Բայազետ, Վան, Մուշ, որտեղ սպասում են հայկական բազմահազարանոց ջոկատները: Հերակլը համաձայնվում է: Մուշից ոչ հեռու սբ.Կարապետ վանքի վանահայր Հովնանը խոստանում է 40 հազարանոց բանակ, որին կմիանան ասորիներն ու քուրդ-եզդիները: Սակայն մի նոր հանգամանք գալիս է խանգարելու այս ծեռնարկին: Դա Ամենայն Հայոց կաթողիկոս Սիմեոն Երևանցու բացասական վերաբերմունքն է ապստամբության նկատմամբ: Տեղեկանալով վանահոր այս ծեռնարկի մասին, նա կարգալույծ է անում Հովնանին, նրան մեղադրելով, իբր, կաթոլիկությանը հարելու մեջ, որը բացահայտ կեղծիք էր: Իհարկե, ապստամբության շահերից ելնելով, Հովնանը համագործակցում էր կաթոլիկ ասորիների, ինչպես նաև հայ կաթոլիկների հետ: Իմերեթիայի և Թուրքիայի միջև պատերազմ է սկսվում: Շուտով Իմերեթիայի թագավոր Սողոմոնը հաղթում, ետ է մղում թուրքական բանակի հարձակումները: Սրվում են վրաց-թուրքական հարաբերությունները: Սպասվում է Թուրքիայի հարձակումը Իրանի, ինչպես և Արևելյան Վրաստանի վրա: Սիմեոն կաթողիկոսը, խուսափելով Իրանի և Թուրքիայի զայրույթից, ապստամբությունը ձախողելու համար 1764 թ. մարտի 25-ին նամակ է հղում Հերակլին, խորհուրդ տալով «հայոց թագաժառանգին ետ ուղարկել այնտեղ, որտեղից եկել է»[433]: Սիմեոն Երևանցին, որն իր ժամանակի ամենազարգացած մարդկանցից էր, մեծ գիտնական և փիլիսոփա, եռանդուն գործիչ, շատ զգույշ քաղաքականության կողմնակից էր, ուստի դեմ էր անհաշվենկատ ապստամբությանը, որը կարող էր բերել հայ ժողովրդի ու նրա եկեղեցու կործանմանը: Նա կողմնակից էր որևէ հզոր երկրի հովանավորության և ուժի միջոցով Հայաստանի ազատագրմանը: Բայց չէր հավատում սեփական ուժով այդ պետականության ստեղծմանը: Ուստի, տեղեկանալով Էմինի ծրագրերին, նա ամեն միջոց ձեռնարկեց կանխելու նրա գործունեությունը: Հերակլի համար խիստ կարևոր էր Էջմիածնի կաթողիկոսի խոսքը, նրա մեծ հեղինակությունը: Հերակլը, որպես հայոց Բագրատունյաց թագավորական տոհմի ճյուղերից մեկը, իրեն համարում է նաև հայոց թագի ժառանգորդ, ուստի կաթողիկոսի ակնարկը Էմինի մասին, իբրև «թագավորազնի», խիստ գայրացնում է Հերակլին: Արդեն չէր սպասվում Թուրքիայի արշավանքը դեպի Վրաստան: Հերակլը որոշում է ազատվել Էմինից: Նա Էմինին ջոկատով ուղարկում է Կովկասից այն կողմ, որտեղից նա պետք է մեկնի Ռուսաստան: Չեչենական Բրագուն գյուղում Էմինը հիվանդանում է և մի քանի ամիս մնում հայկական մի ընտանիքում: Տեղի ցեղերը, հատկապես միչիգիզները, դիմում են Էմինին, որ նա առաջնորդի իրենց արշավելու դեպի Վրաստան: 12 հազար լեռնցիներ սպասում էին նրա առաջնորդությանը: Էմինը գնում է ավարների կենտրոնը՝ Խունզախ, հանդիպում նրանց առաջնորդ Մոհամեդ-Մուսախանի հետ: Այստեղ նա մնում է երեք ամիս: Էմինը մերժում է խանի առաջարկը՝ առաջնորդել իրենց Վրաստանի վրա և խնդրում է մի ջոկատ, որ ուղեկցի իրեն անցնելու Ղարաբաղ: Խանը տալիս է 21 հոգիանոց մի ջոկատ, որն ուղեկցում է նրան մինչև Ջար: Ի պատասխան Գանձակի Շահվերդի խանի խնդրանքին՝ ավարներն ու լեզգիները պատրաստվում են արշավի, առաջարկելով Էմինին միանալ իրենց: Գանձակում լեզգիներն այլևս պետք չէին: Խոստացած վարձի փոխարեն լեզգիներին թույլատրվում է շարժվել դեպի Երևան ու թալանել հայկական գյուղերը: Էմինը որոշում է հետաձգել Արցախ գնալն ու մնում է նրանց հետ՝ կանխելու Երևանի և Էջմիածնի վրա նրանց ասպատակությունը: Ջարի ավարները նրան տալիս են 40 թիկնապահ և ընդունում իրենց մեջ[434]: Նա ընդունում է առաջապահ գնդի հրամանատարությունը, որպեսզի արգելի հայկական գյուղերի ավերումը: Դեպի Երևան արշավելիս նրանք Սևանա լճի մոտ պատահում են քոլանի ցեղի քուրդ խաշնարած գաղթականների մի հոծ խմբի, որոնք Շուշիի Իբրահիմ խանի առաջարկությամբ Արարատյան նահանգից ու այլ վայրերից գալիս էին բնակվելու Արցախի Ծար (Քարվաճառ-Բյալբաջար), Քաշունիք (Քոչեզ, հետո՝ Լաչին), Կովսական (Զանգելան), Զաբրայիլ գավառներում, նպատակ ունենալով աստիճանաբար այստեղից դուրս քշել հայ տեղաբնիկներին: Շուշիի թաթար խանը այս քայլով նպատակ ուներ լեռներում հաստատված քրդական ռազմատենչ ցեղերի շերտով Ղարաբաղի հայությանը վերջնականապես կտրել Հայաստանի սրտից՝ Արարատյան դաշտից, ինչպես նաև նրանց միջոցով ավելի նեղել քրիստոնյա հայերին ու ջլատել հայ մելիքների ուժերը: Վրաստանից և այլ տեղերից Ղարաբաղ գաղթեցին տյուսյան, կարաչարլի, ջինլի, դմիրչի-հասանլի, ղզզլ-հաջիլի, սաֆի-քյուրդ, քոյ-ահմեդլի, սահաբլի, քենգերլի և այլ թափառական ցեղեր: Քոլանիների հետ ճակատամարտում հաղթում են լեզգիները, խլելով 2 հազար խոշոր և 8 հազար մանր եղջերավոր անասուն, 600 ձի և գերելով 814 հոգի: Քոլանիները դիմում են Շամշադինում գտնվող Գյուլիստանի մելիք Հովսեփին, որը գլխավորում էր վրացական զորքերը: Հանկարծակի հարձակումով Հովսեփը ջարդում է լեզգիներին, ետ խլում ավարը, նրանց հալածում մինչև Կուր գետը: Էմինը այդ ընթացքում լեզգիներից ազատել է մի խումբ հայ և քուրդ գերիների: Լեզգիները հաղորդեցին Գանձակի խանին, որ պատրաստվում են արշավել

[433] А.Р.Иоаннисян, Иосиф Эминь, Ереван, 1945, стр. 177.

[434] Ахмед-бек Дживаншир, О политическом существовании Карабахского ханства с 1747 по 1805 гг., Шуша, 1901, стр. 11 (далее- Ахмед-бек Дживаншир).

նրա վրա և պատժել խաբեության համար: Շահվերդին ստիպված իր հպատակներից փող է հավաքում և տալիս ավարներին, որպեսզի հրաժարվեն ասպատակելու մտքից: Սակայն դժգոհ բնակչությունը խռովություն բարձրացրեց խանի դեմ: Խանն իր ընտանիքով հազիվ կարողանում է փախչել և ապաստանել Շամքորում՝ Մելիք-Ադամի մոտ: Խռովարարները Գանձակը հանձնեցին Իբրահիմ խանին: Մելիք-Ադամը Շահվերդի խանի հետ փորձեց ետ խլել Գանձակը, սակայն պարտություն կրեց: Շահվերդին դիմեց Հերակլի, Շեմախու խանի և լեզգիների օգնությանը: Հերակլը Գանձակում վերահաստատեց Շահվերդուն: Նա նաև Գյուլիստան ուղարկեց մելիք Հովսեփին՝ պարտադրելով Շահվերդուն և Իբրահիմին ընդունել նրա ինքնուրույնությունը: Մելիք Հովսեփը 1767թ. ամռանը նոր էր հաստատվել Գետաշենում և ազատ արձակել իր 500 հոգիանոց զորաջոկատը, երբ Շահվերդի խանը 4500 հոգիանոց զորք ուղարկեց՝ տեղում հաշվեհարդար տեսնելու մելիքի հետ: Այդ ժամանակ մելիքի մոտ էր եկել նաև Հովսեփ էմինը: Նա համոզված էր, որ հայկական ազատագրական շարժման առանցքը Ղարաբաղն է լինելու, չնայած նրա սիրտը՝ Շուշին թափառական ցեղերի ձեռքին է մնում: Նրան ընկերակցում էր ղարաբաղցի Մովսես Բաղրամյանը՝ իր հայրենի երկրամասի քաղաքական ու տնտեսական վիճակին տեղյակ, խելոք և շրջահայաց մի գործիչ: Էմինը իր ինքնակենսագրության մեջ մանրամասն նկարագրել էր գանձակցիների հարձակումը: «Որքան հաճելի է տեսնել այս քաջերի գործունեությունը: Նրանք բլուրներն ի վեր մագլցում էին, կատաղի առյուծների պես հարձակվում դեպի առաջ և շփոթության ու խուճապի մատնում հակառակորդին», - գրում է Հովսեփ էմինը՝ այս պաշտպանության ականատեսն ու մասնակիցը: Գանձակցիները Հոսեփի որդու՝ քաջ Բեգլարի գլխավորած խմբի կատաղի հակահարձակմանը ենթարկվելով, մեծ կորուստներ տալով, նահանջում են: Հայերից զոհվում են 4 հոգի: Գանձակի խանի զորքից սպանվում են 40 զինվոր, 50 ձի, հարյուրից ավելին՝ վիրավորվում: Իհարկե, կռվին անտարբեր ականատես չէր և Հովսեփ էմինը, որը ցուցադրում էր մարտավարության մեջ իր հմտությունն ու եվրոպական պատերազմների փորձը: Ապա հավաքվում են մելիքի զինվորները և պատրաստվում դիմագրավելու Գանձակի խանի նոր հարձակումը: Այս անգամ խանն ուղարկեց 10 հազար զինվոր իր որդու՝ Մուհամեդ-Հասանի հրամանատարությամբ: Նրանք եկել էին հրետանիով, այլ պատրաստություններով: Գանձակցիների հետ էր և Ջրաբերդի մելիք Ադամը, որը փորձեց միջնորդ դառնալ և խաղաղություն հաստատել: Սակայն գյուլիստանցիները չուզեցին լսել նրան, ընդունելով մարտը: Ամրանալով ապառաժներին, մելիք Հովսեփի զինվորները խնայում էին գանձակցիների մեջ եղած հայերին: Մելիքն ու իր որդին Հովսեփ էմինի հետ փոքրաթիվ զորքով խայտառակ պարտության մատնեցին խանի զորքին՝ հալածելով նրան մինչև Գանձակի դռները: Իբրահիմ խանը հաշտվեց իր քաջությամբ հռչակված Հովսեփի հետ, որը վերադարձավ իր իշխանությանը: Մելիք Ադամը ևս հաշտություն կնքեց Իբրահիմ խանի հետ և իր զորքով ու ժողովրդով վերադարձավ Ջրաբերդ: Սակայն մելիք Ադամը իր հետ բերեց և Իսրայել՝ կաթողիկոսին, որը նստեց Երիցմանկանց վանքում: Հովսեփ էմինը 10 ամիս մնաց Գյուլիստանում: Սակայն մի օր հանկարծ մելիք Հովսեփը փոխում է իր վերաբերմունքն ու իր հայրենասեր հյուրից պահանջում, որ հեռանա մելիքության սահմաններից: Դրա պատճառը Սիմեոն Կաթողիկոսի նամակն էր, որտեղ հայոց հայրապետը խորհուրդ էր տալիս այլևս չհյուրընկալել Հովսեփ էմինին: Վերջինս գնաց Գանձասարի վանք՝ Աղվանից կաթողիկոս Հովհաննես Ջալալյանի մոտ: Այստեղից ընկերակցած մի քոլանի քուրդ շեյխի հետ, որին էմինը ազատել էր լեզգիական գերությունից, ինչպես և շուշեցի հայ Իսահակի ու իր ուղեկից Մովսես Բաղրամյանի հետ մեկնում է Շուշի՝ հանդիպելու Իբրահիմ խանին: Հովհաննես կաթողիկոսը էմինի միջոցով նամակ է գրում Իբրահիմ խանին, վերջում ավելացնելով. «Վարվեցեք անոր հետ, ինչպես հարմար դատեք: Բայց որչափ կարող եմ նկատել, նա բնավ չի կասկածում, որ պիտի բարեկամներ գտնի կամ ազնիվ ուշադրությամբ ընդունվի ձեր բարձրության կողմից, ինչպես նրան ընդունեցին անգլիացի իշխանները և մանավանդ, Դաղստանի լեզգիները, որոնք թշնամացած են տիեզերքի բոլոր ազգերի հետ: Ուրեմն խաղաղություն ընդ ձեզ և թող մարդասիրությունը ձեր սրտին, այնպես, որ ազնվական հյուրն ընդունելուց հետո ձեր մտքին առաջնորդի ասպնջականության օրենքը, որը կարգեց Աբրահամ նահապետը: Ձերդ Հովհաննես, ծառա Քրիստոսի և կաթողիկոս Գանձասարի»[435]: Իբրահիմ խանին հայտնի էին էմինի ծրագրերը, սակայն նա հաշվի առնելով իր «հյուրի» կապերը Դաղստանի լեզգիների ու ռուսական արքունիքի հետ, չհամարձակվեց սպանել նրան: Ըստ երևույթին, էմինը Իբրահիմի մոտ էր գնացել հենց որպես ռուսաց արքունիքի հատուկ ներկայացուցիչ:

Թե կաթողիկոսը և թե՝ էմինը գիտեին, որ Իբրահիմ խանին հայտնի էր դարձել հնդկաստանցի հայրենասերների ծրագրերի մասին, ու նա մտադրվել էր սպանել նրան: Սակայն հայտնի էր նաև, որ Իբրահիմը չէր ցանկանա էմինի պատճառով թշնամանալ ավարների հետ, որոնց շատ սիրելի էր այս քաջ հայորդին: Իբրահիմը պետք է հաշվի առներ նաև այն հանգամանքը, որ էմինը ընդունվել է ռուսաց հզոր կայսրության արքունիքում: Հաջորդ օրը խանը այցելուներին ընդունում էր Շուշիի միջնաբերդում գտնվող իր

[435] Մատենաշար «Ազդակ», «Յովսեփ Էմինի կեանքն ու արկածները», Պեյրութ, 1958:

ապարանքի բակում նստած գետնին փռած գորգի վրա: Էմինը մի քանի օր մնալով Շուշիում մեկնում է Զար ավարների երկիրը: Սակայն Շամախիում Տեր-Գաբրիելից տեղեկանալով վանահայր Հովնանի ծրագրերի մասին, որն առաջարկում էր գնալ Արևմտահայաստան և ղեկավարել լեռնցի ասորիների, քուրդերի և հայերի ռազմական ջոկատները, Էմինը ճանապարհվում է դեպի Մուշ: Նա երկրորդ անգամ պետք է անցներ Շուշիի շրջանով: Իբրահիմը իր լրտեսների միջոցով տեղեկանալով Էմինի մասին, դավադրություն է սարքում, փորձելով իր հայ գործակալի ձեռքով սպանել մեծ հայրենասերին: Սակայն Էմինը կանխում է դավադիրին: Այստեղ ևս Էմինին ուղեկցում էր Մովսես Բաղրամյանը: Շուտով հասնում են Խոյ: Լեռնցի ասորիները Էմինից պահանջում էին, որ գա Հերակլի հատուկ ջոկատի հետ, որն էլ կլինի միասնության և ուժի երաշխիքը: Էմինը ստիպված էր վերադառնալ Թիֆլիս: Մովսես Բաղրամյանը հիասթափվելով հեռանում է Էմինից, գնում Աստրախան իր ընտանիքի մոտ, ապա ճանապարհվում Հնդկաստան: Էմինի այս ճամփորդության ընթացքում նրան ուղեկցող Մովսես Բաղրամյանը նպատակ է ունեցել հայրենի Արցախում, մանավանդ Շուշիում ձեռնարկել դպրոցներ բացելու և պատանիներին կրթելու գործը: Սակայն թե միջավայրը, և թե Իբրահիմ խանի հայատյաց քաղաքականության պայմաններում դա միանգամայն անհնար գործ էր: Ուստի հետագայում Մովսեսը Էմինի խորհրդով 1767 թ. մեկնում է Հնդկաստան Մադրաս քաղաք, որտեղ զբաղվում է հայ առևտրական ընտանիքների երեխաներին հայոց լեզու և հայոց պատմություն ուսուցանելով, միևնույն ժամանակ գործակցում Մադրասի հայկական համայնքի գործիչների Շահամիր Շահամիրյանի, նրա որդու Հակոբի, Գրիգոր Խոջաջանյանի և այլոց հետ Հայաստանի ազատագրության գաղափարը քարոզելու ու ժողովրդի մեջ տարածելու համար: Այս արցախցին անմիջական մասնակցություն է ունենում Մադրասում 1770-1771 թթ. հայկական տպարան կազմակերպելու և հայերեն քաղաքական գրքեր հրատարակելու գործին: Մադրասում 1773 թ. նրա հեղինակությամբ լույս է տեսնում «Նոր տետրակ, որ կոչի յորդորակ» գիրքը: Այս աշխատությունն իր բովանդակությամբ ու գաղափարներով մի նոր բացառիկ երևույթ էր հայ մատենագրության մեջ: Այն նոր ծրագիր էր հայ ազատագրական շարժման համար, կոչ էր՝ ուղղված հայ երիտասարդությանը հայոց անկախ պետականությունը վերականգնելու համար: Այս գրքով փաստորեն սկզբնավորվում էր հայկական հրապարակախոսական մշակույթը: Սա հայ մատենագիտության մեջ առաջին գիրքն էր հայ ազատագրական շարժումը բարձրացնելու և պայքարի ելնելու գաղափարը գրավոր խոսքով ժողովրդին մատուցելու գործում: Անշուշտ, այս գործի հեղինակը Մովսես Բաղրամյանն էր, ճանապարհորդն ու եվրոպական մշակույթին, գրականությանը, քաղաքական անցուդարձին քաջատեղյակ մեծ հայրենասեր Հովսեփ Էմինի ընկերն ու զինակիցը: Սիմեոն կաթողիկոսը, որը սարսափելով Օսմանյան կամ Պարսից բռնապետությունների պատժիչ քայլերից, որդեգրել էր ամեն մի ապստամբություն, հանդուգն քայլ տեղում խեղդելու քաղաքականությունը, «Նոր տետրակի...» համար պատժում է Մովսես Բաղրամյանին, կարգալույծ անում և արգելում այլևս նման գրքեր հրատարակել: Հովսեփ Էմինը Շուշիից Գանձասար է վերադառնում: Հովհաննես Ջալալյան կաթողիկոսը անկեղծորեն խոստովանում է Էմինին, որ Սիմեոն կաթողիկոս Երևանցին իրեն ու բոլոր մելիքներին նամակներ էր ուղարկել, պահանջելով չընդունել իրեն, հակառակ դեպքում սպառնում է կարգալույծ անել ու բանադրել: Արդեն հասկանալի է դառնում մելիք Հովսեփի վերաբերմունքի մեջ կտրուկ փոփոխության պատճառը: Սիմեոն կաթողիկոսը մի նոր պայքար էր սկսել Գանձասարի կաթողիկոսության դեմ, նրանից խլելով Շամախու և Նուխի-Շաքիի թեմերը, այս գործում նույնիսկ դիմելով մահմեդական խաների օժանդակությանը: Թվում է, ժամանակի մեծ մտավորականներից մեկը Սիմեոն կաթողիկոս Երևանցին փաստորեն արջի ծառայություն է մատուցել իր երկրի ազատագրման գործին՝ խանգարելով հայ-վրացական զինակցությանն ու քաղաքական ամենահարմար պահին՝ երբ Իրանում անիշխանություն էր տիրում, իսկ Թուրքիան թուլացել էր, կարող էին հմուտ կազմակերպված ապստամբության միջոցով ազատագրել երկիրն օտար խաներից ու վերականգնել պետականությունը, մանավանդ, որ միշտ չէ, որ գտնվում էին Հովսեփ Էմինի պես ամեն ինչով պատրաստ ղեկավարներ: Շամախիում Էմինը տեղեկանում է, որ Խոյի և Սալմաստի հայ ու ասորի քրիստոնյաները պատրաստ են ազատագրական գործի համար նրա տրամադրության տակ դնել 18 հազար զինվոր: Սա մի նոր հույսի շող էր Էմինի համար: Նա շտապ Ղարաբաղով գնում է Խոյ քաղաքի մոտ, ասորաբնակ Խոսրովա գյուղը: Երբ այստեղ տեղեկանում են, որ Էմինը փող չունի, հրաժարվում են գործակցել նրա հետ: Էմինը գնում է Հերակլի մոտ՝ օգնություն խնդրելու: Սակայն սա, կրկին ստանալով Սիմեոնի պահանջը, Էմինին հեռացնում է Վրաստանից: Վերջինս դիմում է Իմերեթիայի թագավոր Սողոմոնին, որն Էմինին դիմավորում է գինարբուքի սեղանով: Էմինը հասկանում է, որ գինուց այն կողմ գործը առաջ չի գնալու, ուստի հեռանում է: Վրաստանում Էմինին ոչինչ չի հաջողվում ձեռնարկել: Նրա հայ-վրացական միության ծրագիրը Սիմեոն կաթողիկոսի միջնորդությամբ հօդս է ցնդում: Հնդկաստանի ճանապարհին Էմինը հյուրընկալվում է Շուշիում Իբրահիմի կողմից: Ութ տարվա ձգտումներն ու թափառումները ոչ մի արդյունք չտվեցին: Ի վերջո, նա վերադառնում է Հնդկաստան՝ իր ծնողների մոտ, ընտանիք կազմում, ապրում մինչև խոր ծերություն Մադրասում հայ հասարակական

գործիչ, մեծահարուստ Շահամիրյանը առաջարկում է հարուստ վաճառականներից փող հավաքել, որի օգնությամբ Էմինը ձեռնարկի Հայաստանի ազատագրման խնդիրը: Սակայն այստեղ ևս կրկին խանգարում է Սիմեոն կաթողիկոսը: 1780 թվականին Պետերբուրգում իշխան Պոտյոմկինն ու գրավար Սուվորովը խորհրդակցում են Հովհաննես Լազարյանի ու Հովսեփ արքեպիսկոպոս Արղությանի հետ հայկական գործերի մասին և հանձնարարում Էմինին Ռուսաստան հրավիրել, Հայաստանի ազատագրման գործը գլխավորելու համար: Սակայն նրանց նամակը Էմինին է հասնում 10 տարի հետո միայն: Էմինը մահանում է Կալկաթայում 82 տարեկան հասակում:

Քանի որ Խամսայի մելիքները շարունակում էին կենտրոնական դեր կատարել հայոց ազգային-ազատագրական պայքարի ծրագրում, տարբեր վայրերից հայ գործիչները իրենց հայացքները հառել էին դեպի Ղարաբաղ: Վրաստանի հետ միացյալ քրիստոնեական ուժեր ստեղծելու պատրանքները հօդս ցնդեցին: Վրաց իշխանները ևս չէին հավատում նման միասնությանը, քանի որ իրենք տրոհված էին ու որևէ վճռական ուժ չէին ներկայացնում իրենցից, ուստի նրանք ևս հայացքները դեպի Ռուսաստան էին ուղղել: Ղարաբաղի խանի շուրջը ասես աստիճանաբար սեղմվում էր օղակը: Նա արդեն նոր դաշնակիցներ էր փնտրում: Շուտով նա պսակվում է Զարի (Զար) 12-ամյա Ումմա-խանի քրոջ՝ Բախտակի (Բիքու-աղա) հետ: Սարուջալու ցեղապետի ու կովկասցի ավարառուների միջև վաղուց էր դաշնություն ստեղծվել: Փանահն իր թափառական ցեղակիցներով հաճախ էր միանում ավարներին ու ասպատակում հայոց, վրաց և պարսից բնակավայրերը: Եվ ահա այս դաշինքը նորոգելու նոր առիթ էր ստեղծվել: Կովկասի լեռնականներին հարավում Շուշիի պես մի կարևոր հենարան ու դաշնակից էր պետք, ուստի Ումմա-խանը ստիպում է քրոջը, հակառակ նրա կամքի, կնության գնալ «ատելի, տգեղ ու անճոռնի Իբրահիմին»[436]: Ավարները խանուհու հետ Շուշի են ուղարկում նաև երեք հազարանոց հեծելազոր, որը պետք է հարկ եղած դեպքում պատժիչ դեր կատարեր հայկական բնակավայրերի նկատմամբ: Իր ոտքի տակ հողն ամրացնելով, Իբրահիմը կրկին փորձում է դավադրությունների միջոցով վերացնել մելիքների անկախ իշխանությունները: Սկզբում դավադրություն է սարքում Զրաբերդի Մելիք-Մեժլումի նկատմամբ, մելիքի Ղազարխ (հետագայում՝ Մարաղա) գյուղում: Դավադրությունը, որի մասին գրում է Ռաֆֆին, բացահայտվում է: Շուշիի Իբրահիմ խանը, որպեսզի վերացնի Զրաբերդի տեր Մելիք-Իսրայելյանների տունը, Կյուլաթաղ գյուղից Ալավերդի հարյուրապետի որդուն՝ Միսայել-բեկին հանձնարարում է դավադրությամբ սպանել իր տրոջը՝ Մելիք-Մեջլումին, տիրանալ նրա իշխանությանը: Այս ձեևով խանը կարողացել էր ոչնչացնել

[436] Геничутлинский, стр. 46.

Խաչենի Ջալալյանների ժառանգներին, նրանց փոխարեն մելիք կարգելով Խնձրստանցի Մելիք-Միրզախանյաններին: Կյուլաթաղցի բեկը համաձայնեց խանի առաջարկին և իր փեսայի՝ Հակոբ հարյուրապետի (Թյուլի Հակոբ) հետ հյուր է գնում Զրաբերդի մելիքին: Դավադիրները անզգուշության պատճառով բացահայտվում են, ձերբակալվում և Մելիք-Մեջլումի հրամանով սպանվում: Կոտորում են նրանց ընտանիքը, բացի Ռոստոմ-բեկից, որը փախչում է Իբրահիմ խանի մոտ: Իսկ Գյուլիստանում 1775 թ. Մելիք-Հովսեփի վախճանվելուց հետո, նրան փոխարինում է Մելիք-Բեգլար II-ը: Ինչպես գրում է Ռաֆֆին, նա «սաստիկ գոռոզ, քաջասիրտ և պատերազմասեր երիտասարդ էր: Նա դեռ հոր կենդանության ժամանակ մասնակցում էր նրա կռիվներին և հայտնի էր իր հաղթություններով: Բայց այդ անպարտելի տղամարդը, որ իր երիտասարդությունը անցուցել էր պատերազմների մեջ, երկար չվարեց իր երկրի իշխանությունը: Մի անգամ, լեզգիների հետ ունեցած ճակատամարտում, որ տեղի ունեցավ Գանձակից ոչ այնքան հեռու, Գորանի գետի ափին, Մելիք-Բեգլարը հրացանի գնդակից սպանվեցավ»[437]: Ապա Ռաֆֆին պատմում է երիտասարդ իշխանի սպանության մասին լեգենդը, ըստ որի մելիքը իր Ամարնան կնոջից բացի, որը Մելիք-Շահնազարի դուստրն էր, Խարխափոր գյուղի իր ամառանոցում Բալա անունով սիրուհի էր պահում: Ամարնանը, օգտվելով պատեհ առիթից, երբ ամուսինը պատերազմի էր եկնում, Լալա անունով ծառայի միջոցով սպանել է տալիս ամուսնու գեղեցկուհի սիրուհուն: Մեկնելուց առաջ մելիքը տեղեկանում է ողբերգության մասին և խոստանում վերադարձին պատժել մեղավորներին: Կնոջ նենգ ծառան որոշում է կանխել մելիքի վերադարձը, որպես թիկնապահ կռվի մեկնելով, թիկունքից կրակում սպանում է իր տիրոջը: Քանի որ մելիքության օրինական ժառանգորդ Ֆրեյդունը մանկահասակ էր, Մելիք-Բեգլարին փոխարինում է եղբայրը՝ Մելիք-Աբով III-ը, որը արժանիորեն շարունակեց իրենց նախնիների գործը: Այս ժամանակներից պահպանվել են որոշ վավերագրեր, որոնք գրի էր առել Մակար եպիսկոպոսը: Ահա մի ապահովագիր հայտնում է, որ «Տանուտերանց Զանի որդի Յարութիւնն» վաճառում է «Ամենափրկիչ վանքի մոտ գտնվող իր հողատարածքը Աբրահամ հարյուրապետի որդի Յակոբջան հարյուրաետին 10 հազար թումանով: Առուծախի վկաներն են՝ «Հիւրեկայ (Հոռեկի) առաջնորդ Պետրոս, Ներսես ճգնազգեաց վարդապետ, քաջամարտիկ Մելիք-Յոսեփ, Քաչալ Հրապետ, Կոսունց Եաւրի, Չողվուն (Փոքորիկ) Յարութին, Ուստա Բալաս...»[438]:

[437] Ռաֆֆի, էջ 218:
[438] Մ. Բարխուտարյանց, «Արցախ», էջ 156:

Ռուսական արքունիքում Անդրկովկասի ու Կասպիականի ափերի նկատմամբ աշխուժություն է նկատվում: Եկատերինա կայսրուհին ռուս-թուրքական պատերազմների հերոս զորավար Ա.Սուվորովին հանձնարարում է Կասպիական ծրագրերի իրականացման գործը: Գեներալի խորհրդականներն էին Հովհաննես Լազարյանն ու արքեպիսկոպոս Հովսեփ Արղությանը: Սուվորովը Աստրախանից կապեր է հաստատում հայ մելիքների հետ: Նա ուսումնասիրում է Հայաստանի ճանապարհները, իր զեկուցագրերում նկարագրում հայոց բերդերը[439]: Սուվորովը հայկական հարցի հետ առաջին անգամ առնչվեց 1778 թ., երբ հայերին Ղրիմից պետք է գաղթեցնեին Ռուսաստանի հարավային շրջանները: Սուվորովը ռուսական արտաքին քաղաքականության ակտիվացման ջերմ պաշտպաններից մեկն էր: Նա մեծ հետաքրքրություն էր հանդես բերում Հայոց հարցի նկատմամբ: Ըստ երևույթին, իր դերն էր կատարել և արցախցի հայուհի տատը, որը մանկության տարիներին թոռանը պատմել էր Արցախի, նրա ազատատենչ ժողովրդի մասին: «Հունական նախագծի կապակցությամբ, - գրում է էգոնը, - որ զբաղեցնում էր մեծ միապետուհու գործակիցների մտքերը, ենթադրվում էր վերականգնել Հայաստանի քաղաքական անկախությունը Ռուսաստանի գերագույն պրոտեկտորատի տակ: Այդ ծրագրին առանձին ջերմությամբ էին վերաբերվում իշխան Պոտյոմկինն ու Սուվորովը»[440]: 1778 թ. իշխան Պոտյոմկինը Հյուսիսային Կովկասի կառավարիչ և գլխավոր հրամանատար է նշանակում իր ազգակից, գեներալ Պավել Պոտյոմկինին: 1783 թ. մարտի 5-ին Հովհաննես կաթողիկոսը ժողով է գումարում Գանձասարում, որին մասնակցում էին Դիզակի, Ջրաբերդի ու Գյուլիստանի, ինչպես և Ղարադաղի հայ մելիքները, նրանց հետ նաև վեց եպիսկոպոսներ: Նրանք աղերսագիր են գրում իշխան Պոտյոմկինին: Վերջինս ապրիլի 6-ին հանձնարարում է գեներալ Պոտյոմկինին «Շուշիի Իբրահիմ խանին պետք է պաշտոնանկ անել, որովհետև Ղարաբաղն այսուհետև կկազմի անկախ, բացի Ռուսաստանից ոչ ոքի չենթարկվող մի երկիր: Ամեն ջանք գործ դրեք, որ այս նոր երկիրը կազմակերպվի ժողովրդի համար ամենաշահավետ կերպով: Այս միջոցով հայկական ուժեղ նահանգները կհետևեն նրա օրինակին»[441]: Ըստ այս ծրագրի, Արցախը պետք է դառնար ապագա հայկական պետության կորիզը: Իշխան Պոտյոմկինը գրում է թագուհուն. «Այսպիսով Ասիայում կվերանորոգվի մի քրիստոնեական պետություն հա-

[439] Архив АН СССР, ф. 99, оп. 2, в. 13, կամ՝ Մ.Ներսիսիյան, Ռուս-հայկական հարաբերությունների պատմությունից, Եր., 1956, էջ 43 և 92:
[440] "Кавказский вестник", Тифлис, 1901, N 10, приложение.
[441] Дубровин, "История войн и владычества русских на Кавказе" , II том, стр. 29 (далее - Дубровин).

մածայն Ձեր կայսերական մեծության խոստումների, որոնց մասին հաղորդել եմ հայոց մելիքներին»: Ըստ մշակված ծրագրի, 1784թ. զորքի մի մասը պետք է գրավի Կասպիականի ծովեզերքը, իսկ մյուս կեսը հասնելով Թիֆլիս, այստեղից շարժվի դեպի Ղարաբաղ, ապա և Ղարադաղ: Հայերի հետ բանակցություններին զուգահեռ գեներալ Պոտյոմկինը 1783 թ. հուլիսի 24-ին Գեորգիևսկի բերդում վրաց թագավոր Հերակլի հետ ստորագրեց մի դաշնագիր, որով վրացիները ընդունում են Ռուսաստանի հպատակությունը: Վրաստանի ներքին թուլությունն ու անճարակությունը Հերակլին այդ քայլին մղեց: Դաշնագրով Ռուսաստանը խոստանում էր ընդարձակել Վրաստանի տարածքները, այնտեղ մշտական զորք պահել: Վրաստան մտավ ռուսական մի զորաբաժին (երկու գումարտակ)՝ գնդապետ Բուռնաշովի հրամանատարությամբ:

Այդ ժամանակ Իրանի գահի ժառանգորդն էր պարսիկ Ալի Մուրադ-խան Զենդը, որը տիրում էր երկրի մեծ մասին ու թագի համար համառ պայքար էր մղում դաջարների դեմ: Նա 1784 թ. ռուսներին առաջարկեց ռուս-իրանական պայմանագրի մի նախագիծ, որտեղ կարևոր մաս էր կազմում հայկական պետության վերականգնման ծրագիրը[442]: Ըստ այս նախագծի, պետք է միացվեին Երևանի, Նախիջևանի, Ղարաբաղի և Ղարադաղի (Փայտակարանի) խանությունները և որպես հայկական պետություն հանձնվեին Ռուսաստանին, որի փոխարեն Ռուսաստանը պետք է ճանաչեր Ալի Մուրադ-խանին որպես Իրանի շահ, ինչպես նաև Իրանը պաշտպաներ Թուրքիայի հարձակումից: Սակայն Եկատերինա II կայսրուհին սպասողական դիրք գրավելով, ձգձգում էր պայմանագրի կնքումը: Ալի Մուրադ-խան Զենդը, որը հիվանդ էր, ծրագրել էր ձմեռել Մուղանի դաշտավայրում, ապա 1784 . գարնանը թագադրվել Արդաբիլի մայր մզկիթում շիաների համար սրբություն հանդիսացող Շեյխ Սաֆի-էդդինի դամբարանի հովանու ներքո: Բաքվեցի գիտնական Գ.Արդուլաեևը այն կարծիքն է հայտնում, թե 1784 թ. «գոյություն ուներ Ազարբայջանը Ռուսաստանի և Իրանի միջև բաժանելու մտադրություն»[443]: Նախ Ազարբայջանը իրանյան տարածք է և սխալ է բաքվեցու կողմից այն օտարելու փորձը: Իսկ Ղարադաղում, որ հնում Փայտակարան էր կոչվել, միշտ էլ հայեր են բնակվել ու Հայաստանի բաժանումից հետո, 378 թ., երբ Ատրպատականում թուրքալեզու ցեղերի տարածման հոտն էլ չկար, այն Հայաստանից անցնում է Իրանին: Ահա այս պատճառով էլ հանվեց ռուսական զորքի դեպի Գանձակ և Ղարաբաղ արշավելու

[442] «Իրան-նամե», ամսագիր, «Հայ պետականության վերականգնման պարսկական մի ծրագիր», պրոֆեսոր Բորիս Բալայան, Եր., 1993, հուլիս, թիվ 2, էջ 27:
[443] Նույն տեղում, էջ 28:

ծրագիրը: Արդեն հայոց պետության ստեղծման հարցը կորցնում էր իր արժեքը, երբ Սպահան ժամանեց ֆրանսիական կոմս, հավանաբար, հետախույզ Ֆերյեր-Սովբեֆը, որի ձեռնարկած քայլերը «տեղից շարժեցին» հայկական խնդիրը: Ֆրանսիացին Ալի-Մուրադ-խանի հետ տարածեցին ֆրանսա-իրանա-թուրքական դաշինքի մասին կեղծ լուրերը, որն էլ Եկատերինա II-ին ստիպեց շտապել Իրանի հետ դաշինք կնքելու հարցում: Գեներալ Գ.Ս.Պոտյոմկինը գնդապետ Վ.Ս.Տոմարային ուղարկելով Սպահան, հայտնեց, թե «կայսրուհին կարգադրել է Ռուսաստանի համար կարևոր օգուտներ քաղել Ալի-Մուրադ-խանի ռուսական կայսերական գահի հետ դաշինք կնքելու ցանկությունից», և միաժամանակ ընդգծեց, թե Ռուսաստանի անվտանգությունն ապահովված կլինի, եթե «հայ ժողովուրդը Ռուսաստանի և Թուրքիայի միջև հանդիսանա որպես պատնեշ», որը ռուսաց կայսրուհու «պատնեշային ռազմավարության» շարունակությունն էր[444]: Պայմանագրի ռուսական նախագծում շրջանցվում էր հայոց թագավորության խնդիրը, և խոսք էր գնում վերականգնված պետության հայկական կառավարության մասին: Ռուս-իրանական պայմանագրի երկրորդ մասն ուժի մեջ պետք է մտներ Թուրքիայի նկատմամբ «Ռուս-իրանական պաշտպանական դաշինքի» հաղթանակի դեպքում: Այս դաշինքի առաջին կետն ասում է. «Ռուսական զորքերն Արևմտյան Հայաստանն ազատագրում են թուրքական տիրապետությունից: Դրանից հետո Արևելյան Հայաստանը վերամիավորվում է իր «ազգային կորպուսի» Արևմտյան Հայաստանի հետ, որպեսզի վերստեղծի միացյալ և անկախ Հայաստան, որը պետք է ղեկավարվի Հայաստանի կառավարության կողմից: Այս կառավարության հետ կնքվելու են համապատասխան համաձայնագրեր»: Պայմանագրում նշված էր նաև, որ Ալի-Մուրադ-խան Զենդը պետք է ստորագրի համաձայնագիր, ըստ որի «պարտավորվելու է ի հաշիվ վերամիավորված Հայաստանի չընդարձակի իր տերությունը»: Հաջորդ կետը Վրացական պետության, արևելյան և արևմտյան Վրաստանների ռուսական հովանու տակ վերամիավորման խնդիրն էր: Սակայն իրադարձությունների ընթացքը հօգուտ այս դաշնագրի չէր: Մինչև դեսպանները տեղ կհասնեին, Խոյ (հնում Հեր) քաղաքում ստացան Ալի Մուրադ-խան Զենդի մահվան մասին լուրը: Գնդապետ Տոմարան ետ վերադարձավ: Ճիշտ է, չիրականացավ հայ ժողովրդի երազանքը, սակայն Ռուսաստանի, Իրանի և Հայաստանի պատմության մեջ առաջին

[444] Նույն տեղում, էջ 29. Պարզ է, որ այս ցեղերը բուն ատրպատի բնիկների կամ նույնիսկ հետագայի ազարի ժողովրդի հետ որևէ կապ չունեին, և «արբեջանցի» կոչելը, նրանց իսկական արմատները, պատմությունը ջնջելն ու նոր, մտացածին ու կեղծ պատմության պարտադրելը միմիայն պանթուրքիստների քաղաքական ծրագրերից էր ելնում, որը սակայն սնանկ է ու զուրկ որևէ հիմքից:

անգամ փորձ արվեց միավորելու Արևելյան ու Արևմտյան Հայաստանները, վերստեղծելու հայկական պետությունը: Տեղեկանալով հայ-ռուսական հարաբերությունների մասին, Իբրահիմ խանը մի հայազգի պատգամավոր ուղարկեց Դերբենտում գտնվող գեներալ Պոտյոմկինի մոտ, հայտնելով, որ պատրաստ է ընդունելու ռուսական հպատակությունը: Ինչպես երևում է, թագուհին ևս պատրաստ էր ընդունելու այս հպատակությունը՝ հետին պլան մղելով Հայոց խնդիրը: Սակայն խանը, հակառակ գեներալ Պոտյոմկինի սպասումների, ամենևին չէր շտապում: Խորամանկ խանի համար հպատակություն հայտնելը լոկ ժամանակ շահելու մի պատրվակ էր: Նա սկսեց ամրացնել Շուշի բերդը, նոր զորք հավաքել: Ղարաբաղի, Խոյի, Նախիջևանի և Բաքվի կառավարիչ խաները գաղտնի դաշինք կնքեցին՝ համատեղ ռուսաց արշավանքի դեմն առնելու համար: Այս խնդրով Շուշի էին գալիս Ախալցխայի Սուլեյման փաշայի մարդիկ, նամակներ բերում խանին: Սակայն երբ ռուսաց բանակը սպառնալից դիրք գրավեց Անդրկովկասում, այս խաները շտապեցին հպատակություն հայտնելու ռուսաց կայսրությանը: Ռուսների փոխարեն դեպի Արցախ արշավեց Դերբենտի Ֆաթալի խանը: Իբրահիմը դիմեց վրաց թագավոր Հերակլի օգնությանը, որն իր հերթին չուշացրեց օգնությունը: Դերբենտի կառավարիչը Հերակլին առաջարկեց ոչնչացնել Իբրահիմի իշխանությունը՝ այն բաժանելով երկու մասի, հայկականը՝ Հերակլին, թաթարականը՝ իրեն: Հերակլը չհամաձայնեց: Գեներալ Պոտյոմկինը Ֆաթալի խանից պահանջեց ետ քաշել զորքը, քանի որ Իբրահիմը ռուսաց հպատակություն է ընդունել, ուստի և ռուսների հովանու տակ է գտնվում[445]: Այս նոր իրավիճակը ասես ազատ արձակեց նենգ խանի ձեռքերը: Իբրահիմն զգաց, որ արդեն կարող է ազատորեն գործել հայ իշխանների դեմ: Բացեիբաց կռվել հայ մելիքների դեմ՝ վտանգավոր էր: Նենգ թաթարը նոր դավ նյութեց հայ իշխանների դեմ: 1787 թ. խանը Մելիք-Մեջլումին, Մելիք-Աբով III-ին ու Մելիք-Բախտամին (Դիզակից), ևս 30 հոգու հրավիրեց Շուշի, իբր բարեկամաբար վերջ տալու թշնամությանը: Հայ մելիքները, որոնք թեկուզ քաջ պատերազմող էին, սակայն ուղղամիտ էին և դյուրահավատ, զուրկ էին արևելցիներին յուրահատուկ խորամանկությունից, անկեղծ ուրախությամբ ընդունեցին Իբրահիմի հրավերը: Խանը իսկույն նրանց բանտ նետեց[446]: Ապա նա կողոպտեց Գանձասարի հարստության մի մասը, որը չէին հասցրել թաքցնել հատուկ թաքստոցում, ձերբակալեց կաթողիկոս Հովհաննեսին և նրա հինգ եղբայրներին ու տարավ Շուշի: Ըստ ավանդության, Հովհաննես Ջալալյանին մատնել են նրա եղբայր Ալլահ-Ղուլի բեկն ու Երիցմանկանց վանքի Իսրայել կաթողիկոսը, որին Իբրահիմը

[445] Նույն տեղում, էջ 70-79:
[446] Գաղտնիք Ղարաբաղի, Թիֆլիս, 1902թ., էջ 82-83:

տեղափոխեց Ամարասի վանքը: Որոշ ժամանակ անց հայոց քաջերի խումբը մեծշենացի Թուլի-Արզումանի և տանուտեր Խաչատուրի առաջնորդությամբ գիշերը գրավում են Շուշիի բանտն ու ազատում Մելիք-Մեջլումին, Մելիք-Աբովին և մյուս բանտարկյալներին: Սակայն թույնի ներգործությամբ խանն արդեն սպանել էր Հովհաննես կաթողիկոսին ու Դիզակի մելիք Եգանյան Մելիք-Բախտամին[447]: Մելիք-Մեջլումն ու Մելիք-Աբովը շտապում Թիֆլիս են մեկնում: Թուլի-Արզումանը գիշերը Գանձասար է շտապում, այստեղ կազմակերպում Սարգիս եպիսկոպոս Ջալալյանի ու նրա Դանիել-բեկ եղբոր որդու՝ Բաղդասարի փախուստը: Գանձակի խան Ջավադը սիրով ընդունեց նրանց: Իբրահիմը իսկույն սպանել տվեց Հովհաննես կաթողիկոսի Ջալալ և Դանիել բեկ եղբայրներին: Իբրահիմը վաղուց էր սկսել Ղարաբաղում մարդաբանական փոփոխությունների իրականացումը: Արդեն Ղարաբաղի դատարկված գյուղերը լցվել էին թափառական ցեղերով, տիրացել բռնագաղթի ենթարկված հայերի տներին և ունեցվածքին: Հայերին թուլացնելու համար Իբրահիմն իրականացնում էր զանգվածային տեղահանումներ: Ջրաբերդից մելիքի բացակայության ժամանակ հազար ընտանիք տեղափոխվեց Դիզակ, իսկ Շուշիում մահմեդական մեծամասնություն ստեղծելու նպատակով բերդաքաղաք՝ տեղափոխեց Ղազախի և Շամշադինի թուրքերին: Իբրահիմը ամեն առիթ օգտագործում էր՝ բռնի մահմեդականացնելու հայերին: Դիզակի Մելիք-Բախտամին Շուշիի բանտում սպանելուց հետո Տողում ապրող մելիք Ավանյաններին բռնությամբ մահմեդականացրեց: Հերակլը, որը Ղազախի և Շամշադինի մահմեդականներից հարկ էր հավաքում, Իբրահիմից պահանջեց, որ նրանց ետ՝ իրենց բնակավայրերն ուղարկի: Հայ մելիքների հետ զորք ուղարկեց Իբրահիմի դեմ: Այս արշավանքին մասնակցում էին ռուսական երկու գումարտակ՝ գնդապետ Բուռնաշովի գլխավորությամբ: Գանձակի Ջավադ խանը ևս պատրաստ էր միանալու այս արշավին: Սակայն Շուշիի պաշարումը այդպես էր չսկսվեց: Արդեն սկսվել էր ռուս-թուրքական պատերազմը, ու Բուռնաշովը հրաման ստացավ շտապ վերադառնալու Հյուսիսային Կովկաս: Իբրահիմը Հերակլի հետ իր դաշնակցական կապերը վերականգնելու նոր փորձ է ձեռնարկում՝ համաձայնվելով Ղազախի և Շամշադինի թուրքերին վերադարձնել, պայմանով, որ Հերակլը ձերբակալի և իրեն ուղարկի Մելիք-Սեջլումին ու Մելիք-Աբովին: Իբրահիմը գիտեր, որ բոլոր դեպքերում շահողն ինքն է լինելու: Այս մելիքները տեղեկանալով, որ Հերակլը ծրագրել է կատարել Իբրահիմի առաջարկը, փախչում են Թիֆլիսից ու վերադառնում Գանձակ: 1792 թ. մեռավ Մելիք-Շահնազարը՝ Խամսայի հայկական ինքնավարության կործանիչը: Նրա հասցրած վերքերը Արցախին անբուժելի էին: Նա ուներ երեք

[447] Լեո, էջ 370:

կին: Թագուհուց ծնվել էր Ջումշուդը, Սոնայից՝ Հուսեյնն ու Հուրիզադը, Մալայիկից՝ Ջհանբախշը, Ջհանգիրը և Հումայի դուստրը: Մելիքն իր որդիների վրա հոգաբարձու էր կարգել Իբրահիմ խանին, որը Հուրիզադ խանումի ճնշման տակ մելիք կարգեց նրա եղբորը՝ Հուսեյնին: Սակայն Ջհանբախշը կարողացավ պարսից շահից մելիքական իրավունք հաստատող ֆիրման բերել: Իբրահիմ-Խալիլ խանը նրան է վերադարձնում ունեցվածքը: Ցուցակի մեջ է ընդգրկվում 73 գյուղ, որոնցից 35-ը՝ դատարկված[448]: Հուսեինը հարձակվեց և կողոպտեց Ջհանբախշի տունը Շուշիում: Վերջինս փախավ և ապաստանեց Շամախիի Մուստաֆա խանի մոտ, որը թշնամի էր Իբրահիմին: Մելիք-Շահնազարի մահը մեծ կորուստ էր Իբրահիմի համար: Նա այլևս թույլ էր և անկարող: Մելիք-Սեջլումն ու Մելիք-Աբովը Գանձակից հաճախ էին ասպատակում Շուշիի կողմերը ու խիստ նեղություն պատճառում Իբրահիմին[449]:

Իրանի տիրակալ Քերիմ-խան Զենդը իր մոտ որպես պատանդ էր պահում մազանդարանցի դաջար Աղա-Մուհամեդ խանին, որին Նադիր շահը ներքինի էր դարձրել: 1779 թ. Քերիմ-խանի մահից հետո դաջար խանը փախչում է Շիրազից, հայրենի Մազանդարանում ապստամբություն բարձրացնում և իրեն Իրանի շահ հաստատում՝ աթոռանիստ ընտրելով Թեհրան քաղաքը: 1795 թ. նա իրեն ենթարկեց Ատրպատականը: Անդրկովկասի կառավարիչները, որոնք ռուսական արշավանքից երկյուղելով, հպատակություն էին հայտնել կայսրուհուն, արհամարհեցին այս ժամանակավրեպ բռնակալին: Աղա-Մուհամեդ խանն իր դաժանությամբ և անգթությամբ գերազանցում էր իր բոլոր նախորդներին: Նա մի հրեշավոր մարդ էր. ճղրտյուն ձայն, կարճ հասակ, անգույն, թափանցիկ աչքեր, դեղին, անմազ դեմք...: Հանել էր իր մի եղբոր՝ Մուրթազ-Ղուլի խանի աչքերը, սպանել ավագ եղբորը՝ Զաֆար-Ղուլի խանին: Գրավելով իր դեմ ապստամբած Քիրման քաղաքը, տեղի 20 հազար կանանց բաժանեց իր զինվորներին՝ հրամայելով կուրացնել բոլոր տղամարդկանց: Նրան ընծա բերին 7 հազար զույգ աչք...: Ահա այսպես Իրանում հիմնադրվեց դաջարների թագավորական հարստությունը: Իրանի նոր շահը, զորքը բաժանելով երեք մասի, շարժվեց դեպի Անդրկովկաս: Եղբայրը՝ Ալի-Ղուլի խանը, շարժվեց դեպի Երևան, որի կառավարիչն իսկույն անձնատուր եղավ: Մյուս մասը Մուխանքով շարժվեց դեպի Թալիշ, Շամախի և Նուխի (Շաքի) ու հպատակեցրեց այդ խանությունները: Շահը զորքի երրորդ մասը 1795 թ. օգոստոսին տարավ դեպի Շուշի: Նրան միացան Գանձակի Ջավադ խանն ու Ջրաբերդի

[448] Петрышевский, Очерки по истории феодальных отношений в Азербайджане и Армении в XVI – XIX вв., Ленинград, 1949, стр. 116.
[449] Լեո, էջ 370:

Մելիք-Մեջլումը: Հերակլ թագավորը իր Ալեքսանդր որդու հետ զորք ուղարկեց՝ օգնելու Իբրահիմին: Մելիք-Զումշուդ Շահնազարյանը, ամրանալով Շուշիում, գործում էր Իբրահիմի կողմից: Իբրահիմը փակվեց բերդում սպասելով իր վախճանին: Պարսից զորքը թնդանոթները տեղադրել էր Խաչին տափ (Թոփխանա) կոչվող վայրում ու որոտալից համազարկերով արկերն ուղարկում էր դեպի բերդաքաղաքը, որոնք, սակայն, ոչ մի վնաս չէին հասցնում[450]: Շահը մտածում էր Հունոտի անդնդախոր կիրճը լցնել ծիու թամբերով և Խաչին տափի ու Ջիարշավարանի (Զդրդուզ) միջև կամուրջ ստեղծելով՝ գրավել Շուշին[451]: Հայկական ջոկատները հաճախ դուրս էին գալիս բերդից ու անակնկալ հարձակումներով մեծ կորուստներ պատճառում պարսից զորքին: Պարսիկներին հաջողվում է հայկական 100 հոգիանոց մի ջոկատ գերել: Շահը հրամայում է կապկպել հայոց քաջերին, իրար կողքի պառկեցնել, նրանց վրայով պտտեցնել ձիերը, որոնց սմբակներից դեպի դուրս մեխեր էին ցցված: Պատժի այս ձևը Իրանում եզիտ-խարման էր կոչվում: Ղաջար շահը դիտելով այս տեսարանը, մեծ հաճույք էր ստանում: Աղա-Մուհամեդ խանը իր եղբոր հետ ծրագրել էր գրավել Թիֆլիսն ու պատժել Հերակլին: Տեսնելով, որ ձգձգվում է բերդի գրավումը, որոշում է այն վերսկսել հաջորդ տարվա գարնանը: Պաշարման 33-րդ օրը հանում է զորքն ու անսպասելիորեն շարժվում դեպի Թիֆլիս: Այս արշավին նրան միանում է Մելիք-Մեջլումը: Շուշիում տեսնելով, որ պարսիկները չքացել են, բացեցին դարպասներն, ու հայ բնակչությունը շտապեց դեպի դաշտերն ու ձորերը: Սակայն պարսից շահը մի ծուղակ էր պատրաստել: Դևաթալապ կոչվող կիրճում, ինչպես և Ավանի քարանձավում զորք էր թաքցրել, որը հանկարծակի դուրս է թափվում ու կոտորում հայերին: Դեպի բերդը փախչող հայերի համար Իբրահիմ խանի հրամանով բերդի դռներն այլևս փակ էին... Աղա-Մուհամեդ խանի զորքը սեպտեմբերի 13-ին մտնում է Թիֆլիս, ութ օր թալանի ենթարկում այն: 70-ամյա Հերակլը փրկվում է փախուստով: Պարսիկները իրենց հետ տարան 12 հազար գերիների: Թիֆլիսի սբ.Գևորգ եկեղեցում սպանվում է հայ մեծանուն բանաստեղծ և գուսան Սայաթ-Նովան: Շահը շտապում էր վերադառնալ Իրան՝ ճնշելու Ղանդահարում և Հերաթում Քերիմ-խանի եղբայր Լիֆթալի-խան Զենդի գլխավորությամբ բռնկված խռովությունը՝ հաջորդ տարվա գարնանը կրկին Շուշի գալու մտադրությամբ: Մելիք-Մեջլումն ու Մելիք-Աբովը ամրանում են Գանձակի բերդում: 1894 թ. նրանք այստեղ Աղվանից կաթողիկոս են օծել տալիս Սարգիս եպիսկոպոս Ջալալյանին: Փաստորեն այդ պահին Արցախում ևս

[450] Հակոբ Պողոսյան, Պատմութիւն գաւառին Արցաիւու, Երևանի Մատենադարան, ձեռագիր N2734, էջ 7:
[451] Ахмед-бек Дживаншир, стр. 43.

երկու կաթողիկոս կար՝ Կուճուր (Փոքր) Սիմոնը՝ Երիցմանկանց վանքում և Իսրայելը՝ Ամարասում, որոնք ենթարկվում էին Իբրահիմ խանին:

Հերակլը Շամշադինի սուլթանի, Իբրահիմ խանի և լեզգիների հետ պաշարում է Գանձակը: Վրացիները թալանում են Ղարաբաղի Գարդմանք, Փառիսոս, Քուստի և Նախիջևանի Գողթն գավառները, գերևարում շատերին, ավերում Բանանց մեծ գյուղը: Գանձակի պաշարումը տևեց չորս ամիս: Հերակլը պահանջեց, որ Զավադ խանը իրեն հանձնի Մելիք-Մեջլումին, իսկ ինքը հեռանա Գանձակից: Խանը մերժեց այս պահանջը: Ութ աշտարակներից չորսը պաշտպանում էին հայոց քաջերը: Կատաղի կռիվներում զոհվում է Թուլի-Արզումանը: Մահացու վերք ստացավ և Մելիք-Մեջլումը, որին թաղեցին Գանձակի սբ.Հովհաննես եկեղեցու խորանում: Ի վերջո, Հերակլը, Իբրահիմն ու Ումմա-խանը հաշտվեցին Զավադ խանի հետ, որից պատանդ վերցրին նրա որդուն և դստերն ու հեռացան:

1796 թ. գարնանը դեպի կասպիականի ծովեզերքն է շարժվում ռուսական զորքը՝ կոմս Վալերիան Զուբովի հրամանատարությամբ՝ նպատակ ունենալով գրավելու Անդրկովկասը: Կոմսին ուղեկցում էր Ռուսաստանում հայ առաքելական եկեղեցու առաջնորդ Հովսեփ արքեպիսկոպոս Արղությանը: Վալերիան Զուբովը թուրքերին և պարսիկներին հայտնի էր Կըզըլ-ագաղի (ոսկե ոտք) անունով, քանի որ պատերազմներում նրա կորցրած մի ոտքի փայտե պրոթեզը պատած էր ոսկե թիթեղով: Հովսեփ Արղությանը համոզում է Շամախիի Մուստաֆա-խանին ընդունել ռուսաց հպատակություն: Իբրահիմ խանը, զգալով վերահաս վտանգը, նվերներով ու հպատակության գրով իր որդուն՝ Աբդուլ-Ֆեթհ բեկին ուղարկեց ռուս զորավարի մոտ: Կոմս Զուբովը իր հերթին թանկագին գավազան ուղարկեց Շուշիի բերդի մահմեդական հոգևորականների գլխավոր մոլլա Փանահին: Ծրագրված էր, որ Զուբովի բանակը պետք է ձմեռն անցկացներ Սալյանում, գարնանն արշավեր դեպի Իրան: Մի զորաբանակ գեներալ Ռիմսկի-Կորսակովի գլխավորությամբ, Հովսեփ Արղությանի հետ շարժվեց դեպի Գանձակ, որի միջնորդությամբ էլ Զավադ-խանը ընդունեց ռուսաց հպատակություն ու ներս թողեց ռուսական զորքերին: Ռուսներն այստեղից շարժվում են դեպի Թիֆլիս: Եկատերինան ծրագրել էր Արարատյան նահանգը Վրաստանի հետ միավորել ու մի ուժեղ քրիստոնեական պետություն ստեղծել: Սակայն նոյեմբերի 6-ին մահանում է ռուսաց կայսրուհին՝ Եկատերինա II: Նրան փոխարինած Պավել I-ը Զուբովին շտապ ետ կանչեց: Հայերն ու վրացիները կրկին հայտնվեցին խղճալի վիճակում:

Հաջորդ տարի, գարնան վերջին, Աղա-Մուհամեդ խանը հարյուր հազարանոց զորքով անցավ Արաքսը և ավերելով ամեն ինչ, շարժվեց դեպի Շուշի բերդը: Գյուլիստանի ժողովուրդը բռնեց Վրաստան տանող ճանապար-

հը: Իբրահիմի հոգսը իր կյանքն ու ընտանիքը փրկելն էր: Նա առնելով իր մերձավորներին փախավ դեպի իր կնոջ հայրենիքը՝ Զար և Թալ: Բերքը հավաքելու ոչ մի հնար չկար: Ղարաբաղում սովն ու ժանտախտը կոտորում էին մարդկանց: Սկսվեց համատարած գաղթը: Մելիք-Աբովը իր ժողովրդով գնաց Վրաստանի կողմերը: Մելիք-Զումշուդ Մելիք-Շահնազարյանը ճանապարհվեց դեպի Թիֆլիս: Բերդաքաղաքի բնակչությունը կոտորածից փրկվելու համար որոշեց հանդիսավոր ընդունելություն ցույց տալ անողոք շահին: Հոգևորականները խաչով ու սրբապատկերներով դիմավորեցին շահին: Շահը հանդիսավոր կերպով բերդաքաղաք մտավ: Բոլորը գալիս էին նրան հպատակություն հայտնելու: Մեկին նվեր էր տալիս, մյուսին գլխատում: Զորքի մի մասը, որը բերդաքաղաք էր մտել, սկսեց թալանել բնակչությանը, հափշտակել ինչ որ պատահի: Հակառակվողին առանց դատաստանի սպանում էին: Սակայն այս ձևով անհնար էր կերակրել բանակը: Ոժգոհ զինվորականությունը հավաքվում է խանի պալատի մոտ, որտեղ բնակություն էր հաստատել շահը, ու դժգոհություն հայտնում շահին: Աղա-Մուհամեդ խանը կասկածելով, թե իր զորահրամանատարներն են կազմակերպել այս բողոքը, որոշեց շատերին գլխատել: Ընդհանրապես, թշնամություն կար շահի պալատականների, որոնք հիմնականում պարսիկներ էին, ու զինվորական թրքախոս հրամանատարների միջև, որոնք միշտ փորձում էին շահին հակառակորդի դեմ գրգռել: Շահը ծգտում էր, որ այս երկու կուսակցությունների միջև համաձայնություն չլինի ու հավասարակշռության լծակը միշտ իր ձեռքին մնա: Նա արհեստականորեն նրանց իրար դեմ էր լարում: Մի օր բերդ մտնելիս տեղացիների մի ամբոխ դիմավորում է շահին և լաց ու կոծով իր բողոքը հայտնում զինվորականների վայրագության կապակցությաբ; Շահը բարկանում է պալատականների վրա: Իսկ երեկոյան, երբ առանց զեկույցի իր մոտ է մտնում Սաղըխ խանը, ներքինի շահը բարկանում է, կտրել տալիս իր անկողնապետ Սաֆար-Ալիի ականջները, «որոնք լավ չեն լսում» և սպառնում հաջորդ օրը այնքան գլուխներ կտրել, որոնց կույտով մի հսկա աշտարակ կկանգնեցնի Շուշիում, որը «ավելի բարձր կլինի, քան Շամքորի մզկիթի մինարեթը»[452]: Պալատականները որոշում են դավադրության դիմել: Կեսգիշերին Սաֆար-Ալին և Աբբասը մտնում են շահի ննջասենյակն ու դաշյուններով նետվում դեպի քնած շահը, սպանում նրան[453]: Սաղըխ-խանը, որն այդ դավադրության կազմակեր-

[452] Дубровин, т. III, стр.221.

[453] Գ.Շիրմազանեանց, «Ճանապարհորդություն Հայաստանում», «Արարատ», ամսագիր, Վաղարշապատ, 1877թ. սեպտեմբերի 30, էջ 334: Հեղինակին, որը Թավրիզի հայոց վաճառականապետն էր, այս դեպքերը պատմել էր շահի թիկնապահ զորքի հրամանատար Հակոբը (Յաղուբ), որը փախուստով ազատվել էր ու ապաշխարել Արտազի սբ.Ստեփանոս Նախավկայի վանքում:

պիչն էր, իր զորքով շտապում է Թեհրան՝ գրավելու պարսից գահը: Նա բանտից ազատում է Իբրահիմի եղբոր Միհրալիի որդուն Մամեդ-բեկին, նրան խոստանալով Ղարաբաղի խանությունը: Սաղըղ-խանը Իրանում պարտություն է կրում, և շահ է հռչակվում Աղա-Մուհամեդ խանի եղբոր որդին Ֆաթալին: Իսկ Իբրահիմը, տեղեկանալով այս ամենի մասին, նախ Շուշի է ուղարկում իր Մեհթի որդուն, նոր միայն ինքը ժամանում:

Անընդմեջ պատերազմներին Ղարաբաղում, ինչպես և ողջ Անդրկովկասում, հաջորդում են դաժան սովն ու համաճարակը: Արտագաղթը համատարած բնույթ է կրում: Ըստ տարբեր աղբյուրների, մինչև 1795 թ. Ղարաբաղում կար 60 հազար հայ ընտանիք: 1804 թ. երկրամասում մնացել էր ընդամենը 4 հազար ընտանիք: Նրանց մեծ մասը գաղթել էին Վրաստան, Շամախի և Շաքի: Հայ իշխանները հեռացան Արցախից: Գյուլիստանի մելիք Ֆրեյդունն ստացավ Բորչալուի մի մասը, Մելիք-Զումշուդը՝ Լոռին, Մելիք-Աբովը՝ Բոլնիսը: Նրանց թվում էր, թե այս նոր տարածքները միացնելով, կարող էին մի նոր ինքնավարություն ստեղծել, մոռանալով, որ ոչ Վրաստանը, ոչ էլ Ռուսաստանը նման բան թույլ չեն տա: Հայ մելիքները Վրաստանում ցանկանում էին ունենալ մի անկյուն, ուր կարողանային ապրել իրենց վաղեմի օրենքներով: Քանի որ վրացիներից իրենց ուզած ընդունելությունը չեն գտնում, 1799 թ. Մելիք-Ֆրիդուն Մելիք-Բեկլարյանն ու Մելիք-Զումշուդ Մելիք-Շահնազարյանը (Մելիք-Շահնազար Բ-ի ավագ որդին) մեկնում են Պետերբուրգ, դիմում Ռուսաց կայսերը: Պավել I-ի հունիսի 2-ի հրովարտակով վրաց թագավորին հանձնարարեց Ղազախի երկիրը հանձնել հայ մելիքներին: Այս հրովարտակի հիման վրա վրաց թագավոր Գևորգին հայ մելիքներին հատկացրեց հողատարածքներ: Մելիք-Ֆրիդունը ստացավ Ուզունլարը, իսկ Մելիք-Աբովը՝ Բոլնիսը: Վերջինս կոչվել է Գյուլիստանի Պոլիս>Պոլնիս>Բորիս փոխակերպություն ապրած գյուղանունից, քանի որ նրա առաջին վերաբնակիչները Գյուլիստանի Պոլնիս-Բորիսցիներ են եղել: Ավանը, որը հայկական վեց եկեղեցի ունի, կրում է նաև Բոլնիս-Խաչեն անունը, քանի որ գյուլիստանցիների հետ այստեղ էին հաստատվել նաև Արցախի Խաչեն գետի ավազանի գյուղերից եկած վերաբնակիչները: Գյուլստանի Էրքեջ (Էրքաջ) գյուղի սբ. Սարգիս եկեղեցու արևմտյան պատի մոտ, արտաքուստ, տապանաքարի վրա պահպանվել է «Էվ. ՌՄԿԶ: (1817), որ է Պոլնուսու գալն (Բոլնիս-Խաչենից ժողովրդի վերադառնալը- Բ.), մայիսի :ի: (20), Քրիստոսի ծառայ տէր Դանիէլ»[454]: Մելիքները վերադառնում են Զրաբերդ և Գյուլիստան՝ տեղափոխելու բնակչությանը: Ճանապարհին նրանց հալածում են թե Իբրահիմ խանի մարդիկ, թե դաղստանցի ավարառուները և թե Գանձակի Զավադ խանը: 7000 հոգուց

[454] Ս.Բարխուդարյան, էջ 249:

Մելիք-Աբովին հաջողվում է Բոլնիս հասցնել 4000 հոգու: Մելիք Աբովը այստեղ կառավարում էր արցախյան իրավունքներով և սովորություններով: Երբ Վրաստանը 1801 թ. միացվեց Ռուսաստանին, Ղարաբաղի հայերը շարունակեցին ապրել առանձին արտոնություններով՝ իրենց մելիքների իշխանության ներքո[455]: Նա մինչև 1000 զինվոր էր պահում, որոնց հետ հաճախակի էր համարձակորեն արշավում թուրքերին ենթակա Ախալքալակի կողմերը: Վրաստանում նրան հանձնեցին քարվանբաշության, այսինքն՝ քարավանների անվտանգությունն ապահովելու պաշտոնը: Սակայն Գևրգի թագավորի մահից հետո նրա հարաբերությունները լարվեցին վրաց ազնվականության հետ: Այդպես էլ չիրականացավ նրա հայրենիք վերադառնալու երազանքը: Մի հյուրընկալության ժամանակ թունավորեցին մեծ հայրենասերին ու նրա քարտուղար Միրզա-Իսաբաշխին, որի հետևանքով երկուսն էլ կարճատև հիվանդությունից հետո մահացան 1808 թ.: Մելիք-Աբովի երեք որդիներից ավագը՝ Ռոստոմ-բեկը, իշխան Ցիցիանովի զորքում պարսիկների դեմ պատերազմի ընթացքում գերի է ընկնում, տարվում Թավրիզ: Պարսից թագաժառանգ Աբբաս-Միրզան պահանջում է, որ մելիքի որդին մահմեդականություն ընդունի: Արցախցի հայրենասերը մերժում է ու գլխատվում: Գյուլիստանի մյուս որդին՝ Եսայի-բեկը, կույր էր: Մելիքությունը ժառանգեց Մելիք-Բեկլար Բ-ի արդեն չափահաս դարձած որդին՝ Ֆրիդոնը: Սակայն շուտով նա սպանվում է եղբոր՝ Սամի ձեռքով: Մելիք-Աբովի երրորդ որդուն՝ Մանաս-բեկին ոչ մի կերպ չի հաջողվում ստանալ մելիքական իրավունքը ու ժողովրդի հետ հայրենիք է վերադառնում: Այստեղ նրանք տեսնում են, որ գյուղը ամայի չի մնացել: Պարզվում է, որ գյուղացիներից Մեղրին, մեծ գաղթի ժամանակ ընտանիքի հետ անտառում էր եղել ու չէր իմացել գաղթի մասին: Սակայն վերադառնալով գյուղ, այն դատարկված տեսնելով, որոշում է մնալ և պահպանել գյուղը: Երկիրը բաժանվեց Մելիք-Աբովի և Մելիք-Ֆրիդոնի ժառանգների միջև: Առաջինները պապի անունով կոչվեցին Մելիք-Հովսեփյաններ, երկրորդները՝ Մելիք-Բեկլարյաններ:

XIX դարասկզբին Մելիք-Շահնազարյանների տոհմից նշանավոր գործիչ է դառնում Միրզաջան-բեկի թոռը՝ Դավիթ բեկը: Նա Սպահանում պարսկերեն և արաբերեն է սովորում, ապա մեկնում է Փարիզ, սովորում ֆրանսերեն: Այդ ժամանակ Նապոլեոնի կողմից դեսպան կարգված գեներալ Ժոբերթը պարսից Ֆաթալի շահի մոտ մեկնելու Սպահանի ճանապարհին ձերբակալվում է թուրքերի կողմից, բանտարկվում Նոր Բայազետի բերդում: Նապոլեոնը որոշում է թղթերն ուղարկել Դավիթ բեկի միջոցով, որին վստահում էր: Նապոլեոնի հանձնարարությունները կատարելով, կրկին մեկնում

[455] Акты Кавк. Арх. Ком.., т. I, стр. 637.

է Փարիզ, ապա նորից վերադառնում Թեհրան: Պարսից շահից խանական կոչում է ստանում, կոչվում Միր-Դավիթ-խան, 1806 թ. նշանակվում Պարսկաստանի դեսպան Ֆրանսիայում: 1817 թ. վերադառնալով Թեհրան, Պարսից շահին ներկայացնում է իր ժառանգական իրավունքները և ստանում շահական հրովարտակ Գեղարքունի և Ծար գավառներում տիրելու իրավունքի մասին: Երևանի սարդարից ևս հրովարտակ է ստանում իր զարմիկ (քրոջ որդի) Խաչատուր-բեկի համար որպես իր ժառանգ իշխելու այդ գավառներում, իսկ ինքը շահի հրամանով վերադառնում է Փարիզ: 1826 թ. Միր-Դավիթ խանը հրաժարական է տալիս, Խաչատուր-բեկի հետ Թիֆլիսում ռուսական հպատակություն ընդունում: Հայ մեծ դիվանագետը մահանում է 1831 թ. աղքատության մեջ: Միր-Դավիթ խանի տոհմից էր Գյուլիստանի Վերին-շեն գյուղի բնակիչ Բեկլար-բեկ Մելիք-Շահնազարյանցը, որի մոտ Մակար եպիսկոպոսը տեսել էր Միր-Դավիթ խանի պատկերը՝ Շիրխուրշուդ (Առյուծ-արեգական) ականազարդ շքանշանով[456]:

Իշխանների հայրենիքից հեռանալն էլ հայկական իշխանության վերջին բեկորի կործանման հիմնական պատճառն էր: Իբրահիմը, օգտվելով այս իրավիճակից, թաքար թափառական ցեղեր բնակեցրեց դատարկված հայկական բնակավայրերում՝ նրանց նվիրելով հայ իշխանների կալվածքները: Կովկասի կառավարիչ և զորքերի հրամանատար իշխան Ցիցիանովը զորքերով Թիֆլիսից շարժվում է դեպի Գանձակ ու 1803 թ. դեկտեմբերին պաշարում բերդը: Ցիցիանովի հետ էին Մելիք-Զումշուդ Մելիք-Շահնազարյանը, Թիֆլիսի հայոց առաջնորդ արքեպիսկոպոս Հովհաննեսն ու Ներսես վարդապետը (հետագայում՝ Ամենայն Հայոց կաթողիկոս): Ռուսական զորքերը հունվարի 3-ին գրավեցին Գանձակը: Զոհվեցին Զավադ-խանն ու նրա որդիները: Ցիցիանովը ձգտում էր առանց կորստի գրավել Արցախն ու նրա գլխավոր բերդը՝ Շուշին: Ռուս ռազմավարների համար Շուշին այն կարևոր հենակետն էր, որը մոտ լինելով Արաքսի վրա Խուդաֆերինի կամրջին, կարող էր Ազարբայջանի վրա սրընթաց արշավի համար բազայի վերածվել: Իսկ հարկ եղած դեպքում էլ փոքրաթիվ զորքն անգամ կարող էր երկարատև դիմադրություն ցույց տալ: Խորամանկ ու նենգ Իբրահիմը երկդիմի խաղերով ձգձգում էր գործնական հպատակությունը ռուսներին: Նա գիտեր, որ պարսիկներն իրեն երբեք չեն ների Աղա-Մուհամեդ խանի սպանությունը Շուշիում: Իբրահիմը 1805 թ. փետրվարին իր մոտ է կանչում ռուս մայոր Լիսանևիչին և հայտնում, որ ընդունում է Ցիցիանովի բոլոր պայմանները: Դաշնագրի ստորագրման վայր ընտրվեց Կուրակ գետը, որը բաժանում էր Արցախն ու Գանձակի խանությունը: Մայիսի 14-ին իշխան Ցիցիանովն ու Իբրահիմ խանը ստորագրում են 11 հոդվածից կազմված դաշնա-

[456] Բարխուտարյանց, Պատմութիւն Աղուանից, Թիֆլիս, 1907, էջ 32:

գիրը: Իբրահիմը պետք է Շուշիում պահեր 500 զինվորից կազմված ռուսական գումարտակը: Իբրահիմին շնորհվում է գեներալ-լեյտենանտի աստիճան, ինչպես նաև դրոշ՝ կայսերական զինանշանով: Խանը պարտավորվում էր տարեկան ռուսներին տալ 8 հազար ոսկի տուրք: Իբրահիմը պետք է թոռներից Շուքուր Ուլլահին պատանդ տար Թիֆլիսում բնակվելու: Ըստ 3-րդ հոդվածի՝ Իբրահիմի ժառանգներից երբեք չպետք է խլվի խանության իրավունքը: Դաշնագրում խոսք անգամ չկար Ղարաբաղի օրինական տերերի՝ հայ իշխանների և հայ քրիստոնյա բնակչության, նրանց իրավունքների մասին: Ցիցիանովը անմիջապես գրություն ուղարկեց Ալեքսանդր կայսրին, նկարագրելով Ղարաբաղի սահմանները հյուսիսից Կուր գետը, արևելքից՝ Շիրվանի խանությունը, հարավից՝ Արաքս գետը, Ղարադաղն ու Նախիջևանը, արևմուտքից՝ Գարուն գետն ու Սևանա լիճը: Իշխանը նշում է, որ Ղարաբաղը իր դիրքով դուռ է Իրան մտնելու համար, Արցախի միջոցով Թիֆլիսը մոտենում է Բաքվին: Երեք օր հետո Ցիցիանովը նույն վայրում նման մի դաշնագիր է ստորագրում Շաքիի Սելիմ խանի հետ: Մայոր Լիսանևիչը, որին ղարաբաղցիները «գիժ մայոր» էին կոչում, երեք հարյուր ռուս զինվորներով տեղավորվեց Շուշիի հայկական թաղամասում: Իրանի թագաժառանգ Աբբաս Միրզան, որը ուշադրությամբ հետևում էր ռուսների գործողություններին, օգտվելով այն հանգամանքից, որ ռուսական բանակը զբաղված է Նապոլեոն Բոնապարտի դեմ պատերազմով, որոշեց ետ խլել Անդրկովկասն ու պատժել դավաճան կառավարիչներին ու նրանց գործակալներին: Լիսանևիչը Ջեբրայիլի այգիներում տեսնելով պարսից զորքերի բազմությունը, լեռնային ճանապարհներով շտապեց Շուշի հասնել: Նա վախենում էր, որ Շուշիում թաքար բեկերը կապստամբեն ու Աբբաս Միրզային կհանձնեն բերդաքաղաքը: Մեկ շաբաթից հետո պարսից բանակը Խոնաշեն գետի մոտ էր, առաջապահ 10 հազարանոց հեծելազորը Ասկերանում: Պարսկական մի զորամասի հրամանատարն էր վրաց Ալեքսանդր արքայորդին, որը նամակով հանդիմանում էր Իբրահիմին. «Ոչ ոք ռուսներին միանալով ոչ մի օգուտ չի ստացել, ինչո՞ւ ես դու տերությունը հանձնում և ուժեղացնում նրանց»[457]: Գանձակից Շուշի բերդի պաշտպաններին օգնության է գալիս եգերական գնդի մի գումարտակ՝ գնդապետ Կարյագինի հրամանատարությամբ: Այս զորամասի հետ էր և Ղարաբաղի Կուսապատ գյուղից Վանի հարյուրապետը: Գումարտակը, չկարողանալով անցնել Ասկերանի (Մայրաբերդ) ամրոցը, դիրք է գրավում Աղդամի մահմեդական գերեզմանոցում: Պարսից զորքը մեծ ուժերով նեղում էր այս գումարտակին՝ մեծ կորուստներ պատճառելով նրան: Վանին օգնում է կենդանի մնացած 150 զինվորներին՝ գիշերը աննկատելիորեն տեղափոխվելու

[457] Дубровин, т. IV, стр. 423.

Տիգրանակերտի (Շահաղբյուրի) ամրոցը: Ի վերջո, Ցիցիանովի զորամասը Գանձակից (Գյանջա) գալիս է ու Կարյագինի ջոկատի հետ մտնում Շուշի: Իշխան Ցիցիանովին 1806 թ. փետրվարի 8-ին Բաքվի խանի հետ բանակցությունների ժամանակ սպանում են, գլուխն ուղարկում Աբբաս Միրզային: Այսպես սպանվում է գոռոզ իշխանը: Նրան հպատակություն հայտնած խանությունները անկախացան, քանի որ Ցիցիանովը գրաված տարածքներում ոչ մի համակարգ չէր ստեղծել ու ամեն ինչ կապել էր իր անձի հետ: Իմերեթիան, Մենգրելիան, Ջարը, Շաքին, Ղարաբաղը, Շիրվանը կտրվեցին Ռուսաստանից և ստեղծեցին հակառուսական դաշնակցություն: Շաքիի Սելիմ խանը, որը ևս ստորագրել էր Կուրակի դաշնագիրը ու գեներալ-լեյտենանտի աստիճան ստացել, ապստամբեց ռուսների դեմ և Շաքիում կոտորեց ռուս սպաներին: Սակայն երբ ռուս գեներալ Նեբելսոնը պաշարում է Շաքին, Սելիմ խանը փախչում է Իրան: Այսպես ավարտվում է Շաքի-Հերեթի իշխանական տոհմը, որը շուրջ 10 դար իշխել էր Կուր գետից մինչև Կովկասյան լեռնաշղթան ընկած տարածքում: 1806 թ. ամռանը Աբբաս Միրզան զորքով կրկին անցավ Արաքսը: Իբրահիմը գաղտնի բանակցություններ է սկսում պարսից թագաժառանգի հետ՝ Շուշին հանձնելու և Լիսանևիչի զորամասը ոչնչացնելու խնդրի շուրջ: Պատերազմը պետք է մղվեր երկու՝ Երևանի և Ղարաբաղի ուղղություններով: Հյուսիսից Շուշիի վրա պետք է հարձակվեին Շիրվանի, Շաքիի և Բաքվի զորքերը: Իբրահիմ խանը իր ընտանիքով դուրս էր եկել բերդից, ապաստանել իր այգում գտնվող տանը: Փոխգնդապետ Լիսանևիչը տեղյակ էր, որ խանը մի քանի օր առաջ նամակ էր ուղարկել Ֆաթալի շահին, խնդրելով մոռանալ անցյալի իր սխալներն ու ներում շնորհել իրեն: Շահն իր հերթին խոստացել էր օգնական զորք ուղարկել Իբրահիմին: Թե խանի որդին՝ Մեհտին, և թե թոռը՝ Զաֆարը, որոնք երազում էին գրավել խանական աթոռը, ռուս հրամանատարին հուշում են, որ սպանի Իբրահիմին: Լիսանևիչը հարյուր ռուս կազակների ու հայ կամավորների հետ հունիսի 2-ի գիշերը, դուրս գալով Շուշիից, մտնում է խանի այգին ու անսպասելի հարձակումով սպանում բոլորին: Մելիք-Զումշուդ Մելիք Շահնազարյանի քաջերից Շեյթան Թունին սրախողխող է անում Իբրահիմին: Խանի մահը մեծ կորուստ էր Իրանի շահի համար, քանի որ Շուշիի գրավումը Իբրահիմի անձի հետ էին կապել: Պարսից զորքը, որ ծեռնարկել էր Շուշիի պաշարումը, շտապ հեռացավ Ղարաբաղից: Կովկասի կառավարիչ և գլխավոր հրամանատար կոմս Գուդովիչը Շուշիի խան նշանակեց Մեհտիին՝ գեներալ-մայորի աստիճանով: Մեհտին մեկնեց Թիֆլիս և հանդիսավոր կերպով երդվեց հավատարիմ ծառայել Ռուսաստանին: Սակայն Մեհտին իր եղբոր՝ Աբուլ Ֆետի միջոցով մշտական կապի մեջ էր շահզադայի (թագաժառանգ) հետ: Ղարաբաղում ռուսական զորքերի հրամա-

նատարն էր գեներալ Կոտլյարևսկին, որն աչքի էր ընկել Ախալքալակում թուրքերի դեմ պատերազմում: Կովկասում ռուսական կառավարիչն էր մարկիզ Պաուլուչին: Նա Շուշի գալով որոշեց փոխել Մեհտիին և նրա տեղը խան կարգել գնդապետ Մելիք Զումշուդ Մելիք-Շահնազարյանին: Սակայն հայ իշխանը հրաժարվեց հօգուտ Մեհտիի: Մելիք Վանին ևս պաշտպանեց Մեհտիին: Մելիք Զումշուդն ու Մելիք Վանին ինչքան էլ քաջ ու հնարամիտ լինեին պատերազմներում, խուսափեցին իրենց վրա վերցնել երկրի կառավարման պատասխանատվությունը և գերադասեցին հայրենի երկիրը թողնել օտար տիրոջ լծի տակ: Այս ժամանակ չգտնվեց մի նոր «Իսրայել Օրի» կամ «Հովսեփ էմին», որն իր վրա վերցներ այս գործը: Աբբաս Միրզան վաղուց էր պատրաստվում ռուսներից ուժով հետ վերցնել Անդրկովկասը: Նրա բանակը վարժեցնում էին անգլիացի սպաները: Ընդհանրապես, Եվրոպայում կրթություն ստացած մարդկանցից էր և ավելի շատ աչքի էր ընկնում դիվանագիտական ճկունությամբ: Մարկիզ Պաուլուչիին փոխարինած գեներալ Ռտիշչևը, որ տեղյակ էր պարսից թագաժառանգի նախապատրաստությունների մասին, ծրագրել էր հարցը լուծել բանակցությունների միջոցով: Սակայն թագաժառանգն այլևս արհամարհում էր ռուսներին: Գեներալ Կոտլյարևսկին, որը սկզբունքորեն դեմ էր Կովկասի կառավարչի ծրագրին և հավատում էր խնդրի միմիայն ուժի միջոցով լուծմանը, առանց Ռտիշչևի թույլտվության իր զորքով անցավ Արաքսն ու անակնկալ հարձակվեց Ասլանդուզ բերդի վրա, որտեղ գտնվում էր Աբբաս Միրզայի գլխավոր բանակը: Թագաժառանգը մի կերպ փրկեց իր կյանքն ու փախավ: Պարսից բանակը ջախջախվեց: Կոտլյարևսկուն շնորհվեց գեներալ-լեյտենանտի աստիճան: Դեկտեմբերին նա արշավեց Լենքորանի վրա և անակնկալ հարձակումով գրավեց այն: Այս պարտությունները իրանական կողմին ստիպեցին ռուսներից հաշտություն խնդրել: 1813 թ. հոկտեմբերի 12-ին գեներալ Ռտիշչևն ու պարսից Միրզա Աբուլ Հասան խանը դարաբաղյան Գյուլիստան գյուղում ստորագրում են դաշնագիրը: Իրանը Ռուսաստանին է զիջում Դերբենտը, Ղուբան, Բաքուն, Թալիշը, Շիրվանը, Շաքին, Ղարաբաղը, Գանձակը, Վրաստանը, Դաղստանը, Շորագյալը: Ռտիշչևը Իրանին է թողնում Մեղրին: Վրաստանը Ռուսաստանին կցելու և ռուսական նահանգի վերածելու օրինակը ցույց է տալիս, որ հայերը ևս ռուսներից պետականություն չեն ստանալու, և զուր էին պատրանքները: Սակայն ռուսասիրությունն ու հավատը, որ միայն քրիստոնեական Ռուսաստանից կստանան սպասվող ազատությունը, խոր արմատներ էր գցել ոչ միայն իշխանների, այլև հասարակ ժողովրդի մեջ: 1816 թ. Ալեքսանդր կայսրը Կովկասում կառավարչապետ և բանակի գլխավոր հրամանատար է նշանակում գեներալ Ալեքսեյ Երմոլովին, որը Թիֆլիսում, հանձինս Վրաստանի և Ռուսաստանի հայոց առաջնորդ Ներսես արքեպիսկոպոս Աշտարակեցու, գտնում է իր խորհրդատուին և զինակցին: Իրանի դեմ պատերազմը փութացնելու գործում: Հայոց եկեղեցու իրական ղեկավարը Ներսեսն էր, ու Ամենայն Հայոց Եփրեմ կաթողիկոսը առանց նրա հետ խորհրդակցելու ոչ մի քայլ չէր անում: Երմոլովն իր հետ Կովկաս բերեց ֆրանսիացիների հետ պատերազմում իր հերոսությամբ աչքի ընկած գեներալ Վալերիան Մադաթովին, որին նշանակեց Ղարաբաղի, Շաքիի և Շիրվանի զինվորական շրջանային կառավարիչ: Մադաթովը արցախցի հայ էր, Ավետարանոց գյուղից: Նա պատանի հասակում Ռուսաստան մեկնող Ղարաբաղի պատվիրակության հետ, որի կազմում էին Մելիք-Զումշուդը, Մելիք-Ֆրեյդունն ու իր ազդեցիկ ազգական Պետրոս հարյուրապետ Մադաթյանը, մեկնում է Պետերբուրգ: Այստեղ նա մելիքների միջնորդությամբ մտավ կայսերական գվարդիայի հեծելազորի մեջ, որտեղ և աչքի ընկնելով իր ուշիմությամբ ու քաջությամբ, տասնհինգ տարի հետո Կովկաս վերադարձավ գեներալական աստիճանով, իշխանի տիտղոսով ու զինվորական բարձր շքանշաններով[458]: Երիտասարդ ու տաղանդավոր գեներալը իր ձեռնարկած միջոցներով երկրամասում վերացրեց ավազակությունը: Անիշխանությունից հետո մի կատարյալ անդորրություն ու խաղաղություն էր տիրում նրա կառավարչության տակ գտնվող երկրում: Ռուսաստանը ձգտում էր ձերբազատվել Իրանական պետությունից մնացած խանություններից: 1819 թ. մահացավ Շաքիի Իսմայիլ խանը: Որոշվեց նրա տեղում այլևս խան չնշանակել: Շամախիի Մուստաֆա խանը, զգալով իր վրա կախված վերահաս վտանգը, փախավ Իրան: Այս տարածքներն ուղղակի մտան Ռուսական կայսրության մեջ առանց որևէ կարգավիճակի: Սակայն Ղարաբաղի Մեհտի Ղուլի խանի հետ հաշիվները փակելու խնդրում իշխան Մադաթովը չէր շտապում, չնայած նրան հայտնի էին Մեհտիի գաղտնի կապերը Իրանի թագաժառանգ Աբբաս Միրզայի հետ: Մադաթովը խանից իբրև պարգևագրեր ստացավ Մելիք-Շահնազարյանների կալվածքները, որոնք կայսրի միջոցով օրինականացրեց Երմոլովը: Օգտվելով առիթից, Մեհտի խանն իր ազգակից շատ ու շատ բեկերի բաշխեց Արցախի մելիքների կալվածքներն ու գյուղերը: Կալվածքների տեր դարձան խանի գրագիրը, ծաղրածուն, ախոռապանը... Ստանալով իր ուզածը, գեներալ Մադաթովը 1822 թ. վերջերին Շուշիում մի դավադրություն կազմակերպեց, ու Մեհտի խանը ստիպված եղավ փախչել դեպի Պարսկաստան: Այսպես վերջացավ Շուշիում թաթարների խանությունը:

[458] Լեռ, հ. 4, էջ 396:

ԱՆԴՐԿՈՎԿԱՍՈՒՄ ՌՈՒՍԱՑ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ ԵՎ ՌՈՒՍ-ՊԱՐՍԿԱԿԱՆ ՀԱՇՏՈՒԹՅՈՒՆԸ 1828 թ.

Օտար տերությունների քաղաքական գործիչները դարերի փորձից համոզվել էին, որ պետականությունից զրկված Հայաստանում ազատորեն տիրապետելու համար պետք է իրենց ազդեցության տակ առնեն հայոց եկեղեցին և առաջին հերթին էջմիածնի Մայր աթոռը, որը հայերի մոտ դարեր շարունակ ձգտում էր լրացնել սեփական պետական իշխանության պակասը: Ռուսները Ներսես Աշտարակեցու միջոցով իրենց ձեռքին էին պահում էջմիածնի նկատմամբ հսկողությունը: Ներսեսն իր հերթին, օգտագործելով իր ազդեցությունն ու կապերը, ռուսասեր լինելով հանդերձ, ձգտում էր արագացնել պատերազմը Իրանի հետ և նրա ազդեցությունից Հայաստանի ազատագրումը: Թուրքիան իր հերթին փորձեր էր արել կաթողիկոսարանը էջմիածնից տեղափոխել Կ.Պոլիս, սակայն այս փորձերը ապարդյուն էին անցել: Աբբաս Միրզան լավ էր գիտակցում էջմիածնի վրա ռուսական ազդեցության հանգամանքը: Չնայած էջմիածինը գտնվում էր Իրանի տիրապետության սահմաններում, նա մի հետաքրքիր ծրագիր մշակեց, ըստ որի պետք է կաթողիկոսական աթոռը տեղափոխվեր Արաքսից հարավ, որը հեռու կլիներ ռուսական ազդեցությունից: Իրանի թագաժառանգը, որը նաև Ատրպատականի փոխարքան էր, նոր կաթողիկոսարան ընտրեց Արտազի գավառի սբ. Թադևոս Առաքյալ վանքը, որը մոտ էր Մակու քաղաքին: Դեռևս 1810 թ. սկսել էին այս վանքի վերակառուցումը: Երբ այն ավարտելու վրա էր, Երևանի սարդար Հուսեին Կուլի խանի միջոցով թագաժառանգը սկսեց ճնշումներ գործադրել թուլական Եփրեմ կաթողիկոսի վրա, նրա համար անելանելի վիճակ ստեղծելով էջմիածնում: Սարդարը անընդհատ ոսկի էր պահանջում կաթողիկոսից: Եփրեմը ստիպված էր բեկերից տոկոսներով պարտք վերցնել ու տալ սարդարին: Տոկոսներն աճում էին: Ինչ խոսք, որ դա ծուղակ էր, որի միջոցով պետք է ստիպեին կաթողիկոսին, որ նա ինքնակամ սբ. Թադևոս Առաքյալի վանքը տեղափոխվի, որը կառուցվում էր էջմիածնի տաճարի հատակագծով: Եվ ահա 1821 թ. ձմռանը Եփրեմ կաթողիկոսը մեծ շքախմբով մեկնում է Սյունիք, ապա Նախիջևան: Արդեն մի քայլ էր մնում անցնելու Արաքսը ու իրականացնելու Աբբաս Միրզայի մտահղացումը: Ներսես Աշտարակիցին, որն իր գործակալների միջոցով հետևում էր իրադարձությունների զարգացմանը, փորձում էր էջմիածնից կաթողիկոսի փախուստը հարմարեցնել իր ծրագրերին: Նա ստիպում է Եփրեմին ետ՝ Տաթևի վանք վերադառնալ, և իբր իր պարտքերը մարելու համար Շուշիի մեծահարուստ վաճառականներից հանգանակություն ստանալու պատրվակով ճանապարհվել Ղարաբաղ ու այդպես դուրս

գալ Իրանի հսկողության տակ գտնվող տարածքից: Թվում էր, թե կաթողիկոսի այս քայլը ռուս-պարսկական նոր պատերազմ կառաջացնի: Սակայն Աբբաս-Միրզան պատրաստ չէր պատերազմին: Ռուսաստանը ևս ծանր վիճակում էր, քանի որ բոլոր ուժերը Կովկասյան լեռնականների դեմ էր ուղղել: Այստեղ սկսվել էր 40-ամյա մի պատերազմ լեզգիների, ավարների, դարգիների, չեչենների և մյուսների դեմ, որոնց ղեկավարում էր մահմեդական առաջնորդ Իմամ Շամիլը: Դաղստանցիները ավանդաբար թուրքամետ էին, իսկ իմամն իր հերթին գործում էր օսմանյան իշխանության թելադրանքով, թեկուզ և ի վնաս ավարների ազգային շահերին:

Երմոլովը հայոց կաթողիկոսի Շուշի գնալու ճանապարհորդության մասին գրեց Ալեքսանդր Առաջինին կայսերական թույլտվություն ստանալու նպատակով: Երմոլովը պահանջեց, որ նա վերադառնա էջմիածին կամ հրաժարական տա և ռուսական հողում մնա որպես մասնավոր անձ: Երմոլովը որոշեց դիմել արքեպիսկոպոս Ներսեսի օգնությանը: Ներսեսը մեծ հեղինակություն ուներ ռուսական իշխանություններում և փաստորեն ամփոփում էր հայոց աշխարհիկ և կրոնական իշխանությունները: Նրա մշակութային և լուսավորչական գործունեությունը ևս նպաստում էին, որ Թիֆլիսը վերածվի հայության յուրօրինակ մտավոր կենտրոնի: Նա ռուսաց Անդրկովկաս թափանցելու մեջ փորձում էր ճկունորեն միահյուսել ե՛ւ ռուսաց արքունիքի, ե՛ւ հայոց շահերը: Դեկտեմբերի 15-ին հայոց հայրապետը իր շքախմբով Շուշիի մատույցներում էր, ուր նրան ընդառաջ դուրս եկավ հայությունը՝ Անտոն եպիսկոպոսի գլխավորությամբ: Կաթողիկոսի հիսուն հոգանոց շքախմբում էր նաև ապագայի գրական մեծ գործիչ, մատենագիր Մեսրոպ Թաղիադյանը, որը գրում է այս ճամփորդության մասին[459]: Եփրեմ վեհափառը հյուրընկալվում է շուշեցի մեծահարուստ Զոհրապ և Մարկոս Թառումյան եղբայրների տանը: Շուշիի առևտրական տները ծաղկում էին այնպիսի ժամանակաշրջանում, երբ դեռևս չէր հաստատված ռուսաց տիրապետությունը: Ճանապարհների բացակայության պայմաններում ժայռի ծերպից (Շուշիի սարահարթ) Հախումյաններն ու Թառումյանները ղեկավարում և հսկում էին մի մեծ առևտուր, երբ Շուշիում մի կարգին շուկա էլ չկար: Նրանք իրար էին կապում Սիբիրն ու Եվրոպան, Հնդկաստանը, Իրանն ու Ռուսաստանը: Այս հմուտ վաճառականների շնորհիվ Շուշին դարձել էր Անդրկովկասում Թիֆլիսից հետո երկրորդ առևտրական քաղաքը: Հախումյանները ռուսական բանկում պահում էին մեկ միլիոն ռուբլի: Եթե Հախումյանները արցախցի էին, ապա Թառումյանները բնիկ շահկերտցի (Գողթան գավառ) էին: 1750 թ. գաղթելով Երևան, սարդարի հալածանքների պատճառով հետագայում տեղափոխվում են Շուշի: Դեռ նոր էր

[459] Մ.Թաղիադյան, Գրական ժառանգություն, հ.9, ՀՀ ԳԱ, Երևան, 1975, էջ 157:

Բաքուն անցել ռուսների ձեռքը, երբ 1808 թ. այստեղ հայտնվում է շուշեցի վաճառական Բաբա Թառումյանը, որը ռուսական կառավարությունից կապալով վերցնում է Բաքվի նավթի, ինչպես նաև Սալյանի և այլ վայրերի ձկնորսարանները և այլ հասութաբեր ձեռնարկություններ, որոնք նրան մեծ հարստություն էին բերում: Երբ Բաբան մեռնում է Դերբենտում, նրա դիզած հարստությունը տեղափոխում են Շուշի, ուր նրա Մարկոս և Զոհրապ եղբայրները, շարունակելով եղբոր կապալառուական գործը, Բաբայի թողած ոսկու պարկերին ավելացնում են նոր պարկեր[460]: Հայերն այդ ժամանակ Շուշիում 500 տուն էին, կամ շուրջ 2600 բնակիչ: Քաղաքի քրիստոնեական մասում կար երեք եկեղեցի՝ սբ.Աստվածածին, Ագուլեցոց և Ղազանչեցոց (հին կառույց, որի տեղ 1886 թ. կառուցեցին նորը):

Հախումյանները, ի տարբերություն Թառումյանների, անվարձահատույց բարեգործություն չէին անում: Նրանք զարգացնում էին առևտուրն իրենց բազմաթիվ գործակատարների (չրաղներ) միջոցով, որոնք, ի վերջո, իրենց հերթին ինքնուրույն վաճառականներ էին դառնում: Շուշին փաստորեն վաճառականության ոգի էր տարածում Արցախի այլ բնակավայրերում: Հարստանալու տենչը, որ նախկինում խորթ էր արցախցուն, այժմ միավորում էր մարդկանց: Այսպիսի միջավայրում էլ իրար են ծուլվում քաղաքի եկվորն ու բնիկը: Ժլատ Հախումյանները ողորմություն չէին բաժանում, բայց մեծ հարստության հետ մի հսկա համակարգ բերեցին Ղարաբաղ: Այդ ժամանակ շուշեցի մեծահարուստների տներում ուսուցչության էին հրավիրել ժամանակի հայ մեծահամբավ ուսուցիչներ Պողոս վարդապետ Ղարադաղցուն և Հովսեփ վարդապետ Տեր-Ավագյան Արցախեցուն: Վերջինս աստվածաբանության, տրամաբանության և քերականության մասնագետ էր և հայտնի էր Գանձասարի և սբ.Հակոբա վանքերում իր կրոնական կենցաղով ու դպրոցներով: Նա գրել էր մի շարք աշխատություններ՝ գրաբարաշխարհաբարի բառարանը, «Համառոտ տրամաբանություն», «Քերականություն» գրքերը: Նա Շուշիում երկար չմնաց և վերադարձավ Գանձասարի ու սբ.Հակոբա վանքերի վանական դպրոցներում շարունակելու դասավանդումը:

Երմոլովը, վերադառնալով կովկասյան պատերազմից, կարգադրում է կաթողիկոսին շտապ վերադառնալ էջմիածին, այդպես խուսափելով ռուս-պարսկական դաշինքը խախտելու առիթ տալուց: Ռուսաց կայսրը բաժանում էր Երմոլովի կարծիքը[461]: Այդ ժամանակ սբ. Թադևոս Առաքյալի վանքում ավարտվել էր տաճարի շինարարությունը, իսկ զանգակատունը կիսատ էր մնացել, քանի որ հասկացել էին, որ Մայր Աթոռի տեղափոխումը արդեն կանխվել է: Ներսես արքեպիսկոպոսը 1822 թ. հունիսի 8-ին իր շքախմբով հասնում է Շուշի: Այդ ժամանակ Մարկոս Թառումյանը մահամերձ էր: Նա Եփրեմ կաթողիկոսի խնդրած չորս հազար ոսկու փոխարեն նվիրում է ութ հազար ոսկի: Այդ ժամանակ արդեն վերացած էր Աղվանից կաթողիկոսական աթոռը, որի փոխարեն 1815 թ. այն վերածվում է մետրոպոլիտության: Սարգիս Զալալյանցը կաթողիկոսական աստիճանից վերածվում է մետրոպոլիտի: Եփրեմ կաթողիկոսը այլևս էջմիածին չի վերադառնում, քանի որ Աբբաս-Միրզան չէր ների նրա փախուստը: Ծերունի հայրապետը Գանձակում օգոստոսի 5-ին մի ձևական հրաժարական գրեց ռուսաց ինքնակալին, ինչպես նաև Իրանի թագաժառանգին ու իշխան Գոլիցինին, դրանով ցույց տալով, թե որչափ անտանելի է հայ ժողովրդի ու հայոց կրոնապետի դրությունը Պարսկաստանում, որ ստիպված փախչում է կեղեքումից և փնտրում ռուսաց կայսրի հովանավորությունը: Դա, անշուշտ, Ներսես Աշտարակեցու դիվանագիտական քայլերից էր: Եփրեմը մնալով Հաղբատի վանքում, թաղերի միջև եռահարկ տուն է կառուցում:

Այդ տարիներին էլ Շուշիում սկիզբ է առնում դպրոցական շարժումը, որի հիմնադիրն է Շվեյցարիայի Բազել քաղաքի «Ավետարանական քարոզչական ընկերությունը»: Այս կազմակերպությունը 1822 թվականի ձմռանը Պետերբուրգում ծեռք բերելով Կովկասում գաղթականության օջախներ, դպրոցներ, տպարաններ հիմնելու թույլտվությունը, «Աստծո խոսքը տարածելու համար» գալիս է Կովկաս և ընտրում Շուշի քաղաքը: Նրանցից աչքի են ընկնում Ավգուստ Դիտրիխն ու Ֆելիցիան Զարեմբան: 1823 թվականին նրանք հողատարածք են գնում հայկական և թաթարական թաղերի միջև «Դաբաղի ձոր» տեղանքում, եռահարկ տուն կառուցում, որը հայերը «Լեմսի տներ» (գերմանացու տներ) էին կոչում: «Քրիստոնյաների համար մենք կհիմնենք ուսումնարաններ, ուր կավանդվի Աստծո խոսքը, որը հավասարապես պատկանում է բոլոր քրիստոնյաներին: Մենք գիտենք, որ մարդ ինչ եկեղեցու էլ պատկանա, կփրկվի, եթե սիրտը նվիրի Աստծուն», - ասում էին բազելցի միսիոներները: Նրանք իրենց ուշադրությունը կենտրոնացրել էին հայերի վրա: Միսիոներները գրում էին. «Թեպետ մենք մտադիր ենք սկզբում մի քանի տարի շարունակ առանձին ուշադրություն դարձնել Աստծո խոսքը տարածելու միայն հայերի մեջ և նրանց համար ուսումնարաններ հաստատելու, բայց մեր իրական նպատակն է ապագա ժամանակներում առավելապես մահմեդականների մեջ քարոզելու փրկիչ Քրիստոսի ավետարանը»: «Մեր շրջագայության ժամանակ հայ ազգը մենք գտանք շատ արտասովալի վիճակում, տգիտության մեջ», - ասում էին բազելցի քարոզիչները: Նրանց Շուշի գալուն նախորդել էին բավականին հետաքրքրաշարժ

[460] Լեո, հ. IV, 512:
[461] Ալ.Երիցյան, Ամենայն Հայոց կաթողիկոսություն եւ Կովկասի Հայք, Թիֆլիս, 1894, էջ 199:

իրադարձություններ, որոնց մասին որոշ մանրամասներ է հաղորդում անգլիացի ճանապարհորդ Լինչը, որը Հայաստան էր այցելել 1890-ական թվականներին[462]:

Եվրոպացի բողոքական քարոզիչները, ուշի ուշով հետևելով Ասիայում տեղի ունեցող իրադարձություններին, որոշում են, որ արդեն հասունացել է Հնդկաստանից սկսած դեպի Արևելք ընկած երկրներում մահմեդականներին քրիստոնեական հավատքի բերելու ժամանակը: Եթե անգլիացի միսիոներները մկրտելու խնդրում անհաղթահարելի դիմադրության են հանդիպում, ապա գերմանացի ավետարանականները այլ ծրագիր են ընդունում: Նրանք Վիտենբերգի պրուսական թագավորության բնակիչների շրջանում իրենց քարոզներով լուր են տարածում, թե շուտով սպասվում է Փրկչի գալուստը, որը մեծ դատաստանով կավերի երկիրը, կպատժի մարդկանց՝ բացի իր իջևանած վայրից, որի բնակիչները արքայության մեջ կապրեն: Նրանք ասում էին, որ դա ստույգ տեղի կունենա 1836 թվականին, Կասպից ծովի մերձակա Կուր-Արաքսի դաշտավայրում: Եվ ահա 1500 ընտանիք գերմանացի շվաբներ դուրս եկան Վյուտենբերգից և շարժվեցին դեպի իրենց անհայտ երկիրը, ուր պետք է իջներ Աստծու Որդին: Ուխտավորների 2/3-ը մահացան՝ չհասած Օդեսա: Մի երկրորդ խումբ, շուրջ 100 ընտանիք, 1817 թվականին հասան Վրաստան և տեղավորվեցին Թիֆլիսի ու Ելիզավետապոլի նահանգներում՝ հիմնելով Ելենենդորֆ և Աննենֆելդ բնակավայրերը: Բողոքական եկեղեցու հայրերի նպատակն էր Պարսկաստանի սահմանամերձ շրջաններում բողոքականների գաղութներ ստեղծելով դրանք դեպի Պարսկաստան և մահմեդական այլ երկրներ քարոզչական աշխատանքի բազաների վերածել ու այդպես նվաճել Արևելքը, խաղաղ ճանապարհով անել այն, ինչ միջնադարում զենքի միջոցով չկարողացան Խաչակրաց արշավանքները:

Եվ Բազելի ավետարանական ընկերության անդամներ Զարեմբան ու Դիտրիխը 1821 թվականին ընդունվում են Ալեքսանդր կայսեր կողմից, որը հովանավորում էր գերմանացիների այս ծրագիրը, նրանց շնորհում որոշակի արտոնություններ, մասնավորապես՝ մկրտելու իրավունքը, տպարան և դպրոցներ հիմնելը: Նրանց թույլ տրվեց գերմանական գաղութներում իրենց եկեղեցու հոգևոր առաջնորդներ նշանակել:

Իրանի թագաժառանգ Աբբաս Միրզան, շրջապատված Անդրկովկասից փախած խաներով, ծրագրում էր Անդրկովկասում և Դաղստանում մահմեդական բնակչության ապստամբության հսկա ալիք բարձրացնել ռուսական տիրապետության դեմ, որը կհեշտացներ պարսից բանակի գործողությունները:

[462] Линч Х.Ф.Б. "Армения. Путевые очерки и этюды", Тб., 1910, стр. 127.

1825 թ. նոյեմբերին Ալեքսանդր կայսեր մահը որոշ խառնաշփոթ առաջացրեց Ռուսաստանում, որից էլ փորձեցին օգտվել պարսիկները: Ալեքսանդրը իր ժառանգ էր կարգել կրտսեր եղբորը՝ Նիկոլային: Սակայն Կոնստանդինի կողմնակիցները բանակում որոշ խլրտումներ առաջացրին Նիկոլայի դեմ: Նոր ցարը արագ ճնշեց ապստամբության փորձը: Ինչպես երևում է, ապստամբության լուրը չափից դուրս ծոխացված էր հասել Իրան, ու Աբբասն ակնկալում էր առանց լուրջ դիմադրություն հանդիպելու գրավել ողջ Անդրկովկասը: Երմոլովը, որը դեռևս չէր սպասում պարսից բանակի հարձակմանը, կրկին Դաղստան էր մեկնել՝ ճնշելու Շամիլի ապստամբությունը:

1826 թ. հուլիսին պարսից բանակը երկու՝ Երևանի և Դարաբաղի ուղղություններով մտնում է ռուսական հսկողության տակ գտնվող տարածքները: Մահմեդական բնակչության ապստամբություն է բռնկվում Դարաբաղում, Շաքիում, Շամախիում, Շիրվանում, Գանձակի, Բաքվի և Թալիշի խանություններում: Երմոլովը, կորցրած գլուխը, հույսը կապում է հայերի հետ: Ներսես Աշտարակեցին Թիֆլիսում իր հիմնած դպրոցի տպարանում շրջաբերական կոչ է տպագրում՝ ուղղված հայ ժողովրդին: Նա կոչ էր անում զենք վերցնել և պաշտպանել երկիրը: Գեներալ Մադաթովը այդ ժամանակ մեկնել էր Պյատիգորսկի հանքային ջրերը՝ վերքերը բուժելու համար: Արցախի պարետ մայոր Չելյաևը հայ սուրհանդակների միջոցով նամակ է ուղարկում Երմոլովին, հայտնելով, որ Իրանի թագաժառանգը 60 հազարանոց զորքով և 30 թնդանոթներով մտել է Դարաբաղ ու մոտենում է Շուշիին: Աբբաս-Միրզայի գլխավոր նպատակը Թիֆլիսը գրավելն էր: Սակայն նա որոշեց մինչ այդ գրավել Շուշին, որն էլ պարսիկների հիմնական սխալն էր, քանի որ մեկ գունդ ռուսական ստորաբաժանումը թիկունքում որևէ լուրջ վտանգ չէր կարող ներկայացնել, իսկ ահա Թիֆլիսը լրիվ անպաշտպան էր մնացել: Շուշիում մնացել էին 2700 զինվոր, 400 կազակ՝ 6 թնդանոթներով, որոնց հրամանատարն էր գնդապետ Իոսիֆ Ռեուտը: Նա մինչ այդ աչքի էր ընկել կովկասյան պատերազմում և 1810 թ. Ախալքալակի ճակատամարտում: Երեք վաշտ գտնվում էին Գորիսում, որոնց լուր ուղարկեց շտապ Շուշի վերադառնալ: Շուշիում ապրող թաթար բնակչությունը որոշել էր գիշերը հարձակվել բերդը պահպանող ռուսական վաշտի վրա և կոտորել բոլորին՝ ու բերդը հանձնել Աբբաս-Միրզային: Բերդաքաղաքի պարիսպների տակ ռուս զինվորները տեսան հայերի տասնյակ դիակներ: Աբբաս-Միրզան յուրաքանչյուր հայի գլխի համար մի ոսկի էր խոստացել իր զինվորներին: Պարսիկները Անդրկովկասում ռուսական զենքի հաջողությունը կապում էին հայ բնակչության նրանց նկատմամբ ցույց տված օգնության հետ: Սակայն պարսից արքունիքը այլևս չուներ Նադիրի քաղաքական հմտությունն ու ճկունությունը: Եթե Նադիրը մեծ առավելություններ ու արտոնությու-

ներ, ինչպես և ինքնավարություն էր շնորհում հայ իշխաններին ու զորականներին, որոնք էլ պատերազմներում ավելի հուժկու էին դարձնում Իրանի բանակի հարվածները, ապա նրա հաջորդները միմիայն մտածում էին հայերին կեղեքելու մասին: Ազգային սխալ քաղաքականությունը, Ղարաբաղում այլ վայրերում իշխանությունը թաթար բեկերին տալը բերեց հայ ազատագրական շարժմանը: Այս պայմաններում հայերի միակ հույսը ռուսաց օգնությամբ շահական համակարգի բռնություններից ազատագրվելն էր: Իսկ ահա Աբբաս-Միրզայի զինվորների կոտորածը հայերին ստիպեց զենքի դիմել և օգնել Շուշիում գտնվող եգերական գնդին:

Երմոլովը Շուշիի ամրությունը երկրորդական համարելով ծրագրել էր հենց Արաքսի ափին՝ Ասլանդուզ վայրում նոր բերդ կառուցել: Երմոլովը կարգադրեց վտանգի դեպքում ոչնչացնել ամեն ինչ և նահանջել Ելիզավետապոլ կամ Թիֆլիս: Սակայն պարսիկները ճանապարհին սուրհանդակից վերցրել էին նամակը, միայն ուշացումով հասկանալով, թե ինչ սխալ են գործել և բավականին ուշ հասցրել են Ռեուտին: Վերջինս նամակը թաքցրեց բերդի պաշտպաններից: Իսկ երեք վաշտերը, որոնք փոխգնդապետ Նազիմկայի հրամանատարությամբ ուղում էին Շուշի վերադառնալ, ճանապարհին շրջապատվում են պարսկական զորքի կողմից ու լրիվ ոչնչացվում:

Ռուս գեներալ Վալերիան Պոտտոն մանրամասնորեն նկարագրել է Շուշիի պաշտպանության մանրամասները[463]: Իրոք, առանց հայ կամավորականների օգնության և հայ բնակչության օգնության անհնար կլիներ բերդի պաշտպանությունը: Աբբաս-Միրզան Ռեուտին առաջարկում է հանձնել բերդն ու անարգել հեռանալ: Սակայն մերժում է ստանում: Բերդը գրավելու փորձերը անհաջողության են մատնվում: Կրկին թագաժառանգը հույսը բանակցությունների վրա է դնում, որը ձեռնտու էր բերդի պաշտպաններին, քանի որ սպասում էին օգնական զորքերի գալուստին:

Ըստ երևույթին, Իրանի տաղանդավոր զորավար Նադիր շահի պատերազմ վարելու և հանկարծակի հարվածներով առավելության հասնելու մարտավարությունը պարսից բանակում ռազմագիտական դպրոցի չէր վերածվել: Իսկ Աբբաս-Միրզայի բանակը շատ դանդաղաշարժ էր, ինքը՝ թագաժառանգը, վճռական պահերին ոչ մի կերպ չէր ջոկում գլխավորը երկրորդականից: Սակայն չի կարելի ասել, թե Ատրպատականի կուսակալը հայերի նկատմամբ ատելությամբ էր լցված: Եթե նա վատ զինվորական էր, ապա քաղաքական ու դիվանագիտական հարցերում երևի այդ ժամանակ Իրանում մրցակից չուներ: Ատրպատականում նա շատ բան էր անում հայերին պահելու համար, որոնք ծաղկեցնում, հարստացնում էին երկիրը: Նա

[463] В.Потто, Героическая оборона крепости Шуши, СПб, 1903,

հայ առևտրականներին արտոնություններ էր շնորհել, սեփական դրամագլխով մասնակցում էր նրանց առևտրական ձեռնարկներին: Նա զսպում էր մոլեռանդ կրոնամոլների հարձակումները հայերի դեմ: Թագաժառանգը Թավրիզի հայերին ազատել էր հարկ վճարելուց:

Իշխան Մադաթովը Թիֆլիս հասնելով իսկույն երկու հազարանոց զորք է հավաքագրում ու շարժվում դեպի Գանձակ: Նրան է միանում քաջ զինվոր Գրիգոր եպիսկոպոս Մանուչարյանը՝ 500 հայ հեծյալներով: Այս եկեղեցականին թուրքերը «Դալիքեշիշ» (գիժ տերտեր) էին կոչում: Նա հարկ եղած դեպքում հանում էր փիլոնն ու խաչի փոխարեն հրացան և թուր վերցնում: Մադաթովը այս զորամասով պետք է կռվեր պարսից 10 հազարանոց բանակի դեմ, որը գլխավորում էին շահի փեսա Ամիրխան սարդարն ու թագաժառանգի երեց որդին՝ Մուհամադ-Միրզան: Այս զորքը Գանձակը գրավելուց հետո պետք է ճանապարհ բացեր դանդաղաշարժ Աբբաս-Միրզայի բանակի դեպի Թիֆլիս արշավանքի համար: Արցախցի զորահրամանատարը, ելնելով Շամքորի տեղանքից, դիմում է մարտավարական հնարքների՝ խուսափելով ճակատ-ճակատի հանդիպումից: Այս ճակատամարտը, որը տեղի էր ունեցել սեպտեմբերի 3-ին, մանրամասնորեն նկարագրել է շուշեցի պատմիչ Հակոբ սարկավագ Պողոսյանը: Գեներալ Մադաթովը մի խորամանկ ծուղակ է պատրաստում և հնարամտորեն խաբելով պարսից զորքի հրամանատարներին, 10 հազարանոց զորքը քաշում է այդ ծուղակի մեջ և ամբողջովին ոչնչացնում այն: Այս փայլուն հաղթանակի համար հայ իշխանը կայսրից ստացավ ադամանադակուռ թուր և գեներալ-լեյտենանտի աստիճան: Լսելով պարտության լուրը, Աբբաս-Միրզան թողեց Շուշին ու շարժվեց դեպի Գանձակ՝ պատժելու հանդուգն Մադաթովին: Սակայն Թիֆլիսից հասնում է ռուսական բանակը՝ գեներալ Պասկևիչի հրամանատարությամբ: Սեպտեմբերի 13-ի ճակատամարտը ողբերգական էր Աբբաս-Միրզայի համար: Ռազմի դաշտում թողնելով երկու հազար դիակ, հազար գերի, երկու թնդանոթ և չորս մարտական դրոշ, իր զորքը հետ է քաշում: Իշխան Մադաթովը իր զորքով անցնում է Երասխն ու արշավում դեպի Շահսևան, հափշտակում 80 հազար ոչխար, 15 հազար կով, 4 հազար ձի, 3 հազար ուղտ, դրանք փոխադրում Ղարաբաղ: Իրանից 40 հազար հայեր գնդապետ Ղազար Լազարյանի գլխավորությամբ գաղթում են Արարատյան դաշտ: Մարաղա քաղաքի հայերը տեղափոխվում են Պարտավ քաղաքի մոտ, սակայն ամռան տենդին չդիմանալով, այստեղ թողնելով 1042 դիակ, անցնում են Ղարաբաղ և բնակություն հաստատում Ջրաբերդի մելիքների ծմեռոցում՝ Ղազարխում, այն անվանելով Մարաղա:

Մեհտի Ղուլին, տեղյակ լինելով Պասկևիչի և Երմոլովի միջև անգիջում թշնամանքին, որպես Երմոլովի և Մադաթովի գործունեության զոհ ներկայ-

նալով, Պասկևիչին առաջարկեց իր ծառայությունները, նպատակ ունենալով վերականգնել իր իրավունքները: Մեհտի Ղուլին կարողացավ թաթար բեկերին օգնել վերադառնալ Արցախ և կալվածքներ ստանալ: Իսկ հայ իշխանները, որոնք հավատարմորեն ծառայել և օգնել էին ռուսներին, ճնշվեցին և աքսորվեցին երկրից: Իրոք, զարմանալի էր ռուսական բյուրոկրատիան: Այն անհրաժեշտության դեպքում ընդունում է օգնությունը, բայց սիրաշահելու նպատակով առատաձեռնորեն վարձատրում է իր ամենավտանգավոր ու խորամանկ թշնամուն, թեկուզ և գիտակցաբար դառնում այդ բուք քաղաքականության զոհը:

1828 թ. ռուսական զորքերը հայ կամավորականների աջակցությամբ գրավեցին Երևանի բերդը: Ողջ Անդրկովկասը անցավ Ռուսական տիրապետության տակ, որի սահմանն էր Երասխ գետը: Գեներալ Պասկևիչի դեպի Իրան արշավանքին մասնակցում էր նաև գերմանացի միսիոներ Ֆելիցիան Զարեմբան, որը թուրքերեն թարգմանած «Աստվածաշունչ» էր բաժանում մահմեդականներին, քարոզչություն անում: Սակայն պարսից ժողովուրդը, որը մոր կաթի հետ ներծծել էր և իսլամի կարգերն ու ատելությունը դեպի մյուս հավատքները, չընդունեց այն և ոչնչացրեց Զարեմբայի գրքերը: Հաստատվելով Թավրիզում, ռուսներն արագորեն տարածեցին իրենց արշավանքները: 1828 թ. փետրվարի 10-ին Թուրքմենչայ գյուղում ստորագրվեց ռուս-պարսկական պայմանագիրը, որին վիճակված էր ճակատագրական դեր կատարել Իրանի քաղաքական թուլացման և անկման մեջ: Ռուսաստանին կցվեցին Երևանի և Նախիջևանի խանությունները, որոնք կազմեցին Հայկական մարզը: Իսկ Արցախ-Ղարաբաղը Շուշի կենտրոնով մնաց Ելիզավետապոլի (Գանձակ) նահանգի կազմում:

Այսպիսով, Արևելյան Հայաստանը Իրանի տիրապետությունից անցավ Ռուսաստանի տիրապետության տակ: Ազատարարի հռչակ ձեռք բերած ռուսական իշխանությունները տեղում խեղդեցին հայոց պետականության վերականգնման ամեն մի օջախ: Ներսես կաթողիկոսը, որ ամեն ինչ արել էր Անդրկովկասում ռուսների տիրապետության հաստատման համար, աքսորվեց Բեսարաբիա:

ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Հայերեն

Ձեռագրեր

Երևանի Մատենադարանի ձեռագիր N 6644:
Երևանի Մատենադարանի ձեռագիր .N 4375:
Երևանի Մատենադարան, ձեռագիր N 8211:
Երևանի Մատենադարան, ձեռագիր N387, էջ 8բ, 9ա:
Հակոբ Պողոսյան , Պատմության գավառին Արցախու, Երևանի Մատենադարան, ձեռագիր N 2734
Երևանի Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 2բ, վավ. 181:
Երևանի Մատենադարան, ձեռագիր N1575:
Սիմեոն Երևանցի «Ջամբռ», Երևանի Մատենադարան, ձեռագիր N978:

Տպագիր սկզբնաղբյուրներ

Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, Եր., 1990:
Մովսես Խորենացի, Աշխարհացոյց Մով. Խորենացիոյ յաւելուածովի նախնեաց, Մատենագիրք Հայոց, Ա հատոր, Ե դար, Եր., 2003:
Աստվածաշունչ, Գիրք ծննդոց, գլ. Ժ, Կոստանդնուպոլիս, 1896:
Փավստոս Բյուզանդ, Հայոց պատմություն, Եր., 1987:
Մովսես Կաղանկատվացի, Պատմություն Աղվանից Աշխարհի, Եր., 1969:
Թովմա Արծրունի ու Անանուն, Պատմություն Արծրույաց տան, Եր., 1985:
Մ. Գոշ, Հայ Գանձակ, Ալիշան, Հայապատում, Վենետիկ, 1893:
Կ. Գանձակեցի, Պատմություն Հայոց, Եր., 1961:
Մոկացի Անանիա կաթողիկոսի ինքնագիր թուղթը, «Արարատ», 1897:
Մ.Ուռհայեցի, Ժամանակագրություն, Եր., 1973:
Ստեփանոս Օրբելյան, Սյունիքի պատմությունը, Եր., 1986:
Վարդան Արևելցի, Պատմություն տիեզերական, Մոսկվա, 1861:
Ա. Լաստիվերտցի, Պատմաթիւն Արիստակեսայ Վրդ.. Լաստիվերտցվոյ, Թիֆլիս, 1912:
Ս. Անեցի, Հաւաքմունք ի գրոց պատմագրաց, Վաղարշապատ:
Հովհաննեսիկ Ծարեցու ժամանակագրությունը, Մանր ժամանակագրություններ, XIII-XVIII դդ., հ 2, Եր., 1951:
Աբրահամ Կրետացի, Պատմութիւն անցիցն իւրոյ եւ Նատր-Շահին պարսից, Վաղարշապատ, 1870:
Եսայի Ջալալյան, Պատմութիւն կամ Յիշատակ ինչ ինչ անցից՝ դիպելոց յաշխարհին Աղուանից, Շուշի, 1839:
«Սիմեոն կաթողիկոսի «Յիշատակարանը», (Դիվան հայոց պատմության), գիրք Գ. Թիֆլիս, 1894:

Կոնստանդին Ծիրանածին, «Բյուզանդական արքունիքի արարողությունների մասին», Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ. 6, Եր., 1970:
Ստրաբոն, Աշխարհագրություն, Եր., 1940:
«Արարատ», «Տեառն Անանիայի հայոց կաթողիկոսի՝ յաղագս ապստամբութեան տանն Աղուանից», 1897:
Մանր ժամանակագրություններ, XIII-XVIII դդ.., հ. 1, Եր., 1951:
Հակոբ Հիսուսիի ժամանակագրությունը, Մանր ժամանակագրություններ, Եր
«Թուղթ Կոնստանդեայ կաթողիկոսի Հայոց զոր գրեաց առ Հեթում թագավորն...», Գիրք թղթոց, Թիֆլիս, 1901:
Արաբական աղբյուրները Հայաստանի ու հարևան երկրների մասին, Հ.Թ.Նալբանդյանի թարգմանությամբ, Եր., 1965:
Արաբական աղբյուրներ, գ. Բ, թարգմ. Արամ Տեր-Ղևոնդյան, Եր., 1981:
Ահմադ Քասրավի, «Քարվանդ-է Բասրավի» ժողովածու, Թեհրան, 1977:
Վրացական ժամանակագրություն 1207-1318 թթ., թարգմ. Փ. Մուրադ յան, Եր., 1971:
Մելիքսեթ-բեկ, «Բագրատունյաց պատմությունից», Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հատոր Ա, Եր., 1934:
Մելիքսեթբեկ, Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ. Գ, Եր., 1955:
Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին, հ. Բ, Եր., 1973:
«Մատենադարանի պարսկերեն վավերագրերը» (այսուհետ՝ ՄՊՎ), II, Կալվածագրեր, կազմեց Վ.Փափազյանը, Եր., 1968:
Մուհամադ-Քազիմ, Նամե-յե Ալամարա-յե Նադերի (պարսկ. բնագիր), հատ 1, Մոսկվա, 1960:
Իսմայիլ-Ասըմ էֆենդի, «Թարի Չելեբիզադե», Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին, հ. Ա, 1973:

Գրականություն

Աբրահամ Երևանցի, Պատմութիւն պատերազմաց, Եր., 1938
Աբրահամյան Ա.Գ., Մի էջ Անդրկովկասի ժողովուրդների հայ-ռուսական հարաբերությունների պատմությունից, Եր., 1953
Ադոնց Ն., Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում, Եր., 1987
Ադոնց Ն., «Բագրատունյաց փառքը», Պատմական ուսումնասիրություններ, Պարիս, 1948:
Ալիշան, Արցախ, Երեւան, 1993:
Աճառյան Հր, Հայ բարբառագիտություն, Մոսկվա, 1911:
Աճառյան Հր., Հայերեն արմատական բառարան, Եր., 1971:
Աճառյան Հր., Հայոց անձնանունների բառարան, հ. Ա, Եր., 1942
Բաբայան Լ., Հայաստանի սոցիալ-տնտեսական և քաղաքական պատմությունը XIII-XIVդ.դ., Եր.
Բարխուդարյան Ս., Դիվան հայ վիմագրության, V պրակ, Եր, 1982:
Բարխուտարյանց Մ., Արցախ, Եր. 1996:
Բարխուտարյանց Մ., Պատմութիվն Աղուանից, Թիֆլիս, Ա հատոր, 1901
Բարխուտարյանց Մ., Պատմութիւն Աղուանից , հատոր Բ, Թիֆլիս, 1907
Բարխուտարյանց Մ., Աղուանից երկիր և դրացիք, Եր., 1999
Բարխուտարեանց Մ., Պատմություն Աղվանից, Վաղարշապատ, 1902:
Գաղտնիք Ղարաբաղի, Թիֆլիս, 1902:

Դավթյան Կ., Լեռնային Ղարաբաղի բարբառային քարտեզը, Եր., 1966:
Դավրիժեցի, Պատմություն, Եր., 1988թ. էջ 25:
Երեմյան Ս., Հայաստանն ըստ «Աշխարհացույցի», Եր., 1963:
Երիցյան Ալ., Ամենայն Հայոց կաթողիկոսություն եւ Կովկասի Հայք, Թիֆլիս, 1894:
Էնաեթոլլահ Ռէզա, Առան և Ազարբայջան, Եր., 1994
Ընտիր պատմութիւն Դաւիթ Բեգին և պատերազմաց հայոցն Խափանու.... Վաղարշապատ, 1871
Թաղիադյան, Գրական ժառանգություն, հ.9, ՀՀ ԳԱ, Երևան, 1975:
Թորամանյան, «Հայկական ճարտարապետության փոխազդեցության շուրջը», Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, Եր., 1948:
Իբն–ի Ֆակիհ, Ալբոդան Աբուբաքր Ահմադ, Թեհրան, 1970:
Իսմայիլ-Ասըմ էֆենդի, «Թարի Չելեբիզադե», Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին, հ. Ա, 1973
Լալայանե., երկեր, հ. Բ, Եր., 1988
Լեո, Երկերի ժողովածու, հ.3-2, Եր.,1973:
Լեո, Պատմություն Ղարաբաղի հայոց թեմական հոգևոր դպրոցի, Թիֆլիս, 1914:
Կարագոզեան Յ., Սեպագիր տեղանուններ, Եր., 1998:
Կարապետյան Բակուր, Հարյուր տարվա երկխոսություն, գ. 2, եր., 1996:
Հովհաննիսյան Աշ, Դրվագներ հայ-ռուսական հարաբերություններից, հ. Ա Եր., 1959, գ.2
Ջալալյան Ս., Ճանապարհորդություն ի Մեծն Հայաստան, մաս Բ, Տփղիս, 1858:
Մանանդյան Հակոբ, Հին Հայաստանի և Անդրկովկասի մի քանի պրոբլեմների մասին, Եր., 1944:
Միրզա Յուսուֆ Ներսեսով, Ճշմարտացի պատմություն, Եր., 2000:
Մուհամմադ-Քյազիմ, Նամե-յե Ալմարա-յե Նադերի, (պարս, բնագիր), հ. 1, Մոսկվա, 1960:
Ներսիսիյան Մ., Ռուս-հայկական հարաբերությունների պատմությունից, Եր., 1956:
Չամչյան Մ., Պատմություն Հայոց, հ. 3, Եր., 1984
Ռաֆֆի, Խամսայի մելիքությունները, երկերի ժողովածու, հ. 10, եր., 1964
Բ. Ուլուբաբյան, Դրվագներ Հայոց արեւից կողմանց պատմության, Եր., 1981:
ՈւլուբաբյանԲ., Խաչենի իշխանությունը X-XVI դարերում, Եր., 1975,
Ուլաբաբյանը Բ., Ոսկե շղթա, Երևան, 1979
Փափազյան Հակոբ, Հայ-իրանական զինակցությունը 1726-1736 թթ. և Արևելյան Հայաստանի քաղաքական իրավիճակը Նադիր-շահի օրոք, «Բանբեր Երևանի համալսարանի», 1972

Արխիվային նյութեր

ГАФКЭ, ф. С РА, 1724, Но. 4, л.2.
ГАФКЭ, ф. СРП, 1725, N5, л. 365.
ГАФКЭ, Ф. СРА, 1724, N 4, l. 19
Архив АН СССР, ф. 99, оп. 2, в. 13

Կոնստանդին Ծիրանածին, «Բյուզանդական արքունիքի արարողությունների մասին», Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ. 6, Եր., 1970:
Ստրաբոն, Աշխարհագրություն, Եր., 1940:
«Արարատ», «Տեառն Անանիայի հայոց կաթողիկոսի՝ յաղագս ապստամբութեան տանն Աղուանից», 1897:
Մանր ժամանակագրություններ, XIII-XVIII դդ.., հ. 1, Եր., 1951:
Հակոբ Հիսուսիի ժամանակագրությունը, Մանր ժամանակագրություններ, Եր
«Թուղթ Կոնստանդեայ կաթողիկոսի Հայոց զոր գրեաց առ Հեթում թագավորն...», Գիրք թղթոց, Թիֆլիս, 1901:
Արաբական աղբյուրները Հայաստանի ու հարևան երկրների մասին, Հ.Թ.Նալբանդյանի թարգմանությամբ, Եր., 1965:
Արաբական աղբյուրներ, գ. Բ, թարգմ. Արամ Տեր-Ղևոնդյան, Եր., 1981:
Ահմադ Քասրավի, «Քարվանդ-է Բասրավի» ժողովածու, Թեհրան, 1977:
Վրացական ժամանակագրություն 1207-1318 թթ., թարգմ. Փ. Մուրադ յան, Եր., 1971:
Մելիքսեթ-բեկ, «Բագրատունյաց պատմությունից», Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հատոր Ա, Եր., 1934:
Մելիքսեթբեկ, Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ. Գ, Եր., 1955:
Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին, հ. Բ, Եր., 1973:
«Մատենադարանի պարսկերեն վավերագրերը» (այսուհետ՝ ՄՊՎ), II, Կալվածագրեր, կազմեց Վ.Փափազյանը, Եր., 1968:
Մուհամադ-Քազիմ, Նամե-յե Ալամարա-յե Նադերի (պարսկ. բնագիր), հատ 1, Մոսկվա, 1960:
Իսմայիլ-Ասըմ էֆենդի, «Թարի Չելեբիզադե», Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին, հ. Ա, 1973:

Գրականություն

Աբրահամ Երևանցի, Պատմութիւն պատերազմաց, Եր., 1938
Աբրահամյան Ա.Գ., Մի էջ Անդրկովկասի ժողովուրդների հայ-ռուսական հարաբերությունների պատմությունից, Եր., 1953
Ադոնց Ն., Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում, Եր., 1987
Ադոնց Ն., «Բագրատունյաց փառքը», Պատմական ուսումնասիրություններ, Պարիս, 1948:
Ալիշան, Արցախ, Երեւան, 1993:
Աճառյան Հր, Հայ բարբառագիտություն, Մոսկվա, 1911:
Աճառյան Հր., Հայերեն արմատական բառարան, Եր., 1971:
Աճառյան Հր., Հայոց անձնանունների բառարան, հ. Ա, Եր., 1942
Բաբայան Լ., Հայաստանի սոցիալ-տնտեսական և քաղաքական պատմությունը XIII-XIVդ.դ., Եր.
Բարխուդարյան Ս., Դիվան հայ վիմագրության, V պրակ, Եր, 1982:
Բարխուտարյանց Մ., Արցախ, Եր. 1996:
Բարխուտարյանց Մ., Պատմութիվն Աղուանից, Թիֆլիս, Ա հատոր, 1901
Բարխուտարյանց Մ., Պատմութիւն Աղուանից , հատոր Բ, Թիֆլիս, 1907
Բարխուտարյանց Մ., Աղուանից երկիր և դրացիք, Եր., 1999
Բարխուտարեանց Մ., Պատմություն Աղվանից, Վաղարշապատ, 1902:
Գաղտնիք Ղարաբաղի, Թիֆլիս, 1902:

Դավթյան Կ., Լեռնային Ղարաբաղի բարբառային քարտեզը, Եր., 1966:
Դավրիժեցի, Պատմություն, Եր., 1988թ. էջ 25:
Երեմյան Ս., Հայաստանն ըստ «Աշխարհացույցի», Եր., 1963:
Երիցյան Ալ., Ամենայն Հայոց կաթողիկոսություն եւ Կովկասի Հայք, Թիֆլիս, 1894:
Էնաեթոլլաի Ռէզա, Առան և Ազարբայջան, Եր., 1994
Ընտիր պատմութիւն Դաւիթ Բեգին և պատերազմաց հայոցն Խաչանու.... Վաղարշապատ, 1871
Թաղիադյան, Գրական ժառանգություն, հ.9, ՀՀ ԳԱ, Երևան, 1975:
Թորամանյան, «Հայկական ճարտարապետության փոխազդեցության շուրջը», Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, Եր., 1948:
Իբն–ի Ֆակիհ, Ալբոդան Աբուբաքր Ահմադ, Թեհրան, 1970:
Իսմայիլ-Ասըմ էֆենդի, «Թարի Չելեբիզադե», Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին, հ. Ա, 1973
Լալայանե., Երկեր, հ. Բ, Եր., 1988
Լեո, Երկերի ժողովածու, հ.3-2, Եր.,1973:
Լեո, Պատմություն Ղարաբաղի հայոց թեմական հոգևոր դպրոցի, Թիֆլիս, 1914:
Կարագոզեան Յ., Սեպագիր տեղանուններ, Եր., 1998:
Կարապետյան Բակուր, Հարյուր տարվա երկխոսություն, գ. 2, Եր., 1996:
Հովհաննիսյան Աշ, Դրվագներ հայ-ռուսական հարաբերություններից, հ. Ա Եր., 1959, գ.2
Ջալալյան Ս., Ճանապարհորդություն ի Մեծն Հայաստան, մաս Բ, Տփղիս, 1858:
Մանանդյան Հակոբ, Հին Հայաստանի և Անդրկովկասի մի քանի պրոբլեմների մասին, Եր., 1944:
Միրզա Յուսուֆ Ներսեսով, Ճշմարտացի պատմություն, Եր., 2000:
Մուհամմադ-Քյազիմ, Նամե-յե Ալամարա-յե Նադերի, (պարս, բնագիր), հ. 1, Մոսկվա, 1960:
Ներսիսիյան Մ., Ռուս-հայկական հարաբերությունների պատմությունից, Եր., 1956:
Չամչյան Մ., Պատմություն Հայոց, հ. 3, Եր., 1984
Ռաֆֆի, Խամսայի մելիքությունները, Երկերի ժողովածու, հ. 10, Եր., 1964
Բ. Ուլուբաբյան, Դրվագներ Հայոց արեւից կողմանց պատմության, Եր., 1981:
ՈւլուբաբյանԲ., Խաչենի իշխանությունը X-XVI դարերում, Եր., 1975,
Ուլաբաբյանը Բ., Ոսկե շղթա, Երևան, 1979
Փափազյան Հակոբ, Հայ-իրանական զինակցությունը 1726-1736 թթ. և Արևելյան Հայաստանի քաղաքական իրավիճակը Նադիր-շահի օրոք, «Բանբեր Երևանի համալսարանի», 1972

Արխիվային նյութեր

ГАФКЭ, ф. С РА, 1724, Но. 4, л.2.
ГАФКЭ, ф. СРП, 1725, N5, л. 365.
ГАФКЭ, Ф. СРА, 1724, N 4, l. 19
Архив АН СССР, ф. 99, оп. 2, в. 13

Պարբերական հրատարակչություն

Ս.Բարխուդարյան, «Արցախի, Շաքիի ու Փառիսոսի իշխանությունները IX-X դարերում», Պատմա-բանասիրական հանդես, Եր., 1971, N 1,
[1]«Արարատ» ամսագիր, 1919 թ., Ա-ժբ
Ս. Բարխուդարյան, Դերբենտի հայ-աղվանական թագավորությունը, «Պատմա-բանասիրական հանդես», Եր., 1969
«Ճռաքաղ» ամսագիր, Մոսկվա, 1859
Հակոբ Փափազյան, «Հայ-իրանական զինակցությունը 1726-1736 թթ. և արևելյան Հայաստանի քաղաքական իրավիճակը Նադիր-շահի օրոք». Բանբեր Երևանի համալսարանի, 1972, N12,
"Кавказский вестник", Тифлис, 1901, N 10,
«Իրան-նամե», ամսագիր, «Հայ պետականության վերականգնման պարսկական մի ծրագիր», պրոֆեսոր Բորիս Բալայան, Եր., 1993, հուլիս, թիվ 2:
Գ.Շիրմազանեանց, «ճանապարհորդություն Հայաստանում», «Արարատ», ամսագիր, Վաղարշապատ, 1877թ. սեպտեմբերի 30

Ռուսերեն

Абд-ал-Лятиф-эфенди, Ц и Т, изд. Баку, 1926
Авагов З., Присоединение Грузии с Россией, СПб, 1901
Акопян А.А., О хронологии последних событий в "Истории 684 года", Кавказ и Византия, Ереван, 1988
Ахмед-бек Дживаншир, О политическом существовании Карабахского ханства с 1747 по 1805 гг., Шуша, 1901
Армяно-русские отношения в первой трети XVIII в. Сборник документов, т. 2, ч. 2, Ереван, 1967
Ельницкий Л.А., "Скифия Евразийских степей", Новосибирск, 1977
Геничутлинский Х., Историко-биографические и исторические очерки, Махачкала, 1992 (перевод с арабского Т. Айтберова).
Герцберг Г.Ф., История Византии, М., 1987
Джеваншир М.Д., "Карабах", газета "Кавказ", Тбилиси, 1855
"Джихан-нюма" и "Фезлеке" Кятиба Челеби как источник по истории Армении, XVII, Ереван, 1973,
Дербенту 5000 лет, М., 1989
Дубровин, "История войн и владычества русских на Кавказе" , II том.
Дьяконов И.М., История Мидии, М., Л., 1956
Зулапян М.К, Вопросы древней и средневековой истории Армении в освещении современной турецкой историографии, Ереван, 1970.
Иванов М.С., Очерки истории Ирана, М., 1952
Иоаннисян А.Р, Иосиф Эминь, Ереван, 1945
История Азербайджана, т. 1, Баку, 1958
Карапетян Б., С. Карапетян, Тайны Гандзака (Кировабада) и Северного Арцаха, Москва, 1998
Караулов Н.А, Сведения арабских писателей о Кавказе, Армении и Азербайджане, "Сборник материалов по описанию местностей и племен Кавказа", вып. XXX, Тифлис, 1901.
"Краткие сообщения института Народов Азии", N 47, 1961.
Линч Х.Ф.Б. "Армения. Путевые очерки и этюды", Тб., 1910.
Лысцев В., Персидский поход Петра I, М., 1951

Марр Н., Аркаун, монгольское название христиан, Петербург, 1905
Миклухо-Маклай Н.Д., "Географическое сочинение XIII века", на персидском языке, Ученые записки Института востоковедения, т. IX, Ленинград, 1951
Минорский В., История Ширвана и Дербента X-XI веков, М., 1963
Петрушевский И. П., Очерки по истории феодальных отношений в Азербайджане и Армении в XVI-XIX вв., Ленинград, 1949, стр. 138.
Петрушевский И., Азербайджан в XVI-XVII вв.,Сборник статей из истории Азербайджана, Баку, 1949
Потто В., Героическая оборона крепости Шуши, СПб, 1903.
Путешествие Шильтбергера по Европе, Азии и Африке с 1394 по 1427 г. поеревод и примечания Ф. Беруль, Одесса, 1866
Рашид-ад-Дин, Сборник летописей, Т. III, пер. А.К.Арендса, М.-Л.,1946
Сборник актов относящиеся к обозрению истории армянского народа, М., 1833.
Симон Ереванци, Джабр, Памятная книга..., Москва, 1958
Эзов, Сношения Петра Великого с армянским народом, СПб, 1898
Якобсон А.Л., "Из истории армянского средневекового зодчецтва", Исследования по истории культуры народов Востока. Цборник в честь И.Орбели, М.,-Л., 1960

ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐԻ ՑՈՒՑԱԿ

Ագուլիս 158, 176, 186, 205, 206, 246
Ադրբեջան 13, 52, 73, 80, 83, 85, 204
Ազով 4, 140
Ալանաց դուռ 54, 75
Ալանաց երկիր 123
Ալբանիա 12, 13, 15, 17, 25, 26, 37,
Ալեքսանդրիա 72
Ախլցիխա 234
Ախլքալակ
Աղահեճք գվռ. 133
Աղբերդ 52
Աղավնո 39
Աղդամ 240
Աղստև 3, 95
Աղվանք 9, 13, 14, 15, 16, 17, 18, 22, 23, 24, 25, 26, 29, 30, 31, 32, 37, 38, 41, 42, 45, 47, 48, 50, 51, 52, 53, 54, 55, 57, 58, 62, 63, 65, 66, 70, 71, 72, 73, 74, 75, 76, 77, 78, 79, 80, 81, 82, 83, 84, 88, 94, 100, 122, 122, 123, 124, 134,
Աղվե 10, 11, 16, 32, 33, 35,
Ալթայ 67, 138
Ականաբերդ 92
Ամարաս 21, 23, 34, 64, 65, 66, 148, 209, 232, 235
Այահիր 6
Այրարատ 4
Անգեղակոթ 141
Անի 74, 75, 81, 82, 83, 84, 85, 87, 88, 93, 94, 98, 100, 208, 243
Աննեֆելդ 248
Աջարիա 82
Առան 9, 10, 11, 13, 14, 16, 17, 18, 24, 25, 33, 37, 38, 41, 42, 43, 45, 48, 49, 54, 60, 64, 65, 66, 75, 90, 92, 98, 104, 105, 106, 107, 110, 123, 142, 143, 194, 196, 204, 207, 208, 211
Ալանդուզ 242, 250
Ասորեստան 4, 5, 7, 41,
Աստղաբլուր 24, 55
Աստրախան 102, 144, 147, 154, 219, 224, 228
Ավարայր 28
Ավետարանոց 28, 134, 145, 150, 151, 153, 162, 165, 175, 178, 196, 200, 212, 243
Ավստրո-Հոմեական կայսրություն 140, 143
Արագ գ.
Արալյան ծով 11
Արարատի մարզ 188, 190
Արարատյան դաշտ 32, 47, 48, 51, 120, 126, 221, 251
Արարատյան նահանգ 37, 56, 111, 126, 156, 221, 235
Արաքս գ. 6,8, 11, 43, 63, 65, 66, 100, 104, 111, 115, 120, 125, 126, 142, 166, 175, 176, 186, 192, 199, , 204, 211, 235, 239, 240, 241, 242, 244, 250
Կուր-Արաքսի միջագետք 12, 13, 14, 15, 16, 17, 25, 31, 37, 43, 48, 49, 63, 100, 105, 192, 196, 210, 211, 248
Արդաբիլ 40, 116, 183, 229
Արցախ 2, 3, 4, 8, 9, 10, 11, 12, 13, 14, 15, 16, 17, 18, 19, 21, 22, 23, 24, 25, 26, 28, 29, 31, 32, 33, 34, 35, 36, 37, 38, 40, 41, 42, 43, 44, 45, 49, 50, 58, 63, 64, 65, 66, 68, 70, 74, 75, 76, 79, 80, 81, 85, 86, 89, 91, 94, 95, 96, 97, 99, 101, 102, 104, 105, 108, 110, 111, 112, 113, 118, 119, 120, 121, 125, 127, 128, 129, 130, 132, 134, 138, 139, 141, 142, 144, 145, 147, 148, 149, 150, 151, 153, 156, 157, 158, 159, 161, 164, 165, 167, 168, 172, 174, 175, 176, 178, 179, 181, 185, 187, 191, 195, 201, 202, 203, 204, 206, 207, 211, 212, 215, 221, 215, 221, 224, 228, 231, 232, 234, 237, 238, 239, 240, 243, 246, 249, 251, 252
Ատրպատական 13, 34, 40, 43, 46, 64, 65, 75, 76, 78, 86, 92, 109, 11, 116, 117, 124, 135, 136, 138, 178, 182, 190, 192, 204, 208, 212, 229, 233, 244, 250
Աֆղանստան 147, 194

Աֆրիկա 112

Բազել 247, 248
Բալկանյան թ-ի 5, 15, 110
Բայազետ 165, 188, 220, 238
Բայաթ 132, 197, 198, 200
Բայլական 38, 48, 49, 102, 105, 115
Բաղդադ 66, 71, 78, 111, 122, 182
Բասեն 21, 75
Բալթիկ ծով 143
Բաքու 115, 142, 155, 170, 172, 242, 246
Բելական 83, 196
Բերդակուր 11, 52, 63, 122, 137, 149
Բերդաձոր 39, 43, 65, 66, 135
Բիթ-Խամբան 4
Բյուզանդիա 20, 21, 29, 37, 40, 41, 43, 45, 46 , 47, 50, 51, 53, 58, 65, 67, 71, 72, 75, 78, 84, 87, 88, 89, 97, 109, 110, 115, 117, 140, 143
Բոլնիս 237, 238
Բորչալու 237
Բրագուն 221
Բուն Աղվանք 9, 16, 17, 18, 24, 25, 30, 31, 32, 37, 38, 45,
Բուրվար 126

Գագ բերդ 101
Գալատիա 15, 16
Գամիրք 5, 7

Գանձակ 34, 36, 40, 68, 83, 85, 86, 89, 90, 91, 92, 95, 96, 99, 100, 105, 106, 109, 112, 120, 121, 122, 126, 131, 133, 142, 150, 152, 153, 154, 156, 158, 159, 164, 165, 167, 170, 172, 184, 185, 187, 192, 193, 198, 203, 204, 206, 208, 210, 211, 214, 215, 216, 217, 218, 221, 222, 223, 227, 229, 232, 233, 234, 235, 237, 239, 240, 241, 242, 247, 249, 251, 252
Գանձասար 9, 45, 72, 80, 81, 82, 92, 98, 99, 101, 103, 104, 112, 113, 119, 121, 122, 123, 129, 134, 139, 141, 145, 147,149, 150, 152, 153, 156, 161, 162, 163, 168, 171, 199, 215, 216, 223, 225, 228, 231, 232, 246
Գարդմանք 15, 16, 41, 42, 43, 47, 51, 66, 80, 90, 93, 95, 99, 100, 104, 108, 128, 159, 194, 235
Գարուն գ. 240
Գառնի 41
Գեղամա գվռ. 121, 126
Գետաշեն 35, 108, 133, 196, 222
Գերմանիա 7, 139, 144
Գետաբակ 100
Գիս 20, 23, 56
Գյուլիստան 3,10, 12, 15, 19, 40, 93, 101, 109, 115, 116, 130, 131, 132, 133, 137, 138, 147, 151, 152, 153, 155, 161, 163, 164, 165, 167, 171, 179, , 184, 189, 195, 198, 199, 201, 203, 204, 207, 213, 214, 215, 217, 220, 225, 226, 230, 232, 239, , 240, 241, 242, 246:
Գյումնիա 4
Գյումրի 4
Գլխո վանք 19, 54, 107
Գոռոզ բերդ 65, 205, 227, 241
Գորի 155, 204, 206, 211, 249
Գորիս 204, 206, 211, 249
Գուգարք 8
Գողթան 186, 205, 245

Դաղի վանք 64, 91, 96, 104, 105, 120, 135
Դաղստան 15, 40, 120, 150, 186, 192, 193, 194, 210, 223, 242, 245, 248, 249
Դամասկոս 14, 48, 51, 53, 69
Դարանաղ 56
Դարյալի կիրճ 6, 28, 75
Դարոյնք 60
Դարպասներ 92, 98
Դաստագիր 178
Դյուտական 3, 21, 23, 31, 33, 34, 43, 55, 107, 129, 133, 149,
Դերբենտ 24, 39, 44, 48, 53, 54, 79, 82, 83, 84, 95, 96, 111, 120, 122, 151, 154, 155, 157, 169, 171, 194, 213, 214, 216, 231, 242, 246, 256

Դիզակ 65, 66, 119, 120, 124, 125, 134, 135, 145, 151, 153, 159, 160, 163, 169, 181, 183, 187, 191, 192, 193, 200, 201, 203, 207, 211, 214, 228, 231, 232
Դիվախոռ լեռ 92
Դյուսելդորֆ 139
Դղմահողք 53
Դվին 21, 32, 37, 41, 47, 59, 63, 71, 75, 83, 85, 88, 89, 96

Ելենենդորֆ 248
Ելիզավետապոլ 248
Երիցմանկանց վանք 149, 150, 156, 161, 198, 216, 223, 231, 237
Երևան 14, 116, 121, 124, 125, 126, 127, 144, 148, 151,լ 159, 165, 166, 183, 184, 185, 186, 187, 188, 190, 192, 225, 229, 244, 249, 252

Զանգեզան 221
Զաքաթալա 73
Զեյվա 10
Զեյթուն 121
Զորավար 76

Էջմիածին 37, 129, 150, 183, 184, 190, 218, 244, 247
Էրքեջ 131

Թաբասարան 78
Թալիշ 3, 15, 19, 33, 54, 55, 56, 107, 115, 129, 131, 192, 196, 233, 242, 249,
Թալիշ երկիր 246
Թաղավարդ 45
Թավրիզ 14, 103, 111, 116, 117, 125, 142, 160, 183, 192, 198, 206, 211, 238, 251, 252
Թարթառ գ. 3, 9, 11, 24, 33, 43, 48, 92, 102, 130, 195, 197, 209, 211
Թարթառ-բազար 197
Թաուզ 75, 76
Թեհրան 233, 237, 239, 255
Թոտ գյ. 164
Թրղուտ գ. 3

Թուրքմենչայ 252

Իբերիա 7
Իմերեթիա 220, 225, 241
Ինջա գետ 3, 7, 8, 9, 31
Իոնիա 5
Իտալիա 15 21
Իրան 8, 11, 17, 18, 39, 40, 43, 44, 46, 67, 78, 86, 99, 109, 110, 111, 113, 115, 116, 118, 120, 122, 123, 124, 125, 126, 127, 136, 138, 149, 141, 142, 143, 145, 146, 147, 150, 152, 154, 155, 155, 158, 171, 175, 177, 179, 180, 181, 182, 183, 184, 186, 187, 189, 191, 193, 194, 195, 203, 204, 205, 207, 208, 211, 212, 213, 217, 219, 220, 229, 230, 233, 234, 235, 237, 240, 241, 242, 243, 244, 245, 247, 248, 249, 250, 251, 252
Լեհաստան 119, 140, 144
Լենքորան 242
Լիտվա 144
ԼՂՀ 3, 45, 52, 174, 193
Լոռի 99, 121, 126, 135, 167, 181, 183, 237
Լփինք 27, 50, 57, 70

Խաղխաղ 24, 26
Խաչեն բերդ 38, 40
Խաչեն գետ 92, 132, 174, 201
Խաչեն Ներքին 66, 70, 73, 75, 78, 80, 81, 85, 89, 90, 92, 94, 95, 97, 98, 100, 101, 102, 103, 104, 105, 108, 112, 119, 120, 121, 122, 130, 132, 133, 149, 163, 185, 192, 197, 200, 215, 227
Խաչեն Վերին 73, 81, 84, 85, 91, 92, 94, 95, 96, 121, 135
Խաչմաս 83, 84
Խաչիկ գյ. 81, 82
Խարխափոր 227
Խարբերդ 40
Խոխանաբերդ 91, 94, 99, 101, 204, 227
Խոյ 126, 160, 224, 225, 229, 230, 231
Խոնաշեն 240

Խոտակերաց վանք 81
Խորասան 86, 99, 111, 116, 124, 142, 186, 188, 190, 192, 196, 197
Խորեզմ 86
Խաչին տափ 234

Ծար ավան 11, 64, 96, 99, 104, 119, 128, 135
Ծար գվռ. 11, 65, 74, 94, 96, 101, 111, 120, 121, 127, 130, 135

Կազի-Կումիխ
Կաթողկոսասար 33, 34
Կալկաթա 225, 226
Կախեթ 62, 74, 75, 82, 119, 155, 198, 211
Կայան բերդ 76
Կամբիսենա 13
Կամբեճան 13, 14, 30, 31, 47, 52, 70, 73, 76, 80, 81, 85
Կաչաղակաբերդ 38, 137, 145, 204
Կապադովկիա 4, 5, 7, 8
Կապաղակ 32, 33, 52, 62, 83, 112
Կապան 76, 81, 83, 91
Կապկոհ 26
Կասպք 24
Կար-Ադադ 4
Կարա-Կորում 102
Կարապետանց քար 34
Կար-Իշտար 4
Կար-Նաբու 4
Կայծի ծառ լեռ 92
Կարկառ բերդ 4, 9, 38, 39, 40, 43, 102, 112, 134, 206
Կարկառ գ. 9, 39, 148
Կարս 76, 79, 80, 82, 83, 125, 183, 185, 188, 188, 188
Կար-Սին 42
Կեչառիս 98
Կեսարիա 7
Կիլիկիա 5, 84, 90, 97, 101, 102, 103, 104, 105, 110, 112, 119, 134
Կքնո գյ. 21
Կղարջք 93
Կյետին կյումեր 3, 133

Կյումերաշեն 3
Կովկաս 2, 4, 8, 14, 15, 24, 26, 43, 48, 50, 57, 60, 61, 67, 69, 73, 74, 75, 78, 83, 94, 102, 109, 116, 120, 142, 148, 151, 155, 194, 212, 219, 220, 226, 228, 232, 239, 241, 242, 243, 245, 247
Կովսական 11, 186, 193, 221
Կ.Պոլիս
Կուանք 3, 9, 10, 11, 12, 16, 18, 19, 24, 27, 49, 134:
Կուբկաշեն 83, 197
Կումայրի 5, 6, 59
Կուր գ. 12, 13, 14, 15, 16, 17, 18, 22, 24, 26, 30, 32, 33, 38, 39, 41, 47, 49, 50, 57, 62, 66, 73, 74, 75, 79, 80, 83, 115, 129, 130, 142, 151, 152, 158, 166, 186, 196, 197, 206, 208, 211, 221, 240, 241
Կուր-Արաքսյան հովիտ 6, 7, 8, 9, 11, 12, 14, 15, 16, 17, 25, 31, 37, 40, 43, 48, 49, 63, 100, 105, 192, 196, 210, 211, 248
Կուրակ 3, 96, 196, 239, 241
Կուսարի 83
Հաբանդ 49, 65
Հադրութ 192
Հաթերք 9, 24, 91, 92, 94, 95, 96, 98, 99, 102, 124, 134
Հաղբատ 97, 98, 105, 108, 247
Համադան 78, 117, 165, 181, 217
Հայաղվանք 9, 17, 22, 23, 24, 25, 29, 37, 42, 49, 51, 57, 69, 71, 72, 73, 74, 78, 89, 91, 99
Հայաստան 3, 8, 10, 12, 13, 14, 16, 17, 18, 19, 20, 21, 22, 23, 25, 26, 27, 28, 31, 32, 36, 37, 38, 40, 41, 47, 48, 49, 52, 53, 59, 61, 63, 65, 66, 67, 69, 72, 74, 75, 78, 79, 80, 81, 82, 84, 85, 86, 88, 89, 92, 93, 94, 95, 96, 97, 98, 99, 100, 101, 104, 105, 109, 110, 111, 118, 119, 124, 125, 126, 127, 128, 136, 137, 138, 139, 140, 141, 142, 143, 144, 145, 146, 153, 154, 155, 191, 192, 203, 204, 212, 215, 218,

220, 221, 224, 226, 228, 229, 230, 231, 244, 244, 252, 253, 254
Հայկական լեռնաշխարհ 4, 6, 69, 121, 142
Հայոց Սղնախներ 2, 34, 129, 145, 146, 150, 151, 155, 156, 157, 158, 167, 171, 172, 174, 177, 179, 202, 217
Հարջլանք 49
Հեր 231
Հերաթ 123, 190, 191, 194, 234
Հերքան գվռ. 11, 92
Հիսն ար-Ռան 38
Հնդկաստան 5, 67, 109, 116, 125, 191, 194, 217, 224, 225, 245, 248
Հռիփսիմե եկղ. 99
Հոմենք 19, 54
Հոլանդիա 140, 143
Հոռեկ 12, 19, 54, 55, 104, 107, 108, 130, 131, 132, 136, 227
Հովվի եկղ. 98
Հորդա 103
Հունոտի կիրճ 149, 169, 174, 234

Ձորաբերդ 145
Ձորագետ 74

Ղաբարթու 132
Ղազանչի 174, 205, 206
Ղազախ 85, 101, 155, 167, 232, 237
Ղազվին 86, 103, 110, 117, 152, 171
Ղարաբուլախ 131
Ղարադաղ 15, 208, 228, 229, 240, 246
Ղանդահար 147, 191, 194, 234
Ղափրթլու 173
Ղոչղար գ. 154
Ղրիմ 7, 96, 111, 120, 214, 228
Ղուբա 242

Ճալեթի վանք 112, 119
Ճար 73, 75
Ճորա անցք 4, 24, 26, 27, 39, 48

Մադրաս 224, 226
Մազանդարան 78, 169, 171, 190, 211, 212, 232
Մազրա 72, 126, 134, 135, 151
Մակու 41, 126, 244
Մայրաքաղաք 11, 34, 63, 66, 91, 104, 107, 108, 122, 129, 137, 149
Մաշադ 190
Մատաղիս 9, 33
Մարանդ 94, 167
Մարաղա ք. 160, 251
Մարաղա գյ. 226, 251
Մարաստան 5, 13, 40
Մարտակերտի շրջ. 3, 4, 5, 52, 174
Մեղրի 206, 211, 238, 242
Մեծ Առանք 9, 10, 11, 37, 49
Մեծիրանք 10, 37, 64
Մեծ Կողմանք 3, 12, 66, 77, 99, 108, 129
Մեծ Կուանք 2, 9, 11, 12, 18, 19, 26, 49, 116
Մեծ Հայք 12, 16, 17, 18, 22, 37, 39
Մեծ-շեն 34, 108
Մեհմանդուստ գ. 180
Մենգրելիա 241
Մեսկեվելի 3
Միափոր գվռ. 90, 96
Միջագետք 4, 5, 17
Մինկեչավր 208
Մլզնաբերդ 99, 145
Մոսոք 7
Մռավ լ. 3, 10, 54, 80, 129, 132, 133, 173, 195, 197
Մցխեթի 12,
Մուխանք 11, 38, 48, 65, 100, 104, 110, 150, 186, 189, 191, 193, 233
Մոխրաթաղ 133, 137, 161
Նախճավան 75, 92, 106, 111, 115, 142
Նարվա 143
Ներսմիհր եղիշե առաքյալի վանք 52, 56
Ներքին շեն 131
Նիժ 130, 173
Նիկոմիդիա 22
Նոր Զուղա 215
Նուխի 70, 114, 130, 216, 225, 233
Շակաշեն 6, 14, 49, 54, 62, 91
Շահաղբյուր 43, 85, 201, 206, 241

Շահապիվան 32, 33
Շահկերտ 205, 206
Շահումյանի շրջ 10
Շամախի 38, 39, 115, 121, 142, 144, 145, 153, 154, 157, 166, 168, 170, 172, 173, 174, 183, 191, 216, 224, 225, 233, 235, 237, 243, 249
Շամշադին 217, 221, 232, 235
Շաքի 19, 61, 62, 63, 70, 73, 74, 75, 76, 77, 80, 81, 82, 83, 85, 94, 100, 113, 114, 120, 122, 123, 130, 155, 168, 172, 197, 198, 202, 203, 216, 225, 233, 237, 240, 241, 242, 243, 245, 249
Շաքի-Հերեթ 74, 114, 130, 155, 241
Շամքոր 75, 80, 93, 99, 100, 211, 214, 222, 236, 251
Շիկաքար 63, 64, 148
Շիրակ 4, 59, 60, 69, 82, 126
Շոտլանդիա 15
Շիրազ 111, 212, 213, 233
Շիրվան 38, 39, 62, 82, 106, 108, 113, 114, 115, 120, 121, 122, 134, 150, 155, 157, 159, 166, 183, 193, 197, 203, 208, 209, 240, 241, 242, 243, 249
Շոշ 148, 207
Շորագյալ 242
Շվեցարիա 248
Շուշի 4, 9, 39, 42, 43, 102, 112, 134, 148, 149, 151, 152, 153, 156, 158, 159, 160, 163, 165, 167, 168, 170, 171, 172, 174, 175, 178, 179, 203, 204, 205, 206, 207, 209, 211, 212, 213, 214, 215, 216, 217, 221, 222, 223, 224, 225, 226, 228, 231, 232, 233, 234, 235, 236, 237, 238, 239, 240, 241, 242, 243, 244, 245, 246, 247, 249, 250, 251, 252
Շուրա ք. 113

Ոսկանապատ 124, 135
Որմիզդական դաշտ 17

Չանկաթաղ 161, 174
Չարաբերդ 31, 40, 92, 102, 132
Չարեք գետ 80, 90, 96, 100
Չինաստան 5, 67, 125, 145
Չիարմահալ 126
Չղախ 9, 10, 11, 24, 55
Չոլակ 154
Չող 18, 25, 26, 37, 70,

Պաքալագոնիա 5
Պաղեստին 7
Պարզկանք 65
Պարթևստան 5
Պարսից ծոց 78, 109, 116, 194
Պարսկաստան 10, 16, 17, 25, 28, 35, 38, 40, 42, 43, 44, 45, 46, 52, 71, 115, 125, 130, 142, 143, 144, 147, 166, 176, 178, 188, 206, 207, 213, 239, 243, 247, 248
Պարտավ 7, 10, 19, 25, 27, 31, 36, 41, 42, 43, 44, 48, 50, 51, 52, 55, 58, 63, 64, 72, 74, 75, 79, 83, 105, 106, 115, 120, 122, 132, 151, 174, 198, 251
Պարտատուա 6, 27
Պերոզապատ 27
Պերոժ-Կավատ քղք. 56
Պյատիգորսկ 249
Պոլիս 58, 88, 89, 139, 237, 244
Պոլտավա 146
Պողոսա կյումեր 3
Պոնտոս 4, 5
Պֆալֆց 140, 144

Զառահ 38
Զար 73, 75, 83, 196, 217, 221, 224, 226, 236, 241
Զրդուզ 234
Զրաբերդ 2, 3, 34, 40, 90, 92, 96, 102, 119, 120, 128, 129, 132, 133, 136, 137, 145, 146, 149, 150, 152, 153, 161, 162, 163, 165, 168, 178, 182, 183, 185, 192, 195, 197, 200, 201, 204, 206, 209, 210, 211, 212, 214, 215, 217, 222, 223, 226, 227, 228, 232, 233, 237, 251
Զրվշտիկ 36, 56, 107, 108
Զուղա 125, 126, 129, 215

Ռեշտ 155, 175, 182
Ռմբոստյան լ. 3, 132
Ռոստակ 9, 10
Ռուսաստան 8, 119, 138, 139, 140, 141, 142, 143, 144, 145, 146, 147, 148, 155, 157, 159, 161, 166, 167, 172, 177, 202, 214, 215, 218, 219, 220, 226, 228, 229, 230, 235, 237, 238, 241, 242, 243, 245, 249, 252
Ռուտակ գավ. 9, 10

Սալմաստ 126, 160, 225
Սալյանի վանք 157, 160
Սալյան ք. 169, 235, 246
Սակասենե 6, 8
Սանահինի վանք 87
Սիրիա 5, 78
Սիսական 43, 65
Սիսիան 187, 211
Սյունիք 23, 35, 40, 43, 48, 65, 75, 76, 77, 80, 81, 84, 85, 86, 88, 89, 95, 103, 111, 127, 128, 132, 133, 141, 159, 162, 167, 168, 176, 177, 183, 193, 244
Սոլթան-Նուխի 130
Սողոմոնա կյումեր 3
Սպահան 111, 117, 124, 125, 126, 135, 144, 146, 147, 152, 180, 197, 215, 219, 230, 238
Սպեր 93
Սողք 45, 119, 127, 134, 135, 151
Սորբոն 99
Ստամբուլ 124, 140
Սևանա լիճ 14, 72, 240
Սև ծով 4, 67, 75, 214
Սեկկենասեռ 34
Սեսիս-Կողքիսյան 4

Վաղարշապատ 21, 22, 31, 56
Վաճառ 11, 98, 125
Վայոց ձոր 69, 81, 84
Վան 220
Վանանդ 4, 79
Վանի թագավորություն 5
Վասպուրական 60, 68, 83, 84, 86, 87
Վարանդա 66, 119, 120, 127, 134, 135, 145, 151, 160, 163, 169, 170, 179, 185, 192, 196, 199, 200, 201, 207, 208
Վարդաշեն 83
Վատյան դաշտ 22
Վրաստան 37, 44, 48, 60, 61, 63, 66, 71, 77, 85, 91, 92, 93, 94, 100, 104, 119, 120, 124, 135, 139, 142, 146, 147, 152, 153, 154, 155, 156, 166 ,190 ,192, 198, 202, 203, 211, 212, 218, 219, 220, 221, 225, 226, 229, 230, 235, 236, 237, 238, 242, 248
Վերին Զական 124
Վերին Խաչեն 74, 85, 91, 94, 96, 121, 135
Վերին շեն 131
Վիեննա 140
Վիտենբերգ 248

Տաթև 128
Տաղձանք (Թալիշ) 56
Տայք 87, 93
Տավուշ 76, 93, 101
Տարոն 21, 60, 75, 783
Տերունական 93
Տիզբոն 17, 18, 25, 27
Տիգրանակերտ (Գարդմանք) 43, 48, 145
Տիգրանակերտ (Խաչենագետ) 43, 85, 201, 241
Տիսա գ. 140
Տող գյուղ 182, 192, 199
Տող ամր. 145
Տոնաշեն 33, 133
Տրտու գետ 3, 6, 7, 8, 9, 10, 11, 24, 33, 40, 43, 48, 52, 130,
Տուլուզ 131
Տուս 75
Տփղիս 44, 68, 96, 111

Ցրի 22, 32, 33

Ուռեական 11, 12, 19

Ուտիք 10, 13, 16, 17, 18, 19, 22, 23, 24, 25, 26, 28, 31, 32, 35, 36, 37, 40, 41, 43, 45, 47, 48, 49, 58, 64, 68, 70, 74, 75, 76, 77, 80, 81, 85, 90, 91, 97, 100, 105, 108, 110, 113, 118, 124, 129, 145, 204
Ուրարտու 4
Ուրմիա 126, 160, 212, 213, 219

Փայտակարան 14, 15, 229
Փառակա 135
Փառիսոս 74, 80, 81, 85, 86, 90, 235
Փարիզ 99, 139, 238, 239
Փերիա 126
Փոսա նահ. 121
Փոքր Ասիա , 5, 6, 15, 106, 110
Փոյուգիա 4, 5,

Քաղկեդոն 28, 29, 35, 52
Քաշաթաղ 11, 133, 192, 193
Քաշունիք 11, 221
Քանդակ 208
Քարկուփի վանք 81
Քարհատ 45
Քարհերձ 90, 93, 96
Քարվաճառ 11, 221
Քարթլի 62, 198
Քթիշամրոց 66, 68, 137
Քիրման 150, 184, 233
Քյալբաջար 221
Քոչիզ 124, 134
Քրդստան 188

Օդեսա 248
Օրդուբաղ 144, 167

ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐԻ ՑՈՒՑԱԿ

Աբաս Ա Բագրատունի 79
Աբաս III 182
Աբաս կթղ. 40
Աբբաս-Միրզա 238, 240, 241, 242, 243, 244, 245, 247, 249, 250, 251
Աբրահամ հարյուրապետ 131, 201, 227
Աբրահամ Կրետացի կթղ. 183, 184, 186, 187, 191, 193, 194
Աբրահամյան 158, 164, 169, 254
Ադոնց Ն. 25, 41, 59, 60, 61, 62, 69, 74, 82, 254
Ազատ խան 205
Աթաբակ 102, 104, 112
Ալի փաշա 170
Ալի Մուրադ-խան Զենդ 229, 230
Ալեքսանդր Մակեդոնացի 24
Ալեքսանդր ցար 243
Ալեքսանդրե-խան 114
Ալեքսեյ Միխայլովիչ 139, 145
Ալահ-դուլի Սուլթան 182
Ալիշան 10, 11, 33, 254
ալ-Մուքադդասի 45
Ալփիլուքվեր մեծ իշխ. 57
Ահմադ Քասրավի 87
Աղա-Մուհամադ խան 233, 234, 235, 236, 237, 239
Աղբուղա 130
Աճառյան 9, 10, 12, 14, 62, 254
Ամիր 194
Ամիր-Գունա խան 126
Այտին 130
Անակ Արշակունի 17
Անահիտ դից. 8, 17
Անահիտ 30
Անանիա Մոկացի կթղ. 77, 80, 81, 82
Անեցի 91
Անտոնի Շեյլ 124
Անտոն քհն. 157, 169, 130, 171, 172
Աշոտ Ա Բագրատունի 61, 69, 71, 72
Աշոտ Բագրատունի (կույր) 59, 60, 62, 94
Աշոտ Բ (Երկաթ) 76, 77, 79, 80, 83

Աշոտ Գ Բագրատունի 81
Աշոտ Ե 88
Աշոտ Կյուրապաղատ 82
Աշոտ Հովհաննիսյան 93
Աշրաֆ 180
Սպրաքսին 158
Ասա 12
Ասկար խան 213
Ասլան-շահ 92
Արամայիլ 42
Արզու խաթուն 94
Արիստոտել 38
Արդուն ուստ. 102, 103
Արծրունի 61, 63, 68, 253
Արչիլ 60, 62, 63
Արտավազդ 17
Արտաշես Ա 8
Արտավան V 17
Արտեմ Վոլինսկի 147
Արփ-Արսլան 89
Ավագ Զաքարյան 101
Ավագ վարդապետ 178, 209, 210, 218
Ավան զորապետ 134, 145, 148, 149, 151, 153, 156, 158, 159, 160, 161, 162, 163, 164, 165, 167, 168, 169, 170, 171, 172, 174, 175, 177, 178, 179, 203, 205, 234
Ավգուստ Դիտրիխ 247, 248
Ատրներսեհ Բագրատունի 60
Ատրներսեհ թգվ. 62, 71, 73, 74, 76, 77
Աֆշին 66

Բաբեկ 62, 64, 65, 66
Բաբկեն կթղ. 35
Բախտակ 226
Բախտամ 232
Բաբ Հրահատյան 52
Բալածորի 48
Բաղրխան 86
Բաչու-ղուրչի 101
Բաթու խան 101, 102
Բարդան 61
Բարդուղոմեոս 18
Բարթիկյան 75
Բարխուդարյան Ս. 36, 63, 83, 84, 154, 156, 202, 237
Բարխուտարեանց 7, 24, 39, 83, 107, 108, 112, 119, 132, 133, 173, 254
Բարսեղ քահ. 197
Բաքիխանով 13
Բբոր 44
Բեգամ-խաթուն 112
Բեր 78, 79
Բյուզանդ 13, 19, 20, 31
Բորա-նոյին 101
Բուղա 63, 67, 68
Բուռնաշով 229, 232

Գագիկ Ա Բագրատունի 84, 85
Գագիկ Գ Բագրատունի 88
Գանձակեցի 90, 95, 99, 100, 101, 102, 104,
Գայշաք 44
Գեղռեհոն 20
Գենիչուտլինսկիյ 227
Գոլովին 144, 156, 174
Գոշ 34, 90, 91, 95, 120
Գոշակտակ 82, 83
Վասիլ Ա կյս.
Գրիգոր հեջուբ 102
Գրիգոր Մամիկոնյան սպ. 56
Գուդովիչ կոմս 242
Գուրգեն Արծրունի 66

Դամեշխի 14
Դանիել բեկ 232
Դասխուրանցի 35, 79
Դարեհ 38, 179
Դավիթ-բեկ 153
Դավրիժեցի 124, 126
Դաուդ-բեկ 174
Դեհխոդա 14
Դեսում իշխ. 102
Դերվիշ-Մահմուդ աղա 155
Դինար թգհ. 82
Դյակոնով 6
Դոլգորուկով 176
Դոփ 94, 96, 97, 99, 121, 127, 135
Դրասխուրանակերտցի կթղ. 72, 73, 74
Դուբրովին 229
Երմոլով 242, 243, 245, 246, 249, 250, 251
Եփրեմ կթղ. 243, 244, 245, 247
Եկատերինա I 175
Եկատերինա II 214, 218, 228, 229, 230, 235
Երեմիա կթղ. 129, 149
Եսայի Ջալալյան կթղ. 129, 145, 146, 147, 149, 150, 151, 152, 153, 154, 156, 157, 158, 161, 162, 163, 164, 165, 168, 169, 171, 177, 197, 198, 215
Եսայի աբու-Մուսե 65, 66, 68, 69, 80, 81, 85
Եղիա կթղ. 51, 52
Եզիազար կթղ. 50, 51, 54, 56, 57, 58
Երեմյան Ս. 3, 6, 9, 10, 33, 110, 255
Եսվաղեն 16, 23, 25
Եղիշե պտմ. 15, 18, 19, 25, 26, 27, 28, 31
Եղիշե սբ. 35, 36, 54, 56

Զարդուշտ 45
Զարմիհր Վարազ-Բուրդակյան 52
Զաքարէ 94
Զաքարյան 93, 94, 95, 96, 97, 100, 101, 154
Զաքարիա Քանաքեռցի 126
Զեքի Տողան 157
Զիյադ-օղլի 192
Զիթգին խուրսան 57
Զոհրաբ Թառումյան 245, 246
Զուլալյան պրֆ. 67

Էզով 228
Էնեաթոլլահ Ռեզա 67, 117
Էֆորոս 6

Թադևոս սբ. 18
Թահմասպ II շահ 159, 166, 167, 176, 179, 180, 182
Թահմազ-ղուլի 180
Թաղիադյան 245
Թամար 93
Թամեռլան, տես՝ Լենկթեմուր
Թառումյան 249
Թեյմուրազ 198, 208, 209, 218
Թեոդորոս Ռշտունի 47, 48
Թեոփանես 50
Թորամանյան 99
Թուլի-Արզուման 210, 232, 23 5

Չալաբի քյոխվա 157, 169, 171, 175
Չալաղան-Յուզբաշի 210

Իբն ալ-Ասիրի 38, 39, 66
Իբրահիմ 113, 213, 214, 216, 217, 222, 223, 232, 233, 234, 235, 236, 237, 238, 239, 241
Իթլ 102
Իմաստասեր 71, 86
Իման Շամիլ 245, 249
Իշխանիկ թգվ. 69, 81, 82, 113
Իսմայիլ-Ասըմ էֆենդի 155, 174, 254, 255
Իսմայիլ շահ 116
Իսրայել եպ. 54, 55, 56, , 57, 58
Իսրայել Օրի 139, 140, 141, 142, 143, 144, 145, 146, 147, 150, 242
Իվանէ 94, 96, 100
Իվան Կարապետ 156, 157, 160, 161, 162, 163, 165, 166, 167, 168, 169, 171, 173, 174, 179,

Լալայան 131, 255
Լաստիվերացի 87
Լեկաբենոս զոր. 79
Լեոպոլդ կսր. 137
Լենկթեմուր 111, 112
Լինչ 247
Լիսանևիչ 239, 241
Լիֆտալի-խան Զենդ 235
Լորիս-Մելիքյան 181
Լուի XIV 139, 143, 146
Լևոն Ե կյս. 60, 75

Խոռեմ 44
Խոսրով Ա Մեծ 17
Խոսրով Բ 22

Խոսրով Ա Անուշիրվան 37, 38, 39, 45, 40, 41, 67, 179
Խոսրով Բ Փարվեզ 41, 42, 43
Խոսրով Գ 44
Խորենացի 5, 9, 13, 14, 15, 19, 20, 23, 253
Խոջաջանյան 224
Խուդաբանդա շահ 123

Ծիրանածին 75, 78, 114, 254

Կաղ Աբով 131, 132, 195
Կաղանկատվացի 7, 9, 10, 11, 12, 15, 16, 18, 19, 23, 24, 27, 29, 30, 34, 37, 52, 55, 81, 113, 253
Կամսարական 20, 60
Կավատ Ա 36, 62
Կավատ Բ 44
Կարաուլով 63
Կարա-Յուսուֆ 111
Կարա-Քեշիշ օղլի Ալիջան 113, 114
Կարյագին 240
Կեդրենոս 50
Կյուրոս 8, 38, 179
Կուտլյարևսկի 241
Կյուրիկե թգ. 74, 83, 84, 99

Հաբեթ 7
Հազկերտ 25, 27, 29, 44
Հախումյաններ 245, 246
Հակոբ կթղ. 149
Հակոբյան Ա. 56
Հակոբ Պողոսյան 148
Հակոբ Ջուղայեցի կթղ. 129
Համադանի 116
Համամ-Գրիգոր 62, 69, 71, 72, 73, 74, 94
Համամ-Հովհաննես 66, 72, 73,
Հաջի-Դաուդ 150
Հաջի Չելեբի 197, 198, 208
Հասան Ա 92, 94, 102
Հասան Գ 130
Հասանլի խան 150
Հասան-Ջալալ իշխ. 98, 101, , 102, 104, 105, 112, 122, 130, 134
Հեթում թգ. 90, 97, 101, 103
Հեյդար-Դուլի 205
Հերակլ թգ. 198, 208, 209, 212, 217, 218, 219, 220, 222, 225, 229, 231, 232, 234, 235
Հերակլ կայսր 43
Հերովդոտոս 4
Հերցբերգ 89
Հյուբշման 32
Հովհաննես-Սմբատ թգվ. 83, 87, 88
Հովհաննես Իմաստասեր 86
Հովհաննես կթղ. 231
Հովհաննես Լազարյան 215, 219, 226, 227
Հովհաննեսիկ Ծարեցի 120, 121, 135
Հոբել եպ. 48
Հովսեփ կթղ. 70, 85, 86,
Հուստինիանոս կյս. 40, 50
Հովհան Կարկուաս զրվ. 79
Հովհան-Վիլհելմ 140, 141, 143, 144
Հովհան վնկ. 223
Հովսեփ Արղության 215, 226, 228, 236
Հովսեփ Տեր-Ավագյան 246
Հովսեփ Էմին 217, 218, 219, 220, 221, 222, 223,224, 225, 226, 227

Ղամար Սուլթան 131
Ղարա հասան 130
Ղիյասեդդին 101
Ղուլյան 34, 107
Ղուկաս Շիրվանով 157
Ղուկաս վարդապետ 181

Մագիստրոս 80
Մադաթով 243, 249, 251
Մադիա 5
Մահմուդ Քյազիմ 182, 183
Մամքան 102
Մանանդյան 4, 8, 255
Մանգու խան 102, 103
Մանուչարյան 251
Մարկոս Թառումյան 247
Մարր 82
Մատյուշկին գեն. 169
Մելիք-Աբով Ա (Սև) 114, 115, 130, 195
Մելիք-Աբով Բ (տես՝ Կաղ Աբով)
Մելիք Աբով III 227, 231, 234, 235, 237, 238
Մելիք-Ադամ 209, 210, 211, 222, 227,
Մելիք-Արամ 201
Մելիք-Ավան 134, 135
Մելիք Բաղի Ա 151
Մելիք Բաղիր Բ 151, 195, 196
Մելիք-Բեգլար Ա 131
Մելիք-Բեգլար II 222, 227
Մելիք Եգան 135153, 159, 181, 182, 183, 184, 191, 193, 201, 202, 203, 232
Մելիք-Եսայի 203, 211
Մելիք Թամրազ 132
Մելիք-Թամրազ Բ 195,196
Մելիք Հատիր 119, 134
Մելիք-Հարություն 182
Մելիք-Հովսեփ Ա 135
Մելիք-Հովսեփ Բ 135, 199, 200, 210, 211, 212, 214, 216
Մելիք-Հուսեին 196
Մելիք-Մեժլում 226
Մելիք-Միրզաբեկ 196
Մելիք-Մուջում 124
Մելիք-Յավրի 126, 131, 135
Մելիք Նազար 135
Մելիք-Շահնազար Ա 127, 134, 151
Մելիք-Շահնազար Բ 200, 201, 237
Մելիք Պապին 119, 134, 135
Մելիքջան 184, 187
Մելիք Վանի 242
Մելիք-Ֆրիդուն 237
Մեհտի 241, 242, 243, 251, 252
Մերհավան 12, 16, 21
Միդաս 5
Միկլուխո-Մակլայ 104
Միհրան 12, 41, 42
Մինաս Տիգրանյան 138
Մինաս վարդապետ 144, 147, 177
Մինորսկի 63
Միր-Դավիթ խան 239
Միրզա Զաքի 188, 191
Միրզա-Զեմալ 204, 206, 207
Միրզա Յուսուֆ Ներսեսով 130, 132, 133, 255
Միր-Մահմուդ 150, 151, 152, 156
Միր-Վեյս 147, 150
Մխիթար սպ. 175
Մոլար-Նոյին 100
Մոնոմախ կյսր. 88, 89
Մովսես Բաղրամյան 219, 222, 223, 224, 225
Մորիկ կյս. 41
Մուավիա 66
Մուբասիմ խալիֆ 67
Մուհամմադ Քյազիմ 182, 183
Մուրադ սուլթան 92

Յակուտ ալ-Համավի 38, 39
Յակոբսոն 99
Յաղուբ խան 237
Յան Սոբեսկի 140
Յոհան Շիլտբերգեր 111

Նադիր 176, 180, 181, 182, 183, 184, 185, 186, 187, 188, 189, 191, 192, 193, 194, 195, 196, 197, 198, 201, 202, 205, 209, 210, 212, 219, 233, 249, 250
Նահապետ կթղ. 141
Նակեփոր Փակոս 84
Նապոլեոն 238, 239
Ներսեհ-Դժնակ Փիլիպյան 63, 65, 66
Ներսես Աշտարակեցի կթղ. 243, 244, 247, 249
Ներսես Բակուր կթղ. 51, 53
Ներսես հ. կթղ. 47
Ներսես աղվ. կթղ. 153, 161, 162, 163, 164, 199, 216, 252
Նիզամի 42

Շաբ 44
Շահ Աբբաս Մեծ 113, 121, 122, 123, 124, 125, 134, 135, 138, 139, 143, 179
Շահամիրյան 224, 226
Շահան 155
Շահնասուր 111
Շահնավազ 153, 155
Շահնշահ 99, 101, 103, 119
Շահ-Սուլթան Հուսեին 138

Շահվերդի խան 208, 210, 216, 217, 221, 222
Շահր-Վարազ 43
Շամբատ Բագարատ 61
Շապուհ I 16
Շապուհ II 19, 20, 21
Շապուհ III 23
Շեյխ-Սեֆի 115, 116
Շիրակացի 3, 16
Շիրանշահանց 65, 99, 107, 108, 132
Շիրին 42
Շիրմազանեանց 237

Չաքն Խազր 58
Չարմաղան 100, 101
Չինգիզ խան 109, 117, 180
Չոլի 91

Պապ թգ. 20
Պասկևիչ 251, 252
Պավել I 235, 237
Պատրիկ Քարոյան 52, 54
Պաուլիչի 242
Պետրոս դը Գիլանենց 145, 167
Պետրոս Գետադարձ կթղ. 87, 88, 112, 132, 138,
Պետրոս Բ աղվ. կթ. 112
Պետրոս եպս 32, 40,
Պետրոս Մեծ 132, 138, 140, 141, 143, 144, 145, 146, 147, 152, 154, 155, 156, 157, 160, 161, 162, 164, 165, 166, 167, 168, 169, 171, 173, 176, 179, 214
Պետրոս III 218, 219
Պետրուշևսկի 136
Պերոզ 27, 28, 30
Պլատոն 38
Պյոտր Տոլստոյ 156
Պռոշ իշխ. 139
Պողոս Ղարաբաղցի 246
Պոտյոմկին իշխ. 115, 116, 228
Պոտյոմկին գեն. 228, 229, 230, 231
Պոտտո 250
Ջալալ-բեկ 123
Ջալալէդդին 99

Ջալալ Մեծ 122, 133
Ջամասպ 36
Ջաջառ իշխ. 99
Ջավադ խան 151, 231, 233, 235, 237
Ջիվանշիր 42, 43, 47, 48, 49, 50, 55, 81
Ջհանբաշխ 233
Ջհանշահ 120, 122, 135
Ջվանքո սպ. 51
Ջումշուդ 233, 234, 236, 237, 239, 241, 242, 243

Ռաշիդ ադ-Դին 106, 117
Ռեուտ 249
Ռիմսկի-Կորսակով գեն. 253
Ռոբերտ Շեյլ 124
Ռովադ 92
Ռտիշչև 242
Ռուզուքան 101, 103
Ռումյանցև 171

Սաղըխ խան 236
Սալման իբն-Ռաբայի 48, 49
Սահակ Բագրատունի 59
Սահակ Սևադա 73, 46, 77, 79, 83, 86, 94, 113, 114
Սահլ Սմբատյան 63, 64, 65, 66, 69, 70, 72, 113
Սամվել եպ. 71
Սայաթ-Նովա 234
Սարգիս Ջալալյանց 70, 83
Սարդ 5
Սարդուրե Բ 3
Սարգոն II 4, 6
Սարթախ 102, 103
Սարուխան-բեկ 124
Սարը Մուստաֆա 174, 175
Սարուխան 124, 134,
Սատո 12, 16
Սեբեոս 41, 48
Սելջուկ 86, 118
Սելիմ խան 240, 241
Սելիմ սուլթան 118
Սենեքերիմ 80, 81, 83, 87
Սթենլի Բեն Պուլ 85

Սիմեոն կթղ. 149, 215, 216, 220, 223, 225, 226
Սիմեոն Աղվ. կթղ. 153
Սմբատ Բագրատունի իշխ.47
Սմբատ Բագրատունի սպ. 60
Սմբատ Բագրատունի թգ. 73
Սպանդարար Սասանյան 20
Սպրամ 51, 52, 64
Սոֆիա Պալեոլոգ 140
Ստեփաննոս Սալմաստեցի կթղ. 119
Ստեփաննոս-Կոն 69
Ստրաբոն 4, 5, 8, 12, 13, 14, 15, 38, 254
Սուվորով 226, 228
Սուրխայ Շամխալ 150, 152, 158, 183
Սև Աբով 114, 115, 130, 131, 195

Վալերիան Զուբով 235
Վախթանգ Գորգասալ 60
Վախտանգ թգվ. 99, 152
Վախտանգ Տանգիկ 94
Վախտանգ իշխ. 95, 96
Վահան իշխ. 26, 27
Վահրամ իշխ. 99, 100, 101, 107
Վաղարշակ արքա 13
Վաղարշ 30
Վաչական Գ 2, 9, 11, 16, 18, 29, 30
Վասակ Իշխանիկ 69
Վասիլ Ա 71, 72
Վասիլ Բ 87
Վարդան Արևելցի 60
Վարազ-Գրիգոր 42, 47
Վարազ-Պերոժ 50
Վարազ-Տրդատ 50, 51, 52, 54, 56, 58, 64
Վարդան Մամիկոնյան 26
Վարդան պատրիկ 52
Վարիամ 41
Վեհսուդան 86
Վիրո կթղ. 42
Վաչե թգ., 12, 16, 19, 22, 25, 26, 27, 28, 29
Վռամշապուհ 35
Վորոնցով 218

Տաբարի 49, 66

Տաճատ Անձևացի 60
Տարսուն 130
Տեր-Մանուել 112, 148, 207
Տողան 92, 117
Տուրդիլ 83, 89

Ռաֆֆի 3, 33, 130, 131, 132, 198, 200, 210, 212, 226, 227, 255

Ցլիկ Ամրան 77
Ցիցիանով 238, 239, 240, 241

Ուլուբաբյան 32, 36, 40, 69, 70, 73, 74, 99, 126, 127, 255
Ուխտանես կթղ. 49, 55
Ուղուրլու խան 192
Ումմա-խան 226, 235
Ուռնայր Ա 12, 16, 19, 20, 21
Ուռնայր Բ 21

Փանահ-Ալի 196, 198, 200, 203, 204, 208
Փատիշահ 104
Փատլուն 85
Փեշեվի-Իբրահիմ 180
Փիլիպպոս թգվ. 82, 83
Փուսան-Վեհ 52

Քաջ Վաչական 12, 16, 18, 19
Քաջ Վարդան 42
Քերիմ-խան Զենդ 212, 213, 233, 234
Քշիկ 52
Քսենոֆոն 4
Քրիստոս 18, 29, 52, 55, 56, 68, 79, 80, 107, 108, 154, 157, 160, 164, 173, 188, 223, 237, 247
Քուրդ Արծրունի 96

Օհան 134, 175, 178
Օսման Յուզդեմիր 120

Ֆակիհ 14, 255
Ֆելիցիան Զարեմբա 247. 252
Ֆրեյդուն 227, 237, 243
Ֆրիդրիխ II 218

ԲԱԿՈՒՐ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ԳՅՈՒԼԻՍՏԱՆ – ՆԱՄԵ

ԳԻՐՔ ԱՌԱՋԻՆ

ՄԵԾ ԿՈՒԱՆՔ
(մ.թ.ա. 750 թ.- մ.թ. 1828 թթ.)

Շապիկը՝ Բակուր Կարապետյանի
Համակարգչային ձևավորումը՝ Գարեգին Սարգսյանի
Սրբագրիչ՝ Անահիտ Պապյան

Չափը՝ 60x84 1/16. թուղթը՝ օֆսեթ,
ծավալը՝ 17 տպ. մամուլ. տպաքանակը՝ 1000:

Տպագրված է «Տիգրան Մեծ» տպագրատանը
(հասցեն՝ Երևան, Արշակունյաց պողոտա 2)